



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅՆՐԻՆ ՀՅՈՒԲՇԱՆ

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Գերմաներենից թարգմանեց Մ. Ն. Հարությունյանը

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2004

ՀՏԴ 809.198.1
ԳՄԴ 81.2Հ
Հ 655

FUNDAÇÃO



CALOUSTE GULBENKIAN

Տպագրվել է պետական
պատվերի օժանդակությամբ

Գիրքը հրատարակվել է
ԳԱԼՈՒՍԻ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ
հիմնարկության հովանավորությամբ

Հրատարակության պատրաստեց, մասնագիտական խմբագրությունը կատարեց և բառացանկը հայատառ ներկայացրեց բան. գիտ. դոկտոր, պրոֆ.

Ռ. Ս. ՂԱԶԱՐՅԱՆԸ

Հյուբըման, Հայնրիխ

Հ 655 Հայագիտական ուսումնասիրություններ (գերմաներենից թարգմ. Մ. Ն. Հարությունյանը): Եր., Երևանի համալս. հրատ., 2004 թ., 520 էջ:

Ժողովածուն ընդգրկում է գերմանացի ականավոր լեզվաբան-հայագետ (նաև իրանագետ) Հ. Հյուբըմանի 1875-1906 թթ. գիտական տարբեր հանդեսներում տպագրված հոդվածները, որոնցում նրա առաջ քաշած հիմնական սկզբունքներն ու տեսական դրույթները, հատկապես հնդեվրոպական լեզվաբանության հայերենի որպես առանձին ճյուղի գրաված դիրքի մասին հայտնի տեսությունը, հեղաշրջող մշակութային ունեցան ոչ միայն հայագիտության, այլև հնդեվրոպաբանության մեջ ընդհանրապես:

Հ 4602020100 2004
704(02) 04

ԳՄԴ 81.2Հ

ISBN 5-8084-0545-9

© ԵՊՀ հրատարակչություն, 2004 թ.

© Թարգմանչի համար, 2004 թ.

Ն Ե Ր Ա Ճ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Յոհան Հայնրիխ Հյուբըմանը՝ արդի հայագիտության հայրը, ծնվել է 1848 թվականի հուլիսի 1-ին՝ Էրֆուրտում, ջրաղացատեր Էրնստ Ֆրիդրիխ Հյուբըմանի ընտանիքում: Բանասիրական կրթությունը սկսել է 1868 թվականին Ենայի համալսարանում, որտեղ նրան բախտ է վիճակվել ունկնդրելու Ա. Շլայխերին, սակայն հաջորդ իսկ տարին մեկնել է Թյուրինգեն, այնուհետև Լայպցիգ, ի վերջո՝ Մյունխեն, որտեղ 1872 թվականի փետրվարին Մարտին Հաուզի մոտ իրանագիտության գծով գրած իր աշխատությամբ «Ein Zoroastrisches Lied»¹ (Յասնայի գլուխ 30), ըստ ավանդույթի թարգմանելով և վերծանելով, գիտական աստիճան է ստացել որպես իրանագետ: Այնուհետև իրանագիտության և հայագիտության ասպարեզում՝ որպես այդպիսին առաջիններից մեկը, կատարած իր հետագա ուսումնասիրությունների շնորհիվ, որոնք մասամբ խրախուսվում էին Բոպպ-հիմնադրամի կողմից, 1875 թվականին իրանական լեզուների գծով պաշտպանեց իր հաբիլիտացիոն ատենախոսությունը: Գիտական աստիճաններ շնորհող հանձնաժողովի առաջ կարդացած «Über die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen»² խորագիրը կրող իր գեկուցումը շրջադարձային եղավ, որի շնորհիվ հաջորդ տարում նրան շնորհվեց Extraordinarius կոչումը:

Արդեն իսկ 1877 թվականին՝ հրավերով նա մեկնեց Ստրասբուրգ, որտեղ Վիլհելմ կայսեր անվան համալսարանում աշխատանք ստանձնեց որպես համեմատական լեզվաբանության պրոֆեսոր և աշխատեց մինչև իր չափազանց վաղաժամ մահը (ընդամենը 59 տարեկան էր), որը 1908 թվականի հունվարի 20-ին Ֆրայբուրգում նրան կյանքից կտրեց ստեղծագործական գործընթացի պահին:

Հյուբըմանի գիտահետազոտական ուսումնասիրությունները կենտրոնացնում էին, եթե մի չափազանց թուցիկ հայացք գցենք, երեք հիմնուքների վրա: Առաջին հերթին՝ իրանագիտություն, և այստեղից սկիզբ առնելով՝ հետագայում նաև հայագիտություն, ինչպես նաև՝ հնդեվրոպաբանություն: Այս ժողովածուում Հայնրիխ Հյուբըմանը մեծարվում է առաջին հերթին որպես հայագետ: Նրա վաստակը իրանագիտության, ինչպես նաև հնդեվրոպական լեզվաբանության ասպարեզում (այստեղ առաջին հերթին «Das Ablaut-Buch»³ նվիրված հնդեվրոպական ձայնավորների համակարգին, Ստրասբուրգ, 1885) կշռափվի միայն կարճամտով:

Հյուբըմանի ուսումնասիրությունները իրանագիտության ասպարեզում ընդգրկում են իրանագիտության պատմության բոլոր շրջանները՝ սկսած

¹ Մի գրադաշտական երգ:

² Հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենի գրաված դիրքի մասին:

³ Չայնոարձի գիրքը:

ավեստերենից (*հմմտ.* նրա «Zur Casuslehre»⁴ ատենախոսությունը, Մյունխեն, 1875, որտեղ առաջին անգամ է քննարկվում հոլովների կիրառումը ավեստերենում), հետագայում, երբ հայերենը նրա համար գնալով ավելի ու ավելի էր կարևորվում՝ դառնալով նրա ուսումնասիրությունների կորիզը, նա անցավ այնպիսի ուսումնասիրությունների, ինչպիսիք էին «Etymologie und Lautlehre der ossetischen Sprache»⁵ (Ստրասբուրգ, 1887), «Persische Studien»⁶ (Ստրասբուրգ, 1895) միջին և նոր պարսկերենի հնչյունաբանությունը ու ստուգաբանությունը:

Սակայն 1875 թվականից սկսած՝ նրա ուսումնասիրությունները կենտրոնանում են հայերենի վրա, որի լիակատար ըմբռնման համար նա, ավելի քան որևէ մեկը, կարողացավ արդյունավետ դարձնել իր բոլոր գիտելիքներն առհասարակ և առանձնապես իր գիտելիքներն իրանագիտության ասպարեզում: Սկզբում նա էլ իր ժամանակաշրջանում իշխող թեզի հետևորդներից էր հայերենի իրանական բնույթի հարցում, որն արտահայտվում էր տարբեր եղանակներով, և որի լավագույն հիմնավորողը ինքն անձամբ համարում էր վիեննական լեզվաբան Ֆրիդրիխ Մյուլլերին: Իր «Հոլովների տեսություն» աշխատության մեջ (Մյունխեն, 1875, առաջաբանը, սակայն, 1874 թվականի հոկտեմբեր), որտեղ նա հոլովների կիրառման համառոտ ուրվագծերն է տալիս նաև միջին և նոր պարսկերենում, իրեն հայտնաբերում է այն հարցի առաջ կանգնած, թե արդյոք այդ ինչպե՞ս է հայերենում, քանի որ ակնհայտորեն կասկած ուներ այն իշխող հեղինակավոր կարծիքների նկատմամբ, ըստ էության միայն այս լեզվի կապակցությամբ, և հայերենի բնույթի հետ կապված սկզբունքային հարցի առաջ կանգնեց: Նա անհրաժեշտ էր համարում «հիմնավոր կասկած» հայտնել, հատկապես երկու հարցի կապակցությամբ, որը, ինչպես հետագայում խոստովանեց, հենց ինքն էր փորձում ժխտել, այն է՝ իրաներենի համար միանգամայն խորթ «բ»-ով կազմվող եզակի թվի գործիական հոլովը, ինչպես նաև իրանական հնչյունական օրենքներին հակասող եզակի թվի 2-րդ «ս» բայական վերջավորությունը: Հյուբշմանն իր այս առաջին փաստարկումներով եզրակացրեց՝ «մի ավելի համոզեցուցիչ հիմք, իսկայն հայերենը իրաներենից անջատելու և որպես ինքնուրույն ճյուղ իրաներենի և հնդկերենի կողքին դնելու համար, ես առայժմ չեմ գտնում: Եվ եթե անգամ հայերենը հնչյունական առանձնահատկություններով ավելի է հակվում դեպի եվրոպական լեզուները, սպա նա ծագումով դեռ կշարունակի իրանական լինել: Ընդհանուր առմամբ պետք է խոստովանել, որ հայերենի ստուգաբանության լիարժեք լուսաբանումը և նրա դիրքի ճշգրիտ որոշումը որպես իրաներենի ազգակցի, մեկն է այն խնդիրներից, որը իրանական լեզվաբանությունը պետք է որոշի»:

Այս խնդրի լուծմանը 26-ամյա Հյուբշմանը, որը մինչ այդ գործնականորեն, ըստ էության, որպես «իրանագետ» էր հանդես գալիս, ըստ երևույթին հասավ վերջապես այն բանից հետո և այն էլ այնպես, որ նախ Մուրք Լազարուն Մխիթարյանների մոտ հիմնովին հայերեն ուսանեց: Իր ուսման

ընթացքում, որի լեզվաբանական պտուղը եղավ Մեթոսի թարգմանությունը, նա գնալով՝ ավելի ու ավելի պարզորոշ ընկալեց, որ հայերենը մի կողմից, շատ բառերի տեսանկյունից, լիովին համապատասխանում է պարսկերենին, մյուս կողմից, սակայն, բազմաթիվ առանձնահատկություններ է ցուցաբերում և հագիվ թե հնդեվրոպականի տպավորություն է թողնում: Այս հարցում 1875 թվականին իր կարդացած մի գեկուցումով նա պարզություն մտցրեց, ըստ որում նախ՝ սահմանազատեց փոխառյալ կամ որպես փոխառյալ ենթադրվող բառերը բնիկ հայերեն բառերից՝ ելնելով այն նախադրյալներից, որ հայերենի բնույթը, անշուշտ, միայն այն դեպքում կարելի էլիքի ճշտել, եթե ուսումնասիրությունը հենվի բացառապես ոչ փոխառյալ բառապաշարի վրա: Այսպիսով, խոսքը վերագրվում է առաջին հերթին բազմաթիվ իրանական փոխառություններին, որոնք ըստ էության չեն ճանաչվել օտար բառեր, և հենց այդ պատճառով էլ հայերենը որպես իրանական լեզու են ընկալել տվել, ճիշտ այնպես, ինչպես անգլերենը իր բառապաշարի պատճառով՝ ուսմանական: Ըստ այդմ՝ նրան առաջնորդող սկզբունքն է՝ «յուրաքանչյուր հայերեն բառ, որը լիովին համընկնում է իրանական համապատասխան բառի հետ, պետք է դիտել որպես փոխառություն»:

Այս ձևով ըմտրված որոշ առումով հաստատ հայերեն ընդունված բառապաշարը հանգամանորեն ուսումնասիրելով, Հյուբշմանը հաստատեց, որ հայերենի թեքումը ընդհանուր ոչինչ չունի իրանականի հետ, որ այն հնչյունական առումով, ի տարբերություն իրաներենի, բոլորովին այլ առանձնահատկություններ է ցուցաբերում և այլն: Իբրև այդ ուսումնասիրությունների հանրագումար՝ որում էլ կայանում է նրա ուսումնասիրությունների պատմական արժեքը (շնորհիվ դիպուկ և ընդունելի հնչյունական օրենքների, որոնք մենք, այսօր էլ հետ նայելով, կարող ենք հաստատել), նրան հաջողվեց վերջնականապես սպացուցել, որ հայերենը մի առանձնակի ինքնուրույն ճյուղ է հնդեվրոպական լեզվաընտանիքում և չի պատկանում ոչ միայն իրանական, այլ նաև այս լեզվաընտանիքի շրջանակներում անգամ լեզուների հնդիրանական խմբին: Ընդհանրապես 1875 թվականին հայերենի շուրջը գումարված բանավեճում իր վճռական ելույթի, նա հայերենին շնորհեց հնդեվրոպական լեզուների շարքում որպես մի իրավահավասար անդամի իր արժանավոր դիրքը և, այսպիսով, նաև հիմք դրվեց հայագիտության մի նոր դարաշրջանի, որով այդ լեզուն արդեն լիովին իրավահավասար անդամ ներգրավվեց հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ:

Քանի որ սրանով մի «նոր սկիզբ» էր դրվել, առավելապես այն բանից հետո, երբ Հյուբշմանը «Armenische Studien»⁷ խորագիրը կրող իր միակ գրքույկում վճռական առարկություն հայտնեց իրենց թեզը դեռ համառորեն պաշտպանող Ֆրիդրիխ Մյուլլերի և Պոլ Լազարոյի դեմ, անհրաժեշտ եղավ հայերենի տեքստերը և առանձնապես հին տեքստերի ամբողջ բառապաշարը նորովի, այս նոր հեռանկարով վերստին հիմնովին վերամշակել: Այս առաջադրանքը Հյուբշմանը ձեռնարկեց բազմաքանակ մանր աշխատություններով, որոնք այս հատորում (թիվ 2, թիվ 11) մի թուցիկ հայացքով կարելի է աչքի անցկացնել: Նա այդ աշխատանքը ձեռնարկեց

⁴ Հոլովների տեսության շուրջ:

⁵ Օսեթերենի ստուգաբանություն և հնչյունաբանություն:

⁶ Պարսկական ուսումնասիրություններ:

⁷ Հայագիտական ուսումնասիրություններ:

հիմնովին՝ ելնելով արդի հայերենի արտասանությունից: Նա առաջին հերթին փորձեց հիմնովին բացահայտել, թե ինչ պարզաբանումներ կարելի է տալ հին հայերենի արտասանության վերաբերյալ (ելնելով Դիոնիսոս Թրակացու թարգմանության հետ կապված քերականների կողմից բերվող տեղեկություններից), հենց հայերենի այբուբենի, ինչպես նաև հայերեն փոխառյալ բառերի և օտար անունների հնչյունաբանության մասին, կամ ընդհակառակը՝ թե ինչպես կհնչի հայերենը այլ լեզուներում, և դրանով իսկ առաջին անգամ ամուր հիմք ստեղծեց ավելի հին լեզուների հնչյունական հարաբերությունների նկատմամբ:

Այնուհետև անհրաժեշտ էր փոխառյալ բառերը՝ առաջին հերթին իրանականը, սակայն նաև ասորականը, արաբականը, հունականը, թուրքականը և այլն սիստեմատիկորեն տարբերակել ժառանգված բառապաշարից:

Նա առանձնահատուկ ուշադրություն նվիրեց այն խնդիրներին, որոնց մեթոդական քննարկման համար հիմք ծառայեցին նրա ուսումնասիրությունները ոչ միայն որպես իրանագետի իրանական փոխառությունների նկատմամբ, այլ նաև սեմական լեզուների (ասորերենի և արաբերենի), (թիվ 13): Արդեն իսկ իր մանր հոդվածներում 70-ական թվականներին նա անվիճելի տարբերակում էր անցկացրել բնիկ և փոխառյալ բառերի միջև: Հայագիտական ուսումնասիրությունների շարքը, որոնցից միայն մի գրքույկ էր (այստեղ թիվ 7-12), նպատակ ուներ անցկացնել բառապաշարի հենց այս սահմանագատումը, ինչպես նաև տալ բնիկ հայկական բառերի պատմական վերլուծություն, որը հետագայում նրա մոտ մինչև վերջ պահպանվեց և նրա անավարտ *magna opus*-ի⁸, «Armenische Grammatik»-ի⁹ մի հատորը դրա ընդօրինակելի պարզությունն է տալիս: Այս հատորի 1895 թվականին լույս տեսած առաջին մասը, որը նվիրված էր միայն հայերենի ստուգաբանությանը, որպես միակ հնարավոր սիստեմատիկ հիմք պատմական հնչյունաբանության, միավորում է որպես հանրագիտարան 300 էջանոց անվանացանկում գրեթե միայն իրանական փոխառություններ, որոնց վերծանման համար Հյուբշմանը զինված էր դեռ առաջին հերթին իր կրթությամբ: Երկու տարի անց լույս տեսած հատորի մյուս մասերն ընդգրկում էին մնացած փոխառությունները՝ սիրիական, հունական, ինչպես նաև փոխառություններ, որոնց ծագումը հաստատված չէր և, վերջապես, որպես վերջին մաս՝ «բնիկ հայկական բառերը», թիվ 438 բառ, դրանով իսկ շատ ավելին, քան 1883 թվականի «Հայկական ուսումնասիրությունների» մեջ, որտեղ միայն 232 հաստատ բնիկ հայկական գլխաբառեր էին տրված, որոնց կապակցությամբ Հյուբշմանը առաջին անգամ էր փորձ ձեռնարկում հայերենի մի սիստեմատիկ պատմահամեմատական հնչյունաբանություն ստեղծել:

Հյուբշմանի հայերենի ստուգաբանական աշխատությունների աչքի զարնող առանձնահատկությունը հետևողական ուշադրությունն է անունների նկատմամբ: Իրանական ծագում ունեցող բազմաբանակ անունները, առաջին հերթին՝ անձնանունները, սակայն նաև աշխարհագրական

անվանումները, նրա ուշադրությունն հենց սկզբից էին գրավել: Եվ հենց դրանք էին խոստանում իրանական փոխառությունների խմբի հնչյունաբանական համապատասխանությունների մասին պարզաբանումներ տալ: Նույնն էր նաև այլ փոխառությունների կապակցությամբ, ինչպես ասորական և հունական անունների, գերազանցապես քրիստոնեական ասպարեզից: Այսպիսով, Հյուբշմանի համար ավելի մատչելի էր բոլոր օտար բառերի սահմանագատումից հետո ձեռնարկել մնացած անունների ճշգրիտ դիտարկումը: Անձնանունների մի ավելի փոքրածավալ դիտարկումը կկարողանար ապացուցել, որ բնիկ հայկական, ոչ փոխառյալ անունները, թե՛ լրիվ և թե՛ փաղաքշական, հիմնականում հնդեվրոպական անվանումների շարունակությունը չեն:

Հյուբշմանի վերջին ավարտված, համեմատաբար ծավալուն աշխատությունը նվիրված է, ընդհակառակը, հին հայկական անուններին, և հանդիսանում է առաջին սիստեմատիկ և այս ասպարեզում մինչև օրս անգերազանցելի մնացած շարադրանքը՝ «Die altarmenischen Ortsnamen»¹⁰: Աշխատությունը, սակայն, շատ ավելի բովանդակալից է, քան այդ խոստանում է նրա համեստ վերնագիրը, քանի որ այն հայկական երկրագիտության և պատմական աշխարհագրության համար լուրջ հիմք ծառայող մի շարադրանք է, որն այդ սահմաններից շատ է դուրս գալիս: Սկզբում տրվող մինչև բյուզանդական ժամանակաշրջանը, Հայաստանի պատմական աշխարհագրությանը և ազգաբնակչության հարաբերություններին նվիրված տեսությանը հետևում է առանձին նահանգների և գավառների անվանումների քննարկումը, ինչպես նաև մի անվանացանկ և տեղանունների ձևաբանական վերլուծություն: Այս աշխատությունը այսօր ևս կարող է օրինակ ծառայել մնաց տիպի հրապարակումների համար նաև ընդարձակ հնդեվրոպաբանության ասպարեզում:

Հյուբշմանի հիմնական գործը պետք է դառնար հայերենի ընդարձակ քերականությունը, որը պլանավորված էր որպես եռհատորյակ: Հեղինակը մտադրություն ուներ առաջին հատորում շարադրել ստուգաբանությունը, երկրորդ հատորում՝ հայերենի լեզվական նյութը՝ բառապաշարը, արմատական բառեր, վերջածանցներ և նախածանցներ, երրորդ հատորը՝ հնչյունաբանություն և ձևաբանություն, ինչպես նաև տալ շարահյուսության համառոտ ակնարկ: Ամբողջը, սակայն, մնաց որպես մի ևսկայական իրան, որովհետև 1895 թվականից մինչև 1897 թվականը լույս տեսավ միայն առաջին հատորը՝ Հյուբշմանի կողմից ճիշտ համարվող ստուգաբանությունների մի հավաքածուով: Հենց այս, իր կողմից ճիշտ համարվող բառերի ընտրության մեջ է, որը մի կողմ է նետում ոչ պիտանի պատմական բեռը, Հյուբշմանի արժեքը: Մինչև այսօր այս աշխատությունը մնում է մի անփոխարինելի օժանդակ միջոց հայերենի բառապաշարի և անունների շուրջ տեղի ունեցող բանավեճերի ժամանակ: Հյուբշմանի կողմից հայերենի նկատմամբ կիրառվող ստուգաբանական հետազոտությունները մինչև օրս մնում են հեղինակավոր: Հյուբշմանի այդ վարպետ գործի ճիշտ գնահատականը կարելի է տալ միայն այն դեպքում, եթե այժմեականացնենք նրա օրոք կիրառվող հետազոտությունների իրավիճակը: Մի շարք ազգակից

⁸ Ծավալուն աշխատություն:

⁹ Հայերենի քերականություն:

¹⁰ Հին հայկական տեղանունները:

լեզուների համար (նրանց թվում հնդարիականը և հին իրանականը) չկային ստուգաբանական բառարաններ, հայերենի հնչյունների պատմական ուսումնասիրությունը դեռ չէր ավարտված, և միշտ չէր, որ հնչյունական օրենքների հետազոտությունները ճիշտ արդյունքի էր հասցված, միջին իրանական լեզուները այսօրվա իմացական մակարդակի տեսանկյունից միայն նվազագույն չափով էին վկայակոչված, նաև հայերենի հնչյունական օրենքների հետազոտությունը դեռ իր ավարտին չէր հասցված, և ոչ բոլոր դեպքերում կային հաստատ արդյունքներ. միջին իրանական լեզուները այսօրվա ճանաչողական աստիճանի համեմատությամբ միայն շատ թերի են վկայակոչված և մնան բնույթի շատ ուրիշ դժվարություններ, առանձնապես անհրաժեշտ օժանդակ միջոցների տեսանկյունից, այստեղ դեռ մինչև օրս էլ նույն խղճուկ վիճակն է: Եթե Հյուբշմանին անգամ հաջողվել է ստուգաբանության հարցերում բերքը մինչև ամբար հասցնել, սակայն նրան բախտ չէր վիճակվել շարունակել այս հիմքերի վրա կառուցել և գործն ավարտել: Այնուամենայնիվ, նրան հաջողվեց Պատրուբանիի «Ab-handlung»¹¹-ների (թիվ 19) մեջ հրատարակված իր աշխատությունում (թիվ 5), որն իրենից ներկայացնում է հայերենի ձայնավորների համակարգի ուսումնասիրության սահմանաքարը, բազմաթիվ փոխառյալ բառերի օգնությամբ, բավականաչափ ճիշտ նշել առաջինն իր կողմից ճանաչված և ձևակերպված ձայնավորների ժամանակագրությունը (որ i-ն և u-ն ոչ վերջնավանկերում օ / Օ, իսկ é-ն և oy-ը i կամ u են տալիս), ինչպես նաև հայերենի տեղաշարժը: Սրանք նշված հաջողակագրությամբ պարթևական ժամանակաշրջանում են տեղի ունեցել: Այս՝ ըստ էության մի հեռավոր անկյունում հրատարակված հոդվածը հնարավորություն է տալիս ենթադրելու, թե ինչքան բան ուներ Հյուբշմանն ասելու իր՝ հայերենի քերականության այդպես էլ չհրատարակված հատորներում, էլ ավելի անհետաձգելի է թվում մի բան, որ այստեղ արդեն կարող էր տեղի ունենալ՝ նրա բոլոր հայագիտական աշխատությունները հավաքել որպես մի ամբողջություն:

Ներկայացվող հատորը նպատակ ունի, այն բանից հետո, երբ Հյուբշմանի հայագիտական խոշոր աշխատությունները նոր հրատարակությամբ նորագույն ժամանակներում վերստին մատչելի կդառնան, - «Հայերենի քերականություն» (մասն I): («Հայկական ստուգաբանություններ», Լայպցիգ, 1897, ի վերջո, երրորդ (անփոփոխ) հրատարակությամբ (Հիլ-դեսհայն, Նյու Յորք, 1972 և «Հին հայկական տեղանուններ», Ստրասբուրգ, 1904), սկզբում հնդեվրոպական հետազոտությունների մեջ (16, 1904, 197-490), նոր հրատարակությամբ Ամստերդամում, 1969 - որպես այս երկու խոշոր աշխատությունների լրացում, նրա հայագիտությանը նվիրված մանր հոդվածները միևնույն տեղում միավորվեն: Նրանց թվում մի առանձնահատուկ տեղ գրավեցին այն ուսումնասիրությունները (թիվ 15, 19, 20), որոնք լույս էին տեսել հեռավոր տեղերում և այսօր ոչ մատչելի տոնական հանդեսներում և ամսագրերում և այդ իսկ պատճառով այս ժամանակամիջոցում առավել կան պակաս մոռացվել էին: Նկատի են առնվել այդ

պարագայում հայագիտության՝ իր ժամանակի ոճին ոչ տիպական, համեմատաբար առավել անձնական բնույթի առարկությունների կողքին նաև կարևոր գրախոսականներ (թիվ 4, 6, 17, 18, 21, 22), սակայն նպատակ է եղել լիակատար ամբողջականությանը: Նաև մի կողմ են թողնվել բոլոր հայագիտական ոչ լեզվաբանական բնույթի հրապարակումները, առաջին հերթին իր հարիլիտացիոն ատենախոսությունը՝ «Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber»¹², aus dem Armenischen des Sebëos (Լայպցիգ, 1875), ինչպես նաև այս լեզվի մասին ավելի պատահական դիտողությունները, որոնք առաջին հերթին նվիրված են այլ հարցերի, օր. հայերենի հոլովների կիրառմանը նվիրված հակիրճ շարադրանքը (Zur Casuslehre):

Ուլտիգեր Ըմիդս

¹¹ Դողվածաշար:

¹² Հայերի պատմության և արաբների առաջին պատերազմի մասին՝ Մեքեսի հայերեն (բնագր) -ից:

ՀԱՅԵՐԵՆԻ ԴԻՐԸ ՀՆԻՎԻՐՈՊԱԿԱՆ ԼԵՁՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միայն խմբագրության որոշակի պահանջով է, որ ես այստեղ ճշգրտորեն եմ հետևել Յուստի կողմից գեոդերենի նկատմամբ կիրառվող տառադարձությանը, որից ես, հատկապես այստեղ, հաճույքով կշեղվեի: Այս տառադարձությունը, ինչպես Յուստին ինքն է նշում քրդերենի շփականների նվիրված իր հրաշալի աշխատության սկզբում, որոշ թերություն ունի, քանի որ այն իրանական շփականները ճիշտ նույն ձևով է տառադարձվում, ինչպես հնդկերենինը (օր.՝ սնս. dirgha «երկար»=գեոդ. daregha, այսինքն՝ dareya իրանական darga-ից, հ.ե. dargha), և, այսպիսով նույնության խաբուսիկ պատկեր է ստեղծում այնտեղ, որտեղ իրականում հնչյունական լուրջ տարբերություն կա: Հետևաբար ներկա հոդվածի ընթերցողները պետք է որ ուշադրություն դարձնեն այն բանի վրա, որ այստեղ բաղաձայն +հ կապակցությամբ տառադարձվող իրանական հնչյունները միշտ պայթաշփական են արտասանվում: Այդ շփականներից ձայնեղները միայն շատ ուշ առաջացել են ձայնեղ պայթականներից, այն բանից հետո, երբ նախնական շնչեղ ձայնեղ պայթականները համընկել են պարզ ձայնեղ պայթականների հետ: Ուրեմն, այն ժամանակ, երբ իրանական (ինչպես նաև սլավոնալիտական) լեզուները լիովին կորցրել են իրենց շնչեղ ձայնեղները, սանսկրիտերենում նրանք միայն որոշակի դեպքերում են պարզ ձայնեղներ դարձել, օր.՝ այն արմատների սկզբում, որոնք նույնպես շնչեղ ձայնեղներով են ավարտվում: Այսպիսով, հնդկերենում dhugh-ից պետք է որ առաջանար՝ dugh կամ dsh, մինչդեռ իրականում dug է հնչում, այն էլ հնչյունական տարբեր սկզբունքների համաձայն: Հետևաբար արիական հիմք լեզվի համար թերևս պետք է սահմանել dhugh ձևը և ո՛չ թե dsh, ինչպես Ֆիքն է արել, ուրեմն ո՛չ թե dughtar, այլ՝ dhughtar, ո՛չ թե druh, այլ՝ dhruugh, ո՛չ թե badh, այլ՝ bhadh և այլն: Քանի որ տեղաշարժի հետևանքով շնչեղների համընկումը պարզ ձայնեղների հետ ո՛չ թե նախնական է, այլ ավելի ուշ շրջանակներից է գալիս և պատահականության արդյունք է: Ըստ որում հարկ է միաժամանակ նշել, որ Ֆիքը սխալվում է նաև որոշ հիմք ձևեր առաջադրելիս, օր.՝ darcti-ն «տեսողություն» նա դիտում է որպես սնս. drshṭi=գեոդ. darsti: Յուստի s-ն միշտ sh-ի արժեքն ունի (տե՛ս նրա ձեռնարկը, էջ 362, § 59), այս իսկ պատճառով ճիշտ կլինի ոչ թե darsti, այլ darshṭi, հետևաբար որպես արիական

նախածն պետք է ենթադրել daushan փոխանակ dausan, drāghishta փոխ. drāghista, daksh փոխ. daks, dvisn փոխ. dvis, parshti փոխ. parcti, yashtar փոխ. yaçtar, rishta փոխ. riçta, ashtan փոխ. açtan և այլն: Հարկ է նաև Յուստիի Գ-ի փոխարեն գեոդերենում s և s-ի դիմաց sh կամ sh' (ինչպես ես պատրաստվում եմ անել այդ այստեղ, sh-ն գրությամբ տարբերակելու համար հնչյունապես նրանից հավանաբար շատ քիչ տարբերվող մեկ այլ sh'-ից:

Հայերենի տառադարձման մեջ ես մեծ մասամբ հետևում եմ Ֆր. Մյուլլերին, գրելով kh փոխարեն q¹, dz փոխ. ç, ts փոխ. ç, j փոխ. sh, l փոխ. ɛ, ç փոխ. kh, v փոխ. w և w¹) փոխ. ov: Մյուլլերի տառադարձություններից իմ շեղվելու պատճառները ես կհիմնավորեմ այստեղ կամ մեկ այլ տեղում, երբ կանոնադառնամ հին հայերենի արտասանության և տառադարձության հարցերին ամբողջությամբ վերցրած:

Իմ փորձը՝ ցույց տալու հայերենի դիրքը ցեղակից լեզուների շրջանում, առաջինը չէ: Հայերն իրենք այդ մասին կարծիքներ են հայտնել, որոնք շուրջ են ազգային փառասիրությունը, դրանք, սակայն, զուրկ են եղել որևէ գիտական հիմնավորումից: Նախորդ դարերի որոշ եվրոպական գիտնականներ ևս այդ լեզվից ամեն ինչ են արել, քանի որ չգիտեին նրա հետ ինչպես վարվել: Սակայն Բոպպի կողմից լեզվաբանության հիմնադրումից անմիջապես հետո Պետերմանը իր «Հայոց լեզվի քերականության»² (Բեռլին, 1837) սկզբում գտնվող ստուգաբանությունների միջոցով կարողացավ ապացուցել, որ հայերենը հնդեվրոպական լեզու է: Ինը տարի անց, 1846 թ., Վինդիշմանը բավարական ակադեմիայի աշխատությունների մեջ (IV, 2), ըստ որում՝ Պետերմանից բոլորովին անկախ, հայերենի մասին հրատարակեց մի հրաշալի ուսումնասիրություն, որտեղ նա այն եզրակացությանն էր հանգել, որ հայերենը մի բավական հին բարբառից է սերվում, որը պետք է որ մեծ նմանություն ունեցած լինի գեոդերենի և պարսկերենի հետ, որին, սակայն, դեռ վաղ ժամանակներում օտար տարբեր են միացել: Մինչդեռ Պոտտը կասկած էր հայտնում, թե արդյոք հայերենը արիական լեզու է և փորձում էր ապացուցել արիերենի միայն մեծ ազդեցությունը հայերենի վրա, Դիֆենբախն՝ ընդհակառակը, նշում է, որ այդ ենթադրությունը բավարար չէ հայերենի կապը հնդկերենի հետ ապացուցելու համար, մի կարծիք, որին միացավ նաև Գոշեն իր «Հայոց լեզվի և ազգության արիական բնույթի մասին»³ (Բեռլին, 1847) ատենախոսությունով: Երեք տարի ավելի ուշ Լազարը, գերմանական արևելագիտական ընկերության

¹ ս-ին շատ մոտ կանգնած հնչյուն:

² Grammatica linguae Armeniacae:

³ «de Ariana linguae gentisque Armeniacae indole»:

(IV, էջ 347 և հաջ.) ամսագրում⁴ հրատարակած իր մի հոդվածում «Հայերենի և սանսկրիտի բաղաձայնների համեմատությունը» տվեց 183 հայերեն բառերի մի ցանկ, նրանց ստուգաբանության հետ միասին (սրանք նա Վինդիշմանից անկախ էր գտել), առանց քննարկելու այդ լեզվի բնույթը: 1875 թվականին Բոպպն իր համեմատական քերականության երկրորդ հրատարակության առաջաբանում հայերենը բնորոշեց որպես իրանական և փորձեց, սակայն անհաջող, վերլուծել նրա թեքական էլեմենտները: Այս լեզվի ավելի խորքերը գնաց Ֆր. Մյուլլերը, որը, 1861 թվականից սկսած, իր մի շարք հոդվածներում (վիեննական ակադեմիայի նիստերի արձանագրությունները)⁵ հաջողությամբ աշխատում էր հայերենի ստուգաբանության և քերականության երևույթների մեկնաբանության վրա, որը և նա անվերապահորեն որոշարկեց որպես իրանական, հիմնականում նրան է հետևում նաև Պատկանովը, «Հայերենի կազմավորման շուրջը»⁶ հանրագումարի բերող իր հոդվածում (ռուսերենից ֆրանսերեն թարգմանված «Journal asiatique-ում», հ. XVI, շարք 6, 1870, էջ 126 և հաջ.): Եթե այժմ նաև Լազարյան է պնդում իր հոդվածների ժողովածուում⁷ (1866, էջ 291), որ հայերենում պետք է տարբերակել երեք բաղկացուցիչ մաս՝ նախնական հիմքը, նրա վրա շերտավորված հին իրանական նստվածքը և ապա պարթևական թագավորության հիմնադրումից հետո եկող նոր իրանական շերտը, սակայն հարկ էր, որ նա մշեր այդ շերտերի մասին վկայող փաստերը, բնական է, թե ինչու նրա կարծիքը հետագայում ուշադրության չարժանացավ: Համեմայն դեպս Մյուլլերի կարծիքն այն մասին, որ հայերենը իրանական լեզու է և չի հերքված, և այժմ այն պետք է դիտվի որպես ամենահիմնավորը և իշխողը:

Թե որքանով է այդ հիմնավորված, կքննարկենք ստորև:

Մյուլլերի ուսումնասիրությունների հիմնական թերությունն այն է, որ նա չի նախաձեռնել ապացուցել, թե հայերեն այն բառերը, որոնք հնչյունապես համընկնում են իրանական համապատասխան բառերի հետ, արդյոք պարսկական փոխառություններ է կատարել արամեերենից և հունարենից, ապա մեզ իրավունք է վերապահվում ապացուցելու, որ հայերը, որոնք դճրեր շարունակ իրենցից ավելի հզոր ու ավելի կիրթ պարսիկների ազդեցության տակ էին գտնվում, այդ լեզվից քիչ բառեր են, որ պետք է փոխ առած լինեին: Եթե այդ ընդունելի համարենք, ապա մի ամբողջ շարք բառերի նկատմամբ կարելի է կասկած հայտնել, որ նրանք, իրոք, փոխառություններ են:

⁴ Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft:

⁵ Sitzungsberichte der Wiener Akademie:

⁶ Über die bildung der armenischen Sprache:

⁷ Gesammelten Abhandlungen:

Եթե նման կարծիքի տուրք տրվի, ապա կվերանա նաև այդ լեզվի իրանական բնույթի մասին գոյություն ունեցող հավատը⁸: Եվ չէ՞ որ այդ կասկածը հեշտությամբ կարող է հիմնավորվել: Հայերեն շատ բարդությունների մեջ, օրինակ, կարելի է գտնել - **dast** «ձեռք» բառը, մինչդեռ «ձեռք» բառի համար կիրառականը dzern բառն է: Հետևաբար **dast**= պրս. **dasta** (զենդ. **zasta**, սնս. **hasta**-ի՝ **z**-ի հնչյունափոխությամբ **d**-ի պարզվում է, որ այն սպեցիֆիկ պարսկական բառ է, ուրեմն, հայերենում այն փոխառություն պետք է լինի: Այսպիսով, օտար բառեր են նաև՝ **dastak** «դաստակ», **dastakert** «դաստակերտ» հայրս. **dastaka**, ***dastakarta**: Այնուհետև պարզվում է նաև, որ հայերենում նախկինում **r**-ով սկսվող բառերում միշտ **a** կամ **e** է նախադրվում, ուստի և **razm** «մարտ, կռիվ», **rah** «ճանապարհ», **rocik**⁹ «ռոճիկ», որոնց մենք հանդիպում ենք պարսկերենում, փոխառություն են պարսկերենից, ինչպես **r**-ով սկսվող բոլոր բառերը հայերենում օտար բառեր են. *հմմտ.* **r'abbi** «վարպետ», «ուսուցիչ»: Այնուհետև, քանի որ բառավերջի «**h**»-ն պարսկերեն= նախնական **s** կամ **tr**-ի (և նախն. **ç**=հայ. **s**, նախն. միջձայնավորային ատամնային=հայ. ատամնայինի կամ **g**, ապա բառավերջի **h**-ն պարսկերենում ստուգաբանորեն հայերենի **h**-ից տարբեր է¹⁰: Հետևաբար պարսկերենից են փոխառված: Նշանակում է՝ պարսկերենից փոխառություններ են հայ. **akah** «հմուտ, ունակ»=պրս. **âgâh**, **âkâça**-ից, **gah** «գահ»=պրս. **gâh**, զենդ. **gâtu**, **zrah** «զրահ»=զենդ. **zrâdha**, պրս. **zirih**: Հետագայում, եթե ստորև, որպես հնչյունական օրենք դիտելու լինենք այն, որ սնս. **j**=զենդ. **z**, **z**=հայ. **ts**, հետևաբար սնս.-յան «ծնվելը»= **z**, **zan**=հայ. **tsn** (**tsin**, **tsen** -ից), ապա **azat** «ազատ»=պրս. **âzâd**, զենդ. **âzâta** (**zan** արմատից) պետք է դիտվի որպես օտար բառ: Դիշտ նույնպես, եթե ստորև պարզվի, որ սնս. **kan**=զենդ. **jan**, ապա հայերենում պետք է ներկայացվեր **gan** ձևով, ապա կասկածի տեղիք է տալիս հայ. **zen**.-«զոհել», «մորթել» բառի փոխառյալ լինելը, քանի որ

⁸ Ընդհանրապես Ֆր. Մյուլլերն ինքն էր այդ խոստովանում, քանի որ իր՝ ինձ հասցեագրված մի բարեկամական նամակում (18 հուլիսի, 1874), որտեղ նա հայերենը եռանդազից որպես իրանական է ներկայացնում, և անգամ չի ուզում այն որպես անցման վիճակում գտնվող լեզու դիտել, գրում է, որ՝ «հայերենում նախապահավերենից շատ բառեր կան, ակներև փաստ է. ես վախենում եմ, սակայն, որ որևէ բառ, որ իսկապես հայերեն է, որպես օտար բառ դիտվի միայն այն պատճառով, որպեսզի կարողանան ժխտել հայերենի իրանական բնույթը: Սակայն բավական չէ այդ միայն ընդունել, ամերաժեշտ է, եթե ուզում ենք որևէ լեզվի բնույթի մասին դատել, յուրաքանչյուր առանձին դեպքում վստահ լինել, որ այն նյութը, որով աշխատում է, օտար ունեցվածք չէ: Բայց և այնպես, ստորև տրվող տեսության շահերից ելնելով, ինձ հաճելի կլինե, եթե Ֆր. Մյուլլերն ինձ ապացուցեր, որ փոխառյալ բառերի մասին իմ տեսության մեջ ես չափազանց հեռու եմ գնացել»:

⁹ Պրս. **rôzi**, որին հայերենում պետք է համապատասխանի ոչ թե **rocik**, այլ **lûsik**, քանի որ պրս. **rôz** «օր»= հայ. **luis**:

¹⁰ Նույնն է միայն այն դեպքում, երբ երկուսն էլ **s**-ից են առաջացել, հայ. **mah-ik**=պրս. **mâh** «լուսին», գալիս է **mâsa**-ից:

այն =զենդ. jan, պրս. zan-նույն հիմունքներով: Եթե սնս. aj-ը ըստ հնչունական օրենքների=զենդ. az, հայ. ats, ապա gavazan «զավազան»=զենդ. gavâz, չի կարող բնիկ բառ լինել, այլապես չէ՞ որ այն պետք է հնչի kovatsan: Նույնքան քիչ հավանական է xarazan-ը «խարազան, մորակ», որի փոխարեն պետք էր սպասել išatsan: Ի վերջո, սնս. yai= զենդ. yaz «հարգել, մեծարել», հնչունական օրենքների համաձայն հայերենում պետք է հնչեր lats կամ dzats (սնս. j=զենդ. z, z=հայ. ts, համապատասխանության մասին տես ստորև): Նախնական բառակազմական ց-ն հայերենում գրվել է l կամ dz, z: Այնտեղ, որտեղ ց-ն հայերենում բառակազմում է կանգնած, հետագայում սերտաճած նախդիր է, որը հեշտությամբ կարելի է ապացուցել, սակայն այն yaz է հնչում, հետևաբար փոխառություն է: Նույնը կարելի է ասել նաև yašt «զոհ»=զենդ. yêshiti բառի մասին: Որպես փոխառություններ պետք է դիտել, այսպիսով, նաև dev=զենդ. daêva «բառը», որի փոխարեն, համաձայն ներքո տրվող տեղաշարժի օրենքի, պետք է սպասել tiv, ինչպես նաև ըստ իմ համոզմունքի՝ bag-«աստված»=զենդ. bagha և den¹¹ կրոն=զենդ. dâêna «խոսքեր», որոնք Հայաստան են մտել զրադաշտական կրոնի հետ միասին: Նույն ձևով էլ ես կուզենայի առանց որևէ ապացույցի Պարսկաստանից Հայաստան ներթափանցած դիտել այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ thošak= պրս. tôshah «ճանապարհաձախս, ambox=պրս. anboh, zêndan «բանտ, զնդան»=պրս. zindân, մինչդեռ այնպիսի բառերի նկատմամբ, ինչպիսիք են՝ dipak «դիպակ»=պրս. dibâh, արաբ. dibâj, crag=պրս. cirâgh, արաբ. sirâj, thuthak=պրս. tûtak, tûti, kerpas=պրս. kirpas, արաբ. kirbâs, սնս. karpâsa, $\kappa\acute{\alpha}\rho\pi\alpha\sigma\omicron\varsigma$ և այլն, ոչ մի կասկած չի կարող լինել, որ նրանք օտար ունեցվածք են: Եթե ինձ այսքան դյուրին եղավ Ֆր. Մյուլլերի կողմից քննարկված բառերից մի ոչ չնչին քանակ¹² որպես փոխառություն սահմանազատել, ապա որքան կաճի այդ թիվը, եթե Լագարդի հոտառությունն ունեցող մեկը ձեռնարկեր հայերենի ողջ բառապաշարից գատելու օտար տարրերը: Թերևս այս երկու խմբում էլ կարելի է տարբերակել մի ավելի նոր շերտ և, այսպիսով, կզտնվեր այն երկու շերտը, որոնք, ըստ Լագարդի, պետք է որ հայկական հիմնաշերտի վրա շերտավորվեին:

¹¹ Չախջախենանի հայ-խալեբե՛ն բառարանում նույնպես պարսկերեն է նշվում:

¹² Մրանց վրա են հավելվում նաև օտար անձնանունները, որոնք խստորեն տարբերվում են բնիկ հայկական անուններից, վերջիններս միանգամայն յուրօրինակ են հնչում և ստուգաբանորեն մթազնված են, առաջինները պարսկերենից եկող հին ծանոթ անուններ են, ինչպես՝ Artavan=զենդ. ashavan, ուստի և ashavazdân, ուրեմն հայրս. *artavan, Artavazd=զենդ. ashavazdân, ուրեմն՝ հայրս. *artavazdah (առաջինը =հուն. Ἀρτάβας, Artabanus, վերջինը՝ =Ἀρταβάδης կամ Ἀρτασάδοξ, Artavasdes և այլն: Այդ պատճառով էլ կասկածելի է, միայն անձնանուններից ելնելով՝ փորձել ապացուցել հարևան մի ժողովրդի իրանական ծագումը:

Եթե մենք, այսպիսով, բառապաշարի նկատմամբ թերահավատ գտնվեինք, ապա մենք մեզ իրավունք պետք է վերապահենք ավելի մեծ հավատով վերաբերվել քերականության նկատմամբ: Չէ՞ որ այն բոլոր կենդանի լեզուների համար այն պալլադիոնն է, որին օտար ազդեցությունը չի կարող դիպչել: Ինչքան խոսքն է աֆղաներենի և նոր պարսկերենի կամ անգլերենի բառապաշարը, և ինչքան պարզորոշ է ուսուցանվում քերականությունը, որ մեր առաջ մի դեպքում իրանական լեզու է, իսկ մյուս դեպքում՝ գերմանական: Եվ մենք պետք է հույս ունենայինք քերականությունից որոշակի լուսաբանում ստանալ, քանի որ այն համեմատաբար հարուստ թեքական համակարգ ունի: Չէ՞ որ հայերենը անվան կարգում չորս, իսկ դերանվան կարգում՝ հինգ թեքական վերջավորություններով տարբեր հոլովներ ունի, իսկ բայի կարգում, չհաշված աներևույթը և դերբայները, թեքման միջոցով տարբերակում է ներգործակերպ և կրավորակերպ խոնարհման տիպեր, սահմանական, ստորադասական և հրամայական եղանակներ, ներկա անկատար, պարզ և բաղադրյալ, կատարյալներ և նրանց համապատասխան կրկնակի ապառնիներ: Քանի որ ես այստեղ համառոտակի քերականությամբ եմ զբաղվելու, թող ինձ թույլ տրվի անունների և բայերի թեքման մի հարացույց ներկայացնել:

ա) Անուն

Հիմքեր՝ mardo (βροτο), anwan= (անուան) (=anman)

	եզակի		հոգնակի
Ուղղ.	mard	anun	mardkh
	մարդ	անուն	մարդք
Հայց.	z mard	z anum	z mards
	զմարդ	զանուն	զմարդս
Սեռ.-տր.	mardoy	anwan	mardoy
	մարդոյ	անուան	մարդոյ
Բաց.	i mardoy	yanwanē	i mardoz
	ի մարդոյ	յանուանե	ի մարդոց

տր.	mardum ¹³		
	մարդում		
գործ.	mardov	anwamb	mardovkh
	մարդով	անուամբ	մարդովք
p) բայ՝	ger-el	«գերի վերցնել»	
		ներգործակերպ	կրավորակերպ
1-ին դ. եզ. սահման. ներկա	gerem	gerim	
	գերեմ	գերիմ	
ստորադ. ներկա	gerizem	gerizim	
	գերիցեմ	գերիցիմ	
սահմ. անց. անկատար	gerêi	gerêi	
	գերեի	գերեի	
անցյալ կատարյալ	gerezi	gerezay	
	գերեցի	գերեցայ	
գտան-գլ բայից	gti	gtay	
	գտի	գտայ	
	gereziç	gerezaiç	
	գերեցից	գերեցայց	
ապառնիներ	gtiç	gtaiç	
	գտից	գտայց	

Որպես առաջնային բայական վերջավորություններ են m, s, y, mkh, ykh, n

¹³ Թիֆլիսի այսօրվա բարբառում ստ-ով, որը միայն դերանվանական ծագում կարող է ունենալ, միայն ներգոյական հոլովում է կիրառվում, մինչդեռ սեռական և տրական հոլովները նույնացել են: Նոր հայերենը հոլովման հարցում դասական հայերենի համեմատությամբ մի հոլովաձև ավել ունի, որն, անշուշտ, նորակազմ է:

և որպես երկրորդական՝ i, ir, r, akh, ikh, in վերջավորությունները:

Եթե, սակայն, հայերենը քննարկենք ըստ նրա ամբողջական կառուցվածքի, ապա այն մի այնպիսի լեզվի տպավորություն կթողնի, որը մեծ փոփոխություններ է կրել¹⁴: Այն շատ բան է կորցրել հիմքակազմական և բառակազմական հին նյութից և կորցրածը փոխարինել է թեքման նոր տարրերով: Այստեղից բխում է, որ ստորադասականը ներկայի հիմքից և էական բայի ստորադասականից բաղադրված նորակազմություն է՝ em (արտասահիր yem) = sum, izem = sim, այստեղից էլ՝ gerem-gerizem, ajam-ajazem, և որ ճիշտ նույն ձևով ապառնին կազմված է կատարյալի հիմքից և նույն ստորադասականից՝ կցվող բաղադրիչների չնչին ձևափոխությամբ՝ gereç+izem = gereziç փոխ. gereziçem, երբ անկատարը նույնպես կարող էր բաղադրյալ նորակազմություն լինել ներկայի հիմքից և էական բայի անցյալ անկատարից, 2-րդ դեմքը gereç+izes = gereszes փոխ. gereziçes և այլն, այն դեպքում, երբ անկատարը նույնպես կարող էր ներկայի հիմքից և էական բայի անկատարից բաղադրված նորակազմություն լինել՝ em = sum, êi = eram, gerem-gerêi, մինչդեռ Ֆր. Մյուլլերը նկատի ունենալով a-խոնարհման բայերը, որոնք անկատարը կազմում են ոչ թե êi, այլ ayi ձևությամբ՝ ajam-ajayi, չտնում է, որ անկատարը կազմվում է ya ածանցով, berêi = berey-i¹⁵:

Բայց և այնպես ինքնըստինքյան հասկանալի է, որ լեզվական նորակազմությունների հիմնական գործոնը՝ համաբանությունն է այստեղ ուժեղ չորձել, որը և հիմնականում մեծ դեր է կատարել հին հայերենի թեքական ամակարգի նոր հայերենի թեքման նոր վիճակին անցնելու հարցում: Մի օրինակ, կրավորականի հիմնական ցուցիչը i-ն է, եթե այն հավելվում է ս-ով թեքվող բայերի ներկայի հիմքին, ապա ստացվում է wi-ի (zenu-l, կրավ. zenwi-l, l-nu-l, կրավ. Inwi-l) և այս wi-ն, որը նախապես շատ սահմանափակ քանակով բայերի կրավորականի ցուցիչն էր, արդի հայերենում դարձել է կրավորականի ընդհանուր ցուցիչ, *հմմտ.* ն. հայ. գործվիլ-ի. հայ. գործիլ, ներգ. գործել: Այս իրավիճակում պարզ է դառնում, թե ինչու հայերենի թեքման տարրերը մեզ համար դեռևս այդքան մութ են: Ես չգիտեմ, թե ինչպես պետք է բացատրել բաղադրյալ հիմքով կատարյալ կազմող g-ն¹⁶, ինչպես նաև -իցեմ-ի մեջ և այլուր հանդիպող g-ն, եթե դրանք դիտենք որպես h. ե.

¹⁴ Այս բանը կուսաբանի մի օր.՝ հոգնակի թվի 2-րդ դեմքի դերանունը՝ dukh, կազմված է եզակի թվի du-ից=du⁺ գոյականի հոգնակի թիվը կազմող kh վերջածանցից=նախն. as-ին: Հնդեվրոպական և ոչ մի լեզու թերևս այսքան հեռու չի գնացել:

¹⁵ Չբացատրված կմնային թերևս -էի, -էիր, -էր և այլն, մինչդեռ մենք կարող ենք ենթադրել, որ այս անկատարը անցել է ah-ից, որը մասամբ վերաբերում է նաև ներկային, որտեղ է-ն բացատրվում է ոչ թե որպես -asti-ից, այլ ավելի շուտ համաբանությամբ berê = bereti-ից:

¹⁶ g-ն շնչեղացած ծ-ն է, ինչպես նաև չ-ն շնչեղացած ճ-ն:

կատարյալի s-ն և sy-ն՝ syām-ից՝ as-ի ըղծական ձևից, ապա հայերենը բնավ չէր կարող իրանական լեզու լինել, քանի որ սրանց մեջ s -ն ներկայացված պետք է լիներ որպես h, իսկ y-ն՝ hy: Նույնքան մութ են բայական երկրորդային վերջավորությունները: Առաջնայինները, ընդհակառակը, ավելի պարզ են, որտեղ - m = mi, n = ni, y = ti, mkh = masi, որի համաձայն ykh (=tkh) կարող է ծագած լինել Շլայխերի կողմից ընդունված tasi նախաձևից, որի դիմաց սանկրիտերենը և զենդերենը հանդես են բերում tha: Սակայն ykh-ը հավանաբար առաջին դեմքի mkh-ի համաբանությամբ կազմված ձև է, և kh-ն պետք է դիտել որպես ավելի ուշ առաջացած հավելում, այնպես որ y-ն նույնպես tha-ից կամ նման մի ձևից պետք է ծագած լինի: Հայերենի իրանական բնույթին հակասում է նաև եզակի 2-րդ դեմքի s-ն, քանի որ իրանականը դրա փոխարեն հ ունի, այնուհանդերձ օտեթերենը, որը մի հաստատ իրանական լեզու է, նույն ձևում նույնպես -s ունի, որի բացատրությունը առանձին դեպքերում դեռ բաժ է մնացել:

Հոգնակի թվի հոլովակազմիչ վերջածանց g-ն նույնպես պարզ չէ, kh-ն հանգեցնում է as-ին (կամ ինչպես Ֆր. Մյուլլերն է գտնում՝ asas-ից իրանական āhah), s-ն՝ ans-ին: Գործիականում ունենք եզակի գործիականի ցուցիչը, որին հավելվում է հոգնակիի kh ցուցիչը: Եզակի թվի հոլովակազմիչների, տրական-ներգոյական m-ն ծագում է դերանվանական -hmāi,- hmi ձևերից, բացառականի ē-ն դժվարություն է հարուցում: Ֆր. Մյուլլերն այն փորձում է հանգեցնել ādha-ին, որը մի քանի անգամ հանդիպում է Ավեստայում, որպես բացառականի վերջավորություն: Ես հակված եմ ենթադրելու, որ (եթե ē-ն իսկապես at-ին է համապատասխանում, թերևս այն համապատասխանեցնել -tas-ին = զենդ. tō մակբայակերտ ածանցին: Մնում է քննարկել գործիականի b-վերջածանցը: Մինչդեռ այդ ցուցիչը նախապես նույնացվում է հնդեվրոպական գործիականի ցուցիչներից մեկի՝ bhi- հետ, Ֆր. Մյուլլերը և ես հակված էինք այն որպես նորակազմություն դիտել, թեև ոչ որևէ այլ պատճառով, քան այն, որ այս ածանցը հակասում էր հայերենի՝ մեր կողմից հաստատվող իրանական բնույթին, քանի որ ինչպես ընդհանրապես արիականում, այնպես էլ իրանականում գործիականում չկա bhi ցուցիչը: Մեր եզրակացությունը հետևաբար այս էր՝ եթե հայերենը իրանական լեզու է, ապա այն չի կարող գործիականում bhi ցուցիչ ունենալ: Ինչպես՞ս վարվել սակայն, եթե ավելի հավանական է եզրակացնել, քանի որ հայերենն այդ ածանցն ունի, ապա նա իրանական լեզու չէ: Այդ բ-ն, համաձայն հայերենի հնչյունական օրենքների, անշուշտ մատնանշում է bhi-ն, և նախնական anmambhi, martabhi պետք է հայերենում դառնային anmamb, martob, ավելի ուշ՝ anwamb, mardov, ինչպես և այսօր իրականում հնչում են anun, mard բառերի գործիականները: Եվ քանի որ իր գործառությամբ ևս b-ով

ավարտվող հոլովը զուտ գործիական է, հայ. b = h.ե. bhi համապատասխանության դեմ ոչնչով չի կարելի առարկել: Այս bhi ածանցը փորձել ենք գտնել հունարենում, գերմաներենում և սլավոնական լեզուներում: Սակայն հուն. φι-ն կարող էր ծագել նաև bhi-ի հետ բաղադրված այլ ձևայիններից (bhiam, bhiams, bhiams, bhis), գերմաներենում mi = bhi-ով ավարտվող գործիական իրականում չկա¹⁷, այնպես որ նա մնում է միայն սլավոնալիտականի համար տիպական, որտեղ bhi-ն պահպանվում է որպես huj. mī, լիտվ. mi, հետևապես bhi-ն որպես եզակի թվի գործիականի ձևային միայն հայերենի և սլավոնալիտական լեզուներին է տիպական հարմարվում:

Եզրակացություն. Հայերենի թեքման մեջ առանձնահատուկ իրանական ոչինչ հնարավոր չէ նշել, թերևս ընդհակառակը, մի կարևոր կետում այն տարբերվում է արիականից և համընկնում է սլավոնալիտական լեզուների հետ:

Քանի որ թեքումը հայերենի բնույթի մասին մեզ բավարար ապացույց չի տալիս, ուստի կդիմենք հնչյունաբանությանը:

¹⁷ Իրգ. u-ով ավարտվող գործիականի համար *hūmān*. Braune "Über die Quantität der ahd. endsilben", էջ 40:

Պարզելու համար, թե հայերենը իր հնչյունական կազմի տեսանկյունից իրանական է, թե ոչ, նախ պետք է պատասխանել այն հարցին, թե որոնք են իրանական հնչյունական համակարգի հիմնական գծերը, ի հակադրություն մյուս հնդեվրոպական լեզուների:

Դրանք են՝

Ա-1) ատամային s-ն, եթե նրան անմիջապես չի նախորդում կամ հաջորդում որևէ բաղաձայն, համատարած է տալիս,

2) համապատասխանաբար՝ sv-ն hv է տալիս,

3) այն դեպքերում, սակայն, որտեղ նրան i, u կամ ai, au են նախորդում, նա sh է դառնում, վերջին կետում իրանականը համապատասխանում է սանսկրիտերենին (բացի բառավերջային դիրքից, որտեղ սանսկրիտերենը s է պահպանում), մինչդեռ սլավոներենը ձայնավորների մեջ նրա փոխարեն հազագային ch է զարգացնում (sluchŭ = sraosha): Հունարենը, ընդհակառակը, s>h անցումով համապատասխանում է իրանականին, միայն թե հունարենում այս անցումը այնքան էլ հետևողական չի տեղի ունենում: Ի դեպ, կելտերենում ևս sv-ն hv, chw է տալիս, հմմտ. հկորն. huir, բրտ. choar «բույր» = նպրս. khváhar, կիմր. chwech (= sves) «վեց»,

4) իրանականը շնչեղների նկատմամբ հակակրանք ունի, սակայն հակում շփականների հանդեպ, որոնցից հատկապես kh, gh, f և ω հնչյունների նկատմամբ: Ըստ որում՝ իրանական ամենահին բարբառները, ինչպես, օրինակ՝ Գաթաները ու հին պարսկական բեռնագրերը դեռ ձայնեղ շփականները չունեն (gh, dh, w, որոնք, սակայն, առկա են զենդերենում), իսկ օտերերենում k, t խոլ պայթականները դարձել են շնչեղներ¹: Շնչեղներ ունի նաև բելուջերենը (տես հոդվածի վերջում), բայց հավանաբար այն հնդկերենի ազդեցության արդյունք է,

5) բաղաձայնական կապակցություններում շփականներն առաջանում են պայթականներից՝ հաջորդող t, sh, r, v հնչյունների ազդեցության տակ, այնպես որ նախնական kt, pt, tt տվել են kht, ft, st, ksh-ն՝ khsh, իսկ kra, pra, tra կապակցությունները՝ khra, fra, thra,

6) ուշադրության է արժանի 1 հնչյունի բացակայությունը հին իրանականում², ԲՎ-ի անցումը sp-ի և ի հակադրություն հնդկերենի՝ նախորդային pati (= սնս. prati), և մակբայական us, uz-ը (= սնս. ut, ud, սակայն նույնն է նաև հին

պարսկերենում) անցումը այնպիսի բառերի, ինչպիսին են՝ gaosha «ականջ» և այլն:

Բ-իրանականում չկան շնչեղ ձայնեղներ, որոնք, կորցնելով իրենց շնչեղությունը, համընկել են պարզ ձայնեղների հետ, իսկ հետագայում դրանց հետ միասին, ընդհակառակը՝ շփականների են վերածվել: Սլավոնալիտականում նույնպես ձայնեղ և շնչեղ ձայնեղները համընկել են:

Գ-հատկանշական է իրաներենի համար, որպես նրա գլխավոր առանձնահատկություններից մեկը, նախնական հետնալեզվային k, g, gh հնչյունների փոխակերպումը քմայնացած c, j և շչական s, z հնչյունների: Սանսկրիտում նույնպես տեղի է ունենում հետնալեզվայիններից անցում քմայինների, իսկ սլավոնալիտականում՝ հետնալեզվայիններից՝ շփականների:

Այսպիսով, այս բնորոշ գծերից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, հանդիպում է հնդեվրոպական լեզուներում, մինչդեռ իրաներենին բնորոշ են այդ բոլոր երևույթները միասին: Արդյոք այս երևույթների հանրագումարը հանդիպո՞ւմ է հայերենում:

Ա-1) Նախնական s-ն հայերենում սովորաբար որպես h է հանդես գալիս, հմմտ. hin = զենդ. hana “senex”; mahik = լուսին, mah բառի նվազականը, սնս. mâsa, զենդ. mâsonha, և այդ h-ն սղվում է, օր.՝ arb «խմել» արմատում = h. Ե. sarbh (sonbeo, լիտվ. srebiù), եւթն, ou. awd = h. Ե. saptam: Թեքման մեջ այս h-ն հանդիպում է որպես kh (այժմ շնչեղ արտահայտությամբ) ճիշտ այնպես, ինչպես պարսկերենում h-ն թանձրանալով՝ շփական kh-է տալիս: Որպես s այն պահպանվել է amis, mis, us բառերում, որտեղ s-ի պահպանումը պայմանավորվում է նրան նախորդող նախնական մի n-ի առկայությամբ, amis-ը ծագում է mens-ից, mis-ը memsa-ից, իսկ us-ը՝ amsa-ից: Թերևս նույն ձևով է բացատրվում հոգնակի հայցականի s-ն՝ mards (այժմ արտասանվում է mártus) ծագում է mardins = martans ձևից: Այսպիսով, s-ի պահպանումը այս դեպքում չի հակասում իրանականի վերը նշված հնչյունական օրենքներին, չնայած նրան, որ զենդերենում ևս n-ից հետո s-ն պետք է որ h տար, հմմտ. mañh = mans, man արմատի կատարյալի հիմքը = man + s: Մի դեպքում, անշուշտ (h. Ե. v-ից առաջ) s-ն կարծես պահպանվել է նաև հակառակ հնչյունական օրենքների. այն է՝ skesur, հմմտ. զենդ. qaçura «սկեսրայր», պրս.

¹ Ավելի հանգամանորեն տես Spiegel “Grammatik”, էջ 345:
² Որ հին իրաներենը 1 չունի, հետևում է այն բանից, որ ժամանակակից իրանական լեզուներում 1-ի գործածության հարցում ներդաշնակություն չկա: Օր.՝ հմմտ. հետևյալ դեպքերը՝ օս. stal «աստղ», khaln «սողուն կենդանի» (օձ), nal «մարր», malin «վախճանվել», մյուս կողմից՝ նոր

պարսկերեն sitārah, kirim, nar, murdan և ընդհակառակը՝ պրս. gulš (gula «կոկորդ»), օս. qur = gbur, աֆղ. ghārah իզ. «կոկորդի»-ի դիմաց; պրս. talkh «դառը», աֆղ. trix, իզ. tarxah, պրս. kulāgh = բելուջ. gurāgh «ագոավ» (աֆղ. kārghēh «ագոավ»): Ուստի, հակառակ Օպպերտի առարկությունների (Revue de linguistique IV, էջ 209), կարելի է պնդել, որ 1-ի գոյությունը հին պարսկերենում ժխտելի է:

khusur, այստեղ պետք է այն նախապես v-ն g¹ տված լինի, և ապա s-ից հետո փոխարկված լինի k-ի՝ skund «շնիկ»=փան-ի համաբանությամբ: Իմիջիայլոց, kesur ժողովրդական տարբերակը Վինդիշմանը² փորձում է դիտել որպես նախնական և k-ն համարում է kh=sv-ից առաջացած, այս դեպքում, սակայն, s-ն որպես օրգանական չէր դիտվի: Այս բացատրությունն ինձ հավանական չի թվում:

2) sv-ն հայերենում kh կամ v է տալիս, երկուսն էլ հավանաբար hv-ից են ծագել՝ k Choir (այժմ արտասանվում է khuir)=պրս. khvâhar, կարդա՝ khâhar, h. b. svasar և vez= հուն. αφεξ, կիմր. chwech:

3) Արիական sh=s i-ից և u-ից, ինչպես նաև նրանց բարձր աստիճաններից հետո հանդիպում է dž=զենդ. duzh<dush, hūmūt. dž-goh և zguiš-ի մեջ *-uzgaocha, այն է՝ «առաջ ցցված ականջներով», երկու խական իրանական կազմություն, որոնցից վերջինն արդեն պետք է որ հայերենի իրանական բնույթն ապացուցի: Եվ այդ zguiš-ը այնքան հարազատ է հայերենում, որ դժվար է այն փոխառություն համարել: Այս sh-ն հանդիպում է նաև սժ «հիշողություն, խելք» արմատի մեջ = զենդ. ushi «խելք, միտք»: Այլապես, անշուշտ, այս ձ-ն կարող էր դարձյալ s-ի փոխակերպվել, օր.՝ ls-el= զենդ. srush, sraosha-ի մեջ (լիտվ. klausā, հւլ. sluchū), nist=nsit=niseda=nishadah, ինչպես օտերենում, որտեղ sh-ի փոխարեն s է հանդես գալիս, ghos «ականջ», ars «արջ», aχsawa «զիշեր», ast «ուր» բառերում: Եվ, այսպիսով, թերևս իրավացի է Լագարդը, երբ gusan «երզիչ, երաժիշտ» բառը հանգեցնում է սնս. ghush «աղմկել, հնչել» բառին: Սակայն այս կետը քննարկելու համար եղած նյութը բավարար չէ:

4) Հայերենը սիրում է խուլ (համր) շնչեղներ, և դրանք լրիվ ունի՝ kh, th, ph, այն դեպքում, երբ խուլ շփականներից միայն χ ունի: Սակայն աֆղաներենը նույնպես խուլ շփականներից միայն χ (kh) ունի և ո՛չ f, սիրված է օտերենում և պարսկերենում:

5) χt = h. b. kt հանդիպում է սչt «խոստում», «դաշինք» = զենդ. ukhti, aχt «հիվանդություն, տառապանք»=զենդ. akhti բառերի մեջ, քանի որ հանդիպում ենք bast-ը baxt-ի կողքին, drast-ը draχt-ի կողքին (պրս. dirakht «ծառ»), ապա կարելի է նաև dustr-ը (duχt-ի կողքին= պրս. dukht) հանգեցնել

¹ Այս անցումը շատ է տարածված՝ gail = h. b. valka; get՝ vtak-ի կողքին, արմատը՝ vad; gin, լատ. venum; h. b. vana; gini «զինի» venum; gitel, արմատը՝ vid; gtanel, արմատը՝ vid, vind; gortsel, զենդ. verez, Fegγ-; tagr, δafeq -; gochel= vac; garun = զենդ. vaahra; gišer = vesper; garin = Fagγn, Fagγos: Նոր պարսկերենում v-ն g-ին է փոխարինել, հմտ. gurg «զայլ» = հայ. gail, սակայն այլ դեպքերում, քան հայերենում ցւլ «վարդ»= հայ. vard, gunāh «զանցանք»= հայ. vnas և այլն: Այս երևույթը երկու լեզուներում տեղի է ունեցել բոլորովին անկախ մեկը մյուսից:

² Grundlage des Arm., էջ 20.

duxtr-ին: Նախնական pt-ի դիմաց հայերենում չի կարող ft լինել, քանի որ f-ն բացակայում է, զենդերենը նույնպես ft-ի փոխարեն՝ դեռ pt ունի՝ gerepta, haptan, պրս. giriftah, haft: tt > st անցման համար ևս փաստեր չունեն, սակայն այն հիմնավորված է թվում հայ. azd = հայրս. azdā, սնս. addhā «հայտնի» համադրությունից: Արիական ksh=իրան. khsh հայերենում գրափոխված՝ որպես ճχ է հանդես գալիս, išxel=զենդ. khshi, bašxel=զենդ. bakhsh, ašxarh=զենդ. khshathra: Իրանական khra-ն հայերենում որպես չրա, չրատ բառի մեջ (հիմքը չրату), զենդ. khratu, պրս. khirad: Իրանական fr-ն որպես հայ. hr՝ hra=սնս. pra, զենդ. fra, իրան. thr-ն որպես rh՝ ašxarh=զենդ. khshathra:

6) L-ն առկա է հայերենում, սակայն այն հանդիպում է նաև իրանական ժամանակակից բոլոր լեզուներում, այնպես որ l-ի առկայությունը հայերենում որպես այդպիսին ոչինչ չի ապացուցում: Սակայն հետագայում մենք կտեսնենք, որ l-ի հանդես գալու ձևով հայերենը սահմանազատվում է իրանական լեզուներից:

Սնս. փv>sp անցումը հանդիպում է spitak=զենդ. spaēta, սնս. փveta և asp «ձի»=զենդ. aspa բառերում: Սակայն վերջինս, որը միայն որպես բարդության բաղադրիչ է հանդիպում, իրենց՝ հայերի կողմից դիտվում է որպես պարսկական փոխառություն: Հայերենի համար նույնքան բարդ են asp, aspet, (< aspapati), asparéz և այլն, ինչպես pferd, cavalerigeneral, hippodrom բառերը գերմաներենում:

«Չի» հասկացության համար կիրառվող բնիկ հայկական բառերն են՝ dzi=սնս. haya և erivar=սնս. arvan, arvant «վազող, սլացող»: Skund «շնիկ» բառի մեջ ևս հանդիպում ենք sk> փv, մինչդեռ փvan-ը «շուն» հայերենում տալիս է šun, սեռականը՝ šan (զենդ. spā, աֆղ. spai), նախնականը՝ փvanya-ն «դատարկ» (սնս. փvnya, հուն. κενεός, հւլ. suj) տալիս է sin (sen, sven-ից): Իրան. pati-ն հաճախ հանդիպում է որպես pat, հմտ. patmel, սակայն pat-ով կազմվող մի քանի բարդություն փոխառություն են (ինչպես՝ patgam, patgamavor, պրս. paighambar «մարգարտ»): uz-ը հանդիպում է zguiš-ի մեջ = uzgaosha, և եթե անգամ փոքր-ինչ մթազնված իմաստով՝ z բայաժանցի մեջ, ապա դժվար թե կարողանա ծառայել որպես կշիռ ունեցող ապացույց հայերենի պարսկական լեզուների հետ ցեղակցության մասին: Բառապաշարում նկատվող ընդհանրություններից, այստեղ հարկ է նշել միայն մի դեպք՝ nax բառը, որին հանգում է նպրս. nukhust-ը «նախ և առաջ, սկզբից»:

Բ) Ինչ վերաբերում է շնչեղ ձայնեղներին, ապա կարելի է ընդունել, որ դեռ իրանական հիմք լեզուն կորցրել էր իր շնչեղությունը, և շնչեղ ձայնեղները նույնացել էին պարզ ձայնեղների հետ: Նախքան այդ տեղի կունենար, պետք է որ (եթե մենք ծննդաբանական ծառ կազմենք) հայերենը իրանականից

արդեն բաժանված լինել, քանի որ այստեղ շնչել և պարզ ձայնեղները չեն համընկել, այլ ընդհակառակը, միշտ իրարից անջատ են մնացել:

Որովհետև, մինչդեռ շնչել ձայնեղները տեղաշարժվել են դեպի ձայնեղները, ապա վերջիններս խուլել են տվել, իսկ խուլերը կամ պահպանվել են որպես այդպիսին, կամ փոխակերպվել են շնչել խուլերի, կամ շփականներ են տվել: Այսպիսով նախնական

gh	g	k
dh	d	t
bh		p

շարքերը, հայերենում ստացել են հետևյալ տեսքը՝

g	k	k, kh
d	t	t, th, y
b		p, ph, h

Ապացույցները ստորև՝

ա) Ատամնայինների շարքը՝

Հայ. d=նախն. dh՝ հայ. d-ne-l= նախն. dhâ «դնել, տանել», dirq գալիս է e-di é-ժε-կատարյալից (հմմտ. tur, կատարյալը՝ e-tu), dustr=dhughtar, durn=dhvara, dhurâ, diel «ծծել», dayeak, dail, dal «թարմ կաթ» (ծնելուց հետո)=dhâ «ծծել», dêmkh, dêt, ditel, արմատը՝ dhi; dêz, dizel, dizanel, արմատը՝ dhigh, džrel և dr že l=dhrugh, han-derdz, արմատը՝ dhargh «ամրացնել», ըստ այդմ՝ dav, եթե այն պարսկերենից փոխառություն չէ, սնու. dabh-ի հետ պետք է հանգի նախն. dhabh-ին: Կրկնակի տեղաբաշխված է թվում tun=dhâman¹:

Հայ. t=նախն. d՝ atamn (a-ta-mn)=dant, tä-l=dâ, tagr=daivar, tasn=dak՝an, tesanel=dark՝, tiv «օր» =diva, at-el= լատ. odi, get, vtak, արմատը՝ vad, huլ. voda, gitel=vid, gt-anel=vind, n-st-il=sad, otn=pâda, ut-el=ad, sirt=k՝erd, khirtn=svidra, dzet «պղչ» =զենդ. zadhañh, արմատը՝ ghad, χεδ; հայ. trt-um = պազենդ. պրս. dard «ցավ, տառապանք», dush մասնիկը հանդես է գալիս որպես tž, նաև՝ thš (thšnami=պրս. dushman, հակահիշ՝ homani), բայց սովորաբար՝ որպես dž: Համաձայն վերը շարադրվածի՝ զենդ. daêva-ն պետք է որ= հայ. .têv, բայց հայերեն բառը հնչում է dev և դրանով իսկ փոխառություն է:

Նախնական t-ն պահպանվել է հարևան բաղաձայնների «պաշտպանության» ներքո՝ astl, dustr: Կամ տալիս է d՝ du (túam-ից), leard=yakart, mard=βροτός, ôd «քամի»=vâta, կամ տեղաշարժվել է շնչել խուլի՝ tharm «թարմ, ջահել»=սնու. taruṇa, tharšam «թառամած» (an-tharšam, tharšamezuzanel «թառամեցնել») բառերի մեջ), արմատը՝ tars, լատ. torreo

¹ Թե՛ դա-ը (= dama-n, հմմտ. durn=dhvara-n) հանգում են սնու. dama, հուն. δόμο -ին:

ταρδός; evthn=«յոթ»=saptan, uth = ashtan, thandzr «թանձր», արմատը՝ tæric, artsath=սնու. rajata, կամ միջձայնավորային դիրքում տվել է y՝ hair, գրվում է häyr, mair, beré=bereti և այլն:

բ) Շրթնայինների շարքը՝

Հայ. b=նախն. bh՝ band, bant, արմատը՝ bhandh, bazuk=bhâghu, bazum=bhaghhu, bazanel, արմատը՝ bhag; bardz=սնու. barhis, զենդ. berezish՝ արմատը՝ bhargh, elbair=bhrâtar, elbiur = «աղբյուր»=φρέατο, bužel «քուժել, ազատել, փրկել» = զենդ. buj «փրկել», պազենդ. bôkhtan «փրկել, ազատել», նախն. bhug; buits «կերակուր»=սնու. bhuj¹, orb=ὄροφος «որբանոց», berem φερω, ban «խոսք» = φωνή, surb «մարտ, փայլուն», «սուրբ»=սնու. çubhra:

Անկանոն տեղաշարժված է թվում amp բառը=սնու. ambhas «ջուր», հմմտ. սակայն amb զուգահեռ ձևը, ինչպես նաև հուն. ὄμβρος, լատ. imber:

Խուլ պայթական p-ն պահպանվել է՝ kapel= capere, partkh (հիմքը՝ partu-), զենդ. par (pesha, peretha բառերում) «մեղք ունենալ, մեղանչել», pšnul «զննել»=սնու. paç, patmel=pati+mâ, այլ դեպքերում, շնչելացել է² phoš=i=զենդ. pšnu, phetur=feder, phut=սնու. pûti «փտած, նեխած», պիլ. pütak բառերում և բառասկզբում փոխվել է h-ի՝ hair=patar, hing=pankan, հարցանել= պրս. purs=iđan, heru=ou. fâre «անցյալ տարի» falwäre (= farfâre) «նախանցյալ տարի», պրս. pâr «անցած տարի»:

գ) Հեռնայնկալիների շարքը՝

Հայերեն q=նախն. gh՝ gari=hordeum, նախն. ghardha, պիլ. jurdâk «հացահատիկ», բելուզ. zurth -âni «հացահատիկի մի տեսակ», mēg «մեզ, մառախուղ»=սնու. mēgha, vagr=սնու. vyâghra:

Հայ. k= նախն. g, kov=gâu, klanel, kerl «կերպ», արմատը՝ gar, keal «ապրել», արմատը՝ giv, kin=ganâ, krunk «կռունկ»= γερρανος, eki «եկա», արմատը՝ ga, որտեղից, անշուշտ, ներկայի գա-մ ձևն է ծագել: Gravel-ը ևս չի համապատասխանում սանսկրիտի grabh-ին, զենդ. garb, սակայն նույն ոչ

¹ bh-ն ձայնավորներից հետո միշտ v է տալիս՝ dav «խաբություն», սնու. dabh, gravel=սնու. grabh, -avor վերջածանցը= a-bhara, mardov=*martabhi: P-ն և m-ն նույնպես v- են տալիս՝ evthn=saptan, անուն, անունան=anman:

² Հանդիպում է նաև փոխառությունների մեջ՝ phartham, պիլ. fratum, phuršiš «դատական քննություն»= պրս. porsish, phil=պրս. pil: Փոխառությունների մեջ, սակայն, p-ի փոխարեն f պետք է լինի, քանի որ հայերենը f չունի, օգտագործում է հնչյունապես նոս h-ն՝ hrasax=արաբ. farsax, պրս. farsang, hraman=պրս. farman, hreštak=պրս. firishtah: Քրդերը նույնպես f-ն h-ի են փոխակերպել, սակայն այն փոխառություններում պահպանվում է, օր. firman (Յուստի, «Քրդերենի շփականները», էջ 13): Օտերը, սակայն, բառասկզբի p-ն ընդհանրապես f-ի են փոխել՝ farsun «հարցմել», fondz «հինգ», fathan «զայն», այնպես որ p-ն միայն փոխառություններում է հանդիպում, մինչդեռ աֆղաներենը f-ի փոխարեն v է դնում, իսկ f-ն օգտագործվում է միայն պարսկական փոխառություններում:

օրինաչափ տեղաշարժին հանդիպում ենք գոթերենի greipan-ում: Մնացած դեպքերում հմմտ. էջ 21 և հաջ.: Խուլ պայթական k-ն պահպանվել է akn «աչք», kam-il «կամենալ», սնու. kâma, kerp=corpus, kapel=capere բառերում, իսկ բառավերջում դարձել է g' erg=սնու. arka, շատ քիչ դեպքերում այն շնչեղացել է՝ kharš el= զենդ. karesh, khêh «քեն, վրժ»= զենդ. kaêna, նարս. kin, khandel (khand-el), զենդ. kan, սնու. khan-ից:

Մեկ այլ շարքի տեղաշարժը (g' - gh') տե՛ս էջ 23 և հաջ.:

Այս, հայերենի հնչյունական առաջին տեղաշարժն էր: Ժամանակակից արևմտահայերենում տեղի է ունեցել ևս մեկ՝ երկրորդ տեղաշարժ: Չայնեղների և խուլերի հնչյունական հարաբերությունը, որը ձևավորվել էր առաջին տեղաշարժի ժամանակ, շրջվել է՝ նախնական շնչեղ ձայնեղները դարձել են խուլեր, իսկ նախնական պարզ ձայնեղները, ինչպես նաև նախնական պարզ խուլերի մի մասը, այժմ հանդես են գալիս որպես պարզ ձայնեղներ, մինչդեռ շփականներն ու հազագային բաղաձայնները մեղացել են նույնը:

Ուրեմն հայերենում պարզ և շնչեղ ձայնեղները չեն հանդնկել, ինչպես այդ տեղի է ունեցել իրանականում:

Գ.- Մնում է քննարկել ևս մի վերջին կետ՝ շչական հնչյունների ծագումը նախնական հետնալեզվայիններից, որում իրանականն ու լիտվալավոնականը շատ ընդհանրություններ ունեն, այնպես որ Յոհ. Ծմիդոը դրա վրա հենվելով՝ դեմ դուրս եկավ այն դրույթին, համաձայն որի իրանականն ու սլավոնականը արիականից ու եվրոպականից վաղ ժամանակներում էին անջատվել և շուտ տվեց այդ ժամանակներից հաստատված հ. ե. լեզուների ծննդաբանական ծառը: Քանի որ լիտվալավոնական և արիական լեզուները միմյանց հետ լիովին համընկնում են ոչ միայն նախնական k-ի, k և k' = ց, s-ի ճեղքման հարցում¹, այլ նաև ըստ Ասկոլիի պնդման, g - ի՝ g և g' = իրան. լիտվալավ. ž, z-ի, ինչպես նաև gh-ի՝ gh և gh' = իրան. լիտվալավ. ž, z-ի:

Սակայն այս եզրակացությունը մեր մտտակա նպատակներին չի

¹ Այդ շարքերն են՝ նախն. k = սնու. k, իրան. k, հայ. k(k/h), սլ-լիտվ. k և k' = սնու. ց, իրան. s, սլավ. s, լիտվ. sz, հայերենը համապատասխանում է իրանականին և սլավոնականին, հմմտ. tasn: Բայց երբեմն s-ի փոխարեն ճ է հանդիպում, ինչպես՝ šun=սնու. čvan, pš -nul «ղիտեր», սնու. pač, ինչպես և նոր պարսկերենում՝ shāk h «մուղ», փոխանակ. sāk h=սնու. čākčā, shustan «մաքրել» = ցadh, որպես մի նշան այն քանի, որ իրանական սուլական s-ն շատ մոտ է sh-ին = սնու. ց: Եվ եթե այդ պատճառով սլավ. s-ի դիմաց = k', լիտվերենում՝ sz: Եվ իրանականում s=k', հնդկերենում ց (այժմ հնչում է sh) ունեւ, ապա այդ տարբերությունը մենք Յոհ. Ծմիդոյի հետ միայն, հակառակ Ֆիքի, կարևոր չենք համարում: Արիալավոնական մի čvan, ցուո՝ ձևից միայն հետազայում են առաջացել սնու. čvan, սեռ. čunas և ցուո, զենդ. sūnō, sūni, հայ. sūn, սեռ. š an, հարս. sunis, լիտվ. szū, սեռ. szūns: Սակայն ինչ վերաբերում է սլավ. s = լիտվ. sz համապատասխանությանը, պետք է որ ճիշտ լինի նաև սլավ. z = լիտվ. ž, նախն. g' և gh':

բավարարում, և մենք, որպեսզի կարողանանք միմյանց հետ համեմատել հետնալեզվայինների ճեղքումը հայերենում և արիական ու լիտվալավոնական լեզուներում, պետք է ճեղքման այս շարքը լիակատար կերպով ներկայացնենք, ինչը և ես կանեն ստորև:

1 g-ի ճեղքումը g և g'-ի:

ա) g-ն սանսկրիտում հանդիպում է որպես g, զենդ. g, հայ. k- լիտ. սլ. g, հմմտ. 1) սնու. gâ, gam, «գնալ», զենդ. gâ (gâma, gâya) ձևերում և ga' gata, apa-gaiti, gam' ja-gham-at, aibi-gemen ձևերում, հայ. eki, ek «օտարական» (βαίνω, venio), 2) սնու. gar «կլանել», զենդ. aspô-gara «ձի կլանող», garan h «կոկորդ», օսեթ. qur=ghur «կոկորդ», հայ. կերի «կերա», -ker-ից բարդությունների մեջ՝ հուն. βόρο-, լիտվ. geriu, սլավ. š'irg; 3) սնու. gaya, «կյանքի ուղիներ», զենդ. gaya » կյանք», հայ. keankh, keal, լիտվ. gývas, սլ. živū (βίος, vivus):

4) սնու. gâu «կով» = զենդ. gâu, նարս. gâv, հայ. kov (bos), հուլ. gov-ędo; 5) սնու. gûtha «կղկղանք», զենդ. gûtha «կեղտ», պրս. gûh, քրդ. gû «կղկղանք», հայ. kú, հուլ. govino; 6) սնու. gnâ «աստվածուհի», զենդ. ghenâ, genâ (= *gnâ) «կին», հայ. kin, պրս. genna; 7) սնու. raŋga «զույն», պրս. rang, հայ. erang; 8) սնու. grivâ «ձոռակ» = զենդ. griva, հուլ. griva «բաշ»; 9) սնու. aŋgâra «ածուխ», լիտվ. anglis, հուլ. aǵl'i; 10) սնու. yuga «զուծ, զույգ», զենդ. yao-geť (yuj-ի անկատարը), yukhta, հայ. zuig «հավասար, նույն», zuig-kh «զույգ», հուլ. igo, լիտվ. jūnga-s, j'ugum ζ'γόν; 11) սնու. giri «սար», զենդ. gairi, լիտվ. gire' (ամտան), հուլ. gora: 12) սնու. gar = զենդ. gar «մեծարանքով անվանել», օս. ghar «կանչ, ձայն, հնչյուն», հուլ. glagolati, լիտվ. giriù; 13) զենդ. mazga=հուլ. mozgù «medulla»; 14) հայ. krunk = հուն. γέρονος, լիտվ. gėrvė:

Վերոհիշյալ g-ն մենք տեսնում ենք որոշ դեպքերում j-ի փոխակերպված: Այսպես՝ սնու. gam, զենդ. gâ և նույն զենդերենում անգամ հանդես են գալիս արմատը և ներկայի հիմքը j-ով՝ jam, jim, jas, որոնց նախնական g-ն ածանցվում էր այնտեղ, որտեղ այն պաշտպանված էր բաղաձայնով՝ jaghmat, զենդ. ghenâ-ի «կին» կողքին կանգնած է զենդ. jéni', gi- ի «կյանք»-ի կողքին (gaya jigha ešha «կյանքը ապրիր» ձևում) առկա է ji-ն jiti ձևում, jiv-ը՝ jivya-ում, սնու. jiv, զենդ. ju=jiv, սնու. yuga-ի կողքին yui = զենդ. yuj: Այսպիսով, կարող ենք սահմանել հետևյալ համապատասխանությունը՝ նախն. g = սնու. j = զենդ. j = հայ. k, սլ. լիտվ. g. հմմտ. ; 15) սնու. rajas «մթնոլորտ, ամպ, մութ» = հայ. erek «երեկո», հուն. ἔρεβος, գոթ. rigis; 16) սնու. bhañj «զարդել», bhanak-ti, bhañga «կոտրեց» = հայ. բեկ «կոտրված, ջարդված», լիտվ. bangâ: Նույն ձևով էլ j-ն միայն հետագայում է g-ից առաջացել՝ սնու. jyâ = զենդ. jya «աղեղի լար» = լիտվ. gijė, հուն. βίος, սնու. jinâti = զենդ. jinâti «թռչնած», լատ.

¹ Սակայն ghenâ = gnâ, իսկ jini = gani կամ gâni:

vietus! Իսկ այս j-ն իրանականում կարող էր չհ տալ, հմմտ. սնս. tij «արվել», զենդ. taēgha «սրություն», tighra «սուր», նպրս. tēgh «սուր գործիք», հայ. tēg, դրանց կողքին՝ զենդ. taēzha «կացին», tizhi «սուր», նպրս. tiz «սուր»: Այժմ հարց է ծագում, թե այն դեպքում, երբ իրանականում և սանսկրիտերենում j-ն հավասարապես g-ից է առաջացել, արդյո՞ք հայերենը ևս կոկորդայինների քմայնացման հակում ունի: Եվ , իսկապես, երեք դեպք է հանդիպում, որտեղ արիական քմային j-ն հայերենի չ-ին է համապատասխանում, այն է՝ սնս. ojas= զենդ. aojanh (սնս. ugra, զենդ. ughra ձևերի կողքին), հայ. uiz «ուժ», սնս. bhaj, զենդ. bāzh (սնս. bhāga «բաժին», զենդ. bagha «բաժին»), հայ. baž, bažanel և զենդ. buj, պիլ. bōkhtan «փրկել, ազատել», հայ. buž-el «բուժել, ազատել, փրկել»: Այսպիսով կազմվում է g-ի լրիվ շարքը:

սնս. g	զենդ. g	հայ. k	սլ. լիտ. g
l	l	l	
j	j, zh	k, ž	

(արդյոք նաև žt-el «թախանձագին խնդրել»= զենդ. jad «խնդրել» նաև՝ žr-uthi-un=սնս. jira «արագ, ժիր»):

p) g¹-ն սանսկրիտում հանդես է գալիս որպես j, զենդ. z, հայ. ts, սլավ. z, լիտվ. ž, հմմտ. 1) սնս. aja, ajā «այծ», զենդ. azi, հայ. aits, լիտվ. o žys «այծ», aiž; 2) սնս. ajina «մորթի», զենդ. izaēna, հուլ. jazino; 3) սնս. bhūrja «կեչու մի տեսակ», ou. barse (= barze) «կեչի», հուլ. brēza, լիտվ. beržas; 4) սնս. jar «ծերանալ», զենդ. zaurva «ծեր», օւտթ. zarond «ծեր» (սնս. jarant-, γέροντ-), հայ. tser, հուլ. zīrēja, zīrēti «հասունանալ»; 5) սնս. jñā «գիտենալ», զենդ. zan (zhnatar), օւտթ. zond «գիտելիք», հայ. tsaneay (կատարյալը), tsanōth, հուլ. znati, լիտվ. zinoti; 6) սնս. jan «ծնվել», զենդ. zan, օւտթ. zanāg «երեխա», հայ. tsnanil, an-tsin, հուլ. zēt, լիտվ. zēn-ta-s «փեսա»; 7) սնս. marj «սահել, շոշափել», զենդ. marez, հուլ. mlūza, լիտվ. mėlzu; 8) սնս. jambha, jambhā «ծնոտ», զենդ. zafan «երախ» (աֆղաներեն zhāmah իզ. ծնոտ, բելուզ, daf=պրս. dih-ān «բերան»), հայ. tsov «ծով»= «խորք», հուլ. zābū «ատամ» (γόμφος, γαμφή); 9) աֆղ. zaḡai, zaḡai «սերմ, կորիզ, հատիկ», հուլ. zrno=հացահատիկ: Նաև՝ 10) սնս. aj, ἄγειν, զենդ. az, հայ. ats-el; 11) սնս.

rajata «արծաթասպիտակ, արծաթ» = զենդ. erezata, հայ. artsath; 12) սնս. rjipyā «վերասլաց», զենդ. erezifya «բազե», հայ. artsiv; 13) սնս. jānu «ծունկ», պրս. zānu, զենդ. zhnu, հայ. tsunr (tse-nu-r-ից); 14) սնս. bukka «այծ», զենդ. būza, հայ. բուծ «գառ»; 15) զենդ. varez «անել, վարվել»= հայ. gortsel «աշխատել», Fεργ-; 16) օւտթ. zūn «ծանր», zūn-argh «բանտ» = հայ. tsanr, հիմքը tsanu:

II gh-ի ճնդումը gh-ի և gh¹-ի:

ա) gh-ն սանսկրիտում հանդես է գալիս որպես gh, զենդ. g, gh, հայ. g, սլ. լիտ. g: Հմմտ. 1) սնս. megha=զենդ. maēgha «ամպ», օւտթ. miegha «մառախուղ, ամպ», հայ. mēg «մեզ, մառախուղ», լիտվ. miglā, հուլ. migla «մշուշ, ամպամածություն»; 2) սնս. gharna «տաք», զենդ. garema, օւտթ. ghar, gharm-«տաք», հայ. jer-in, jerm-«ջերմ», jer'num = սնս. ghrōmi (j-ն երկրորդաբար՝ g-ից), հուլ. gorēti «այրվել», grēti «տաքացնել», 3) սնս. dīrgha «երկար», զենդ. daregha, հուլ. dlūgū, լիտվ. ilgās; 4) զենդ. gram «զայրանալ», հուլ. grūm-ēti, gromū, լիտվ. grumėti, գոթ. gramjan; 5) հուլ. jañghā «ոտք», զենդ. zañga, zañ-gra «ոտք», լիտվ. žengū, ženg-ti «քայլել»:

Ինչպես g-ն է երբեմն սանսկրիտում j, իսկ զենդերենում j, zh տալիս, նույն ձևով էլ gh-ն երբեմն սանսկրիտում h, զենդ. j, zh, իսկ հայերենում ž է տալիս:

6) Սնս. druḥ «վշտացնել», drogha «վերաբերմունք», զենդ. druj, druzh «ստել, խաբել», draogha-ի կողքին «սուտ, խաբեական», հայ. dūr-el, drž-el; 7) սնս. ahi «օձ», զենդ. azhi, հայ. iz «թունավոր օձ», լիտվ. angis «իծ» (լատ. anguis, էչիզ, ծփիզ), 8) սնս. muh «սխալվել», moha և mogha, զենդ. maogha ashe-maogha բառերում; 9) սնս. duhitar, զենդ. dughdhare, նպրս. dukhtar, հայ. dustr = duxt, լիտվ. duktė; 10) սնս. raghu «վազելով, վազող», զենդ. reñj «կայտառ, արագաշարժ լինել»; 11) սնս. han «խփել», ghna-ի կողքին, նաև ghana «մածուկ» ghanāghana «կռվասեր», ghātaka «սպանիչ», զենդ. jan, հոգն. 3-րդ դեմք՝ jaghneñti, հայ. gan-el, լիտվ. ginklas, genū, սլ. gūnati, եզ. 1-ին դ. žen-ą; 12) սնս. arh «վաստակել, արծանի լինել», argha «զին, արծեք», զենդ. arej «արծանի լինել», arejanh «զին», հայ. argin, anargel, yarg, yargel, բայց նաև՝ aržani¹; 13) զենդ. snizh «ձյունել», լիտվ. snig-ti (νιφει, լատ. nix, nivis); 14) պիլ. jurdāk (<garda+վերջածանց), հայ. gari, լատ. hordeum, նախն. ghardha; 15) սնս. dah, զենդ. dazh, լիտվ. degū «այրել»:

Այսպիսով, gh-ն ներկայանում է հետևյալ շարքով՝

սնս. gh =	զենդ. g, gh	հայ. g	սլ. լիտ. g
-----------	-------------	--------	------------

¹ Դրանցից հարկ է անջատել սնս. ajināt= զենդ. zināt= հայրս. adinā «խելց, ետ վերցրեց»: Ուրեմն հայրս. di-ն չի համապատասխանում սնս. ji-ին «հարբել» jaya-ի ներկայի հիմքում, ինչպես Ֆրքն է կարծում (էջ 323); jaya «երգել»: Արիականի g, j= սլ. լիտ. g վերաբերյալ այլ օրինակներ կարելի է գտնել Ասկոլիի մոտ (Vorlesungen, էջ 93-94):

¹ Այդպես նաև tuiž-ը՝ tug-an-ի կողքին և հավանաբար նաև՝ ḡg--n, ḡg-n-akan, ḡg-ut, ḡž-andak, ḡž-it բառերի կողքին:

h

j, zh

g, ž

p) gh¹ = սնու. h, զենդ. z, հայ. z, dz, սլ. z, լիտվ. ž; 1) սնու. aham «ես», զենդ. azem, հայ. es (ez-ից), հւլ. azū, լիտվ. az (asz); 2) սնու. aňhas «վախ, նեղություն», զենդ. āzanh, հայ. niaz, andzuk (ódz), հւլ. azükü; 3) mih «միզել», meha «մեզ», զենդ. gaomaêza, maêsmān, outəp. mēzun «միզել», հայ. mēz «մեզ», mizel «միզել», լիտվ. mėžū; 4) սնու. darh «ամրացնել», զենդ. darez «ամրացնել, պահել» հայ. handerdz (outəp. dares «հազուստ», պրու. darzi «դերձակ»= բրդ. terzi, հայ. derdzak), հւլ. drīzū «չարիք», լիտվ. diržas «փոկ» (զենդ. dareza «կապանք, շղթա»), 5) սնու. vah «vehere», զենդ. vaz, հայ. vaz-el, հւլ. veza, լիտվ. vezū; 6) սնու. plthan, զենդ. spereza, հւլ. slezena «փայծաղ»; 7) սնու. hari, harita «դեղին», զենդ. zairi «դեղին, ոսկեգույն», zairita, հայ. zarik «դեղին, ոսկեփայլ», հւլ. zlato «ոսկի», zelenū «կանաչ»; 8) սնու. hu «կանչել»= զենդ. zu, հայ. n-zov-kh, հւլ. zovā «կանչել»; 9) սնու. hotra «զոհ», հայ. dzōni (= zavan-ya) (եկեղեցական) նվիրատվություն; 10) սնու. bahu «շատ», հայ. bāzum; 11) սնու. lih «լիզել», հայ. lizel, հւլ. lizati, լիտվ. lė'z-ti; 12) սնու. hima «ծմեռ, ձյուն», heman «ծմեռ», զենդ. žima, հայ. dzmern (zimara+n-ից, հմմտ. durn=dhura+n, ամառն= զենդ. hama), dziun (ghaimak-ից) ձիւն, հւլ. zima, լիտվ. žėma: Հայերենի համար հմմտ. մակ' 13) as-el (= az-el), սնու. ah, հուն. ἄη i; 14) դեզ, դիզել, սնու. dehi, զենդ. uzdaêza; 15) ordz «ամորձի»¹ = զենդ. erezi, հուն. ὄρχις; 16) bardz=սնու. barhis, զենդ. barezish; 17) bardzr=սնու. brhat, զենդ. berezat; 18) dzet=զենդ. zadhañh, արմատը սնու. had=հուն. χεδ; 19) dzi= սնու. haya; 20) dzern= χ ειQ; 21) dzukn=հայր. zukans (հոգն. հայր.), լիտվ. žuvis; 22) azni (= agh'anya), հւլ. ježi, լիտվ. ežys (agh'ya), հուն. ἐξίνοϛ; 23) indz (ints)= սնու. simha; 24) lezu=լիտվ. lėžūvis:

Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել մի քանի թվացող շեղումների² վրա, որոնցից ելնելով՝ պարզ կդառնա g և g¹, gh և gh¹ փոխհարաբերությունները:

Մենք տեսանք, որ սնու. yuj=զենդ. yuj մի ձևի պետք է հանգի, որի g-ն պետք է որ ներկայացված լիներ, ինչպես և եղել է իրականում՝ zuig=*yōga (որը, սակայն, սանսկրիտում և զենդերենում չի պահպանվել), այդ իսկ պատճառով հայերենի համար պետք է կանխադրել yug և yug¹, որոնք,

¹ Պահպանվել է ordz «արու»=qui testiculos habet, մակ Ավգերեանի հայ-անգլերեն բառարանում՝ ordzat-capon, am-ordz-at-costrated, amordziq-testicles:

² Օրինակաբար խախտում է թվում մակ սնու. mah=զենդ. maz= հայ. mets «մեծ», սնու. hanu=պր. zanakh, հայ. tsnot, սակայն հայերեն բառերը հանգում են h. b. meg և genu նախածներին:

անշուշտ, նախապես նույնն են եղել: Այնուհետև այդ երկու g-երը նախապես տարբեր չեն եղել, այլ նույն g-ն է ճեղքվել, այն մեծ մասամբ մնացել է որպես g և միայն մասամբ է տվել g¹: Նույնը վերաբերում է արիական g-ին gabh արմատի մեջ, երբ մենք այն հանդիպում ենք՝ 1) սնու. gabhira «խոր», զենդ. jafra «խոր», jāfnu «խորություն» բառաձևերում; 2) սնու. jabh «երախը բացել», զենդ. zafan, zafra բառաձևերում, այնուհետև sarg և yag արմատների g-ին, երբ մի կողմից կա սնու. sarga և yāga՝ sarj և yaj-ի կողքին, մյուս կողմից՝ sanj=զենդ. harez, նախն. sarg¹, yaj=զենդ. yaz, նախն. yag¹, ինչպես մակ gar «մաշվել, զառամել, հեռանալ» արմատի g-ն, երբ այն հայտնվում է g¹ar ձևով «ծերանալ» և grānum-ի մեջ «հատիկ»= հւլ. zrīno, և մյուս կողմից՝ gar ձևով լիտվ. girna=հւլ. žriny=գոթ. quairmus «երկունք» բառի մեջ: Նույնն է մակ gh-ի կապակցությամբ, որը մենք տեսնում ենք հնդեվրոպական migh¹ արմատում ճեղքված երկու ձևի՝ maigha «ամպ» և migh¹: maigh'a «մեզ», միջդեռ angh արմատը սնու. զենդ. լիտվ. և այլն հանդես է գալիս «օձ» իմաստի համար angh ձևով, հայերենում, ընդհակառակը, angh¹-օձ, սակայն այստեղ ևս iz-ի կողքին (angh¹ eghi-ի կողքին), ինչպես ltsel zuig-ի կողքին, իսկ սանսկրիտերենում aňghas-ը՝ arñhas-ի, anghri՝ «իծի» arñhri-ի կողքին: Սակայն ինչպես հայերենի g¹, gh¹ հակադրվում են h. b. մյուս լեզուների g, gh-ին (լծել և օձ բառերում), նույն հաջողությամբ կարող են մակ արիա-սլավոնալիտական լեզուներից մեկի g, gh-ն հակադրվել մնացած լեզուների g¹, gh¹-ին, ինչպես և այդ տեղի է ունեցել, օր. լիտվ. gėsti, հւլ. gasnati = սնու. jas, զենդ. zah «ամհետանալ» անցողական՝ «թոշնել» բառերում, որտեղ սլավոնալիտական g-ն համապատասխանում է արիական g¹-ին և հւլ. gasi «սագ», outəp. ghāz, նպր. ghāz, հայ. sag (գրափոխված՝ gas=gans-ից)= սնու. hañsa, հուն. χίψ, լատ. anser, լիտվ. žąsis, որտեղ իրանասլավոնական gh-ն հանդես է գալիս մյուս լեզուների² gh¹-ի փոխարեն: Դիշտ նույն ձևով էլ k -ի շարքում միմյանց հակադրվում են հւլ. kamen-, լիտվ. akmen-ը և արիական açman-ը, լիտվ. klausā, klausyti և սլ. sluti, slova, sluchū (= զենդ. sraosha), պրու. pecku և արիական paçu, հւլ. svekrū և լիտվ. szeszura=զենդ. qasura: Նման-

¹ Սնու. mih-ը բայական ձև է, բայց migh-ը կա մակ ni-meghamāna դերբայում (Fick, Wörterbuch, էջ 178):

² Ի դեպ, սնու. hañsa-ն կարող է փոխարինել ghansa-ին, ինչպես և han-ը՝ ghan-ին, ուստի մեր դեպքում լիտվ. gh¹-ին արիասլավոնական gh-ն կհակադրվի: Մեկ այլ դեպքում թվում է եվր. g-ի փոխարեն իրանական g¹ պետք է լինի. այսինքն՝ այն դեպքում, երբ եվրոպական yaga-ն «սառույց» (հին իրան. aig, լիտվ. iza-s հիմնյուս. jaki)= մագանդարանի yagh «սառույց» համապատասխանությունն է: Այնուհանդերձ, ժնկ. մյուս իրանական լեզուներում yakh -ձևն է համապատասխանում (outəp. ix, yex), պագենդ. yah, որը հավանաբար yasa-ից է առաջացել: Պագ. yah-ն, yaça-ից = զենդ. isi (ici) հանգեցնել, թերևս outəp-երենը թույլ չի տալիս, ուստի և զենդ. isi-ն հավանաբար պետք է ishi-ից (?) ծագած լինի:

օրինակ կազմություններ տես Fick, Wörterbuch, III, էջ 516՝ kak=k'ak, էջ 522՝ karva=k'arva, էջ 526՝ kardha=k'ardha, էջ 539՝ kram=k'ram, էջ 540՝ kruk=kruk'։

Սրան պետք է նաև ավելացնել, որ, ըստ Յոհ. Ըմիդտի, սնս. փրաս-ը (արմատը՝ k'ar) համապատասխանում է գոթ. hvairmei-ին (արմատը՝ kar) և ըստ Վիմհիշմանի (Ztsch. XXI, էջ 390) սնս. kar-դա «ականգ» փրս (=փարս) արմատի հետ է կապվում և այլն, ըստ որում նույն գիտնականը նույն տեղում ենթադրում է, որ էլ ավելի հաճախ սանսկրիտում k-ն կարող է հանդիպել ֆ=k'-ի կողքին¹, նորից անդրադառնալով այդ հարցին՝ կարող ենք ասել, որ նույն հարաբերության մեջ է գտնվում հայ. ծտ-անել (ang') սանսկրիտի aṅj, anakti-ի նկատմամբ, և հայ. buits՝ սնս. bhuj, bhunakti-ի նկատմամբ։ Իսկ այս՝ այլ բան չի նշանակում, եթե ոչ այն, որ նախապես եղել է միայն մեկ k, մեկ g և մեկ gh, որոնք միայն ավելի ուշ են ձևափոխվել k, k'-ի, g, g'-ի, gh, gh'-ի։ Այդ նույնը պետք է ընդունի նաև նա, ով սնս. j aṅghā-ն = զենդ. zaṅga, լիտվ. žengiu (գոթ. gaggan) հանգեցնում է նախկինում կրկնությամբ կազմված ghangh արմատին։ Ճիշտ այնպես, ինչպես արիերենի նախն. ghaghan պետք է որ jaghan դառնար։ Վերջին դեպքում արիերենը կրկնում է ճիշտ այն գործընթացը, որը դեռ հնդեվրոպական նախալեզվում է տեղի ունեցել։

Եթե g և gh շարքի հետ համեմատելու լինենք k շարքը, ապա ինչպես արդեն պարզվել է մինչ այս կատարված քննություններից, ակնհայտ կլինի, որ այդ շարքերը լիովին հասնակնում են։

k	{	k=սնս. k	զենդ. k	հայ. k	սլ. լիտվ. k
		c	c	č	
		k' = ֆ	s	s (š, 3)	սլ. s, լիտվ. sz
g	{	g= g	g	k	g
		j	j, zh	k, ž	
		g' = j	z	ts	սլ. z, լիտվ. ž

¹ Հմմտ. նաև Ascoli, Vorlesungen, էջ 34-35։

gh	{	gh=gh	g(gh)	g	g
		h	j, zh	g, ž	
		gh' = h	z	z, dz	սլ. z, լիտվ. ž

Այստեղից էլ անհրաժեշտաբար հետևում է, որ նախնական ժամանակաշրջանում արիացիները, հայերը և սլավոնալիտվացիները միմյանց հետ սերտ հարաբերությունների մեջ են եղել։ Քանի որ k, g, gh հետնալեզվայինների այս ընդհանուր զարգացող երկու ուղղությամբ՝ k, g, gh և k', g', gh', զուտ պատահական չէր կարող լինել, և եթե անգամ այդ այդպես է, ապա զուտ պատահական կարող են համարվել նաև մեր լեզուների բոլոր այն հատկանիշները, որոնց համաձայն մենք դատում ենք նրանց ազգակցական կապերի մասին։

Եթե մենք մասնավորապես քննարկելու լինենք հայերենի կապը արիական և սլավոնալիտվական լեզուների հետ, ապա առաջին հերթին կպարզվի, որ հայերենը, շնորհիվ նշված երկու շարքերի՝ g(=k և ts) և gh (= g և z, dz) խիստ տարբերակումով ավելի հին աստիճանի է կանգնած, քան իրանական և սլավոնալիտվական լեզուները, որոնք, ինչպես այդ հետևում է վերը բերված աղյուսակից, կարելի է միավորել միևնույն խմբում։

Այս երևույթը լիովին ներդաշնակում է նշված լեզուների հնչյունական այլ երևույթների հետ։ Քանի որ, եթե սանսկրիտը և հայերենը ընդհանրապես ճշտությամբ պահպանել են շնչեղ ձայնեղների և պարզ ձայնեղների տարբերակումը (gh-g, dh-d), իսկ իրանական և սլավոնալիտվական լեզուները կորցրել են այն, ապա պետք է նաև սպասել, որ առաջին երկու լեզուները նախն. gh' և g'-ի տարբերակումը պետք է պահպանեին, իսկ վերջին երկու լեզվական ճյուղերը կորցնեին դրանք, այսինքն՝ նույնացնեին gh' և g'-ի հետ և վերջինս փոխակերպեին շչականի (զենդ. z= սլավ. z=լիտվ. ž)։

Իրենց հերթին սանսկրիտերենն ու հայերենը միմյանցից տարբերվում են նրանով, որ առաջինը (մի բան, որը զենդերենում և սլավոնալիտվական լեզուներում տեղի չի ունեցել) նախն. g, gh-ի և g', gh' նույնացում է (այնպես, որ այժմ սնս. j=g և g'-ի, սնս. h=gh և gh'-ի), մինչդեռ հայերենը շարունակում է միմյանցից տարբերակել ոչ միայն պարզ ձայնեղներն ու շնչեղ ձայնեղները, այլ նաև g, gh-ն և g', gh'-ն, և այս առումով նա նախնական հնչյունական հարաբերություններն ավելի հարազատորեն է պահպանում, քան արիական և սլավոնալիտվական լեզուները։

Մենք պետք է, սակայն, հայերենի կապը արիական և սլավոնալիտվական լեզուների հետ ևս մեկ այլ, մի ավելի կարևոր տեսանկյունից դիտարկենք։ Նշված լեզվաընտանիքների միջև գոյություն ունեցող հիմնական տար-
3-111

և ց-ի և ցհ-ի շարքերի հետ զուգահեռությունը վերականգնվում է լիակատար կերպով:

Վերը կատարված ամբողջ քննությունից այժմ ընդհանուր արդյունք ստանում ենք հետևյալը:

Հայերենը, ըստ նախնական հետնալեզվայիններից շչական հնչյունների առաջացման՝ պատկանում է արիական-սլավոնալիտական լեզուների շրջանին: Արիական լեզուների հետ այն մասամբ համընկնում է հետնալեզվայինների քմայնացումով, մյուս կողմից՝ սակայն սլավոնալիտական լեզուների նման նա անփոփոխ է պահում իր հետնալեզվայինները և այդ իսկ պատճառով չի կարող ստորակարգվել ոչ արիական լեզուներին (մինչ այժմյան իմաստով), ո՛չ էլ նրանցից անջատվել: Դրա համար նա չի կարող բնորոշվել որպես իրանական, թեև նա իրանականի նման s-ն h-ի է վերածում և որոշ բաղաձայններ և բաղաձայնների խումբ (ինչպես՝ հայ. ՏՃ-իրան. չՏ = արիական kՏ) նույն կամ նման ձևով է ներկայացնում: Ուստի և այն պետք է որպես ինքնուրույն լեզվաճյուղ դրվի իրանականի և սլավոնալիտականի միջև:

Եթե այսպիսով հայերենը գտնվում է իրանական և սլավոնական, այսինքն՝ արիական և եվրոպական ճյուղերի միջև, ապա մնում է դեռ քննարկել, թե նա ինչ դիրք է զբաղում եվրոպական լեզուներին հատուկ այն առանձնահատկությունների նկատմամբ, որոնցով նրանք խստորեն սահմանազատվում են արիականներից, այսինքն՝ անհրաժեշտ է քննարկել, թե արդյոք հայերենին հայտնի է եվրոպական լեզուներին հատուկ a-ի տրոհումը a-ի և e-ի, r-ի տրոհումը՝ r-ի և l-ի, և կամ արդյո՞ք նա ցուցաբերում է շփման կետեր բառապաշարի հարցում, թե՞ ոչ: Անմիջապես անցնենք այդ հարցերին պատասխանելուն՝

1) a-ի տրոհումը a և e-ի:

Միանգամայն հավաստի է Ֆիքի տեսակետը այն մասին, որ ձայնավորների համակարգում եվրոպական և արիական լեզուների միջև ամենակարևոր տարբերությունը a-ի տրոհվելու կամ չտրոհվելու մեջ է: Միանգամայն հավաստի է, որ այդ ճեղքումը ոչ մի հնդկական կամ իրանական լեզվում տեղի չի ունեցել: Ե՛իշտ է՝ նոր պարսկերենի բազմաթիվ բառերում մենք e ենք գրում, դա կարճ ä-ն է (հնդկերենում այն որպես մաքուր a է արտասանվում¹) և ճեղքման մասին այստեղ խոսք անգամ չի կարող լինել:

Օտեթերենը Կովկասում a-ի փոխարեն և նրա կողքին o և e ունի, բայց այդ e-ն հազվադեպ էր և ակնհայտորեն ուշ է առաջացել, այն հանդիպում է ä-ի կողքին և երկուսը միասին a-ի կողքին, որը պահպանում է մի ավելի ուժեղ և ավելի հին արտասանական ձևը: Նաև o=a համապատասխանությունը հավանաբար a-ի ավելի ուշ շրջանի մթագմման արդյունք է, որը տեղի է ունեցել n-ի և r-ի առկայության պայմաններում² և այստեղ այդ ընդհանրապես չի քննարկվում: Հետևապես այդ ճեղքումը արիականին հայտնի չէ:

Հայերենը, ընդհակառակը, այդ a-ն լրիվ եվրոպական ձևով է ճեղքում a, e, o-ի և դրանով իսկ խստորեն տարբերվում է իր արիական ազգակիցներից, եթե անգամ, երբ այն առանձին դեպքերում եվրոպականի հետ չի համաձայնվում: Որպեսզի կարողանանք առանձին դեպքերի համեմատությունը ձեռնարկել, անհրաժեշտ է նախօրոք մի հայացք գցել հայերենի ձայնավորների համակարգի վրա ընդհանուր առմամբ: Հայերենի ձայնավորների համակարգը հետևյալ սխեման ունի՝

¹ Ուստի և ես իմ այս հոդվածում ä-ի փոխարեն, ինչպես այն արտասանվում է բնիկ պարսկերենում, գրել եմ հին a-ն, որից և այն ծագել է:

² Հմտ. barzond «բարձր», zarond «ծեր» = γερων, zond, zund «զիտելիք», zōnum «զիտեմալ», fondz «հինգ», dzorun «խոսել», xor «արև» (=svar), xorun «ուտել» (=svar-), թե որքան քիչ բան էր այստեղ o-ն նշանակում, ցույց է տալիս kharōn=զենը. karana օրինակը, որը տազաուարիի բարբառում հոգնակիում դառնում է kharathā, դիզորիի բարբառում՝ kharanthā:

Հիմնական ձայնավորներ աստիճանավորում¹

a	{	a	
		e, i, սղում	â
		o, u, սղում	
		i, սղում	ê, î
		u, սղում	ui, û

Իսկ շեշտադրման օրենքը, որն իշխում է ձայնավորների ասպարեզում, հետևյալն է՝ բառաշեշտը շարժվում է դեպի բառի նախավերջին վանկը և պատճառ է դառնում վերջին վանկերի կամ նրա ձայնավորների սղման, այնպես որ այժմ շեշտն ընկնում է սիայն վերջին վանկի վրա: Կարճ i-ն և u-ն, ինչպես նաև նրանց աստիճանավորված ձևերը՝ ê և ui կարող են պահպանվել միայն շեշտի շնորհիվ, այսինքն՝ երբ նրանք վերջին վանկում են, այսպիսով ê-ն î է տալիս, ui-ն û, i-ն և u-ն, ընդհակառակը՝ սղվում են: Օր.՝ i- արմատը vid= հայ. git, բայց անորոշում՝ gt-anél, նախն. vinâça=նպրս. gunâh, հայ. vnâs, լիաձայն (երկար) mêg, արմատը migh, mêz «urin» արմատը migh¹, սնս. mih, սակայն սեռականում՝ mîgi, mîzi²: u- արմատը՝ yuj, հայ. luts, անորոշը՝ ltsel, լիաձայնություն՝ luis<raucah-ից, արմատը՝ ruc, իսկ սեռականը՝ lûsôy: Այստեղից անմիջապես հետևում է, որ gitém, lizem գալիս են gêt-em, lêz-em ձևերից, այսինքն՝ այս բայերի հիմքում ընկած աստիճանավորված ներկայի հիմքը (gêt-em=vêda+ հետազայում հավելված em=âmi, lêzem=leigh¹- âmi), քանի դեռ գործ չունենք այնպիսի բառերի հետ, ինչպիսիք են mizel, mêz բառի կողքին, այսինքն՝ գոյական հիմքից կազմված բայերի: a, â հնչյուններն, ընդհակառակը, անփոփոխ են մնում՝ bazúm=սնս. bahu, bazúk=սնս. bâhu, ասել, սնս. ah: Նույնը վերաբերում է նաև o-ին³, հմմտ. gochél, արմատը՝ vac, gortsél gorts-ի կողքին= Féγγον: e-ն նույնպես մեծ մասամբ մնում է, հմմտ. mets, հուն. μέγας, սեռականը՝ metsi, սակայն որոշ դեպքերում այն սղվել է,

¹ Նշենք, որ ձայնավորների երկարությունը հայերենում չի նշվում, որի պատճառով ես ևս երկարացման նշաններ չեմ դրել: Սակայն միայն գրության պակասությունն էր, որը հաղթահարելու համար պետք է շեշտել, որ a, i, u-ն հիմնական a, i, u ձայնավորների աստիճանավորված ձևերն են, ապա նրանք երկար ձայնավորի արժեք ունեն, կամ նախապես են այդպիսի արժեք ունեցել: Միայն e-ն և o-ն են միշտ կարճ:

² Ես այստեղ i են գրում, ինչպես ստորև՝ ô, քանի որ կարճ i-ի դեպքում mîgi, mîzi-ն պետք է mgi mzi-տալիս: Նույն ձևով էլ lûsôy-ը կտար lsoy:

³ Petermann, Grammatik, էջ 37: Բոլոր ձայնավորներից ամենակայունը, որը գրեթե երբեք չի սղվում կամ փոփոխվում:

որ. vtaq, get բառի կողքին, ast|= α'σ'τ'ε'ρ, tagr=δ'α'F'ε'ρ, սեռականը = astél, tagér. Իսկ եթե այս e-ն կանգնած է ոնգայիններից կամ կրկնակ բաղաձայնից առաջ, ապա այն օրինաչափորեն փոփոխվում է i-ի¹. hing=quinque, hin=senex, sirt=herz, և այս i-ն նախնական i-ի մնան շեշտը կորցնելիս սղվում է. hin/hn-anal, sirt սեռականը՝ srti: Ուստի և հայերենում պետք է e դնել, երբ ստուգաբանորեն սպասվելիք a-ի փոխարեն e կամ i է հանդես գալիս, կամ ձայնավորը լիովին սղվում է: Հետևաբար, եթե հայերենը մասնակից պետք է լինի եվրոպական լեզուներին հատուկ բոլոր հիմնական առանձնահատկություններին, ապա պետք է ապացուցենք, որ

ա) հայ. a(o)=եվրոպ. a(o) և p) e, i, = եվր. e:
 ա) հայ. a(o)= եվր. a(o): Այս համապատասխանությունը ապացուցելու համար բավական է բերել մի քանի օրինակներ՝ akn, լիտվ. akis «oculus», atsem=άγω, tal = dare, ail = ἄλλος, aits = αἶξ, hair = πατήρ, gochel=vocare, chork=quatuor, gorts = Féγγον, kov= βοF-ός, ords=(տե՛ս էջ 25 ծանոթությունը)= ὄρχις, orb=ὄρθρονός: Բացի այս, հարկ է ուշադրություն դարձնել թերման վրա, այն առումով, որ a-հիմքի բոլոր բառերը, բացի հատուկ անուններից, լիովին անցել են o հիմքի տակ, որի պատճառով էլ նախնական marta-ն, հուն. βροτο- հայերենում հանդես է գալիս որպես mardo-, հմմտ. սեռ. տր. mardoy, գործ. mardov, հոգն. սեռ. mardo3, գործ. mardovkh լատիներենի և հունարենի հետ:

բ) հայ. e = եվր. e: Ֆիքն իր «Die ehemalige Spracheinheit der Indogermanen Europas»² գրքի 425 էջում տալիս է եվրոպական նախաձևերի ցուցակը, որոնց e պետք է վերագրել: Դրանցից ես հայերենում վերագտնում եմ հետևյալները՝ հայ. sirt = եվր. k'erd «սիրտ», tsnôt (=tsen-ôt)=genu «ծնոտ», inn (=inum=invan<envan=nevan) = nevan «ինն», hing=penkan «հինգ», mets=mega «մեծ», měj (<medyo) = medhia «միջին» mejr, meju (μέλισσα)=melita «մեղր», nist (=nsit=ni-sedas)=եվր. sedas «նիստ», hin=sena «հին», evthn=septan «յոթ», astj = ster, skesur=svek'ura, svek'rû, vez=sveks «վեց»: Միայն մի թվացյալ բացառություն կա, որը հաստատում է օրենքը, այն է՝ khuir=khoyer, այստեղ o-ն ծագել է միայն նախապես e-ին նախորդող v-ով svesar հիմնաձևի e-ից, հմմտ. լատ. soror, այսպիսով khuir-ը հանգում է

¹ e-ի անցումը i-ի ընդհանուր տարածում է գտել Թիֆլիսի բարբառում: o-ն նույնպես համատարած u էր տվել: Հին հայերենում վիելի սակավ է պատահում o=a-ից առաջացած u: Հավաստի օրինակ է թերևս տասնավորներ կազմող -sun-ը, սեռականը՝ -sni, օր. innsun, սեռ. innsûni, 90=ε'ν'ε'ν'ή'κοντα:

² Եվրոպայի հնդեվրոպացիների նախնական լեզվամիասնությունը:

ե-ով այս հիմնաձևին, մինչդեռ մյուս մերձավոր ազգակցություն ցույց տվող բառերը՝ hair, mair, elbair, a-ի պահպանմամբ համապատասխանում են եվրոպական լեզուներին: Ֆիքի կողմից նշված ներկայի հիմքերից և բայերից մինչև օրս միայն քչերն են հայտնաբերվել հայերենում՝ ed- «տուել», հայ. ut, որի u-ն ինձ համար պարզ չէ, ger- «կլանել», հայ. ker բարդությունների վերջում, հուն. βολο և e-ի անկումով klanel, ber «բերել, կրել», հայ. berel, դրա հետ նաև ber «պտուղ», ber' n «բռն»: ei-ը, որպես i-ի աստիճանավորում¹, հանդիպում է déz=նախն. dheigh=fingere, mizê «միզում է» < meizê-ից, նախն. meigh'ati, lizê < leizê-ից = նախն. leigh' և հակառակը՝ lkh-anê² առանց աստիճանավորման, եվր. leikati «թողնում է»: Այս դեպքերին հավելվում են նաև mis= եվր. memsa, amis=եվր. mens, mitkh=եվր. menti, kin=գոթ. qino, gin=լատ. venum, drern=չեզ, հիմքը՝ χεզ, sin=չενεός, tser=γεροντ, heru=περονδι, hetkh, լատ. peda (սակայն otn= pāda, es=ε'γω, ego, սակայն հւլ. azū, mnal «մնալ, բնակվել» = μένω, μίμνω, լատ. maneo, tsn-anil «ծնել», antsin, արմատը՝ gigno, genui, γίγνομαι, սակայն tsanōth, արմատը՝ tsan «գիտենալ», լիտվ. žinoti «գիտենալ»:

Թեքման համար e-ն կարևոր դեր է խաղում այնպիսի անվանակերտ ածանցների համար, ինչպիսիք են՝ ter=նախն. tar, այստեղից dústr, սեռ. dstér, բայերի մոտ որպես հիմքակազմ ձայնավոր անենատարածված բայախմբերում՝ berem, beres, berê և այլն, որպես աճական՝ այն դեպքերում, քանի դեռ նա հանդիպում է՝ eki «եկա», edi «դրեցի»³ etu «տվեցի» etes «տեսավ», egit «գտավ»: Դրան հակառակ՝ հայ. a-ն եվր. e-ի դիմաց հանդիպում ենք՝ dašn=զենդ. dashina, եվր. deksina, սակայն հայերեն բառը (t-ի փոխարեն d-ի պատճառով) փոխառություն է պարսկերենից: Սակայն հավաստի է tasn=եվր. dek'an: Արդյո՞ք նաև vazel «currere» բառի մեջ =եվր. ներկայի հիմք vegha-ին, vazel-ը նույնպես կարող է vaz-ից առաջացած լինել:

2) r-ի ճեղքումը r-ի և l-ի:

¹ Որ այդ աստիճանավորված ձայնավորը հենց նույն e+i-ն է, ապացույց են այնպիսի դեպքերը, ինչպես՝ berê=ներկայի հիմք bere+y=ti, ինչպես նաև այն հանգամանքը, որ a+l, y, հենց ai է տալիս, բայց երբեք՝ é: Յուրահատուկ է u-ի աստիճանավորումը կամ նրա գրության ձևը՝ oy, այժմ՝ ai, Նախկինում այն թերևս oi է արտասանվել: Կարելի էր կարծել, որ oy-ը միայն երկարացման նշան է եղել, և oy=đ, ինչպես cy=é: Եթե սակայն oy-ը պետք է ծնանակաձև լինի, ապա ինչո՞ր նախկինում այն հենց նորաստեղծ նշանով չի տառադարձվել հուն. ω, որի համար ov են օգտագործում:

² l Khané=λιμνάει:

³ Ներկան է dnel=d-ne-l, որը, համաձայն հնչյունական օրենքների, պետք է որ հանգի de-ne-l ձևին: Եթե այն համենատեղի լինենք tal բայի ներկայի հետ, ապա կտառացվի հետևյալ համապատասխանությունը՝ հայ. de «դնել»: ta «տալ» = հուն. θε: թ:

l-ն հայերենում հանդիպում է երկու r հնչյունների (r' և r) և մեկ l-ի կողքին, որն այժմ արևմտահայերի կողմից որպես γ է արտասանվում, նախկինում սակայն ներկայացնում էր հունարեն λ-ն: Այդ սկզբնական l-ին եվրոպականում նույնպես l է համապատասխանում, մինչդեռ r', r-ի և l-ի դիմաց եվրոպականում r է հակադրվում:

ա) l=եվր. l' la! «զանգատվել, լար», արմատը՝ lâ (Fick, Wörterbuch, 747), lain (platan-ից)= πλάτυς, հիդլ. lethan, laphel=λάπιω, lamba, lizel=λειχώ (հմնտ. նաև հայ. lezu), li (=plana «լի»)՝ եվր. palna, l-nu-l «լցնել», եվր. plâ, lwanal=πλώνω, loganal=λοφ-, lavo, luis²=lux (lusa-ber=lucifer, lusin=luna, lu³=pulex, ls-el=եվր. k'lus, նախն. արմատը lu=k'lu հանդիպում է կատարյալում՝ lway «զեցի», lur, lkhanel «լքել» = եվր. lik, λειπω, lrik (զոտեիկ) «foot-pavement» = եվր. plâra «հատակ, զետիմ», lutsanel=եվր. lug (?), klanel=deglutire, ail=alius, gail⁴=եվր. valka, ինչպես ածանցական l-ն՝ magil, nagel=եվր. naghla, mar արմատը, ինչպես եվրոպականը ճեղքվել է mar և mal⁵ ձևերի՝ mer'anil և malel «տորոել, մանրել»:

բ) հայ. r, r', l=եվր. r:

sirt=cor, khirtn=idրօզ, kerp=corpus, tagr=δαήզ, astl=a'ot'իզ, dustr=θυσάτηզ, gortsel=wirken, Fέγγον, leard=jecur, mard=βροτόζ, vard=Φρόδον, βροδον, berel = φέρειν, tser = γέρον, chorkh = quatuor, arj=ursus, jerm=warm, harzand=եվր. park', hair=:ատիզ, նույնը՝ mair, elbair, khuir, elbiur=φοεάզ, du rn=θυρά, dzer n=չեզ, arb = եվր. sarbh (sorbere), erd-nul «երդվել», օտեթ. ard, art, պլավ. rotū, rota «երդում»: Միայն մի դեպք է հանդիպում, որտեղ հայ. r-ն եվրոպական l-ին է համապատասխանում՝ srōnkh, tibia, crus=եվր. k'launi, լատ. clunes:

3) Կան մի շարք բառեր, որոնք եվրոպական լեզուներում բոլորովին այլ հնչյունական պատկեր են ունեցել, քան արիականում: Ֆիքը դրանք խմբագրել է (Spracheit., 424), սակայն նրանց մի մասը, որը նախկինում համարվել է միայն զուտ հնդկական, դիտել է որպես արիական: Այդ բառերից 12-ը ևս վերստին հանդիպում են հայերենում: Դրանցից ձևով արիականին համապատասխանում են՝ un-ain=մոա, seav «սև» = սնս. çyâva «սևագորշ», es < az = զենդ. azem (լիտվ. asz, հւլ. azū), հավանաբար նաև՝ zamakh «ցամաք»,

¹ Սակայն պրս. pur:

² Սակայն պրս. rōz, այժմ՝ rōz է արտասանվում:

³ lu=plu, հւլ. blōcha, լիտվ. blusà (աֆղ. vragah=vrazh'ah) prucha-ից, ինչպես հայ. nu=հւլ. snūcha=աֆղ. nzh'or < snushā:

⁴ Սակայն պրս. gurg:

⁵ Նոր պրսկ. murdan «մոռնել» ձևի կողքին հանդիպում է máldan, fricare, terere, սակայն վերջինս որպես մի ավելի հին ձև, ենթադրում է ոչ թե mal, այլ mard=սնս. mard, հմնտ. dil «սիրտ» = zarda, gul «վարդ» = varda, sál «տարի» = sarda:

եթե այն գալիս է tsamakh-ից = սնւ. jam¹: link-ի «ճախ» համար որպէս արիական ձև savya (սնւ. savya, զենդ. havya) առաջադրելուն խանգարում է նոր պարսկերեն cap «ճախ» բառը, որը գալիս է skavya-ից, ուստի և հայ. aheak բառի համընկնումը զենդ. havya-ի հետ միայն պատահականության արդյունք է: Այդ արիական ձև ունեցող հայերեն երեք բառին հակադրվում են՝ akt=եվր. aki², mis=եվր. memsa, tsndt=եվր. genu, dur'n=եվր. dhvara (բաղաձայնների տեղաշարժի համաձայն), magil= եվր. nagma, naghla «երանգ» (սնւ. nakha, նպրս. nâkhum, օտեթ. ուն-ի դիմաց), enth-, ênth- եվր. andhara (հնչյունապես ավելի ճիշտ կհամապատասխանի -ênd, գործիականի հետ «տակ», մնացած դեպքերում սակայն տարբեր իմաստներով): Հայ. amis=եվր. mens, որն իր կողքին ունի mah-ը mahik բառի մեջ = սնւ. mâs: Հայ. sirt բառը իր i=e համապատասխանությամբ վերաբերում էր եվր. k'erd-ին, այլապես նրա s-ն կարող էր նաև z-ից ծագած լինել = զենդ. z, սնւ. h (հրձ «սիրտ»): Հայ. ôdz=եվր. anghi իր կողքին ունի iz բառը = սնւ. ahi, էջից: mets-ը որոշակիորեն եվր. meg և ոչ արիական megh-ն է: Այսպիսով, արիականը եվրոպականի համեմատությամբ մոտավորապես 3: 9 = 1 : 3 հարաբերությունն ունեն:

Որ արիականի և եվրոպականի միջև եղած տարբերությունները, ի դեպ, զուտ պատահական կարող են լինել, ցույց է տալիս վերը նշված այն դեպքը, համաձայն որի սանսկրիտերեն savga = զենդ. havya = հայ. aheak համապատասխանությունը հակադրվում է պրս. cap = skavya: Մնացած տարբերությունները, սակայն, կարող են հիմնավորվել նրանով, որ որոշ լեզուներ կորցրել են իրենց զուգահեռ ձևերը, իսկ մյուսները դրանք հայերենի առումով պահպանել են, ինչպես այդ կարող էր տեղի ունենել հետևյալ դեպքերում՝ եվր. aki = ար. akshi, եվր. mensa = ար. masa³, եվր. angh'i = ար. aghi: Վերստին ուրիշները հենվում են Ֆիքի սխալ ենթադրությունների վրա, օր.՝ եվր. dhvara = ար. dvara, որտեղ արիական dvara-ն ընդունված է միայն ի սեր սանսկրիտի, քանի որ զենդ. dvara-ն նույն հաջողությամբ կարող էր հանգեցվել ինչպես dvara-ի, այնպես էլ dhvara-ին: Կասկած է հարուցում նաև եվր. gham «երկիր, ցամաք» և արիական gam, jam ձևերի հակադրությունը, զենդ. zem-ը կարող էր առաջացած լինել ինչպես g'am-ից, այնպես էլ gh'am-ից և առաջին հերթին հարաբերվում են սլ. zem-l-ja ձևին: Սանսկրիտը

պետք է որ միայն շնչեղությունը կորցրած լինի: Նույն հաջողությամբ կարող է սլավ. azû-ն «ես» agh'am-ից ծագած լինել և վերաբերել զենդ. azem-ին, դրա համար կարիք չկա սլավոնալիտական առաջին դեմքի դերանունը արիականից անջատել և եվրոպականի կողքին դնել: Ամփոփենք: Հնչյունական այս տարբերությունները պետք է որ առանձին լեզուների միմյանցից անջատումից հետո ծագած լինեն և չեն ապացուցում այն, ինչ Ֆիքն է ուզում ապացուցել:

4) Վերջին կետը, որն այստեղ արժանի է քննարկման, այդ հայերենի բառապաշարի եվրոպականի նկատմամբ փոխառնչման հարցն է, որ ես չեմ ուզում շոշափած լինել, քանի որ հայերենի բառերի մեծ մասը ստուգաբանորեն պարզաբանված չէ: Ըստ վերը նշվածի, ես սպասելի եմ համարում, որ բազմաթիվ եվրոպական բառեր կարելի է հանդիպել հայերենում և եթե Ֆիքի կողմից որպես եվրոպական բերված բառերից, թուցիկ հայացք գցելով, միայն մոտ քսանն են գտնում հայերենում, դա հավանաբար նրանով է բացատրվում, որ բառապաշարի առավել եվրոպական մասը մինչ այսօր գործող հայագետների կողմից ավելի քիչ է ուշադրության արժանացել, քանի որ նրանք արևելագետներ են եղել, համեմայն դեպս չեն եղել եվրոպական լեզուների հատուկ գիտակներ՝ Պետերման, Վինդիշման, դը Լագարդ, Ֆր. Մյուլլեր: Որ եվրոպական բառապաշարի մի գիտակն համար հայերենում գտնելու որոշ բաներ կան, ես կապացուցեմ մի օրինակով:

Հայերենում կա ցուցական դերանուն մի s ածանցով, որը մի a կցորդով հանդես է գալիս որպես ինքնուրույն ցուցական դերանուն՝ sa = այս: Հնարավոր է, որ այդ sa-ի և սանսկ. sa-ի միջև հավասարման նշան դնել. սակայն այդ բանին արգելք են հանդիսանում հայերենի հնչյունական օրենքները, համաձայն որոնց սանսկր. sa-ն պետք է ha, a դառնար: Ուստի և այդ s-ի ստուգաբանությունը ինձ համար մութ էր մնացել, մինչև որ ես Ֆիքի մոտ (Spracheinheit, 263) կարդացի, որ k'i ցուցակում դերանունը սահմանափակվում է միայն եվրոպական լեզուների շրջանակներում՝ χείνος, ἐκεῖ, լատ. ce, լիտվ. szis, հսլ. si, գերմ. hi = «այս»: Այսպիսով, հայերենի այդ s-ն, ըստ հնչյունական օրենքների, կարելի է առանց այլևայլի = նախն. k'i-ին զուգադրել, և եթե այդ k'i-ն հնչյունապես և ըստ իմաստի զուգադրվում է եվր. k'i-ի հետ, ապա մենք դրանք առանց այլևայլի կարող ենք նույնացնել: Եվ, այսպիսով, ապագա ուսումնասիրությունները թույլ կտան հայերենում, անշուշտ, բազմաթիվ այլ «եվրոպական» բառերի առկայությունն ապացուցել:

Մեր ուսումնասիրության վերջին մասով եվրոպականի և հայերենի շուրջը, անկասկած, մի այնպիսի նեղ օղակ սեղմվեց, որ թերևս ավելի դյուրին կլիներ

¹ Սակայն ես կասկածում եմ, թե zamakh -ի նախնական իմաստը «ցամաք, հող, երկիր» իմաստն է, այլ թերևս «ցամաք, շոր», ուստի և կասկածելի է z-ի ծագումը ts-ից: Այլապես չէ՞ որ zam-akh = սնւ. ksham կարելի էր համեմատել vez = sveks, սակայն իմաստների նախնական տարբերությունը թույլ չի տալիս այդ բառերը նույնացնել:

² Սակայն հանդիպում է նաև achkh < արիակ. akshi:

³ Հմմտ. Joh. Schmidt, Vocalismus I, էջ 34:

հայերենը արիականից, քան եվրոպականից սահմանազատել: Եվրոպական լեզուների մեջ առկա շչական հնչյունների պատճառով այն ամենից ավելի մոտ է պավոնալիտական լեզուներին, որոնց հետ նա կապված է նաև միայն այդ երկուսին հատուկ գործիական հոլովի -bhi վերջավորությամբ: Այսպիսի իրադրության պայմաններում, տոհմածառի կողմնակիցները, ինչպես Ֆիքը, անշուշտ, հակված կլինեն հայերենը արիականից առհասարակ անջատել և այն բնորոշել որպես զուտ եվրոպական: Այս կարծիքի դեմ են կվկայակոչել այն, որ հայերենը լիովին չի մասնակցում a-ի և r-ի ճեղքմանը, ինչպես այդ ապացուցում են *tasn=dek'an* և *srunkh=k'launi*-ը: Սակայն ես ինքս այս առարկությունը խախտում եմ համարում, քանի դեռ այն հենարան չի գտնի: Այս բաներն, ի վերջո, վկայում են այն մասին, որ լեզվում որոշ պատահականություններ իշխող կարող են լինել: Չէ՞ որ պատահականություն պետք է համարել, որ հունարենի, լատիներենի, գոթերենի և հայերենի առաջին դեմքի դերանունները (*éγω, ego, ik, es*), ի հակադրություն սլավոներենի և լատիներենի, a-ի դիմաց (*azú, asz*) e ունեն: Ուստի և պատահականություն կարող է լինել նաև այնտեղ, որտեղ բոլոր լեզուները իրար համապատասխանում են, եթե անգամ այդ անհավանական է: Թերևս հնարավոր է, որ a-ից e-ի և r-ից l-ի առաջացումը սկզբում միայն մի քանի ընդհանուր դեպքերում տեղի ունենար և, տարբեր լեզուներում մեկ անգամ ծածկելով՝ ինքնուրույն կերպով տարածվեր և երբեմն մեկ, երբեմն մի քանի կամ միաժամանակ բոլոր լեզուներում նույն բաներում առաջ բերեր e-ի և l-ի նորակազմություն: Իմ կարծիքը հիմնավորելու համար ես ավելի շատ հակված եմ հայերենի և իրանականի վերը նշված հնչյունական ընդհանրությունների վրա, որոնց թիվը թերևս շատ ավելին է, քան ես տվել եմ: Քանի որ, չէ՞ որ շատ հավանական է, որ ես իմ առաջին ոգևորությամբ որոշ բաներ կասկածել եմ որպես փոխառություն, մինչդեռ նրանք մաքուր հայերեն են և կասկածից դուրս է, որ ես որոշ բաներ այս ուսումնասիրության համար բնավ չեմ օգտագործել, միայն այն պատճառով, որ ինձ թվացել է, թե դրանք իրանականի դրոշմ են կրում և այդ իսկ պատճառով ինձ կասկածելի են թվացել, ինչպես, օր.՝ *šēn* «բնակավայր, շեն», *šin-el*=*զենդ. shayana* «բնակարան», *զենդ. shi=kshsi* «բնակելի», մինչդեռ ես արիական այնպիսի բաներ, ինչպիսիք են՝ *kam* «կամ», *kamkh* «կամք», *kamil* «կամենալ»= *պրս. kām*, արիական *kāma*, *bari*=*սնս. bhadra (+ya)*, *indz (ints)*=*սնս. sirnha* «առյուծ», *part-kh*, արմատը *par*=*զենդ. par* «հանցանք գործել», *azd*=*հայրս. azdā, air-el*=*զենդ. ātare* և բազմաթիվ այլ բաներ հավաքելը ես ավելորդ համարեցի¹:

Սակայն չէ՞ որ առաջնահերթ խնդիրն էր, հայերենը իրանականից և

¹ Եվ իզուր, ինչպես ես այդ, ցավոք, չափազանց ուշ նկատեցի:

արիականից սահմանազատելը:

Հետևաբար, իմ հետազոտության արդյունքն եղավ այն, որ **հայերենը արիասլավոնալիտական լեզուների շրջանում կանգնած է իրանականի և սլավոնալիտականի միջև:**

Եթե հետագա ուսումնասիրությունները մեր այս՝ առայժմ միայն նախնական եզրակացությունը վերջնական դարձնելու լինեն, ապա միանգամայն համոզեցուցիչ կլիներ հնդեվրոպական լեզուների տոհմածառ կազմելու անհնարինությունը: Եթե միայն հայերենը արիասլավոնալիտական լեզուների շրջայում երկու ճյուղերը կապող օղակը լիներ, և ոչ թե, մի ճյուղ երկու ճյուղերի միջև, ապա այդ տոհմածառը, որը տապալվել էր Յոհաննես Ծմիդոսի ջանքերով, պետք է որ հավերժ ընկած մնար: Սակայն, եթե հայերենը կապող օղակ պետք է լինի իրանականի և սլավոնալիտականի, ինչպես նաև արիականի և եվրոպականի միջև, ապա այն, ըստ իս, նույն միջնորդ դերն է կատարել մի ժամանակ, երբ նրանք միմյանց շատ մտան են եղել, երբ պատմական ժամանակաշրջանը դեռ չէր գծել այսօր գոյություն ունեցող սահմանագիծը, երբ նրանք միմյանց նկատմամբ ավելի շուտ բարբառային հարաբերությունների մեջ էին գտնվում: Ինչպես վերջին իտալական ժողովրդական բարբառները իրենց ռեզային ձայնավորներով, u-ի փոխարեն ü-ով և իրենց այլ առանձնահատկություններով մոտենում են ֆրանսերենին, այնպես էլ կարելի է սպասել, որ իտալերենը Ֆրանսիայի սահմանի վրա թերևս միջին օղակ է եղել: Ֆրանսերենի և իտալերենի միջև նույն ձևով կարող էր նաև հայերենը ինչ-որ մի ժամանակ միջնորդի դերում կանգնած լինել արիական և եվրոպական բարբառների միջև, ուստի և այդ պատճառով մասն ունենալ երկուսի առանձնահատկություններից էլ: Քանի որ, եթե մենք ակնհայտ ենք, որ Ավեստայի և Վեդայի հնադարյան լեզուները դեռ միմյանց միանգամայն մոտ են կանգնած, և վերականգնված իրանական և հնդկական նախալեզուները, անշուշտ, միմյանց նկատմամբ բարբառների մասն կհարաբերեին, ինչու՞ չպետք է նաև եվրոպական լեզուները նախկինում միմյանց հետ այդ նույն հարաբերությունների մեջ գտնվեին և հայերենն էլ միջանկյալ բարբառ լիներ այդ երկուսի միջև: Այս դեպքում հեշտ է բացատրել հայերենի յուրահատուկ երկակի բնույթը: Արևմտյան բարբառներում a-ի և r-ի, իսկ արևելյան բարբառներում կոկորդային հնչյունների ճեղքման ալիքի բարձրանալուց հետո, առաջին ալիքը սլավոնալիտական լեզուների շրջանակներից դուրս թափանցելուց հետո տարածվեց նաև հայերենի վրա, մինչդեռ վերջինը, հայերենի վրայով անցնելով, տարածվեց նաև սլավոնալիտականի վրա: Առաջինը, լինի դա ուղղակի, թե հետագա ազդեցության ներքո, հ. ե. *dekan* թվականի a-ն սլավոնալիտականում դարձրեց «e», երկրորդը՝ նույն այդ բառի k-ն

դարձրեց k¹, այնպես, որ այժմ հ. ե. dakan-ի դիմաց սլավոնալիտական լեզուներում հիմքի ձևը դարձավ dek¹an:

Սակայն, երբ ավելի ուշ արևելակամում սկիզբ առավ հետնալեզվայինների ճեղքման մի նոր ալիք (հետնալեզվայինների և քմայինների), այն կարող էր տարածված լինել սուկ այն պատճառով, որ այն ինքնին չափազանց թույլ էր, կամ՝ որ բարբառներն արդեն սկսել էին միմյանցից ավելի ուժեղ սահմանազատվել, այն թերևս ամբողջովին իրանականի վրա տարածվեց, սակայն հայերենում միայն մի քանի ճյուղերի վրա, այնպես որ մենք, ճիշտ է՝ հանդիպում ենք մի այնպիսի ձևի, ինչպիսին է chorkh=catver, սակայն նաև hing=pañcan:

Ինչևէ, եթե մենք սնս. c, j, h և զենդ. c, j, հնչյունների առաջացումը k, g, gh-ից համարենք, նույն դեպքերում պետք է դիտենք որպես արիական լեզուների ազգակցության ապացույց, հնդեվրոպական հնչյունների զարգացումը նույնպես ծառայեցնենք որպես ապացույց արիականի, հայերենի և սլավոնալիտական լեզուների փոխադարձ կապեր՝

h. ե.	k	g	gh
ար., հայ. սլ-լ.	k ¹	g ¹	gh ¹
այդ է սնս.	ç	j	h
զենդ.	s	z	z
հայ.	s(š, ž)	ts	dz, z
սլ.	s	z	z
լիտվ.	sz	ž	ž

Ինքնըստինքյան հասկանալի է, որ նման մի եզրակացության դեմ տարբեր լեզուներում այդ հնչյունների մեջ գոյություն ունեցող չնչին տարբերությունները ոչինչ չեն հաստատում, քանի որ դրանք վերաբերում են առանձին լեզուների ավելի ուշ շրջանի առանձնակի հնչյունափոխություններին¹:

Այսպես, օրինակ՝ եվր. e-ին, գոթ. i- է հակադրում և որ եվրոպական l-ից առաջացած առանձին լեզուների l-ն, անշուշտ, նույնը չէ, ինչպես,

¹ Կարելի է մտածել, թե ինչպես է սնս. s-ն, որը պետք է ձայնեղանար, ամեն ինչ տար, բացի z-ից, և ինչպես նույն ձևով jh-ն, որի դիմաց հ է հանդես գալիս. կարծես արգելված լինի: Ուստի և զարմանալի չէ, երբ մենք սնս. նախնական g¹-ի դիմաց z չենք հանդիպում, դեպի որը նա կենդանալիտական էր հակված հայերենում: Ուշագրավ է իրանականի, հայերենի, պարսկերենի (իր հնագույն ձևում) նախափոխությունը ատամնային սուլակամների նկատմամբ, ի հակադրություն սանսկրիտի քմայինների. ինչպես նաև լիտվերենի լեզվաատամնայինների, դրանով որևէ քան չապացուցելով այդ լեզուների՝ միմյանց նկատմամբ ավելի սերտ առնչության օգտին:

օր.՝ հուն. λ -ն հայերենի տառադարձությամբ միշտ l-ով (ստուգաբ. = r, այժմ = γ), և երբեք l-ով չի արտահայտվում: Եվ եթե, չնայած դրան՝ նույն այդ e-ի և l-ի օգնությամբ մենք եվրոպական լեզուների նախնական փոխադարձ կապն ենք ապացուցում, ապա սուլակամները պետք է որ ապացույց լինեն հայերենի և սլավոնալիտականի երբեմնի փոխառնչության համար: Այն, ինչ արդարացի է մեկի համար, ճիշտ է նաև մյուսի համար: Եվ, վերջապես, ինչքան էլ մենք ստիպված լինենք արիական քմային հնչյունները նախաիրանական հետնալեզվայիններից ծագած համարել, նույնքան իրավացի կլինենք մենք արիա-հայ-սլավոնալիտական k¹, g¹, gh¹ հնչյունների շարքը, որին հանգեցնում են մեզ հայտնի շակական հնչյունները, հնդեվրոպական հետնալեզվայինների շարքից ծագած համարել: Հարցը հենց նրանում է, որ նույն ձևով, թեկուզ տարբեր ծավալով երկու անգամ հետնալեզվայինների ճեղքում է տեղի ունեցել:

Սակայն, եթե մեզ իրավունք վերապահվեր այնպես, ինչպես Ֆիքսն է k և k¹ հնչյունների հետ վարվել, այդ երկու շարքը հնդեվրոպական նախալեզվի համար տիպական համարել, մեր փաստարկումը խախտու կլիներ և չէր ծառայի որպես ապացույց արիերենի, հայերենի և սլավոնալիտերենի փոխադարձ կապի համար, այդ դեպքում նաև արիականում քմայինների միասնական կազմությունը, որին նաև հայերենն է, եթե անգամ մասնակի է մասնակցում՝

k=	սնս. c, զենդ. c,	հայ. ch, ž, s
g=	j, j, zh,	(k) ž
gh=	h, j, žh,	(g) ž

ոչինչ չի ապացուցում հնդկերենի, իրանականի և հայերենի փոխադարձ սերտ առնչության օգտին: Այդ դեպքում նաև պետք է արդարացի և հետևողական դատողությամբ անհիմն համարենք այն մի քանի փաստերը, որոնցով, ինչպես այն ժամանակ կարծում էին, պետք է միմյանց հետ կապել սլավոնալիտական և գերմանական լեզուները, ինչպես նաև հունարենն ու լատիներենը, կամ հունափոխական ու կելտական խմբերը, քանի որ դրանք իսկապես ավելի մեծ արժեք չունեն, քան նրանք, որոնց օգնությամբ կարելի է արիականը սլավոնականի, կամ՝ հայերենը այդ երկուսի հետ կապել: Այսպիսով, մենք թերևս կհանգենք մի այնպիսի երկմտելի տեսակետին, որից ելնելով՝ նաև նշված եվր. e-ն և l-ն կարելի կլինի համարել ոչինչ չապացուցող, այն է՝ եթե մի լեզվախմբում առանց որոշակի պատճառաբանության շակականները ստացվում են հետնալեզվայիններից կամ հաջողությամբ կարող է նաև մյուսներում որոշ դեպքերում առանց պատճառաբանման a-ն դառնալ e, իսկ r-ն՝ l, կամ եթե

կարելի է հ. ե. նախալեզվի համար երկու: տարբեր *k* ընտրել, ինչո՞ւ չէր կարելի նաև երկու հիմնային տարբեր *a* և *r* հնչյունների գոյությունն ընտրել, որոնք նույնքան պատահականորեն համընկել են արիականում, ինչպես այդ բազմիցս տեղի է ունեցել Ֆիքի *k*-ի և *k'*-ի հետ: Այն, որ այս տեսակետը անիմաստ է, ոչ որ չի ուզենա հաստատել, միայն Ֆիքը հակված չի լինի այն ընդունել:

Այս տեսակետը ելակետ ընդունելով, թերևս հայերենի մասին այլևս որևէ այլ բան չէր մնում ավելացնել, բացի այն, որ նա հնդեվրոպական մի յուրահատուկ ճյուղ է: Եվ որպես այդպիսին հարկ է դիտարկել այն, նաև այլ տեսանկյունից, թե ինչպե՞ս պետք է ընկալել նրա հարաբերությունը եվրոպական և իրանական լեզուների նկատմամբ: Ես կուզենայի այս կապակցությամբ ի վերջո մշել նաև, որ հայերենի ստուգաբանական հետազոտությունը, ցավոք, դեռ իր նախնական էտապում է գտնվում, և մենք հայերենի բառապաշարի մի այնպիսի չնչին քանակի վրա ենք աշխատում, որ բոլորովին անհնար է գուշակել, թե այդ հետազոտությունները ինչ կլուսաբանեն, և թերևս անհիմն է եղել արդեն այսօր այդքան խիզախ կառույցներ կազմեցնել մի այդպիսի անկատար հիմքի վրա, ինչպես այդ արվեց: Ամենից առաջ անհրաժեշտ է հայերենից անջատել իրանական օտարաբանությունները և ձեռք բերել զուտ հայկական նյութը: Այս անելուց հետո կարելի կլինի սահմանել հայերենի հնչյունական օրինաչափությունները և, ըստ այդմ, թուլացնել այն կապը, որը հայերենը կապում է իրանականի հետ, կամ ընդհակառակը՝ ավելի ամուր կապել նրանց միմյանց հետ: Այդ կապը կարող է ավելի թույլ և ավելի ամուր լինել, սակայն անժխտելի է մնում հայերենի սերտ կապը եվրոպականի հետ, ինչպես այդ հետևում է եզակի գործիականը նախնական *bhi*-ի օգնությամբ կազմելուց, արիական քմայինների դիմաց հետնալեզվային հնչյունները մասնակի պահպանումից, ինչպես նաև *a*-ի ճեղքումից *a*-ի և *e*-ի, ինչպես նաև *r*-ի ճեղքումից *r*-ի և *l*-ի: Բառապաշարի համապատասխանությունների և տարբերության հարցում դեռևս նյութ չկա, քանի որ ո՛չ հայերենը, ո՛չ իրանականը մինչ այս բավարար չափով չեն ուսումնասիրված: Ուստի և այն հարցը, թե հայերենը բառապաշարի տեսանկյունից ինչպես է հարաբերվում իրանականին և սլավոներենին, պետք է միանգամայն բաց համարել, ինչպես մենք դեռ վերջնականապես լուծված չենք համարում հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում:

Էքսկուրս I (Աֆղաներենի մասին)

Վերը նշվածից ինքնըստինքյան հետևում է, որ ես Ֆր. Մյուլլերի կողմից կառուցած իրանական լեզուների տոհմաձառը, ինչպես այդ մասին իմ «Zur casuslehre»¹ հոդվածում տեղեկացրել եմ, այլևս չեմ ընդունում: Հայերենը պետք է դրվի իրանականի կողքին: Սակայն օւտթերենը, ընդհակառակը, չպետք է իրանականից այդքան հեռու դրվի. քանի որ այն իրանական լեզու է այս բառի ամենալայն իմաստով: Սակայն ես այն հատուկ «պարսկերեն» անվան տակ չեմ նշում, սուկ այն պատճառով, որ նա իր անորոշ դերբայն այլ կերպ է կազմում, քան պարսկական բարբառները: Այն կազմվում է ոչ թե *tan*-ով, այլ անորոշի սո, նո ածանցներով, ակներևաբար = նախն. *an*-< *anē*, *hāmān*. *battun* «կապել» < *bant-un* (պրս. *bastan* = *bad-tan*-), *winum* «տեսնել» = նախն. *vēn-anē*, *sōdzun* «վառվել» = նախն. *sōcanē*, որին վերաբերում են *ta*-ով կազմված դերբայները՝ *soghd*, *soqt*, *sūghd* = նախն. *sukhta*: Եթե *tan*-ը նախնական վերջածանցն է, ապա անորոշը պետք է հնչեր *bastun* (*hāmān*. *bast* դերբայը):

Եվ ընդհակառակը, ես Ֆր. Մյուլլերի հետ միասին կուզենայի պնդել, որ աֆղաներենն իրանական լեզու է և ոչ թե, ինչպես այդ արդի հնդկերենի և իրանականի քաջ գիտակ պրոֆ. Տրումպն է պնդում իր աֆղաներենի քերականության մեջ, իբր աֆղաներենը իրանականի և հնդկերենի միջև մի ինչ-որ միջանկյալ բան է: Քանի որ աֆղաներենն, իր բոլոր առանձնահատկություններով հանդերձ, ունի նաև իրանականին հատուկ բոլոր բնորոշ գծերը և հնդկերենի հետ շփվում է թերևս միայն արտաքնապես, մի բան, որն այստեղ ես կփորձեմ ապացուցել:

Աֆղաներենում *s*-ն տվել է *h*, և նա այդ *h*-ն դեն է նետել, *hāmān*. *nzh*-*or* «հարս» = սնս. *snushā*, *ōvāh* = «յոթ» = *saptan*; *sv*-ն տվել է *khv*, *khp* կամ *v*՝ *khvāshah* «սկեսուր», *hāmān*. սնս. *čvačrū* = *svačrū*, *skhar* «սկեսրայր» *khsar*-ի համար, պրս. *khusur*, սնս. *čvačura* = *svačura*, *khor* «քույր» = պրս. *khvāhar*, նախն. *svasar*; *khpal* «անձամբ» = պրս. *khod* < *svatas*, *qēnā*. *qatō* «անձամբ», *ūdēh*, *vūdēh* «քնած» = **svapta*: Նախնական քմային *c*-ն հավանաբար *ts*, *dz* է տվել, ինչպես օւտթերենը հետևյալ բառերում՝ *tsarman* «մաշկ», *tsalōr* «չորս», *pindzah* «հիկզ», *rvadz* «օր», ինչպես նաև նախկին *j*-ն այժմ հանդիպում է որպես *dz* > *dzvān* «պատանի» = պրս. *juvān*: Նախնական *k'*-ն

¹ Հոլովների տեսություն:

տվել է s, իսկ g¹, gh¹-ն տվել է z, zh¹ sil «հարյուր» = սնս. çatam; sūr «կարմիր» = պրս. surkh, նախն. çukra-ից; soe «նպատակ», սնս. çaça=çasa; zor «ծեր», իզականը՝ zařah, սնս. jar, իրան. zar; zdēh «ծանոթ», զենդ. zařta; zōe «որդի» = զենդ. zāta; zūm «փեսա» = զենդ. zāmātar, պրս. dāmād; zēr «հազար» = զենդ. hazañra, պրս. hazār; zah «ես» = զենդ. azem; zřeh «սիրտ» = զենդ. zaredhaya, պրս. dil; zhāmah «ծնոտ» = սնս. jambhā; zhi-mai «ձմեռ» = զենդ. zima: Նախնական r-ն աֆղաներենում կամ պահպանվում է, կամ լեզվաբանային է դարձել, l-ն, ճիշտ է՝ բավական հաճախ է հանդիպում, սակայն մեծ մասամբ փոխարինում է d-ին կամ t-ին: Ընչեղները լիովին են բացակայում, մինչդեռ gh, kh, v շփականները առկա են և այն էլ շատ գործածական: f-ն առհասարակ բացակայում է, այն փոխարինվել է v-ով՝ vāvrah «ձյուն» = զենդ. vafra; vr-ն օգտագործվում է pr-ի, bhr-ի, fr-ի փոխարեն: Նախնական çv-ն հանդես է գալիս որպես sp, op.՝ spai «շուն», spīn «գիտելիք»: Ուշադրության են արժանի նաև այլ:պիսի բառեր, ինչպիսիք են՝ ghvazh¹ «ականջ» = զենդ. gaosha (i-ից, u-ից հետո և այլն, s-ն աֆղաներենում պետք է որ սովորաբար zh¹ տված լինի, որտեղ արիականը sh, իսկ սլավոնականը՝ ch ունի): Shpazh¹ «վեց» թվականը = զենդ. khshvash¹, այնուհետև ներկայի և անորոշ դերբայի կազմությունը, անորոշը՝ skust-ēl, ներկայի հիմքը՝ skul (= skud), ā -vushtēl, պրս. ā -vur- և այլն, այսպիսով կարելի է համոզվել, որ այդ լեզուն իրանական է: Մակայն Տրումպը կխոստովանի, միևնույն ժամանակ և կհաստատի, որ այն միաժամանակ հնդկական լեզուների տիպական գծերն է կրում: Դրանք, ի հակադրություն իրանականի, հետևյալներն են՝ ատամնային s-ի պահպանումը (բացառությամբ այն դեպքերի, երբ այն նաև հնդկերենում է հ տվել), ինչպես նաև՝ լեզվակայինների, շնչեղների և ռնգային ձայնավորների պահպանումը: Ատամնային s-ն որոշ դեպքերում իսկապես պետք է որ պահպանված լինի, օր.՝ sahēl= «կրել», արմատը՝ սնս. sah, որի դիմաց աֆղաներենում կարելի է az, azh սպասել, մինչդեռ այդ բառը, ինչպես և բոլոր մյուսները, որոնք s-ն պահպանել են, իմ կարծիքով, փոխառություն են հնդկերենից: Այս ենթադրությունը բոլորովին կասկած չի հարուցում, քանի որ աֆղաներենում գեռում են հնդկերենից, պարսկերենից և արաբերենից փոխառած բառերը: Ինչ վերաբերում է լեզվակային հնչյունների առկայությանը, ապա այստեղ, անշուշտ, զգացվում է հնդկերենի ազդեցությունը, որը սակայն չի շոշափում լեզվի՝ որպես այդպիսին լինելու էությունը, քանի որ այդ հնչյունները (d, t) միայն հնդկական փոխառություններում են հանդիպում, ինչպես այդ ինքը Տրումպն է նշում (Die Verwandtschaftsverhältnisse des Pash'to, Zeitschrift d.D.M.G.XXI, էջ 26). «Այս քիմբային հնչյունների միջոցով պաշտոն լեզուն սերտորեն կապվում է իր քույր լեզուների հետ՝ Սինդիի և տարբեր՝ Հնդկաստանով մեկ սփռված

Յաթ բարբառների հետ, որոնցից գրեթե յուրաքանչյուր պաշտոն-բառ, որը քիմբային հնչյունն ունի, հեշտությամբ կարելի է ապացուցել նրա պատկանելիությունն այդ լեզուներին»: Այս նույնն է ասված նաև քերականության գրքում (էջ 12): Քիմբային sh, r և f հնչյունները, անշուշտ, քաղաքացիական իրավունք են ստացել և հանդիպում են բնիկ աֆղանական ծագում ունեցող բառերում: Այստեղ, անշուշտ, առկա է հնդկերենի ազդեցությունը, սակայն լեզուն չէ՞ որ շարունակում է մնալ իրանական: Եվ սրանք ավելի հաճախ են լիովին կորչում, քան շնչեղներն ու ռնգայնացած ձայնավորները, որոնք այդպիսի մեծ դեր են խաղում արդի հնդկերենում, մինչդեռ բելուջերենը, որը ոչ այլ ինչ է, քան պարսկական մի բարբառ, հնդկերենի ազդեցության տակ ոչ միայն շնչեղ հնչյուններ է ձեռք բերել, այլ նաև մի քիմբային և մի ռնգային հնչյուն, առանց դրա՝ իր պարսկական բնույթը որևէ կերպ ժխտելու: Տարօրինակ է այն, որ այդ հնչյունները, ամբողջովին վերցրած, որոնց մենք առհասարակ սովոր ենք, բոլորովին էլ ոչ բոլոր հնդկական լեզուներին են հատուկ: Քանի որ կեֆրիների լեզուն մի իսկական հնդկական իոսվածք է, ըստ Տրումպի (Zeitschrift d. D.M.G. XX, էջ 393) շատ ավելի չափավոր է օգտագործում, քան մյուս նոր հնդկական լեզուները, քիմբային, ռնգային ձայնավորներ և շնչեղներ, վերջիններից Տրումպին հաջողվել է իր ձեռքի տակ ունեցած, ճիշտ է՝ շատ սահմանափակ քանակի նյութի պայմաններում, միայն ch և fh հնչյունները հայտնաբերել: Եթե այդ յուրօրինակ լեզուն դրանով իրանականից այնքան էլ հեռու չի կանգնած, քան մնացած հնդկական լեզուները, ապա նա դրանով ավելի է մոտենում նրան, այն բանով, որ նրան էլ, ինչպես աֆղաներենին և օսեթերենին հատուկ է c-ի անցումը ts-ի և հնդկական h-ի փոխարեն z և sh շչական հնչյունների առկայությունը, հմտ. shim (ըստ Բուրնեսի՝ zim) «ձյուն» = սնս. kima . zē (ըստ Բուրնեսի՝ zuin) «ձմեռ», սնս. hemanta, մինչդեռ մի այլ դեպքում նա հնդկական h-ի դիմաց պարսկերենի նման ð-ն ունի՝ սնս. hyas «երեկ» = կեֆ. dōs, զենդ. zyō, պրս. di: Մյուս կողմից՝ աֆղաներենը մոտենում է նոր հնդկական լեզուներին ուղղական-հայցական և թեքական (ֆորմատիվ կռչված) հոլովների տարբերակումով և անցյալի կազմությամբ (դերբայ + գործիական), ինչպես նաև որոշ այլ տեսանկյուններից: Այս երկու վայրի լեռնաշխարհների ժողովուրդների լեզուների մերձեցմամբ, որը լեզվաբանորեն շատ հետաքրքիր է, թերևս իրականում կարող էր ավելի սերտ լինել, եթե կեֆրին իր բարբառներով ավելի ծանոթ դառնա, սակայն ես չեմ կարծում, որ կեֆրիի և աֆղանների պատմական հնդկերենի և իրանականի միջև մի իսկական միջոցորդ օղակ կգտնվի, այլ ընդհակառակը՝ կեֆրիի բարբառներն իրենց ամբողջական բնույթով այնքան հնդկական կմնան, որքան իմ համոզմամբ աֆղաներենը իրանական է և բելուջերենը, չնայած մի քանի

հնդկական հնչյուններ պարսկերեն են: Մտաբերենը սանսկրիտի հնչյունական համակարգի կրած ազդեցությունը գրավիտական լեզուներից և ուշադրություն չդարձնենք այն բանի վրա, որ կովկասյան լեզուներից օտեթերենը, հայերենը և երկուսին լրիվ օտար վրացերենը միանգամայն միևնույն հնչյունական համակարգն ունեն:

Ի վերջո, ես կուզեմայի, որպեսզի ընթերցողներն ի վիճակի լինեն քննարկվող լեզուների՝ միմյանց նկատմամբ ունեցած փոխառնչության մասին անձամբ դատելու, համեմատել միմյանց հետ այդ լեզուներին բնորոշ մի քանի բառեր, դրանցից 1-10 թվականները ցույց տվող բառերը՝

զենդ.	aēva, dva, thri, cathware, pañcan, khshvash', haptan, ash' tan, navan, dasan
նալու.	yak, du, sih, cihâr, panj, shash, haft, hasht, nuh, dah
օտեթ.	yu, duâ, ärthâ, tsüppâr, fondz, akhsâz, awd(aft), ast,-dâs
աֆղ.	yau, dvah, dre, tsalôr, pindzah, shpash', ôvah, atah, noh, las
(կեֆրի :	âch, dû, trê, tsadâ, punts, shu, sût, usht, nü, dôs)
հայ.	: mi, erku-kh, ere-kh, chor-kh, hing, vez, evthn, uth, inn, tasn:

Երկուրս II

(Հին հայերենի, լիկիերենի և փոյուզիերենի մասին)

Եթե «Der Deutsch. Morgenl. Gesellschaft»¹ ամսագրի ընթերցողներն ինձ հարցնելու լինեն, թե ինչու՞ ես հայերենի մասին իմ ուսումնասիրությունների մեջ ուշադրության չեմ արժանացրել հին հայերենը, որը Մորդմանը իր «Entzifferung und Erklärung der armenischen Keilinschriften von Van und Umgegend»² (ZDMG. XXVI, էջ 465 և հաջ.) աշխատության մեջ իր հայտնագործությունն է համարում, ապա ես որպես պատճառաբանություն կուզեմայի մատնանշել, որ այդ լեզուն ես չեմ կարող հին հայերեն համարել: Ես կփորձեմ իմ այդ կարծիքը որոշ չափով հիմնավորել՝ վերծանելով Մորդմանի կողմից սկզբում որպես մնուշ բերված հատվածը: Ըստ 468-469 էջերում բերված բացատրության՝ ada, adae նշանակում է «նա խոսում է»: Այս adae-ն Մորդմանը հավասար է համարում հայ. asê-ի «խոսում է» ձևին և այն հանգեցնում է զենդ. sañh, հայրս. thah ձևերին: Այժմ Գ-ի անցումը th-ի և z-ի անցումը d-ի հայտնաբերված է միայն պարսկերենում, ո՛չ հայերենում, իսկ

asel-ը հանգում է ընդհանրապես az արմատին = սնս. ah: Ուստի և մի այնպիսի ձև, ինչպիսին է adae-ն «խոսում է» = հայ. asê, հավանաբար կարող է պարսկերեն լինել, սակայն ո՛չ հայերեն, առավել ևս՝ հին հայերեն: anaïd (էջ 470) բառի ընթերցվածքը չափազանց վիճելի է, ըստ Մորդմանի կարելի է կարդալ նաև khaldi կամ mazdi! Anaïd բառի սեռականը պետք է որ հնչելիս եղած լինի anaïdinini, այդ թերևս հնարավոր կարող էր լինել որևէ թուրքական լեզվում, միայն թե ոչ հայերենում: Եթե թուրքական այդ ձևի Մորդմանյան բացատրությունը ճիշտ լիներ, ապա, քանի որ թեքական տարրերը օտար ազդեցության ենթակա չեն, այդ լեզուն հենց թաթարաթուրքական լեզու պետք է լիներ, սակայն ոչ հայերեն: minuaganz (էջ 471) բառի gan վերջավորության մեջ պետք է մենք սնս. jan արմատը հայտնաբերեինք, բայց քանի որ հայերենում, համաձայն հնչյունական օրենքների, tsan կամ նման մի ձևով պետք է այն հնչեր, միայն թե ոչ gan (այն հնչում է tsen=ծնվել), և եթե բառի այն բացատրությունը ճիշտ լիներ, ապա այդ լեզուն հենց հայերեն չէ: inida-ն (էջ 472) նույնպես թուրանականով է բացատրվում, և դրանով իսկ այդ լեզուն դարձյալ թուրքական է դառնում: in=հայ. ain=պրս. և համադրությունը նույնպես ես սխալ եմ համարում: alu-zi (էջ 473) պետք է որ «ես» նշանակի և կանգնի agu-zi-ի դիմաց, այն դրվում է =ego համադրությամբ, մինչդեռ արիականը, հայերենն ու պարսկերենը շշական հնչյուններ ունեն, սակայն էջ 525-ում որպես հարակից ձև դրվում է iezi=նհայ. ies, ուստի ես կասկածի տակ եմ դնում էջ 472-ում տրված փորձական թարգմանությունների ճշտությունը և ավելի լավ հիմնավորված չեմ համարում նաև այն բոլորը, ինչը հաջորդում էր: Այսպես, օրինակ, 529 էջում մենք հանդիպում ենք agubi «ես արել եմ», արմատը ag=օջա (սնս. aj, զենդ. âz, հայ. ats), էջ 544-ում՝ vidimani, որպես havadubi-ի ձևափոխություն, ի համեմատություն հայ. bayman=հին ձևը՝ paiman, paiman-ը, սակայն, պարսկական փոխառություն է՝ կազմված pati+mâna կապակցությունից: Այնուհետև, 545 էջում հանդիպում ենք kammanada, kamnae, kamna ձևերը որպես amên, amenain բառերի հին ձևեր, որոնք, սակայն, գալիս են hama=զենդ. hama, նախն. sama ձևերից: Էջ 550՝ kidanu, որպես ked «զետ» (հին հայ. get=vadi!) բառի նախնական ձև՝ dakhai արդի dey-ի համար «տեղ» (ավելի հին ձևը՝ teli< tala, նախն. tara), նույն տեղում՝ aptini «հաղթահարել եմ» ap-ից = զենդ. apa «վերևում» (?) և tini=tnel (ավելի վաղ՝ d-ne-l, արմատը՝ de=hուն. Թε, նախն. dhâ)! Եվ այսպես, մոտիկից ուսումնասիրելու դեպքում կպարզվի, որ Մորդմանի մնացած բոլոր վերծանումները նույնպես խախտու են, և որքան էլ ընդունենք, որ Մորդմանն է այդ տեքստերը հրապարակել և նրանց վերծանման առաջին՝ այդքան դժվարին փորձն արել, սակայն մինչ այժմ ոչնչով չի հիմնավորված, որ այդ վերծանումներից ու թարգմանություններից մի բառի կարելի է հավատալ:

¹ Գերմանաարևելյան ընկերություն:

² Կանի և շրջակայքի բևեռագիր արձանագրությունների վերծանումն ու բացատրությունները:

Ճիշտ այնպես, ինչպես Մորդանսի՝ հին հայերենի նկատմամբ, նույնն է ին վերաբերմունքը նաև Մավելսերգի լիկիերենի նկատմամբ, որը ես չեմ կարող ընդունել որպես իրանական: Եթե լիկ. *samatiti* = *σάματις*, ապա միայն այդ լիկ. *s-*ի պատճառով՝ իրան. *h*, այդ լեզուն իրանական չէ և նրանից շատ ավելի հեռու է կանգնած, քան հայերենը: *kvisintota* (էջ 18) պետք է որ = *quingenti*, *kbi*=*qui* (հարաբերական դերանուն) !:

Այդ դեպքում լիկիերենը անգամ արիական չէ, և նվազագույն դեպքում այն կարելի կլինի իրանական համարել: Բավական է փորձ կատարել հայերենի հետ և, ելնելով իրանականից, նրա օգնությամբ բացատրել հետևյալ հայերեն նախադասությունը՝ *I skzbanê êr bann ev bann êr ar Astuats ev Astuats êr bann: Na êr i skzbanê ar Astuats. Amenain inch novav ejev ev aran3 nora ejev ev och inch or inch ejev.* Եվ բող ինձ ստուգարանորեն բացատրեն բոլոր բառերը, եթե ես ասեմ, որ սա Հովհաննու ավետարանի սկիզբն է՝ Սկզբում եղել է բանն և այլն:

Որպես վերջաբան մի խոսք փոյուգիերենի մասին, Փոքր Ասիայի այն կորսված լեզուներից մեկի, որի տեղը որոշելը ամենից շատ կարելի էր հուսալ: Ըստ հների տված տեղեկությունների՝ փոյուգիացիներին կարելի էր հարաբերակցել հայերի հետ և հավանաբար իրավացիորեն: Այդ մասին եմ վկայում փոյուգիական լուսանցքագրությունները՝ *ἀζήν*, *ἀζένα* «մորուք» = *a + zen* = հայ. *tsnôt* = *ts-en-ôt*, *ὄρον* «վերևում» = հայ. *i veroy*: «Շուն» ցույց տվող փոյուգիերեն բառը նմանվում է հունարենի *κύνον* բառին, ուստի և այն կարող էր *kun* հնչած լինել = հայ. *skund* «շնիկ» փոյուգիերենում *s-*ն սղվել է, ինչպես հայերենի *skesur-*ի կողքին օգտագործվող *kesur* բառում, եթե միայն այդ բառը *çvan-*ի հետ ազգակից չէր, ինչպես մենք այդ գտնում ենք *օսեթ*. *khusy* = շուն բառի կապակցությամբ, որը *çvan* բառի հետ ոչ մի ընդհանրություն չունի: «Կրակ»-ի համար տրվող փոյուգիական բառը նմանվում է հունարեն *πῦρ* բառին, կարող էր ուրեմն *pur* հնչել = հայ. *hur* < *pur*: Բացի այդ, փոյուգիերեն *a-*ն ճեղքվել է *a-*ի և *e-*ի, *r-*ն՝ *r-*ի և *l-*ի, սակայն նախնական հետնալեզվայիններից շշական հնչյունների զարգացման հարցում այն համընկնում է արիա-սլավոնա-լիտվական լեզուներին, իսկ *s>h* անցման հարցում՝ հայ-իրանական լեզուներին, եթե *ἄρμα*՝ *ν* «պատերազմ» = հայրս. *hamara*, իսկ *ἄδᾶμνος* «տնկի» բառերը դը Լազարոյը կամ Ֆր. Մյուլերի կողմից ճիշտ են մեկնաբանված (Fick, *Spracheinheit*, էջ 416):

Եթե փոյուգ. *κικλην*-ը պատկանում էր հուն. *κύκλος* -ին, արիերեն *cakra*, ապա այն կարելի էր համեմատել հայ. *hing* = *quinque*, արիերեն *pafrican*: Մինչ այս մեկնաբանված մնացած լուսանցքագրությունները (նաև՝ *γλοσδός* «տսկի») ոչինչ չեն ապացուցում: Փոյուգիական արձանագրությունների կապակցությամբ ահա թե բանն ինչունն էր: Եթե *Գոշեն* (*Verhandlungen der*

Meissner philologenversammlung, էջ 82 և հաջ.) իրավացի է, ապա նոր փոյուգիերենի արձանագրությունների լեզուն միայն հայկական մի բարբառ է, իսկ փոյուգացիներն ու հայերը, ըստ երևույթին, պետք է որ մեկ ազգ եղած լինեին: Այս երկուսի նման սերտ փոխառնչությունը չէր կարելի սպասել: Այս բանը մինչև օրս չեն հաստատել նաև հին փոյուգիական արձանագրությունները: Քանի որ, եթե «*Midai Gavartaei vanaktei edaes*» նշանակում է «նա այդ դրեց արքային՝ Միդաս Գավարդիականին», ապա այս, այնուամենայնիվ, ավելի շուտ հունարեն էր հնչում, քան հայերեն, և եթե *vanakt-*ը փոխառություն է, ապա այն, լեզվի բնույթի առումով, ոչինչ չի ապացուցում: Իրերի այս դրությամբ փոյուգիերենի բնույթի մասին որևէ որոշակի բան չի կարելի ասել: Սակայն կարելի է հնարավոր համարել, որ այն հայերենի հետ ավելի մոտ ազգակից էր: Գուցե այդ լեզուն Փոքր Ասիական լեզուների հետ մի սեփական լեզվաընտանիք էր կազմում, որը, համաձայն այն բանի, ինչը մենք պարզել ենք հայերենի կապակցությամբ, պետք է որ դրվի իրանական և սլավոնալիտվական լեզուների միջև:

Լայացիզ

Հ. Հյուշման

**ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՏԱՌԱԴԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՄԱԽԻՆ**

(Մեկնաբանություն)

Ժամանակակից հայերենի արտասանությունը

Եթե մենք ուզում ենք հետազոտել, թե ինչպես էր հին հայերենը դասական դարաշրջանում (V-VI դդ.) արտասանվում, մեր առաջնահերթ խնդիրը պետք է լինի պարզել ժամանակակից հայերենի արտասանությունը: Ըստ որում կուզենայինք մեր ուսումնասիրության առարկան դարձնել Կոստանդնուպոլսի բարբառը, քանի որ նրա մասին մենք մեր տրամադրության տակ ամենաշատ տեղեկություններն ունենք, սակայն քանի որ այդ տեղեկությունները միասին վերցրած ճշգրիտ չեն, մենք անմիջապես կդիմենք այն բարբառին, որի արտասանությունն մեզ հայտնի է գիտական մեկնաբանությամբ, այն է՝ Թիֆլիսի բարբառին: Լեպսիուսն իր «Standart Alphabet»-ում (2-րդ հրատ., 1863 թ., էջ 132) ըստ Թիֆլիսի արտասանության, հայերենի այբուբենին հետևյալ տառադարձությունն է տալիս:

ձայնավորներ	բաղաձայններ	Հ հ
ը օ	կ k գ g ք k'	խ x, ղ զ
ա a	ճ ճ, չ չ, ջ ջ	շ շ փ փ, յ յ
ե e, է է, ո o, օ օ	ծ ծ փ փ, գ գ	ն n, ս s, զ z, ր r, ռ r, լ l
յ, ի i, լ l, մ m	տ t, դ d, ք k'	մ m, լ v, վ w
	պ p, բ b, փ փ	

Այս տառադարձության դեպքում միայն մի բան է աչքի զարնում: Արևմտահայերենում (Կոստանդնուպոլսի և այլն) շշականների երկու շարքն իրար կողքի հետևյալ ձևով է ընթանում՝

ձայնեղներ	խուլեր	շնչեղներ
ջ ճ	ճ յ	չ ճ
ձ ծ	ծ փ	ց փ

Եվ քանի որ, ինչպես հայտնի է, արևելահայերենում խուլ և ձայնեղ պայթականների հարաբերությունը ճիշտ հակառակն է, այդ մեզ իրավունք է վերապահում սպասելու, որ շշական-սուլական շարքը այստեղ հետևյալ պատկերն է ունենալու՝

ձայնեղներ	խուլեր	շնչեղներ
ճ ճ	ջ յ	չ ճ
ծ ծ	ծ փ	ց փ

Եվ, իսկապես, Դուլաուրիերը, ինչպես նաև Պատկանեանը (Journal asiatique, Série VI, Tome 16, էջ 146), վկայում են, որ արևելահայերենի զ-ն ֆրանս. dj, d, i, dz (j): Պետերմանը ևս իր Brevis linquae Armeniacae grammatica և այլն արևելյան զ-ին վերագրում է d, i, dz-ի հնչյունական r, այնպես որ մեզ իրավունք կվերապահվի, որպեսզի Լեպսիուսի քմայինների շարքը հետևյալ կերպ ներկայացնենք՝

ճ ճ,	ջ յ	չ ճ
------	-----	-----

Լեպսիուսի սխալը նրանով է բացատրվում, որ զ-ն, արդարև, որոշ դեպքերում, այդ մասին մենք ներքևում կխոսենք, անշուշտ, որպես չ է արտասանվում: Իր տառադարձությանը Լեպսիուսը կցում է հետևյալ ծանոթությունները, որ և այստեղ մենք բերում ենք իր իսկ խոսքերով.

«We find the letters կ, տ, պ, կ, t, p distinctly pronounced without any aspiration as real dry tenues like those of the Hungarian, of several German dialects, of the Sanskrit and other languages; գ, դ, բ, g, d, b are our common mediae and ք, փ, կ, տ, p the true aspirates, pronounced as the so called tenues of northern Germany, France, England and others, with a sensible breathing from the lungs. The pronunciation of the two palatal classes is more difficult. There is no aspiration heard in ջ [soll heissen չ] and ց, although they correspond evidently to the aspirates of the other classes. Only the stronger closing of the organ is the same as in aspirates, whilst, in opening the organ, the aspiration turns into a slight breathing շ or z, as if one would pronounce ttz and ttz. The ճ and յ are pronounced nearly as in church and in join, but ձ փ and ծ փ are hardly discernible, the one being pronounced as dz, the other as tz. The langue takes in both palatal classe its full palatal position, in the first more behind, near the soft palate, in the second more forward above the teeth»:

դ-ի կապակցությամբ, որն այժմ արևելքում և արևմուտքում արաբերեն ց-ի, հուն. γ-ի նման է արտասանվում, Լեպսիուսը՝ համաձայն հայերենի քերականությունների ու տեքստերի, ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ այն նախկինում իր սովորական արժեքից բացի, որպես γ, այն է՝ «soft and more palatal (փափուկ և ավելի քմային), 1-ից բոլորովին տարբեր «trouger and more guttural (ավելի կոշտ և ավելի հետնալեզվային), այժմ մեր սովորական

«l»-ի նման է արտասանվում: Որպես քմային l, դ-ն ծառայում է որպես հույների և այլ ժողովուրդների l-ի տառադարձության միջոց և գրվում է դ՝ կամ i, մի նշան, որը դ՝իւն (γιւտ) են անվանում (ըստ դ= γat և l= liut); p-ն, ըստ Լեպսիուսի, մեր սովորական p-ն է, մինչդեռ n-ն մի ուժեղ կրկնակի r է, վ-ն շրթնատամային v-ն է, ոչ անգլերենի w, որին միջձայնավորային v-ն է մոտ կանգնած:

Ոչ թե Լեպսիուսի տվյալներին չվստահելով, այլ ուղղակի գործի շահերից ելնելով, ինձ ցանկալի թվաց, որպեսզի հայերենի արտասանության վերաբերյալ այս ուսումնասիրությունը մեկ անգամ ևս մեկ ուրիշի կողմից կատարվի, և ինձ հաջողվեց, հուրախություն ինձ, իմ բարեկամ՝ Եմայի պրոֆ. Միվերսին այս հարցով հետաքրքրել և նրան դրդել մի քանի հայերի օգնությամբ, որոնք այժմ Եմայում են ուսանում¹, հայերենի արտասանությունը ճշգրիտ ձևով ներկայացնելու: Նրա բարյացակամությանն են պարտական հետևյալ տեղեկությունների համար, Բ. Բ. Բիֆլիսի բարբառի կապակցությամբ:

1. Պարզ պայթական հնչյուններ

կ	k	գ	g	ք	kh
տ	t	դ	d	թ	th
պ	p	բ	b	փ	ph

g, d, b և kh, th, ph հնչյուններն իրենց արտասանությամբ չեն տարբերվում հյուսիսգերմանական ձայնեղ և շնչեղ խուլ պայթականներից, միայն շնչեղ հնչյունների շունչը հայերենում ավելի ուժեղ է, քան գերմաներենում:

Խուլ պայթականները եվրոպական սովորական համապատասխան հնչյուններից նրանով են տարբերվում, որ նրանք իսկապես շնչեղների սղմամբ են արտասանվում²: Ընչափողը բարձրանում է պայթման համար, յուրաքանչյուր անգամ բավական նկատելի չափով՝ 1/2-3/4 դյույմ:

Հնչողական էֆեկտն ըստ այդմ էականորեն այլ է, քան եվրոպական (սլավոնական, ռոմանական) ոչ շնչեղ խուլ պայթականների մոտ (որոնք ոչ մի դեպքում կոկորդի սեղմամբ չեն կազմվում, այսինքն՝ պայթյունը ինքը կարծես մի տեսակ քերոզ աղմուկի է նման, որը մեծ մասամբ ավելի որոշակիորեն է

¹ Գևորգ Աբուլյանը՝ Թիֆլիսից, Պավել Դելվիյանը՝ Կոստանդնուպոլսից, Հովսեփ Մադաթյանը Փոքր Ասիայից, Սարգիս Սոլիկյանը՝ Խարբերդից, Կանտուն Սոփեոսը՝ Ծոփքից:

² Հմմտ. Lepsius, Standart Alphabet, էջ 140 «The true tenuis is pronounced with its full explosion, but with closing the glottis and in consequence without any pectoral aspiration (h), after which follows the new opening of the glottis, in order to utter the appertaining vowel.

անջատվում հաջորդող ձայնավորից, քան եվրոպականում¹, այնպես որ հաճախ թվում է, թե բաղաձայնի և ձայնավորների միջև մի իսկական դադար է լսվում²): Սովորական խոսելիս ևս, երբ արտասանելիս քիչ ուժ գործածելու պատճառով այս տարբերանիչը բացակայում է, հնչողությունը մնում է սակայն առանձնահատուկ հնչողություն եվրոպական հնչյուններից տարբեր: Ինչ վերաբերում է արտաբերման տեղին, ապա այդ երեք հետևյալեզվայինները կազմվում են քիմքի առաջին աղեղում, ինչպես գերմաներենը k, g-ն a, o, u-ից առաջ, սակայն e, i-ից առաջ արտասանության տեղը դրվում է դեպի չոր քիմքը: Առանձնայինները Բրյուքի Է՝, Ժ՝-են, այսինքն՝ մաքուր միջնատամային, լեզվի ծայրերը գտնվում են երկու խիստ մոտեցած ատամնաշարերի ճեղքում, ինչպես անգլերենի th-ի ժամանակ: Երբնայինները արտաբերման տեղի տեսանկյունից չեն տարբերվում գերմաներենի հնչյուններից:

2. Եփականներ

Խուլ շփական խ-ն, որը մենք կնշենք x³ տառով, շվեյցարական կոկորդի հետին մասում կազմվող ch-ն է և միշտ ուժեղ է արտասանվում: Նրան լրիվ համապատասխանողը հնչեղ դ= γ-ն է, որը մենք լսում ենք Հյուսիսային Գերմանիայում, օր.՝ Tage-ում և հաճախակի նաև որպես փոխարինող թրթռուն քմալեզվակային r-ում: Կարևորն այն է, որ այս հնչյունի արտաբերման ժամանակ ձայնի ինտենսիվությունը շփականության աղմուկի համեմատությամբ, որն առաջանում է քիմքի հետին կամարի մոտ, նշանակալից է:

Խուլ բաղաձայններից առաջ դ-ն արտասանվում է խ-ի նման, միայն փոքր-ինչ ավելի թեթև ուժգնությամբ՝ յաղթեմ= haxthem, որը= voxph:

Առանձնային շփականներից, u=s, q=z և z=š, θ=ž, առաջինները, ըստ իրենց արտաբերման, սովորական միջնալեզվային հնչյուններն են: Երբնատամային են՝ վ, ւ, ու=v, որոնք, որպես կանոն, հնչեղ են:

3. Ռնգայիններ

Ն=n-ն ատամնահիմքային է, գ, կ, ք-ից առաջ արտասանվում է որպես հետնալեզվային ռնգային հնչյուն. մ= m-ն սովորական m-ն է:

4. Նայական հնչյուններ

լ= l-ն մեր l-ն է, սովորաբար փոքր-ինչ ավելի խուլ, սակայն ոչ այնքան, ինչպես ռուսերենի և լեհերենի լ-ն:

ր=r, իսկ ո=r միմյանցից տարբերվում են առաջին հերթին իբրև խուլ և

¹ Հմմտ. օտեթերենի մասին տրվող դիտողությունները:

² Այդ խուլ պայթականները կան, բացի ներքևում նշված կովկասյան լեզուներից, նաև հաբեշերենում (Geez), ամհարերենում և գալլա լեզվում: St u Lepsius, St. Alph. էջ 189, 191, 205:

³ Ըստ Գ. Ռասկի «Commentatio de pleno systemate decem sibilantium in linguis montanis et methode Ibericam et Armenicam linguam literis Europaeis exprimendi, Hafniae, 1832».

ձայնեղ հնչյուններ, ըստ որում առաջինը գրեթե բոլորովին, իսկ երկրորդը՝ ընդհակառակը՝ շատ ուժեղ թրթռում: Երկուսն էլ հավանաբար ատամնալեզվային են, ր-ն կազմվում է փոքր-ինչ առաջ շարժվելով, հատկապես e և i հնչյուններից հետո (առանձնապես իսկական արտաբերման մեջ շատ ցայտուն), նա, կարծես, մի տեսակ խառնուրդն է ատամնալեզվային շփականության, որը երբեմն գրեթե բարձրանում է մինչև փափուկ շ -ի կամ շ-ի լիարժեք աստիճանի: Ռ-ի դեպքում այդ աղմուկը չի լսվում:

5. Հ=հ

Հ-ն մեր սովորական գերմանական հ-ն է, այսինքն՝ շնչափողային շփական. այն լսվում է նաև բառավերջում բաղաձայններից հետո՝ աշխարհ=աճ-xarh, խոնարհ= xonarh¹: Նույն ձևով արտասանվում է նաև բառակզբի j-ն, հին y-ն:

6. Աֆրիկատներ

Նկարագրելու և արտասանելու տեսանկյունից ամենադժվարը աֆրիկատների երկու շարքն են: Առաջին հերթին պետք է վարժվել այն բանին, որ արտաբերելիս երկու տարրը միմյանց հետ հնարավորինս սերտ կապված են, առանձնապես չի կարելի դրանք, ինչպես այդ գերմաներենում հաճախ պատահում է, վանկերի բաժանել: Բոլոր վեց հնչյուններն արտաբերելիս լեզվի ծայրը ուժգնորեն սեղմվում է երկու ատամնաշարերին (միայն տ՛ շարքում նաև ավելուներին): Ընդհանուր առումով, սակայն ջ dʒ=d+ʒ, ձ dz=d+z, չ=tʃ և ց=ts հնչյունները միացումներ են ք-ի հետ, այսինքն՝ բաց կոկորդով արտասանվող th և ձայնեղ շ Ֆ և u s; պարզ tհ-ի հ հնչյունն այստեղ, բնականաբար, կորչում է², որովհետև լեզուն ատամներից չի բարձրանում, ինչպես այդ տեղի է ունենում հաջորդող ձայնավորների հետ միացման դեպքում, այլ միայն շ - կամ s- ճեղքը կազմելով, փոքր-ինչ հետ է քաշվում, որի պատճառով օդի հոսանքը պայթյունից անմիջապես հետո ուղղակի Ֆ կամ s պետք է փոխակերպվի: Դրա փոխարեն, սակայն s-ից հետո երբեմն դեռ հ է լսվում, այդ տեղի է ունենում այնպիսի դեպքերում, ինչպես՝ kametsav, որի ts-ն արտասանվում է tzh, մոտավորապես ինչպես Nutzholz-ում:

Ց-ն ընդհանրապես կարելի է նույնացնել գերմաներենի հյուսիսի մեր ուժեղ z-ի հետ: Ճ-ն տ՛ և ծ-ն ts նույնպես կազմվում են շնչափողի սեղմամբ:

¹ Բարբառներում այս ըհ=րհ արտասանվում է նաև չ սակայն ոչ ինչպես շ=չ, որը հետին շարքում է կազմվում, չ=րհ ավելի փափուկ է հնչում, այսպիսով՝ աշխարհ= աճxաճ, խոնարհ= xonaճ:

² հ-ն, սակայն, պահպանվում է քս-ի մեջ, օր.՝ արժաքսիթոսիս= artsathsiuthioun, t-ի և s-ի միջև մի հ-ով:

Երկրորդ էլեմենտը՝ շչականը, դրա հետևանքով շատ կարճ է արտասանվում, ավելի կարճ, քան որևէ խուլ արտասանվող ջ և ձ (որոնց արտաբերման ժամանակ կոկորդը փակ չէ¹):

Բոլոր հնչեղները, ց, ձ, dz, dʒ, b, ինչպես նաև j, z, ʒ, v կարող են նաև խուլ, որպես խուլ հնչյուններ (Lenes) արտասանվել, որը հիմնականում տեղի է ունենում բառավերջում:

Թիֆլիսի արտասանությունը. Կոստանդնուպոլսի արտասանությունը նրանից նախապես տարբերվում է միայն ձայնեղների և խուլերի միմյանց փոխարինմամբ, այնպես, որ կոստանդնուպոլսեցիները կ, տ, պ, ծ, ճ խուլերն արտասանում են ց, ձ, b, dz, j-ի փոխարեն, մինչդեռ գ, դ, բ, ձ, ջ ձայնեղները հնչում են նախ որպես խուլեր, որպեսզի հետո այսօրվա արտասանության մեջ, առանձնապես կրթվածների մոտ, շփականներ դառնան, որի հետևանքով բուն ձայնեղները այժմ միայն որպես բացառություն են հանդիպում²: Սակայն նաև Թիֆլիսի բարբառում ձայնեղները r-ից հետո, ինչպես նաև բառավերջում (հազվադեպ ո-ից հետո) որպես խուլեր են արտասանվում, մինչդեռ միջին հայերենը Թիֆլիսի ձայնեղների փոխարեն է օգտագործում, առանց կոկորդային հպման, որոնց հենց բաղաձայններից հետո փոքր-ինչ դժվար է տարբերակել համապատասխան շփականներից:

Այսպես, օր.՝

	Թիֆլիս	Հայաստան	Կոստանդնուպոլիս
աղազ	ayag	ayak	ayakh
աղանդ	ayanth	ay ant	ayanth
այդ	aith	ait	aith
այդմ	aidəm	aitem	aithəm
անարզ	anarkh	anarkh	anarkh
անարզեմ	anarkhem	anarkye m	anarkhem
անդունդը	andunthkh	antunthkh	anthunthkh
արդար	arthar	artar	arthar

¹ Մտորև մենք պարզության համար կկիրառենք պարզության նպատակով տրված dʒ, tʃ, ʒ նշանների փոխարեն j c ց տառանշանները, որովհետև այն լեզուներում, որոնց աշխարհագրական դիրքի բերումով պատկանում են նաև հայերենը, իրանական ու հնդկերենը, վերջին նշանները ամենուր ընդունված են: Հետագայում, թերևս երբևէ, հնդիրանական տառադարձության ռեֆորմի ժամանակ, հնարավոր կլինի dz, ts, ʒ նշանների փոխարեն օգտագործել j, c, ց (կամ ch) և dʒ, tʃ, ʒ-ի փոխարեն j, ց, ք (կամ ց):

² Համապատասխանաբար է վարվում նաև Riggs-ը իր «Grammar of the modern Armenian language as spoken in Constantinople und Asia Minor», էջ 6: Նա միմյանցից չի տարբերակում խուլ պայթյուններն ու շնչեղները:

արամբբ	aramphkh	aramphkh	aramphkh
գեդեցիկ	geyetsik	kyeyetsig	kheyetsig
գետ	get	kyet	khed
երբ	yerph	yerph	yerph
երարծ	yebarts	yeparts	yepharts
ժառանգ	žarang	žarankh	žarankh
կարգ	karkh	gark	garkh
հինգ	hing	hing	hing
առաջք	ařačkh	ařačkh	ařačkh
դարծ	dartš	tartš	thartš
ինձ	indz	indz	indz
կնոջ	knoç	geņoç	gnoç
ողբ	voxp	voxp	voxp
աստղ	astēł	astx	astx
	astēx		

Թե արդյոք արևելահայերենի¹, թե՞ արևմտահայերենի արտասանությունն է ավելի հին, այդ հարցի շուրջ հայերը վիճել են և դեռ շարունակում են վիճել: Ելնելով այն բանից, ինչ մենք ստորև կշարադրենք, հաստատ կարող ենք եզրակացնել, որ Թիֆլիսի արտասանությունն ավելի հին է. մեզ համար միայն հարցական է մնում, թե այն արդյոք 5-րդ դարի արտասանությունից էապես տարբերվում է, թե՞ ոչ: Մենք անցնում ենք քննարկման:

II Հին հայերենի արտասանությունը

Այս որոշելու համար մենք ունենք երեք օժանդակ միջոց. 1) Դիոնիսոս Թրակացու հայկական մշակումը, որը բոլոր դեպքերում հին է, եթե այն անգամ, ինչպես համարվում է, մինչև V դ. չի հասնում; 2) հայկական այբուբենը; 3) տառադարձությունները՝ հայերենից և հայերենի:

1) Դիոնիսոս Թրակացի¹

Դիոնիսոս Թրակացու հայերեն մշակողը ստրկորեն հարազատ է մնացել բնագրին և ձգտել է հայերենի քերականությունը հնարավորին չափ

հունականացնել, որի պատճառով մենք նրա տվյալները միայն զգուշորեն կօգտագործենք:

Այն տարրերակում է հայկական 6 ձայնավոր՝ ա, ե, է, ը, ի, ո, ւ, ով, որոնցից է-ն և ով-ը երկար են, ե, ո, ւ-ն՝ կարճ, իսկ ա, ը, ի-ն՝ երկար և կարճ: Նրանց նա հավելում է որպես իսկական երկբարբառներ՝ աւ, եւ, ու, աի, որ և որպես ոչ իսկական՝ էւ, ըւ, իւ: Ըստ այդմ՝ մենք ստանում ենք պարզ ձայնավորներ՝

ă, ě, é, ě, ĭ, ô, ū, ô հունարեն ā, ē, ĩ, -ī, ō, ū, ω ձայնավորներին համապատասխան, երկբարբառներ՝

au, eu, ou, ai, oi հուն. av, ev, ov, ai, oi և ēu, eu, iu (ղս, սի)

Բաղաձայնները նա բաժանում է խմբերի՝

10 *ψιλά* (լերկ, նուրբ) ա, կ, տ, գ, ն, ծ, շ, մ, ւ, ր = p k t հուն. κ, π, τ
9 *δασέα* (թավ, թանձր, ստվար)՝
փ, ք, խ, ք, ւ, ց, ջ, ջ, n = ph, kh, x, th հուն. θ, φ, χ

7 *μέσα* (միջակ) - բ, գ, դ, ձ, ղ, ճ, ժ = հուն. β, γ, δ:
b, g, d

Կամ մեկ այլ սկզբունքով՝

9 *ἄφωνα* (անձայններ) - բ, գ, դ, ա, կ, տ, ք, փ, ք =
b, g, d, p, k, t, th, ph, kh
հուն. β, γ, δ, π, κ, τ, θ, φ, χ

8 *ἡμίφωνα* (կիսաձայններ) - գ, ց, ն, ծ, շ, մ, ւ, ր =
z, ts, n, ts, ś, m, s, r
հուն. ζ, ς, ψ, λ, μ, ν, ρ, σ

9 *διπλα* (կրկնակներ) - գ, ւ, խ, շ, ջ, ջ, ւ, ց =
z, l, x, ś, c, j, r, ts
հուն. ζ, ξ, ψ,

4 *ύρα* (նայեր) - դ, մ, ն, ր = հուն. λ, μ, ν, ρ
γ, m, n, r

Մեր հեղինակի մնացած տվյալները, ըստ հունարեն շարունի, այնքան հարազատ են կատարված և միաժամանակ այնքան խեղաթյուրված, որ ես հրաժարվում եմ նրանք բերել: Նրանք միայն ապացուցում են, որ նա ոչ մի

¹ Հունարեն-հայերեն, հրատարակված է Mémoires de la société royale des antiquaires de France, T. VI, 1824.

պատկերացում չունի հայերենի հնչյունների նշանակության և նրանց միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունների մասին: Անգամ առաջին հայացքից բերված նյութի մեջ կարելի է հայտնաբերել շատ անտուրյուններ: Սակայն եթե այն, ինչ նա տալիս է հայերենի հնչյունների մասին, որոնք կան նաև հունարենում, կիրառելի է, ապա մենք մեզ իրավունք ենք վերապահում հունարենի և հայերենի հնչյունների համեմատություններից գոնե հետևություններ կատարել:

Հուն. β, γ, δ, π, κ, τ, φ, χ, θ, ζ, λ, μ, ν, ρ
Հայ. բ, գ, դ, պ, կ, տ, փ, ք, թ, զ, ղ, մ, ն, ռ
 Բ, Գ, Ժ, Ք, Կ, Է, ՔԻ, ԿԻ, Թ, Զ, Գ, Ղ, Մ, Ն, Ր

Եվ գոնե հետևություն կատարել, որ ժամանակին պ, կ, տ խուլերը, բ, գ, դ ձայնեղները և համապատասխանաբար փ, ք, թ շնչեղներն են եղել: Քանի որ, եթե անգամ այն ժամանակ հուն. φ, χ, θ -ն արդեն վաղուց շփականներ էին դարձել, ապա նա կարող էր հայերենում նրանց, եթե նա այդ շփականները չուներ, հենց միայն համապատասխան շնչեղները հակադրել: Նաև պետք է, որ հուն. χ և հայ. խ=x, չնայած երկուսն էլ շփական են, անշուշտ, տարբեր եղած պիտի լինեն, քանի որ նրանք իրար կողքի չեն կարող դրվել: Հուն. ζ հնչյունը մեր հեղինակի ժամանակ, անշուշտ, z-ի արժեք է ունեցել և այդ իսկ պատճառով նա հայ. q-ի (փոխանակ $\delta = dz$) իսկական համարժեքն է: Գիշտ է նաև ձայնավորների նրա բնորոշումը՝ ա, ե, է, ի, ո, ւ, ով, որպես \tilde{a} , \tilde{e} , $\tilde{\epsilon}$, \tilde{i} , \tilde{o} , \tilde{u} , միայն ու-ն (= \tilde{u}), ելնելով միայն նրանց՝ հայերենի ու հունարենի (ou) գրելաձևից, չպետք է դրանք երկբարբառների շարքին դասել:

Եթե պայթական հնչյունները, որոնց արտասանության հարցում բարբառները միմյանցից հեռանում են, այն ժամանակ էլ այնպես էին արտասանվում, ինչպես այսօր Թիֆլիսում, ապա հավանական է, որ մնացած հնչյունները, որոնց արտասանության հարցում բարբառները համապատասխանում են միմյանց, այլ ձևով են արտասանվելիս եղել:

2. Հայերենի այբուբենը

Ըստ հայ մատենագիրների վկայությունների՝ հայերենի այբուբենը ստեղծվել է V դ. սկզբին՝ սուրբ Մեսրոպ Մաշտոցի կողմից: Նույն այդ մատենագիրները բավական պարզորոշ նշում են այնուհետև, որ այդ հայտնագործությունը միայն Մեսրոպի գործը չի եղել: Ըստ նրանց տված տեղեկությունների, որոնք կարելի է գտնել Ինճիբեանի «Hnaxosutium», III, էջ

70-77 և Լանգլոսի «Collection des historiens de l' Arménie», II, էջ 5 և հաջ. էջերում համեմատած և քննարկված, պետք է որ Մեսրոպը գտած լինի մի հին այբուբեն, որը եղել է ասորի Դանիելի տրամադրության տակ և նրա անունով էլ դանիելյան է կոչվում: Այդ այբուբենը նա բավական երկար ժամանակ օգտագործել էր անփոփոխ, սակայն այնուհետև համոզվել է նրա թերի լինելու մեջ և երկար ջանքերից և գիտնականների հետ խորհրդակցելուց հետո, ի վերջո, Հռոփանոս անունով մի ճգնափորի հետ, որին համարում էին հունական վայելչագրության քաջ գիտակ, կազմում է հայերենի լիարժեք այբուբենը: Այսպիսով, այժմ Մեսրոպի արժանիքն է եղել այն վաղեմի «դանիելյան» այբուբենի կատարելագործելը, ազգային գրի Հայաստան մտցնելը և վաղուցվանից մինչ այդ կիրառական պահպանված, ասորական և հունական գրի դուրս մղելը: Հայագետները, հատկապես Էմինը և Լանգլուան, փորձել են նաև պարզել, թե որոնք են դանիելյան այբուբենի տառանշանները և որոնք Մեսրոպի կողմից գտածները: Պատմագիր Վարդանի տվյալներն այն են, որ իբր դանիելյան տառերի թիվը 22 է, իսկ նրանց վրա հավելվածներինը՝ 14: Գիշտ է՝ այդ տվյալների դեմ բերվում են ուրիշները՝ Գրիգոր Մագիստրոսը (Journal asiatique, Série VI, T. 16, էջ 149) դանիելյան այբուբենի տառերի քանակը համարում է 24, իսկ Ստեփանոս Ասողիկը՝ 29 տառ: Այնուհետև այդ քանակը թերևս սխալմունքով դարձնում են 24 տառ: 22-ի դիմացը՝ **խ**-ի փոխարեն **խք**, իսկ թե ինչո՞ւ է Ասողիկը 29 տառ տարբերակում, պարզ չէ, երբ Մովսես Խորենացու մոտ (ըստ ընթերցման մի ձևի) վկայակոչվում է, որ Մեսրոպը, երբ այբուբենի ստեղծման համար գտավ անհրաժեշտ լուսաբանումը, այդ նա արեց 7 ձայնավոր տեսնելու ոգով: Հայերեն տառերի քանակը 36-ն է, 36-7= 29: Այս է Վարդանի ամենահավաստի տեղեկությունը: Որո՞նք են, սակայն, 22 հին և 14 նոր տառերը: Այն պատասխանը, որը տալիս է Էմինը, Պատկանյանը իրավացիորեն մերժում է (Journal asiatique, a. o. O.), անգամ այն, թե ինչպես է նա տալիս այդ տառերի բնորոշումը, թերի է: Այս երկուսից տարբերվում է Լանգլոսը, որը հետևում է «Վարդանագիրք»-ի տվյալներին, ըստ որի 17 տառեր վերցված են ասորական այբուբենից, իսկ 19-ը՝ աստվածային ներշնչմամբ պետք է որ գտնված եղած լինեն Մեսրոպի կողմից: Ըստ այդ աշխատության, այդ 19 տառերը հետևյալներն են՝ ա, ե, ո, ի, լ, ը, ւ, բ, գ, ժ, ծ, ձ, չ, ջ, վ, ց, շ, ճ, յ, փ, իսկ ասորական այբուբենից փոխառնվածները, ըստ այդմ, պետք է լինեն դ, զ, է, թ, Լ խ, կ, դ, հ, մ, ն, պ, ռ, ս, տ, ռ, ք տառերը: Սակայն այս շարադրանքը, ըստ իս, բոլորովին անհիմն է և հերքման կարիք չունի: Այդուհանդերձ, ես կարծում եմ, հարցը ուղղակի այն ձևով կկարողանամ լուծել, որ հայերեն այբուբենը այն հերթականությամբ, որ բերված է, համեմատենք հունարենի հետ:

3. Տառադարձություններ

Այս նույն կարծիքին է մեզ հանգեցնում նաև տառադարձությունը՝ հայերենից հունարեն և հունարենից՝ հայերեն: Հունական անունների հայերեն տառադարձությունը կատարում է Ֆր. Մյուլլերը, Wiener Sitzungsberichte, phil. hist. Cl. B. 38 (1861), էջ 572 և հաջ., համաձայն այս տառադարձման՝ մենք համարժեք պետք է համարենք հայերեն ու հունարեն հետևյալ հնչյունները՝

ա=α, ի=ι, ո=ο, ե=ε, ով (կամ օ) = ω,
 կ=κ, տ=τ, պ=π, զ=ζ, դ=δ, ք=ξ,
 ք=χ, ք=ϑ, փ=φ, մ=μ, ն=ν, գ=γ,
 ս=σ, հ=շնչել շփականի, ր=ρ, ղ=λ,

և, այսպիսով, հանգում են նույն արդյունքին, ինչին մենք հանգեցինք այբուբենի ուսումնասիրության ժամանակ:

Պարսկական անունների հայկական տառադարձությանը մենք հանդիպում ենք բոլոր հայ պատմիչների մոտ՝ Արամազդ, ավելի ուշ՝ Ռոմիզդ=հայրս. A(h)uramazdâ, պիլ. Ohrmazd, հուն. 'Ορμιζδᾶς, Անահիտ= զենդ. Anâhita, Վշտասպ=հայրս. Vištâspa, Խուժաստան= հայրս. (h)uvaža, Աժդահակ= զենդ. azidahâka, և այլն:

Եթե ավելացնենք նաև պարսկերենից հայերեն ներխուժած բազմաթիվ փոխառությունները, որոնք մենք հիշատակել ենք Kuhn's «Zeitschrift Bd. XXIII»-ում, ապա այս բոլորից կհետևի, որ մենք ոչ թե ստիպված ենք եղել, այլ ավելի շուտ բոլոր փաստերից ելնելով ենք իրավունք ստույգել ենթադրելու, որ հին հայերենը արտասանվել է նույն ձևով, ինչպես այսօրվա արևելահայերենը: Այս դրույթը ապացուցված չէ հնչյունների համար, որոնք, ի տարբերություն արաբերենի, պարսկերենի և հունարենի, հատուկ են հայերենին: Հայերենին հարևան լեզուներից այդ հնչյուններն ընդհանրապես հատուկ են միայն վրացերենին, քանի որ նա հայերենի հետ միևնույն հնչյունական համակարգն ունի, ինչպես այդ կարելի է սպասել Լեպսիուսի «Standart Alphabet»-ից (2-րդ հ., էջ 251), և ինչպես այդ հավաստիացնում է նաև Թիֆլիսից հայ Գևորգ Աբուլյանը, որը վրացերեն և հայերեն է խոսում, ինչպես իր մայրենի լեզվով (վրացերենը հայերենից տարբերվում է միայն կոկորդային մի հնչյունով՝ գ, որը հայերենի խ-ի նման կազմվում է խ-ի և դ-ի դիրքում, հենց կոկորդի սեղմումով, ինչպես հայերենի կ, տ, պ-ն): Այժմ մենք մեր տրամադրության տակ չունենք դրանք ստուգելու ոչ մի վրացական անձնանվան տառադարձություն, թերևս միայն հայերենից վրացերեն

փոխառնված բառեր, որոնք բերում է Բրուսեն Չուբինովի «Dictionnaire géorgien»-ում (1840): Այս բառերը մասամբ կարող են միայն վերջերս վրացերեն մտած լինեն, մասամբ, անշուշտ, հին են, քանի որ անգամ վրացիներն ու հայերը՝ սկսած ամենահին ժամանակներից մինչ օրս, հաղորդակցման մեջ են եղել միմյանց հետ:

Նման փոխառություններ են՝

alkhati=աղբատ, anazdi= անազդ, banaki=բանակ, boroti=բորոտ, gameši= գոմէշ (պարսկական փոխառություն), gandzi=գանձ, danaki= դանակ, despani=դեսպան, vešapi=վիշապ, kapoeti=կապոյտ, kolophi=կողոփ, pavasaki= պայտասակ, pativi= պատիւ, patizi=պատիժ, ptuli=պտուղ, žami= ժամ, roci, roci-ki=ռոճիկ (պարսկական փոխառություն), sparazeni=սպառազեն, spetaki, speti=սպիտակ (պարս. փոխառություն), tanjki= տանջք, tati=թաթ, trp-hali=տոփալի, khalakhi=քաղաք, kharaphi=քարափն, šambi=շամբ, (širaxi=ճրագ, սակայն հավանաբար ուղղակիորեն պարսկերենից է փոխառված), cešmaritebi= ճնարիտ, hani=Հանի (*հմմտ.* նաև այնպիսի անուններ, ինչպես Mtsxetha=Մծխիթայ կամ Մցխիթայ և այլն):

Այս փոխառությունները ապացուցում են, որ հայերենը այն ժամանակ, երբ նրանք փոխ են առնվել, ճիշտ այնպես է խոսվել, ինչպես այսօր Թիֆլիսում: Եվ որ մեր թվարկության սկզբում առանձնապես ուրիշ կերպ էլ չի եղել, այդ մասին է վկայում անունների ուղղագրությունը, որոնք հունական և հռոմեական պատմիչները, ինչպիսիք են՝ Ստրաբոնը և Տաղիտը, վկայակոչում են. օր. Tiridates = Տրդատ, Tigranocerta=Տիգրանակերտ, Meherdates=Միհրդատ, Artabanus, 'Αρτάβανος = Արտաւան, Artavasdes 'Αρταβάσδης և 'Αρταβάξης = Արտաւազդ, Vardanes = Վարդան, Artaxias=Արտաշէս, Pharasmanes= Փարսման, Deroxene = Դերջան, Araxes, 'Αράξης = Երասխ, Taraunitis = Տարուն, այսինքն՝ Տարուն, Caranitis, Καρηνίτης = Կարին, Capotes (մի լեռան անուն) = Կապոյտ (կապոյտ), 'Αρτάξατα = Արտաշատ, Κύρος = Կուր, 'Αλβανοί = Աղուանք, Γωγαρηνή = Գուգարք, Σωφηνή = Տոփք:

Այս փաստարկումներից հետո, նախքան հին հայերենի՝ մեր հնչյունական համակարգը ներկայացնելը, նախապես պետք է մի քանի դիտողություններ անել նաև օ, ոյ, ու և դ տառանշանների հնչյունական արժեքի մասին: օ-տառանշանը հայերենի այբուբեն ուշ է մտել: Հին ժամանակներում նրա փոխարեն հանդիպում է աւ, այսինքն՝ au, օր.՝ հայերենի երկար օ-ն գրելու համար կիրառվում էր ով= օւ, որը ծ-ի կողքին նույն հնչյունական արժեքն ուներ: Ուստի և հին հայերենի տառադարձության մեջ կօգտագործենք օ, որտեղ այն ըստ ժամանակակից ձևի գրվում է աւ-ի փոխարեն, ինչպես այդ աւ-ը au-ի միջոցով: ոյ-ը այժմ արտասանվում է ինչպես սի, ըստ գրության նա օի է, ինչպես և մենք կգրենք: Հույների յոյնք անունը = Ίωνες, անշուշտ,

հայերը չեն արտասանում որպես *Jōnkh* որովհետև այդ դեպքում այն **յովնք** պետք է գրվեր: **Յոյնքը** գալիս է ավելի վաղ *Jauna*-ից, քանի որ ոչ-ը որպես ուժեղացված ձև գալիս է *u*-ից, նախն. *au*. *Ἰωνες*-ի հին պարսկական ձևը նույնպես *Yauna* է:

ա տառանշանը, բաղադրված $n=0+i=u$, որը սխալ ձևով *ov* են կարդացել: Նա ոչ այլ ինչ է, բայց եթե հունական *ov*-ի ընդօրինակումը և նախկինում (ինչպես այն) = *u* ձայնավորին: Այդ արժեքն ունի այն՝ 1) բաղաձայններից առաջ, 2) բառավերջում: Քանի որ մինչդեռ բառավերջում *av*-ի փոխարեն առ են գրում, իսկ *iv*-ի փոխարեն իւ, սակայն *ov*-ի համար ով են գրում, բնականաբար, միայն այն պատճառով, որ հենց *ou*-ն = *u*-ի: Պատկանյանը մեզ տեղեկացնում է (*Journal asiatique*, S. VI, T. 16, էջ 157), որ այս ով-ը ընդ-հանրապես միայն մեր ժամանակներում է լեզու մտել, որպես ավելի հին *ou=ov*-ի դիմաց, որը դիակրիտիկ (տարբերիչ) նշանով է գրվում, որպեսզի տարբերվի *ou=u*-ից: Եթե, այսպիսով, ամենուրեք «ով» գրվում է և *ov*-արտասանվում (*hmdm*. հովի=*hoviv*, գովեստ=*govest*, սովորութիւն=*sovoruthi-un*), ապա, բնականաբար, այնտեղ, որտեղ «ու» է գրվել, ոչ թե *ov*, այլ հենց *u* պետք է արտասանել: Իսկ ինչո՞ւ են գրում նաև *au=av*, *bu=ev*, *hu=iv*, ոչ սակայն *ou=ov*, այլ միշտ ով, եթե այս գրությամբ ով= *ov* չեն ուզեցել ու= *u*-ից տարբերակել: Ուստի վ-ն, ըստ էության, վերաբերում է միայն բառասկզբին, բառամիջում և բառավերջում այն դրվել է միայն *v*-ի փոխարեն: Լրացուցիչ մենք ունենք ևս երկու ապացույց, այն է, որ *ou*-ն *ov*-ի արժեքը չուներ:

1) տաղաչափություններ՝

ի ձեռն օձին - զկինըն խարեալ
աստուածական - փառօք պատուեալ
զբանալ աչաց-ըն խտտացեալ

Ներսես Շնորհալի, Բանաստեղծութիւն, տող 60-62:

Ինչպես երևում է բերված տողերից, **աստուածական**, ինչպես նաև **փառօք պատուեալ**, պետք է քառավանկ լինեն, ուրեմն պետք է կարդացվեն *astvat-sakan* և *pharōkh patveāl*, բայց ոչ *astovatsakan* և *patoveāl*, այսպես նաև՝ տուեալ դերբայը *e-tu*-ի «տվեցի» համար, բանաստեղծության մեջ միավանկ է՝ *tveāl*, պետք է որ, սակայն, չափի համար երկվանկ կարդացվեր, այսպիսով, արտասանում են *te-veāl*, սակայն ոչ *toveāl*: 2) Հնչյունական օրենքները: Եթե որևէ բառի, ինչպես *thiv*-ին հավելվում է սեռական հոլովի ոչ վեր-ջավորությունը, ապա, ըստ հնչյունական օրենքների, *i*-ն անպայման պետք է սղվի և *thvov* դառնա: Ճիշտ է, այն թույլ է գրվում, սակայն երբեք *thovoy* չի արտասանվել:

Նույնն է նաև *tiv* «օր» -ի կապակցությամբ սեռականում *tivn* (*j-ean* վեր-ջավորությամբ)՝ *tevnejan*, կամ գործիականում *v* ձայնավորի վերածմամբ՝ *tun-jeamb*, մասամբ *tou-n-j-ean*, սակայն հակառակը բոլորովին անբացատրելի կլիներ: ու-ն, այդ ապացուցված է, ձայնավորի և բաղաձայնի որակ ունեցող *u*-է հին հայերենում, ինչպես ժամանակակից արևելահայերենում, որովհետև, ինչպես Պետերմանն է գրել՝ «Ու ձայնավորը մեկ այլ ձայնավորից առաջ Թիֆլիսում վ *w* կամ ըվ *ew* է արտասանվում» (*Abhandl. der Berl. Akademie*, 1866, էջ 64): Ըստ այդմ՝ մենք ու-ն կգրենք *u*-ով (բաղաձայններից առաջ), կամ *v*-ով (ձայնավորներից առաջ, տե՛ս, սակայն, ծնթ.), ով-ը սակայն՝ *ov*-ով (բացի օտար բառերից առաջ, որտեղ այն կանգնում է *ω* ծ-ի փոխարեն):

Մնում է միայն պատասխանել ևս մեկ հարցի, թե արդյո՞ք բառասկզբում կանգնած վ-ն այլ կերպ պետք էր գրեինք, քան՝ ու, $i=v$: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ *i*-ն հանդիպում է միայն ձայնավորներից հետո (*a, e, i*), այնտեղ, որտեղ նա բաղաձայններից հետո պետք է կանգնի, գրվում է ու, այսպիսով նա երբեք ինքնուրույն չէ, այլ միշտ ինչ-որ չափով հենարանով է, և հնարավոր է, որ նաև բառասկզբում, որտեղ նա հենց իրեն համար է որպես հենարան ծառայում, նրանով որ՝ այդ դեպքում կրկնակ է գրվում՝ $i+i=v$: Արտասանության մեջ ևս վ և *i*, ու-ի միջև ոչ մի տարբերություն չի նկատվել, ուստի և մենք մեզ իրավունք ենք վերապահում երկուսն էլ՝ վ և *i* (ու) *v*-ով գրել (վ-ն, այսպիսով, *v*-ի պարզ արժեքն ունի, մինչդեռ ու-ն և *i*-ն կրկնակի արժեք ունեն՝ *u*-ի և *v*-ի):

Վերջապես, ինչ դ-ին է վերաբերում, ապա պարզ երևում է, որ նա բոլոր տառադարձություններում համարժեք է մյուս լեզուների *l*-ին, ուստի և նա այն կուզենայի գրել հունարեն *λ*-ով (ի տարբերություն *l*-ի=1), մինչդեռ ժամանակակից հայերենում այն *γ*-ով պետք է գրվի:

Ըստ այդմ՝ մենք հին հայերենը հետևյալ ձևով կտառադարձենք²:

Չայնավորներ	
Հինական ձայնավորներ	ուժեղացված ձևերը
$a=ա$, ե (<i>h, n</i>)	$\hat{a} = ա$
$i=ի$ (շեշտված)	ai (<i>ei</i> -ով) է (շեշտված)

¹ ու-ի արտասանության մասին արևմտահայերենում հատուկ տվյալներ տե՛ս Վենետիկի նոր այբբենարանում (1850, էջ 48): Ըստ որում՝ այն ու են արտասանում՝ 1) =*v* աստուած=*asdvadz*, 2) =*ev*, օր.՝ լուայ=*le-vay*, լուանալ=*le-vanal* կամ՝ *lvanal*; 3) =*u*, սլ-ով ավարտվող բառերում, երբ *u*-ն *a*-ից կամ *u*-ից առաջ է կանգնում՝ *zenui*, *zenuakh*:

² Նրանց համար, ովքեր ցանկանում են հայերենի մախնական ժամանակների հնչյունական համակարգի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարել, մենք կներկայացնենք հետևյալ աղյուսակը, որտեղ հակադրվում են հնդեվրոպական հինք լեզվի հնչյունները և լատինական տառերով հայկական այն հնչյունները, որոնք նրանցից են առաջացել:

կիտաքրքրի օտեթերենը, քանի որ, ինչպես հայտնի է, նույնպես իրանական լեզու է:

Ռոզենը իր «Ossetische Sprachlehre» էջ 3-ում նկատում է, որ վրացերենը օտեթերենի հետ 34 հնչյունով լիովին համընկնում է և լիակատար իրավունքով վրացերենի այբուբենն է օգտագործում օտեթերենի գրության համար: Օտեթերենի խոլ պայթականների և շնչեղների գրությունը ցույց է տալիս, որ դրանք ճիշտ նույն հնչյուններն են, ինչ հայերենի համապատասխան հնչյունները: Զանի որ, ինչպես նա ասում է «շփական th, ph, kh-ի մոտ, ինչպես սանսկրիտում ॠ, ॡ, ॢ-ի պայթյունից հետո լսելի է շունչը: Սակայն օտեթերենում նրանց ուղեկցող շունչն այնքան չնչին է, որ դրանք կարելի է լիովին մեր լեզուների խոլ պայթականների հետ նույնացնել: Համապատասխան k, p, t-ն չափազանց կոշտ են և շնչից զուրկ, այնպես որ զգույշ արտասանության դեպքում նրանց հաջորդող ձայնավորը անջատ է լավում: Օտեթերենի և վրացերենի համար ընդհանուր է գ հնչյունը, մինչդեռ իսկական իրանական f-ն հատուկ է միայն օտեթերենին, ի տարբերություն վրացերենի և հայերենի:

Ցավոք, Շյոգրենը իր «Ossetische Sprachlehre» աշխատության մեջ, այն զլխավոր աշխատությունն է, որ մենք ունենք օտեթերենի մասին, փոխանակ Ռոզենի մամն օգտվելու միանգամայն հարմար վրացական գրությունից, ստեղծել է իր սեփական այբուբենը ռուսերենի հիմքի վրա, որի պատճառով չափազանց դժվար է այդ հրաշալի աշխատությունից օգտվել: Մենք կարծում ենք, որ շատերին հաճույք կպատճառի, եթե մեր տառադարձության հետ միաժամանակ տանք նաև Շյոգրենի այբուբենը, մանավանդ որ նրա տվյալները օտեթերենի արտասանության մասին մեծ մասամբ պարզ չեն և քիչ ակնառու:

Չայնավորներ

a=a, æ=ǣ (բաց), e=e (բաց), é=ê (փակ երկար e)
 i=i, o=o (բաց), ô=ö, ω=φ (փակ), y=y
 v=ü (կամ ֆ, հայ. ղ):

Մրանցից e, ô, w հնչյունները միշտ կարճ են, իսկ ê -ն՝ միշտ երկար: Մնացած ձայնավորների մոտ Շյոգրենը երկարությունը նշում է շեշտի միջոցով՝ á = â, æ = ā, ó = ô, y' = ü, v=ü: ij (iy) նշանագրելով՝ Շյոգրենը գրում է երկար i=i, vj-ով՝ üi երկարբառը:

Քաղաձայններ

	Q q		h h	
Г g	К k	Ҕ kh	Н ñ	Х x
Ҕ j	Ҩ c	Ҩ c		Ҩ γ
Ҕ dz	Ҩ ts	Ҩ ts		Ш š
Д d	Т t	Ҩ th	Н n	С s
В (6) b	П p	Ҩ ph	М m	Ф f

Dazu kommen: Ҩ = gy, Ҕ = dy, Н = ny,
 К = ky Ҕ = khy Ҩ = ty.

Այս բոլորից հետևում է, որ լեզուները կարող են միևնույն հնչյունական համակարգն ունենալ, առանց միմյանց հետ ցեղակից լինելու, որ մի լեզվի հնչյունական համակարգը արտաքին, այսինքն՝ տեղային ազդեցությամբ կարող է պայմանավորված լինել, և որ երկու լեզուների հնչյունական համակարգի նույնությունից ավելի քիչ կարելի է այդ լեզուների ցեղակից լինելու մասին եզրակացություններ կատարել, քան նրանց տարածքային ընդհանրությունների մասին: Այս դրույթը, ըստ իս, պետք է որ կարևոր լինի լեզուների ցեղակցության մասին դատելիս, և այն լեզվաբանության մեջ շատ ավելի պետք է ուշադրության արժանի լինի: Այսպիսով, մեր դրույթը կիրառենք մեր դեպքի նկատմամբ՝ երբ իրանական լեզուները Հնդկաստանի սահմանի վրա հնդկերենին հատուկ հնչյունական առանձնահատկություններ են ցուցաբերում (լեզվային և շնչեղ հնչյունների օգտագործումով), արդյո՞ք պետք է այդ պատճառով եզրակացնել, որ նրանք հնդկերենին ավելի մոտ են կանգնած, քան մյուս իրանական լեզուներին:

karta, kert, gird-ով կազմվող իրանա-հայկական անուններ

Չախաուն «Zeitschrift» XXVIII, էջ 448-ում այն կարծիքն է հայտնում, որ արդի Baikand անունը գալիս է զենդերենի vaēkereta-ից և նշանակում է «թռչնաքաղաք»: Այժմ, սակայն, ավեստերենում «թռչուն»-ը արտահայտվում է vaya բառով, ոչ vaē-ով և, ինչիցայլոց, նաև ոչ՝ vi-ով, ինչպես Չախաուն է այդ կարծում, քանի որ viškaršipta, Vd. 2, 139, ըստ Հաուզի, անշուշտ ավելի շուտ տղամարդու անուն է, սակայն ոչ՝ «թռչուն-karšipta»: Vaya-ն kereta-ի հետ բաղաբնակվելով՝ պետք է որ vayōkereta տար, ինչպես vaya+bereta-ն vayōbereta=թռչունների կողմից տարված լինել: Այնուհետև kereta-ն ավեստերենում միայն «արված» է նշանակում, ինչպես այդ յուրաքանչյուր ոք Յուստիի «Lexikon»-ից կարող է տեղեկանալ, որտեղ նա էջ 84-ում կարող է գտնել նաև kereta-ով որպես երկրորդ բաղադրիչ բարդ բառեր: Երրորդ՝ իրանական karta-ն kant չի տալիս, քանի որ իրանականում r-ն երբեք ո չի տալիս: Պահլավերենում r-ով ձևերի դիմաց n-ով ձևեր յուրաքանչյուր ողջամիտ մարդ երևակայության աշխարհին կվերագրի: Բարդ բառերի karta-ն, ինչպես մենք այդ ստորև ցույց կտանք, ժամանակակից իրանականում ավելի շուտ gird է տալիս, արաբականացված՝ jird: Չորրորդ՝ kand-ով կազմված անունները բոլորովին էլ իրանական չեն: Մենք դրանք հանդիպում ենք Օբսուսից այն կողմ՝ բուրբերի երկրում, և այնպիսի անուններ, ինչպիսիք են՝ Taškand, Chokand, Uzskand, Yarkand, Samarkand և այլն, նույնքան հեռու են իրական լինելուց, ինչքան Baikand անունը: Ուստի և Baikand-ը ոչ՝ զենդ. vaēkereta-ին, ոչ էլ այն «թռչնաքաղաք»՝ իմաստն ունի:

Մեզ համար համոզեցուցիչ չէ նաև Չախաունի Xneřita և Χαρινοδασ անունների նույնացումը (Zeitschrift XXVII, էջ 147), որ r-ն իրաներենում կարող է ո տալ, մենք բոլորովին ընդունելի չենք համարում:

Մենք կապացուցենք, որ ոչ թե վերը նշված kand-ին, այլ թերևս ժամանակակից gird, jird-ին են հանգում հայ-իրանական նախնական՝ karta-ով կազմված անունները և ըստ որում հենց նույն karta-ով, որը զենդերենում հնչում է kereta և ունի «կատարված» և ոչ թե «քաղաք» իմաստը: Adamakert, Bakurakert, Gagkakert, Manazkert կամ Manavazakert, Šamiramakert, Valaršakert, Tigranakert, Ervandakert: Կարելի է հակված լինել այս անունների kert-ը վերծանելու որպես «քաղաք», այսպես՝ Gagkakert=Գագիկի քաղաք (Gagikstadt), Šamiramakert=Շամիրամի քաղաք (Semiramisstadt), Tigranakert=Տիգրանի քաղաք (Tigranesstadt) և այլն: Այսպիսով kert-ը, ինչպես այդ վկայում է Ինդիժեանը (Storagruthium hin Hay. էջ 74), որ դեռ Ստեփանոս

¹ Թերևս հանդիպում է vaēkereta, սակայն միայն vikereta-ի փոխարեն, մասնիկի ծայնավորի ուժեղացմամբ, ինչպես haosravaña, déušravañh-ում, այն kand-ը, ի դեպ, հին է, եթե Samarkand-ը, հավանաբար, Μαροξαναδασ -ի հետ իդենտիկ է:

Բյուզանդացու և Հեսիխի՝ կողմից են վերծանված, միայն թե առաջինն այդ բառը համարում է պարթևական, իսկ վերջինը՝ հայերեն: Ինդիժեանը (նույն տեղում) նրան նաև վերագրում է հայերենի kerteal, šineal=կառուցված, շինված իմաստը: Այսպես է այս բառը բացատրում նաև Չախաունը իր հայ-իտալերեն բառարանում՝ kert-«fabbricato» և որպես օրինակ բերում է՝ phaitakert=fatto di legno և Tigranakert=fabbricato da Tigrane: Արդ՝ phaitakert-ը, անշուշտ, նշանակում է միայն «փայտից պատրաստված», և kert-ն այս բառում այլ բան չի նշանակում, քան «պատրաստված»: Նույնն է նաև Xosrovakert-ում= Խոսրովի կողմից շինված: Քանի որ այն հայկական Խոսրով արքայի կողմից տնկված անտառն է (Phaustos Buzandatsi, Վենետիկ, էջ 18), հմմտ. նաև dzerakert=dastakert «ամրոց, քաղաք», ըստ էության «ձեռքերով կառուցված»: Այսպիսով Gagkakert=Գագիկի կողմից կառուցված, Šamiramakert=Շամիրամի կողմից կառուցված, Tigranakert=Տիգրանի կողմից կառուցված:

Եթե մենք անդրադառնանք kert-ի ազգակից բառերին, ապա բառարանները մեզ կտրամադրեն հենց նույն այդ kert-ի ածանցյալները, ինչպես՝ kert-el- «կերտել, կառուցել», kertoλ «կերտող, կառուցող» և այլն: Սակայն ոչ մի կասկած չի կարող հարուցել, որ kert-ը որպես «կերտված» հանգում է արիական kar, kart արմատներին: Քանի որ հենց վերջիններս են ընկած այնպիսի բառերի հիմքում, ինչպիսին են ktr-el, ktr-otš «դանակ» և այլն (հայերենի համար շատ սիրված է r-ի տեղափոխումով), այսպիսով մենք պետք է kert-ը kar-ի կողքին դնենք: Kert-ը պետք է որ kart-ի հարակատար դերբայը եղած լինի և որպես այդպիսին = հայրս. karta, զենդ. kereta: Սակայն հենց այս kar-ն է, որ հայերենում բոլորովին կիրառելի չէ, քանի որ նրա փոխարեն օգտագործվում է ar (ar-nel ar-ar-i), իսկ դերբայական ta վերջածանցից բոլորովին ոչ մի հետք չի մնացել: Ուստի kert-ը կարող է միայն իրանականից փոխ առնված լինել: Չէ՞ որ dastakert բարդությունը, ամբողջովին վերցված, պարսկերենից է փոխ առնված, ինչպես այդ հետևում է dasta հին պարսկերենում= ձեռք (հայ. dzer-, dzer): Պարսկերեն dasta-ն հայ. dzer-ով փոխարինելով՝ ստեղծվել է հայերենի dzerakert-ը, սակայն dzeragorts-ը մաքուր հայկական բարդություն է:

kart-ով կազմվող պարսկական անուններից ամենահինը սասանյան Jezdegerd-ն է: Անվան նախնական ձևը պետք է որ եղած լինի՝ yazatakarta= Յազատաշի² կողմից շինված: Սասանյանների ժամանակաշրջանում այդ

¹ κίερα, πόλις, ὑπὸ Ἀρμενίων.

² yazata-ն ըստ էության պարսկերեն չի, այլ սուրբ գրոց լեզուն է՝ վնջված ավեստերենից, որովհետև զենդ. yaz-ի դիմաց հին պարսկերենում yad է կանգնած, ինչպես այդ այդպես է հայրս. āyadana=ասոր. bitī sa ilī «աստվածների տաճար», yadā=«մեծարան» (աստծո և արքայի), ātīyādiya կրակապաշտին վերաբերող, bāgayādi աստվածապաշտության վերաբերող

անունը հնչելիս է եղել yazdakerti, հայ. ԿՅԿԵՐԷ: Minokhired-ում (West, the book of the Mainyo-i-khard, էջ 111), որպես տեղանուն այն հանդիպում էր jamkard=Յիմայի կողմից կերտված: Սակայն ինչպես karta-ն Jazdagird-ում դարձել է gird, այնպես էլ շատ քաղաքների անուններում այն որպես gird է հանդիպում: Օր. Յուստին, այդ անունների՝ իր «Beiträge zur alten Geographie Persiens» I, էջ 14-ում, gird-ը հանգեցնում է հայրս. vardanam «քաղաք»¹ բառին: Սակայն չէ՞ որ v-ն միայն բառասկզբում է g տալիս, իսկ բառամիջում միայն v, ինչպես և այդ տեղի է ունենում Յուստինի կողմից բերվող քաղաքների անուններում:

Բայց չէ՞ որ Յուստին պետք է հնարավոր համարեր, որ vardana-ից է առաջացել gird «քաղաք» բառը և այդ պատրաստի gird-ը բաղադրվել է անձնանունների հետ: Այնուհետև, պետք է որ բոլոր անունները ավելի ուշ շրջանի Մասանյանների ժամանակաշրջանում ծագած լինեն, որովհետև նախկինները դեռ չուներին v-ի անցումը g-ի: Սակայն Մասանյանների դրամների վրա դեռ գրվում էր Dârâbgird g-ով և ո՛չ թե k-ով (*hmdm. Zeitschrift VIII, Tafel, աղյուսակ IV, N. 6*). ճշգրիտ ապացույցը վկայում է, որ gird-ը ոչ թե vardana-ից, այլ karta-ից է գալիս: Dârâbgird նշանակում է Դարաբի կողմից արված:

Balâšgird-ի համար, ինչպես այդ վկայում է Նյոլդեբեն *Zeitschrift XXVIII, էջ 95-ի*, որպես ավելի վաղեմի ձև պետք է Valâšgird-ը սահմանել, բայց այդ անվան ամենահին ձևը հիշատակում է Պլինիոսը՝ *Vologesocerta*, մի բավարար ապացույց, որ gird-ը ընդհանրապես kert=karta-ից է գալիս: Հայերենը հնչում է Valâš: Ինչպես հայտնի է՝ Valarš և *Vologesocerta*-ն պետք է որ հայերեն թարգմանվելով՝ դառնար Valaršakert: Եվ սա իսկապես մի հայկական քաղաքի անուն է, որը հիշատակում են հայ պատմիչները, *hmdm.* Ինժինեանի նշված աշխատությունը, էջ 405: *Vologesocerta*, այսպիսով նշանակում է Վոլոգեսեսի կողմից կերտված (*Werk des Vologeses*)²:

Սակայն, ինչպես Valaršakert-ն է ծագումով պարսկերեն, նույնը պետք է լինի նաև Valaršapat-ը, քանի որ հայ. apat-ը նպրս. abad -ի նախնական ձևն է և նույն իմաստով, հետևաբար նույնպես փոխառություն է պարսկերենից:

Իրանական անունների մի մասը կարող էր հայերեն մտած լինել Արշակունիների թագավորության ժամանակ, որոնք պարսկական անուններ

(ամիսների 2 անուն): (*Հմմտ. նաև Auramazdām yadāta, Spiegel, Keilinschr., էջ 40*): Հետևապես հայ. yaz-el նույնպես փոխառություն չէ հին պարսկերենից, այլ ավեստերենից քրմական ազդեցությամբ է մտել հայերեն:

¹ Vardana-ի համադրումը հայերենի berd «ամրոց» բառի հետ միանգամայն սխալ է:

² Նոր ձևով պետք է որ այդ բառը հնչելիս լիներ fârhad-khârd, եթե այն դասական գրողների մոտ հանդիպի Phrahatočerta=Phrahatas-ի կողմից կերտված:

էին կրում¹, անշուշտ, նաև պարսկերեն էին խոսում, հայերեն ներկայացված լինեն, սակայն դեռ հին պարսկական սեպագրերում հանդիպում ենք պարսկական անուն կրող մի հայ՝ Dâdarš iš:

Այն, որ Դարեհի ժամանակաշրջանում իրանական անուններն ընդհանրապես Իրանից դուրս էին տարածվել, մեզ ապացուցում են Մասանյանների անունները՝ Atrina և Upadarma (սագարտացիների անուններ), Citrataxma (մեդացիներինը), Taxmaspâda, Fravartiš, Vindafrâ (կարդա՝ Vindafranâ, թարգմանվում էր՝ Vintaparna (B. III, էջ 87):

¹ Այս որոշակիորեն G. Rawlinson-ի դեմ է «The sixth great oriental monarchy» էջ 21 և հաջ.: Որ պարթևները բուրանցիներ են եղել՝ մինչև օրս դեռ ոչ մի դեպքում չի ապացուցված: Անշուշտ, այդ չեն ապացուցում նաև Արշակունյան իշխող դասերի անունները, որ իբր պարթևները իրանցիներ են եղել:

ՀԱՅԿԱԿԱՆՔ I Հին հայերենի Ք-ն

Վիեննական Մխթարյանների միաբանության անդամ (դր. Սերափիմ Տերվիշյանի) «Հին հայկական ստուգաբանությունների» նվիրված մի հավելված (Վիեննայի Մխթարյան միաբանության երառ., 1877, էջ 117)¹:

Երբ մի հայ է փորձում իր մայրենի լեզուն գիտականորեն ուսումնասիրել և իր ուսումնասիրությունները գերմաներեն է շարադրում, մենք չպետք է այդ աշխատանքը դժկամությամբ ընդունենք և աշխատանքի որոշ թերություններ պետք է հաճույքով և ներողամտությամբ քննարկենք: Եվ, բացի այդ, քանի որ հայագետները այնքան էլ շատ չեն, մինչդեռ հայ բանասիրության և լեզվաբանության խնդիրները շատ մեծ են, ուստի անարդար կլիներ, եթե մենք բարեկամաբար չընդառաջեինք այս ասպարեզի մի նոր անխոնջ գործընկերոջը: Ուստի և, եթե գրախոսը տվյալ դեպքում այլ կերպ է վարվում, եթե հեղինակին դրվատանքի փոխարեն պարսավանքի է արժանացնում, ապա այդ կապակցությամբ նա ինքն է ցավում, որ այդ բանին նրան մղում է սուր անհրաժեշտությունը: Հեղինակն ինքն է գրում (V. II), որ իր աշխատությունը «իր կարևորության և նյութի հարստության, ինչպես նաև բազմաթիվ այլ պատճառներով, գրեթե անխուսափելի թերությունների գիտակցությամբ համեստորեն մտավ գիտականորեն չափազանց խստապահանջ հասարակություն»:

Իրականում, ինչ համեստությանն է վերաբերում, կարող էր ճիշտ հակառակը լինել: Հեղինակի՝ իր սեփական ուժերի նկատմամբ ունեցած բարձր կարծիքը գրքում բավական հաճախ է աչքի զարնում, իր ստացած արդյունքները նա անվանում է «հազիվ թե արհամարհելի», իր շարադրանքին նա վերագրում է «անբասիր ապացույց», իր կողմից «հայտնաբերված» մինչ այդ «միանգամայն անծանոթ հնչյունական օրենքների» ճշտությունը նրա համար կասկածից դուրս է, իսկ օտար կարծիքը պետք է առանց այլևայլի տեղի տա իր կարծիքին: Զննադատվում են առանձնապես Ֆր. Մյուլլերի կարծիքները և ավելի շուտ կոպիտ, քան համեստորեն: Ֆր. Մյուլլերը սխալ ճանապարհով գնալով՝ հայ. զ-ին ճ-ի հնչյունական արժեքն է վերագրում, փոխանակ նրան ժձ-ի ճիշտ արժեքը տալու, այդ բանը նկատի ունենալով՝ հեղինակը էջ 23-ում խոսում է Ֆր. Մյուլլերի այդ միանգամայն անապացույց

¹ Das altarmenische \mathfrak{L} . Ein Beitrag zur indo-europäischen Lautlehre. Anhang: Altarmenisch-baktrische Etymologien, von P. Seraphin Dr. Dervischjan, Mitglied der Wiener Mechitaristen-Congregation. Wien, Verlag der Mechitharisten-Congregation, 1877. 8. 117 SS.:

թողած պնդման անսովոր խիզախության և միաժամանակ անընդունելության մասին» և զ-ով մի քանի բառերի ստուգաբանությունը քննարկելուց հետո էջ 23-ում շարունակում է՝ «Այս թվարկած հաստատ և, հետևապես, զ-ի իսկական արտասանությունը ստիպողաբար ապացուցող ստուգաբանությունները, թվում է, թե պետք է որ պ. Ֆր. Մյուլլերին միանգամայն անծանոթ եղած լինեն», այնուհետև մի քանի դիտողություններ անելուց հետո՝ «Այս մանրամասն քննարկումը պետք է, որ բավական լինի, որպեսզի հակառակ կարծիքը լիովին անհիմն և երերուն համարվի»: Ընդ որում, այն ստուգաբանությունները, որոնք բերում է հեղինակը, մասամբ ծայր աստիճան կասկածելի են, մասամբ էլ՝ ուղղակի սխալ: Բացի այդ, միանգամայն անօգուտ է այդ ստուգաբանությունները Ֆր. Մյուլլերի դեմ ասպարեզ հանելը, քանի որ ստուգաբանությամբ որևէ հնչյունի արժեքը առհասարակ հնարավոր չէ պարզել: Մանավանդ վատ է, երբ հեղինակը իր եռանդի մեջ միաժամանակ պաթոսի է հասնում, այդ դեպքում ի հայտ են գալիս այնպիսի նախադասություններ, ինչպիսիք են էջ 100-ում, «ինչքան էլ որ բավարար չափով ապացուցվեց, որ Ֆր. Մյուլլերի ջանքերն ապարդյուն են, որն այստեղ հայերենի՝ իր կողմից հաստատված ստրկական կախվածությունը փրկելու նպատակով անհեթեթ մտքերի է հանգել, իր բարձրավանդակում ազատ ծնված ս-ն՝ բերես-ում (berēs) φέρεις fers մի երանական-թաքնված տեղեկատվությամբ հին բուլղարական baraēša-ի ենթարկելով: Sic!- հայերենի հնչյունաբանությանը նվիրված մի հոդվածում հեղինակը, բնականաբար, պետք է շարադրեր իր կարծիքը հայերենի տառանշանների հնչյունական արժեքի մասին կամ փորձեր արդարացնել իր տառադարձությունը: Բաղաձայնների նրա տառադարձությանը մենք հավանականություն ենք տալիս, սակայն, ոչ ձայնավորների: Ու-ն նա ճիշտ է տառադարձում ս-ով, սակայն միաժամանակ օգտագործում է ov սխալ տառադարձությունը, ե-ն նա չի արժեքավորում որպես կարճ e, այլ որպես ե-ի տարբերակ = e (նախն. ai): Նույն ձևով էլ նա n-ն չի դիտում որպես կարճ o: Ավելի շուտ ե-ն և n-ն հաճախ նա փորձում է որպես այ = ai և ալ = au հանրագումարի բերել: Այդ դժբախտ նորամուծության համար հեղինակը թերևս այլ հիմքեր պետք է բերեր որպես ապացույց, քան նա բերում է ներկա հոդվածում, մանավանդ, ե-ի արժեքը որպես ē և n-ի արժեքը՝ որպես ð, հայերենի բնույթը որոշելու հարցում մեծ նշանակություն ունեն: Եվ մի այդպիսի կարևոր կետ, թվում է, որ հեղինակի աչքից վրիպել է: Սակայն նրա կարծիքը հերքելու կարիք չկա, քանի որ վախ չկա, որ գիտնականները այն կկիսեն: Բայց և այնպես համեմատենք այդ Ztsch. XXX, էջ 53-ը և հաջ.:

Զննարկվող գրքի հիմնական մասը զբաղվում է այնպիսի բառերի ստուգաբանական հետազոտությամբ, որոնք \mathfrak{L} ունեն: Մինչ այս՝ մենք \mathfrak{L} -ն

ճանաչում էինք որպես նախնական k, sv, tv և dv-ի հայկական փոխարինողներ: Հեղինակը չի գտնում, որ Զ-ն ամենից հաճախ= նախն. k (հետին կամ հետնալեզվային k-ին, որը որպես x կամ π է հանդես գալիս, լատիներենում՝ որպես c կամ qu), հաճախ նաև որպես g, k-ի հնչեղ պայթականը, այնուհետև նաև՝ = ցv, sv, tv, dv: Մենք չենք կարծում, որ հեղինակը ապացուցել է, որ Զ= նախն. ցv-ին և, բացի այդ, նույն= նախն. g-ին: Հնդեվր. g-ն հայ. կ= k է արտահայտվել, և եթե այս k-ի փոխարեն կամ h. ե. gh-ից g է առաջացել, հայերենում երբեմն Զ պետք է հանդես գար, ապա մեզ թվում է, որ Զ-ն միայն ավելի ուշ հայերենում k-ի կամ g-ի դիմաց է ստեղծվել, սակայն ոչ անմիջապես gh-ից կամ g-ից: Ինչպես էլ, սակայն, այդ լինի, հեղինակը իր հետազոտություններից հետևություն է անում, որ Զ-ն hv-ի հնչյունական արժեքն է ունեցել: Սակայն այն հանգամանքը, որ հայ. Զ-ն մի քանի եվրոպական լեզուներում հակադրվում է kv-ին, և համաձայն հեղինակի կարծիքի, նաև gv-ին, և որ մի քանի դեպքերում այն փոխարինում է նախնական sv, tv, dv-ին, ինձ թվում է, որ, այնուամենայնիվ, հեղինակի եզրակացությունը ոչ մի դեպքում չի հաստատվում: Զ-ն նախկինում ունեցել է kh (չնչեղ) հնչյունական արժեքը, որը նա դեռ այսօր էլ ունի, և կարող է անմիջականորեն k-ից առաջացած լինել, սակայն թե ի՞նչ ճանապարհներով են sv, tv, dv-ն kh տվել, արդյոք hv-ով, թե ոչ, պարզ չէ: Այսպիսով, հեղինակի կարծիքը վարկած է մնում: Եվ վարկածը պետք է հենարան ծառայի Ֆիքի կարծիքի համար, որ հնդեվրոպական նախալեզուն ունեցել է երկու k-հնչյուն, ինչպես նաև, որպես ապացույց այն բանի, որ նախկինում երկու g է եղել: Հեղինակը կարիք չունի այդպես անտեղի և իզուր իրեն տանջելու: Վերջնական ապացույցը բերվել էր ուրիշների կողմից և բոլորովին այլ ձևով, որ հնդեվրոպական լեզուները կրկնակի k- շարք են ունեցել (k, g, gh և k', g', gh'), և որ այդ երկու շարքը հայերենում անջատ են պահպանվել:

Քանի որ հայերենը ընդհանուր առմամբ, ինչքանով որ մինչ այս մեզ հայտնի էր եղել, k-ի երկու շարքի զարգացմամբ վճռականորեն կանգնած է արիական և սլավոնական լեզուների կողքին, քանի որ k', g', gh շղականներ են տալիս, g, gh հաստատ օրինակներով՝ k, g (ոչ kv, gv) են տալիս, ուրեմն ապրիորի կարող ենք անհավանական համարել, որ k-ն և շատ անգամ նաև g-ն հայերենում Զ= hv են տալիս, ուրեմն անհավանական է, որ Զ-ն երկի= hv-ի:

Այսպիսով, եթե մենք հեղինակի հետ համակարծիք չենք ընդհանուր հարցերում, ապա նրա հետ չենք կարող համաձայնության գալ առանձին-առանձին վերցրած ստուգաբանական հետազոտություններում: Հեղինակը բոլորովին զուրկ է գիտական մեթոդից, իսկ ստուգաբանական հետազոտությունները, առանց մեթոդ կիրառելու, չեն կարող հանգեցնել

հաստատ, հիմնավորված եզրակացությունների: Հեղինակը բացարձակապես զուրկ է նաև այն հնդեվրոպական լեզուների խոր տիրապետումից, որոնք նա իր հետազոտությունների ժամանակ փաստարկում է: Համենայն դեպս սանսկրիտի նրա գիտելիքները շատ կասկածելի են թվում, երբ նա (22 և 48 էջերում) երկու անգամ է գրում (բազէ) և էջ 22-ում այդ ֆայենա-ով է տառադարձվում, էջ 64...., հետագայում ուղղվել է, սակայն ...

Էջ 1 - Նախնական katvur= լատ. quatuor ձևերից հեղինակը դուրս է բերում հայերենի երկու ձևը՝ chorckh և khağ, սակայն անհավանական է, որ նույն բառի նույն հնչյունը՝ k մերթ ch, մերթ kh տված լինի: Նույն այդ chor-kh-ը համադրվել է սնու. catvar, khağ-ի հետ, սակայն, քանի որ kh-ն շատ դեպքերում առաջացել է tv-ից, նախն. tvar= սնու. turya, զենդ. tûrya=նախն. tvarya «չորորդը»: Ի՞նչ իրավունքով է հեղինակը այս բոլորը կամայական համարել:

Էջ 4 - Հայ. phaitsaln= փայծաղն նույնացվում է սնու. plîhan, զենդ. spereza-ի հետ: Այսպիսով, բառի (նախկինում արդեն Լագարդի կողմից է գրված) բացատրությունը մենք չենք կարող մերժել, սակայն հեղինակը պետք է բերեր բոլոր կասկածները, որոնք կարող էին նրան պիտանի լինել:

Բառի հնդեվր. ձևը sparghian է, եվր. splaghan, որից, եթե մենք հեղինակի հետ ընդունելու լինենք, որ sp-ն հայերենում ph է տալիս, ըստ հնչյունական օրենքների, պետք է որ հայերենում ստացվեր՝ phalz և phaldzn: Ռ-ի փոխարեն հանդիպում է phaitsaln: Այս բառի ai-ն ենթադրում է նախկինում at-ի կամ as-ի նախորդում (հմմտ. hair=pater, khoir=svasar), իսկ ts-ն մատնացույց է անում նախնական g'-ն, ոչ gh'-ն: Այս բանը հեղինակը չի նկատել, նա միայն նկատում է, որ ai-ը կամ աղավաղվում է, կամ՝ հակառակ դեպքում մի տեսակ անհասկանալի ձևով, նախնական a-ի թուլացմամբ ստացվում է i ձայնավոր և վկայակոչում է սնու. plihan (plîhan)!

Նման դիտողությունը, պետք է, որ ընթերցողին հեղինակի լեզվական կարողությունների մասին ամենավատ կարծիքը ներշնչի: Սակայն հանդիպում են ավելի անհաջող դեպքեր, քան սրանք:

Էջ 10 - բողոքել բառը = bolokhel բացատրվում է որպես բարդություն, բաղկացած երկու արմատից՝ bo=հուն. φα φημι-ում և lokh= լատ. loqu-i, և նման արմատներից բարդություններ պետք է որ հայերենում «հավաքելից չհանդիպեին»: Այս՝ նախորդ դարերի լեզվաբանությունն է:

Թե հեղինակն ընդհանրապես ինչքան քիչ գիտակ է լեզվաբանական մեթոդին, այդ ցույց է տալիս, ինչպես ամենուր, բավական ցայտուն կերպով նաև էջ 58-60-ում: Սնու. marj, զենդ. marez արմատը պետք է հայերենում ներկայացվեր սուլական ts հնչյուն ունեցող արմատով, ուրեմն մոտավորապես marts կամ merts կամ melts և այլն: Հեղինակը, սակայն, այս

արմատի կողքին հետևյալ բառերն է դնում՝ makh-ar «մաքուր» a-mokh-el «ամոքել», mirg «միրգ», merk «մերկ», mardzel «շփել», merdzenal «մերձենալ», hamozel «համոզել», marzel «մարզել, վարժեցնել», merzel «մերժել, հեռացնել», mz-el «մզել, քանել», amic «համեղ պատառ»: Ըստ որում՝ չի կարելի նաև կարծել, որ հեղինակն առանց հնչյունական օրենքների է գործում, նա միայն անտեսում է մինչ այս մյուսների կողմից ճանաչված հնչյունական օրենքները, և նա այդ բազմաթիվ նորերն է հայտնաբերում և հների կարիքը չունի: Հեղինակը մեզ այստեղ ուսուցանում է, սակայն, նաև Ավեստայի մի հատված (It. 8, 44) yim nōiđ mereyēnti aūrō mainyuš nōiđ yātavō, որում նա զենդ. merey-ը բացատրում է հայ. merdzenal-ով (մերձենալ, մոտենալ): ar or och merdzenan Arhmn ev och jatukkh: Բայց զենդ. merēg-ը ոչ «մաքանել» է նշանակում, ոչ «թափանել», նա ազգակից է mereñc-ին: Երկրորդն էլ հետագայում են կազմվել՝ mar «մեռնել» արմատից merey «վնասել, ոչնչացնել»: Այսպիսով, այդ հատվածը պետք է բարձրանվի հետևյալ կերպ՝ «den weder Ahriman noch die Jatus verletzen können» («որին ոչ Ահրիմանը, ոչ էլ Յատուսը չեն կարող վնասել»):

Էջ 68 - Հայերենի «երկու» ցույց տվող թվականը erku, իհարկե, Բոպայի ուսումնասիրություններից հետո դարձյալ բացատրվում է որպես dvāu-ից առաջացած՝ e= նախադրություն, r=d, k=v, u=āu:

Դժբախտաբար հեղինակը հայերենի հետ էլ այնքան ճիշտ չի վարվել: Էջ 35՝ nerkhini բառի հետ ևս նա այնքան ճիշտ չի վարվում՝ վերծանելով այն որպես բարդ բառ, որի բաղադրիչներն են՝ ենթադրյալ ner=«տղամարդ, մարդ» և առկա՝ kin = «կին» (Եւնուխ= տղամարդ կին) և i վերջածանց:

Մեր կարծիքով, այդ դեպքում բառը պետք է հնչեր nerakni և ոչ թե nerkhino: Համաձայն հնչյունական օրենքների՝ nerkhino-ն պետք է բխեր մի **ներքենի** nerkhēni բառից, և հեղինակն իր ուսումնասիրությունների ժամանակ պետք է նշված ձևն ընդուներ որպես ելակետային:

Էջ 56 Հեղինակը հայ. ordz բառը համադրում է հուն. ὄρχις «որձ» բառի հետ որպես «վատ», քանի որ yordz ուղղագրությունը հնարավոր չի համարում: Իսկ ո՞ր է մնում amordzikh բառում այդ y-ն: Հեղինակը պետք է որ հաճույքով իրեն իրավունք վերապահեր ուսուցանելու, որ բառասկզբի y-ն միշտ երկրորդային է և նախնադարյան ժամանակներից չի գալիս, քանի որ բառասկզբի y-ն տվել է dz կամ 1: Նրան պետք էր միայն համադրել հայ. yarg «զին, արծեք»= սնս. argha բառերը: Ուստի և էջ 52-ում նա միանգամայն սխալ է ընկալում yavelul-ի հարաբերակցությունը aveli-ի նկատմամբ և yavelul -ը խեղաթյուրված բխեցնում է yu-ի արմատից:

yavelul-ը բարդություն էր՝ y+avelul, իսկ aveli-ն նախնական ձևն է: Ուստի և այն, ինչ էջ 52-54-ում նախնական yu, yug=արմատի հայերեն

ներկայացուցիչների մասին խոսելիս նկատվում է, մեծ մասամբ սխալ է. yug արմատը հայերենում հանդիպում է միայն որպես luts, ոչ այլ կերպ:

Սակայն բաժնական է նախատել: Չպետք է անտեսել, որ հեղինակը բավարար չափով երևակայության և զուգակցության ձիրք ունի, որպեսզի հաջողությամբ ստուգաբանական հետազոտություններ վարի, եթե նա ձեռք բերի գիտական մեթոդ և ուսումնասիրվող լեզուների ասպարեզում ավելի լավ գիտելիքներ: Հեղինակի գիտությունն առայժմ միայն նախորդ դարի գիտություն է, միայն նրա ձեռքի տակ եղած օժանդակ միջոցները՝ Կուրցիոսի և Ֆիքի ժամանակակից աշխատություններն են: Բացի այդ, մենք չենք պնդում, որ նրա բոլոր ստուգաբանություններն են սխալ, սակայն մեզ դժվար կլինի ճիշտը գտնել, որը միաժամանակ կլինի նորը: Նրա կարծիքներից շատերը հոգատար ստուգման կարիք ունեն, ինչպես օրինակ այն, որ իբր th-ն նախնական st-ից է առաջացել, ph<sp և, մենք ավելացնենք՝ kh, ch<sk-ից: Ուշադրության է արժանի հեղինակի էջ 96-ում բերված նկատողությունը mahik «նորալուսին» և amis բառերի նկատմամբ:

Ջանի որ mahik -ը հազվադեպ է հանդիպում, ուստի և հեղինակը կասկածում է, որ բառը բուն հայերեն է և իրավացիորեն: mah-ը փոխառություն է պարսկերենից (mah) և ընդունել է հայ. -ik վերջածանցը: Բուն հայերեն է, սակայն, amis-ը, a-mens-ը = լատ. mensis: Եթե նախն. s-ն, որպես կանոն, h-է տվել, ապա պարզ է այստեղ, ինչպես է mis=mems, us=oms ռնգայինի ազդեցությամբ պահպանվել: Ինչպես հեղինակը միանգամայն արդարացիորեն նշում է, իրանականում s-ն n-ից և m-ից հետո չպետք է պահպանվեր, այլ h պետք է տար, հմմտ. զենդ. jēñghaiti, գաթայի բարբառում սովորական jañhaiti-ի փոխարեն=նախն. jam-s-a-ti, mēñghē (<mañhi)= սնս. marñsi, mañhāna=նախն. man-s-āna:

Այսպիսով, հետևում է, որ s-ի անցումը h-ի հայերենում այնքան հետևողական չի տեղի ունենում, ինչպես այն իրաներենում է տեղի ունեցել, և հայերենը այստեղ իրաներենի նկատմամբ ինքնուրույնություն է ցուցաբերում:

Գրքում շատ ճիշտ բառեր էլ կարելի է գտնել, սակայն մեր գրախոսականի խնդիրը չէ այն սխալների և կասկածների այս քառսից դուրս բերել: Ցանկալի է, որ հեղինակը իր հետազոտությունները կատարելիս կվարժվի ավելի խիստ մեթոդների, և ավելին, որ նա իր ուսումնասիրությունները կսահմանափակի միայն հայերենի շրջանակներով:

Հայ լեզվաբանության ամենաթույլ տեղը արմատական բառարանն է: Միայն այն բանից հետո, երբ մի այդպիսին կստեղծվի, երբ հայերենի արմատներն ու ածանցները կընդունվեն և կուսումնասիրվեն, կարելի կլինի այս լեզուն հաջողությամբ ստուգաբանորեն ուսումնասիրել: Հեղինակը

միանգամայն ի վիճակի է հայերենի արմատների և ածանցների մի բառարան կազմել, դրանով նա գիտությանը ավելի մեծ ծառայություն մատուցած կլինի, քան բոլոր հայկականքներով, որոնք նա առաջաբանում խստորեն է իրականացրել: Գրքի ձևավորումը գերազանց է: Բուն նրանց կիրառության մեջ բացարձակ շքեղություն է օգտագործվել:

Հ. Հյուբշման

Հ ա յ կ ա կ ա ն ք

Ա) Քանի որ հայերենում *e-ն* *ea-ի* հետ ճիշտ այնպես է հերթագայվում, ինչպես *i-ն* *é-ի*, իսկ *u-ն* *oi-ի* հետ, ապա ելնելով ֆրանսերենից, հանգել են այն մտքին, որ *ea-ն* որպես *e-ի* աստիճանավորում պետք է ընկալել, ինչպես *é-ն* և *oi (ai)-ն*, իսկապես, *i-ի* և *u-ի* աստիճանավորումներն են: Սակայն *e-ն* հայերենում ճիշտ այնպես, ինչպես հունարենում *a-ի* ճեղքումով է առաջացել, և նույնը ոչ այնքան կարևոր է հայերենի, ինչպես նաև հունարենի համար, թե ինչպես կարող էր աստիճանավորվել *ea-ի*: Բանը բոլորովին այլ է: *ea-ն* *e-ի* աստիճանավորումը չէ, այլ *e-ն* *ea-ի* թուլացման արդյունքն էր:

ea-ն հաճախ հանդիպում է *i-ով* ավարտվող գոյականների և ածականների թեքման մեջ, օր.՝ *bareav-ը*՝ *bari* բառի գործիականը, *teleav-ը* որպես *teji* բառի գործիականը: Այստեղ *ea-ն* հավանաբար կանգնած է *ya-ի* դիմաց, որն ուղղական հոլովում սեղմվում է *i-ի*, այնպես որ *bari-ի* հիմքը *barya-ն* է, *teji -ի* հիմքը՝ *tejya-ն*: Այս *ea-ն* պահպանվում է, քանի դեռ այն բառի վերջածանցում է կանգնած և դրանով իսկ շեշտակիր է, երբ սակայն նոր վանկեր են հավելվում, *ea-ն* դրանով կորցնում է իր շեշտը և տալիս է *e*, ինչպես հունարենում *é-ն* *i* է տալիս, իսկ *oi-ն*՝ *u*: Այսպիսով, *bari-ից* ստեղծվում է *baxt*, ոչ թե այնպիսի բարդություններում, ինչպիսիք են *bari-a-baxt* կամ *bareabaxt*, այլ *barebáxt*, *agi* բառից *+a-vor (=a + bhara)* ոչ թե *agiavor=ageavor*, այլ՝ *agevór* «պոչավոր», *ordi* «որդի» բառից *+ak* վերջածանցը՝ *ordeák* «որդեակ», սեռ. *ordeki*: Այսպես՝ *tér¹* «տէր», սեռ. *teárn*, սակայն գործ. *terámb*; *keákh* «կեանք», սեռ. *kenáz*, *leárn* «լեանք», սեռ. *lerin*, գործ. *leramb*: Այս *ea-ն* որոշ դեպքերում նաև որպես *é* է տալիս, սակայն այդ *é-ն*, երբ անշեշտ է մնում, *i-ից* աստիճանավորված *é-ի* նման *i* չի տալիս, այլ թուլանում է *e-ի*, օր.՝ *amêñ=amean*, սեռ.՝ *ameni*: Մեր *ea-ն* բերված դեպքերում առաջացել է կամ առաջնային *ya-ից*, կամ երկրորդային *ia-ից*: Կարող է, սակայն, այլ ծագում ունենալ: Այսպես, օր. *keankh-ը* կարող է *kevan-ի* միջոցով *kivan-ից* ծագած լինել = սնս. *jivana*; *dziun* «ձյուն», սեռ. *dzean* < *dzivan* (< *dziman*, նախն. *gh'iman* կամ՝ *ghéman*, սնս. *heman*) առաջացած լինել. *dzivan* ուղղ. դառնում է *dzivn-dziun*, սեռ. *dziván(-ah)* տալիս է *dziván= dzian=dzean*; *nearđ*, սեռ. *nerdi* գալիս է *snevart=սնս. snâvan*, զենդ. *snâvare*; *aheak*, սեռ. *aheki* «ծախս» գալիս է նախն. *savya-ka*, հակառակը՝ *leard*, սեռ. *lerdi* < *yekart*, սնս. *yakrt*, զենդ. *yâkare*:

¹ *tér-ը* պետք է առաջացած լինի *té+air=մարդ*, ինչպես *tikin-ը* < *té + kin*, բայց ոչ < *ti-kin*, որովհետև նրանք այդպես չեն, ապա այն պետք է *tkin* տար:

Վերջին դեպքում k-ն սղվել է, առաջին դեպքում՝ v-ն: v-ի նույնպիսի սղում մենք գտնում ենք՝ alber «աղբյուր», սեռ. albeur -ից = նախն. albever <bhrever=φρῆαζ, ուղղականը ծագել է albever-ից. albévr= albeúr կամ albiúr, սեռ. albevér (=ah)-ից. albevér = albé: Նույն ձևով կարող է նաև thiun վերացական ածանցը, սեռ. thean, բաց. thené, նախն. tivan-ից բխեցնել, iun վերջածանցը, սեռ. ean, բխեցնել -ivan-ից: Եզրակացությունը, որին մենք հանգեցինք՝ այնտեղ, որտեղ ea-ն և e-ն իրար կողքի են հանդիպում, ea-ն նախնական ձևն է, այն կարևոր է բարդ կատարյալի բացատրության համար: Եթե մենք sired (<sér-el) բայի կատարյալում գտնում ենք՝ 1-ին դ. sirezi, 2-րդ դ. sirezer, սակայն 3-րդ դ. sireaz, ապա մենք պետք է 3-րդ դեմքի ea-ի բացատրության համար ենթադրենք, որ sirezi-ն ծագել է sireazi -ից, իսկ sirezér-ը < sireazér -ից: Քանի որ այն, որ sireaz-ին շեշտի ազդեցությամբ sirez-ից չի առաջացել, ապացուցում են աորիստի ձևերը՝ 3-րդ դ. ebék, ekér, egit: Շեշտը հայերենում առհասարակ ոչ մի ձայնավոր չի աստիճանավորում, այն միայն պահպանում է աստիճանավորվածները, հմմտ. élúits < lútsanél < *luitsanel, e3úiz < zútsané! < *zúizanel, anéts anítsanél-ից < *anétsanel: Եթե սակայն sirezi -ին sireazi -ից է ծագում, ապա պետք է որ նաև կրավորական sirezay-ը sireazá y-ից ծագած լինի, և մենք պետք է ենթադրենք այն բայերը, որոնք ներկայի հիմքում e ունեն, որ կատարյալի հիմքը ea3 վերջածանցի միջոցով է կազմվում (ներկա՝ sir-e-m, կատարյալ՝ sir-eaz-i):

Բ) Այն կարծիքը, որ հայերենը իբր իրանական լեզու է, առաջին հերթին այնտեղից է գալիս, որ պարսկերենից փոխառնված բազմաթիվ բառեր ընկալվել են որպես բնիկ բառեր: Ես իմ «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում» հոդվածի մեջ (Zeitschr. XXIII, 1 heft) նշել եմ նման փոխառյալ բառերի առկայությունը և, որպես այդպիսին, շեշտել եմ առաջին հերթին հետևյալ բառերը՝ akah, ambox, azat, asp- (asparéz-ի համար «ձիարշավարան», հմմտ. հետին թվով նպր. asp-réz), crag, cank-cang, cašel, cašakel, capuk, carp, dast- (dastak, dastakert), dev, den, dipak, dašn, gah, gavazan, hrasax, hraman, hreštak, kerpas, patgam, patmucan, phartham, phuršiš, phil, razm, rah, rocik, thošak, thuthak, vcar-, xarazan, yazel, yašt, zrah, zen-ul, zéndan:

Հոդվածում բերված մնացած հայերեն բառերի թվում Նյուդեքեն (նամակներում ուղարկված տեղեկություններում) հակված է որպես փոխառություն դիտելու, անշուշտ իրավացիորեն, նաև այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ band, bant «բանտ», aržani «արժանի», vnas «վնաս», որոնք անցնում են որպես պարսկական փոխառություններ և zuig որպես հունական փոխառություն = ζεύγος, որը մտել է գրեթե բոլոր արամեական բարբառները: Թե արդյո՞ք Նյուդեքեն իրավացի է նաև bazuk «բազուկ» և seav «սև» բառերը

նույնպես որպես փոխառյալ կասկածելու, ես չեմ համարձակվում վճռականորեն որոշել: Ընդհակառակը, ես այլևս չեմ տատանվում որպես փոխառություններ դիտելու և դրանց թվին դասելու նաև հետևյալ բառերը¹:

axt «ախտ, հիվանդություն», զենդ. axti, aspar «ասպար, վահան», նպր. ispar, altharkh կամ axtarkh «հորոսկոպ, բարի կանխագուշակություն», apax-tarkh «վատ կանխագուշակություն», պր. axtar, զենդ. apâxtara. ašakert, պր. šâgird (նաև՝ մանդայերենում). bžišk, պր. bijišk կամ bizišk, bambišn «բամբիշ, թագուհի», պիլ. banbišn, bambak, պր. panbah, brindz, պր. birinj (որպես հունական փոխառություն = oriz); biur «բյուր, տասը հազար», զենդ. baêvare . baxt, պր. baxt . bagin «կուրքերի զոհասեղան», թերևս bag «աստված» հատուկ ամունների մեջ, զենդ. baya, հմմտ. իմ աշխատությունը «Zur Geschichte Armeniens und der ersten kriege der Araber» էջ 28, ծմթ. 5 և տե՛ս, որ նախն. bhaga հայերենում, համաձայն հնչյունական օրենքների, bak-պետք է տար. bazê, պր. bâz . dirt (արդի) «մրուր», պր. durd . dm-ak («ոչխարի պոչ»), պիլ. dumbak . dpir, պիլ. dapir, պր. dabir . dsrov կամ drsov «կշռամբանք, պարսավանք» (իրաներենում պետք է որ հնչի dušsravah, հմմտ. Xosrov «հատուկ անուն» = իրան. husravah, sravah-ի համար, սակայն ունի հայ. lu-ն husravah-ի դիմաց, hlu «հլու, հնազանդ», իմաստով . dat, «դատարան», պր. dâd, ավելի վաղ ձևը՝ dât . dašt «դաշտ», նպր. dašt (նաև ասորերեն և մանդայերեն) . darman «դեղ, դարման» պր. darmân (նաև՝ ասորերեն) . dehkan «մի գավառի գավառապետ», պր. dihqân, dahadram «10 դրամ», պր. dah diram, հայ. tasndramean . drôš, պր. dirafš կամ diraus (նաև մանդայերենում «խաչ» իմաստով) . draxt (drast) «պարտեզ», պր. diraxt «ծառ» . džvar, պր. dušvâr, հմմտ. հայ. thšvar՝ «դժբախտ» . gohar, պր. gohar . gomêš, պր. gâvmêš . gandz, նպր. ganj (հմմտ. Nöldeke, Mand. gramm. էջ 51, 3-րդ պարբերություն և ծմթ. 1) . hazar, նպր. hazâr . khên «աստվություն, վրեժ», պր. kin. kheš «կեղծ հավատք», պր. kêš . únú, նպր. môm . marz «երկիր, մարզ», պր. marz, այստեղից՝ marzpan=նպր. marzbân, պիլ. marzpan . nizak . պիլ. nizak (նաև՝ ասորերեն) . nkar, պր. nigâr . nkun, պիլ. nikún . nšan, պր. nišân (նաև՝ ասորերեն և մանդայերեն). noxaz, պր. nuhâz . navasard «il primo mese del calendario Armeno, նոր տարի» (հմմտ. νέος σα΄ρδης Joh. Lydus-ի մոտ, de Mensibus III, ed. Bekker, էջ 39, հայերենում նշանակում է «նոր» nor) . nâmak, պր. nâmah . patker, հպր. patikara (հայերեն շատ բարբառներում) . paštpan, պր. puštân . paiman, պր. paimân . paikhar, պր. paikâr, պիլ. patkâr . paterazm = pati+ սր. razm. partak «պարտակ, շղարշ», պր. pardah . smbak «սմբակ», պր. sum, sunb . spitak,

¹ Այստեղ արամեերենից բերվող նշումները վերցված են Նյուդեքից:

պրս. sipéd (նաև՝ վրացերեն) . štap, պրս. štap . tacar «տուն, տաճար», պրս. tacar. taxtak, պրս. taxtah (նաև՝ քամ.) . tohm «տոհմ, ընտանիք, սերունդ», պրս. tuxm (նաև՝ արամեերեն) . uxt, զենդ. uxti (vac-ից «խոսել», vac-ը, սակայն, հայերենում goch) . vstah «վստահ, խիզախ», պրս. gustâx, պազ. vastâx . xam «անփորձ, խամ», պրս. xâm «հում, ամուշակ» . xarbutz, հայ. êšaitseamn «փշայծրամ» . xrat, պրս. xirad . zoh, զենդ. zaoθra. zean «զիան, վնաս» = պրս. ziyân (նաև՝ մանդայերենում և քալմուդերենում) . zên «զենք», զենդ. zaêna (նաև՝ ասորերեն) . zôr «զորք, ուժ», պրս. zôr «ուժ»:

Հավանաբար փոխառություններ են նաև՝ andam, պրս. andâm . angam, պրս. angâm . barak, պրս. bârik . erak, պրս. rag . eramak, պիլ. ramak (նաև՝ ասորերեն և եբրայերեն) . erang, պրս. rang . naz-il «պարծենալ», պրս. nâz-idan . neng, պրս. nang «անոթ» (?) . uš «հուշ, դատողություն», զենդ. uši (?): Կարելի էր երևի, եթե ոչ օրենք, գոնե կանոն սահմանել, որ հայերեն այն բառերը, որոնք համապատասխան պարսկերեն բառի հետ համընկնում են, դիտվեն որպես փոխառություն, ըստ այդմ կարելի է իմ վերը նշված բոլոր աշխատությունները ճշտել, հայերենը իրաներենից սահմանազատելու համար, քան ես այդ արել եմ:

Բացի այս փոխառություններից, կան նաև այլ հանգամանքներ, որոնք պատճառ են դառնում պնդելու, որ հայերենը իրանական լեզու է: Այսպես, օրինակ, հայերի կողմից որդեգրված պարսկական անձնանունները, ինչպես՝ Varaz, Zarasp, Artavan, Artavazd, Xosrov և Xosroviduxt (նաև՝ Ormazduxt, Որմիզդի դուստր), Aršak=հայր. Aršaka, Artašēs, Varazdat, Mihrdat, Trdat, Manacirh= պրս. Minôcirh (*հմմտ.* պարթևական արքայանունը՝ Mnaskiras, ըստ հունական ավանդության), Šavarš= զենդ. Syâvaršâna, պիլ. Syâvaxš, Valarš=Vologeses, ասոր. Valgeš (ZDMG. 28, էջ 95), հավանաբար նաև՝ Valaxš? Այդպիսին է նաև հայ հին պատմիչների կողմից բերվող նյութը, որի ընթերցմամբ մենք սովորաբար սկսում ենք հայերենի ուսումնասիրությունները, քանի որ նրանք պատմում են պարսկական առասպելներ (R'ostom-ի և Hruden-ի, Biurasp և Azdahak-ի մասին ևն)՝ վկայակոչելով պարսկական արքաների, նախարարների և զորավարների, Պարսկաստանի գավառների և քաղաքների անուններ, որոնք նրանք անվանում են յուրաքանչյուր էջի վրա, և եթե մենք նրանց հարցնում ենք հին հայկական աստվածությունների մասին, նրանք մեզ անվանում են այստեղ ամենատարածված աստվածներ Արամազդի և Անահիտի անունները, պարսկական աստվածությունների, ինչպես այդ նաև Ստրաբոնն է հաստատում, որ նրանք ունեն պարսիկների բոլոր պաշտամունքները: Այս բոլորը հայերենին տալիս էր պարսկական կոլորիտ, որոնցով մենք մեզ իրավունք էինք վերապահում սխալ ճանապարհով առաջնորդվել, լեզվի բնույթի մասին սխալ դատել: Եթե

հայերը չլինեին պարսիկների հարևանները և չլրեին պարսկական ազդեցությունը, ապա հազիվ թե որևէ մեկի մտքով անցներ նրանց մեջ իրանցիներ փնտրել:

Գ) Այն բանից հետո, երբ մենք նախապես ապացուցեցինք հայերենի և եվրոպականի համապատասխանությունները ամենակարևոր կետերում, այժմ մենք այստեղ լրացուցիչ տվյալներ կբերենք այս երկու լեզուների համեմատաբար ավելի քիչ կարևոր կետերում ունեցած համապատասխանությունների մասին:

ա) **Չայնավորներ մեջ:** a-ից առաջացած e-ն, եթե այն կորցնում է իր շեշտը, կարող է սղվել, ինչպես, օր.՝ vták «գետակ», get-ի կողքին, ástl, սեռ. ástél: Նույնն է տեղի ունենում նաև հունարենի e-ի հետ՝ γίγνομαι, πίπτω (արմատը՝ γεν, πετ), մինչդեռ a և q հնչյունները երկու լեզվում էլ պահպանվում են: Նույն e-ն հայերենում ռնգայիններից և կրկնակ բաղաձայններից առաջ, հունարենը՝ կրկնակ բաղաձայններից առաջ, տալիս է i, *հմմտ.* հայ. hing¹, sirt, հուն. κίρ-νι-μῖ, πικνω, ἴσθι (արմատը՝ εσ) (Curtius, Grundzüge, էջ 701): Համապատասխանորեն հայերենում և հունարենում առանձին դեպքերում a-ն o-ի միջոցով u է տալիս, *հմմտ.* հայ. sun=հուն. κοιντα տասնավոր թվականների մեջ, us «ուս» oms-ից² m-ի կորստով, ինչպես mis=memsa բառի մեջ, հուն. ὠμοσ, սնս. āhsa և Curtius, Grundzüge, էջ 704: o-ի առկայությունը հայերենում, ինչպես նաև եվրոպական լեզուներում թերևս պայմանավորվում է շրջապատող բաղաձայններով: Այդ o-ի համար մենք արդեն մինչև այս ենք օրինակներ բերել, այժմ շարունակում ենք՝ nor=novus, a-vor (բառաբարդման մեջ որպես հողակալ՝ a+vor=bhara)=φορος³ (մինչդեռ φέρω=ber-e-m) . hot «հոտ, բուրմունք»=odor, հուն. ὀδω-δα (hot-ի h-ն պետք է որ օրգանական չլինի ոչ մի դեպքում, hot-ը= զենդ. baoda, քանի որ այն հայերենում պետք է boid (buid)-ով ներկայացված լիներ):

Հունարենի սնան հայերենն էլ է հայտնի ձայնավորների նախահավելմամբ՝ astl = ἄστῆρ, a-ta-mn = ὀδοός, a-rag, e-rag «արագ» = սնս. rag-hu ἐλαχός, erang, սնս. rañga . ortsal (o-ruts-al-ից) = ἐρεύγ-εσθαι: Հայերենը, ընդհանրապես, յուրաքանչյուր բառասկզբնային r, r, ! -ի նախահավելել է a, e, o; Միայն l -ն է կանգնում (այն էլ հաճախ) բառասկզբում:

¹ Հմմտ. quinque.

² Հիմքը՝ omso, ինչպես gr̥ko-ital. -ու:

³ Օր.՝ lus-a-vor, հուն. λευκοφορος և նախնական raucabhara -ից: Ավելի ուշ շրջանի բարդությունները կազմված են luis և berel բաղադրիչներից, lus-a-ber «դուստիրի», որի b-ն պահպանվում է, որովհետև ber-ը ընկալվում է որպես berel-ից եկող ձև: Այդ a-vor-ին է ber-ին է վերաբերում նաև մակբայակերտ bar=նախն. bhára վերջածանցը: bar-ը ցույց է տալիս «ձև, եղանակ» azat-a-bar, bn-a-bar, ar-iuts-a -bar. *հմմտ.* գերմ. bar (*barya), օր.՝ wunder-bar, schein-bar:

բ) **Քաղաձայնների համակարգում:** Այստեղ հայերենը համընկնում է հունարենի հետ *v, y* և *s* հնչյունների նկատմամբ իր ունեցած հակակրանքով: Այս հնչյունների հայերենում ունեցած ճակատագիրը հայտնի է: Հայերենում *v*-ն բառասկզբում պահպանվում է կամ *g* է տալիս (պարսկերենում այն *b* կամ *g* է տալիս), բառամիջում միաժամանակ կարող է պահպանվել կամ *g* տալ, երբ այն ձայնավորի չի վերածվում կամ լիովին անհայտանում է, մի բան, որ ավելի հաճախ է տեղի ունենում: *s*-ն այնտեղ, որտեղ պաշտպանված չէ բաղաձայններով, *h* է տվել կամ լիովին սղվել է, մինչդեռ *y*-ն *dz* կամ *l* է տվել, *ya*-ն *i* կամ *ea*:

գ) **Հիմքերի կազմության ասպարեզում:** Հիմքի կազմության ասպարեզում հայերենը մի կարևոր կետում, որը ես նշել եմ դեռ նախկինում, համընկնում է եվրոպական լեզուների հետ (հունա-լատիներեն- սլավոներեն): Նախնական *a* հիմքերն այստեղ, ինչպես և այնտեղ, առանց բացառության *o* հիմքեր են դարձել: Հմմտ. *mardo* = *βροτο-*, նախն. *marta*: Ազգակցական անունների *-tar* վերջածանցը ևս հայերենում, ինչպես և հունարենում *ter* է տվել:

դ) **Հոլովման մեջ:** Եթե հունարենի *phi* հոլովական ածանցը գործիական հոլովի ածանցն է, նախն. *bhi* ածանցից, որն իմ կարծիքով հնարավոր չէ հաստատել, ապա հայերենը գործիական հոլովի կազմության հարցում (*b*=նախն. *bhi*) համընկնում է սլավոնալիտական լեզուների և հունարենի հետ, մինչդեռ մնացած հնդեվրոպական լեզուներին գործիական հոլովի կազմության այս ձևը հայտնի չէ:

ե) **Խոնարհման մեջ:** Հայերենն ու եվրոպական լեզուները կիսում են ներկայի հիմքը կազմելիս *-a* վերջածանցի *e*-ի անցման ունակությունը՝ *ber-e*=*φερε-ε*, սնս. *bhara*: Ընդհանուր է նաև հայերենում և հունարենում ներկայի հիմք կազմող *ane* վերջածանցը¹, *hմմտ.* *δα ρθ*=*ανε-*, *ανδ-ανε-*, *λα μβ-ανε-* ձևերը հայերենի ներկայի հետ՝ *ōts-aniem*=սնս. *anajmi*, *gt-aniem* (= *git-ane-m*) = սնս. *vindāmi* (սակայն՝ *git-em*-ը գալիս է *get-em*=սնս. *veda*), *lkh-ane-m* (< *likh-ane-m*-ից)= *λιμπάνω*, սնս. *riṇacmi*, *bek-ane-m* = սնս. *bhanajmi*, *ἄγνυμι*, նաև՝ *mer-anim* «մեռնում եմ», *morior*, *hatanem*, *harz-aniem*, *hets-aniem*, *stelts-aniem*, և շատ ուրիշներ:

Եվ հակառակը՝ *bek-t-el* «լիովին փշրել» (*bek-ane-l* ձևի կողքին), *khak-t-el* (ավերել, ամայացնել) (*khak-el*-ի կողքին) ձևերը հակված չենք դիտելու որպես հունալատինական *t*-ով կազմվող (տսւթ-տ-ւթ) ներկայի համանմանություն, որովհետև *bek-t-el*-ը ածանցված է *bek-ut* ածականից, իսկ *khak-t-el*-ը՝ *khak-ut* ածականից:

Ի վերջո, հարկ է ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ հայ. *hair* բառը

hayer-ից, որպես նախնական ձև ենթադրել է տալիս *pater*-ը: *Pater*-ը, սակայն, եվրոպական այն նախնական ձևն է, որի արիական ձևը, ինչպես այդ Ֆիքի բառարանում է վկայակոչվում (*Fick, Wörterbuch II, էջ 799*), եղել է *pitā* և, այսպիսով, այս ձևում ևս հայերենը վճռականորեն կանգնում է եվրոպական լեզուների կողքին:

Եթե անգամ այս առանձին կետերը ոչինչ չեն ապացուցում հայերենի եվրոպական լեզուների հետ մոտ ազգակցության մասին, ապա չէ՞ որ համաձայն այն բոլորի, ինչ ես հայերենի մասին մինչ այդ վկայակոչել եմ որպես ապացույց, բավական են, որպեսզի այն կարծիքը, որը ես նախկինում կրում էի Ֆր. Մյուլլերի հետ, որ այս լեզուն պետք է իրանական լեզուների թվին դասել, դիտվի որպես սխալ և վճռականորեն հրաժարվել նրանից:

Հայերենը, անկասկած, հնդեվրոպական լեզվական մասի մի ինքնուրույն ճյուղ է և ապագայում չի կարելի, ինչպես այդ մինչ այժմ է արվել, հնդեվրոպական լեզուների դասակարգման և նրանց ազգակցական հարաբերությունների ուսումնասիրման ժամանակ այդ փաստը շրջանցել:

Լայպցիգ

Հ. Հյուբշման

¹ Հմմտ. *Gustav Meyer «Die mit nasalen gebildeten praesensstämme des griechischen»*, էջ 102:

Պոլ դը Լազարդ
ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(1877)

Քանի որ Լազարդի հայերենին նվիրված նախկին մի քանի աշխատությունները արժանի ուշադրության և ճանաչման չարժանացան, որին նրանք միանգամայն արժանի էին, Լազարդը, որպեսզի այդ ճանաչումը ձեռք բերի, գրեց իր «Armenische Studien» ուսումնասիրությունը, որտեղ նա հավաքեց հայերեն այն բոլոր բառերը, որոնք մինչ այդ փորձել էին ստուգաբանորեն վերծանել (մոտավորապես 2000 բառ)՝ նրանց կողքին տրվող բացատրություններով և հաշվարկներով, որ 1726 «հավանաբար ճիշտ» ստուգաբանություններից 1224-ը իրենն են: Ինչպես էլ վերաբերվելու լինեն այդ հաշվարկի նկատմամբ, համեմայն դեպս հաստատ է մի բան, որ Լազարդը հայկական ստուգաբանությունների ասպարեզում մեծ վաստակ ունի: Հաստատ է նաև, որ նրա անունը Ֆր. Մյուլլերի աշխատություններում արժանի ճանաչում չի գտել, ինչպես նաև հողվածագիրս ավելի ուշ գրված հողվածներում, քանի որ նա միայն Էվալդի մահից հետո նրա գրադարանից ձեռք բերեց և ծանոթացավ «P. Boetticher's Arica (1851)» աշխատությանը և անանուն մի հողվածին (Zur Urgeschichte der Armenier, 1854- հայերի նախապատմության մասին), երկուսն էլ Լազարդի գրչին պատկանող: Երկու աշխատությունների արժեքն էլ հողվածագիրս, բնականաբար հետին թվով, բայց հաճույքով է ընդունում, սակայն այդ, իհարկե, նրանից անկախ է եղել: Եթե անգամ «Armenische Studien»-ը վերստին ապացուցում է Լազարդի գործիմացությունն ու աշխատունակությունը, սակայն նրանք միաժամանակ ցույց են տալիս նաև նրա վաղ շրջանի ուսումնասիրությունների սովորոտ կողմերը, նրա՝ բանավեճի մեծամիտ և մերժող տոնը իր ընկերակից գիտնականների նկատմամբ, սեփական նվաճումների փառաբանմամբ, որոնց համար նա ակնկալում է հասարակական շնորհակալություն (792), առաջնության ծարավի անհագություն, որով անհատի հետաքրքրությունը միշտ գործից վեր է դասում, այն հաստատ հավատը, որ ուրիշներին ոչ այլ ինչ է հետաքրքրում, քան եթե հեղինակին հալածելն ու մեռելային լուծյան մատնելը կամ նրա ունեցվածքը թալանելը: Թվում է, թե նա պահանջում է, որ յուրաքանչյուր քայլափոխում իրեն վկայակոչեն, նրա յուրաքանչյուր խոսքը, որը նա երբևէ ինչ-որ մի տեղ արտասանել է, անգամ այն դեպքում, երբ տվյալ միտքը վաղուց արդեն գիտության սեփականությունն է դարձել կամ ինքնըստինքյան հասկանալի է: Եթե այդ չեն անում, ապա նրանք գրագողեր են, գլուխները ուր ուզում են՝ թող տան: Երբ, սակայն, Լազարդը էջ 91-ում

տրվող ծանոթագրություններում զենդ. xāšar և xāša բառերն այնպես է վերծանում, ինչպես այդտեղ չիշատակված հողվածագիրն իր հողվածում՝ «Ein Zor. Lied», էջ 76 (1872), ապա պատահականությունն է ցանկացել մի տարօրինակ խաղ խաղալ, նրանով, որ հողվածագիրն այդ բացատրությունն ավելի շուտ է տվել, քան Լազարդը, հակառակ պարագայում ոչ մի կասկած չկա, որ հողվածագիրը Լազարդին թալանած և նրա անունը չարամտորեն մոռացած կլիներ: Լազարդը նաև կողմնակալ է իր և ուրիշների սխալները քննարկելիս: Ընկերակից հետազոտողը մի հասարակ կամ լուրջ սխալի դեպքում անողորմ խստությամբ (սակայն ոչ առանց Լազարդի չարախնդրության) անարգանքի սյանն է զամվում: Եվ այդ սխալից կատարվում են չափազանց հեռու գնացող հետևություններ: Մեփական սխալները Լազարդը ներողամտորեն ներում է՝ համարելով դրանք անուշադրություն կամ տպագրական սխալներ: Բայց ի՞նչ կարգի սխալներ չի թույլ տվել նա ինքը: Այսօր ո՞վ, եթե ոչ Լազարդը (N 1050) լատիներեն hirundo-ն և hirudo-ն «ծիծեռնակ», շփոթության պատճառով, կզուգադրեր պարսկերեն «տզրուկի» հետ, և այնուհետև իրավունք կունենար պահանջելու, որ որևէ մեկին իրավունք չի վերապահվում Լազարդի հետ վիճելու: Տրամաբանորեն նաև անուշադրության են մատնվել Լազարդի ավելի վաղ շրջանի աշխատությունները, որոնք չէ՞ որ անմասն չեն մնացել երիտասարդ համեմատական լեզվաբանությանը հատուկ բոլոր թերություններից, սակայն որոնք հաճույքով, մասամբ իրավացիորեն, խարազանում է Լազարդը: Մեր հեղինակը, սակայն, չի ցանկանում հետևություններ անել: Մենք նրա հետ համամիտ ենք, սակայն նա պետք է արդարամիտ լինի նաև ուրիշների նկատմամբ: Անշուշտ, այդ կարգի թերություններից և սխալներից հեռու է մնացել «Armenische Studien» աշխատությունը, սակայն նրա հեղինակը համեմայն դեպս անսխալական չէ: Դիշտ է՝ հայերենի և նոր պարսկերենի ասպարեզում նա հազվադեպ կսխալվի, սակայն երբ խոսքը վերաբերում է արիական կամ ընդհանուր հնդեվրոպական լեզուներին, նա այնպիսի թերի դատողություններ է կատարում, որոնք չի կարելի արդարացնել ոչ նրա վերաբերմունքով դեպի «համեմատական» լեզվաբանությունը, ո՛չ էլ նրա՝ նոր լեզվաբանությանը քաջատեղյակությամբ: «Ասիական միություն» հասկացողությունը, որը մյուսների մոտ նա անհետ կորած է համարում, նրան ևս բոլորովին օտար է (հին պարսկական ձեռագրերից և հայկական ավետարանից չէր կարելի այդ ձեռք բերել): Հայերենի բնույթի մասին նա մինչև օրս միանգամայն սխալ է դատում, իսկ արիական և եվրոպական լեզուների հարաբերությունների մասին բոլորովին գաղափար չունի: Չարմանալի չէ, որ հայերենի հարաբերությունների մասին արիերենի և եվրոպական լեզուների նկատմամբ հետազոտությունները նրան մատչելի չեն, հետևաբար նա այդ

մասին չի կարող դատել: Առանձին բացատրությունների քննարկմանը մենք կանդրադառնանք մեկ այլ տեղում: Այստեղ մենք կքննարկենք միայն հետևյալը՝ *gavazan* (462) բառը ի սկզբանե նշանակում է ճիպոտ, որը ծառայում է խոշոր եղջերավոր անասուններին քշելու և դեկավարելու համար և ոչ թե կովեր ծեծելու մտրակ, ուստի և այն պետք է սահմանազատվի սնս. *gōhan-ից* (կով սպանող) և կապվի սնս. *gō-ajana, gavajana* բառերի հետ (սնս. *danda* «զավազան»): Բնիկ հայերենը պետք է լիներ *kovatsan*, իսկ «կովի զավազան»-ի համար *kovagan*:

Արդյո՞ք այժմ հեղինակը հասկանում է հողվածագրի տրամաբանությունը: *darap̄p̄el-ի* (588) փոխարեն պետք է գրել *darip̄p̄el* (*hūmūn. Lexikon*): *dsrov* ածականը (663) հողվածագրի կողմից իրավացիորեն ճանաչվել է որպես պարսկական փոխառություն, *Mainyo-i-khard*-ում հանդիպում է *dusrūb*, հնչում է *dusrov*: *Thšuaq* (դժբախտ) պետք է *džuar-ից* (դժվար) սահմանազատել թե՛ ըստ իմաստի և թե՛ ըստ արտասանության: *Dašti* «*campestre*» (570) հանդիպում է Մխիթարյանների մեծ բառարանում: Ջախջախեսանը *dašt-ի* տակ տալիս է *dašti* կամ *daštaz*: Մեծ բառարանը հիշատակում է Փիլոնի այն հատվածը, որտեղ այն հանդիպում է, և հայցական «z»-ն Ջախջախեսանը բացատրում է «*zelealsn i dašti*», հետևաբար՝ *dašti*-ն ածական չէ, այլ *dašt-ի* սեռական-տրականն է: «Արիական» *pitara*-ը «հայր» (1231), հակառակ *Լազարդի*, պահպանվում է:

Ավելի լավ խորհուրդ, քան Բուռնոֆից և Վուլերից, *Լազարդը* կարող էր ստանալ հողվածագրիցս, տե՛ս *Fick*, «*Wörterbuch*» II, էջ 799 (միայն թե նշվածը՝ 13, 83 ըստ չափի ոչ թե *pitaca*, այլ *ptaca* պետք է կարդալ): Բայց և այնպես հիմքերը, *Լազարդի* հակաճանաչություններով, տիրակալ խոսքով չեն հերքվում: *Getak* (2162), թերևս կա, Փաւստոս Բուզանդ (1832), էջ 19, տող 8 և հաջ.: *Šavarš-ը* (1688) պետք է որ *v-ի* պատճառով = զենդ. *syāvaršāna*: Ով *v-ն* և *y-ն* չի տարբերակում, կարող է այն համենայն դեպս համադրել հայրս. *xšayārša* -ին: Այն հանգամանքը, որ եբրայական ՄՊՊՄՆ = հայրս. *xšayārša*, *Լազարդին* ոչինչ չի ապացուցում, այդ մասին է բավական համոզիչ երաշխավորում Օյտինգի կողմից հայտնաբերված եգիպտական = արամեական *Xerxes* անունը: Տես «շուն» բառը (1710) *Լազարդը* անջատում է հուն. *κύνων* -ից և դնում է զենդ. *χšapāyaona* (= գիշերաշրջիկ) բառի կողքին, այդպես են կոչվում «շունը և գողը»: Հնչյունական ի՞նչ օրենքների համաձայն կամ ո՞ր ժողովուրդների համար: Ո՞վ չգիտի, որ *tékin-ը* հայերենում պետք է *tikin* տար (2217), նա չի յուրացրել հայերենի ծայնավորների հնչյունական օրենքները: Կամ ո՞վ է դնում հայ. *gal* բառը սնս. *gâ* բառի կողքին (438), կամ *uth-ը* տրոհում է *u-t-h-*-ի և այն բացատրում որպես *okt-ից* եկող (1757), միայն նա, ով չգիտե հայերենի և արիերենի բաղաձայնների ամենապարզ

հնչյունական օրենքները: *Լազարդի* հոչակավոր օրենքը՝ հայ. *h = զենդ. Ծra* (792), ավելի պարզեցված հետևյալ իմաստն ունի՝ պրս. *hr* (= զենդ. *Ծra*), հայերենում կորցնում են որպես բացառություն բառավերջի *r-ն*, *hūmūn. zōhr* (= զենդ. *zaoԾra*) = հայ. *zoh* (փոխառություն): Հայկական ուսումնասիրությունների նրա վաստակը հիմնականում նրանում է կայանում, որ այն մինչ օրս ցրված նյութերը ի մի է բերել, հայտնաբերել է տեղ գտած սխալները և ուղղել դրանք, բառերը մասամբ գրողների միջոցով ապացուցել, փորձել է նրանց իսկական իմաստը հաստատել և շատ հայերեն բառերի միմյանց նկատմամբ ունեցած փոխադարձ կապը պարզել: Հուսով ենք, որ շուտով մենք հնարավորություն կունենաք հեղինակի այս արժեքավոր աշխատությանը մեկ այլ տեղում ավելի հանգամանորեն անդրադառնալ:

Հ. Հ.

Առարկություն

Այն, ինչ ղը *Լազարդն* իր *Symmicta*-ում (Գյոթինգեն, 1880) իմ դեմ գրել է, հիմնականում հերքման և առարկության անհրաժեշտություն չունի և արժանի էլ չի դրան: Միայն, քանի որ մի քանի կետում ընթերցողը կարող է մոլորության մեջ ընկնել, այդ կանխելու համար բերում են հետևյալ բացատրությունները:

«Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում» իմ աշխատության մեջ նշել են այն աղբյուրները, որոնցից ես օգտվել եմ: Նրանց թվում է նաև ղը *Լազարդի* մի աշխատություն՝ «*Deutschen Morgenl. Gesellschaft*» IV, ինչպես նաև նրա հողվածների ժողովածուն, մինչդեռ այնտեղ չեն նշվել և չեն օգտագործվել նրա աշխատություններից երկուսը, որոնք ինձ հայտնի էին միայն իրենց վերնագրերով և այն ժամանակ *Լայպցիգում* իմ ձեռքի տակ չկային: Իմ աշխատության լույս ընծայումից հետո ես պրոֆ. *Լոթից* տեղեկացա, որ Քիլում պրոֆ. Հոֆմանը ասել է, որ *Լազարդն* ինձ սպառնում է, որ ես նրա աշխատությունները պատշաճ չափով ուշադրության չեն արժանացրել: Ես չէի կարող հասկանալ նրա դժգոհության հիմքերը, մինչև որ Էվալդի մահից հետո նրա թողած ժառանգությունը ես չգնեցի և չկարդացի «*Arica*»-ն, 1851 և անանուն հեղինակի «*Zur Ungeschichte der Armenier*» աշխատությունները: Եվ քանի որ վերջինիս մեջ ես որոշ վրիպակների կողքին բազմաթիվ՝ հայկական ճիշտ ստուգաբանություններ գտա, ցավում էի այդ աշխատությունը ճանաչած չլինելուս և

¹ Այժմ ես հաշվարկում եմ մոտավորապես 400 բառ:

այն ըստ արժանվույն չհիշատակելուս համար: Ես այդ անում եմ առավել ևս այն պատճառով, որ Ֆր. Մյուլլերը, ինչքան հիշում եմ, իր անմիջական և վաստակաշատ նախորդին, որին նա, ինչպես ես կարծում էի, ճանաչելիս է եղել, ոչ մի տեղ չի վկայակոչել, և այսպես կարող էր տպավորություն ստեղծվել, որ իբր ես Ֆր. Մյուլլերի հետ համաձայնության գալով՝ միտումնավոր եմ Լագարդի աշխատությունն անտեսել: Նման համաձայնություն, իհարկե, չի եղել: Երբ դրանից անմիջապես հետո լույս տեսավ իմ աշխատությունը՝ «*Ueber Aussprache und Umschreibung des Altarmenischen*»¹, ես մի օրինակ ուղարկեցի Լագարդին, որն ինձ թղթակցությամբ շնորհակալություն հայտնեց և հաղորդեց, որ ուսումնասիրությունը ճիշտ ժամանակին է հրատարակվել, որովհետև նա արդեն սկսել էր տպագրել հայերենի մասին իր բավական ծավալուն աշխատությունը²: Այս առիթը ես օգտագործեցի, որպեսզի Լագարդին տեղեկացնեմ, շատ անհաջող ձևով, այն, ինչ ինձ թելադրում է իմ խիղճը: Ուստի և ես գրեցի, առանց նրա բնավորությունն իմանալու «*Symmicta*» II. 126-127 (առանց իմ թույլտվությանը) տպված նամակը: Այնտեղ ասվում է՝ «Քանի որ ես, պետք է խոստովանեմ, Ձեր մինչ այս հայերենի մասին գրած աշխատություններն ըստ արժանվույն չեմ գնահատել, պատճառը որևէ այլ բան չէ, քան այն, որ ես իմ աշխատությունը (*Ueber die Stellung des Arm. im Kreise der indogerm. Sprachen*) շարադրելիս Ձեր այս աշխատությունը ձեռք բերել չկարողացա: Ձեր հողվածները բուլղարերենի բառապաշարի մասին, որոնք ես մինչ այդ մի անգամ կարդացել էի, չկարողացա ոչ Տոյբների և ոչ էլ իմ գրավաճառի մոտ ձեռք բերել, իսկ Ձեր «*Zur Urgeschichte der Armenier*» և «*Arica*» աշխատությունները ես միայն մի քանի օր առաջ Էվալդի գրադարանից ստացա: Ինձ գրեթե ճակատագրական է թվում, որ «ստուգաբանությունների» մեծ մասը, որոնց հետ Ֆր. Մյուլլերը վարվում էր ինչպես իր սեփականների հետ, արդեն Ձեր «*Urgeschichte*»-ում կային, որ Դուք այնտեղ արդեն նշել եք շատ փոխառություններ, որոնք ես կարծում էի, որ առաջինն եմ նկատել, և որ Դուք այն կարևոր տեղաշարժի օրենքը, որի հայտնաբերողը լինելու զգացումն էր ինձ շոյում, հայտնաբերել էիք արդեն 20³ տարի առաջ: Այս

սխալմունքի պատճառը, սակայն, միայն Ֆր. Մյուլլերն է, որն իր աշխատությունների մեջ, որոնք ես ընթերցել եմ որպես ամենամեծ նորություն, ոչ մի տեղ, ինչպես որ պատշաճ է, իր նախորդի մասին չի վկայում, և նույնիսկ ես չգիտեի, թե արդյո՞ք միտումնավոր այն տպավորությունն է ստեղծում, որ իբր այն, ինչի հետ նա աշխատում է, իր սեփականն է, չնայած նրան, որ ես այժմ արդեն Վինդիշմանի և Չեր աշխատությունները կարդալուց հետո այդ բանը միայն նվազագույն չափով եմ հնարավոր համարում: Այս նկատողություններից հետո ես հուսով եմ, որ եթե Չեր աշխատությունները ո՛չ հիմնովին եմ օգտագործել և ո՛չ էլ վկայակոչել, այդ պատահել է ոչ թե ինչ-որ վատ միտումնավորությամբ, այլ միայն այն պատճառով, որ նրանց մեծ մասը իմ ձեռքի տակ չեմ ունեցել և չեմ կոսահել, որ նրանք իրենցից այդքան մեծ արժեք են ներկայացնում, որպեսզի ես դրանք մեկ այլ գրադարանից բերել տայի: Հուսով եմ, որ իմ թույլ տված սխալը շուտով Չեր աշխատության հայտարարությամբ կքավեմ: Այս նամակի վերջում Լագարդը ինձ խնդրում էր, որ եթե ես իր մասին խոսելու լինեմ, չանդրադառնամ նրա ընտանեկան հարաբերություններին: Այս նամակից չափազանց վրդովված, ես նրան պատասխանեցի բավական խիստ տոնով, որ նա վատագույն դեպքում նշված գրականության իմ անգիտությունը, որպես գիտակցաբար կատարված անարդարության համար, իրավունք չունի ամենաչնչին չափով անգամ ինձ հանդիմանելու և նկասեցի, որ նրա ընտանեկան հարաբերությունների՝ նկատմամբ ես բուլղարվին անտարբեր եմ և, բնականաբար, նրանք գիտական աշխատություններիս մեջ իմ կողմից միանգամայն անձեռնմխելի կմնան: Լագարդն ինձ պատասխանեց հանդիմանություններով՝ նամակիս մեջ օգտագործված իմ լեզվի համար, և հիշատակեց առաջին նամակս, բողոքելով, որ նա ինձ բուլղարվին էլ չի հանդիմանել իրեն հետ գիտակցաբար անարդարացի վարվելու համար: Քանի որ ես այդ, համաձայն նամակի բովանդակության, որպես ճիշտ ընկալեցի և ենթադրեցի, որ իմ առաջին նամակի և Լագարդի նկատմամբ նախկին լռության² սխալ վերծանումը այլևս բացառվում է, ապա երրորդ և վերջին նամակում խոստովանեցի սխալմունքս, արտահայտեցի իմ ավստասանքը տաքարյունությանս համար և ես վերցրեցի իմ սուր բառերը³:

տեղաշարժի օրենքը թերևս կարելի էր կոսահել, սակայն ոչ ապացուցել: Թե ինչ աստիճանի տարբեր է այդ օրենքի իմ սահմանումն ու հիմնավորումը, յուրաքանչյուր ոք հեշտությամբ կարող էր եզրակացնել իմ աշխատությունից:

¹ Թե Լագարդն արդյոք «ընտանեկան հարաբերություններ», թե անձնական գործեր, թե որևէ մեծ մի այլ բան էր օգտագործել, ես այլևս չեմ հիշում:

² Վերը նշված աշխատության մեջ ես նաև հիշատակում եմ դեռ էջ 10-ում, և ապա՝ 37-ում:

³ Ես մեր թղթակցության բովանդակությունը միայն հիշողությամբ եմ նշում, որովհետև դե Լագարդի նամակներն այժմ իմ տրամադրության տակ չունեմ:

¹ Հին հայերենի արտասանությունն ու տառադարձությունը, ZDMG. XXX, էջ 53 և հաջ.:

² Տեքստը ես այլևս չեմ հիշում, որովհետև նմանակն այլևս ձեռքիս տակ չէ:

³ Ես պետք է ասեի գուշակել: *Urgeschichte*, էջ 33-ում նա գրում է «Այնուհանդերձ, պարզ է այնքանը, որ շնչեղ եհ, զհ, ճհ հնչյունները լիովին ձայնեղ պայթյակներ են տվել՝ *b, g, d, և* որ լեզուն սկսելով այն նախնական *b, g, d > p, k, t* տեղաշարժել, այս տեղաշարժը, սակայն, մեր թշվառ ստուգաբանողների կողմից չափազանց մեծ անհարմարությունների պատճառ չդարձավ»: Վերջինս սխալմունք է, որը թույլ է տվել հեղինակը, ինչպես այս 33-34 էջերից պարզ հետևում է, որ հայերենի բնիկ բառերը և պարսկական փոխառություններն ընդհանուր առմամբ նա չի կարողացել միմյանցից տարբերակել: Առանց այս տարբերակման կարողությամբ՝

Այսպես, ուրեմն, ես Լազարոյի «Zur Urgeschichte» աշխատութիւնը չեմ հիշատակել, քանի որ այն չեմ իմացել, և հենց որ ես նրան ծանոթացա, աճապարեցի նրա արժանիքներն առաջին հերթին հեղինակին խոստովանել, որ նա իրեն հատուկ համակումով այդ գործին տեղյակ չլինելը չարականութիւն չհամարի: Որ այս փաստ էր, և որ դրա պատճառով ոչ ոք ինձ չէր կարող նախատել, դը Լազարոյին իմ նամակը միանգամայն պարզորոշ խոստովանել է: Երբ նա ցանկանում էր ինձ իմ մեղքերի համար հանդիմանել, պետք է այդ այն ժամանակ իր նամակում պնդեր և ապացուցեր, որ իմ աշխատութիւնը շարադրելիս իր աշխատութիւններին ծանոթ եմ եղել և, որ այդպիսով, նրանց մասին միտումնավոր եմ լռել. նա նման ոչ մի բան չի ապացուցել, և նման մի ապացույցը սուտ կլինի, և չնայած դրան՝ Լազարոյը իր *Symmicta II, V* հետևյալ նախադասութիւնն է գրում. «Յուրաքանչյուր ազնիվ մարդ կզգա պարոն Հ. Հյուրշմանի նամակից նրա խղճի խայթի տհաճ զգացումը»- նման դիտողութիւններ ոչ ոք չի գրում. եթե ոչ նա, ով իրեն և իր բարեկամներին հանցանքի վրա բռնված է համարում: Ուրեմն, ես չեմ հասկանում, թե ինչպէս բաղդատել այս պնդման բացարձակ կեղծութիւնը և ինչպէս ներել այն: Միգուցե այդ նախադասութիւնը իր ծագմամբ պետք է պարտական լինի «calumniare audacter, semper aliquid haeret»?.

Լազարոյի ուշադրության ներկայացվող աշխատութիւնը լույս տեսավ 1877 թ. «Armenische Studien» խորագրով: Չնայած նա այնտեղ հանգամանորեն խոսում է Ֆր. Մյուլլերի և իմ մասին, սակայն իմ նամակը այնտեղ բոլորովին չի հիշատակում: Ամբողջ գրքում նա փորձում է Ֆր. Մյուլլերին ներկայացնել որպէս գրագող, իսկ ինձ՝ որպէս այդ գրագողի փոխանորդ, որտեղ նրան թվում է, որ որևէ սխալ է գտնում, նա ինձ դրա համար կոպիտ խոսքերով չի հանդիմանում, որը նա կիրառում է իմ որոշ սխալների համար, այլ՝ նուրբ հեզմանքով, որը տվյալ անձնավորութեան շատ ավելի է վիրավորում և ընթերցողի աչքերում ավելի է մտնեցնում: Աշխատության վերջում, էջ 206 ես վերստին մեկ անգամ ևս լիովին եմ ոչնչացվում¹: Սա էր շնորհակալութիւնը իմ նամակի դիմաց:

Գրքի հրապարակումից մի քանի ամիս անց «Literarisches Centralblatt»-ի խմբագրության կողմից ինձ առաջարկվեց գրախոսել այդ աշխատութիւնը, և ես համաձայնվեցի: Սակայն առժամանակ գիրքը մի կողմ դրեցի, քանի որ զբաղված էի այլ աշխատանքով և նաև ցանկանում էի հաղթահարել այն

¹ Այնտեղ իմ աշխատության էջ 37, 75 շոշափված նախադասությանը Լազարոյը, ինչպէս դրանում յուրաքանչյուր ոք կարող է համոզվել, մի այնպիսի միտք է վերագրում, որի հետ նա ոչ մի կապ չունի: Այդ աղավաղումը, սակայն, նրան իրավունք է վերապահում ծաղրելու իմ կողմից արված ճիշտ նկատողութիւնը:

քեզը, որը ես, բնականաբար, տածում էի հեղինակի նկատմամբ: Իր վիրավորական և անարդար վարմունքի պատճառով, գրքի լույս տեսնելուց մոտ մեկ ու կես տարի անց ես կարողացա ավելի հանգամանորեն կարդալ այդ գիրքը և գրեցի այն գրախոսականը, որը լույս տեսավ 1879 թ. հունիսի 28-ին «Centralblatt» համարում: Իհարկե, իմ առաջադրանքն էր գրախոսել «Armenische Studien»-ը և ոչ թե «Urgeschichte der Armenier»-ը: Սակայն այն, ինչ ես մինչ այս բաց էի թողել, այժմ կարող էի և պետք է օգտագործել առիթը, որ գոնե մի քանի խոսքով, գործի շահերից ելնելով, անեի այս, եթե դրանով անգամ դժեղու լինեի «Arm. Studien»-ի հետ կապված իմ խոստումը, ուստի և ես գրեցի՝

«Քանի որ դը Լազարոյի հայերենին նվիրված մի քանի նախկին աշխատութիւններ ուշադրության չարժանացան և արժանի ճանաչում չգտան, Լազարոյը, որպէսզի ստիպի իրեն ըստ արժանվոյն ընդունելու, գրեց իր «Armenische Studien»-ը, որտեղ նա հավաքեց հայերեն բոլոր այն բառերը, (մոտ 2400 բառ), որոնք մինչ այդ փորձել էին ստուգաբանել, նրանց կողքին տրվող պարզաբանումների հետ միասին, և հաշվեց, որ 1726 «հավաքանաբար ճիշտ» ստուգաբանվածներից 1224-ը իրենն են, ինչպէս էլ այս թվական տվյալների նկատմամբ վերաբերվելու լինեն¹, ամփճելի է, որ Լազարոյը հայերենի ստուգաբանութիւնների հարցում մեծ վաստակ ունի:

Հաստատ է նաև, որ նրա անունը Ֆր. Մյուլլերի աշխատութիւններում չի ստացել իր արժանի ճանաչումը, նույնը կարելի է ասել նաև հողավաճագրիս մասին՝ նրա համեմատաբար ուշ գրած աշխատութիւնների հետ կապված,

¹ Այս քայլի պատճառով Լազարոյն ինձ անհիմն է հանդիմանում: Քանի որ ես այդ երկու հաշվարկն էլ չեմ կարող ճիշտ համարել, որովհետև որոշ համադրութիւններ, որոնք ևս ճիշտ պետք է համարեն, ես սխալ եմ համարում և, հակառակը՝ որոշ համադրութիւններ, որոնք նա սխալ է համարում, ես գտնում եմ, որ ճիշտ են: Այն գրախոսականում ես այդ հարցին չէի կարող անդրադառնալ: Բացի այդ, ինձ թվում էր, որ որոշ համադրութիւնների դեպքում Լազարոյի անունը կարող էր ջնջվել: Այսպէս, օր. lazarth (Arm. Stud. 173) բառը մեծ Բառարանում տրվում է որպէս lazivord, Չախջախեսանի մոտ՝ որպէս «օտար բառ», թուրքերեն՝ lajivard, այնպէս որ մեծ բան չէր նրա կողքին նաև այս. «lazeward»-ը ղնել . lakan բառի դիմաց մեծ Բառարանում տրվում է λεκάων, ապա lagān, lāyān. Չախջախեսանի մոտ՝ թուրք. lāyān: lai-ի դիմաց Չախջախեսանը գրում է օտար բառ՝ թուրք. lyal. laškhar բառի դիմաց մեծ Բառարանը գրում է՝ պրկ. lāškar , վրաց. laškari , թուրք. āskar . lapter բառի դիմաց Չախջախեսանը գրում է՝ մեծ Բառարանում հուն. λαμπτήρ. yetkar բառի դիմաց Չախջախեսանը՝ պրկ. yadgyar (այսինքն՝ yādgār) . nacak՝ պրկ. pnak-ի համար մեծ Բառարանում «πινάξ», նաև հավանաբար Շրյոդերի «Thesaurus»: jnarak-ի համար նույնը՝ σαδραξή . sater նույնը՝ στατήρ և այլն, և այլն: Համաձայն իմ կողմից կատարված հաշվարկների՝ ըստ Լազարոյի «Arm. Stud.»-ում հավաքված բառերից ճիշտ ստուգաբանված բառերի քանակը մոտավորապէս 1200 է, դրանց թվում 150-200 բնիկ հայերեն բառեր, 600-700 պարսկական փոխառութիւններ, մոտ 300 բառ՝ էլ՝ փոխառութիւններ ասորերենից, հունարենից և այլն: Իմ հաշվարկների տարբերութիւնների մասին ես տեղեկութիւններ կտամ հետագայում:

քանի որ նա միայն Էվալդի մահից հետո նրա գրադարանից ստացավ և ծանոթացավ Բյուտիխտերի «Arica» (1851) և անստորագիր հեղինակի «Zur Urgeschichte der Armenier» աշխատություններին, երկուսն էլ Լազարոյի գրչին պատկանող: Երկու ուսումնասիրությունների արժեքն էլ հողվածագիրս հետին թվով հաճույքով է ընդունում, սակայն, անշուշտ, այդ նրանից անկախ է եղել:

Ինչ իմ պարտքն էի համարում, ես այն այսպիսով ասացի «Arm. Stud.»-ի հետ կապված, ավելին անելու առիթ չունեի: Սակայն Լազարոյը անպատկանություն է համարում, որ ես Ֆր. Մյուլլերին «գրագող կամ գող» չեմ համարել:

Երբ առաջին նամակը Լազարոյին գրեցի, ենթադրում էի, որ Ֆր. Մյուլլերը Լազարոյի աշխատություններին ծանոթ է և ոչ թե միայն դրանք թուցիկ ընթերցել է, այլ ուղղակիորեն օգտագործել է: Ինձ թվում է, որ նրա գրեթե բոլոր ստուգաբանությունները գալիս են Լազարոյի աշխատություններից, և քանի որ առավել ևս նրա այլ հետազոտությունների արդյունքները այլևս ճիշտ չէի համարում, ես պարսավում էի Մյուլլերի լռությունը և անբարենպաստ էի դատում նրա աշխատությունների մասին: Սակայն կշտամբանքը շտապողական էր, իմ կարծիքն անարդար էր: Քանի որ ես այն ժամանակ ոչ մի ապացույց չունեի այն մասին, որ Ֆր. Մյուլլերը Լազարոյի ուսումնասիրությունները օգտագործել է, և եթե Լազարոյը իր նախորդից՝ Վինդիշմանից անկախ է եղել, իսկ վերջինս իր նախորդ Պետերմանից, նաև Ֆր. Մյուլլերը կարող էր անկախ լինել իր նախորդ դը Լազարոյից: Այնուհետև, եթե ես Ֆր. Մյուլլերի ուսումնասիրությունների արդյունքը ճիշտ չէի համարում, ապա եթե անգամ կանխապես համարեի՞նք, որ իմ կարծիքը ճիշտ է եղել, դա բոլորովին էլ չի նշանակում, որ Ֆր. Մյուլլերի աշխատությունները ոչ մի դեպքում ոչ մի արժեք չեն ներկայացնում, և ես պետք է (այս ամենամեծ արժանիքը համարեմ, որ նա թերևս առաջինն էր, որ հայերենի քերականությունը, հնչյունաբանությունն ու ձևաբանությունը համեմատական տեսանկյունից սխտեմատիկորեն ուսումնասիրեց: Ֆր. Մյուլլերի հանդեպ այն հանդիմանությունն այսպիսով անհիմն է, և ես այսօր շատ եմ ավիստում ժամանակին այլ կարծիք հայտնաձևելու համար:

Միայն «Arm. Stud.»-ից (էջ 201) ես կոահեցի, որ Ֆր. Մյուլլերը մեջբերում է կատարում Բյուտիխտերից (1850-1852 թթ.), սակայն Urgeschichte -ից և ոչ մի տող, որտեղից և կարելի էր հնարավոր համարել, այդ գործը նրան ծանոթ չի եղել, և նա այն չի օգտագործել: Դը Լազարոյը վիճարկում է այդ հնարավորությունը, սակայն որևէ համոզեցուցիչ փաստարկ չի բերում, ինչպես ինձ թվում է, մասնավորապես, երբ ես մակերեսորեն կարդացի նրա չարամիտ, գիտական արժեք չներկայացնող փաստարկումները: Ֆր. Մյուլլերի դեմ

ուղղված նրա դիտողությունները (Armenische Studien, 201), ես վերստին կարդացի և ստուգեցի, և պետք է խոստովանեմ, որ երկուսի սխալն էլ, անշուշտ, պարսկերեն gāvazān բառի վերծանելն է, Ֆր. Մյուլլերի կախյալությունը «Urgeschichte» -ից, մինչև որ Ֆր. Մյուլլերը այս սխալի մեկ այլ աղբյուր¹ կնշեր, քան «Urgeschichte» -ն: Ցանկալի կլիներ, որ Ֆր. Մյուլլերը ինքը լուսաբաներ իր վերաբերմունքը հանդեպ Լազարոյի աշխատությունների, այսինքն՝ նրանցից իր կախյալության աստիճանը և ընդունելի դե Լազարոյի վաստակը: Մյուս կողմից՝ Լազարոյը պետք է «գրագող և գող» բառերն ավելի զգույշ օգտագործի, նա, ով պնդում է, որ ծանոթ չի եղել Վինդիշմանի աշխատություններին, չնայած այդ այդպես չէր: Իմ գրախոսականում այնուհետև ասվում էր՝

Եթե անգամ «Arm. Stud.» վերստին ապացուցում է Լազարոյի գործիմացությունն ու աշխատունակությունը, սակայն նրանք միաժամանակ ցույց են տալիս նաև նրա վաղ շրջանի ուսումնասիրությունների սովորոտ կողմերը, նրա՝ բանավեճի մեծամիտ և մերժողական տոնն իր ընկերակից գիտնականների նկատմամբ, սեփական նվաճումների փառաբանումը, որոնց համար նա հասարակական շնորհակալություն է ակնկալում (N. 792), առաջնության ծարավի անհագություն, որով անհատի հետաքրքրությունը միշտ գործից վեր է դասում, այն հաստատ հավատը, որ ուրիշին ոչ այլ ինչ է հետաքրքրում, քան երբ հեղինակին հալածելն ու նրան մեռելային լռության մատնելը կամ նրա ունեցվածքը թալանելը: Թվում է, թե նա պահանջում է, որ յուրաքանչյուր քայլափոխում վկայակոչեն նրա յուրաքանչյուր խոսքը, որը նա երբևէ ինչ-որ մի տեղ արտահայտել է, անգամ այն դեպքերում, երբ տվյալ միտքը վաղուց արդեն գիտության սեփականությունն է դարձել, կամ՝ ինքնըստինքյան հասկանալի է: Եթե այդ այդպես չէ, ապա նրանք գրագողեր են, զլովներն ուր ուզում են՝ թող տան: Երբ, սակայն, Լազարոյը էջ 91-ում տրվող ծանոթություններում զենդ. xāšar և xāša բառերն այնպես է վերծանում, ինչպես այդտեղ չի շատակված հողվածագիրը իր հողվածում («Ein Zor. Lied, էջ 76, 1872»), ապա պատահականությունն է ցանկացել մի տարօրինակ խաղ խաղալ, նրանով, որ հողվածագիրը այդ վերծանումն ավելի շուտ է գտել, քան Լազարոյը, հակառակ պարագայում ոչ մի կասկած, որ հողվածագիրը Լազարոյին թալանած և նրա անվան մասին չարամտորեն մոռացած կլինի: Լազարոյը նաև կողմնակալ է իր և ուրիշների սխալները քննարկելիս: Ընկերակից հետազոտողը մի հատուկ կամ լուրջ սխալի դեպքում, աշուշտ, խստությամբ (սակայն ոչ առանց Լազարոյի չարախնդրության) անարգանքի սյանն է գամվում: Եվ այդ սխալից կատարվում են չափազանց հեռու զննող հետևություններ: Սեփական

¹ Arica-ն, ինչպես դը Լազարոյը առաջնորդվում է նույն սխալով gāvazān:

սխալները Լազարոյը ներողամտաբար ներում է՝ համարելով դրանք անուշադրության կամ տպագրական սխալներ: Իսկ ի՞նչ կարգի սխալներ չի թույլ տվել ինքը: Այսօր ո՞վ, եթե ոչ Լազարոյը (N. 1050) լատիներեն *hirundo*-ն և *hirudo*-ն «ծիծեռնակ» շփոթության պատճառով կզուգադրեր պարսկերեն «տզրուկի» հետ և, այնուհետև, իրեն իրավունք կվերապահեր պահանջելու, որ որևէ մեկին իրավունք չի վերապահվի Լազարոյի հետ վիճելու: Տրամաբանորեն, նաև՝ անուշադրության է մատնվել Լազարոյի ավելի վաղ շրջանի աշխատությունները, որոնք չէ՞ որ անմասն չեն համեմատական լեզվաբանությանը հատուկ բոլոր թերություններից, սակայն որոնք հաճույքով, մասամբ իրավացիորեն խոստովանում է Լազարոյը: Մեր հեղինակը, սակայն, չի ցանկանում հետևություններ անել: Մենք նրա հետ համամիտ ենք, սակայն մա պետք է արդարամիտ լինի նաև ուրիշների նկատմամբ: Անշուշտ, այդ կարգի թերություններից և սխալներից զերծ է մնացել «*Arm. Stud.*» աշխատությունը, սակայն նրա հեղինակն համեմայն-դեպս անսխալական չէ: Եվ ի՞նչ է՝ հայերենի և նոր պարսկերենի ասպարեզում մա հազվադեպ կսխալվի, սակայն երբ խոսքը վերաբերում է արիական կամ ընդհանուր հնդեվրոպական լեզուներին, մա այնպիսի թերի դատողություններ է կատարում, որոնք չի կարելի արդարացնել ո՛չ նրա վերաբերմունքով դեպի «համեմատական» լեզվաբանությունը, ո՛չ էլ նոր լեզվաբանությանը նրա քաջատեղյակությամբ: «Ասիական Միություն» հասկացությունը, որը մյուսների մոտ մա անհեթեթ կորած է համարում, նրան ևս բոլորովին օգուտ է (հին պարսկական ձեռագրերից և հայկական ավետարանից չէր կարելի այդ ձեռք բերել): Հայերենի բնույթի մասին մա մինչ օրս միանգամայն սխալ է դատում, իսկ արիական և եվրոպական լեզուների հարաբերությունների մասին բոլորովին գաղափար չունի: Չարմանալի չէ, որ հայերենի հարաբերությունների մասին, արիականի և եվրոպական լեզուների նկատմամբ, հետազոտությունները նրան մատչելի չեն, հետևաբար մա այդ մասին չի կարող դատել: Առանձին բացատրությունների քննարկմանը մենք կանդրադառնանք մեկ այլ տեղում: Այստեղ մենք կքննարկենք միայն հետևյալը՝ *gavazan* (462) բառը, իսկ սա նշանակում է «ճիպտ, որը ծառայում է խոշոր եղջերավոր անասուններին քշելու և դեկավարելու համար և ո՛չ թե կովեր ծեծելու մտրակ», ուստի և այն պետք է սահմանազատվի սնս. *gōhan* բառից («կով սպանող») և կապվի սնս. *gō-ajana*, *gavajana* բառերի հետ (սնս. *ḡanda* «գավազան»): Բնիկ հայերենը պետք է լինի՝ *kovatsan*, իսկ «կովի գավազանի» համար՝ *kovagan*: Արդյո՞ք այժմ հեղինակը հասկանում է հողվածագրի տրամաբանությունը: *darapale*-ի (588) փոխարեն պետք է գրել՝ *daripale* (*hmdm*, *Lexikon*): *dsrov*- ածականը (663) հողվածագրի կողմից իրավացիորեն որպես պարսկական փոխառություն է ճանաչվել,

Mainyo-i-khard-ում հանդիպում է *dusrūb*, հնչում է՝ *dusrov*: *Thšuar*-ը (դժբախտ) պետք է *džuar*-ից սահմանազատել թե՛ ըստ իմաստի և թե՛ ըստ արտասանության: *Dašti* «*campestre*» (570) հանդիպում է Մխիթարյանների մեծ բառարանում: Չախջախեսանը *dašt*-ի տակ տալիս է *dašti* կամ *daštaz*: Մեծ բառարանը հիշատակում է Փիլոնի այն հատվածը, որտեղ այն հանդիպում է, և հայցական *z*-i* *daštisn* Չախջախեսանը բացատրում է «*ze lealsn i dašti*»-ով, հետևաբար՝ *dašti*-ն ածական չէ, այլ *dašt*-ի սեռական-տրականն է:

Արիական *pitar* -ը «հայր» (1231), հակառակ Լազարոյի, պահպանվում է: Ավելի լավ խորհուրդ, քան Բուոնոֆից և Վուլբերից, Լազարոյը կարող է ստանալ հողվածագրից, տե՛ս *Fick*, *Wörterbuch* II, էջ 799 (միայն թե նշվածը՝ 13.83 ըստ չափի ոչ թե *pitaca*, այլ *ptaca* պետք է կարդալ): Բայց և այնպես հիմքերը, Լազարոյի հակաճանաչություններով, տիրակալ խոսքով չեն հերքվում: *getak* (2162), թերևս կա, *hmdm*. Փաստոս Բուզանդ (1832), էջ 19, տող 8 և հաջ.: *Šavarš* (1688) բառը պետք է, որ *v*-ի պատճառով = զենդ. *syāvaršāna*: Եթե *v*-ն և *y*-ն չի տարբերակում, կարող է այն համեմայնդեպս համադրել *հայր*. *xšayāršā*-ին: Այն հանգամանքը, որ եբրայական ՍԻԴԻՄԻՆ = *հայր*. *xšayārša*, Լազարոյին ոչինչ չի ապացուցում, այդ մասին է բավական համոզիչ երաշխավորում Օյտինգի կողմից հայտնաբերված եգիպտական = արամեական *Xerxes* անունը: *Šun* բառը (1710) Լազարոյը անջատում է *հուն*. *κύνω* -ից և դնում է զենդ *xšapāyaona* (= զիշերաշրջիկ) բառի կողքին, այդպես են կոչվում «շունը և գողը»: Հնչյունական ի՞նչ օրենքների համաձայն կամ ո՞ր ժողովուրդների համար: Ո՞վ չգիտե, որ *tékin*-ը հայերենում պետք է *tikin* տար (2217), մա չի յուրացրել հայերենի ձայնավորների հնչյունական օրենքները: Կամ՝ ո՞վ է դնում *հայ*. *gal* բառը սնս. *gā* բառի կողքին (438), կամ՝ *uth*-ը տրոհում *u-t-h*-ի և այն բացատրում որպես *okt*-ից եկող (1757), միայն մա, ով չգիտե հայերենի և արիերենի բաղաձայնների ամենապարզունակ հնչյունական օրենքները: Լազարոյի հռչակավոր օրենքը՝ *հայ*. *h* = զենդ. *ḡra* (792), ավելի պարզեցված հետևյալ իմաստն ունի՝ *պրս*. *hr* (= զենդ. *ḡra*), հայերենում կորցնում են որպես բացառություն բառավերջի *r*-ն, *hmdm*. *zōhr* (= զենդ. *zaoḡra*) = *հայ*. *qnh* (փոխառություն): Հայկական ուսումնասիրությունների նրա վաստակը հիմնական նրանում է կայանում, որ այն մինչ օրս ցրված նյութերը ի մի է բերել, հայտնաբերել է տեղ գտած սխալները և ուղղել դրանք, բառերը մասամբ գրողների միջոցով ապացուցել, փորձել է նրանց իսկական իմաստը հաստատել և շատ հայերեն բառերի փոխադարձ կապը միմյանց նկատմամբ պարզել: Հուսով ենք, որ շուտով մենք հնարավորություն կունենանք հեղինակի այս արժեքավոր աշխատությանը մեկ այլ տեղում ավելի հանգամանորեն անդրադառնալ:

Այս գրախոսականի պատճառով ես պ. դր Լազարոյի կողմից՝ նրա *Symm.*

II-ում, էջ 26 ծանոթագրության մեջ «փողոցային լակոտ» պիտակին արժանացա:

Եթե նա էջ 109-ում վիճարկում է իմ իրավունքը իրեն «հրապարակային» քննադատելու, այդ միայն ծիծաղաշարժ է: Երբ նա նույն տեղում, ինձ նկատի ունենալով, խոսում է այնպիսի անձանց մասին, որոնք տարվա ընթացքում հինգ, տասը, քսան անգամ ամսագրում խոսք են վերցնում, ապա ես կուզենայի հարցնել, ո՞ր ամսագրում եմ մի տարվա ընթացքում հինգ, տասը, քսան անգամ հրապարակվել: Երբ, սակայն, պ. դը Լագարդը էջ 124-ում գրում է՝ «Հյուբշմանը կիմանա, թե ով և ինչը նրան առիթ տվեց իմ ուսումնասիրությունների հրապարակվելուց 25 ամիս անց գրելու այն, ինչը նա նրանց գրախոսականը կանվաներ: Նա կիմանա նաև, թե ի՞նչ իրավունք ունի հասարակությանը առաջարկելու, և ի՞նչ են հաճույքով լսում նրա հովանավորները: Վերջապես, նա կիմանա նաև, որ նրա նմաններն են այժմ գրական շուկայում իշխում, և բավականաչափ անազնիվ են՝ իրենց ամեն ինչ թույլ տալու», և երբ նա էջ 125-ում, միևնույն նկատառումով, մարդկանց մասին է խոսում, որոնք պատվերով պետք է քննադատեն, ապա այդ մասամբ այն է, ինչ նա ասում է, մասամբ էլ այն է, ինչը նա մյուս կողմից ակնարկներով է ուզում ասել, մի սուտ, որի համար ընթերցողն ինքը հեշտությամբ անուն կգտնի:

Որպեսզի ավելի լավ կարողանա ինձ գրագող դարձնել, Լագարդը վկայակոչում է Ասկոլիի՝ իմ հասցեին մի մեղադրանք, որը նա խտալերեն և գերմաներեն լեզուներում¹ է, Symm. 116-117 էջերում, այդ գործին ուժ տալիս - Ասկոլին չի կարողանում հասկանալ, որ ես նրան իմ աշխատության մեջ՝ «g¹, gh¹-ն սանսկրիտում և իրանականում» չեմ վկայակոչել, սակայն որպեսզի ինձ բոլորովին հանդիմանած չլինի, իմ լռությունը բացատրում է ենթադրությամբ, որում նա համոզված էր, որ այդ ենթադրությունը ոչ մի ընթերցողի մոտ հավատ չի գտնի: Որ այդ սխալ է, ես հավաստիացնելու ոչ մի կարիք չունեմ: Ըստ էության բանը հետևյալում էր:

Ասկոլին իր «Corsi di glottologia»-ում այն հավաստի կարծիքն է հայտնել, որ հնդեվրոպական լեզուները հետնալեզվայինների կրկնակի (կամ եռակի) շարք են ունեցել: Նրա գիրքը՝ «Dass italienisch», 1870, գերմաներեն թարգմանությամբ լույս տեսավ 1872-ին: Այն եղավ հնդեվրոպական հնչյունաբանության համար դարաշրջանային և, որպես այդպիսին, հատկապես Գերմանիայում շուտով հանրահայտ և ճանաչված դարձավ: Ասկոլիի վարկածն օգտագործեց Յոհ. Շմիդտը իր «Die Verwandtschaftsverhältnisse der indogermanischen Sprachen»¹ (Weimar, 1872) հոգուտ տոհմածառի դեմ ուղղված իր բանավեճի: Նրա դեմ ուղղված իր «Die ehemalige Spracheinheit der Indogermanen Europas»² (Göttingen, 1873) աշխատության մեջ Ֆիքը մանրամասնորեն

քննարկեց հնդեվրոպական հետնալեզվայինների տեսությունը և ապացուցեց, որ հնդեվրոպական հիմք լեզուն «երկու բոլորովին առանձին k-հնչյուններ է ունեցել՝ k և k'», իսկ որ նա կրկնակի g և gh էր ունեցել, Ֆիքը ժխտում է էջ 36-ում հետևյալ բառերով՝ «Այստեղից հետևում է, որ Ասկոլիի ամբողջ տեսությունը, երկու տարբեր j և h հնչյունների մասին, շատ բաներում դեռ կասկածելի է»: Այդ կարծիքը սկզբում իշխող էր: Ես այն լսել եմ դեռ 1874-75 թթ.-ի ձմեռվա կիսամյակում Լեսկինից, նրա սլավոնական, լիտվական և գերմանական լեզուների համեմատական քերականությանը նվիրված դասախոսություններում: 1875 թ. գրված իմ «Über die Stellung» աշխատությամբ, Ասկոլիի և Շմիդտի տեսանկյանը որդեգրվելով, ես դուրս եկա այդ կարծիքի դեմ: Այնտեղ ասվում էր (էջ 21)՝ «Քանի որ ոչ միայն մախնական k և k' հնչյունների ճեղքման հարցում են սլավոնալիտվականն ու արիականը լիովին համընկնում, այլ, ըստ Ասկոլիի, նաև g-ի, և g, g¹-ի համընկմամբ, ինչպես նաև՝ gh-ի և gh, gh¹-ի»: Այդ էջ 21-25 -ում 71 օրինակով ցույց է տրված: 22 էջում բերվող ծանոթության մեջ՝ «արիերեն g, j=սլավոլիտվ. gապացուցող այլ օրինակներ կարելի է գտնել Ասկոլիի «դասախոսություններում» (էջ 93-94): Էջ 29-ի ծանոթագրության մեջ ևս հիշատակվում են Ասկոլիի դասախոսությունները (Vorlesungen, 1872): Էջ 30-ում իմ դիտողությունները ես ավարտում եմ հետևյալ մախնադասությամբ՝ «Այստեղից հետևում է, որ հենց այն դեպքերում, որոնց, ըստ Ասկոլիի արիական քմային հնչյուններին նվիրված փայլուն ուսումնասիրությանը, հարկ է առանձնահատուկ արժեք վերագրել» և այլն: Նույն ամսագրի նույն համարում, էջ 385-400, տեղադրված է իմ մի փոքրիկ հոդվածը՝ «g¹, gh¹ im Sanskrit und Iranischen»: Այստեղ ես Ասկոլիի անունն այլևս չեմ հիշատակում՝ 1) որովհետև ամբողջ աշխարհն էր ճանաչում և գիտեր նրա գիրքը, որ նա է հնդեվրոպական հետնալեզվայինների կրկնակի շարքը հայտնաբերողը, 2) որովհետև նույն ամսագրի նույն հոդվածում 3 անգամ նրանից մեջբերումներ են կատարել և մի անգամ դրվատել, անձի համար այսպիսով արված է այն բոլորը, ինչ կարևոր է, իսկ գործի համար վկայակոչումն ավելորդ է: Ասկոլիի սեփականությունը փորձել գողանալ, ավելորդ են համարում՝ 1. քանի որ ամբողջ աշխարհը գիտե, թե որն է նրա սեփականությունը, 2. որովհետև մեջբերումով ապացուցել էի, որ ես քաջատեղյակ էի ուսումնասիրություններին և հատկապես՝ g, gh և այլնի մասին: Որ պ. Ասկոլիին հաճելի կլինեք մեկ անգամ ևս վկայակոչվել և դրվատվել, ես կռահում եմ նրա գանգատից, սակայն այդ մեջբերումը ոչ նրա անձին էր պետք, ոչ էլ գործին: Եթե սակայն ամսագրի ընթերցողներին այդ անհրաժեշտ լինեք, ապա նրա հրատարակիչները՝ Է. Կուինը և Յոհ. Շմիդտը, անշուշտ, Ասկոլիի անվան համար հոգացած կլինեին: Եվ քանի որ դեռ Ասկոլին ինքն էլ

¹ Հնդեվրոպական լեզուների ազգակցական հարաբերություններից:

² Եվրոպայի հնդգերմանացիների երբեմնի լեզվական միասնության մասին:

միանգամայն համոզված էր, որ նրա սեփականությունը իրեն համար ապահովված է և չի կարող նրանից խլվել, ապա ստացվում է, որ նրա բողոքը միայն մեծամտության արդյունք է: Սակայն, թերևս Ասկոլին կասի, որ ես նրան եմ պարտական «ամեն բանի» համար: Եթե նա «ամեն բանի» տակ հասկանում է քմայինների կրկնակ շարքի տեսությունը, ապա նա իրավացի է, ինչպես այդ ամբողջ աշխարհին է հայտնի: Սակայն իմ դեմ որևէ հանդիմանություն չի կարող առաջանալ, այն առումով, որ ես որևէ տեսություն, որն ինձ պարզ դարձավ, ընդունեցի և փորձեցի նոր փաստերով կայունացնել: Իսկ եթե նա «ամեն բանի» տակ ընկալում է այն, ինչ սովորաբար հասկանում են «ամեն ինչի» տակ, ապա նրա այդ պնդումը ճիշտ չէ: Այնուհետև, բացի նրանից, որ ես հնդկական j-ի և h-ի մասին ամբողջ ուսմունքը, որը Ասկոլիի մոտ մյուս դժվար հարցերի հետ խառը վիճակում քննարկվում է 79-159 էջերում, պարզ և մատչելի ձևով 10 էջի վրա շարադրել եմ՝ 1) խոսել եմ սխալներից, որոնք թույլ էր տվել Ասկոլին, 2) ավելի մեծ քանակության փաստական տվյալներով եմ հիմնավորել, այն է՝ փորձել եմ հավաքել նոր նյութեր, որոնք կային գիտության այս վիճակում, 3) հնդկական բառերի հետ չեմ համադրել ավելի հեռու կանգնած եվրոպական լեզուների համեմատական բառերը, որոնք հաճախ ոչինչ չեն ապացուցում, այլ իսկապես, բուն ապացուցող հնդկական ձևերի հետ, կամ՝ իրանական և հայերեն համապատասխան բառերի հետ (հազվադեպ նաև՝ սլավոնալիտականի հետ), այսինքն՝ այնպիսի լեզուների հետ, որոնք հնդեվրոպական հետնալեզվայինների երկու շարքերը պահպանել են լիակատար պարզությամբ:

Այսպիսով, Ասկոլին «ամեն ինչ» չեմ պարտական, սակայն ես նրա վարկածի համար բերել եմ նոր և ավելի հարուստ ապացույցներ և ամենալավ ճանաչման համար, ինչ նա իր կյանքում կատարել է, այսպիսով օժանդակել եմ: Նա այժմ կարող էր վիրավորվել, որ երկրորդ հողվածում չի հիշատակվի, այն բանից հետո, երբ նա առաջինում հիշատակվել է չորս անգամ:

Հետնալեզվայինների երկու շարքի ուսումնասիրության պատմության մասին Հ. Կոլլիցը գրել է՝ «Bezzenger's Beiträgen» III, էջ 177 և հաջ.: Հեղինակը նկատում է, այն բանից հետո, երբ նա Ասկոլիի և Ֆիքի վաստակը ըստ արժանվույն մեծարանքի է արժանացրել (էջ 188). «Եթե մենք ցանկանում ենք բոլոր հնդեվրոպական լեզուների համար հետնալեզվային ձայնեղ պայթականների և շնչեղների մասին մի ճիշտ գնահատական տալ, ապա այս (ինչպես այդ հնդիրանական և սլավոնալիտական լեզուների կապակցությամբ արել է Հյուբշմանը, մնացած հնդեվրոպական լեզուների համար առաջինը Մյուլլերը) Ասկոլիի համակարգն է և այլն: Եվ 195 էջում «Հյուբշմանը փորձ կատարեց մի շարք դեպքերում իրականացնել երկու

տիպերի մեջ գոյություն ունեցող սահմանազատումը»: Կուրցիոսն իր «Grundzüge der griechischen Etymologie»¹ գրքի էջ 87-ում պարզ ասում է՝ «ըստ այդմ մենք» իրավունք ունենք հիմք լեզվի կրկնակ g-ն և կրկնակի gh-ն տիպական համարելու: Հյուբշմանը (Ztschr. XXIII, էջ 40, 384) իրաներենից և հայերենից բերված ապացույցներով հաստատեց այս միտքը: Յոհ. Շմիդտը (Kuhn's Ztsch. XXV, 64) գրում էր՝ «Ասկոլին հաստատեց, որ եվրոպական լեզուների հետնալեզվայինները համապատասխանում են արիական հնչյունների երեք շարքերին, որոնք Հյուբշմանը (Ztsch. XXIII, 384) շարունակեց»:

Այս բավական է ցույց տալու համար, թե ինչ իրավունքով կարող էր դը Լագարդը ինձ մեղադրել Ասկոլիից գրագողության մեջ:

Ըստ այդմ՝ ես մերժում եմ դը Լագարդի իմ հասցեին արված բոլոր մեղադրանքները որպես ոչ ճիշտ:

Աստվածաբան դը Լագարդն իրեն իրավունք է վերապահում ինձ և այլ գիտնականներին ամենավատթար ձևով պարսավելու և սուր վիրավորելու: Ըստ որում՝ նա (Ztschr. d.D.M.G. XXXIV, 409-414) բռնվել է այն հանցանքում, որ նա արել է այն, ինչում նա անտեղի մեղադրում է ուրիշներին:

Հ. Հյուբշման

¹ Հունական ստուգաբանության հիմնական գծերը (V. Aufl. 1879).

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք

1. araur (արոր)

Հայերենի araur-ը հանդիպում է, օրինակ, Դատաւորք-ում (Buch der Richter 3, 31), որտեղ mac arauroy-ը հունարեն է քարզմանվում *ἀροτρούς* բառով: Ուստի և Lexicon-ը (ՆՀԲ, ծնթ. խմբ.-ի) հայերեն arōr-ը (նոր արտասանությամբ) բացատրում է հունարեն *ἀροτρον* = լատ. aratrum բառերով: Լազարդն իր «Arm. Studien» աշխատության մեջ հայերեն և հունարեն բառերը միևնույն արմատից է բխեցնում: Ավելի մոտ և ճիշտ կլիներ այդ երկու բառը ուղղակի նույնացնել: Քանզի ինքնըստիսրջան պարզ է, որ «զուբան» ցույց տվող բառերը՝ հուն. *ἀροτρον*, լատ. aratrum, ինչ հյուս. ardr, լիտվ. árklas, հայ. ralo (լեռ. radlo), հիռլ. arathar և հայ. araur (արոր) նույնն են ըստ էության նրանով, որ բոլորը կազմված են *ar* «վարել» արմատից և գործիականի tra (սլավ. լիտվ. tla) վերջածանցով: Հունարենի բառամիջնային օ-ի դիմաց հայերենում a է կանգնում, *հմմտ.* ait «այտ», ait-նու-լ «այտուցվել» = հուն. οἶδος «ուռուցք, այտուցվածք», οἶδάω «այտնում» (de Lagarde, Arm. Stud. N. 97), ինչ հյուս. eit-ր «թարախ», հրգ. eiz «ուռուցք»; հինքակազմիչ օ-ի դիմաց, սակայն, օ, օր. mardo «մարդ» = βροτό-, այսպիսով, հուն. *ἀροτρο*-յի դիմաց կարելի է սպասել հայ. *aratro-. Առկա arauro-ն պետք է որ այս *aratro-ից առաջացած լինի:

Ուրեմն՝ հուն. τρ, հ.ե. tr ձայնավորների միջև = հայ. ար:

2. Ազգակցական անունների հորվման մասին:

Հայերենում «հայր» հասկացությունն արտահայտվում է hair (հայր) բառով, «մայրը»՝ mair (մայր), «եղբայրը»՝ e lbair (եղբայր): Այս բառերի հորվումը հետևյալն է՝

Ուրղ., հայց.	սեռ., տր.	բաց.	գործ.
hair	haur	haure	harb
mair	maur	maure	marb
e lbair	e lbaur	e lbauré	e lbarb

Հոգն.	Ուրղ.	հայց.	սեռ., տր., բաց.	գործ.
	harkh	hars	hartş	harbkh
	markh	mars	martş	marbkh
	e lbarkh	e lbars	e lbartş	e lbarbkh

ar-ով կազմվող հիմքի անենակարճ ձևը (գործիականը՝ har-b և այլն), որն,

ինչպես պարզվում է, հանդիպում է բաղաձայններով արտահայտվող հորվական վերջավորություններից առաջ, իր i-ն (t-ից առաջացած) կամ u-ն ավելի ուշ է կորցրել:

Եզակի բացառականը գալիս է եզակի սեռականից: Վաղեմի են, այսինքն՝ անմիջականորեն հիմք լեզվից են գալիս միայն եզակի ուղղականը և սեռականը: Այդ ձևերի ai-ն և au-ն Ֆր. Մյուլլերի կողմից նրա աշխատություններում մի քանի տեղ բացատրվել են: Ես նրա բացատրությունը սխալ են համարում և հուսով եմ, որ կկարողանամ հետագայում ճիշտը տալ:

Հայր, մայր, եղբայր բառերի ուղղականի հիմք ձևերն են՝ pātē(r), mātē(r), bhrātē(r) = հուն. πατήρ, μητήρ, լատ. frāter: Բառասկզբնային p-ն հայերենում հ է տվել, *հմմտ.* hing = սնն. pañca, հուն. πέντε: a-ն և ā-ն հայերենում միշտ հանդիպում են որպես a : Հ.ե. bhr-ն հայերենում լե է տալիս՝ a-lbeur «աղբյուր» = հուն. φρέατο, a-ն a-lbeur բառում առաջադիր հնչյուն է, քանի որ λ-ն բառասկզբում չի կարող կանգնել, e-lbair = frāter (φράτηρ) բառում e-ն առաջադիր է: Միայն հարց է ծագում, թե -tēr-ը հայերենում ի՞նչ պետք է տար:

ա) Հ.ե. t-ն - հայերենում s-ից հետո պահպանվում է, *հմմտ.* dust = Գրգ. z-gest = vestis.

“-----” n-ից և r-ից հետո d է տալիս, *հմմտ.* ֆրանս. փրոնտիք = ֆրանս. ard «արդ, այժմ» = ֆր. (նաև՝ du դերանվան մեջ սնն. tvam)

“-----” th է տալիս՝ uth «ուր» = օտա, evthn «յոթ» = օտա, ar-tsath = argentum.

“-----” Չայնավորների միջև i(y) է տալիս, ինչպես այդ տեղի է ունենում հետևյալ դեպքերում՝ air-el, զենդ. ātare «կրակ». lain¹ = հիռլ. lethan, հուն. πλατύς, լիտվ. platūs . bere «կրում է» *berēy-ի դիմաց < *bereti = սնն. bharati: Այնուհետև կարելի է համադրել նաև ներկայի ձևերը՝

ber-e-m	ber-e-s	berē = *berēy
al - a-m	al - a-s	al - a-y
thol - u-m	thol - u-s	thol - u,

այստեղից հետևում է, որ thol-u-ն ծագել է tholuy-ից², ուրեմն՝ u+y-ն

¹ Լազարդը (Arm. Stud.) այդ բառը տրոհում է l+ ain-ի, որի կարիքը բորոքովին չկա: πλάτυς-ի կողքին նա դնում է հայ. harth-ը, որը, սակայն, ոչ թե «լայն», այլ «հարթ» է նշանակում և -r-ի պատճառով պետք է πλάτυς - ից սահմանազատվի:

² Ստորադասականը beritsem < berētsem < *ber-e-ytsem և aitsem, կողքին՝ tholutsum < *thol u - yš-um.

հայերենում ս են տալիս: Հետևապես heru<*heruy, իսկ այդ heruti-ից = դր. πέρουτι, հրգ. vērt, հիռլ. (inn) uraid: Նույն ձևով էլ ku-ն «քակոր» առաջացել է *kuy-ից, y-ով t (th)-ի փոխարեն, որովհետև այն = սնս. gūtha, զենդ. gūṭha, պրս. gūh:

բ) Հնդեվրոպական ē-ն հայերենում i է տվել mi=մի, արիերեն՝ mā; a-mis=սնս. māsa, հուն. μήν, լատ. mensis, հիռլ. mi; di-em «մոր կաթը ծծել», Θήσατο, լատ. felare, հւլ. déle, հիռլ. di-th «suxit»; li «լի» (plē.-yo-ից, πλεῖος), հուն. πλή-ρη-ς, լատ. plē-nu-s, այնուհետև նաև Inum «լցնել» (*li-nu-m), հիռլ. līnaim «լցնել», հլատ. ex-plē-nu-nt.

գ) Նախնական r(λ) և n հնչյունները բառավերջում պահպանվում են: Ըստ այդմ՝ h. Ե. pātēr-ը հայերենում պետք է *hayir տար, h. Ե. mātēr-ը > հայ. *māyir, h. Ե. bhrāter > հայ. blāyir (հմմտ. i-ի պատճառով հիռլ. athir, máthir, bráthir):

Սակայն, հայերենի բառավերջային հնչյունական օրենքների համաձայն, նախնական վերջին վանկի ձայնավորը տղվում է, այսպիսով ստացվեց hair<*hayir, այնուհետև, երբ ā-ն ամենուրեք a տվեց, mair<*māyir, elbair<*blāyir:

Մեր բառերի սեռականի հնդեվր. հիմք ձևը եղել է *patros, *mātros, *bhrātros: araur-ը = ἄροτρον համադրությունից մենք գիտենք, որ նախնական բառավերջային os-ը հայերենում միշտ տղվում է, ուրեմն՝ h. Ե. *patros-ը հայերենում haur է տվել, *mātros-ը maur, *bhrātros-ը՝ elbaur:

«Դուստր» բառը հայերենում հնչում է dustr, ծագել է *dusti-r-ից, *dust-ē-r-ի դիմաց, լիտ. dukté, հւլ. dūšti: Որպես հիմք ձև թերևս ենթադրելի է dhugh'ter (Joh. Schmidt, Kuhn's Ztschr. 25, 116):

Այստեղ t-ն պետք է պահպանվի, քանի որ այն ձայնավորների միջև չէր կանգնած: Հունարենում հին սեռականի դիմաց՝ հայցականի ազդեցության տակ θυσιατέρος-ից նոր սեռական է կազմվել θυσιατέρα: Նույնն է կատարվել նաև հայերենում և օրինաչափորեն կազմվել է dster-ից (մի սեռական *duster(os)): «Անուսնու եղբայրը» կոչվում է taigr, գալիս է *taivr-ի միջոցով *taivir-ից *taivēr-ի դիմաց = ծաղը, սնս. devā, լիտ. dēveris, հրգ. zeihhur, հիմք ձևը *daivēr: Մնացած հոլովները կազմվում են հայցականի ընդհանրացված taiger- ձևից:

«Քույր»-ը լատ. soror, լիտ. sesū և այլն, h. Ե. svesār, s-ն երբեմն ձայնավորների միջև կանգնած է եղել ու «հարս» բառի մեջ = սնս. snušā, հւլ. snūcha; և «լու միջատը» = հւլ. blūcha, լիտ. blusā (նաև mukn «մուկն») բառի մեջ; հուն. = μύς, լատ. mūs, սնս. mūšīka): s-ն այստեղ տղվել է հավանաբար այն բանից հետո, երբ այն «y» է տվել, քանի որ u+y հայերենում ս է տալիս: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ s-ն ձայնավորների միջև t-ին հատուկ փո-

փոխություններ ունի, այսինքն՝ տալիս է y: Եթե նաև հաշվի առնենք, որ sv-ն բառասկզբում հայերենում որպես kh է հանդիպում, հմմտ. khun «քուն» = սնս. svapnas, khirtn¹ «քրտինք» = հուն. ιδροός, ιδρωός, արմատը՝ svid «քրտնել», որ e-ն նախկինում նախորդող v-ի շնորհիվ o-ի երանգը կարող է ստանալ: Հմմտ. gorts = Φέρογο «գործ», որ վերջին վանկի ձայնավորը տղվում էր, այստեղից էլ ստացվում է. k Choir = h. Ե. svesār:

Այս բառի սեռականը h. Ե. հնչել է svesros, որտեղ s-ն նախկինում կանգնած է եղել բաղաձայններից առաջ, հայերենում այն տղվել է՝ z-ge-nu-m «հազմվել» = ἔννομαι Φέσ-νυ-μαι-ի դիմաց. gin = սնս. vasnas, լատ. venum. em «եմ» = սնս. asmi. gar-un = զենդ. vañhra: Ըստ այդմ՝ svesros-ը հայերենում պետք է *kher տար. իրականում այն հնչում է kher: Աչքի է զարնում, որ e-ն հայերենի ուղղականում o է տվել, սեռականում մնացել է e:

Բառի հոլովման պատկերը հետևյալն է:

Ուղղ., հայց. k Choir, սեռ., տր. kher, բաց. kherē, գործ. kherb, հոգն. ուղղ. khorkh, հայց. khors, սեռ., տր., բաց. kherts, գործ. kherbkh:

Սկնհայտորեն khor-kh-ը գալիս է k Choir-kh-ից, khor-s-ը՝ *k Choir-s-ից, ինչպես համապատասխանաբար harkh «հայրեր»-ը *hairkh-ից:

Այսպիսով, մասամբ լույս է սփռվում նաև հայերենի «չորք» թվականի վրա՝ vier: Եթե սնս. p-ita-r-as-ի դիմաց հայերենում h-a-r-kh է կանգնած, սնս. sv-as ā-r-as-ի դիմաց՝ հայ. kh-o-r-kh, նաև՝ սնս. c-atvā-r-as (հայց. c-atu-r-as (իգ. ուղղ. c-atas-r-as), ապա չպետք է նաև անսպասելի լինի հայ. ց-o-r-kh-ը: Այստեղ ևս t-ն պետք է y տված լինի, իսկ ayv-ից (ավելի ճիշտ eyv կամ eyu): Ի՞նչ ճանապարհով է o ստացվել:

Յոհ. Ծմիդոյը Kuhn-ի Ztschr.-ում (XXV, էջ 43 և հաջ.) ապացուցում է, որ h. Ե. ketvāres -ի «չորս» թույլ հիմքը երբեմն ktvar- (հին հունարենում τετ Fορ-, թույլը՝ πτ Far-) է հնչել: Այստեղից է թերևս գալիս հայերեն թվականի երկրորդ ձևը՝ khar, հոգնակին՝ kharkh: Մենք իրավունք ենք մեզ վերապահում ենթադրելու, որ այդ ktvar-ը նախ՝ հաջորդող երկու բաղաձայնից առաջ կորցնում է իր k-ն, tvar-ը տալիս է հայ. khar, ինչպես սնս. tvad-ի (բացառական) դիմաց հայ. kho-ն «քո» (սեռ.) է հանդես գալիս:

3. Չայնավորների հնչյունական օրենքները

Հայերենի ձայնավորների համակարգում իշխող օրենքները, որ ես Kuhn-ի Ztschr. XXIII, էջ 32 և 400 զարգացրել եմ, ըստ որում՝ սխալ է եղել միայն էջ

¹ Դր. Լազարոն այդ բառը դնում է զենդ. areθna-ի կողքին, որը նա ուղղում է որպես hvareθna, չունենալով որա համար որևէ հիմք: Այդ բառը միայն մի անգամ է հանդիպում և նրա իմաստը միջև օրս ոչ որի հայտնի չէ: Չենդ.-պիլ. բառարանում՝ areθnā=elbows:

32-ում տրված պնդումը, որ իբր e-ն միայն կարող էր սղվել, քանի որ հայերենում e-ն ինքը երբեք չի սղվում: Օրենքները, որոնք գրեթե առանց բացատրությունների են գործում և անսահման են կիրառվում, ուղղված և ճիշտ շարադրանքով հետևյալ կերպ են հնչում՝

Ա. հին օրենքը՝ նախնական վերջին վանկի ձայնավորները սղվում են,

Բ. ավելի նորերը (նրանցից հետո գործել սկսած);

1. **ê-ն** և **oi-ը** (i և u-ի աստիճանավորում) պահպանվում են միայն վերջնավանկում, մյուս դեպքերում նրանք տալիս են i և u:

2. **i**(=նախն. i, n-ից առաջ նաև= նախն. e) և **u** (= նախն. n, m-ից առաջ = նախն. o?), պահպանվում են միայն վերջնավանկում, մնացած դեպքերում սղվում են:

3. Սղվող **i-ի** և **u-ի** դիմաց հանդես է գալիս **ê**, երբ նշված հնչյունների սղման հետևանքով բառը դառնում է անարտասանելի կամ դժվար արտասանելի:

4. **ea-ն** պահպանվում է վերջնավանկում, մնացած դեպքերում e է տալիս:

5. Հայերենում **a, e, o** հնչյունները, որպես այդպիսիք (այսինքն՝ եթե նրանք հաջորդ բաղաձայնի ազդեցության տակ նախօրոք i և u չեն սղվել), երբեք չեն սղվում:

Օրինակներ Ա-ի համար՝ astl = $\acute{\alpha}\zeta\tau\eta\epsilon$, hair = $\pi\alpha\tau\eta\epsilon$, šun = $\kappa\acute{\upsilon}\omega\nu$, mard = $\beta\rho\omicron\tau\acute{\omicron}\zeta$, ard = $\acute{\alpha}\rho\tau\iota$, ban = $\varphi\omega\nu\eta$,

Բ-1. handés, սեռ. handisi; anêts-kh, սեռ. anitsits; êj, սեռ. iji; hamboir, սեռ. hamburi; anoiš, սեռ. anušî; koiš, սեռ. kusi, (այսպիսով՝ i-ն և u-ն, բացի վերջնավանկից, միշտ ծագում են ավելի վաղ ê-ից և oi-ից),

2. **cšmarit**, սեռ. cšmarti; sirt, սեռ. srti; artsiv, սեռ. artsvi; augut, սեռ. augti; brut, սեռ. brti; dustr, սեռ. dster;

3. **iłdz**, սեռ. êłdzi; indz, սեռ. êndzu; ump, այստեղից՝ êmpel; tsund, սեռ. tsnêndean (սովորաբար գրվում է՝ tsnndean),

4. **leard**, սեռ. lerdi; matean, սեռ. mateni; hreay, սեռ. hrêi (< *hreyi), կատարյալը 3 -րդ դ. koçeats, սակայն 1-ին դ. koçetsi,

5. **beran**, սեռ. beranoy; get, սեռ. getoy; hol, սեռ. holoy և այլն:

Այս օրենքները նույն հաջողությամբ գործում են հոլովման և խոնարհման համակարգում, նույնիսկ հաջողությամբ նրանք գործում են նաև բառաբարդման մեջ, այսինքն՝ նրանք գործում են ամենուր:

Հայերենի ձայնավորների համակարգի՝ հնդեվրոպականի հետ ունեցած հարաբերությունների կապակցությամբ, ընդհանուր առմամբ, առաջժմ կարելի է ասել հետևյալը՝

հ.հ.	a	ε	o	ä	η	ω	i	υ	ai	ei	oi
հայ.	a	e(i)	α, o(u?)	a	i	α	i	u	ai	ê	ai

հ.հ.	av	εv	ov	η	ζ	!
հայ.	au	oi	?	an	ar	al

4. corkh «չորս» և jerm «ջերմ»

Այն դժվարությունները, որոնք հանդիպում են çor-kh բառի վերծանման ժամանակ, Լազարդին ի վերջո բերեցին այն եզրակացության, որ այդ բառը «ուղղակիորեն» փոխառություն է: Այս կարծիքը քննադատության չի դիմանում: Այս բառը, այդուհանդերձ, բնիկ հայկական բառ է, ինչպես ցույց են տալիս վերը նշված դիտողությունները, այն պետք է վերծանել որպես հ.ե. *ketvâres-ից եկող: Որպես ուղղականի հիմք ձև՝ այդ բառի համար ընդունվում էր *katvâras -ը: Վերը ես նրա համար օգտագործեցի *ketvâres, ավելի ճիշտ կլիներ *ketvôres: Ընդհանուր ձևը, սակայն, ըստ լեզվաբանության արդի վիճակի՝ ketvôres է, k-ով, այսինքն՝ քնայնացված k-ով ձևը: Յոհ. Ծմիդուր երկար հետազոտություններից հետո, Kuhn-ի Ztschr. XXV 179, ի վերջո եկավ այն եզրակացության, որ հետնալեզվային k, g, gh հնչյունները ոչ միայն արիական լեզուներում են քնայնանում հաջորդող e, i, y-ից առաջ: Քանի որ նա, անշուշտ, իրավացի է, ապա հնդեվր. հիմք ձևը պետք է ընդունվի k'etvôres-ը, և այդ արդարացվում է սնս. çatvâras-ով, զենդ. çathârd, հուն. τέσσαρες (ուգր. τετφορες), հւլ. cetyrije. Սրան է վերաբերում նաև çor-kh-ը, որի ç-ն կանգնած է նախն. k-ի դիմաց = հայր. c, հուն. τ, հւլ. ċ, իսկ o-ն ոչ թե նախնական o-ն է, այլ փոխարինում է etvo կամ etu հնչյունական խմբին (*hmdn*. khor-kh «բույրեր»):

Հնդեվր. gh-ն հայերենում պետք է g տար: Քմային gh-ի դիմաց հայերենում պետք էր j սպասել: Այդ հանդիպում է օր. jer-nu-m θερομαίνωμα, jer θερομότης, jerm θερομός, jermn «ջերմություն» (πυρετός), որոնք կարելի է դնել հետևյալ բառերի կողքին՝ հուն. θέρος= սնս. háras «տոթ, բոց, ջերմություն», հւլ. žerav «բոցավառ» (Kuhns Ztschr. XXV, 168): Այստեղից հետևում է՝ հայերեն քմային հնչյուններ ունեցող բառերը կամ փոխառություններ են պարսկերենից (*hmdn*. Kuhns Ztschr. XXIII, 28-29, արձանագրված ուրիշ շատ բառերի հետ միասին), կամ եթե այդպես չէ և քմայինը, ինչպես ապացուցված է, ավելի նոր ծագում չունի, ապա նրանք գալիս են հնդեվր. նախալեզվից:

Այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ corkh և jer (որ բացի այդ բերվում են Kuhns Ztschr. XXIII, 29, սխալ են կամ կասկածելի) այլև չեն վկայում հայերենի արիական ծագման մասին, ճիշտ այնպես, ինչպես հայերենի եվրոպական

բնույթի մասին չեն վկայում այնպիսի ձևեր, ինչպիսիք են օր. hing-ը=սնս. pañca, հ.ե. penke: Քմայինների պահպանման և չպահպանման հարցում հայերենը, ինչպես երևում է, կանգնած է հունարենի աստիճանի վրա, իսկ միակ փաստը, որը վկայում է հոգուտ հայերենի արիական բնույթի մասին, այսպիսով հերքվում է:

5. զենդ. caretar=h.ե. Kertar «կերտող»

Դը Լագարդը միմյանց կողքի է դնում հայերենի hraš «հրաշք, հրաշալի» և զենդ. fraša բառերը, ինչպես նաև՝ hrašakert=զենդ. frašōkareta (n. pr.) և hrašacartar = զենդ. frašōcaretar: Այս համադրությունները հնչյունապես շատ համապատասխան են, սակայն իմաստով՝ միանգամայն տարբեր: Ուրեմն այս համադրությունը միանգամայն սխալ է, քանի որ զենդ. fraša նշանակում է միայն «առաջ», իսկ frašōkar-ը՝ «ձգտել, մոտենալ՝ անել դատաստանի օրը» և այլն: Քանի որ kert-ը փոխառություն է, պարտադիր չէ, որ նաև hrašakert-ը փոխառություն լինի, ինչպես phaitakert և նման այլ բարդությունները կարող են կազմված լինել հայերեն և մի պարսկերեն բառից: Նույնքան քիչ հնարավոր է, որ hrašacartar-ը փոխառություն լինի, քանի որ cartar-ը՝ որպես ինքնուրույն բառ, ինչպես նաև բնիկ հայկական բառերի հետ բարդությունների մեջ է բավական հաճախ հանդիպում: Իմիջիայոց, ինչպես hraš-ը ինքը բնիկ հայկական է, cartar-ը նշանակում է «perito, esperto, maestro» և, հավանաբար՝ պետք է բաժանել cart-ar բաղադրիչների, քանի որ cartar-asan-ի կողքին կանգնած է նույն իմաստն ունեցող cartasan-ը «ճարտասան» eloquente, rettorico, oratore (asan՝ as-el բառից), հմմտ. de Lagarde, Arm. Stud. s.v. - զենդ. caretar «անող», այն հանդիպում է հիշատակված frašōcaretar բառում, որը հանդիպում է հոգնակի սեռականի ձևով՝ frašōcareθrām. Վերը նշված frašōkar-ի համար գործող անձի անուն է, որտեղից էլ գալիս են՝ frašōkara, frašōkareta, frašōkrti: frašōcaretar-ը այն անձն է, ով օգնում է քերել, մոտեցնել անել դատաստանի և հարության օրը: Քանի որ նշված երկու բառերը բոլորովին և երբեք չպետք է միմյանցից անջատվեն, ապա caretar-ը պետք է kar արմատից դուրս բերել, այսպիսով = սնս. kartar: Չենդ. caretar-ը վերաբերում է զենդ. krta և krti ձևերին, ինչպես հայրս. անորոշ դերբայ cartanaiy-ը ptc. karta-ին: c-ն մտել է այնտեղ, որտեղ հ.ե. հիմք լեզվում e կամ i(y) ձայնավորներից բացի որևէ այլ ձայնավոր է եղել: Հ.ե. գործող անձի հիմք ձևը գալիս է kar-ից՝ Kertar-, որտեղից և օրինաչափորեն՝ զենդ. ptc. pass.-ի հիմք ձևը հնչում էր krto-, որտեղից և օրինաչափորեն սնս. krta, զենդ. krta, հայրս. karta: K-ով ձևերը ամենուրեք հարթեցին c-ով ձևերին, սնս. լիովին, այստեղից էլ պահպանվում է միայն մեր caretar-ը: Կատարյալ 3-րդ դ. coreθ

(միավանկ) և քերևս նաև՝ carana. sraošōcarana-ում, հայրս. միայն cartanaiy, որը, սակայն, նոր պարսկերենում փոխարինվել է kardan-ով (հմմտ. Joh. Schmidt, Kuhns Ztschr. XXV, 88; Bartholomae, die Gāθā's, էջ 78):

Նոր պարսկերեն e

Ֆր. Մյուլլերը իր «Ueber die Stellung des Armenischen» աշխատության մեջ նկատում է՝ «Եթե նոր պարսկերենը հայերենի նման իր հնչյունական համակարգին համապատասխան այբուբեն ունենար, ապա նա, անշուշտ, իր հնչյունական հարաբերություններով հայերենին շատ մոտ կկանգներ»: Ֆր. Մյուլլերն իր այդ դժբախտ նախադասությամբ ուզում է ասել, որ նոր պարսկերենն էլ նույն հաջողությամբ, ինչպես հայերենը, e ուներ, սակայն այն միայն գրության մեջ չի սահմանազատվում a-ից: Իրականում բանն այն է, որ ըստ նոր պարսկերենի այժմյան արտասանության յուրաքանչյուր կարճ a տալիս է ä: Սակայն նոր պարսկերենում ä-ի կողքին և նրանից միանգամայն տարբեր ä գոյություն ունի, ինչպես հայերենում a-ի կողքին e գոյություն ունի. հենց ամեն ինչ այստեղից էլ սկսվեց, այդ մասին մինչ այս ոչ ոք ոչինչ չի ասել, Ֆր. Մյուլլերն էլ ոչինչ չի ասել: Սակայն այստեղ ես հայացքս շրջում եմ և սկսում եմ Մյուլլերի վերը նշված պնդումից:

Գոյություն ունեն մի շարք պարսկական բառեր՝ մոտ 500-600, որոնք առկա են իրենց հնչողության համապատասխան այբուբենով, դրանք պարսկերենից փոխառված բառեր են և պարսկական անուններ, որոնք հանդիպում են հին և նոր գրողների մոտ: Ես կարող եմ հավաստիացնել, որ չնայած այստեղ այդ նյութը չեմ կարող և չեմ ուզում ցուցադրել, որ ամենուր այնտեղ, հարյուրավոր դեպքերում, որտեղ այսօրվա պարսիկները ä են արտասանում, համաձայն չափազանց ճշգրիտ հայկական տառադարձության, նախկինում a է արտասանվել, այդ բանը հայտնի է յուրաքանչյուրին, ով պարսկերեն գիտե: a-ն ä է տվել միայն վերջերս, միջին պարսկերենն այդ ä -ից ոչինչ չգիտի, նա դրա փոխարեն մաքուր a ունի, այնպես, որ այնտեղ ոչ թե bārām է, այլ baram (հայ. ber-e-m)=«բերել» պետք է հնչի և այդպես էլ հնչում է: Սակայն այստեղ է հենց այն, ինչը Ֆր. Մյուլլերը չի նկատել՝ մաքուր a-ի կողքին, մի քանի դեպքերում, մաքուր e է կանգնած, և այստեղ հարց է ծագում, թե արդյոք պարսկերեն a-ի կողքին, եթե անգամ հազվագյուտ դեպքերում, e չի՞ ունեցել. փոխառյալ բառերի մեջ ես e-ով գրվող հետևյալ բառերն եմ գտել՝

1) Միշտ pet «պետ» բառը ինքը և մի շարք բարդություններում՝ aspet (զենդ. *aspōpaiti), aspahapet «գորավար», պազ. spâhvað, պրս. sipâhebâd . dehpēt = զենդ. danhupaiti, պազ. dahivâd:

2) **kert** - միշտ որպես բարոյության երկրորդ բաղադրիչ՝
 ա) քաղաքների անուններում՝ *Va lar šakert*=*Vologesocerta*, պրու. *Balā šgird*,
 այս բոլոր բառերում - **kert** = հուն. *κερτα*, լատ. *-certa*, պրու. *gird*,
 բ) **ašakert** = պազ. *ašāgard*, պրու. *šagird*, և **dastakert** «*bordo, compagna*», պրու.
daskara,

3) **deh** = պազ. *deh*, պրու. *dih*, **dehkan** = պրու. *dihgān*,

4) **ker** «անոդ»՝ *xoh-a-ker* «խոհարար» և այլն; պազ. *gar*՝ *awasōsgar* բառում,
 քերձչար և այլն,

5) **patker**= պրու. *paikar*, հայրու. *patikara*,

6) **kerp**, զենդ. *kehrp*, պազ. *karaf*,

7) **kerpas** «*drappo di seta*» = պրու. *kirpās* (*Vullers*), արաբ. *kirbās*, հուն.
κάρπασος, սնու. *karpāsa*,

8) **veh** «*superiore*», պազ. *veh*, պրու. *bih*,

9) **gmbeth** = պրու. *gunbað*,

10) **an-vaver** (*non accreditato*), պրու. *bāvar*,

11) **cem** «*passaggio*», պրու. *cam*,

12) **anderdzapet** «հանդերձապետ»,

13) **yetkar**= պրու. *yâdēgār*.

Պազենդերենում¹, որը դժբախտաբար վստահելի չէ, բացի այստեղ
 նշվածից, նաև *e*-ով հետևյալ բառերը՝ **meh** «մեծ» = պրու. *mih*, զենդ. *mas*;

keh «փոքր» = պրու. *kih*, զենդ. *kasu*;

Նաև **ešn**, **išn** վերջավորություններով այնպիսի բառերում, ինչպես՝ *bunda-*
hešn, *dahešn*, *dānešn*, *dārešn* և այլն, որոնց համար օրինակաբար են *iš* (*dihiš*
 և այլն) է կանգնում, սակայն արդեն Եղիշեն ունի *phursišn*=պրու. *pursiš*,
 այնպես որ, հավանաբար, պազ. և պիլ. պետք է *-išn* կարդալ:

Տարբեր նկատառումներով ուշադրության արժանի չեն այնպիսի դեպ-
 քեր, ինչպես՝ *e(i)-breh-ից* «*fate*», *cihār* «չորս» = պրու. *cahār*, *ež-freh-ից* «ա-
 վելի շատ», *frehest* «ամենաշատ», *ke* հարաբերական և հարցական
 դերանունը՝ պրու. *ki*; *kerba* «զովելի արարք» = պրու. *kirfa*. *kešvar* = պրու. *kiš-*
var, *se* «երեք» = պրու. *si* և այլն:

Մի քանի դեպքերում, այսպիսով, հայ. **e**-ին մի քանի աղբյուրներում՝
 պազենդերենը և նոր պարսկերենը **a** են հակադրում - այստեղ այդ **e**-ն լիովին
 կարող է հայերենին պատկանել, այլ դեպքերում հայերենի աղբյուրներից
 եկող **e**-ին պազենդ.-ում **e** է համապատասխանում, պարսկերենում **i** և այս
 դեպքերում *i*-ն, ըստ իս, միջին պարսկերենում պետք է **e** եղած լինի (որպես
 հին պարսկերենի *a*-ից նոր պարսկերեն *i*-ի անցման աստիճան), օր.

kert «արված, կերտված»-քաղաքների անունների երկրորդ բաղադրիչ,

ašakert «աշակերտ»,

deh «մարզ, երկիր»,

kerpas «կերպաս» *κάρπασος*,

veh «զերազանց, վեհ», նաև՝ *meh* «մեծ» և *keh* «փոքր», հավանաբար նաև
 այլ դեպքերում, որոնք ես առայժմ չեմ թվարկում՝ ուրիշ պատեհ առիթով
 նշելու համար: Որ սակայն այս *e*-ն հ.ե. և եվրոպական *e*-ի հետ ծագումով
 ոչ մի ընդհանրություն չունի, ակնհայտ է:

7. հայ. **taigr** «տեղր»

Դը Լազարդը դեռ իր «*Arm. Stud.*»-ում (2173) հիշատակում է հայ. *tagr* (*il*
fratello di marito) բառը: Այս է ըստ բոլոր բառարանների, նաև՝
 (նորագույնների) բառի ձևը: Այս բառը, սակայն, հին հայերեն չի, այլ նոր է:
 Բազրատունին իր գրաբարի մեծ քերականության մեջ (Վեներտիկ, 1852, էջ
 20) տալիս է որպես բառի միշտ ձև՝ *taigr* և նոր հայերենի թարգմանմամբ՝ *tagr*
 ձևով: Այս բառը հանդիպում է Մովս. Խորենացու մոտ, նրա գործերի
 վեներտիկյան հրատարակության մեջ (1865, էջ 220, տող 1):

ein nora taigerkh dstern

taigr բառի *ai*-ն գալիս է հնդեվր. նախաժամանակներից, որովհետև *taigr*=
 սնու. *devā*, *δᾶήρ*, լատ. *levir*, լիտվ. *dėveri-s* (բոլորը = *frater mariti*), հուլ. *dėveri*,
 անգլսաբու. *tācor*, հրգ. *zeihhur* (*Curtius. Grdz.d. Etym*⁵, 231):

8. հայ. **srunkh** խոհուս

Դը Լազարդը հայերեն *srunkh*-ը *χνῆμα*, *σφουρά* իր «*Arm. Stud.*» 2074
 կրկին համադրում է սնու. *φρονι*, զենդ. *sraoni*, հուն. *κρόνις* (լատ. *clunis*, հիսլ.
hlaun, լիտվ. *szlaunis*, կիմր. *clun* (*Curtius, Grdz. 150*): Քանի որ
 անհավանական է, որ հայերենը հնդեվր. «*Hinterbacken*» «ետին ոտք» բառը
 օգտագործված լինի «արունքուկը» իմաստով, և եվրոպական 1-ին
 սովորաբար 1 է հակադրվում և ոչ թե *r*, ապա այս համադրությունը ճիշտ չէ:

Եթե *srunkh* բառից անջատելու լինեն հոգնակիակերտ *kh* մասնիկը և *-n*
 վերջածանցը (հնմտ. *dur* բառից), ապա կմնա միայն *sru* հիմքը, որը
 կարող է ծագած լինել *sruy*=*h*. ե. *k'rus* բառից, *հմմտ.* հայ. *nu*=լատ. *nurus*; հայ.
mu-k-n=լատ. *mūs*: Պարզ է, որ ինչպես հայ. *mu-k-n*-ը հարաբերվում է լատ.
mus (*muris*)-ին, նույն ձևով էլ հայ. *sru-n-kh*-ը կհարաբերվի լատ. *crūres*<*crūs-*
es-ին:

¹ *Cum West*-ի *Glossar M. i. Kh.*

9. hnots «հնոց»

ոց -ը հայերենում գործածական վերջածանց է:

Եթե ենթադրվում է նրա առկայությունը հոտց բառում, ապա մնում է միայն հո-, որը պետք է որ ծագած լինի հin- կամ hun- ձևերից: Վերջինս՝ hun-ը, կարող է կանգնել hur (սեռ. hr-oy) բառի կողքին այնպես, ինչպես գոթ. fōn-ը (fumins), հրգ. fuir, fiur-ի կողքին (Joh. Schmidt, Vocal. II, 276), այսինքն՝ ինչպես արևելագերմանական fūni-ին՝ արևմտագերմանական՝ fūri-ի կողքին (Kluge in Paul und Braune, Beiträge VI, 379):

10. šarkay composto.

Իր «Arm. Stud.», N. 1687 դը Լազարդը գրում է՝ «šarkay composto. սառ. šarkā «λείπεται (Hoffmann hermeneut 50, 19) իր իմաստով չի համապատասխանում, արաբ. šarīk širkaṭ Lagarde materialien I, 113, 7 (Lev. 5, 21) ձևը չի տալիս: Բառը, այնուհանդերձ, սեմական է»: Ամեն ինչ ճիշտ է, վերջին հատվածին պետք է հավելել «ոչ» բառը: Այն բարդ բառ է, բաղկացած է հայերեն 2 բնիկ բառերից՝ šar=միասին և kay=կանգնած (<ka-l), և, ակներևաբար, պետք է քարզմանել հուն. σὺγκειμενός բառով:

11. aits (այծ)

Ուրիշների մեծն ես ևս հայ. «այծ» բառի կողքին դնուս եմ հուն. αἶξ (հիմքը՝ αἶγ): «Arm. Stud.»-ում Լազարդը նկատում է՝ «ἡγος-ը դեռ Հյուբշմանին հայտնի չէ»: Այս բառը ես իսկապես չգիտեի և չէի էլ գիտակցում, թե նա ինչ առավելություն կարող էր ունենալ αἶξ -ի համեմատությամբ, քանի որ նա ա-ի դիմաց իր դ-ի պատճառով շատ ավելի քիչ է կիրառվում:

Այնուհանդերձ, ես այս բառը այժմ էլ դեռ չեմ ճանաչում: Lexikon-ը գրում է՝ սեռ. αἶγός bōot = αἶξ: Այն պետք է որ հանդիպի C. I, I 742 (Cauer, Delectus, 130), որտեղ տրվում է՝ πρῶβᾶτυς σοῦν ἡγυς: Հոգնակի այս տրականը ἡγυς (<αἶγῶις)-ը նույնքան քիչ կարող է որպես եզակի ուղղական ἡγος ձևը ենթադրել, ինչպես և γεθοντοῖς-ը (տրականը) (Ahrens, de graecae linguae dialectis I, 236) մի այնպիսի ուղղական, ինչպես՝ γέθοντος:

12. apuxt (ապուխտ)

Հայերենի apuxt բառը «presciutto, carne salate e secca»; ψ υγμό ζ-ը Լազարդը նախկինում համարում է գենդ. մի բառի հետ, որը նշանակում էր «սառը», այժմ նա այդ չի կարողանում բացատրել:

xt-ի պատճառով ես այդ բառը երկար ժամանակ դիտում էի որպես

պարսկական փոխառություն և ըստ այդմ այն տրոհում էի a+puxt «չեփած»: Lexikon-ը այն հետևյալ կերպ է լուսարանում «միս, համեմված աղով և չամանով և չորացրած, առանց այն եփելու»: Բագրատունին իր հայերենի քերականության մեջ (էջ 672, § 1470) այն բացատրում է որպես aneph «չեփած», որովհետև պրսկ. puxt-ը eph-ն է:

13. Tamxosrov

Դը Լազարդն իր «Arm. Stud.» 1898 նկատում է՝ «jambxosrov Tamxosrođos Նյուդեբեն այն ԴԻՄԻՍ-ի համար մոռացել է»: Tabari, Geschichte der Perser und Araber 443, ծնթ. I Նյուդեբեն Tam-ը դիտում է որպես tahm-ից եկող և վկայակոչում է անուններ՝ Tahm-Jazdegerd, Tamšābūr, Ammian-ի մոտ՝ Tamsapor, Tam-Chesrōn, Tamxosrođ, Ταρχοσδρω, Ταρχοσδρός»: Նրա կարծիքի ճշտությունը վիճարկում է Հոֆմանը Auszüge aus syrischen Acten persischer Märtyrer էջ 268, ծնթ., սակայն Նյուդեբեն Հոֆմանի գրքի գրախոսականում Gött. gel. Anz. 1880, Stück 28, էջ 877, այն իրավացիորեն պաշտպանում է հետևյալ դիտողությամբ՝ «Ես շատ ավելի քիչ հավանություն կտայի նրա արտասանությանը՝ Tohmyazdgerd-ը (o-ով) և հավանություն կտայի նրա իմաստին»: Այդ անունը անիմաստ է բաժանել Tamxosrau, Tamšābōr բառերից, հարցը դրան չի վերաբերում: Սակայն այստեղ a-ի առկայությունը հաստատվում է հունարենի և լատիներենի գրության ձևով, մինչդեռ o-ի և u-ի դեմ կասկած է առաջացնում արդեն իսկ ասորական ωau-ի մշտական բացակայությունը: Ասորացիների մոտ h-ի անկումը բոլորովին էլ չի վկայում նրանց անուշադրության մասին. tam-ը կարող էր tahm-ից առաջ եկած լինել, ինչպես s(i)tam-ը stahm-ից, diram-ը՝ drahm-ից, sitamba-ն՝ stahmbak-ից, հմմտ. նաև pul-ը՝ puh-ից: «Stark-Chosrau» և այլնի իմաստի կապակցությամբ հմմտ. Sebēos III, 18-ում հանդիպող անունները՝ «javitean Xosrov» կամ «հավերժ Խոսրով»: Միայն մեկ անգամ հանդիպող jambxosrov-ը (de Lagarde, Ges. Abhh. 139), անշուշտ, արդյունք է մեծանունների բազմաթիվ աղավաղումների և այլն:

Այն, որ Նյուդեբեն դը Լազարդի և Հոֆմանի համեմատությամբ իրավացի է, ապացուցում է Տամխոսրով անունը = tam Xosrov Սեբեոսի մոտ (Պատկանեան, 1879, էջ 34):



Հոֆմանի գրքի էջ 251-ի կապակցությամբ ես կուզեմայի նաև ավելացնել, որ Gušnasp-Feuers Brosset-ի կողմից կատարված Թովմա Արծրունու

քարգմանության մեջ տրված է որպես «Vchamp», այսինքն՝ Všamp, որը, սակայն, իմ ձեռքի տակ գտնված հրատարակության մեջ (Th. Artsruni, Konstantinopel, 1852, էջ 102) Všnap է գրված:

Ալեհայտոբեն պետք է բոլոր տեղերում վերականգնել Všnap: Որպես անձնանուն՝ Gušnap-ը և Višnap-ը հաճախ են հանդիպում Ղազար Փարպեցու մոտ: Gušnap և Višnap ձևերը վկայակոչում է Վեստը պահլավերենում (Pahlavitexts I, էջ 173, ծնթ. 5):

14. Մի պարսկերեն-հայերեն բառարան

Վենետիկի Սուրբ Ղազարի գրադարանում գտնվում է հայերենով գրված պարսկերեն բառարան (Բառարան պարսկերեն), կազմված գրիչ Georg Der Hohannes von Balad-ի կողմից, և Հակոբ Տյուզյանի ('ի Յակոբայ Տիզեան) կողմից կազմված համառոտ քերականական հավելվածով, Կոստանդնուպոլիս, 1826: Բառարանը բաղկացած է 710 էջից, 711-715 էջերի վրա տրվում է հրատարակչի կողմից օգտագործված հայերեն բառերի մի ցանկ, որտեղ դրանք համեմատվում են իրենց համապատասխանող պարսկերենների հետ: Նախաբանում հրատարակիչը նշում է, որ չնայած պարսիկների և հայերի հարևանության շնորհիվ գոյություն ունեն հայերեն և պարսկերեն բառերի միջև շատ նմանություններ, սակայն հայկական ցեղն ու հայերեն լեզուն նույնը չեն, ինչ պարսկականը. «Մակայն այդ լեզուներից յուրաքանչյուրի կառուցվածքն ու կազմությունը պարզորոշ ցույց են տալիս, որ հիմնականում այս երկուսը միմյանցից տարբեր են»:

Բառերի ցանկը տառադարձված է, նույն իմաստով նման հնչող բառերը, որոնք պարսիկների և հայերի համար ընդհանուր են, որոնցից աստղիկներով նշված բառերը, ըստ էության, պարսկական են, մյուսները, սակայն, վերցված են առանց իրարից տարբերակման, առանց այն բանի, որ հեշտ լինի որոշելու, թե ո՞ր բառը ո՞ր ժողովրդինն է:

Ցանկն ունի մոտ 430 համեմատություն, որոնց մեծ մասը ճիշտ է: Եթե նրանք մինչ այդ ուրիշների կողմից էլ էին գտնվել և ուրիշների կողմից էլ էին մեզ ծանոթացվել, դարձյալ բառարանի կազմողին և հրատարակչին՝ փառք ու պատիվ, քանի որ նրանք առաջինն են եղել, որ մի քանի հարյուր պարսկական համապատասխանություններ են գտել: Այսպիսով, բավական մեծ հավելում տրվեց դր Լազարի «Armenischen Studien» աշխատությանը:

15. Ջրադաշտական կրոնի մասին

Եզնիկը (Վենետիկ, 1826), էջ 142-143, գրում է՝ «Դարձյալ ինչ-որ բան էլ են ասում նրանք (պարսիկները), որը բոլորովին հավատալի չէ՝ երբ Ռոմիզող մեռնում էր, իր սերնը զցեց աղբյուրը և (աշխարհի) վախճանին մոտ այն սերմից պետք է որ մի կույս ծնվի, և որդին, ծնված նրանից, կջախջախի Արիմանի (Armen-i) շատ զորաբանակներ, և նրա նման երկուսն էլ, նույն ձևով աշխարհ եկածները, կջախջախեն նրանց զորաբանակները և կոչնչացնեն նրանց:

Այնուհետև, եթե նրանց աստվածները մահկանացուներ են, ինչպե՞ս կարող են նրանք հուսալ մեկ այլ հարության մասին, և անգամ նույնիսկ եռակի հարություն, որը չի կարելի ընկալել որպես հարություն, այլ միայն որպես ոչ-հարություն: Եթե, այնուամենայնիվ, ինչպես նրանք են ասում, որդին մեռավ, ապա անընդունելի էր Ռոմիզոյի ու իր մյուս որդու՝ Xorašet-ի նկատմամբ հնարավոր համարել, որ նրանք երևի չեն մեռնի. որովհետև նրանց աստվածների ամբողջ տոհմը ամուսնացածների և մահկանացուների սերունդ է»:

Պարսիկների ուսմունքի՝ այն աշխարհի և ահեղ դատաստանի մասին ես նյութեր են քաղել ըստ պարսկական աղբյուրների՝ Jahrb. für prot. Theol. էջ 203-245: Այնտեղ ասվում է (էջ 234)՝ «Փրկիչը՝ Astvattra-ն պետք է ծնվի Kāsava-ի ջրից և արևելյան երկրից»: Նրա մայրը լինելու է Rdatfdhri անունով մի աղջիկ, որը, սակայն, կրում է նաև զուգահեռ մեկ այլ անուն՝ Vispataurvairi= «Ամեն ինչ հաղթահարող»-որովհետև նա ծնելու է նրան, որը հաղթահարելու է բոլոր դևերին և մարդկանց թշնամիներին»:

Ըստ այդմ՝ պարսիկների փրկիչը պետք է լինի մի կույսի որդի: Մակայն հետագա աղբյուրները նրա հորը համարում են Zoroaster-ին: Zoroaster-ի սերնը մի օր պետք է կաշի և Jazata Neriosengh-ի կողմից այն ի պահ պետք է տրվի Անահիտին, նրան դևերից հսկում են արդարների 9999 հոգիները: Այս սերմից միաժամանակ կծնվեն Ukhshyattra, Ukhshyatnemaoh մարգարեներն ու փրկիչները:

Վերջում անվանված երկու մարգարեների անունները պարսիկների մոտ ավելի ուշ փոխվել են Husēdar և Husēdarmâh անունների: Husēdar-ի համար պահլավերենում հանդիպում է Xoršetar անունը (West, Pahlavi Texts I, էջ 121, ծնթ. 2 և էջ 233, ծնթ. 2), թերևս հենվելով Xoršet «արև» և պահլավերեն այդ ձևից էլ պետք էր առաջացած համարել Եզնիկի Xorašet (կամ՝ Xorašet)-ը:

Երեք մարգարեների անուններն էլ, ինչքան ինձ հայտնի է, կարիք ունեն ճիշտ վերծանման: Ենթադրում են, որ առաջին երկուսը, որոնք դեռ 7-րդ և 8-րդ հազարամյակներից են գալիս, պատգամ ունեին ոչնչացնելու

կռապաշտութիւնը (կուրքերի պաշտամունքը) և աշխարհը վերաստեղծելու
այնպէս, որ փրկիչը (Saošyās) գալ կարողանա: Համաձայն իրենց պատգամի
էլ կոչվում են այս 3 փրկիչները՝ Ukhshyatrtta «աճող արդարութիւն», Ukhshyat-
nemañh «աճող մեծարանք» և Astvatrtta «մարմնավորված արդարութիւն»:

Ստրասբուրգ, 10 հոկտեմբերի, 1880

Հ ա յ կ ա կ ա ն ք I I

Բնիկ բառեր

բոկ «բոկոտն», հարաբերվում է գերմ. bar բառի հետ barfuß - ում և հւլ.
bosū (լիտ. bāsas), որոնք գալիս են հ. ե. bhasa (կամ bhosō)-ից:

Հայերեն բառը որպէս հավելում ունի -կ վերջածանց, որից առաջ հ. ե. s-ն
անհետացել է, *հմմտ.* no-ր «նոր», սնւ. nava, kher (սեռ./ուղղ. 'khour «քոյր»):



եւ ev սխալ է համադրել գեղ. aiβi- ի հետ, մինչդեռ պետք է համադրել
գեղ. aipi-ի հետ: Կրկնված չլինելու համար հիշատակում են Curtius,
Grundzüge, էջ 264, 293, նաև իմ «Casuslehre»-ն, էջ 305-308: Հայ. ev-ն պետք
է նույնացվի սնւ. api, գեղ. aipi, հուն. έπι բառերի հետ, հ.ե. հիմք ձևը՝ epi:
Հայերենում բառավերջնային ձայնավորը պետք է սղվեր, p-ն տալիս է v,
ինչպէս՝ evthn «յոթ» = έπτά septem, artsiv=սնւ. rjipyā, գեղ. rzifyā, իսկ e-ն,
ինչպէս այլ դեպքերում, սովորականի նման համապատասխանում է հնդեվր.
e-ին:



աղուէ aлуес «աղվես», վաղուց ի վեր իրավացիորեն համադրվում է հուն.
άλώπηξ -ի հետ: Մակայն.աղուէ-ը դժվար է սահմանազատել իր արիական
ազգակիցներից, սնւ. lōpāca և իրան. *raupāsa (նարսկ. rōbāh, պիլ. rōbās և
rōpāh (?)) Bundehishn, էջ 30, 15, 18, օւեթ. rubas, ընդհակառակը՝ ավելի շուտ
այն հեշտությամբ կարելի է դուրս բերել արիական *raupāca հիմք ձևից:
Քանի որ արիական r = եվր. l, հայերենում անդրադարձվում է l-ով կամ η-ով:
au-ն ոչ վերջնականկում u-է տալիս, p-ն՝ ձայնավորներից հետո v, ց-ով = k՝ s
-ով բառասկզբնային λ-ին (ինչպէս նաև՝ r և r-ին) միշտ ձայնավոր (a, e, o) է
առաջադրվում այնպէս, որ (հայ. ք = արիական ā վերադիրն է տալիս) հայ.
աлуес (<a-луес) լիովին համապատասխանում է *raupāca-ին: Ուստի և նաև
հուն. άλώπηξ-ը չպետք է սահմանազատվի սնւ. lōpāca, ինչպէս այդ ուղում
է անել Curtius-ը, այլ պետք է նրանց միջև հավասարության նշան դնել՝ սնւ.
lōpāca = իրան. *raupāsa = հայ. алуес = հուն. άλώπηξ «աղվես»: Մնում է
բացատրել, թե ինչո՞ւ հունարենում ω է կանգնած և ոչ թե av կամ ov, կամ
ev, և թե ինչո՞ւ հայերենում ք է կանգնած և ոչ թե i (*հմմտ.* Armeniaca I, N.
2): Աչքի է զարնում նաև հունարենին և հայերենին ընդհանուր հիմքի

աստիճանավորումը՝ *άλωπηξ*, սեռ. *άλωπεκ-ος* = *αλυες*, սեռ. *αλυεσ*: Ինձ հայտնի ևս մի համապատասխանություն դեպի հայերենում *զ-ի* և *ե-ի* հերթագայության (*ελεegn*), որտեղ այդ արդյունք է *ea-ի* սեղմման, որը, սակայն, *αλυες* բառում չէր կարող տեղի ունեցած լինել: Այս բառը հնդեվրոպականում բաղաձայն հիմքով չէ՞ր թեքվում և հիմքի երկու ձև չունե՞ր՝ ուժեղ *laupek'* և թույլ *laupek*:



հայ. *լոյս* *lois* (սեռ. *lusoy*), լուսին *lusin* (սեռ. *lusni*) բառերը, ինչպես հայտնի է, ազգակից են լատ. *lūc-s*, *lūna*, հուն. *λευκος*, գոթ. *liuhath* «լույս», սնն. *rūszant* «լուսափայլ, պայծառ» բառերի հետ: Սակայն հայերենում ևս նրանք ուրիշ ազգակից բառեր ունեն, քանի որ նրանց են պատկանում նաև՝ լուսն *lusn* և նրա հոգնակի՝ լուսուք *lusun-kh'* = *λευκώματα*. (Buch Tobias 3, 25; 6, 9; 11, 8 և 14), այնուհետև՝ լսնագոյն *lsn-a-goin* *ὕπόλευκος* և լսնանամ *lsn-anam* = *λευκαίνωμα*, *albescō*. *lusn* և *lsn*-ը համապատասխանում են իրար, ինչ վերաբերում է ձայնավորի աստիճանին, հուն. *λυκ* (*ἀμφι* - *λύκ-η* և *λύχ-νο-ς*) բառերում, *lois* և *lusin* բառերը, սակայն, հուն. *λευκ* (*λευκος* -ի մեջ):

Քիչ դեպքեր կան միայն հայերենում, որտեղ, ինչպես այստեղ, դեռ միևնույն արմատում ձայնավորների երկու աստիճան են պատկանում:



կաղին *kalin* (սեռ. *kalnoy*) իդենտիկ է հուն. *βάλανος* -ի հետ: Քանի որ հուն. *β*-ն այստեղ ևս, ինչպես սովորաբար գալիս է նախն. *-g-hg*, հմմտ. լատ. *glans*, իսկ հայ. *k*-ն, ըստ բաղաձայնների տեղաշարժի, գալիս է նախն. *g-hg*: Հայ. *λ*-ն համապատասխանում է նաև *me λ-r* բառում = *μέλι*, *aλ-am* «աղալ» = *ἀλεω*, *aλ* «աղ» = *ἄλς*, *tsaλ-r*-ը «ծաղր» = *γέλως*; *αλυες* «աղվես» = *ἀλώπηξ*: Ուրեմն՝ հայ. **kal-in-o* (հիմքը) լիովին համապատասխանում է հուն. *βαλ-av-o* -ին:



հուն. *βρογμός* «գալիս է» *βροκ* արմատից (Curtius, Griech. Verb I, 316), որն իրեն կանխադրում է *gruk*: Այս *gruk*-ը հայերենում հաջողությամբ կարող էր *kruc* տալ, իսկ այդ *kruc*-ից ածանցված բայը անորոշ դերբայի ձևով պետք

¹ Հոգնակիում սպասելի է՝ *լուսնք*:

է հնչեր *krc-el*: Քանի որ «Նոր կտակարանում» *βρογμός* -ը միշտ կրճել՝ *krc-el* է թարգմանվում, ապա երկու բառն էլ իրենց արմատներով իդենտիկ են:



մօրթի *mauru* նշանակում է «խորթ մայր» և թեքվում է ըստ խառը հոլովման *i-ի* խմբի՝ սեռ. *maurui*, հոգն. սեռ. *mauruats*: Նույն բառը հունարենում հնչում է *μητρύια*, որը կանխադրում է որպես հիմք ձև *mātruyā* կամ *mātruyā* (կազմված ինչպես սնն. *bhrātṛvya-ն* «հորեղբորդի» և այլն, զենդ. *brātūiryō* «հորեղբայր», «մորեղբայր», *brātūire* «հորաքույր», «մորաքույր», սնն. *pitṛvya* «հորեղբայր»): Նախն. *ātr*-ը հայերենում *aur* է տալիս (*հմմտ.* Armeniaca I, N. 1). *u+y>u*, բառավերջնային ձայնավորները սղվում են, այսպիսով նախն. *mātruyā* -ն հայերենում պետք է *mauru* տար, իսկ հայ. *mauru*-ն դրանով իսկ հավասար է հուն. *μητρύια*-ին: Հավանաբար, այս *mauru*-ին համանման է կազմվել Միսիսարեանների «Juristischen Schriften» (XII դ.)-ում հանդիպող *hauru* «խորթ հայր» բառը, որը չէ՞ որ եթե վաղեմի լիներ, պետք է որ համադրվեր սնն. *pitṛvya*-ի հետ: Սակայն «խորթ հայր» հասկացության համար Մովս. Խորենացու մոտ (Վեցնտիկ, 1865, էջ 272) հանդիպում է *yauray* ձևը: Յ-ն կարող էր *h-ի* դիմաց հանդես գալ *հմմտ.* *yisun*, *hing*-ի հետ: **haur-ay*-ը, սակայն, վերաբերում է *hair* բառին (սեռ. *haur*), ինչպես *mauru*-ն *mair*-ին (սեռ. *maur*): Այսպիսով, *yauray*-ի հիմք ձևը պետք է ենթադրել, որ **patrāy*-ը կամ *patrōy*-ն է: Համադրելի՞ է հուն. *πατρω-ς*-ի հետ:

Ի դեպ, եթե «մորաքույր» հասկացությունը արտահայտելու համար կարող է ծառայել «եղբայր» բառի մի ածանցյալը (զենդ. *brātūire*), ապա հնարավոր է համարել, որ «քույր»-ի մի ածանցյալը ծառայեր որպես «հորեղբայր» հասկացության արտահայտման միջոց: «Մորեղբայր» հասկացությունը հայերենում արտահայտվում է *քեռի* բառով, *kheri*, որը կարող է ածանցված լինել -ի վերջածանցի օգնությամբ *kher* հիմքից (*հմմտ.* *քեռ*-այր «քրոջ ամուսինը», *քեռ*-որդի «քրոջ որդի»): Եթե *kheri* հասկացության կապակցությամբ տրված բացատրությունը ճիշտ լինի, ապա զուգահեռաբար միմյանց կողքի կկանգնեին՝

hair «հայր»	սեռ. <i>haur</i>	այնուհետև՝ <i>hauru</i> և <i>yauray</i> «խորթ հայր»
mair «մայր»	<i>maur</i>	<i>mauru</i> «խորթ մայր»
khoir «քույր»	<i>kher</i>	<i>kheri</i> «մորեղբայր»



Օտար բառեր

անապակ *anarak* = *ἀναρατος*, *merus*, ինչպես պրս. *nab*, *badä* և *nab* «անջուր, մաքուր գինի» (W¹), Վուլլերսի կողմից բազմաթիվ անգամ Աստվածաշնչում հանդիպած, օր. Երեմ. 25, 15, *ginvoys anarakis*=մաքուր գինու: Այս բառը նախ.-ում պետք է որ հնչեր **nāba*: Այն ածանցված է պիլ. -*ak* վերջածանցով **anāp*-ից = զենդ. *anāpa* «անջուր», նախ. *nāb*, *purus*, *merus*, *non mistus* (V):



ապարանջան *aparanjan* = *ψέλλιον, χλιδών*, պրս. *ābrāncān*, *bārānjān*, *dāstäbrāncān* W: W-ի կողմից բազմիցս Հին կտակարանում հանդիպած, օր. Ծն. 24, 22 **երկուս ապարանջանս** = *δύο ψέλλια*, նախ. *abranjan circulus ex auro, argento, simil, quo feminae manus et pedes ornare solent* V, արդեն D-ի բառարանում:



բիժ *biž* = *λίμη, λημία; gramiae, lippitudo*. W-ի կողմից բազմիցս, նաև Եզնիկի մոտ հանդիպող, նախ. *bij sordes oculorum, lippitudo* (V), արդեն D-ի մոտ:



գառազ *gavaz* «մի տեսակ փոքրիկ բազե», ըստ W-ի= պրս. *gūvāz* Երզն. XIII-XIV դդ.), Վուլլերսի մոտ ես հանդիպել եմ միայն *guvāš accipiter minoris generis*.



գզիր *gzir*, հանդիպում է C-ի մոտ, ոչ W-ի մոտ. *capo del villaggio*= պրս. *gizir*, *hūmūn*. Hoffmann, *Auszüge aus syrischen Acten pers. Märtyrer*, էջ 62 N. 542.

¹ W-ով ես նշում եմ Մխիթարեանների մեծ բառարանը (1836-37), C-ով՝ Չախջախեանի հայ-իտալերեն բառարանը (1837), D-ով՝ պարսկերեն-հայերեն բառարանը (1826), V-ով՝ Vullers-ի նոր պարսկերեն բառարանը:



գրտակ *grtak*: Եթե այն գրիչների կողմից չի շփոթվել *germak*-ի հետ, ապա պետք է որ նշանակի «հաց» W (3 տեղ «Վարք հարանց», ինչպես նաև՝ *ausgewählten Homilien*), *panetto, pagnotto, pan bianco, pane fatto di fior di farina* C. պրս. *girda* «*res quaevis rotunda, genus panis non tenue et rotundum*» V. արաբ. *jardaqa* (Nöldeke), արդեն D-ի մոտ:



դաստառակ *dastarak* = *χειρόμακτρον, ἐκμαγειον*, *mantile, mappa* (Եղիշե և ուրիշ.), պրս. *dastār* = *mantile, sudarium; hūmūn*. պրս. *dastārca* «ջնջոց, սրբիչ»:



դաստիարակ *dastiarak* = *παιδαγωγός* (Ա կորնթ. 4, 15; Գաղ. 3, 24, 25): Այս բառը W-ն համադրում է պրս. *dastgir*-ի հետ: Բառը ակնհայտորեն պարսկերեն է և վերաբերում է պրս. *dastyār*-ին 1) «*qui potentiam tribuit, adiutor*; 2) *discipulus*; 3) *subditus* (V)»: Այստեղից էլ *dastiarak-em παιδαγωγέω*



դարիճակ *daricak* (ըստ W-ի հանդիպում է Անանիա Մանահնեցու մոտ, XI դ.) «*le pretelle, modello degli orefici, fopma*» C= պրս. *darīca* «1) *portula*; 2) *fenestra*; 3) *forma fundendi aurifabri*» (V):



դափ *daph* C-ի կողմից բերվում է որպես «modern» և բարձրանվում է որպես *cembalo*: Այստեղից էլ գալիս է *daph-el suonare il tamburo* (Թովմա Արծրունի, 10-րդ դ.), *daphium* (Ռսկ. յհ.) և *daphum* (Գրիգոր Մագիստրոս, 11-րդ դ.) = *strepito, romore*: Պրս. *dap* «*ex quo արաբ. daf ortum est, i. q. 2) tympanum manuale*» V.



դուռայ *dura* «sorta di veste» **C** (Ներսես Լամբրոնացու մոտ, Թուրք առ Լեոն (XII դ.), Երզնկացիին այն դիտում է որպես պարսկերեն բառ՝ «դուռայ և ռիտդ» *dura und ritdā*: Առաջինը = արաբ. *durrā'a* «vestimentum quod non nisi e lana conficitur», *ritdā*, նշանակում է ըստ **W**-ի պրս. «*rida*», ուրեմն՝ = *durrā'ja*, *vestis exterior* (**V**), արաբ. *durrā'a* = *pallium*:



զամնատիստ *zarṇavuxt* Եզեկ. 16, 13, հուն. *τριχαπτα*: **C**-ն նկատում է, որ ըստ որոշ բարգմանությունների այն նշանակում է. «*veste sottile tessuta de' peli di camello*», ուրիշներն այն բարգմանում են «*drappo di seta, broccato*»: **W**-ն հիշատակում է պրս. *zārbāft-ը*, այսինքն՝ *zārbāft*= ոսկեգործ, ոսկով գործած: Քանի որ *zārb-ը* գալիս է *zārb-ից*, *bāft-ը* **vāft-ից*, որն իր հերթին մի ավելի վաղեմի **ufta* հանել է գործածությունից, և քանի որ հայերենը *f* չունի և *ft-ի* փոխարեն *vt* կամ *xt* պետք է արտասանելին, ապա *zarṇavuxt-ը* և *zārbāft-ը* նույն աղբյուրից են գալիս և նույն իմաստն են ունենալու՝ «ոսկեգործ»:



զառքաշ *zarkhaš* «ոսկեթել զգեստ» հանդիպում է հետևյալ նախադասության մեջ՝ «Ազանին քազուհիք զառքաշ առ ստորտուկք»-Վարդանի մոտ (13-րդ դ.), Ps. 44, **W**: Այն պրս. = *zarkaš* «*ex aureis filis elaborata res; pannus filis aureis textus*» **V**:



զարտագոյն *zartagoin* կամ *zartagun* «օտարազգի բառ՝ *zārdägün*», այսինքն՝ «դեղնագույն»: Բժշկրն.-ում: **W**. - պարսկերեն՝ *zārdägün* «*sorta di fiore*», **C**. - պրս. *zard+gün*:



զնճիլ *zncil* «զնջիլ» (Վարդ հարանց), **W**. պրս. *zinjīr* «*catena*»:



զոհալ *zohal* «օտար բառ»: Շիրակացու մոտ: **W**. - արաբ. *zuḥal* «Սասունրն»:



զոհրա *zohra* «օտար բառ»: Շիրակացու մոտ: **W**. - արաբ. պրս. *zuhra* «Վեներա»:



զունար *zunar* հուն. *ζωνάριον*: Ոսկ. գծ.: **W**. - արաբ., պրս. *zunnār* (փոխառություն հունարենից):



զանապ *zanap* (այն է՝ *zanab*), արաբ. *zānāb*, այն է՝ «պոչ», այստեղից էլ *zānāb i tinnin* «վիշապի պոչ»: Մի համաստեղության անուն, Վարդան (13-րդ դ.) = արաբ. *ḍanab* «պոչ» (*tinnin* = արաբ. *tinnīn* «վիշապ»):



թարշիշ *tharšiš* կամ **թարսիս** *tharsis*. **W**. - եբրայերեն «մի տեսակ քանկարծեք քար» Եզեկ. 1, 16 ականց Թարսսի և Երգ երգոց 5, 14 ակամբք Թարսսայ (տարբերակը՝ ի թարշշայ), հուն. *Θαρσις*, այսինքն՝ եբր. *taršiš*:



թրմուս *thrmus* «եգիպտական բակլա» (Բժշկրն.) = պրս. *turmus faba aegyptiaca et syriaca* (հուն. *Θέρμος* թգի հատիկ, արաբ. *turmus* Նյուդեբե): Հայերեն է եկել արաբերենից:



լայքա *laikha* կամ **լաքա** *lakha*¹ = *lacca* (**C**), ուրեմն՝ = պրս. *lāk* «լաք» (սնս. *lākšā*):

¹ Մովս. Խորենացու մոտ II, 50 (Վենետիկ, 1865. էջ 128, լայքա շատ, տարբերակը՝ լաքաշատ և դաքաշտ:



լիդակ *lelak* «ινδικόν», indicum «ինդիգո» (Բժշկրն.) = արս. արաբ. nīla, nīlaj, սնս. nīlā «կապույտ», nīlā, nīlī «ինդիգո բույսը»:



լիամ *lkam* (այն է՝ lgam), արս. ligeam (vermischte Schriften; 12-րդ դ. հետո) W. արս. līgām «սանձ»:



լոբիաս *lovias*, նաև՝ lubia, lupia = *λοβός*, phaselus (Մխիթար Գոշ, 12-րդ դ.) = արս. lubiyâ կամ luviyâ = հուն. *λοβός*, phaseolus (V), *հմնտ*. քրդերեն lupék, արաբ. lūbiya, գալիս են հուն. *λοβοι*-ից, Justi, Kurd. Gram. էջ 49:



խալատ *xalat* «արաբ. = sbaglio» C. Նաև՝ խալտիմ չալտ-իմ կամ դալտ-իմ sbagliare (Ներս. Լամբրոնացու մոտ, 12-րդ դ.) = արաբ. Կալափ:



խարակ *charak* արս. xara, sāng i xarā «Վեցոր. (5-րդ դ.). ամենայն քար կամ խարակ, յուրաքանչյուր քար կամ ժայռ, բարդությունների մեջ՝ խարակաձև «ժայռի նման» = արս. Կհարա «ժայռ» և Կհարա:



խումար *humar* «տխուր» (vermischte Schriften) «lauguido e melancolico dopo l'ubbriachezza, ubbriaco» C. արաբ. *xumār* «զարթխում, խումար»:



կաթ *kath* «կաթիլ» = արս. kât «gutta»:



կնճիթ *kncith* (khjith) «քնճութ» Փիլոն, Եփրեմ, Եսեբիոս (5-րդ դ.) = արս. kunjid «քնճութ»: Այսպես արդեն D-ում:



կուռայք *kurai-kh* «Դուրան կարդացող(ներ)» (kuran-i) Ղեւոնդ, Պատմութիւն (8-րդ դ.) = արաբ. qurrā:



կրպակ *krpak* «կրպակ» (Գործք առաքելոց, 28, 15) **երիցն կրպակաց** = *Τριτων Ταβέθρων*) = արս. kurba, այսինքն՝ officina, taberna; արաբ. qurbaj և qurbaq: D-ի մոտ արս. kûrbâ:



հեկեկամ *hekek-am* և *hekek-em* singultio, այստեղից է *hekek-an-kh* singultus (մեկ անգամ «Վարք հարանց»), արս. hukak = hukka «singultus», *հմնտ*. hukhuk «singultus», արս. hûkhûk D.



հեջուպ կամ **հեճուպ** (այսինքն՝ *hejub*), արաբ. hajib, Վարդան, Պատմ. (13-րդ դ.) W, «maestro di camera» C = արաբ. hajib «սենեկապետ»:



հրուշակ *hrušak* (կամ Կրուշակ «pasta dolce» C-ի, ոչ՝ W-ի մոտ) = արս. frōšak կամ farūša «dulciarii genus e farina, butyro et melle confectum» V, արս. «fūrūšâ» D:



դամար *lamar* «ղուսին», Շիրակացու մոտ նշվում է որպես արս. բառ, արաբ. qamar:



մայտան *maitan* (այսինքն՝ maidan) piazza (Վարք հարանց) = արաբ. maydān:



մարդասանկ *mardasank* կամ *martasank* և *murtasang*=բար մարցանկ (հմմտ. Լսագարդ, Arm. Stud. N. 2347): Հուն. λιθάργυρος (Գիրք վաստակոց, 13-րդ դ.) = պրս. *murdâsang* կամ *murda sang*:



մաշարայ *mašara* «պարտեզի ածու» (Գիրք վաստակոց, 13-րդ դ.), պրս. *māšarā*» W. արաբ. *mašāra*:



մթխալ *mtxal* (Վարք հարանց, Գիրք վաստակոց) «օտար բառ» *una oncia e mezza C.* արաբ. *miθqāl*:



յունալ *yunap* (այն է՝ *yunab*), «թուրք. *unnab*» (Մխիթար Գոշ, 12-րդ դ.) = արաբ. *unnāb*:



նասազ *navaz* = νάυτζ (Յայտ. Յովհ. 18, 17) = սնս. *nānâjá* «նավորդ» (Çat. Br.) = հուն. ναυγός, լատ. *navīgus*) (Bezzenb, Btr. VI, 131): Այսպիսով կարելի է եզրակացնել՝ պիլ. *nāvâz* (հմմտ. զենդ. *gav-âz*):



նուսխայ *nusxa* (Նարեկացու և Շնորհալու մոտ, 10 և 12-րդ դդ.) ըստ C-ի «*esemplare, regola, modello*= արաբ. *nusxa*»:



պէշասպիկ *pêšaspik* (Փաստ. Բուզանդ, III, 21; Վենետիկ, էջ 56), պարսկական բառ է՝ «սուրհանդակ», որը մտել է նաև ասորերեն, *հմմտ.* Hoffmann Auszüge, էջ 14, N. 97, որի «*pêšaspâig-ը* Նյուդեբերգ իրավագիտորեն ուղղել է *pêšaspîg*»-ի: Հմմտ. նաև Սեբեոս (հրատ. Պատկ. էջ 56՝ *պէշասպի-ք) pêšaspi-kh*, ուստի և այն պետք է կարդալ՝ *pêšaspik-kh*:



պրքէ *prkhê* (այսինքն՝ *brkhä*), ինչպես արաբ. *bürkhä* (Գիրք վաստակոց) W. «*vasca, piscina, fossa*» և այլն C, արաբ. *birka* «*piscina*»:



ջուալ *juap*, այն է՝ *juab* (Երզն. *aibub*) «*risposta*»= արաբ. *javâb*:



ռահան *rahan* (բեհան, բիհան, բահան) Տօնաց. -ում՝ «*basilico, ozzimo*»= արաբ. *raihân* «ռեհան»:



վարշամակ *varšamak* *σουδάριον* (Յովհ. 20, 7, Ղուկ. 19, 20)= պրս. *vâšâma* կամ *bâšâma*= *velum*: Արդեն D-ում:



փաղանգամուշկ *phalangamušk* «բուրմուր» Մ. Խոր. Աշխարհացոյց (հատվածներ, Վենետիկ, 1865, էջ 615) = պրս. *palangmušk*¹, բույսի անուն և այլն (*հմմտ.* նաև՝ *palangmuš* «*planta quaedam suaveolens*» V), Պատկանեան, Հայ. աշխ. էջ 81:



փարգաստ *phargast* (Սեբեոսի մոտ, 5-րդ դ.) «պրս. *pärkhästh*» «*Dio no'1 permetta, Dio guardi !*»= պրս. *pargast* կամ *bargast* «*absit, prohibeat Deus*»:



փոք *phukh* *πνεῦμα*, *spiritus, flatus, follis* (Աստվածաշնչում), «պրս. *phukh*» W; «*fiato, soffio, gonfiamento, coreggia, folle*» C; պրս. *pûk*, «*flatus ignis excitandi caussa ex ore emissus*»? Արդեն D-ի մոտ:

¹ Նաև՝ *färnâjâmušk*, որը հավանաբար վերը բերված բառերի աղավաղված ձևն է: Պահլավական բառ է (Bundehišn 66, 13), կարող է երկու ձևով էլ կարդացվել:



քափուր *khaphur* (Մ. Խ. Աշխ., էջ 615) = պրս. *kâfûr* «camphora» (Պատկանեան, Հայ. աշխ., էջ 81):



քիչ *khic* «պրս. *khic* = քիչ» **W** (Լամբրոնացի, 12-րդ դ.) = պրս. *kic* «paucus, parvus» (**V**):



քմին *khmin* «պրս. *khâmin, khâmingeah, khâmänd*», «դարան, որոգայթ» (Մատթ. Ուտհայեցի, 12-րդ դ.) = արաբ. *kamin* «դարան»:



օտարիս *otarit* կամ *otarit* «պրս. *utarid*» (Շիրակ.) **W**, «il pianeta Mercurio» **C**, արաբ. *utarid*:

— . . . —
Հ ա վ ե լ վ ա ծ

գոս *gos* «թմրուկ», հանդիպում է միայն մեկ անգամ Շնորհալու մոտ (12-րդ դ.) Ողբ Եղեսիոյ (*gos-er-s*, «թմրուկները»), **D**-ն դնում է արաբ., պրս. *kôs*:



գորշապահանգ *goršapahang* (Եզեկ. 16, 12) = *τροχισκος, ένώτιον* (տարբերակները՝ *gošapahang, gošaparhang*), հաստատ պարսկերեն է *gôš* (*gorš*), պրս. *goš* -ն է «ականջ», *apahang* կամ *pahang* պետք է նշանակի «ականջօղ, ծովերիզ, շղթա», սակայն այն պարսկերենից մինչ այս ինձ հայտնի չի եղել: Պրս. *pâhang* -ի մասին չպետք է մտածել, քանի որ այն մտել է քարոզության մեջ *pâ* «տք» բառի հետ:



Պարսկերեն պետք է լինի նաև **ճառակատիք**-ը *navakati-kh* = *έγκαινία* (Յովհ. 10, 22 և ավելի հաճախ), որը **W**-ը բացատրում է որպես հայ. պրս. *nor-a-kerti-kh* (նոր կերտվածք) և պրս. «*näv kârdän*» (նոր կերտել), իսկ **C**-ն քարզմանում է՝ *dedicazione, festa della dedicazione, la festa della Sagra*, Յովհ. 10, 22-ի նոր պարսկերեն քարզմանության մեջ այն տրվում է *naugan* ձևով (**Vullers**): *nav*-ը պրս. *nau*=զենդ. *nava*= նոր, սակայն *kati*?



Հաստատ չէ **kat** -ի իմաստը նաև **կատապան** բառի մեջ (Վարդան, Պատմ. 13-րդ դ., Մամուլ Երեց, 12-րդ դ.), որը մոտավորապես նշանակում է «քաղաքազուխ»: *pan*-ը հայտնի է շատ բարդությունների մեջ որպես երկրորդ բաղադրիչ, *pan*=պրս. *bân* «պաշտպան», նախն. **pâna*, սակայն *kat*-ը մնում է չվերծանված, այն կարելի է կապել պրս. *kada*-ի հետ? (*kat-ak-hg*) **W**-ը բերում է մի պրս. *kat, kât*=կողմ, վայր համադրությունը և համեմատում է պրս. *kedxuda* «տանուտեր»-ի հետ:



դոճ *doc* կամ **դոճ** *ի խեժ* *docixêž* (Բժշկրն.-ում): **W**-ն այն բացատրում է «լաքք, տուժ» բառերով: **C**-ն քարզմանում է *lacca, cęra lacca*:
Մա պրս. *dôž* (= *dôža*) «i. q. lakh i. e. res quaedum gummi similis »:
V. *χêž* = *χîž*, պետք է որ «տետին» նշանակի, պարսկերեն՞ն է:

ՀԱՅԿԱԿԱՆՔ III

ԲՆԻԿ ԲԱՆԵՐ

1) ԲԱՌՆԱՄ

Այն կարծիքներին, որոնք մինչ այս արտահայտվել են **բառնամ** *barnam* «բարձրացնում են» ներկայի և **բարձի** *bardzi* «բարձրացրի» կատարյալի փոխառնչման մասին, ես կուզենայի ավելացնել ևս մեկը, քանի որ եղածները ես չեմ կիսում: **Բարձի** կատարյալը չի կարող հայ. **բար** արմատից կազմված բաղարկություն լինել, քանի որ այլապես այն անհրաժեշտորեն ոչ թե **բարեցի** *barets-i* պետք է հնչեր, այլ գոնե՝ **բարցի** *barts-i*, ինչպես այդ հետևում է **ընթեռնում** *ēnthēnum* «ընթերցում են», կատարյալը՝ *ēntherts-ay* ձևերից: Բայց եթե կատարյալի «ց»-ի [ts] «ձայնեղացումը» «ձ»-ի [dz] անընդունելի համարենք, ապա **բարձի** *bardz-i*-ն կարող է լինել բարձ = հ.ե. *bhrgh¹* արմատի պարզ կատարյալը, որն արդեն հենց այդպես էլ ընդունվել է: Հարց է ծագում միայն, թե **բառնամ** ներկան հենց նույն արմատից է, թե՞, ինչպես մինչ այս էին համարում, մի ինչ-որ *bar* արմատից պետք է ածանցված լինի = սնու. *bhar*, հուն. *φερε*: Անշուշտ, հրապուրիչ է հայ. **բառ-նա-մ** *bar-na-m*-ը նախնական *bhr-nā -mi*-ից դուրս բերել (սնու. **bhr-nā-mi*), հնչյունական տեսանկյունից ևս այդ բանի դեմ ոչ մի առարկություն չի կարող լինել: Սակայն այդ անհամատեղելի է բառի արտահայտած իմաստի հետ: Մասնկրիտի *bhar-ը* = հուն. *φερε* հայերենում արտահայտվում է **բեր** ձևով (ներկա՝ բեր-են *ber-em*, կատարյալը՝ բեր-ի *ber-i*) և ունի «կրել» իմաստը, ինչպես **բառնամ**, **բարձի** ձևերի իսկական իմաստը «վեր բարձրացնել»-ն է: Հմնտ. Ջախջախեսանի հայ-իտալերեն բառարանում՝ **բառնամ** *barnam* *alzare dalla terra, levare, sollevare*; **բառնալիք** *barnali-kh, lieva* «ձծակ»; **բարձումն** *bardzumn il levare, il tor via*; **ամբառնամ** *am-barnam* *alzare, levar* in alto, *sollevare*; **ամբարձումն** *ambardzumn alzamento, leva, levamento*; **համբառնամ** *ham-barnam* *alzare, innalzare*; med. *ascendere, levarsi in alto*»; **համբարձումն** *hambardzumn alzamento, leva, levamento, hmnun*. **համբարձ** *դժե* Յայտ. 10, 5, ինչպես **բարձ** (բարձրացրեց) Յովի. 6, 5 և **ամբարձ** (բարձրացրեց) Դուկ. 6, 20: Հայերենի մեծ Բառարանը ճիշտ է թարգմանում *berem-ը* = *φερω*, իսկ *barnam-ը* = *αἴρω*, պարզ է, որ **բերեմ** *berem-ը* հարկ է լինվի սահմանազատել **բառնամ** *barnam*-ից, որը նշանակում է «բարձրացնում են»: Ընդհակառակը՝ ինձ քվում է **բարձի** «վեր բարձրացրի» կատարյալի ձևը գալիս է **բարձր** *bardzr* ածականից (սեռ. *bardzu*), որը միանգամայն իրավա-

ցիորեն կարելի է համադրել սնու. *brhat*, զենդ. *brzat*, օսեթ. *barzond* բառերի հետ:

Այսպիսով, **բառնամ-բարձի** *barnam-bardzi*-ն ըստ իմաստի (*αἴρειν*) հարկ է սահմանազատել իրարից; *bardz-i*-ն ոչ թե բաղադրյալ, այլ պարզ Aorist է, գալիս է *bardz=h.ե. bhrgh¹* արմատից, որից նաև ներկան *barnam-ը* պետք է դուրս բերել: Այսպիսով, ես համադրում եմ՝

ներկա, 3-րդ դ. *bar-na-y aἴρει = հ.ե. bhrgh¹ -nā -ti*
կատար., 3-րդ դ. *e-bardz դժե = հ.ե. e-bhrgh¹ -et*

Ներկայում «ձ»-ն = *gh¹*, *r*-ի և *n*-ի միջև տղվում է, ինչպես օր. *s=k¹* *uth, acht, óκτώ* բառերում, կամ *r*-ն *etes* «ետես» (*e-ters*-ի դիմաց) *έδρακε* բառում է տղվել:

Բառնամ, **բարձի** բառերի նման հարկ է, իհարկե, դատել նաև **դառնամ**, **դարձայ** բառերի նկատմամբ:

2) մեղանչեմ

Հայ. մեղ *mel* բառը Յովի. ի Աետարանում 15, 22 և 24 տրվում է որպես հուն. *άμαρτια* բառի թարգմանություն, իսկ **մեղանչեմ** *mel-anč-em* բայը Աստվածաշնչում միշտ ծիսայում է որպես միջոց հուն. *άμαρτάνω* բառի թարգմանության (*hmnun*. ներկա՝ մեղ-անչ-է = *άμαρτάνει*) Ա կորնթ. 7, 36, կատարյալը՝ մեղ-ար = *ήμαρτες*, մեղ-ալ = *ήμαρτε* Pl. Kr. I, 7, 28):

Հունական *άμαρτια, άμαρτάνω, ήμαρτον, νημερτής, ήμεροτον, άβροτάζειν* բառերի հիմքում, եթե մենք մի կողմ թողնենք *den* *histerogenen Spiritus asper* (Curtius, Griech. Verb. II, էջ 11), որպես արմատ ընկած է *amrt*-ն, որն անցնում է *amrt, amert, amort* աստիճաններով: Կորնթոսից սահմանազատվելով (տե՛ս նշված տեղը), ես ենթադրում եմ, որ *amrt*-ի այդ *a*-ն, ինչպես և *ά-μέλγ-ω*-ում, նախադրություն է, և միանում են Կորնթոսի կարծիքին (Griech. Verb. I, էջ 238; II, 10-11), այն հարցում, որ *amrt* բառի *t*-ն «accessorisches» է, այնպես, որ որպես *άμαρτάνω*-ի և այլնի արմատի էլենենտ, *ar*-ի կորուստ է տալիս, որը ձայնավորի միջին աստիճանում որպես *mer*- համապատասխանում է հայերեն մեղ *mel*-ին:

3) փոյթ

Հուն. *σπουδή*-ն հայերենում միշտ **փոյթ** *phoith* բառով է թարգմանվում, նրանցից ածանցված *σπουδάζω*-ն՝ ածանցված **փութամ** *phutham*-ով (կատարյալը՝ փութացայ = *έσπούδασα* Թուրք առ գաղ. 2, 10):

Իմաստների բացարձակ նույնության դեպքում ևս նրանք նաև

¹ Փաստոս Բազանդ, 15, բարձիւն և բերիւն «բարձրացրին և բերին»:

հնչյունապես են միմյանց բավական մոտ կանգնած՝ հուն. *σπουδή* և հայ. **փոյթ** *phoith* բառերը, որպեսզի իրավունք վերապահվի ենթադրելու, որ ստուգաբանորեն նրանք նույնն են:

Բառասկզբնային *sp-*ի համար հայերենում այժմ, անշուշտ, «փ» պետք է սպասել, որպես «ա»-ի աստիճանավորում, հայերենը օրինաչափորեն *oi* է առաջադրում, մինչդեռ ոչ վերջնավանկում՝ «ա», իսկ նախնական «ժ»-ի դիմաց, ըստ բաղաձայնների տեղաշարժի, հայերենը «տ» է առաջադրում, այնպես որ **σπευδο-*, *σπουδή-* ձևերի դիմաց հայերենում սպասելի էր **փոյտ**: Իրականում առկա **փոյթ**-ի և այս **phoit-*ի միջև զոյություն ունեցող տարբերությունը բավարար չէ, որպեսզի **փոյթ** *phoith* = *σπουδή* հավասարումը անհավանական համարենք:

4) անուրջ

անուրջ *anurj* (սեռ. անրջոյ anrjoy) նշանակում է «երազ, անուրջ» (*δναρ*, Մատթ. 27, 19) և առնչվում է հուն. *ὁ δνειρος*-ի հետ: Ինչպես հուն. *στειρα* = **στερια* բառը հայերենում **ստերջ** *sterj* բառով է արտահայտվում, համապատասխանորեն *δνειρος* = **νεριο-*ց ներկայացվում է **անուրջ** *anurj* բառով: **Անուրջ**-ում աչքի է զարնում «ա»-ն, քանի որ այն այստեղ սովորականի նման հնդեվրոպական «ս» -ի դիմաց չի կանգնած: Իմիջիայլոց, մի քանի այլ դեպքերում ևս հայերենի «ու»-ն ազգակից լեզուների «ե»-ին կամ «օ»-ին է համապատասխանում, *հմմտ.* **ուք** *uth* = octo, **ուս** *us* = ὄμος, սնս. *arpsas*, **ծունր** *tsunr* = γόνυ, *genu* և այլն:

5) չու

Հուն. *σεύω*, *σεύομαι*-ն, ինչպես հայտնի է (Kuhn's Ztschr. 25, էջ 276), առնչվում է սնս. *cyavatē* (հեռանալ), զենդ. *šavaite* < **šyavaite* (զնալ), հայրս. *ašiyavam*, *ašyavam* -ի դիմաց (զնացի, քայլեցի), որոնք բոլորը գալիս են **չու** արմատից: Ժամանակակից իրանական լեզուներում ևս այդ արմատն իր ներկայացուցիչն ունի, այսպես՝ նայրս. անորոշը՝ *šu-dan*, ներկան՝ *šavam* «զրնում են», աֆղ. *šv-əl* «to becom» և «to go» (Trumpp, Grammar of the Paštō, էջ 236), ներկան՝ *zah šam*, բելուզ. հարակատ. դերբայ՝ *šuta* կամ *šutag* «gone» (Mockler, Grammar of the Baloochee Language, էջ 67), քրդ. *cüm* «զնում են» (բարբառային զուգահեռ ձևերը տե՛ս Justi, Kurd. Grammatik, էջ 213-214), օսեթ. *tsaun* «զնալ» (Sjögren, Osset. Sprachlehre, էջ 470), *waxi`cauam* «զնում են» (Shaw, On the Ghalchah Languages, էջ 220, Tomaschek, Die Pamir-Dialecte, էջ 118):

Ուշադրության են արժանի վերջին երեք ձևերը՝ քրդ. *cüm*, *waxi`cauam*, օսեթ. *tsaun*, որոնք ցույց են տալիս, թե դր Լազարոյի «Arm. Stud.» N. 1786 բերվող *Dictum*-ից: Ոչ մի արիացի **չու** բառի համար բառասկզբնային որևէ այլ հնչյուն չգիտի, քան եթե «š»-ն, ինչ եզրակացության կարելի է հանգել: Յուստիի տեղեկատուում (Handbuch, էջ 309), (*shu*-ի տակ) բերված ձևերի թվում է նաև հայ. **չուել** *cucl*-ը: Այն ունի «մեկնել, դուրս գալ», իմաստը (**չուեաց** = *ἀπῆρε* Ծն. 12, 9; 13, 11) և ածանցված է **չու** զոյականից **չու ռու** «չու, մեկնում» (**չու արարեալ** Ծն. 13, 18 = *ἀποσκηνώσαζ*), որն, անկասկած, մեր **չու** արմատից է սերվում: Հայ. **չու ռու** = նախն. և սնս. **չուտի**- (մի բանից հեռանալ), որը հայերենում առաջին հերթին **չուս** և ապա **չու** պետք է տար, *հմմտ.* *Armeniaca I*, 2 և 4:

6) չոգայ

Հավանաբար մեծ խիզախություն չի լինի, եթե այս **չու** -ի կողքին դնենք հայ. կատարյալի **չոգայ շոգ-այ** «զնացի» Գործ. 25, 15, **չոգալ** «զնաց» Մատթ. 18, 30, **չոգաք** *ἡλθομεν* Ծն. 32, 6, **չոգան** «զնացին» Ծն. 4, 8, **չոգան զհետ** (*ἀκολουθει*) Յայտ. 14, 13 ձևերը:

Մի հնդիրանական ներգործական սեռի ներկայի՝ *cyavāmi* «զնում են» ձևին համապատասխանող ձևը հայերենում հավանաբար **coyim* կարող էր հնչել, *հմմտ.* **լոգ-անամ** *log-anam* «լողանում են» = *lavo*, *λόφω* և **տայգր տայր** «տեքր» = սնս. *dēvā*, հուն. *δαήρ*; նրան համապատասխանող aorist II-ը պետք է հնչեր *coy-ay*, ինչպես այդ առկա է **բերիմ** *berim*; **բեր-այ** *ber-ay* համադրության դեպքում:

Այս բայի ներկան և անկատարը գործածությունից դուրս են եկել **երթալ** *erth-al* բայի համապատասխան ձևերով, սակայն հետագայի հեղինակները (*հմմտ.* *Arm. Lex. II*, 577, **չոգամ** բառի տակ) կատարյալի համար կազմել են նոր ներկա՝ **չոգամ** *coyam*, որտեղից էլ գալիս են **չոգամ** *coyam*, **չոգայ** *coyay*, այստեղից էլ նաև անորոշը՝ **չոգալ** *coyal*, իր գործիականի հետ՝ **չոգալով** *coyalov*, բերվում են նշված տեղում:

7) կոգի

Ինչպես *coy-ay*-ն է կանգնած *cu*, *cuem* ձևերի կողքին, նույն ձևով էլ *kogi*-ն է կանգնած *kov*-ի կողքին: Դեռ հայ. *Lexikon*-ն է *kogi* «կարագ» (կոզի կովուց, *kogi kovuts* Օր. 32, 14 = *βούτυρον βοῶν*) բառը դուրս է բերում **կով** *kov* բառից, և իրավացիորեն: **Կով** *kov*-ը, ինչպես հայտնի է, սնս. *gāus*, հուն. *βοῦς*, մինչդեռ կոզի *kogi*-ն = սնս. *gāvya* «կովից եկող», զենդ. *gāvya*:

8) հնդեվրոպական s-ի հայերեն փոխարինողները

«s» հնչյունը հայերենում նույն ճակատագրին է արժանացել, ինչ հունարենում: Հունարենում «s»-ն պահպանվում է խուլ պայթականների և շնչեղների պաշտպանության ներքո, ինչպես նաև զ, լ, ժ հնչյուններից հետո և բառավերջում, մյուս դեպքերում՝ նա կամ շնչեղ հնչյուն է տալիս, կամ սղվում է:

Հայերենում «s»-ն պահպանվում է մի քանի բաղաձայնների պաշտպանության ներքո, բառավերջում այն սղվում է (թեև որոշ դեպքերում այն kh-ով էր փոխարինվում, որի ծագումն ինձ կասկածելի է թվում), բառասկզբում և բառավերջում այն «h» է տվել կամ «y», կամ՝ երկու դեպքում էլ սղվել է: Համեմատելք (Man vergleiche):

s-ը պահպանվել է t-ից առաջ *astl* «աստղ, համաստեղություն» = *ἀστὴρ, z-gest*, լատ. *vestis, ost* «ոստ, ճյուղ» = գոթ. *ast-s, sterj* «չբեր, ստերջ» = *στειρα (nist* «նստելը», «դիրք, տեղադրություն» < h.ե. *nizdo-s*);

“-----” p-ից առաջ՝ *spas-el* «aspettare» (սպասել), *osservare* (նկատել, ուսումնասիրել), *insidiare* (լրտեսել, դարանել), զենդ. *spas*, սնու. *spas* «լրտես?»;

“-----” x-ից առաջ՝ *sxal* = *σφάλμα, sxalim* «սխալվել, վրիպել» = *σφάλλομαι*, սնու. *skhalati* «սխալվում է», *skhalitam* «սխալմունք, վրիպում, սխալ» (sk-ն տվել է *ts'* aits «քննություն, հետազոտություն» = հրգ. *eisca, hartš* «հարց» = հրգ. *forsca, ks* > *ts* վեց *vetš* բառում = *էջ*);

“-----” «n-ից և m-ից հետո, որոնք սղվում են՝ *amis* = լատ. *mēnsis; mis* = գոթ. *mims; us* = սնու. *amša-s*, հուն. *ώμος*, հոգն. հայց. *mardēs* = h.ե. *morto-ns*;

s-ն տալիս է h՝ *hin*, սնու. *sana-s*, հուն. *ἔνο-ς*;

“-----” y՝ *goy* «existens, substantia»; *hūmūn*. սնու. *vasati*, գոթ. *visan* (կամ *goy*-ը ներկայի 3-րդ դ. գոյականացված ձևն է, ինչպես *ծ?*); *khair* = սնու. *svasā* (հոգն. ուղղ. *kh-o-r-kh* = սնու. *sv-asā-r-as, y=s-ի* սղմամբ);

sy “-----” y՝ *mardoy* «մարդուն» = սնու. *martasya*;

s-ն սղվել է՝ բառասկզբում ձայնավորներից առաջ՝ *al* = հուն. *ἄλς*, լատ. *sal; am* «տարի», սնու. *samā*, զենդ. *hama* «ամառ», *amaṛn* «ամառ», հրգ. *sumar; arbenam*, լատ.

sorbeo, evthn = *ἐπτά, septem; indz* (ints) «ինձ», սնու. *sipha*;

Քառասկզբում m-ից առաջ՝ *mi* «մեկ» = հուն. *εἷς, μία, ἕν* < *sem-s-ից, sm-ia, sem* (G. Meyer, Griech. Gram. § 395);

“-----” n-ից առաջ՝ *nu*, «հարս» = սնու. *snušō*, հուն. *νυός; neard* «նյարդ, ջիղ», սնու. *snāvan*, զենդ. *snāvare* «ջիղ»;

“-----” v՝ *vetš* (6) = հուն. *ἕξ (=Feξ), sex*, նախն. *sveks*; ընդհակառակը՝ sv-ն տվել է kh, *khirt-n* «քրտինք» = *idḡ óς*, սնու. *svid* «քրտնել»; *khair* «քույր» = սնու. *svasā, khun* «քուն» = սնու. *svapna-s*;

Քառամիջում m-ից առաջ՝ գոմ «ես եմ» *existire, hūmūn*. սնու. *vas* «լինել, գտնվել, մնալ», *em* «ես եմ» = սնու. *asmi*, լեւ. *՛էմու*;

“-----” n՝ *gin* «արժեք», սնու. *vasna-s*, լատ. *vēnum; zgenum* «հազնվել» = *ἔννυμαι, Feσ-νυ-μαι*-ի դիմաց; որպես դերանվան տրականի վերջավորություն՝ *um* (օր.՝ *im-um* «իմում», *mer-um* «մերում») = սնու. *-asmāi* (օր.՝ *tasmāi, kasmāi*);

“-----” r-ից առաջ՝ *garun*, զենդ. *vañhra; kher* «քրոջ» = h.ե. *svesr-os*;

“-----” k-ից առաջ՝ *bok* «բոկոտն», հայ. *bosū; mukn* «մուկ», *մոշ*, լատ. *mūs, musculus*, սնու. *mūšikā*;

“-----” u-ից հետո՝ *lu* հայ. *blūcha*, լիտվ. *blusā; nu* «հարս» = սնու. *snušā*, լատ. *nurus; srunkh* = լատ. *crures*: Այստեղ «s»-ն «y» է տալիս, իսկ «ay»-ը սեղմվում է «au»-ի, *hūmūn*. *Armeniaca I, N. 2*:

9) «u» նախածանցը

Այս դիտողություններից հետո հեշտ է որոշել, թե ո՞րը պետք է լինի բարդ բառերի մեջ որպես առաջին բաղադրիչ օգտագործվող մակբայի հայկական ձևը՝ h.ե. *dus, duz* «վատ» (*hūmūn*. հուն. *δυσ-μενής*, սնու. *dur-manās, qենդ. duš-manā*, գոթ. *tuz-vērjan*): *us*-ի դիմաց հայերենում, անշուշտ, «u» պետք է հանդես գա, ժ-ի դիմաց՝ բաղաձայնների տեղաշարժի համաձայն «t», այնպես որ հայ. **tu*-ն h.ե. *dus (duz)*-ին է համապատասխանում: Քանի որ, սակայն, «**tu*»-ն մասամբ բաղաձայններից առաջ է կանգնում, այնքան, որքան բաղաձայնով սկսվող բառերը ձայնավորով սկսվողներից ավելի բազմաբանակ են, ապա «u»-ն պետք է ենթարկվեր այն օրենքին, որը պահանջում է ոչ վերջին վանկերի յուրաքանչյուր «b»-ի և «u»-ի սղումը՝

առանց բացառության (Armeniaca I, 3): Եվ, այսպիսով, «*ա»-ն = **aus** հայերենում իսկապես կիրառվում է որպես «տ» նախածանց (ժխտական իմաստով), օր.՝ հեռույալ բառերում՝

ազեղ t-geł = *δύσμορφος* **զեղ** *geł* «զեղեցկություն» բառից;

ազեւ t-gēt «ազեւ» **զեւ** *gēt* «զիտակ» բառից = սնւ. *durveda* «ազեւ»;

(**ազոյն t-goin** = ան-զոյն *an-goin* «scolorito» («զունագուրկ, զունատ»), **զոյն** «զոյն» բառից;

(**ազօր t-zōr** = ան-զօր *an-zōr* «impotente, debole» (թույլ) **զօր** *zōr* «զորություն» բառից;

ակար t-kar *ἀσθενής* **կար** «կարողություն, ընդունակություն, ուժ», բառից;

ահալ t-hal *indigesto, indigestibile* **հալ-իմ** *hal-im* բառից «liquefarsi, con-sumarsi»; «ի հալ անկանիլ» «i hal ankanil» «fondersi»;

ահաճ t-hac *δυσάρεστος* «հաճ»-ից *compiacente*; **հաճ-իմ** *hac-im* «հաճել, հավանել»;

ահաս t-has *ἄωρος* **հաս**-ից «հասնելը», տե՛ս նոր-ա-հաս *nor-a-has* և այլն;

աճեւ t-dzev *ἀσχήμων* **ճեւ**-ից «ձև, կերպարանք»;

ամարդի t-mard-i *inhumanus* **մարդ** բառից;

տքնիմ t-khn-im «տքնել» (Փաստոս, էջ 40) **քնիմ** բառից:

«Վ» = հ.ե. **aus** նախածանցի հականիշն է «հ»-ն = հ.ե. **su**, որը պահպանվել է **հզօր** *hzōr*, **հքո** *hlu* (*hūn*). լու եղել ևս *elev* «զվեց»), **հնուտ** *hmut* «հմուտ, փորձված» («մեկը, որ ինչ-որ մի բանի մեջ միջամուխ է եղել», *hūn*). *has-u* և այլն: Սակայն եթե «Վ»-ն զենք. **աճ**, **աճ**-ի հայկական ձևն է, ապա ինքնըստինքյան հասկանալի է, որ հայ **աճ**-ն պարսկերենից պետք է փոխառնված լինի: Այն հայերեն է ներթափանցել այնպիսի բառերի հետ, ինչպիսիք են՝ **դժ-խեմ** *dž-xem* (Փաստոս, 236) = պրս. *duž-xim* (տե՛ս **W**-ում՝ պրս. *diž-xim*), **դժ-կամակ** *dž-kamak* (Փաստոս, 94) = պրս. *dižkâma* և այլն: Հայերենը պետք է որ **աճ**-ի համեմատությամբ նախապատվությունը **աճ** ձևին տար, քանի որ այն չէր կարող հանդարձել ձայնեղ **ա**-ին խուլ **ս**-ի անմիջական հաջորդումը:

10) ի վեր

Ըստ իս, «s»-ն կորցրած բառերի թվին պետք է պատկանի նաև մակրայ և մախդիր՝ **ի վեր** *i ver*-ը, **ի վերոյ** *i veroy* **ի վերայ** *i veray* = *ἄνω, ἐπάνω, ὑπέρο*, նաև «վեր»-ը **ver** բաղադրությունների մեջ = *ἀνα-*: Ուստի և այդ «վեր»-ը պարսկական կամ «արշակունյան» փոխառություն համարելը սխալ է, քանի որ պարսկերենի ազդեցությունը հայերենի վրա այնքան ուժեղ չի եղել, որպեսզի հայերեն ներթափանցեին նաև նրա նախդիրները. բոլոր մնացած նախդիրները նախնական են, ուրեմն ինչն¹ նաև «վեր»-ը չպետք է այդպիսին լինի: Այնուհետև, եթե պահպանվեին, պազենդերեն, պարսկերեն **apar, awar, bar** ձևերը հայերեն մտած լինեին, ապա նրանք հենց այդպես էլ **avar, arar, bar**¹ կհնչեին, լավագույն դեպքում նրանք պետք է *var* տային, սակայն դժվար թե՛ *ver*, որովհետև պրսկ. *a*-ն հայերենում «ա» -ով է արտահայտվում: Այն փաստը, որ «վեր»-ը բնիկ հայկական բառ է և ոչ թե փոխառություն, ըստ էության ապացույցի կարիք չունի, սակայն հարց է ծագում միայն, թե ինչպե՞ս պետք է այն ստուգաբանորեն վերծանվի: Ինձ թվում է, որ այդ հարցի ճիշտ պատասխանը Ֆիքր գտել է (Kuhn's, Beiträge, VII, էջ 365), մեր «վեր»-ը համադրելով սնւ. **varšmán** «բարձունք», «գլխավորը, գերագույնը», **varšman** «բարձունք», «գերագույնը», **varštyas** «ավելի բարձր», **varšištha** «ամենաբարձր, գերագույն», հալ. *vrū chū* *κορυφή, cacumen, vrūchu* *ἑπάνω*², լիտվ. *virszūs* «գերագույնը», *virszūi* «վերևում» բառերի հետ: Բացի այդ, հայերենի «վեր»-ն ի սկզբանե գոյական է և ունի «բարձունք» իմաստը, **ի վեր**-ը նրա հայցական հոլովն է, **ի վերոյ, ի վերայ** ձևերը՝ բացառականը՝ «ի» նախդրով, որը, հակառակ գոյություն ունեցող ենթադրության, չի առնչվում սնւ. *api*-ի հետ: Որ «վեր»-ը նախն. վերս *vers*-ից է գալիս, վերը «ս»-ի մասին արված դատողություններից հետո առանձնապես խիզախ ենթադրություն չպետք է համարել:

Այսպիսով, ճիշտ հակառակն է այն բանի, որ պնդում է դր Լագարդը իր *Arm. Stud.* (էջ 144)-ում:

11) առն

Հուն. *ἄρρην* = *ἄρσην*-ը զենդերենում ներկայացվում է *arša* (տղամարդ, արու) ձևով, որը սեռականում *aršōd* է տալիս: Այս *aršōd*-ի նախնական ձևը պետք է որ **ars-n-os** եղած լինի, որից, սակայն, հայերենում միայն **առն** առ

¹ Հմմտ. ներքևում՝ 18) ապարքանեմ-ը:

² Ռուս. *verchū* «վերինը», *vū verchū* «դեպի վեր», *verchu* «վեր, վերևում»:

կարող էր առաջանալ, քանի որ «rs»-ն «r», իսկ n-ից առաջ r է տվել: Ինչ os-ին է վերաբերում, ապա այն, բառավերջում գործող հնչյունական օրենքների համաձայն, պետք է սղվեր: Այսպես է հնչում այր air «այր, տղամարդ» բառի սեռականը: Ինչքան էլ որ դյուրին լինի առն-ի և մնացած քերական հոլովները մի նախնական arsan ձևից դուրս բերումը, դրանով չի կարելի բացատրել այդ բառի ուղղականը՝ այր air, հոգնակին՝ արք arkh (*հմմտ.* հայր hair, հոգնակին՝ հարք harkh, քույր koir, հոգնակին՝ քորք khorkh): Ընդհակառակը՝ քերևս հնարավոր է, որ արու aru բառը, համաձայն իր արմատի, պատկաներ *arša* ձևերին:

12) «ոջ»-ով ավարտվող ներգոյական

Լատները իր «Gramm. der classischen arm. Sprache» աշխատության մեջ, էջ 16-ում «ոջ» օյ-ով կազմվող ձևերի կապակցությամբ նշում է՝ «ոջ»-ով սեռականը ձայնավոր n-հիմքի մոտ միաժամանակ տրականի արժեք է ստանում, քանի որ այնպիսի կապակցություններ են հանդիպում, ինչպես, օր.՝ **ի միում տեղուջ** «մի տեղում», որոնք միևնույն ձևով արտասանվող տրականի որոշակի -ում վերջավորության պատճառով պետք է ընկալվեին որպես տրական:

Պետերմանը ևս իր «Brevis linguae Armeniacae grammatica» աշխատության մեջ միայն նշում է՝ «Nonnulla nomina litteram «ջ» in Dat. et Abl. Sing. adsumunt», համապատասխան ձևով նաև էջ 34-ում «տեղի» -ի համար որպես տրական նշում է **տեղոյ** կամ **տեղուջ** ձևերը: Բազրատունին ևս իր ծավալուն քերականության § 93-ում այլ բան չի ասում և բավարարվում է միայն խայտաբղետ նյութի թվարկմամբ:

Հնարավոր է, որ ուշ շրջանի հայերենում ոջ= օյ-ը միանգամայն համարժեք է ոյ= օյ-ին (այդ կապակցությամբ ես դեռևս հավաքած նյութ չունեմ), սակայն հին հայերենում, այն է՝ Նոր կտակարանում, դա այլ կերպ է: Այնտեղ հանդիպում են «ոջ»-ով հետևյալ ձևերը՝

յեկեղեցուցն «եկեղեցում» Մատթ. 18, 17; Գործ. 7, 38, Ա կորնթ. 14, 28; Կողոս. 4, 16; Եփես. 3, 21; սակայն սեռ. **եկեղեցոյ**. Եփես. 3, 10; տր. Մատթ. 18, 17; Ա թեսաղ. 1, 1; Փիլիմ. 2;

յայգուջ իրում «իր այգում» Մատթ. 21, 28, Ղուկ. 13, 6;

ի ձիթենուցն «ձիթենու մեջ» (*εἰς*) Հռովմ. 11, 24 (որի կողքին՝ **ի ձիթենոյ անտի**, բացառական);

ի մորենուցն *ἐν* տի βάρω Գործ. 7, 36 (նաև՝ **մորենոյն** βάρου Գործ. 7, 30);

ի թզենուցն «թզենու վրա» Ղուկ. 13, 7;

ի տեղուցն յայնիկ «այս տեղում» Գործ. 7, 7; **ի տեղուցն յայնիկ** Ղուկ. 2, 8; (այստեղից՝ բացառականը՝ **ի տեղուջէ իրմէ** «իր տեղից» Յայտ. 2, 5; սակայն՝ **ի տեղոյ իրեանց** Յայտ. 6, 14);

ի կղզուցն «կղզու վրա» Գործ. 28, 9; Յայտ. 1, 9 (**կղզոյն** Գործ. 28, 7, սեռականի կողքին);

ի հայելուց «հայելում», Յկ. 1, 23;

ի տարուցն «տարում» Եբր. 9, 7;

(*հմմտ.* Pentateuch-ում **ի սրբում տեղուց** *ἐν τόπῳ ἁγίῳ* Ելք 29, 31, **տեղոյն** սեռականի կողքին, Ծնունդ. 21, 31), **ի միսում տարուց** «մյուս տարում», Ծնունդ. 17, 21; **առ կաղնուցն** *παρὰ τῆν δρῦν*, Ծնունդ. 13, 18:

Այս ձևերը ցույց են տալիս, որ «ոջ»-ը ի սկզբանե ներգոյականի վերջավորություն է, այն է՝ «յօ»-հիմքերի (ուղղականը՝ -«ի») ներգոյականի վերջավորությունը հնագույն հայերենում: Իսկ թե ինչպես են վերաբերում այս ներգոյականներին դեռ Նոր կտակարանում հանդիպող այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ սեռ. **միոջ** (սեռ. **միոյ**, տր. **միում** ձևերի կողքին), սեռ. տր. (ներգ.) **կնոջ**, **զհառոջ** (Գործ. 1, 19) մնում է մութ. համենայն դեպս նրանք կարող են հին ներգոյականներ լինել, քանի որ, բացի վերը նշված ձևերից, հայերենում սեռական, տրական և ներգոյական հոլովները ընդհանուր առմամբ համընկել են: Ըստ այդմ՝ **տեղի** *teyi* «տեղ» բառը հին հայերենում հետևյալ ձևով է թեքվում. ուղղ. տեղի *teyi*, հայց. **զ տեղի** *teyi*, սեռ., տր. **տեղոյ** *teyvoy*, ներգ. **ի տեղուց**, բաց. **ի տեղուջէ** i t eyvojē գործ. **տեղեսու** *teyeav*:

13) «ում»-ով կազմվող տրական-ներգոյական

«ոջ»-ով ավարտվող ներգոյականներն արդի հայերենում կորսվել են, չնայած նրան, որ հոլովն ինքը որպես այդպիսին գոյություն ունի:

Արդի արևմտահայերենը այդ հոլովը ձևավորում է գոյականին հաջորդող «մէջ» **մէյ** (հին հայ. մէջ **մէյ** = մեջտեղ) բառով՝ **քաղաքի մէջ**, մինչդեռ արևելահայերենն ունի ներգոյականի -ում (-ամ, -ըմ) վերջավորություններով կազմվող իր սեփական հոլովաձևը՝ **քաղաքում** (**քաղաքամ**, **քաղաքըմ**) (Sitz. d. Akademie d. W. zu Berlin, 26, Nov. 1866, էջ 728; Abh. d. Akad. d. W. zu Berlin, phil. hist. Cl. 1866, էջ 67):

Այդ ներգոյականի ծագումը դժվար չէ ապացուցել:

Սամսկրիտում սեռ տարբերակող դերանունների տրական-ներգոյականի դիմաց՝ սնս. *tā-smāi*, *tā-smin*, զենդ. *ahmāi*, *ahmi*, հայ. *to-mu*, *tom*, *hi* իսով. *tā-mui*, *ta-mi*, գոթ. *pa-mma* հայերենում կանգնում է, վերջավորության տես-

անկյունից, տրական-ներգոյականը՝ որում or-um: Այն հանգամանքը, որ ազգակից լեզուների օ-ի դիմաց հայերենում ս կարող է կանգնել (հմմտ. us = *oms-o-s), և որ բառամիջում sm-ի փոխարեն հայերենում m պետք է կանգնի, մենք այդ արդեն վերևում տեսանք, այնպես որ հայ -um-ը պետք է դիտել որպես h. և. -osm+ձայնավորի օրինաչափ անդրադարձում: sm-ով կազմվող տրական-ներգոյականը նախկինում հատուկ է եղել միայն դերանուններին, սակայն, քանի որ որոշ դերանուններ դերանվան և ածականի միջև մի տեսակ միջանկյալ դիրք էին գրավում (jeder, anderer, einer և այլն), ապա նրանք դեռ h.և. նախալեզվում դերանվանական վերջավորություններ կարող էին ընդունել, իսկ նրանց օրինակին գերմանական լեզուներում նաև ուրիշ ածականներ կարող էին հետևել (հմմտ. Sievers. in Paul und Braune's, Beiträgen, II, էջ 108): Դերանվանական այդ տրական/ներգոյական վերջավորության հարցում հայերենն ավելի հեռու գնաց, քան սանսկրիտն ու գերմանական լեզուները: Հնագույն հայերենում -ւմ վերջավորությունը (որը միայն օ-հիմքերի՞մ էր հատուկ) հանդիպում է միայն դերանունների և դերանվանական ածականների մոտ, ինչպես օր.՝ «Նոր կտակարանում»:

ա) դերան. im-um «իմում», kh-um «քում» mer-um «մերում», dzer-um «ձերում», iur-um «իւրում», or-um «որում», u-m «ում» (միայն m-ի կողքին՝ իմիք i-m-ikh, նմա n-m-a (d-m-a, s-m-a = գոթ. himma(?), նմին n-m-in (d-m-in, s-m-in), նմայն n-m-ain, այնմ ain-m (aid-m, ais-m), այնմիկ ain-m-ik և այլն:

բ) դերանվանական ածակ. միում mi-um, այլում, ailum ձևաբ. (Մարկ. 10, 12) = հնդեվր. alyosm-; այնուհետև՝ յառաջում առաջին (օրը), յերկրորդում (Ղուկ. 6, 1); յայսմ աշխարհի և 'ի հանդերձելումն «այս աշխարհում և հանդերձայ» (Մատթ. 12, 32), յետումն «ամենավերջին (օրը)» (Յովհ. 6, 44); 'ի վերջում «վերջին» (օրը) (Յովհ. 7, 37); ընդ այնպիսումն «մի նմանի հետ» (Ա կորնթ. 5, 11)- հմմտ. սրանց հետ սանսկրիտի դերանվանաբար թեքվող ածականները (Sievers, նույն տեղում, Whitney, Indische Grammatik, § 522-526):

Pentateuch-ը ընդհակառակը՝ արդեն այլում-ի ailum (Գևտ. 27, 20) և միսում-ի miusum (Ծն. 7, 21) կողքին տալիս է նաև սրբում srbum ներգոյականը (ի սրբում տեղոյ i srbum teγvoij εν τὸπφ ἀγίω Ելք 29, 31) կազմված սուրբ surb ածականից:

Բացի այդ, հետագայում հանդիպում է 'ի սրբումն և 'ի սրբումն, 'ի հնումն և 'ի նորումն, ի վերջո նաև՝ մարդում mard-um մարդ բառից, որի կապակցությամբ էս դեռ չեն պարզել, թե գրականության մեջ որտեղ է նա առաջին անգամ հանդիպում:

um-ով կազմվող տրական-ներգոյականի այլ օրինակներ, բացի անվանի

հեղինակներից և Դավիթ Անհաղթից, բերում է նաև Բագրատունին իր Քերականության մեջ (էջ 43-44): Հետաքրքիր է այստեղ նաև անդրադառնալ այն բանին, թե այս ձևերից առաջ ինչքան հաճախ է հանդիպում «ի» նախդիրը, ի նշան այն բանի, որ նրանք ներգոյականի իմաստ ունեն: Ժամանակակից արևելահայերենում, այն բանից հետո, երբ տրականը անջատվել է ներգոյականից և համընկել է սեռականի հետ, այնպես, որ ստեղծվել է ինքնուրույն, մյուս հղովներից անջատ, ներգոյական, նախանական դերանվանական «um» (ում) վերջավորությունը տարածվել է նաև անվանական հիմքերի վրա:

Հին հայերեն այլ ail = alius բառի հղովումը, այսպիսով, հետևյալ տեսքն է ունեցել՝

Ուրդ.	հայց.	սեռ.-տր.	տր.-ներգ.	բաց.	գործ.
ail	z-ail	ailoy	ailum	yailmē	ailov
հիմք ձև		alyosyo	alyosmai		alyo-bhi
alyo-s	alyo-m		և alyosmi		

այլմէ ail-m-ē բացառականը նորակազմություն է տրական-ներգոյական ailum ձևից՝ բացառականի «ē» վերջավորության օգնությամբ, ճիշտ այնպես, ինչպես դերանունն է իր բացառականը օրինաչափորեն տրական-ներգոյականից կազմում, հմմտ. տր.-ներգ. իմ-ում, բյսց. իմն-է, մերում-մերմէ, որում-որմէ (հմմտ. հնդ.-իրան. tasmād փոխառությունում tasmāi, tasmī-n' կազմված նախն. *tād-ից), ըստ այդմ, այնուհետև՝ yailmē (Եբր. 7, 13) ailum-ից, յառաջումն յորմէ y-arajnmē yormē (առաջին օրվանից), երբ (Գործ. 20, 18), arajn-um--or-um-ից (հմմտ. սնս. viçvasmāt և նրա կողքին՝ viçvasmāi, viçvasmin), ըստ այդմ, այնուհետև՝ ընդ աջմէ «ղեպի աջ», 'ի ձախմէ «ղեպի ձախ» (Մատթ. 25, 33):

14) լիեալ, լեալ «եղած»

Ներկայի լիմիմ (< *lê-ni-m) ձևին համապատասխան է հնչում հարակատար դերբայը՝ leal, ինչպես այդ մասին վկայում են Քերականությունները: Մնում էր միայն ավելացնել, որ lieal-ը հին ձևն է, որից ավելի ուշ է միայն ստեղծվել leal-ը: Նոր կտակարանը միայն մեկ բացառությամբ լիեալ է տալիս՝ Ղուկ. 8, 43; 23, 8; Յովհ. 11, 21; 14, 18; Ա կորնթ. 15, 32 (տարբերակը՝ leal), Փիլիպ. 2, 8; 3, 6, Ա Տիմ. 3, 4; 5, 9; Բ Պետ. 2, 13; Եբր. 4,

3; Գործ. 28, 25 (տարբերակը՝ leal), սակայն Գործ. 25, 6 միայն՝ leal: Ընդհակառակը՝ leal է հանդիպում Pentateuch -ում (Ծն. 2, 5; Օր. 17, 4; 20, 6 և այլն), ինչպես նաև սովորաբար մյուս դեպքերում: Այն կիրառվում է միայն եզակի և հոգնակի թվերի ուղղական և հայցական հոլովներում և չի ընդունում -եալ վերջավորությամբ ավարտվող դերբայների նման սովորական հոլովական վերջավորություններ (Բազրատունի, Քերականութիւն, էջ 203, § 475):

15) Die Apocalipse (Յայտնութիւն)

«Յայտնութիւն Յովհաննոս» հայերեն թարգմանությունն ունի մի քանի ստանձնահատկություններ, որոնք հանդիպում են մի ենթադրության, որ նրանք ավելի ուշ¹, քան Նոր կտակարանի» մասերն են հունարենից հայերենի թարգմանվել, ըստ որի այդ առանձնահատկությունները պետք է վերագրել ավանդությանը: Դրանք հետևյալներն են՝

1) Այն բայերը, որոնց ներկայի բնորոշ գիծն է «ի»-ն (ինչպես՝ **ունիմ** unim), իրենց անորոշ դերբայը կազմում են Նոր կտակարանում միայն -el-ով, ո՛չ -il-ով, օր.՝ un-el «ունենալ», linel «լինել», փախչել *փսցէն*, անկանել *ankanel* «ընկնել» (Մատթ. 18, 8) **ապրել-ժօթիլ** Մարկ. 10, 26 և այլն: (Այս կապակցությամբ ընդհանուր առմամբ հարկ է համեմատել Բազրատունի, Քերականութիւն, էջ 157, § 352):

Անշուշտ, հանդիպում է Ա կորնթ. 7, 12 **բնակիլ** bnakil *οικεῖν*, սակայն շատ ձեռագրերում կարելի է այն **բնակել** կարդալ: Այսպիսով, մնում են «il»-ով ավարտվող միայն երկու ինֆինիտիվ Նոր կտակարանում, երկուսն էլ՝ «Յայտնութիւն»-ում՝ 3, 16 (հանդերձեալ ես) փսխիլ, 6, 11 (հանդերձեալ են) կատարիլ «սպանվել»:

2) Չայնավորով սկսվող բայերի կատարյալը (եգ. 3-րդ դեմք) Նոր կտակարանում մախածանց չունի՝ առ *ar* **էլաβε** Ա կորնթ. 11, 23; **արար** arar «արեց» (հաճախ), **արկ** ark «նետեց» Ղուկ. 21, 2; **աժ** ats «առաջնորդեց» Մարկ. 12, 1; **արբ** arb «խմեց» Ղուկ. 4, 2; **աժ** auts «օծեց», Ղուկ. 4, 18; **անց** ants *παρηλθε* Բ կորնթ. 5, 17: Եվ, ընդհակառակը, «Յայտնութիւն»-ում 3 տեղ անց-ը հանդիպում է մախածանցով (և այն էլ «է»-ով, հին «e»-ի փոխարեն)՝ **եանց** eants 9, 12; 11, 14; 21, 4:

3) Հոգնակի ուղղականի փոխարեն հարցականի օգտագործման հայերենի ազատությունը խորք է Նոր կտակարանին: Միայն «Յայտնու-

¹ Ես միայն այժմ՝ տպագրելիս են նկատում, որ համաձայն հայերեն Աստվածաշնչի հրատարակչի կարծիքի (Վենետիկ, 1805, 4-ում), այդ թարգմանությունը 8-րդ դարից առաջ չի կատարվել (մախարան, էջ 8):

թիւն» է իրեն ազատություն վերապահում շատ դեպքերում հայցականի փոխարեն ուղղական հոլով օգտագործելով՝

5, 2 - բանալ զգիրքս

5, 3-5 - բանալ զգիրքն

6, 5 - ունէր կշիռք

9, 10 - ունէին զլուխք *ἔχουσαι κεφαλὰς*

10, 2 - ունէր զրկոյք մի (βιβλαριδιον)

հմմտ. 10, 8 - զրկոյսն:

4) Աչքի է զարնում տրական հոլովի կիրառումը՝ **այսմիկ**, սեռականի փոխարեն՝ **այսորիկ** կամ **այսոցիկ**, զլուխ 22, 10 և 18՝ **զոոցս այսմիկ տօ βιβλιον τούτου** և 19՝ **զոոյս այսմիկ** (տարբերակը՝ **զոոցս այսմիկ**): Թերևս արժանի է հիշատակության նաև հոգնակիացումը՝ **զոեանք** (*βιβλία* 20, 12):

5) Այնուհետև աչքի է զարնում նաև 4, 4 *καὶ ἴρις κυκλόθεν τοῦ θρόνου ὁμοία θρόσει σμαραγδίνω* հատվածի հետևյալ թարգմանությունը՝ **և քահանայք շուրջ զաթոռովն նմանք տեսեան զմիտի**, կարծես թե *ἴρις*-ի փոխարեն, այնտեղ *ἰερεῖς* է կանգնած:

6) Ի վերջո, աչքի է զարնում *ἵππος χλωρός*-ի 6, 8 հետևյալ թարգմանությունը՝ **ձի շրոռս**, *dzi šloros*, քանի որ շրոռս-ը հայերենում այլևս ուրիշ ոչ մի տեղ չի հանդիպում: Լավագույն դեպքում այստեղ սպասելի էր գտնել **քլոռս** *khloros*, քանի որ հին հայերենում՝ չէ՞ որ հունարեն *χ*-ի դիմաց միշտ **ք**=*kh* է կանգնում: Լուսանցքագրությունը՝ **որ է պալզախ** *or ē bōzlaχ*, որով պարզաբանվում է **ձի շրոռս**-ը, անշուշտ, կապ չունի տեքստի հետ: *bōz-ը bōzlaχ*-ի մեջ պարսկերեն է, *bōz*, *equus coloris caerulei in albedinem vergentis* (V): Իսկ թե **լաχ**-ն այստեղ ինչ է նշանակում, չգիտեմ:

Օ տ ա ր ք ա ն ե ր ²

16) ապաստան

ապաստան *apastan* «ապաստան, ապավեն, ապաստարան» (*πεποιθησις* Բ կորն. 1, 15: *καταφυγή* Օր. 19, 3), նաև՝ «վստահելով», «ապավինելով» (ինչպես *W*-ն է մեկնաբանում Բ կորն. 1, 15 համաձայն), «իր ապաստանը գտնելով» (Մեթեոս, էջ 27): Այս բառը դր Լազարոսը մախկինում համադրել է պիլ. *apastān* բառի հետ, այժմ, ինչպես երևում է, ինքն այլևս դրան հավանություն չի տալիս, սակայն իզուր, քանի որ պիլ. *apastān* բառը (փորագրված է վիմաքարի վրա), ըստ իր հնչյունական կազմի և

¹ *molos* (Վարք հարանց) = *μολόχη*, *μαλάχη*, նույնպես նոր էր:

² Կիրառվող հապավումների պատճառով *հմմտ.* Հայկականք II: Համադրությունները 17, 21-38 գալիս են Նյուդեբեից:

նշանակության, լիովին համընկնում է հայ. ապաստան բառի հետ, ինչպես այդ կիրառվում է նաև պազենդերենում՝ awastām = confidence, reliance, trust (West, M. i. Kh. Glossary, էջ 24):

17) ապարանք

ապարանք *aparan-kh* նշանակում է «ապարանք, պալատ» (W= βάρεις; βασιλειον բազմաթիվ անգամ Հին կտակարանում հիշատակված, Նոր կտակարանում = το πραιτώριον Մատթ. 27, 27 և Յովհ. 18, 28 և վերաբերում է հին պրս. apadāna-ին, ավելի ուշ՝ պարսկերենից փոխառյալ եբրայերեն *afeden* Դան. 11, 45, պալմիր. 𐤀𐤓𐤁𐤏𐤁 (ZDMG. XXIV, 108) = ասոր. āfaḏnā (ընդունված արտասանությունը), արաբ. fadan, *hūmūn*. նաև Ἀπαδάνα Apadna քաղաքի անունը:

18) ապարթանեմ

ապարթանեմ *aparthanem* C-ն այդ դիտում է որպես կասկածելի, սակայն բարզմանում է *insolentire, imbaldanzire* և այլն: Հանդիպում է միայն մեկ անգամ Եղիշե (Վենետիկ, 1859), էջ 12, տող 4-5; **ապարթանեթ** «նա ինքնահավան է», C-ն տարբերակում է նաև մեկ այլ (վիճելի) *aparthan-akan=arrogante, orgoglioso*», որը W-ում չկա: Երկուսն էլ պասանում են պրս. *bar-tan* «*superbus, arrogans*», պազ. *awar-tan-i* «*haughtiness, arrogance*» (West, Gl. zum M. i. Kh.):

19) ապսպարեմ

ապսպարեմ *apspar-em* կամ *apasparem* «հանձնել», «հանձնարարել» (W. *ἐπιτρέπω, commendo* Կորին, Վենետիկ, 1833, էջ 25 և այլն), նրա կողքին՝ ապսպարեմ -եց ի *apspar-ets i* (Ստեփ. Օրբ. I, 254) բառը դը Լագարդը նախկինում համադրում էր պրս. *sipurdan*-ի հետ, սակայն հետագայում այլևս դրան հավանություն չի տալիս: Սակայն այն, այնուամենայնիվ, ճիշտ է, միայն թե ավելի ճիշտ կլիներ այդ ապսպարեմ-ը համադրել պիլ. *apaspār-am*, պազ. *awaspār-am* (to deliver up, to consign, to commit. West, Gl. M. i. Kh. էջ 23) բառերի հետ:

20) բար.

բարապան *bar-a-pan*, այն է՝ «դռնապան, բարապան» (W-ի կողմից բազմաթիվ անգամ Հին կտակարանում հայտնաբերված), **բարապետ** *bar-a-pet* (Մծբ. 5-րդ դ.), նույն իմաստով, **բարատր** *bar-a-vor* «դռան վերին սենյակ» (*la soglia di sopra della porta*, C, *φλιά* Ելք, 12, 7, *ὑπέρθυρον*, W.):

Բոլոր երեքում էլ օգտագործված է **բար** *bar* «դռու» բառը, որը բնիկ հայերեն **դռան** *durn* բառի դիմաց պետք է դիտել որպես պարսկական փոխառություն, *hūmūn*. պրս. *bar* *ianua, porta* (*dār sāra vā xane*) V. և ZDMG. 35, էջ 354, ծնթ., *bār*, որը նշանակում է Thüre-ում «դռներ», ինչպես սենյան բարբառում *bari*, Wachan-ում *bār* (Tomaschek, Sitz. d. Wiener Akad. XCVI, 79) և նույնն է պրս. *bēr-* (< *bar-y-*) բառի հետ *birun*-ում, քանի որ այս բառերը *dār*-ի զուգահեռ ձևերն են, հինը՝ *dvara, dvāra*, ապա պրս. *birun*-ի «դուրս, արտաքս» բացատրությունը, ինչպես այդ Նյուդեբեն է տալիս (Gött. Gel. Anz. 1879, 432), «անկասկած՝ ճիշտ է» Justi:

21) դարգիճ

դարգիճ «*dargic*» (կամ *darguc*) = «դեսպակ, պատգարակ», հանդիպում է մյուս բարդություններում՝ **դարգճակալ** *dargc-a-kal* «պատգարակով տարված» (Կիրեղ Երուսաղեմացի, Katech., 5-րդ դ.) և **դարգճաճե** *dargc-a-dzev* «*che a la forma di lettiga*» (Յովհ. ք. 13-րդ դ.): Այն = արամ. ܘܕܘܕ (արտասանվում է մոտավորապես՝ *dargaš*) «մահիճ», «մահճակալ», ասոր. *dargūštā* «պատգարակ, օրորոց», որը սակայն, անշուշտ, ծագումով սեմական չէ, *hūmūn*. *dārguš* *dergouch, enfant trouvé, nouveau-né*, Justi-Jaba (?):

22) զիլ

զիլ *zil* «soprano», այս բառը W-ի կողմից դիտվում է որպես օտար բառ, հանդիպում է Երզնկացու մոտ (13-14-րդ դդ.), որը **զիլ եւ բամբ** *zil ev bamb* արտահայտությունը բարզմանում է որպես «սուր և ծանր»: «Բամբ»-ը *bamb* «ամենացածր ձայնով լարը», «բաս» = պրս. *bamm* (de Lagarde, Arm. Stud. 342), **զիլ** *zil* «որևէ գործիքի ամենաբարձր ձայնով լարը», *der sopran* = պրս. *zīr* (ըստ էության պրս. *zēr*-ի արաբականացումն է «ներքևում») «*nomen chor-dae instrumenti musici tenuissimae*» V:

23) քաս

քաս *thas* «tazza, bicchiere, coppa, nappa» (Մովս. Կաղանկ. I, 185 «16 thas քաղցու») = (պրս.) արաբ. *tas* «vas potorium, scyphus» (V.), տաշտ *tašt* = քաս (Վարդան, 13-րդ դ.), իրավացիորեն, որովհետև *tas* (որտեղից «tazza, tasse, քաս») ծագել է պրս. *tašt* բառից:

24) խղունջն

խղունջն *χλυνιον* կամ *χληιον* (W-ի կողմից հայտնաբերված հոգն. սեռ. խղունջաց և հոգն. ուղղ. խղրնջոյնք՝ (Բարսեղ Կեսարացի, 5-րդ դ.), այն պետք է հանդիպեր նաև «Բժշկարան»-ում որպես խնջախի շոյալ, խղրնջող շոյալ «խխունջ», «խեցի», «որդան կարմիր» (W. *κόχλος, κοχλιας, κόχλη, κοχχύλη*): Նա հավասար է արամ. *xalazōn* (պետք է արտասանել մոտավորապես *hēzōnâ*), արաբ. *halazūn* (նրա սեմական ծագումը անհավանական է):

25) խորզ

Հայ. **խորզ** *χορζ* «պարկ» (W-ում՝ հայտնաբերված Մծբնացու և Փատտոս Բուզանդի մոտ, 5-րդ դ., ավելի հաճախ՝ խորզ և մոխիր «պարկ և մոխիր» կապակցության մեջ, ինչպես արդեն Ղուկ. 10, 13) վերաբերում է արաբ. *xurj* «ուսապարկ» «խուրջին», ասոր. *churgā*, պրս. *xurjīn* «խուրջին» բառերին: Իսկ ինչպե՞ս են հարաբերվում այս բառերը միմյանց և հայ. քուրձ *khurdz* *σάκκος* (Հին կտակարան) = ասոր. *kūrzdā* և այլն բառերի նկատմամբ: Վերջին բառերի հետ հնչյունապես միայն պատահական է համընկնում դը Լազարդի կողմից իր *Ges. Abh.* աշխատության 58-րդ էջում բերված *χορζίν* օրինակի հետ նույնացված *χορζι, χορζine*, որ հայտնաբերված պրս. Նոր կտակարանից *Lexicis*-ում, «*chorreum*» իմաստով, համապատասխանաբար՝ *Gazophyl.* պրս. 141, «*granarō*»: Քանի որ դա *χορδχιν* «ճաշատեսակների հավաքածու» բառի մի սովորական նոր փոխառությունն է, որը «Ծնունդ»-ի հրեական քարգմանությունն է մեզ ներկայացնում, անշուշտ, երբայական *תרתוכא* «պարկ» բառի դիմաց:

26) կաղապար

կաղապար *kalapar* (W նշված օր. Ագաթանգեղոսի՝ 5-րդ դ. և Ասողիկի՝ 11-րդ դ. մոտ), ըստ C-ի նշանակում է «*modello, esemplare, esempio*» և մեկնարանվում է թուրք. **զալիպ**, այսինքն՝ *kalüb* = արաբ. *qālib* («*calibre*») բառով: Այն = պազ. *kālibud* (West. Gl. M. i. Kh.), պրս. *kālibud* «*forma*» = հուն. *καλοπόδιον*:

Ինչպե՞ս է **կաղապար**-ին հարաբերվում ավելի հաճախ գործածական **զաղապար** *galaphar* «*ձև*», «օրինակ» բառը:

27) կամաս

կամաս *kamas* «զգեստ», հայտնաբերված W-ի կողմից «Վարք հարանց»-ում, ինչպես նաև՝ **մազեկամաս** *mazekamas* «զգեստ՝ պատրաստված այծի մազից», W-ն այն համեմատում է արաբ. **զամբու** բառի հետ: Այն = արաբ. *qamiš* «առարկա, իրեր»:

28) կապեճք

կապեճք *karên-kh mišṭōma* (Օր. 23, 18՝ զկապեճս պոռնկի *z-karēn-s pornki* = *μισθωμα πόρνης*) = պրս. *kābīn* «օժիտ»:

29) կարկուրայ

կարկուրայ *karkuray* «բեռնանավակ» (Իսիքիոս Երուսաղեմացի, 8-րդ դ. և Եփրեմ, 5-րդ դ.) = ասոր. *qarqūrā* (արաբ. *qurqūr*), այն է հուն. *κέρκουρος*:

30) կարուրայ

կարուրայ *karuray* «միզաման» (Մխիթար Հերացի, 12-րդ դ.) = արաբ. *qārūrā* «ապակե աման»:

31) կլայ

կլայ *klay* «ողյակ, ամրոց», ուշ շրջանի հեղինակների մոտ (ինչպես օր.՝ Մատթ. Ուռհայեցի, 12-րդ դ.) = արաբ. *qal'a*:

Այստեղից՝ **Հոռմկլայ** *Hromklay* = (Հոռմեացիների ամրոց); արաբ. *Qal'at arrūm*, St. Martin, Mémoires I, 196, թուրք. *Rūm Qal'esi*:

32) կուզ

կուզ *kuz* բառը **W**-ի կողմից մեկ անգամ քարգմանվում է *ix tīs*, martes-ով (Յովհ. Մամիկոնեան և Վարդան, 13-րդ դ.) մատյանում վկայակոչված, այնուհետև նաև *αἰλουρος* (կզից և շանց՝ կատուների և շների, Կիրեո, Katech. 5-րդ դ.):

Այն = քրդ. *kuže* «կզաքիս» (Justi), ասոր գնչա՝ «աքիս», Nöldeke ZDMG. XXXV, 235 (հազիվ թե սեմական ծագում ունենա):

33) հեզ

հեզ *heg*, **C**-ն այն քարգմանում է «compitazione» (հեզել, տառ-տառ կարդալ) և «sillaba», **W**-ն այն քարգմանում է *συλλαβή* (Ոսկ. ես. 5-րդ դ.), ինչպես **հեզեմ**-ը *heg-em* *συλλαβίζω* -ով: Այն հավանաբար վերաբերում է ասոր. *heghjānā* «կարդալը, հեզելը», ասոր. *hēghā* «կարդաց» և այլն:

34) շապ

շապել *šblel* կամ **շապլել** *šablel* (Բժշկրն. 12-րդ դ. հետո) «շիբ»: **W**-ն այս բառը մեկնաբանում է «պաղլել. *šab*», ինչպես պաղլել (*alumen*) բառի տակ այն հանդես է գալիս **շիպ** *šib* բառի մեկնաբանման համար: Այն *šb-*, *šab-*ը = պրս. արաբ. *šabb*, *šāb* Alaun:

35) պարկեն

պարկեն (փոսի) *parkén* (phosi) նշանակում է քաղաքի պարսպի շուրջ փորված փոս (Ազաթանգեղոս և Ղևոնդ):

Այն = պրս. *pārgī n*, արաբ. *fāriqīn* «պարսպափոս»:

36) ռումբ

ռումբ *rumb* (համեմատաբար ուշ շրջանի հեղինակների մոտ, օր.՝ Մատթ. Ուոհ. 12-րդ դ.) «*dardo, asta, lancia*» իմաստով: Հավանաբար = արաբ. *rumh*, արամ. *rumha* (?):

Մեկ այլ՝ *rumb* պետք է թերևս համարվի այն բառը, որը **սմբաքար** «քար նետող սարք» (Հին կտակարան) բառի մեջ է հանդիպում:

37) սախտ

սախտեալ *saxt - eal* «կազմված, դասավորված», ան-սախտ *an-saxt* «չդասավորված» (միայն Ներսես Լամբրոնացու մոտ, 12-րդ դ.), պրս. *sāxt* «քանքասարք»¹ բառի կապակցությամբ:

38) տուրայ

տուրայ *tuḥray* (կարդա՝ *tuγra*) Վարդանի մոտ՝ նրա «Պատմութիւն»-ում (13-րդ դ.), **C**-ն այն քարգմանում է «*sugello, carattere regio*» բառերով և դիտում է որպես բուրբերեն:

Եվ, իսկապես, այս բուրբերեն է՝ *tuγra*:

39) հայ. ք (r) = պրս. ծ

Որոշ դեպքերում հայ **ք**-ն տարօրինակ ձևով այլ լեզուների **ժ**-ի դիմաց է կանգնում: Մենք վերը հանդիպեցինք այնպիսի զուգադրումների, ինչպիսիք են, օր. հայ. **ապարան-ք** = հայրս. *apadāna*, հայ՝ **կաղասալար** = պազ. *kālbuḍ*, հուն. *καλοπόδιον*, և առանց այլևայլի նրանց կողքին՝ հայ. **մար-ք** «մեղացիներ» = հայրսկ. *māḍā* և **լամբար-ք** = *λαμπάδες*, Յայտ. 4, 5:

Այստեղից էլ այնուհետև հնարավոր է դառնում միմյանց համադրել՝ հայ. **բուրաստան**, «բուրաստան, պարտեզ» (*παράδεισος* Թիք 24, 6) և պրս. *bōstan*, հայ. բուր-են «բուրել» և պրս. *bōyam*, հայ. **բուրվառ** *θυσιασθήριον*, (Թուրք առ երբ. 9, 4) և զենդ. **baodōbara* (*hմմտ.* *barōbaoda*), որտեղից էլ հնարավոր է դառնում եզրակացնել **boir* = հայրս. **bauda* = զենդ. *baoda*; *χοιρ* *διάδημα*, *κιδαρεις*, *μιτρα* (**W**-ի կողմից բազմաթիվ անգամ Աստվածաշնչից վկայակոչված), *hմմտ.* զենդ. *χαοδα* «սաղավարտ», հայրս. *χαυδα* «զլխարկ», պիլ. *χόδ*, պրս. *χόδ*², օւտթ. *xode*; արոյր *aroir* «արոյր» (միայն Ա մնաց. 28,2, սակայն՝ *hմմտ.* արուրի *aruri*, Եփրեմ), *hմմտ.* բելյուջ. *rōd* «պղինձ», պիլ. *rōd*, պրս. *rōi* (որոնք կանխադրում են մի հայրս. **rauda*), սնս. *lōha* «կարմրավուն մետաղ», «պղինձ», հւլ. *ruda* «մետաղ», լատ. *raudus*; մարախ *marax* «մորեխ» (Մատթ. 3, 4), *hմմտ.* զենդ. *maḍaxā*, եթե վերջինս Դարմեստետների կողմից (*Mémoires de la société de ling.* IV, 211 և

¹ Դեռ դը Լագարդի մոտ, *Arm. Stud. s. v. sandz* - տպագրական սխալ:

² Նպրս. *χόδ*-ը հավանաբար փոխ է առնված արաբերենից:

հաջ.) ճիշտ է մեկնաբանված, որի դեմ է խոսում պրս. malāx-ը «մորեխ», այն հավանաբար maδaxā-ից չի գալիս, քանի որ պրս. l-ն ձայնավորների միջև նախկին r-ից և rd-ից է գալիս, սակայն ոչ d-ից (δ)¹:

Այսպիսով, ամենայն հավանականությամբ հին պարսկերենին ձայնավորներից հետո ձայնեղ պայթական g, d, b-ի փոխարեն γ, δ, β շփականներն են տիպական (հմմտ. ին Iran. Stud. Kuhn's-ի Ztschr. 24, էջ 413), հետևաբար՝ վկայակոչված հայերեն հետևյալ բառերին հին պարսկերեն և հունարեն ձևերն են համապատասխանում.

հայ.	aparan-	=	հայրս.	apaδāna
“	mar-	=	“	māda
“	*boir	=	“	*bauδa
“	χoir	=	“	χαυδα
“	aroir	=	“	rauδa
“	marax	=	“	maδaxā(?)
“	kaλapar	=	հուն.	καλοποδιον
			պազ.	kālbud
“	lambar-kh	=	հուն.	λαμπάδ-εζ

Այս բոլոր հայերեն բառերը փոխառություններ են, որոնք հայ գրականության սկզբնավորման շրջանում արդեն լրիվ քաղաքացիական իրավունք էին ստացել, հետևաբար՝ ուրեմն շատ հին ժամանակներում էին փոխառնվել պարսկերենից (կամ՝ հունարենից): Նրանք ցույց են տալիս, որ հայերը պարսկական δ շփականը օրինաչափորեն փոխարինում են «ր»-ով: Բառասկզբում և բաղաձայններից հետո հին պարսկերենը (ինչպես և զենդերենը) շփականի փոխարեն d հնչյունն են ունեցել:

¹ Նպրս. mal-ը «զինի» ես չեմ դիտում որպես mai-ի զուգահեռ ձև = զենդ. maδu (կամ maδa), այլ, ընդհակառակը՝ այն համոզեցնում է հայրս. *mrdu-ին, որը ես համադրում եմ սնս. mrdvikā-ի հետ «խաղող»: - Վերը բերված բառերին է վերաբերում հավանաբար նաև սպարապետ-ը sparapet *ἀσπίο τράπητος*, որը մինչ այս համադրվում էր հայրս. asbāra (*aspabāra-ի «հեծյալ» դիմաց) բառի հետ: Այն կարող էր հավասար լինել հայրս. *spāδapati, զենդ. *spāδōpaiti բառին, որը ավելի ուշ (պիլ.) հնչել է spāhpet և հայերենին է անցել որպես ասպահապետ aspahapet: Մինչդեռ սպարապետ-ը sparapet հայերենում լրիվ բնիկ է դարձել (հմմտ. W-ի վկայակոչումները), ասպահապետ-ը նրան միանգամայն խորթ է մնացել: Այն հանդիպում է (ըստ W-ի) միայն Մոսկ. Խորենացու, II, 28 և 68 էջերում: Նույն ձևով հնչող հատվածներում «Կարենի Պահլաւ, Սուրենի Պահլաւ և Ասպահապետի Պահլաւ» «Karenī Pahlav, Sureni Pahlav և Aspahapeti Pahlav»:

Այստեղից էլ մենք առնչվում ենք այնպիսի զուգահրությունների հետ, ինչպիսիք են՝ հայ. դատ dat = հայրս. dāta, հայ. քանդ band = պրս. band, հայրս. *banda (հմմտ. bandaka), հայ. անդամ andam = պրս. andām, հայ. Արամազդ aramazd = հայրս. a(h)uramazdā և այլն:

Քանի որ δ շփականը պարսկերենում շուտով սղվում է (h կամ y է տալիս), ապա այն ավելի ուշ շրջանի փոխառություններում, բնականաբար, այլևս չի կարող r-ով փոխարինվել: Ավելի ուշ շրջանի պարսկերենում հանդիպող δ -ն գալիս է վաղեմի t-ից (ձայնավորներից հետո):

40) Ժամուար

Ժամուար žanuar բառը հանդիպում է Փաւստոս Բուզանդի մոտ, էջ 189, 194, 236 (նաև՝ էջ 118, žanuar -ը պետք է žanu-ի դիմաց կարդացվի, այդպես է ենթադրում նաև W-ն) և նշանակում է «պատգարակ» (պարսկական արքայի կանանց փոխադրելու համար): Այն հավասար է պրս. zanbar «genus ferculi vel feretri, quod a duobus hominibus portatur» և այլն (V):

žan -ը պետք է «կին» նշանակի, զենդ jēni, պրս. zan; var-ը նշանակում է «տանել» = զենդ. bara:

41) կնգմենի

կնգմենի kngm-eni: Փաւստոս Բուզանդի մոտ (էջ 263) սամուրենի samur-eni «սամուրյենի», գայլենի gail-eni «գայլի մորթի», աղուսենի ayes-eni «աղվեսի մորթի» բառերի կողքին նշվում է բառարանի կողմից ենթադրաբար, սակայն հավանաբար տեղին, որպես կնգումի, սպիտակ կզաքիսի մորթի:

Այստեղից կարելի է դուրս բերել մի հին հայերեն կնգում knqum «կզաքիս», որը հազիվ թե կարելի է գատել ժամանակակից արաբերեն, պարսկերեն, բուրբերեն qāqum բառից:

Ստորագրուրդ, 2 նոյեմբերի, 1881 թ.

II ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

Թե ինչպես է հայերենը արտասանվում, ես այդ մասին գրել եմ մի հոդվածում «Über Aussprache und Umschreibung des Altarmenischen» (ZDMG XXX, էջ 53 և հաջ.):

Նախքան իմ այդ հոդվածի լույս տեսնելը, Ֆր. Մյուլլերն իր «Beiträgen zur Lautlehre der armenischen Sprache. Fortsetzung» աշխատության մեջ (1863) տվել է հայերենի հնչյունների մի համակարգ, որը լի է սխալներով: Ավելի ուշ՝ 1877 թ. իր «Über die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen» ուսումնասիրության մեջ նա ուղղեց իր սխալների մեծ մասը, սակայն շարունակեց **խ**, **ք**, **ջ** հնչյունների հնչյունական արժեքը սխալ բնորոշել: Որ **խ**-ն հետնալեզվային շփական է [**x**] կամ [**χ**], և ոչ թե, ինչպես Մյուլլերն էր կարծում՝ շնչեղ, պարզորոշ վկայում են պարսկերենից և ասորերենից փոխառված բառերը, որոնց մեջ **խ**-ն փոխարինում է պարսկերենի **x**-ին, ասորերենի **h'**-ին, մինչդեռ պարսկական, հունական և ասորական **k**-ն հայերենում փոխարինվում էր **ք**-ով, որը վկայում է այն մասին, որ այն հետնալեզվային շնչեղի արժեք ունի (*հմմտ.* **քանդակ**, *giarra* = պրս. *kandū*, **քոմ** = *κίτρος* (Գուլ. 16, 7), **քահանայ** (Մատթ. 2, 4) = ասոր. *kāhna*, **քարոզել** *κηρῶσσειν* (Մատթ. 4, 17) **քարոզ** բառից = ասոր. *kārōzā*։

Շփոթության մեջ է Մյուլլերը նաև **ջ**(= **յ**)-ի հնչյունական արժեքը որոշելիս: Նա միանգամայն սխալ է վկայակոչում ստուգաբանությունը (որն առանց այն էլ հնչյունական որակի համար ոչինչ չի ապացուցում), քանի որ **ջ**-ն հանդիպում է այնպիսի բառերում, ինչպես՝ **արջ** = սնս. *rkša-s*, զենդ. *areša*, հուն. *ἄρκτος*, լատ. *ursus*; **մէջ** = սնս. *madhya*, զենդ. *maidya*, լատ. *medius*, գոթ. *midjis*, հուլ. *mežda*; **ստերջ** (ստերդ) = սնս. *starē*, հուն. *στεῖρα*, լատ. *sterilis*; **անուրջ** = հուն. *ὄνειρος*; **ջերմ** = հուն. *θερμός*, սնս. *gharma-s*, զենդ. *garema*, լատ. *formus*, հուլ. *žeravŋ* «շիկացած»։

Այսպիսով, **ջ**-ն ստուգաբանորեն

1) = սնս. **kš** = հուն. **κτ**,

2) = հ. ե. **y** կամ **dhy**,

3) = հ. ե. **gh**։

Եվ ո՞վ կցանկանա այստեղից հետևություն կատարել, որ նրա հնչյունական արժեքը **ջ** է: Նաև այն հանգամանքը, որ **ջ**-ն հերթազայվում է **ճ**-ի և **ջ**-ի հետ, չի խոսում հոգուտ Մյուլլերի կարծիքի, այլ ընդհակառակը՝ իմ:

Հայերեն տպագրված տեքստերում և ձեռագրերում, հատկապես, **ռ**-ից և **մ**-ից հետո յուրաքանչյուր ձայնեղ պայթական կարող է հերթազայվել խուլ պայթականների հետ՝ **ց**-ն **կ**-ի, **ճ**-ն **տ**-ի, **բ**-ն **ք**-ի, **ճ**-ն **տ**-ի և նույն ձևով **ջ**-ն

ճ-ի հետ: Օրինակները բերում է Բագրատունին իր Քերականության մեջ՝ էջ 651, §1430, այստեղից հետևում է, որ եթե **ճ=ճ**, **ջ**-ն պետք է լինի նրան համապատասխանող ձայնեղ պայթականը՝ = **յ**: Այն, որ ի վերջո **ջ**-ի գրաված դիրքը այբուբենում ոչինչ չի ապացուցում հոգուտ Մյուլլերի պնդման, առանց այլևայլ կարելի է համոզվել, ելնելով իմ դիտողություններից, արված ZDMG 30, էջ 64: **ջ**-ի հնչյունական արժեքը, ընդհակառակը՝ կարելի է պարզել պարսկերենից փոխառված բառերի օգնությամբ, այն է՝ որպես **j**. *հմմտ.* հայ. *aspanjākan* ξένος (Թուրք առ հռովմ. 16, 23), պիլ. *aspanj*, a resting placc, պրս. *sipanj*, հայ. *jatuk* «կախարդ»=պրս. *jādu*, պիլ. *jātūk* և այլն:

Ընդհանուր առմամբ **ջ**-ի հնչյունական արժեքի տեսանկյունից կարելի է դիմել ZDMG 30, էջ 54 և հաջ. **ջ**= արևելյան հայ. **j**, արևմտյան հայ. = **ճ**, այսպիսով՝ հին հայերենում = **յ**։

Լագարդը ևս, եթե դատելու լինենք նրա տառադարձությունից, դեռ իր «Gesammelten Abhandlungen»-ում, 1866 (*հմմտ.* p. IX) մի շարք հայկական տառանշանների հնչյունական արժեքը սխալ է որոշել կամ չի կարողացել որոշել: Այսպես, օր.՝ նրա մոտ շնչեղ **ք**= **է**, այն գնահատվել է որպես շփական, նույն ձևով **խ**= **x**, **ճ**= **ճ**, գնահատվում է որպես **յ**, **ջ**= **ճ**, ինչպես երևում է որպես **ճ** և **ջ**= **j**, որպես շչախոսական **ճ**: Այնպիսի հնչյուններ, ինչպիսիք են՝ **ծ**= **ts**, **ճ**= **dz**, **ց**= **ths**, մեկը մյուսի հետևից դիտվում են որպես շչախոսական **z**, շնչեղ **z** և շնչեղ **s**, ինչպես նաև շնչեղները՝ **փ** = **p'** և **ք** = **k'** դիտվում են ինչպես շնչեղ **p** և **h**, և այսպիսով, տարբերակել **ք**= **է**, որը շփական է:

Իր «Armenischen Studien» (1877) աշխատության մեջ, ընդհակառակը, նա **թ**-ն միանգամայն իրավացիորեն դնում է **փ**-ի և **ք**-ի հետ միևնույն հարթության վրա՝ տառադարձելով դրանք որպես հուն. **ϑ**, **ϕ**, **χ**: Նա՝ ճիշտ է գնահատում նաև **ջ**-ն որպես **j**, մինչդեռ՝ նրա **տ** և **էճ** նշանների համար ընտրած տառադարձման ձևը բուրբուլին չի վկայում նրանց իսկական հնչյունական արժեքի մասին:

Հայերենի **յ**-ի համար նրա բերած տառադարձությունը սենական այբուբենի միջոցով ես չեմ կարող ընդօրինակել, քանի որ փոխառյալ **յանդր**, **յազել**, **յաշտ**, **յազկերտ**, **յետկար**, **յոյնք** և այլն բառերի միջոցով պարզ է, ուստի այն պետք է այս տառադարձությամբ կիրառվի նաև բառավերջմային հնչյունի համար արդեն իսկ հին հայերենում որպես թույլ **h**:

Ինչ վերաբերում է հին հայերենի արտասանությանը, ապա ուժի մեջ է մնում այն սահմանումը, որը ես տվել եմ Միվերսի օգնությամբ, միայն հարց է ծագում, թե ինչպե՞ս պետք է հայերենի նշանների ճիշտ համապատասխանությամբ տառադարձվեն, քանի որ Լագարդի համակարգը, որը կազմված է լատինական, հունական, զերմանական և մի եբրայական

նշանից, հանձնարարելի չէ, և նույնիսկ էսթետիկական տեսանկյունից, ըստ Պիշելի և Բեցցենբերգերի, առնվազն պետք է դիտվի որպես նողկալի, որի համար, սակայն, նա, անշուշտ, չպետք է դատապարտվի:

Չայնեզ պայթականները՝ **գ, դ, ք**-ն, անշուշտ, պետք է **գ, ճ, ք**-ով տառադարձվեն, խույ **կ, տ, պ**-ն՝ **կ, տ, ք**-ով: Եթե գրությանը պետք է նշվի, որ այդ խույերը կոկորդային պայթականով պետք է արտասանվեն, և դրանով իսկ տարբերվում են սլավոնական, ռոմանական, իրանական և այլ լեզուների խույ պայթականներից, ապա նրանք կարող են անհրաժեշտության դեպքում գրվել, ինչպես օտեթերեմում՝ **к', т', р'** (տե՛ս էջ 25): Հնդեվրոպական լեզուներից այս խույ պայթականներն ունեն միայն հայերենն ու օտեթերեմը: Ընչեղ **ք, ք, փ**-ն լեզվաբանական գրականության մեջ ավելի շուտ տառադարձվում են որպես **к', т', р'**-ով, քան **kh, th, ph**-ով:

1) Զանի որ հայերենում հանդիպում են նաև **կհ, տհ, պհ** = **к+х, т+х, р+х** կապակցությունները, *հմմտ. sephuh*, սեռ. սեպիի=*sephi*, այստեղից՝ *seph-akan*, այնուհետև՝ տհաս < **т+has**:

2) Զանի որ հայերենում արդեն իսկ այնքան շատ բաղաձայններ են կուտակվում, որ առաջարկվում է գրության մեջ այն բաղաձայններով ավելի շնորհել, մի այնպիսի տառադարձությունից, ինչպես, օր.՝ **thkhtkhchemkh** միայն դժվար կլինի ճանաչել հայերենի ձևը: **к-**ն, հետնալեզվային խույ շփական է, որը ես տառադարձում եմ **к**-ով, կամ՝ երբ խոսքը վերաբերում է հնչյունի ավելի ճշգրիտ նշմանը՝ **к**-ով, քանի որ այս հնչյունը կազմվում է քիմքի հետին աղեղում: Նրան համապատասխան ձայնեղը՝ ժամանակակից հայերենի **դ**-ն = **т**: Հին հայերենում այդ նշանն ուներ **1**-ի հնչյունական ար- ժեքը: Ատամնային շփականներ **ս, գ, շ, ժ**, ևս տառադարձում եմ՝ **с, з, ш, ж** նշաններով: Ռեզային **ն** և **մ** հնչյունները **н, м**-ով: Դժվար է նշան ընտրել **п, 1** հնչյունների համար՝ **п, п, 1, п**, քանի որ նրանց արտասանությունը դժվար է որոշել: Հայերենի այբուբենում կանգնած **դ**-ն (ո՛չ յ) հունական **λ**-ի դիմաց, նույնը և **п** (ո՛չ **п**) հունարեն **Ϸ**-ի դիմաց (*հմմտ. ZDMG 30*, էջ 63 և de Lagarde, Ges, Abh. էջ X): Փոխառյալ բառերում հունարենի, պարսկերենի, ասորերենի **1**-ն, որպես կանոն, տրվում է **դ**-ով (ո՛չ յ-ով), այդ նույն լեզուների **ր**-ն, սակայն, մեծ մասամբ **р**-ով, մինչդեռ **п**-ի տեղն ընդհանուր առմամբ **п**-ից առաջ է, և, հավանաբար, կրկնակի **rr**-ի համար է կիրառվում: Այդ չորս հնչյուններից բը- նիկ հայերեն բառերում միայն **լ**-ն է կանգնում բառասկզբում, մնացածները՝ **դ, ք, ք**-ն, իրենցից առաջ պահանջում են ձայնավորի առաջադրություն (**а, о, е**):

Ժամանակակից հայերենում **դ**-ն ստացել է **т**-ի արտասանությունը, լ-ն արտասանվում է ինչպես մեր **1**-ն, **р**-ն՝ գրեթե առանց բրթալու, իսկ **п**-ն՝ ուժեղ բրթոցով:

Այսպիսով՝ **դ** ըստ այբուբենի = հուն. **λ** -ին փոխառություններում = հուն.

λ, պրս., ասոր. **1**:

Եթե բառասկզբում չի կանգնած,

այժմ արտասանվում է ինչպես **չ**, ստուգաբանորեն = **1** և **р**-ի: **լ**-ն կանգնում է բառասկզբում, այժմ արտասանվում է ինչպես մեր **1**-ն, ստուգաբանորեն = **1**:

п-ն ըստ այբուբենի = հուն. **Ϸ**, սովորաբար կանգնում է **п**-ից առաջ, նաև = **rr**, եթե չի կանգնում բառասկզբում, այժմ արտասանվում է ուժեղ բրթոցով, ստուգաբանորեն = **р**:

р-ն փոխառություններում մեծ մասամբ = հուն. **Ϸ**, պրս. ասոր. **ر**, եթե բառասկզբում չի կանգնում, այժմյան արտասանությամբ՝ գրեթե առանց բրթոցի: Երբեմն՝ արտասանվում է ինչպես **рз**¹, ստուգաբանորեն = **р**:

Իսկ ինչպիսին է եղել ըստ այդմ այդ հնչյունների հին արտասանությունը²: Նախքան այդ քննարկելը, ես դ-ն կնշեմ հունարեն **λ**-ով, **լ**-ն՝ **1**-ով, **р**-ն՝ **р**-ով, **п**-ն՝ **т**-ով³, **п**-ն ես կտառադարձեմ **п**-ով: Ժամանակակից հայերենում բառասկզբի **յ**-ն, նախկին **յ**-ն արտասանվում է ինչպես **h**, այն է, եթե ես ճիշտ եմ լսել, արդեն շատ թույլ **h**, ի տարբերություն **h**-ի, որն ինձ թվաց, թե ուժեղ աղմուկով է արտասանվում:

Աֆրիկատները ևս տառադարձվում են հետևյալ կերպ՝

д	з	з	л	д	д	г
с	ж	ж		с	ж	г

այն է կրկնակի հնչյունների **ts, dz, ths, ts, dz, ths** սերտ կապը պետք է նաև գրության մեջ արտահայտել, որպեսզի հնչյունները գրությանը տարբերվեն հայերենում միաժամանակ գոյություն ունեցող հնչյունական խմբերից՝ **տշ = ts, դժ = dz, թշ = thš, տս = ts, դզ = dz, քս = ths**:

¹ Հմմտ. ZDMG 30, էջ 57, ընդհակառակը՝ ըստ Չիվերսի Phonetik դիտվում է որպես բրթոցով արտասանվող:

² Sievers (Phonetik, էջ 84 և հաջ.) տարբերակում է քիմքային-**р**, ատամնաքիմքային-**т**, որն արտասանելիս բրթոցում է կամ ոչ, քմալեզվակային-**з**, կոկորդային-**з**, շրթնային-**з**, այնուհետև նաև՝ քիմքային-**1**, քմային-**1**, ատամնաքիմքային-**1** և այլն: Նրանք կարող են լինել մաքուր, ձայնորդական կամ շնչեղ, ինչպես նաև ձայնեղ կամ խույ, ռեզային կամ ոչ, **1**-հնչյունները, բացի այդ, **hell** կամ **dankel**: Ըստ այդմ՝ հայերեն հնչյունների բնույթի որոշումը դյուրին չի լինելու:

³ Ես խուսափում եմ **! և ҂** նշանագրերից, քանի որ այդ տառադարձությամբ անմիջապես սխալ տպավորություն կառաջանա, որ իբր այդ հնչյունները քիմքային են:

Երբնային	Բարձրագույններ		Չայնոզներ	Անձայն շփակումներ	Չայնոզ շփակումներ	Ռեզու- յիմներ	Նայնո
	Խուլներ	Ընչել խուլներ					
Ընչափողային				h h			
Հետին շարքի կլորտային		p k'	q g	խ ք (x)			
Առջնային կլորտային	կ k	չ չ'	ջ j				
Աֆրիկատներ	ճ ճ	ց ց'	ձ ձ	2 s' us	ժ ժ	ն n	լ/ղ/լ
Միջնատունային	տ t	թ թ'	դ d		զ z	մ m	ր r r'
Երբնային	պ p	փ փ'	բ b			մ m	

Համընթացայա կամ ոչ լեզվաբանական գրավանդային մեջ են ընդհանրապես: Բարձրագույնները հետևյալ այբուբենով կապի

k	kh	g	hx
t s'	th s' ths	d z dz	
t	th	d	s' s z z
p	ph	b	m

Այստեղ ևս պետք է խուսափել գրության մեջ բաղաձայնների չափից դուրս մեծ կուտակումից, այնպիսի տառադարձությունից, ինչպես **tdzev, šrdžšrdžem, t'snt'slkat'seal** (կամ նույնիսկ *thsnthsl -kathseal*), իսկապես համադրելի չեն և գրեթե հնարավորություն չեն տալիս կռահելու, թե դրանք ինչ բաներ են: Եթե երբևէ պետք է պնդել այն դրույթը, որ հայերենի տառադարձության ժամանակ բնիկ լեզվի յուրաքանչյուր տառ տառադարձության ժամանակ պետք է փոխարինվի տառադարձության միայն մեկ նշանով¹, այնուհանդերձ դժվարություն կհարուցի կիսաձայնների տառադարձությունը: յ-ի համար ես կիրառում եմ բառասկզբում, ձայնավորների միջև և բառավերջում y, առանց դրանով որևէ որոշակի բան նրա արտասանության մասին պնդելու: Այն կանգնում է **a, e, i, o, u, au, oi** ձայնավորներից և, բացի այդ, **λ**-ից առաջ՝ *ylanam, ylem, ylkem, ylpnam*:

Մի քանի պարսկերեն փոխառություններում այն կանգնում է y-ի փոխարեն, բառավերջում ձայնավորներից հետո հնարավոր է, որ շատ վաղ ժամանակներում պետք է որ տված լինի թույլ, ինչպես ժամանակակից հայերենում բառասկզբում է տվել, **h**: Շատ հավանական է, որ երկբարբառներում այն ձայնավորի որակ է ստանում՝ **այ** և **ոյ**, որոնք ևս ես նշում եմ **ai**-ով և **oi**-ով:

v-ի համար (կամ՝ v և w-ի) մենք 3 նշան ունենք, որոնց արտասանության մասին հնարավոր չէ որևէ որոշակի բան ասել: Համաձայն այբուբենի՝ i-ն համապատասխանում է հունարեն **ο**-ին, ուրեմն այն պետք է լինի ձայնավորի և կիսաձայնի արժեքով **u**: Որպես այդպիսին՝ այն կանգնում է երկբարբառների մեջ² **au** = *au* և **iu** = *iu*, թերևս նաև ձայնավորների միջև:

¹ Ճ, ց, չ, ց աֆրիկատների արտասանության մասին եղած տվյալները տարբեր են: Ճ = ts, c = ts աֆրիկատների մեջ Չիվերսը լսում է կոկորդային հայունով կազմվող t(t), որին հաջորդում է մի կարճ դուրս մղված s կամ s (քանի որ միայն թերանի խոռոչում փակված օդի քանակն է կիրառվում որպես այդ շփակման կազմության միջոց), որն ավելի կարճ է, քան սովորաբար որևէ խուլ s կամ s, սակայն, այնուհանդերձ, հենվելով նախորդող ուժեղ պայթյակների վրա, համեմատաբար ավելի ուժեղ է հնչում: (Phonetik, էջ 136-ում) Ռոզենը նկարագրում է օտերենի չ-ն որպես = ձայնել «d+», խուլ s': Լեպսիուսը հայերեն c-ն նկարագրում է որպես = **tz** չ և ց հնչյուններն ըստ Չիվերսի ZDMG 30, 58 միացություններ են բաց կոկորդում արտասանված t, th-ի, ուժեղ s և s-ի հետ:

Այսպիսով, այդ հնչյունները շնչելներ չեն: Լեպսիուսը նշում է «Only the stronger closing of the organ is the same as in the aspirates, whilst, in opening the organ, the aspiration turns into a slight breathing z or z, as if one would pronounce ttz and ttz (Stand. Alph. 134)»: Ռոզենը նկատում է, որ օտերենի ց-ն, երբ = t+hնչել z, պետք է ուշադիր լինել, որ օտեթ. շնչելները միայն թույլ շունչ ունեն: j և j ամենուրեք նկարագրվում են որպես սերտ կապված dz, dz:

² au-ն հին հայերենում հավանաբար ունեցել է երկու արժեք, քանի որ այն արդի հայերենում մասամբ և մեծ մասամբ ծ-ով է արտահայտվում, մերթ սակայն aw-ով (*հմտ*. աղանի = **alawni**): ի-ը այժմ երբեմն հնչում էր որպես iu, օր.՝ թին = **eiun** վերջածանցում, երբեմն՝ -iw, օր.՝ թիւ **eiw**, թիւ **eiw**:

Լիարժեք **ս** ձայնավորը տրվում է հունադեմի օրինակով **ս = օս**, սակայն այն բաղաձայններից հետո ձայնավորներից առաջ կանգնում է որպես կիսաձայն, օր.՝ տուեալ = tueal, կարդալ միավանկ՝ tveal: Բառասկզբում կանգնում է վ տառանշանը, որը գրության մեջ թերևս կրկնակի գրված է = ս է (բառամիջում նա հանդիպում է միայն **ս**-ից հետո, արտահայտելու համար օս-ը, օտարագրի բառերում = **ծ**), քանի որ **ս**-ն (< **ս** = **օ+ս** = **ս**) **ս** -ի համար էր տրվում:

Ըստ գրության պետք է, որ **ս**-ի **ւ** և **վ**-ի մեջ միայն ձայնավորը և կիսաձայնը (ոչ շփականը) ենթադրել, սակայն գրությունն ու արտասանությունը պարտադիր չեն իրար ծածկելու: Արդի հայերենում **ս**-ն (ձայնավորներից առաջ), **ւ**-ն և **վ**-ն շրթնատամնային շփականի արժեքն ունեն, ուրեմն՝ այստեղ նրանք ամենուրեք կարող են **բ**-ով տառադարձվել: Հին հայերենում ևս ու-ն տառադարձում են **ս**-ով կամ (ձայնավորներից առաջ) **վ**-ով, **ւ**-ն **ս**-ով կամ **վ**-ով (համաձայն արդի արտասանության), իսկ **վ**-ն՝ միշտ **վ**-ով: Ով ձգտում է հարազատ մնալ բնագրի գրությանը, այլ կերպ կտառադարձի, սակայն նրանք բոլորովին սխալ արտասանություն կստանան, նաև հին հայերենի առումով, առանց շատ շահելու:

Հին հայերենի իմ կողմից տրված տառադարձությունը, այսպիսով, կունենա հետևյալ պատկերը՝

Չայնավորներ

Կարճ ձայնավորներ՝ ու ս ո ւ ա ե ի ղ թ
(անորոշ հնչյուն)

Երկար ձայնավորներ՝ ո(վ) ծ է ը
(օտար բառերում)

Կիսաձայններ՝ ու, ւ, վ Վ յ ջ

Երկարբառներ՝ աւ աւ եա ea այ ai
իւ iu ոյ oi

Ավելի ուշ, հայերենում **աւ**-ը տալիս է **օ**, որը **ծ**-ով է տառադարձվում. **ղ**-ն ստանում է **յ**-ի արտասանությունը (կամ **յ**) և նրանով էլ տառադարձվում է, վ, ւ և ձայնավորներից առաջ ու-ն արտասանվում է որպես շրթնատամնային շփական և, այսպիսով, տառադարձվում է **բ**-ով, ինչպես բառասկզբի **յ**-ն **ի**-ով: Նոր հայերենի բարբառները պետք է տառադարձվեն այսօրվա արտասանությանը: Այդ մասին *հմմտ.* Petermann, «Über den Dialekt der Armenier van Tiflis»¹ Berlin 1867 (Abhandl. der königl. Akad.), Riggs, «Grammar of the modern Armenian language»², Sievers ZDMG 30, p. 58-59 և այլն: Այդ բարբառը տառադարձվելու համար նոր նշանների կարիք չի զգում:

¹ Թիֆլիսի հայերի բարբառի մասին:

² Ժամանակակից հայերեն լեզվի քերականություն:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Հայերենի ստուգաբանության հիմնական գծերը

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՆԱԽԱՐԱՆ

Հին հայերենը մեր թվականության V դարից հետո իր սկիզբն առնող մատենագրության լեզուն է, և որպես գիտական լեզու, այսօր էլ շարունակում է կիրառական լինել: Նա հանդես եկավ ոչ թե բարբառների տրոհված, այլ այն բարբառով, որով Աստվածաշունչն էր թարգմանվել, անմիջապես հեղինակավոր էր և, որպես միակ պիտանի և անփոփոխ գրական լեզու, առկա բոլոր բարբառների նկատմամբ գերիշխող դարձավ միջնադարի ողջ տևողության ընթացքում: Հետևաբար մենք տեղյակ չենք այդ լեզվի ո՛չ պատմությանը, ո՛չ էլ նրա բարբառներից, ուրեմն, այսպիսով, հայերենի շրջանակներում մենք առաջին չենք ունենա ո՛չ պատմական, ո՛չ էլ համեմատական քերականություն: Ես շեշտում եմ առաջին, քանի որ հետագայում չէ՞ որ համեմայն դեպս հայերենի բարբառների համեմատական քերականություն պետք է գրվի, սակայն ոչ այժմ, որովհետև ողջ լույսը հին լեզվից պետք է բարբառների վրա սփռվի և ո՛չ թե ընդհակառակը:

Ուստի և հայագիտության ամենաառաջնահերթ խնդիրն է վաղեմի միասնական լեզվի այդ ամբողջությունը տրոհել իր բաղադրամասերին և դրանք պարզաբանել ըստ նրանց ծագման և զարգացման: Վերջինս, նկատի ունենալով այդ լեզվի հողմահարված կերպարանքը, շատ դժվար կլինի, մասամբ՝ անհնար: Մինչդեռ առաջինը, ընդհակառակը՝ համեմատաբար հեշտ, քանի որ հայերենը իր կառուցվածքով մշակված է պարզության աստիճանի (որում նա դժվար թե որևէ այլ հնդեվրոպական լեզվի կողմից գերազանցվի) և որը այն լեզվական անատոմիայի համար մի շնորհակալ օբյեկտ է դարձնում: Այսպիսով, խոսքը վերաբերում է այն բանին, որ լեզուն տրոհվի բնիկ և փոխառյալ բառերի, բնիկ բառերը հետ տարվեն դեպի իրենց արմատները, հիմքերի և բառակազմության բոլոր տարրերը բացատրվեն, և այդ ճանապարհով ստացված ամբողջ նյութը ստուգաբանորեն և պատմականորեն պարզաբանվի:

Այդ առաջադրանքի լուծման ձեռնարկումն էլ հենց այս «Հայկական ուսումնասիրությունների» նպատակն է:

Ստրասբուրգ (Ելզաս)

Հ. Հյուբշման

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախնական դիտողություններ

Առաջին մաս. Ստուգաբանություն
Երկրորդ մաս. Հնչյունաբանություն

§ 1 Ընդհանուր հնչյունական օրենքները

§ 2 a -

§ 3 ai -

§ 4 au -

§ 5 e -

§ 6 ē -

§ 7 i -

§ 8 o -

§ 9 oi -

§ 10 u -

§ 11 ę -

§ 12 ea -

§ 13 iu -

§ 14 Չայնավորների փոփոխություններ

§ 15 k -

§ 16 g -

§ 17 k' -

§ 18 è -

§ 19 j -

§ 20 ç -

§ 21 c -

§ 22 j -

§ 23 ç -

§ 24 t -

§ 25 d -

§ 26 i' -

§ 27 p -

§ 28 b -

- § 29 p' -
 - § 30 h -
 - § 31 x -
 - § 32 s -
 - § 33 z -
 - § 34 š -
 - § 35 ž -
 - § 36 n -
 - § 37 m -
 - § 38 l -
 - § 39 λ -
 - § 40 r -
 - § 41 r' -
 - § 42 y -
 - § 43 v -
 - § 44 Կորուստ
 - § 45 Տեղափոխություն
 - § 46 Հնդեվրոպական և հայկական հնչյունների համապատասխանությունը
- Վ երջ ա բ ա ն .** Հայերենի դիրքը
Հ ա վ ե լ վ ա ծ . Հայերենի թեքումը
Ա ն վ ա ն ա ց ա ն կ

Պետերմանի, Վինդիշմանի, դը Լագարդի և Ֆր. Մյուլլերի աշխատություններում հայերենը ապացուցվել է որպես հնդեվրոպական լեզու և ներկայացվել է որպես իրանական: Այն, ինչը նրան իրանականի տեսք է տալիս, այդ իրաներենից վերցված բազմաթիվ փոխառություններն էին, որոնք առաջին հայացքից չէր կարելի ընկալել որպես օտար բառեր: Այսպիսով, հայերենը նույն իրավունքով էր ընդունվում որպես իրանական, ինչով անգլերենը ռումանական կարելի է համարել:

Որ հայերենը, ինչպես աշխարհի բոլոր լեզուները, բնիկ բառերի կողքին նաև փոխառյալ բառեր ունի, անշուշտ, կարելի էր ենթադրել նաև ապրիորի: Հայերենի իրանական փոխառությունները առաջինը¹ նկատեց դը Լագարդը իր «Gesammelten Abhandlungen» աշխատության մեջ (1866), 291-292 էջերում նա գրում էր. «Այսպիսով ապացուցվեց, որ հայկական կյանքի ակունքները դրվել են դեռ վաղ ժամանակներում. նրա վրա շերտավորվում է իրանական ներգաղթը, որը հեռավոր, զարտուրի ճանապարհներով և շատ մարտեր վարելուց հետո հասել էր Արարատյան գավառ, ուստի և իրանական լեզուների նախատիպը հաճախ ինքնուրույն զարգացում է ունեցել և նույնիսկ շեղվել է իր հիմնական բնույթից, սակայն վաղեմի այդ ապառների վրա դեռ պարզորոշ զգացվում է էլ.աներենի առատ հռչը: Պարբերները հեղեղում են Հայաստանը, այնտեղ հաստատում են Արշակունյաց մի թագավորություն, իրենց տիրապետության տակ են վերցնում լավագույն գավառը և հայկական լեզու են մտցնում տեղական լեզվից ծայրահեղորեն սահմանազատվող մի շարք էրանիական բառեր: Ես կարծում եմ՝ սխալված չեմ լինի հայտնելով այն վստահությունը, որ ով իսկական լեզվական մտածողություն ունի (իսկ այդ, անշուշտ, շատ հազվադեպ է պատահում), կգտներ հայերենի երեք տարբեր բաղկացուցիչ մասերը»: Այդ երեք բաղկացուցիչ մասերի հատկանշական գծերն այստեղ չեն տրվի, սակայն էջ 298-299 բերվող հավելվածում դը Լագարդը փորձում է «օրինակներով ցույց տալ, թե ինչպես կարող էին հայերենի տարբեր բաղկացուցիչ մասերը սահմանազատվել»:

Այսպես, նա ցույց է տալիս, որ սնս. **khan**-ի (փորել) արմատը, որը հայերենում ներկայացված է **կան** (kan), **խան** (xan) և **քան** (k'han) ձևերով, որ «կով»-ի համար տրվող բնիկ հայերեն **kov** բառը, որպես փոխառություն, հնչում է **gav**, և որ **գառազանը** (gavazan), ինչպես նաև **խարազան**-ը (xarazan) հայերենում օտար բառեր են: Սակայն արմատի այդ **խան** (xan) ձևը ներկայացված է միայն **խանդակ**-ի (xandak) մեջ (ամրոցի խրամատ), որը

¹ Հմմտ. սակայն ZDMG 35, 179.

հնչյունապես լիովին համընկնում է արաբերեն (պարսկերենից փոխառյալ) xandaq-ի հետ և Բառարանի կողմից վկայակոչվում է միայն Ասողիկի և ավելի ուշ շրջանի հեղինակների մոտ, ուրեմն՝ հավանաբար փոխ է առնված արաբերենից: Այստեղից հետևում է, որ սնս. **khan**-ը հին հայերենում (Մուհամեդից առաջ ընկած ժամանակաշրջանում) ներկայացված է **կան**-ով (kan) (բնիկ բառ) և **քան**-ով (kan) (փոխառություն), ինչպես սնս. gāus-ը **կով** (kov) (բնիկ բառ) և **գաւ** gav (փոխառություն) բառերով. «ավանակ» հասկացությունը արտահայտող բառերը ներկայացված են էջ ԵՃ (բնիկ բառ) և **խար** - xar- (փոխառություն) ձևերով, սակայն նշված երեք բաղկացուցիչ մասերի ճանաչման հատկանշական գծերը դրանով ոչ մի կերպ չեն տրվում: Մրանով ավելի շուտ բառերի երկու շերտերը տարբերակվում են բնիկ բառերի և այդ նույն կարգի պարսկական փոխառությունների, մինչդեռ վերևում այդ երեք շերտը պարզորոշ ձևով տարբերակվում է «Հայկական կյանքի հիմքերը նախապատմական ժամանակաշրջանում», նրա վրա շերտավորվող էրանական ներգաղթը, «որը հեռավոր զարտուղի ճանապարհներով և բազմաթիվ մարտեր վարելուց հետո էր հասել Արարատյան գավառ և այս երկու վաղեմի ապառների վրա ևս մեկ էրանական առատ հող», պարթևական կամ արշակունյան: - Իսկ ինչպե՞ս է հանգավորվում այս վաղեմի ուսմունքի վրա նորը, որը նույն հեղինակը իր «Հայագիտական ուսումնասիրություններում» (1877, էջ 208) ընդհանուր հայտարարի է բերում հետևյալ նախադասության մեջ «հայերեն լեզուն կազմված է երեք բաղկացուցիչ մասերից՝ հայկյան է¹, արշակունյան (պահլավական), սասանյան»:

Որպես ապացույց այդ երեք շերտերի առկայության՝ դը Լազարդն իր Ges. Abh., էջ 299-ում բերում է այն փաստարկը, որ միևնույն բաները կրկնակի և եռակի կազմով բոլորովին այլ բառերով են անվանվում: Եթե այս դրույթը չի ապացուցվում, դրանից համեմայն դեպս հարկ էլ չկա լուրջ ապացույցներ սպասել: Քանի որ, եթե էջ-ն (ԵՃ) է «ավանակ» հասկացությունն արտահայտող առօրյա բառը, իսկ նրա կողքին **խար**-ը (= պրս. xar) ներկայացված է միայն մի քանի բարդություններում, ինչպես **խարազան** (xarazan), (որը, նույնիսկ Joh. der Mönch-ի կողմից դիտվել է որպես պարսկական, *հմմտ.* Բառարան **խարազան** xarazan և **իշավար** išavar), ուստի և չի կարող կասկածելի լինել, որ էջ-ը ԵՃ բնիկ հայերեն է, իսկ **խար**-ը xar- պարսկական փոխառություն: Սակայն եթե հայերենը երկու հավասարապես կիրառական բառեր ունի «ծախ» հասկացության համար, ինչպես՝ **սեհակ** sheak և **ծախ** jax, ապա դրանից բոլորովին էլ չի հետևում, որ նրանցից մեկը բնիկ բառ է, իսկ մյուսը՝ փոխառություն: Քանի որ մի լեզու

միանգամայն հանգիստ կարող է երկու բնիկ բառեր ունենալ միևնույն առարկայի կամ հասկացության արտահայտման համար, *հմմտ.* հուն. ἀριστερος և σκαίος, գեղդ. vairyastāra և havya, լատ. sinister և scaevus = «ծախ»:

Հայերենի ուսումնասիրությանը ես դիմեցի միայն Ֆր. Մյուլլերի աշխատությունների հետ ծանոթանալուց հետո և, սկզբում նրան հետևելով, այն ընդունում էի որպես մի իրանական լեզու՝ փորձելով անձամբ հաղթահարել այդ լեզվի իրանական բնույթի մասին իմ մեջ առաջացած կասկածը¹: Այն, ինչը առանձնապես աչքի զարնեց հայերենի արմատական բառարան կազմելու նպատակով հայ գրիչներին ընթերցելիս, այդ մի կողմից հայերենի մեծ տարբերությունն էր իրանականից, ինչպես նաև հնդեվրոպական որևէ այլ լեզվից ընդհանրապես, և մյուս կողմից՝ հայերենի շատ բառերի լիակատար համընկնումը պարսկերենի հետ: Մի կողմից այդ լեզուն հազիվ էր հնդեվրոպական թվում², մյուս կողմից՝ վճռականորեն ոչ պարսկերեն (ոչ ուղղակի իրանական), և ապա դիմել եմ այն բառերի և ձևերի հետազոտությանը, որոնք ինձ թվացել են բնիկ հայերեն, և արդյունքը եղավ այն, որ հայերենը իրանական լեզուներին չի պատկանում, որ այն թերևս պետք է դրվի իրանականի և սլավոնիկների միջև (էջ 39), համեմայն դեպս այն հնդեվրոպական լեզվաընտանիքի ինքնուրույն անդամ է (էջ 42): Հետազոտության ընթացքում պարզվեց, որ փոխառյալ են ևս մի շարք այլ բառեր, ուրիշները ևս հետագայում պարզվեցին որպես օտար բառեր, և ես կազմեցի նրանց ցանկը (a. a. O. էջ 402-404): Դրանով վերջնականապես հերքվեց այն կարծիքը, թե հայերենը իրանական կամ արիական լեզու է, և պարզորոշ նշվեց նրա իսկական դիրքը:

Չնայած դրան՝ Ֆր. Մյուլլերն ու դը Լազարդը շարունակում են պնդել իրենց սխալ կարծիքը:

Ֆր. Մյուլլերն իմ դեմ ելույթ ունեցավ իր «Über die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen», Վիեննա, 1877: Միայն կոկորդային հնչյուններից ստացված շչականների պատճառով նա հակված է հայերենը պատկերել իրանական լեզուների թվին: Փաստը կայանում է նրանում, որ k¹-ն իրանականում, ինչպես սլավոններնում է տվել, s, g¹, g^h և երկուսում էլ՝ z, հայերենում k¹-ն զարգանում է s-ի, g¹-ն c-ի = ts, g^h-ն j-ի = dz (կամ z), այսպիսով նա սլավոններնին նույնքան մոտ է, ինչքան և իրանականին, բայց և տարբերվում է երկուսից էլ:

¹ Հմմտ. Հոլովների իմ տեսությունը՝ Kasuslehre (1875), էջ 333-334, ծմբ.:

² Դը Լազարդը դեռ 1877 (Arm. Stud., 207, ծմբ.) հայերենի ներկայի հետ (օր. գրեն «գրում են» և այլն) համադրում է հունգարերենի ներկայի հետ (օր. irok, irom «գրում են» և այլն): Սակայն երկուսի մասին էլ միայն Բյուտլինգը կարող է դատել. «քանի որ նա թե՛ սանսկրիտերեն է հասկանում, թե՛ յակուտերեն»:

¹ Այսինքն՝ բնիկ հայերեն:

Նույնը, ինչպես ես արդեն շարադրե՛մ եմ ZDMG 35, էջ 172-173-ում, տեղի է ունենում քմայինների առումով, հայ. չոր-ք չօր-կ՝-ը սլավոններենով չ et-yrije-ից ավելի հեռու չի կանգնած, քան զենդ. Ճաժաժո-ից:

Երբ բառակազմային sv-ն իրաներենում **xw** է տալիս, հայերենում **k'**, ապա Մյուլլերը (հիշատակված տեղում, էջ 7) դրանում արտասովոր ընդհանրություն է տեսնում, մինչդեռ ես միայն միևնույն հնչյունախմբերի տարբեր մեկնաբանությունը կարող եմ տեսնել: Հիշատակված տեղի էջ 8-ում հայերենի խ-ով = պրս. x բառերը ես դիտում եմ որպես փոխառություն, ցեղակցություն արտահայտող անունները այնտեղ սխալ են մեկնաբանված (*հմմտ.* ZDMG 35, էջ 169), **բուր-ել** bur-el և այլնի մասին հուսով եմ (ZDMG, 36, էջ 133), ես ճիշտ մեկնաբանություն եմ տվել: Բառակազմային վ v-ի զարգացումը **q-ի g** (էջ 9) իրանականի համար առհասարակ տարբերակիչ գիծ չէ: Ինչ վերաբերում է ձայնավորների համակարգին (էջ 11-12), ապա ես երբևէ չեմ պնդել, որ հայերենը իբր մոտավորապես հին հունարենի մակարդակի վրա է կանգնած: Այսպիսի շարքեր, ինչպիսիք են՝ $\tau\acute{\epsilon}\tau\rho\alpha\mu\mu\alpha\iota - \tau\acute{\epsilon}\pi\epsilon\omega - \tau\acute{\epsilon}\tau\rho\circ\phi\alpha$ և այլն այստեղ չի կարելի փնտրել: Մակայն այդ դեպքում ի՞նչ են տվել լատիներենում հուն. $\phi\acute{\epsilon}\rho\omega - \phi\acute{o}\rho\circ\varsigma$, հայ. vezq-vozú շարքերը:

Առկա են միայն խղճուկ մնացորդներ, որոնց Լեո Մայերը արձանագրել է Vergl. Gramm. I², էջ 243-244 և 247-ում: Որքան քիչ արմատներ և բառեր են թույլ տալիս առհասարակ լիովին կազմավորված հայերենում ձայնավորների երկու աստիճան վկայակոչել (*հմմտ.* ստորև ձայնավորների համակարգը): Երկբարբառների ներկայացման հարցում ևս հայերենը լատիներենի հետ միայն միևնույն աստիճանի վրա է գտնվում, այստեղ մենք որպես փոխարինողներ ունենք **ē, ai, oi**, այնտեղ՝ հիմնականում **ī** և **o**: Հայերեն «ե»-ն e հայ. ա-ի a նկատմամբ գտնվում է նույն հարաբերակցության մեջ, ինչպես եվրոպական լեզուների e-ն իրան. a-ի նկատմամբ (օրինակները տե՛ս ստորև): Իսկ այդ արդեն բավական է հայերենը արիականից սահմանազատելու համար: Այն, որ նոր պարսկերենը (կամ որևէ իրանական լեզու) իբր մի համապատասխան e ունի, ինչպես դա Ֆր. Մյուլլերն է ենթադրում, այդ կոպիտ սխալ էր, որը ես ZDMG 35, էջ 174-ում շարադրել եմ որպես այդպիսին: Անշուշտ, մի քանի իրանական լեզուներ ինչ-որ մի o ունեն, սակայն ոչ մի կասկած չի հարուցում այն, որ այդ o-ն նախահնդեվրոպական o-ի հետ ոչ մի ընդհանրություն չունի¹: Ֆր. Մյուլլերի մնացած հատուկ դիտողություններին ես այստեղ չեմ անդրադառնա, այս աշխատանքի

¹ Նույն այդ ձևով հայերենի բաղաբնությունների հողակապ ա-ն (նշված տեղում, էջ 13) ոչ մի կապ չունի հունարենի o-ի և հայերենի o-ի հիմքերի հետ: Չենդերենի բաղաբնություններում հանդես եկող o-ն (a-ի դիմաց), լավ կլիներ, որ Ֆր. Մյուլլերը բոլորովին մոռացության մատներ:

շարադրման ընթացքում համապատասխան տեղերում նրանք իրենց անհրաժեշտ պատասխանը կատանան: Ֆր. Մյուլլերի փաստարկումներից և ոչ մեկը ես ճիշտ չեմ համարում, հետևաբար չեմ կարող հայերենի բնույթի մասին իմ որոշումը կայացնելիս նրանցով առաջնորդվել:

Դը Լագարդը իր «Armenischen Studien» (Գյոթինգեն, 1877) աշխատության մեջ հայերենը վերստին իրաներեն է հայտարարել: Այդ ուսումնասիրությունների երրորդ մասում (էջ 191 և հաջ.), ելնելով իր տեսանկյունից, շարադրում է հայագիտական ուսումնասիրությունների մի պատմություն և ապա էջ 208-ում այդ լեզվի մասին իր կարծիքը եզրափակում է հետևյալ դրույթներով՝

ա) հայերեն լեզուն բաղկացած է երեք բաղկացուցիչ մասերից՝ հայկյան, արշակունյան (պահլավական) և սասանյան;

բ) հայերենի արշակունյան և սասանյան բաղկացուցիչ մասերն, անշուշտ, էրանական բնույթի են, սակայն հայկյանը ևս վերաբերում է մի այնպիսի լեզվաընտանիքի, որի հնագույն ներկայացուցիչը զենդերենն է, որովհետև նրանցում համապատասխանում են՝

h-ն հնդկերեն s-ին

s-ն հնդկերեն ʃ-ին

χ²-ն հնդկերեն sv-ին

հնդկական h-ին փոխարինող մի h;

գ) հայկյանը բակտրիականից և հարավարևմտյան պարսկերենից և այլն տարբերվում է **p-ի** տակ տրվող հատկանիշներով, սակայն իրանականը բավարար չափով չի բնորոշվում և հայերենը չի ապացուցվում որպես իրանական: Եթե հնդկական բառակազմային sv-ի դիմաց իրանականում zō է հանդիպում, իսկ հայերենում՝ **p k'** (որը բառակազմում նաև **rv-ից** է ծագում, և ո՛չ մի դեպքում չպետք է հենց **xw** -ից ծագած լինի), այնպես որ, ինչպես արդեն վերը հիշատակվեց, իրանականը և հայկականը բառակազմային sv-ի մեկնաբանման տեսանկյունից ոչ թե համապատասխանում են, այլ սահմանազատվում են:

Նրանց համապատասխանությունը միայն նրանում է կայանում, որ նրանք նշված sv-ն չեն պահպանում որպես sv, որով սակայն ոչինչ չի ասվում: Ընդհանրապես հնդկերեն ʃ -ի դիմաց սլավոններենում նույն հաջողությամբ, ինչպես իրանականում միշտ s է հանդես գալիս, հնդկերեն **h-ի** դիմաց (եթե = հնդեվր. g^h) երկու լեզուներում էլ որպես z է հանդես գալիս, s-ն ևս սլավոններենում որոշ դեպքերում վեր է ածվում h-ին բավական մոտ

¹ Դը Լագարդի χ² = kh-ի դիմաց ես դնում եմ k':

կանգնած *ch*-ի, ինչպես՝ *snücha* «հարս» = սնս. *snušā*, *choditi* «քայլել, գնալ», սնս. արմատը *sad*, հուն. *ծծός*, «ցույց տալ» այնպես, որ մի լեզու, որը իրականացնում է *Բ*-ի տակ տրվող *N. 1, 2, 4* պայմանները, ինչպես իրանական, նույն հաջողությամբ էլ սլավոնական լեզու կարող է լինել:

Բացի այդ, *s* = հնդեվ. *s*-ի մեկնաբանմամբ, հայերենն իր զարգացման ուրույն ճանապարհն ունի, ինչպես այդ կտրվի ստորև: Թե ինչ կարելի է հասկանալ մի իրանական լեզվի տակ, ես շարադրել եմ *K.Z. 24*, էջ 372-411-ում, այս աշխատության վերջում նույնպես անդրադառնում եմ այդ հարցին և այնտեղ ցույց եմ տալիս, որ հայերենը իրանականի իսկական հատկանիշներ չի կրում, ուստի և դը *Լազարդը* մնում է շփոթմունքի մեջ:



Իր «*Arm. Stud.*» (էջ 4-165) աշխատության առաջին մասում դը *Լազարդը* այն ամենը, ինչ մինչև 1877 թ. հայերենի ստուգաբանության մասին գրվել է, մեծ հոգատարությամբ ի մի է բերել: Նա անտեղյակ էր միայն պարսկերեն-հայերեն մի բառարանի տվյալներին (*Persisch-armenischen Wörterbuches von Der Hohannēs und Hagop Düz*, Կոստանդնուպոլիս, 1826), որի վրա ես նրա ուշադրությունը հրավիրեցի *ZDMG 35*, 178-179: Այս բառարանը տալիս է մոտավորապես 430 գերազանցապես ճիշտ ստուգաբանություններ, որոնք հետազոտությունների պատմության համար, ինչով դե *Լազարդը* է եռանդով զբաղվում, կարևոր կլինեն: Դը *Լազարդի* ուշադրությունից վրիպել եմ նաև հայկազյան *Բառարանում*¹ բերվող ստուգաբանական շատ տվյալներ, որոնք թերևս արժանի էին հիշատակման: Ես այստեղ կնշեմ միայն հատվածներ՝ *անսպ-արար* *ajb-arar* (= «անայիպ իրաց արարող»), *աստղ* *ast* (լատ. *stella*, հուն. *astir*, պրս. *sitare*), *աքսոր* *ak-sor* (հուն. *ek'soria*), *բուն* *bun* (պրս. *bün*), *գոմեզ* *gomēz* (տե՛ս *գոմեզ*-ի տակ, պրսկ. *Kümiz*, այսինքն՝ *մեզ*), *դժխեմ* (պրս. *diž xim*), *դիտակ* *ditak* (պրս. *di dar, di de*), *դրան* *durān* (հուն. *tira*, պրս. *der*, սնս. *dvāra*), *դուստր* *dustr* (պրս. *düxter*, հուն. *t'gätir*), *եփն* *ev'n* (պրս. *heft'*, հուն. *ep't'a*, լատ. *sep'tem*, սնս. *sap't'am*), *քազել* *taz-el* (պրս. *t'aziden*), *ծոմ* *com* (եբր. *tsom*, ասոր. *saum*, արաբ. *sevm*), *կամայ* *kamay* (սնս. *k'amam*, ինչպես նաև սնս. *akama* = հայ. *ակամայ* *akamay*), *կոզի* *kogi* (արմատը՝ *կով* *kov*), *կու* *ku* (պրս. *küh*), *կռունկ*

¹ Neues Wörterbuch der armenischen Sprache, Venedig, 1836-37. Երկու մեծադիր հատորներով, հայերեն լեզվով, այբբենական կարգով, Չախջախեանի հայ-իտալերեն բառարանը. Վենետիկ, 1837:

krunk (լատ. *grus*, հուն. *γέρανος*, դաղմ. *žurav*), *մառեխ* *mařex* (արաբ. բառ. *merrih*), *մեզ* *mēg* (պրս. *mīg*, սնս. *megha*, դաղմ. *myla*), *մի* *mi* (սնս. *ma*, հուն. *μή*), *միտ* *mit* (լատ. *mens*, իտալ. *mente*, սնս. *mati, manas*), *մկրատ* *mkrat* (թուրք. *mē kras*), *յաւանակ* *yavanak* (պրս. *jivan*, սնս. *yuvana*, լատ. *yuvenis*), *նաւ* *nav* (հուն. *nāus*, լատ. *navis*, վրաց. *nāvi*, սնս. *nav*, պրս. *nav*), *նու* *nu* (հուն. *nios*, լատ. *nurus*), *որբ* *orb* (հուն. *orfanós*, լատ. *orbis*), *ուշ* *uš* (պրսկ. *huš*), *ուտեմ* *utem* (հուն., լատ. *edo, édomē*), *պնակ* *pnak* (հուն. *pínak's*), *ջնարակ* *jnarak* (հուն. *sandarak'*), *սատեր* *sater* (հուն.-լատ. *Բառարան, statir*), *սիրտ* *sirt* (հուն. *k'ardia*, լատ. *k'or*, սնս. *hrid*, դաղմ. *sérdçe*), *ստին* *stin* (սնս. *stana*), *տասն* *tasn* (հուն. *dé'ka*, լատ. *deč em*, սնս. *dasan*, պրս. *deh, dah*), *ցցուն-ք* *ççun-k'* (հուն. *sisóyi*), *փոս* *pos* (լատ. *fossa*)¹, *քարտե* *k'artēs* (հուն. *xártis*), *քարում* *k'ak'um* (*Չախջախ. քուրք. k'ak'um*), *քուրայ* *k'uray* (եբր. *kur*, պրս. *k'üre*) և այլն: Անշուշտ, բառարանի նման տվյալների դեպքում միշտ չէ, որ կարելի է կռահել, թե արդյոք համապատասխան բառերը միմյանց հետ համադրվում են իրենց իմաստային կամ հնչյունական ընդհանրության պատճառով: Ընդհանուր առմամբ բառարանը հեռավոր պատկերացում անգամ չունի հայերենի իսկական ազգակցական կապերի մասին, և նրա ստուգաբանական տվյալները գրեթե միայն պատմական արժեք ունեն:

«*Arm. Stud.*»-ի I մասում հավաքված նյութերից դը *Լազարդը* աշխատության II մասում (էջ 166-168) համադրում է այն դեպքերը, որոնք նա ճիշտ կամ լավագույն դեպքում հավանական է համարում, նրանց է կցում այն գիտնականի անունը, որը այդ համադրումը առաջինն է կատարել: Այս ցանկում հայերենի բառերը շարվում են հայկական այբուբենի հերթականությամբ, բնիկ հայերեն բառերի և պարսկական փոխառությունների սահմանազատման փորձեր միայն հազվադուր դեպքերում են արվում, ըստ էության միայն այն դեպքերում, երբ հայերեն բառն իր հնդկերեն ներկայացուցիչն ունի, և հեղինակը «որևէ պատճառով այդ շահագրգռված էր համարում անել» (էջ 165): Թե ինչու է որևէ բառ որպես փոխառություն դիտվում, այստեղից չի կարելի եզրակացնել, սակայն I մասում որոշ դեպքերում տրվում են փոխառությունների մի քանի բնորոշ գծեր (*հմմտ. էջ 6 ակամայ* *akamay* բառի տակ), իսկ III մասում՝ էջ 208, որպես «արշակունյան փոխառությունների» բնորոշ գծեր նշվում են՝ 1) նրանք հայերեն *ts* = սնս. *j*-ի դիմաց *z* ունեն, իսկ հայ. *dz* = սնս. *h*; 2) որ նրանք հայ. *k'* = սնս. *sv*-ի դիմաց *x* են ցուցաբերում: «Հետագա հատկանշական գծերը դեռ պետք է գտնվեն»:

¹ «*Լատ. fossa-ից par l'intermédiaire du grec*» St. Martin, Mémoires (1819), II, 395.

Այս համադրություններից մեծ մասի կապակցությամբ ես այլ կերպ եմ դատում, քան դը Լագարդը, մասամբ ես ճիշտ եմ համարում այն, ինչը նա սխալ էր համարում և ընդհակառակը՝ ես հայերեն կամ իրանական լինելու մասին այլ հատկանիշներով եմ դատում, քան նա, թե ինչպես՝ ես այդ կշարադրեմ աշխատության վերջում, հետևաբար՝ ես հաճախ փոխառություն եմ համարում այն, ինչը նա որպես բնիկ բառ է դիտում և (եթե անգամ ավելի հազվադեպ) ընդհակառակը:

Ընդհանուր առմամբ կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր բառ, որը հնչյունապես լիովին համընկնում է պարսկերենի հետ, փոխառություն է¹, բայց, անշուշտ, յուրաքանչյուր դեպքում այդ ենթադրությունը պետք է հնչյունական օրենքների վրա հենվի, քանի որ հայերենի հնչյունական հակումները, բոլորը միասին վերցրած, պարսկականից այնքան հեռու են, որ միևնույն բառը երկու լեզուներում հիմնովին տարբեր տեսք է ընդունում և պետք է ընդունեն:

Բավական է միայն համեմատել՝

հայ.	<i>aluēs</i>	-	պրս.	<i>rōbāh,</i>	պիլ.	<i>*rōpās</i>
“	<i>amis</i>	-	“	<i>māh,</i>	հայրս.	<i>māha</i>
“	<i>anun</i>	-	“	<i>nām,</i>	<i>nāma</i>	
“	<i>ašīl</i>	-	“	<i>sitāra</i>		
“	<i>arj</i>	-	“	<i>xirs</i>		
“	<i>hair</i>	-	“	<i>pidar,</i>	հայրս.	<i>pitar-</i>
“	<i>veç</i>	-	“	<i>šaš</i>		
“	<i>e-re- k'</i>	-	“	<i>si</i>		
“	<i>het</i>	-	“	<i>pai,</i>	զինդ.	<i>paδ a</i>
“	<i>otn</i>	-	“	<i>pāi,</i>	<i>pāδ a</i>	և այլն:

Այսպիսով, ուրեմն մի այնպիսի բառ, ինչպիսին է **հազար**-ը *hazar*, որը պարսկերեն *hazār*-ի հետ հնչյունապես լիովին համընկնում է, հենց այս իսկ համընկնման պատճառով սկզբից ևեթ կասկածի տակ է դրվում: Եթե դիմենք հայերենի հնչյունական օրենքների օգնությանը, ապա պարզվում է, որ սնս. *sahasra*-ի (= հնդեվ. *sag' hesro-*) դիմաց հայերենում *ejef*, լավագույն դեպքում՝

hezer պետք է հանդես գար, ուստի և **հազար**-ը անպայման փոխառություն պետք է լինի¹:

Այսպիսով, եթե ցանկանում են հայերենի մասին դատելու հաստատ ուղի ընտրել, ապա ճիշտ արած կլինեն, եթե իրենց դատողություններն այնպիսի բառերի վերակառուցեն, որոնք պարսկերենի հետ հնչյունապես լիովին չեն համընկնում, իսկ մյուսները միայն այն դեպքում օգտագործել՝ եթե հաստատ հիմքեր կան ենթադրելու, որ նրանք, չնայած իրենց հնչյունական ընդհանրությանը, բնիկ հայերեն են:

Եթե սխալմամբ մի քանի բնիկ բառեր էլ ընկնեն փոխառությունների շարքը, ապա վնասը շատ մեծ չէ, եթե միայն բնիկ բառերը ճիշտ են մեկնաբանված, նրանցից ելնելով՝ համեմայն դեպս պետք է որ հնարավոր լինի հնչյունական օրենքները ճանաչել և, նրանցից ելնելով, ճանաչել լեզվի ցեղակցական հարաբերությունները: Կարծես թե 20 լիովակա բառերը չեն, որ լեզվի բնույթի մասին ավելի ճիշտ կարծիք տվեցին, քան 50 բառերը, որոնցից 25-ը բնիկ, իսկ 25-ը՝ սլավոնական փոխառություններ էին:

Ես իմ ձեռքի տակ մինչ այս եղած նյութից զուգադրում եմ հայկական այն ստուգաբանությունները, որոնք ճիշտ են համարում և այս աշխատության մեջ տալիս եմ բնիկ հայկականները, իսկ հաջորդում՝ փոխառյալ բառերը: Ներկա աշխատության առաջին գլխում ես ինքս եմ արձանագրում ստուգաբանությունները և դրանց հիման վրա երկրորդ գլխում մշակում եմ այն հնչյունական օրենքները, որոնց օգնությամբ այժմ ավելի լավ, քան նախկինում, հնարավոր կլինի որոշել, թե արդյոք որևէ համադրություն ճիշտ է, կասկածելի, թե՛ սխալ: Այն, ինչ համաձայն հնչյունական օրենքների պարզվում է, որ սխալ է կամ ծայր աստիճան կասկածելի, առանց այլևայլի ես մի կողմ եմ թողել, և ընդհակառակը, մի քանի կասկածելի, բայց ոչ անհնար թվացող համադրություններ ճիշտ է վերցրել եմ, սակայն դրել եմ հարցականի տակ: Որտեղ ես իմ կասկածները որոշակի չեմ արտահայտել, կարելի է կռահել հնչյունական օրենքներից:

Մի քանի համադրություններ, որոնք ես չեմ արձանագրել ուզում եմ այստեղ հիշատակել և հակիրճ քննարկման ենթարկել:

արբուն *arbun* հնչյունապես կարելի է համադրել սնս. *arbha, arbhaka* բառերի հետ, սակայն **արբուն**-ը պատահաբար արբունքի շրջանն է, *դիթ, օքսիդ*, մինչդեռ սնս. *arbha, arbhaka*-ն = **փոքրիկ մանուկ** հասկացություններին;

¹ Պարսկերենի «**հարյուր**» (*sad*) և «**հազար**» ցույց տվող բավականները, ինչպես հայտնի է, քափանցել են նաև Լրիմի գոթերեն (*sada* 100, *hazer* 1000), ինչպես նաև՝ հունգարերեն (*száz* 100, *ezer* 1000) և շատ այլ լեզուներ: Հմմտ. Vambery, *Ursprung der Magyaren*, էջ 336; *Zendsprache* s. v. *hazātra*, Tomaschek, *Centralasiatische Studien II, Pamir-Dialekte*, էջ 90:

¹ Ես արդեն այսպիսի դատողություն եմ արել KZ XXIII, 404.

արգանդ *argand* հնչյունական տեղաշարժի պատճառով չի համապատասխանում հուն. *όργή* «հակում, մղում, ձգտում», մանավանդ որ այն ըստ Curtius-ի «Grundzüge, 184» բխում է մի ինչ-որ *verg* արմատից:

Պարսկական *aryand* «գայրացկոտ» բառի հետ կապը հենց հնարավոր է, սակայն ոչ հավանական;

արդն *ardn* «տեգ, նիզակ» տեղաշարժի պատճառով չի համապատասխանում հուն. *ἀρδεις* «նետի սուր ծայրը, խթան»;

արի *ari* իմաստով համադրելի է սնս. *arya* «հավատարիմ, նվիրված» բառին (սնս. *ārya*, զենդ. *airya* «արիացի»);

արտ *art* (սեռ. *artoy*) արտորայ, *ἀγρός*, քվում է, թե համապատասխանում է գերմ. *Erde*, գոթ. *airpa* (արմատը՝ *ar* հերկել), մինչդեռ համաձայն հնչյունական օրենքների բխում է **ardo*-ից, որը չի տրոհվում *ar-do*-ի;

haur «հոր», *πατρός*; **հարու** hauru, yauray «խորթ հայր», *πάτωρ*; «հոր-
տիրայր, մորտիրայր»; **մար** maur «մոր» *μητρό*; **մարու** mauru «խորթ
մայր», *μητρύα*; **տրար** elbaur «տրոր», լատ. *fratris*; **ար** aur «օր», *ήμαρ*:

§ 5. **ե** = հնդեվր. **ե** կամ նախադրություն

tu es «ես», *έγώ*; **tu** ev «և», *έπί*; **տքն** ev'n «յոթ», *έπτά*; **երկ** erek
«երկեկ», *έρεβος*; **ընդեր-ք** nder-k' «ընդերք», *έντερα*; **ծեր** cer «ծերունի»,
γέρον; **սկեսուր** skesur «սկեսուր», *έκυρά*; **հեռի** he'i «հեռու», *πέρα*; **հերու**
heru «անցյալ տարի, հերու», *πέρυσσι*; **հետ** het «հետք», լատ. *peda*, **հերիւն**
heriun «մախար»; *περόνη*; **ձեռն** je'n «ձեռք», *χείρ*; **ձեռ** jet «այր», զեն.
zadañh; **մեծ** mec «մեծ», *μέγας*; **մեղր** melr, «մեղր», *μέλι*; **ջեր** jer «ջեր-
մություն, լավ եղանակ», *θέρος*; **ստերջ** sterj «ստերջ, չբեր», *στεΐρα*; **վեց** vec
«վեց», *έξ*; - **բերձ** -berj «բարձունք» (բառարարման մեջ), զեն. *barezañh*; **տղ**
eln «տղիկ», *έλαφος*; **ի վեր** i ver «ի վեր, դեպի վեր, վերևում», սն. *varšman*;
գիշեր gišer, *έσπέρα*; **քեռ** ke'r «քրոջ», հնդեվր. **svesros*;

նեղ nel «նեղ», հուար. *naru*; **նետ** net «նետ», սն. *nada*; **գետ** get «գետ»,
ύδωρ; **գեղմ** gel'mn «գեղմ» «բուրդ», սն. *varman*; երգ *erg* «երգ», սն. *arka*;
կեր ker «կեր, սնունդ», *βορά*; **արեւ** arev «արև», սն. *ravi*; **երե-ք** ere-k' «երեք»
τρείς; **յ-եսան** y-esan «հեսան, սրաքար», *άκόννη*;

եմ em «եմ», եւլ. *έμμι*; **եի-ե-մ** ep-e-m «եիում եմ», *έψω*; **բեր-ե-մ** ber-
e-m «բերում եմ», *φέρω*; **զգե-նու-մ** zge-nu-m «զգեստալորվում եմ, հագնում
եմ», *έν-νυ-μαί*; **տես-անե-մ** tes-ane-m «տեսնում եմ», *δέρκομαι*;

բեկ-անե bek-anē «փչրում է, ջարդում է», սն. *bhanakti*; **մեռ-անի-մ** mei-
ani-m «մեռնում եմ», լատ. *morior*, սն. *mriyē*;

ե-ի e նախադրությամբ՝

ե-րեկ e-rek «երեկ» *έ-ρεβος*; **տրար** elbair «տրար», լատ. *frater*; **երե-ք**
e-re-k' «երեք» *τρείς*; **ե-րագ** = ա-րագ a-rag «արագ», սն. *raghu*; *հմմտ.* վերը՝
երակ erak և այլն:

Թերման համակարգում «ե»-ն e հանդիպում է՝ 1. որպես կատարյալի
3-րդ դեմքի նախածանց՝ **ե-լիք** e-lik' = *έ-λιπ-ε*; 2. որպես ներկայի հիմքի
կազմության միջոց՝ բեր-ե ber-e = *φερ-ε-*; 3. բ-հոլովման մեջ՝ **ըստեր-ք**
dster-k' «դատեր», *ύσγατέρες*:

§ 6. **է** = հնդեվր. **է** *ei, oi* (°) և հայ. **ե-յ** *e-y* (y-ից կամ t-ից)

1) **է**-ն վերջին վանկում = **ե**, ոչ վերջին վանկում = հնդեվր. **է**. **արեւու** aluēs,
սն. *արեւստ* aluesu «աղվես», *άλώπηξ*, սն. *άλώπεκος*; սն. *յրᾶ ֆա, հմմտ.*

տղեզն elēgn, սն. *տղեզան* elegan «տղեզն»;

2) **է**-ն **է** վերջին վանկում = i, ոչ վերջին վանկում = հնդեվր. *ei, oi* (°), **գետ**
gēt - **գիտ-ակ** git-ak, **գիտ-ուն** git-un «գիտուն», **գիտն** gitem «գիտն», *oid a,*
մեզ mēz (սն. միգի migi), «մեզ, մառախուղ», սն. *mēgha*; **մեզ** mēz (սն. միգի
mizi) «Urin», սն. *mēha*; **դեզ** dēz, **դիզում** dizum «դիզում եմ», սն. *dēhī,*
τείχος, τοίχος; **դեմ** dēm (սն. դիմի dimi) «դեմք», զեն. *daema*; **լիզում** lizum
«լիզում եմ», *λείχω*; **գինի** gini, «գինի», *οἶνος*; **ձիւն** jiun «ձյուն», սն. *hēman,*
հուն. *χειμών*;

3) **է** = e+y՝ **մեջ** mēj (սն. միջոյ mijoy) «մեջտեղ», սն. *madhya*, լատ.
medius, **բերե** berē «բերում է, կրում է», սն. *bharati*:

§ 7. **ի** = հնդեվր. **ի**, **է** և (մեծ մասամբ նախնական n-ից առաջ), **յ** որպես գոյականակերտ ածանց = հնդեվր. *yo*՝

ի-ն i վերջին վանկում = - (կամ ը ք), ոչ վերջնականում՝ **արծի** arciv
(սովորաբար արծվի arcvi նախնական *arcivi-ից), «արծիվ», սն. *tjipyā*; **ինձ**
inj (սն. ընձու քոյս) «ինձ», սն. *sjha*; **ե-գիտ** e-git «գտալ» = սն. *a-vid-at,*
ներկան՝ **գտ-անե-մ** gt-ane-m «գտնում եմ», **գիտ** giut «շահ», սն. *-vinda*; **ե-լիք**
e-lik' «լքեցի», *έ-λιπ-ε*, ներկան՝ **լք-անե-մ** lk-ane-m «լքում եմ»; **նիստ** nist
«դիրք, տեղ, բնակավայր», սն. *niṣa*, ներկան՝ **նստ-իւն** nst-im «նստում եմ»;
տիւ tiv «ցերեկ», սն. *divā* «ցերեկը»; **քիրտն** k'irtn «քրտնիք»; **իծրօց**; **սիւն**
siun «այուն» հուն. *κίτων*; **ցին** cin «milvus», «ցին», *ιχτίνο*, սն. *cyēna*; **երի-ս**
eri-s «երեք» (հոգն. հայց.), գոթ. *þrins*, **երիք** erivk' (գործ. հոգն.), սն. *tribhis*;

սին sin (սն. սնոյ snoy) «սին, դատարկ, փուչ», *κενεός*; **հին** hin (սն. հնոյ
hnoy), *ένος*; **ծին** cin (բաց. ի ծնէ i-cne) «ծին, ծնունդ», *γένος*; **հինգ** hing πέν
τε; **ցին** gin (սն. գնոյ gnoy) «ցին, արծեք, վաճառագին», սն. *vasna*; **ինն** inn,
έννέα; **կին** kin (սն. կնոյ knoj) «կին», հւլ. *žena*; **միս** mis «միս», հւլ. *mēso*;
ամիս amis «ամիս», լատ. *mēnsis*; **կալին** kalin «կալին», *βάλανος*; **գիշեր**
gišer «գիշեր», *έσπέρα*; **իծ** iž «իծ», *έχις*; **սիրտ** sirt (սն. սրտի srti)
«սիրտ», գոթ. *hairtō*; **ալբիւր** albiur = **ալբեր** albeur «ալբուր», *φρέαρ*;
միտ mit (սն. մտի mti) «միտք», *μήδος*; **մի** mi «մի», *μη*; **դիւն** diem «ծովում
եմ», *θή-σατο*; **լի** li «լի», *πλή-ρη-ς* (լ-նու-մ l-nu-m «լցնում եմ», լատ. *ex-
plē-nu-nt*);

ձի ji (սն. ձիոյ jioy) «ձի», սն. *haya*; **կոցի** kogi (սն. կոցոյ), «կարագ»,
սն. *gavya*; **մի** mi (սն. միոյ mioy) «մի, մեկ», *εἷς* և այլն (սն.ս վերը):

§ 8. **n o** = հնդեվր. **e, o** կամ նախադրություն

գործ *gorc, έργον; (Fέργον); կով* kov, սնւ. gāus; **կողի** kogi «կարագ», սնւ. gavya; **լոգանամ** loganam «լողանում են», լատ. lavo, *λόβω*; **գոմ** gom «եմ», սնւ. արմատը՝ vas; **նոր** nor, *νεαρός*, լատ. novus; **գորտ** gort, լիտվ. varlė (*), որպէս վերջածանց՝ **ա-տը** a-vor, օր. **լու-ա-տը** lus-a-vor, *λευκοφόρος*, **քո** ko «քո» (*հմնտ.* տր. քեզ k'ez), սնւ. tvad; **քոյր** Koir «քույր» (հոգն.-ուղղ. **քոր-ք** k'or-k', եզակի սեռ. քեհ k'er), սնւ. svasar:

Նման դեպքերում **n-ն** **o** կանգնում է վ-ից **v** առաջ կամ հետո;
չոր-ք *čork'* «չորս», սնւ. èatvāras; **որք** orb «որք», լատ. orbis; **որձ** orj «որձ, արու», *ὄρχις*, զենդ. *erezi*; **ոստ** ost «ոստ, ճյուղ», գոթ. ast-s, *ծջոց*; **բոկ** bok «բորիկ, բոկոսն», հւլ. bosŭ; **ոսն** otn «ոսն», *ποδ-* (*); **որք** or' «հորք», *πόρτις* (*); **հոտ** hot «հոտ» odor (*); **ոզնի** ozni «ոզնի», *ἐχίνος*; **փոշի** pōši «փոշի», զենդ. pašna (*); **n o** «ով», **որ** or «որ», սնւ. ka-, հուհ. *πο-*, (*); որպէս վերջածանց՝ **n o**, օր. **մարդ-ն** mard-o «մարդ», հուհ. *βροτό* -;

n o որպէս նախադրություն՝ **n-ը-ա-մ** o-rc-a-m «ործկում են», *έ-ρεύ-ο-μαι*; **որք** *ολβ* «որք», **որք-ամ** olb-am «որքում են», *ό-λοφ-ύρ-ομαι* .?

§ 9. **nj oi** = հնդեվր. **eu, ou** կամ =
հայ. n + j o+y (s-ից)

1) **nj oi** վերջին վանկում = **m** u ոչ վերջնավանկում՝ **լոյս** lois (սեռ. լուսյ lusoy) «լոյս», *λευκός*; **փոյթ** p'oit' (սեռ. փութոյ p'ut'oy), *σπουδή*; **լոյք-ք** yoiz-k' (սեռ. յուզից yuzic) «հույզ, հուզումը», զենդ. yaozaiti (?); **բոյժ** boic «սնունդ, ուտեստ», **բուծ-անն-մ** buc-ane-m «սնուն են», սնւ. bhōga «վայելք, հաճույք»; (**գոյն** goin «գույն»), զենդ. gaona փոխառությունն է; **արդու** aluēs «աղվես», սնւ. Խրճա; **ունայն** unain «ունայն, սին», սնւ. ūna, *εὐνις*;

2) **nj oi** «ո»-ի և «ե»-ի հետ հերթազարթումը՝ **քոյր** Koir «քույր», սեռ. քեռ. k'er, հոգն. ուղղ. **քորք** k'ork', սնւ. svasar, լատ. soror:

§ 10. **m u** = հնդեվր. **u, o, m**

m-ն u վերջին վանկում = -(կամ «ը»-ի ք) ոչ վերջնավանկում՝ **հուր** hur (սեռ. հրոյ hroy) «հուր», *πῦρ*; **սուրք** surb (սեռ. սրք-nj srb-oy) «սուրք, մարտը, ամարատ», սնւ. çubhra; **նու** nu «հարս», սնւ. snušā; **ձուկն** jukn (սեռ. ձկան jkan) «ձուկ», հայր. zukans (հոգն. հայց.); **սուգ** sug (սեռ. սոյն sgoj) «սուգ», սնւ. çōka; **հերու** heru «հերու, անցյալ տարի», հուհ. *πέρυσι*; **սկեսուր** skesur (սեռ. սկեսրի skesri), սնւ. çvaçrū, *έκυσρά*; **լու** lu «լու», լիտվ. blusā; չս «չու»;

սնւ. čyuti; **լու** lu «լու», *κλυτός*; **դու** du «դու», սնւ. tvam, դոք. *τύ*; **կու** «գունադր», սնւ. gūtha; **սրունք** srunk' (սեռ. սրունից srunic կամ սրանց sranč) «սրունք», լատ. crūres; **մուկն** mukn (սեռ. մկան mkan) «մուկ», սնւ. mūš, mūšikā, լատ. mus, musculus; **դուստը** dustr (սեռ. դստը dster) «դուստը», *θυγάτηρ*; **դուն** duŋn (սեռ. դրան dran) «դուն», *θύρα*; **բուծ** buc (հոգն.-սեռ. բծ-աց bc-աց), «գառ», զենդ. būza; **փութ** p'uk' «չուն, փութ», *φύσα*; **քութ** t'uk' «քութ, լորձ», *πτύω*; **անձուկ** anjuk «նեղ, անձուկ», սնւ. žhus, հւլ. žzūkū; **բազուկ** bazuk «բա, բազուկ» (փոխառությունն), սնւ. bāhu; **բազում** bazum «չառ, բազում», սնւ. bahu; **մաւրու** mauru «խորք մայր», *μητρικά*; **չուն** šun (սեռ. շան šan), «չուն», *κύων*; **լուանամ** luanam «լվանում են», *πλύνω*

տուտ etu հարակատար դերբայ **տուտալ** tueal **տամ** tam ներկայի համար, *δίδωμι*; **ութ** ut' (սեռ. ութից ut'ic), «ութ», *όκτω*; **ուս** us (սեռ. ուսյ usoy) «ուս», *ἄμος*; գոթ. ams; **ծուր** cunr «ծունկ», *γόνυ*, լատ. genu; - **սուն-** sun (տասնավոր, հմնտ. երե-սուն ere-sun «երեսուն»), հուհ. -*κοντα*; (*τριάκοντα*); **բուն** k'un (սեռ. բնոյ k'noy), «բուն», սնւ. svapna, լատ. somnus; **հուն** hun *διάβασις*, լատ. pons; **դարգն** durgn (սեռ. դրգան drgan) «քրոտագործական անիվ», *τροχός*; **անուրջ** anurj «երագ, անուրջ», *ὄνειρος*; **սուր** aur (հիւրը՝ աւուր avur-) «օր», *ήμαρ*; **սմ** sm «սմ», n-ի «ով» տրականը, **որ-սմ** or-sm «սմ», **որ-ի** տրականը, սնւ. tasmāi, հւլ. tomu; **սու-սմ** ut-em »ուտում են», *έδω*, լիտվ. ēdmi (*); **ե-կուլ** e-kul «կլանել», լատ. gula, հրգ. chēla, *հմնտ.* **կուր** kur «կեր, լափ», **կեր** ker «կեր, սնունդ», *βορά*;

m u ձ-ից ու - անուն anun (սեռ. անուան anuan) «անուն», *ὄνομα*; **տուն** tun «տուն» և այլն:
Հմնտ. վ v:

§ 11. **ք ք** կանգնում է **ի** **ի** և **ու** **ի** դիմաց ոչ վերջնավանկում
(*հմնտ.* §§ 7 և 10)

§ 12. **ես** **ես** **ես** **ես** և **իս** **իս** **իս** **իս** (*)

ես-ն ea վերջին վանկում = ոչ վերջնավանկային ե-ին e. **կեանք** kean-k' «կյանք», սեռ. կեն-աց ken-աց, սնւ. jivita; **նեարդ** neard «նյարդ, ջիղ», զենդ. snāvare; **լեարդ** leard «լյարդ», սեռ. **լերդի** lardi, սնւ. yakrt (կամ զերմ. Leber?); **աեակ** aheak «ձախ», սեռ. **աեկի** aheki, զենդ. havya?

Հմնտ. **ի** i (= յո yo?) հիւրերի հորվումը՝ **տեղի** teli, սեռ. **տեղ-տ-յ** te-l-vo-y, գործ. **տեղ-ես-ի** te-l-ea-v և այլն:

§ 13. *ju* *iu* գալիս է
ju im, ju in, ju iv, tu ev հնչյունակապակցություններից՝

ձիւն *jiun* «ձյուն», սեռ. ձեան *jean*, *χειμών*;
սիւն *siun* «սյուն», սեռ. **սեան** *sean*, *κίτων*, և նույնը բոլոր իւն-ով և ութ-իւն-ով վարտվող անուններում՝ **արիւն** *ariun* «արյուն», սեռ. **արեան** *arean*, բաց. **արեւնէ** *arenē*;

իւ-ն *iu* հաստատ է հետևյալ բառերում՝ **գիւտ** *giut* «շահ, շահույթ», սեռ. **գիւտի** *giuti*, սնւ. -vinda; **իւ-ր** *iu-r* «յուր», լատ. *suus* (հնդեվր. *sevo-):

§ 14.

Չայնավորների հնչյունափոխությունը նույն արմատի կամ բառի սահմաններում (բացի է= ի, ոյ= ու) պահպանվել է հետևյալ բառերում՝
բառնամ *bařnam* «բարձրացնում են», **բարձր** *barjr-* **-բերձ** *-berj* «բարձունք»; **բերեմ** *berem* «բերում են», **ֆերա** *-լուս-ա-տր* *lus-a-vor* «լուսավոր», **լեւկոֆորոս**; **հետ** *het* «տեսնահետք» -**ոտն** *otn* «ոտք»; **կին** *kin* «կին», հոգն. **կան-այ-ք** *kan--ai-k'*; **հին** *hin* - հուս. *han* «տատ»^o, **վեց** *vec* - **վարսուն** *vařsun*; **կեր** *ker* «կեր» - **կուր** *kur* «կեր, լափ»; **ք-սան** *k'-san* «քսան» - **երե-սուն**, *ere-sun* «երեսուն»; **սան** *san* «սան» - **կաթն-ա-սուն** *kařn-a-sun* «կաթնասուն» (*հմմտ.* Բառարանը «սուն»-ի տակ); **խսան** *xařn* «խառք»-**խսուն** *xařn* «բազմություն, հրհրոց», **լոյս** *lois* (սեռ. *loisoy* «լույս») - **լուսն** *lusn* *λεύκωμα*; **լսն-ա-գոյն** *lsn-a-goin* *ύπόλευκος*; **արուես** *aluēs* «աղվես», սեռ. **արուեստ** *aluēs*; **եղեգն** *elegn* «եղեգն», սեռ. **եղեգան** *elegan*; **տա-մ** *ta-m* «տալիս են», կատար. **տաու** *etu*, հարակ. **տաուալ** *tueal*; **բահ** *bah* «բիր, բրիչ»-**բր-եմ** *br-em* «ջարդում են» (°); **մահ** (մարհ) *mah* (marh) «մահ» - **մեռ-անի-մ** *meř-ani-m* «մեռնում են» - **մարդ** *mard* «մարդ»:

Համեմատիչ՝ նաև հորվան կարգում՝

	սեռ.	գործ.	հոգն. ուղղ.
hair	հայր	haur	harb
mair	մայր	maur	marb
elbair	եղբայր	ełbaur	ełbarb
k'oir	քոյր	k'et	k'erb
albeur	աղբեր	alber, և այլն	
ariun	արիւն	arean, բաց. arenē և այլն	

§ 15. *ly k* = հնդեվր. *g* և *k*, բառասկզբում՝ *uly sk*, միայն մեկ անգամ = *sv*

1) *հնդեվր. g*
կով *kov*, սնւ. *gāus*, *βοός*, նաև՝ **կոզի** *kogi* «կարագ», սնւ. *gavya*; **կաղին** *kařin* «կաղին», *βάλανος*, լատ. *glans*; **կեա-մ** *keam* «կամ, ապրում են», սնւ. *řivāmi*, *βίος* «կյանք»;

կեր *ker* «կեր, սնունդ»; **կուր** *kur* «լափ, կեր», սնւ. *girařmi*, *βορά*; **եկուլ** *ekul* «կլանեց», լատ. *gula*;
կին *kin* «կին», սնւ. *gnā*, *jani*, *γυνή*; **կու** *ku* «քակոր, աղք», սնւ. *gūtha*;
կռունկ *křunk* «կռունկ», *γέρανος*;

կրճ-ել *krč -el* «աւտամների կրճտոց», *βρυγμός*; **կարապ** *karap* «կարապ», լիտվ. *gulbė* (°); **եկն** *ekn* «եկավ», սնւ. *a-gan*, *βαίνω*; **բեկ** *bek* «կշրված», սնւ. *bhañj*, լիտվ. *bangā*; **երեկ** *erek* «երեկո», սնւ. *rajas*, *έρεβος*;
անկիւն *ankiun* «անկյուն», լատ. *angulus*;

2) *հնդեվր. k*

ակն *akn* «ակն, աչք», հւլ. *oko*; **ական** *akan* *διόρυγμα*, սնւ. *khan* «հորել»; **կամ-ք** *kam-k'* «կամք», սնւ. *kāma* (°); **անձուկ** *anjuk* «նեղ, անձուկ», սնւ. *řhus*, հւլ. *řzükü*; **ձուկն** *jukn* «ձուկ», հարս. *řukans* (հոգն. *hայց.*), լիտվ. *řunis*; **մուկն** *mukn* «մուկ», սնւ. *mūřikā*; **բազուկ** *bazuk* «բազուկ, թև», սնւ. *bāhu* «°); **արմուկն** *armukn* «արմուկն», լատ. *armus*; **բոկ** *bok* «բոկոսն», հւլ. *bosü* (°);

3) *հնդեվր. sv*

սկեսուր¹ *skesur* «սկեսուր», սնւ. *řvařřü*, հւլ. *svekry*:

§ 16. *q g* = հնդեվր. *gh*, *k* (n-ից և r-ից հետո) և *v*

1) *հնդեվր. gh*
յ-արգ-եմ *y-arg-em* «հարգում են, գնահատում են», սնւ. *argha* «արժեք, գին»; **գան** *gan* «ծեծ, խարազանում», սնւ. *ghana* «խարազան»; **գարի** *gari*, լատ. *hordeum*?;

արագ *arag*, սնւ. *raghu*; **մեգ** *mēg* «մեգ, մատախուր», սնւ. *mēgha*; **դարգն** *durgn* «բրուտագործական անիվ», *τροχός*; **գոյն** *goin* «գույն», զենդ. *gaona*, փոխառություն է:

2) *հնդեվր. k*

հինգ *hing*, սնւ. *pañča*; **երգ** *erg*, սնւ. *arka*;

¹ **Սկեսուր** = *svesur, սնւ. *řvařřü*-ի նման այն առաջացել է *svařřü-ից. լիտվ. *szesuras*, որն իր հերթին գալիս է *sesuras-ից:

արգել *argel* «արգելք», *ἀρκέω*; **սուգ** *sug*, սնւ. փճոկ:

3) *հնդեվր. v*

գայլ *gail*, սնւ. *vrka*; **գառն** *gaṛn* «գառ», հուհւ. *Fapren*;

գարուն *garun*, զենդ. *vañtri*; **գեղմն** *geḷmn* «գեղմ», սնւ. *varman*; **գետ** *get*, հւլ. *voda*; **գին** *gin* «գին, արժեք», սնւ. *vasna*; **գինի** *gini*, լատ. *vinum*; **գիշեր** *gišer*, հւլ. *večerū*; **գիտեմ** *gitem* «գիտեմ», սնւ. *vēdmi*; **գոմ** *gom* «եմ», սնւ. *vas* «լինել»; **գործ** *gorc* «գործ», *ἔργον*, զերմ. *werk*; **գորտ** *gort*, լիսւ. *varlēʿ*?; **գտանեմ** *gtanem* «գտնում եմ», սնւ. *vindāmi*; **զգեմում** *zgenum* «զգեստաւորվում եմ, հազնվում եմ», *ἔννομαι*; **զ-զեստ** *z-gest* «զգեստ», լատ. *vestis*; **տայգր** *taigr* «տեքր», սնւ. *dēvar*; **լոգանամ** *loganam* «լողանում եմ», լատ. *lavo*; **կոգի** *kogi* «կարագ», սնւ. *gavya*; **չոգ-այ** *čog-ay* «զնացի», սնւ. *čyavē* «զնում եմ» (*):

§ 17. *p k* = հնդեվր. *sv, tv, v l k*

1) *հնդեվր. sv-ն բառասկզբում*

քուն *kun* «քուն», սնւ. *svapna*, լատ. *somnus*; **քոյր** *k'oir* «քույր», սնւ. *svasar*;

քիրուն *Kirtn* «քրտինք», սնւ. *svēda*;

Հմնւ. նաև՝ **քենի** *Keni* (N. 290) և **քծ-ին-ք** *kc-in-k* (N. 292);

2) *հնդեվր. tv-ն բառասկզբում*

քո *k'o* «քո», սնւ. *tvad*; **քառ** - *Kar* - «չորս, քառ», սնւ. *turiya*;

3) *հնդեվր. v-ն բառասկզբում*

քսան¹ *k'san* «քսան», սնւ. *vīcati*, լատ. *viginti*;

4) *հնդեվր. k-ն և sk-ն*

ք-անեմ *lk'-ane-m* «քում եմ», *λιμπάνω*, սնւ. *ri-na-č-mi*; **փուր** *pu k* «փուր» (*հմնւ. փչեմ* «փչում եմ»), *φύσα*, *φύσκα*: Ինչպես **քուր** *tu k* բառում. *πτύω* և *այլն*: (?)

Ք-ն գոյական անունների և դերանունների հոգնակի ուղղականի, ինչպես նաև բայի 1-ին և 2-րդ դեմքերի հոգնակի թվի նշանն է:

§ 18. *σ ε* = հնդեվր. *k*?

կրճ-ել *krč-el* «կրճտացնել», *βρυγμός* (արմատը՝ *βρυκ*); **փիճի** *piči* «սոճի», լատ. *pix* (?); **մաճ** *mač* «զութան», **մաճ**, նպր. *āmāč* (*):

§ 19. *ջ j* = հնդեվր. *gh* (e-ից առաջ), *ks* (r-ից հետո) *dhy, y*

1) **ջեր** *jer* «ջերմություն», **ջերմ** *jer m* «ջերմ, տաք», *θερος*, *θερμός*,

¹ Քսան-ը պետք է որ *g-san, *gisan ձևերից առաջացած լինի, *հմնւ.* § 16, 3:

սնւ. *haras, gharna*;

2) **արջ** *arj* «արջ», սնւ. *rkša, ἄρκτος*;

3) **մեջ** *měj* «մեջտեղ», սնւ. *madhya*, լատ. *medius*;

4) **ստերջ** *sterj* (ստերդ *sterd*) «ստերջ, ամուր», *στειρα*; **անուրջ** *anurj* «անուրջ, երագ», *δνειρος*; **մրջ-ին** *mrj-imm*; **մրջ-ին** *mrj-iun* «մրջյուն», օսեթ. *muljug*;

Թերման ժամանակ ջ j է հայտնվում՝

1) *ի i* = (yo) հիմքերի եզակի ներգոյականի վերջավորության մեջ;

2) բաղադրյալ ապառնու հոգնակի թվի 2-րդ դեմքի վերջավորության մեջ:

§ 20. *չ ճ* = հնդեվր. *k* (նախնական *e, i, y-ից առաջ*)

աչ-ք *ač-k'* «աչքեր», հուհւ. *δσσε*, հւլ. *oči*; **չոր-ք** *čor-k'* «չորս», սնւ. *čatvāras, τέσσαρες*, **չու** *ču* «չու», սնւ. *čyuti*;

Հմնւ. **փչեմ** *p'čem* «փչում եմ» և **փուր** *pu k* «չունչ, փուր», *flatus*;

չ-ն ճ հայտնվում է ներկայի հիմք կազմող վերջածանցներում՝ *-չի ճի, -նչի ճի, -անչի* *anče* (սնւ. *u* հավելվածը՝ էջ 94):

§ 21. *ծ c* = հնդեվր. *g'*; որոշ դեպքերում = հնդեվր. *g* (*)

1) **այծ** *aic* «այծ», *αιξ*, սնւ. *aiγ-ός*; **ածեմ** *acem* «բերում եմ», զենդ. *azāmi, āγω*; արծաթ *arcat'*, զենդ. *erezata*, լատ. *argentum*; **արծուի** *arcui* «արծիվ», սնւ. *tjipyā*, զենդ. *erezifyā*; **բուծ** *buc* «գառ», զենդ. *būza*; **գործ** *gorc, ἔργον*, զերմ. *werk*; **ծաղր** *caḷr* «ծաղր, ծիծաղ», *γέλως*; **ծան-տայ** *can-eay* «ճանաչեցի», *ἔγνων*; **ծեր** *cer* «ծերուկ», *γέρων*; **ծին** *cin* «ծին, ծնունդ», *γένος*; **ծնուտ** *cnaut* «ծնուտ», *γένυς*; **ծուր** *cunr* «ծուրկ», *γόνυ*; **մեծ** *mec* «մեծ», *μέγας*;

2) **լուծ** *luc*, սնւ. *yuga* (*); **լուծ** *boic* «սնունդ», սնւ. *bhōga* «վայելք»; **ործ-ա-մ** *orc-a-m* «ործվում եմ», *ερεύγομαι*; հւլ. *rygajā*; **օծ-անեմ** *auc-ane-m* «օծում եմ», սնւ. *añj* (3-րդ դեմք՝ *anakti*)? **մածուն** *macun* «մածուն», նպր. *māst*?

§ 22. *ճ j* = հնդեվր. *g'h*; մեկական անգամ = հնդեվր. *gh, k* (n-ից հետո) և *y* (բառասկզբում)

1) **ճեմ** *jeṛn* «ճեղք», *χειρ*; **ճետ** *jet* «պոչ», զենդ. *zadāh*; **ճի** *ji* «ճի», սնւ. *haya*; **ճին** *jiun* «ճյուն»; **ճմեմ** *jmeṛn* «ճմեռ», սնւ. *hēman, hima*; **ճուկն** *jukn* «ճուկ», նպր. *zukans* (հոգն. *hայջ.*); **ճոնեմ** *jaunem* «ճոնում եմ»,

զոհաբերում են», սնւ. havis «զոհաբերություն»; **որձ** orj «որձ, արու», *ὄρχις*, զենդ. erezi; **ինձ** (ինձ) inj (inc) «ընձառյուծ, ինձ», սնւ. siha; **անձուկ** anjuk (ancuk) «նեղ, անձուկ», սնւ. žhus; **բարձր** barjr, սնւ. brhat; **բարձ** barj, *προσκεφάλαιον*, սնւ. barhis;

- 2) **օձ** auj «օձ», լատ. anguis, լիտվ. angis?
- 3) **քանձր** t'anjr «քանձր, խիտ», զենդ. tañ čišta, լիտվ. tánkus;
- 4) **ձ-ն-ը** j-e-r «ձեր», սնւ. yū-y-am, գոթ. jus:

§ 23. g ç = հնդեվր. ks և sk

1) **վեց** veç «վեց», *Ἑξ*, լատ. sex; **ցին** çin «milvus», *ἰκτίνοσ*, սնւ. cyēna, զենդ. saēna; լուց-անե-մ luc-ane-m, «վառում են» արմատը luks?

2) **հարց** harç *quaestio*, սնւ. prččhā «հարց», հրգ. forscā «հետազոտություն» (արմատը prk'-sk); **այց** aiç «քննություն, հետազոտություն», հրգ. eisca «պահանջումք», հւլ. iskati «փնտրել», սնւ. iččhā «ցանկություն»;

g-ով ç են կազմվում հոգն. սեռականը, բաղադրյալ կատարյալը և պայմանականը:

§ 24. ա t = հնդեվր. d; t (s-ից հետո, նաև՝ բառասկզբում)

1) **ա - t** (որպես նախածանց), սնւ. dus, հույն. *δυσ*; **այտ** ait «այտ, բուշ», *οἶδος*; **ատամն** atamn «ատամ» *ὀδοὺς*; **ատեամ** ateam «ատում են», լատ. ὀδι; **զետ** get «զետ», հւլ. voda; **հետ** het «հետք, ոտնահետք», լատ. peda; **հոտ** hot «հոտ», odor?; **ձետ** jet «պոչ», զենդ. zađanh; **միտ** mit «միտք» *μηδος*; **նետ** net, սնւ. nada; **նիստ** nist «նիստ, տեղադրություն», սնւ. ničā, զերմ. nest; **ոտն** otn «ոտք», *ποὺς*; սեռ. *ποδ-ός*; **ուտն** utem «ուտում են», *ἔδω?*; սիրտ sirt «սիրտ» *καρδια*; **տայգր** taigr «տեքր», *δαήρ*; **տա-մ** ta-m «տալիս են», *δι-δω-μι*; **տասն** tasn «տասը», *δέκα*; **տես-անե-մ** tes-ane-m «տեսնում են», *δέσκομαι*; **տի** tiv «ցերեկ», լատ. dies; **տուն** tun «տուն», *δόμος*; **քիրտն** kirtn «քրտինք», *ἰδρώς* (գորտ gort «գորտ»?);

2) **աստղ** astl «աստղ, համաստեղություն», *ἀστήρ*; **զգետն** zgest «զգետն», լատ. vestis; **ոստ** ost «ոստ, ճյուղ», գոթ. ast-s; **հաստ** hast «ամուր», զերմ. fest; **ստերջ** sterj «ստերջ, ամուլ», *στειρα*; **դուստր** dusrt «դուստր», *θυγάτηρ*, գոթ. daúhtar; **սաստ** sast «սաստ, սաստում, հանդիմանություն», սնւ. čāsti;

3) **տար** tar «օտար», սնւ. tiras?; **տուժեմ** tužem «տուժում են», պիլ. tōjam «բավում են»:

§ 25. η d = հնդեվր. dh; t (r-ից և n-ից հետո և մեկ անգամ բառասկզբում)

1) **դուստր** *dustr*, *θυγάτηρ*; գոթ. daúhtar; **դուն** duin «դուր» *δύρα*, գոթ. daúr; **դուրզն** durgn «բրուտազործական անիվ», *τροχός*; **դիեմ** diem «ծծում են», սնւ. dhayāmi; **դալար** «դալար, կանաչ», *θαλερός?*; **դաւ** dav «դավ, դավադրություն», սնւ. արմատը՝ dabh(?); **հանդերձ** handerj «զգետն, հանդերձ», սնւ. արմատը՝ drh(?); **դեզ** dež «դեզ, կույտ», *τείχος*; **դեմ** «դեմք», զենդ. daēma, սնւ. արմատը՝ dhi; **դ-ն-մ** d-ne-m «դնում են», *τι-θη-μι*;

2) **մարդ** *mard*, սնւ. marta; **արդ** «արդ, հիմա», *ἄρτι*; **արդար** ardar «արդար», սնւ. rta; **երդումն** erdumn «երդում», հւլ. rota; **լարդ** leard «լարդ», սնւ. yakrt, *հմմտ.* **նարդ** neard «նյարդ, ջիդ», **ընդեր-ք** ender-k' «ընդերք», *ἔντερα* (?); - **անդ** and «շենք», լատ. antae; **դու** du, սնւ. tvam, դոր. *τύ*:

§ 26. p t' = հնդեվր. t, մեկական անգամ spy և d'

1) **տք** ut «ուք», զենդ. ašta, *ὀκτώ*; **տքն** ev'tn «յոթ», *ἑπτα*; **արծաթ** arcāt' «արծաթ», սնւ. rajata, լատ. argentum; **որք** or't, *ὀρτις* (?); **քանձր** t'anjr «քանձր, խիտ», լիտվ. tánkus; **քարշամին** faršamim «քոշնում են», *τέρσομαι*;

2) **քոք** t'uk' «քոք», *πτύω*, spuо;

3) **փոյք** p'oit' = *σπουδή* (?);

վաքսուն-ի մեջ va'sun t's-ն կանգնած է çs (այսինքն՝ t'ss) դիմաց, *հմմտ.* վեց veç:

§ 27. պ p = հնդեվր. p s-ից հետո?

սպասեմ *spasem* «սպասում են», զենդ. spas «ըրտես» (?):

§ 28. p b = հնդեվր. bh, մեկ անգամ = հույն. լատ. b

աղբեր *albeur* «աղբյուր», *φρέαρ*; **եղբայր** elbair «եղբայր», սնւ. bhrā-tar; **ամբ** amb (ամպ amp), «ամպ», սնւ. abhra; **արբի** arbi «խմեցի», *ρ'οφέω*, լատ. sorbeo; **արբ-ան-եակ** arb-an-eak «օզնական», հւլ. rabū; **որբ** orb «որբ», լատ. orbis, *ὀρφο-*; **որբ** olb «որբ», *ὀλοφύρομαι* (?); **ուրբ** surb «մարմար», սնւ. çubhra; **բազուկ** bazuk «բազուկ», սնւ. bāhu, *πήχυς*; **բազում** bazum «շատ, բազում», սնւ. bahu, հույն. *παχύς*; **բան** ban *λόγος*; հույն. *φωνή*; **բարձր** barjr «բարձր», սնւ. brhat; **բարձ** barj *προσκεφάλαιον*; սնւ. barhis; **բեկ** bek

«կոտրված, փշրված», սնւ. bhañj; **բերեմ** berem «բերում եմ», *φέρω* բով bok «բովոտն», հւլ. bosū; **բոյժ** boic «սննդամբերք», սնւ. bhōga «վայելք», բովժ buc «գառ», զենդ. būza, զերմ. Bock; **բահ** bah «բահ, բրիչ», զենդ. brōiðra?

Թերման համակարգում **բ-ն** **բ** հանդես է գալիս որպէս **բ-** և **ն-** հիմքերի գործիականի վերջավորութուն; **դատեր-բ** dster-b, հոգն. **դատերքք** dsterbk', **ակամ-բ** akam-b, հոգն. **ակամ-քք** akam-bk'; **բու** bu «բու», *βύα* և այլն:

§ 29. փ *p'* = հնդեվր. *p*(?), *sp*, *ps*, *py*

փոշի *pōši*, «փոշի», զենդ. pašnu? **փիճի**, piči «սոճի», լատ. pix? - **փոք** p'uk' «շունչ, փոք», *φύσα*; **փոն-չե-լ** p'rn-če-l «փոշտալ», *πταιρω*, լատ. sternuo; **փոյք** p'oit' = *σπουδή*; **եփեմ** epem «եփում եմ», *έψω*; **լափեմ** lap'em «լիզել», *λάπτω*, հրգ. laffan:

§ 30. *h* *h* = հնդեվր. *p* (բառակարգում), հազվադեպ = *s* (բառակարգում), *rt* կամ *rt* (բառամիջում) և բառակարգում հնչյունի հավելում

1) **հայր** *hair* «հայր», *πατήρ*; **հարսն** harsn «հարս», լատ. procus; **հարց** harc «quaestio», սնւ. prčēhā; **հաստ** hast «ամուր», զերմ. fest; **հեռի** heri «հեռու», *πέρα*; **հետ** het «տունահետք», լատ. peda; **հերիւն** heriun «հերյուն, մախար», *περόνη*; **հերու** heru «անցյալ տարի», *πέρυσσι*; **հինգ** hing, «հինգ», *πέντε*; **հուր** hur «հուր, կրակ», *πύρ*; **հուն** hun *διάβασις*, լատ. pons; **հատանեմ** hatanem «կտրում եմ, հատում եմ», օւեթ. fadun «ճեղքել»? *հմնտ*. **հա** hav (N. 162):

2) **հին** *hin* սնւ. sana, *ένος*; *h* (նախածանց), սնւ. su-, հուն. *εύ-*; **համ-** ham - = սնւ. sam, զենդ. ham «միասին» (?); **հան-ա-պազ** han-a-paz «միշտ», սնւ. sanā, լատ. semper?; **ահեակ** aheak «ձախ, աղակ», զենդ. havya (?):

3) **մահ** *mah* «մահ», սնւ. mrtyu, գոթ. maúrfr; **բահ** bah «բահ, բրիչ», Karst - **բրեմ** brem «բրում եմ», զենդ. brōiðra?; **նիրհ** nirh «նիրհ», սնւ. nidrā?

4) **հոտ** *hot* «հոտ», odor? **հում** hum «հում», *ώμός*? *հմնտ*. **հա** hav (N. 162):

§ 31. *ju* *x* = հնդեվր. *kh*

սխալ *sxal* «սխալ, բերություն», **սխալեմ** sxalem «սխալվում եմ», սնւ. skhalāmi «սխալվում եմ, սայթաքում եմ», հուն. *σφάλλομαι* «սայթաքում եմ, վրիպում եմ»:

§ 32. *u* *s* = հնդեվր. *s* և *k'*, մեկական անգամ = հնդեվր. *k* և *gh*

1) *u* *s* < հնդեվր. ns, ms

ամիս *amis*, լատ. mensis; **միս** *mis*, հւլ. mēso, սնւ. māsa; **ուս**, սնւ. āsa, գոթ. ams-; -*u*-ն որպէս հոգնակի հայցականի վերջածանց, *հմնտ*. **երի-ու** «երեք», գոթ. þrins:

2) *u* *s'* t, p, x-ից առաջ՝

աստղ *astl* «աստղ», *άστήρ*; **զ-գեստ** *z-gest* «զգեստ, հազուստ», լատ. vestis; **հաստ** *hast* «ամուր»; **ստերջ** *sterj* «ստերջ, ամուլ», *στεῖρα*; **սաստ** *sast* «հանդիմանություն», սնւ. čāsti:

նիստ *nist* «նիստ, դիրք», սնւ. niča (հնդեվր. nizdo); **ոստ** *ost* «ոստ, ճյուղ», գոթ. ast-s (հնդեվր. ozdo):

սպասեմ *spasem* «սպասում եմ», զենդ. spas «լրտես», լատ. conspicio; **սխալ** *sxal* «սխալ, բերություն», սնւ. skhalāmi «սայթաքում եմ, վրիպում եմ», *σφάλλομαι*:

3) *u* *s* = հնդեվր. *k'*

ասեղն *aseln* «ասեղ», *ἄκρο-ς*, լատ. acus; **աղուես** *aluēs* «աղվես», սնւ. lōpāça; **երե-սուն** *ere-sun* «երեսուն», *τριάκοντα*; **քսան** *k'san* «քսան», սնւ. vīçati; **լոյս** *lois* «լոյս», *λευκός*; -*u* -*s* «այս», հւլ. st; **սաստ** «հանդիմանություն, սաստ», սնւ. čāsti; **սամ** *sañ* «սառնայց», սնւ. çičira; **սար** «բարձուր», սնւ. çiras; **սեստ** *seav* «սև», սնւ. çyāva; **սին** *sin* «սին, դատարկ», *ἀνός*; **սիրտ** *sirt* «սիրտ», *καρδία*; **սին** *siun* «սյուն», *κίων*: **սկեստր** *skesur* «սկեստր», սնւ. çvaçrū, լիտվ. *szėszura-s* (հնդեվր., սակայն *svėk'rū* «սկեստր»); **սուզ** *sug* «սուզ», սնւ. çōka; **սորք** *surb* «մարդ», սնւ. çubhra; **սրունք** *srun-k'* «սրունք», լատ. crūres; **սպասեմ** *spasē* «սպասում է», սնւ. pa çyati «տեսնում է»; **տասն** *tasn* «տասը», *δέκα*, սնւ. daça; **վասն** *vasn* «վասն, պատճառով», *έκρητι*; **տես-անե-մ** *tes-ane-m* «տեսնում եմ», «վասն, պատճառով», *έκρητι*; **տես-անե-մ** *tes-ane-m* «տեսնում եմ», *δέκρομαι*; **հարսն** *harsn* «հարս», լատ. procus; **յեսան** *yesan* «հեսան» *άκόνη*:

4) *ստ* *st* = հնդեվր. *kt*

դուստր *dustr* «դուստր», սնւ. duhitar, զենդ. duγdar; **հուն**. *θυγάτηρ*, գոթ. *daúhtar*, հւլ. *dūšti*, լիտվ. *duktė*:

5) *u* *s* = հնդեվր. *g'h* կամ *g'*

ես *es* «ես», սնւ. aham, *έγώ* (*հմնտ*. հայց. *q-ju* *z-is* «ինձ», *q-բեզ* *z-k'ez* «բեզ», *q-մեզ* *z-mez* «մեզ», *q-ձեզ* *z-jez* «ձեզ»):

Բաղադրյալ ապառնիում *u*-ն *s* գալիս է *g*-ից *ç*, *հմնտ*. **սիրեցես** *siresçes* «սիրելու ես» և **կեցես** *keççes* «ապրելու ես»:

§33. q z = հնդեվր. g^h

լեզու *lezu* «լեզու», լիսով. lēžùvis; լիզում *lizum* «լիզում են», *լեիչա*, լիսով. lēžiù; **բազուկ** *bazuk* «բազուկ, բև», սնու. bāhu, *πῆχυς* (փոխառություն); **բազում** *bazum* «բազում, շատ», սնու. bahu, *παχύς*; **վեզ** *mēz* «վեզ» *Urin*, սնու. mēha, *ὀ-μῖχ-έ-ω*; **դեզ** *dēz* «դեզ, կոլյոն», սնու. dehi, *τεῖχος*; **յոյզ-ք** *yoiz-k* «հույզ, հուզվումք», զենդ. yaozaiti «հուզվում է, արկելովում էր»; **ոզնի** *ozni*, *ἐχίνοσ*, լիսով. ežys. -**ունգի** *mozi* «ունգի, ջահել եզ», *μοσχίον*?

ազդ *azd* «ազդ, լուր», հարս. azdā, փոխառություն:

§34. 2 § մեկական անգամ = հնդեվր. k^l և sk,
այլ դեպքերում հարցական է

շուն *šun* «շուն», սնու. čvā, *κύνω*; **զիշեր** *gišer* «զիշեր», հույն. *ἐσπέρα*, հույ. veđerü, հիդլ. fescor;

փռշի *poši* «փռշի», սնու. pāsu, զենդ. pāsnu; **ուշ** *uš* «զիսակցություն», զենդ. uši, փոխառություն; **քարշ-ամ-իմ** *tarš-am-im* «քոշում են» = *tār-am-im*, *τέρσομαι*?; *հմմտ.* §44 «ս-ի s սղումը»:

§35. օ չ = հնդեվր. gh (հսկ փոխառություններում g-ի^ո)

իծ *iž* «իծ», *ἔχισ*, սնու. ahis, զենդ. ažiš; **արծ-է** *arž-ē* «արծե, կշիռ ունի», սնու. arhati, զենդ. arejaiti (փոխառություն); *հմմտ.* **յարգեմ** *yargem* (N. 210); տոյժ *toiz* «կորուստ, վնաս», *multa* = **տուգան** *tugan*, պիլ. tōjišn; **տուծիմ** *tužim* «զոյում են, քաղում են» = **տուգան-իմ** *tugan-im*, պիլ. tōjam, նարս. tōzam? **քոյժ** *boiz* «քուծում, ապարհում», պազ. bōžišn «զրկություն» (փոխառություն); **ոյժ** *oiz* «ուծ», սնու. ojas, զենդ. aojañh (փոխառություն):

§36. ւ n = հնդեվր. n

անկիւն *ankiun*, լատ. *angulus*; - **անդ** -and «շեք, սեմ», լատ. *antae*; **անձուկ** *anjuk* «նեղ, անձուկ», սնու. ḡhus, լատ. *angustus*; **անուն** *anun* «անուն», *ὄνομα*; **անուրջ** *anurj* «անուրջ, երազ», *ὄνειρος*; **քան** *ban* *λόγος*, հույն. *φωνή*; **զան** *gan* «հարվածներ, ծեծ», սնու. ḡhana; **զին** *gin* «զին, արծեք», սնու. vasma; **երե-տուն** *ere-sun* «երեսուն», *τριάκοντα*; **ընդեր-ք** *ender-k* «ընդերք», *ἔντερα*; **քանձր** *t’anjr* «խիտ, քանձր», լիսով. tánkus; **ինն** *inn* «ինն», *έννεα*; **ծանե-այ** *can-eay* «ճանաչեցի», *ἔγνων*; **ծին** *cin* «ծնունդ», *γένος*; **ծուս** *cnaut* «ծընոս», *γνάθος*; **ծուր** *cunr* «ծունկ», *γόνυ*; **կաղին** *kalin* «կաղին», *βάλανος*; **կին** *kin* «կին», *γυνή*; **հան-ա-պազ** *han-a-paz* «միշտ, շարունակ»,

սնու. sanā; **հին** *hin*, *ένος*; **հինգ** *hing* *πέντε*; **ձուսն** *jaunem* «զոհաբերում են», սնու. havana «զոհաբերություն»; **մնա-մ** *mna-m* «մնում են», *μένω* լատ. *maneo*; **նա** *nav* «նավ», *ναύς*; **նեարդ** *neard* «նյարդ, ջրղ», զենդ. snāvare; **նեղ** *neł* «նեղ», հինասարս. *naru*; **նետ** *net* «նետ», սնու. nada; **նիսա** *nist* «նիսք, տեղադրություն», սնու. niša; **նոր** *nor*, «նոր», *νέος*; **նու** *nu* «հարս», սնու. snušā; **ոզնի** *ozni* «ոզնի», *ἐχίνοσ*; **ունայն** *unain* «ունայն, դատարկ», սնու. ūna; **սին** *sin* «սին, դատարկ», *κενος*; **ստին** *stin* «կործք», սնու. stana; **վասն** *vasn* «համար, պատճառով», զենդ. vasma; **ցին** *cin* *milvus*, *ιχτινος*; **քուն** *kun* «քուն», սնու. svapna, **հուն** *hun* *διάβσις*, լատ. *pons*; -**եկն** *ekn* «եկավ», սնու. a-gan:

Հայ. **ան** *an* գալիս է ռեգային ձայնորդներից, **ան-** (ծխտական), սնու. **a, an**, հույն. *a, av*; **սեփն** *evt'n* «յոթ», *ἑπτά*, լատ. *septem*, գոթ. *sibun*; **ինն** *inn* «ինը», *έννεα*, լատ. *novem*, գոթ. *niun*; **տասն** *tasn* «տասը», *δέκα*, լատ. *decem*, գոթ. *taihun*; **անուն** *anun* «անուն», *ὄνομα*, լատ. *nomen*; **քսան** *ksan* «քսան», սնու. *vīcati*, *Ἰξκατι*;

շուն *šun* «շուն», *κύνω*; **ճիւն** *jiun* «ճյուն», *χειμών*; **սիւն** *siun* «սյուն», *κίων*; **եղն** *ełn* «եղնիկ», հույ. *jeleni*; **զանն** *gañ* «զան», սեռ. **զանին** *gañin*, *άρνός*; **առն** *añ* «սողաճարդ», զենդ. arñō (սեռ.); **բեր-ե-ն** *ber-e-n* «բերել, կրել», սնու. bhar-a-nti և այլն; **զ-զե-նու-մ** *z-ge-nu-m* «զգեստավորվում են, հազնվում են», *έννυμαι* = *φεσ-νυ-μαι*; **ջե-նու-մ** *jeñ-nu-m* «տարանում են», սնու. *ghr-ñō-mi*; **լք-անե-մ** *lk-ane-m* «լքում են», *λιμπ-άν-ω*

§37. մ m = հնդեվր. m (չքրնայիններից ստաջ
նաև = հնդեվր. n)

ամ *am* «տարի», սնու. samā; **ամսան** *amañ* «ամսան», հրզ. *sumar*; **աման** *aman* «աման», *ἀμνίον*; **ամիս** *amis*, լատ. *mensis*; **արմուկն** *armukn* «արմունկ», լատ. *armus*; **ամեռն** *jmeñ* «ամեռն», սնու. himā; **մաղն** *malem* «մանրեն», *μύλλα* *մահ* *mah*, **մեռանիմ** *meranim* «մեռնում են», **մարդ** *mard* «մարդ», սնու. *mrtyu*, *mriyē*, *marta*; **մայր** *mair* «մայր», *μήτηρ*; **մարտ** *mart* «մարտ, պայքար», *μάρ-να-μαι*; **մեծ** *mec* «մեծ», *μέγας*; **մեղ** *meł* «մեղք», *άμαρτία*; **մեղր** *mełr* «մեղր» *μέλι*; **մեզ** *mēz* «մեզ, մառախուղ», սնու. *mēgha*; **մեզ** *mēz* «Urin», սնու. mēha; **մեջ** *mēj* «մեջտեղ» սնու. *madhya*; **մի** *mi* «մի» (ծխտական), *μή*; **մի** *mi* «մեկ», *μία*; **միս** *mis* «միս», հույ. *mēso*; **միս** *mit* «միսք», *μήδος*; **մնա-մ** *mna-m* «մնում են», *μένω*; **մի-մն-ω**; **մուկն** *mukn* «մուկ», *μύς*; **մրջ-իւն** *mrtj-iun* «մրջյուն», *μύρ-μηξ*; **ամբ** *amb* (սնու. *amp*) «ամս», սնու. *abhra*; **ակամբ** *akamb* (ական-ի akan գործիական հոլովը), գալիս

է ախան-բ-ից akan-b և այլն; **զեղմն** gelmn «զեղմ, բորդ», սնւ. varman; **մարմին** marmin «մարմին, միս», սնւ. marman; **եմ** em «ես եմ», սնւ. asmi, **եմ-ք** em-k «մեծք եմք», սնւ. s-mas:

§ 38. **լ լ = հնդեվր. Լ; քառասկզբում երկու անգամ = y ?**

այլ *ail* «տրիշ», *ἄλλος*; լատ. alius; **գայլ** gail «գայլ», սնւ. vrka, հւլ. vlükü; **դարար** dalar «դարար, կանաչ», *θαλερός*; **լայն** lain «լայն», *πλατύς*; հիբլ. lethan; **լալ** lav «ավելի լավ», *λαῖον*; **լախեմ** lap'em «զիզում եմ», *λάπτω* լեզու lezu «լեզու», լիւ. lëžùvis; **լիզում** lizum «զիզում եմ», *λείχω* լի li «լի, լիքը», *πλεῖος*; **լոգանամ** loganam «զիզանում եմ», լատ. lavo; **լոյս** lois «լոյս», *λευκός*; **լու** lu «լու», *ψύλλα*, հւլ. blücha; **լու** lu «լուելի», *κλυτός*; **լուանամ** luanam «զվանում եմ», *πλύνα* **լրանեմ** lk'anem «զրում եմ», *λιμπάνα* **մալեմ** malem «մանրում եմ», *μύλλα* **կլանեմ** klanem «կլանում եմ», լատ. gula; **սխալ** sxal «սխալ, բերութուն», սնւ. skhalämi, *σφάλλομαι*; **լիարդ** leard «լարդ», սնւ. yakrt, **լուծ** luc «լուծ» սնւ. yuga? **ալեար** aleur «ալար», *ἄλευρον*:

§ 39. **ղ լ = հնդեվր. Լ և ր**

1) **մեղ** mel «մեղ» *μέλι*; **աղ** al «աղ», *ἄλς*; **եղն** eln «եղնիկ», հւլ. jeleni; **աղամ** alam «աղում եմ», *ἀλέω*?; **ծաղը** calt «ծաղը, բրբիջ», *γέλας*; **աղուս** alawpex; **կաղին** kalin, *βάλανος*; **մեղկ** melk «մեղկ», *μαλακός*?; **ողը** olb «ողը», *όλοφ-ύρ-ομαι* (?);

2) **աղբար** albeur «աղբար», *φρέαρ*; **եղբայր** elbair «եղբայր», սնւ. frater; **ասղ** astl «ասղ», *ἀστήρ*; **նեղ** nel «նեղ», հւարս. naru, **մեղ** mel «մեղ», *ἄ-μαι-τ-ια*; **զեղմն** gelmn «զեղմ», սնւ. varman, *ἔριον* ?:

§ 40. **ր ր = հնդեվր. ր**

արեմ airem «արում եմ, վառում եմ», զեղն. atare; **անուրջ** anurj «անուրջ, երազ», *ὄνειρος*; **օր** aur «օր», *ἡμαρ*; **արագ** arag «արագ», սնւ. raghu; **արբ-ենա-մ** arb-ena-m «արբենում եմ», *ῥοφέω*, **արբ-ան-հակ** arb-an-eak «օգնական», հւլ. rabü; **արգել** argel «արգելք», *ἀρκέα* **արդ** ard «արդ, այծ», *ἄρτι*; **արև** arev «արև», սնւ. ravi; **արծաթ** arcac' «արծաթ», սնւ. rajata, լատ. argentum; **արօր** araur «արօր, գութան», *ἄροτρον*; **բարձ** barj *προσκεφάλαιον*, սնւ. barhis; **բերեմ** berem «բերում եմ», *φέρα* **գարուն** garun «գարուն», զեղն. vañri, *ἔαρ*; **գարի** garl «գարի», լատ. hordeum? **զիշեր** gišer «զիշեր», հուլ. *ἐσπέρα*; **գործ** gorc «գործ», *ἔργον*; **գորս** gort «գորս»,

լիւլ. varlë?; **դարար** dalar «դարար, կանաչ», *θαλερός*; **հանդերձ** handerj «զգեստ, հանդերձ», զեղն. handareza (?); **դուար** dust, *δυγάτηρ*; **դարգն** durgn «բրուտագործական անիվ», *τροχός*; **եղբայր** elbair «եղբայր», լատ. frater; **երգ** erg «երգ», սնւ. arka; **երդնում** erdnum «երդնում եմ», հւլ. rota; **երեկ** erek «երեկ», *ἔρεβος*; **երե-ք** ere-k' «երեք», *τρεῖς*; **ընդեր-ք** ender-k' «ընդերք», *ἔντερα*; **բար-ամ-իմ** farš-am-im «բռնում եմ» = *ταί-am-im*, *τέρσομαι*; **լիարդ** leard «լարդ», *ἦπαρ*; **ծեղ** cer «ծերունի», *γέραν*; **կեր** ker «կեր, սնունդ, լավ», *βορά*; **կրծ-ել** krčel «ստամոնդի կրծնոց», *βρυγμός*; **կար** hair «կար», *πατήρ*; **հարսն** harsn «հարսնացու», լատ. procus; **հերին** heriun «հերյուն, մախար», *περόνη*; **հերու** heru «հերու, անցյալ տարի», *πέρυσσι*; **հար** hur «հար, կրակ», *πύρ*; **մար** mair «մար», *μήτηρ*; **մարդ** mard «մարդ», *βροτός*; **մարմին** marmin «մարմին», սնւ. marman; **մարտ** mart «մարտ, պայքար», *μάρ-να-μαι*; **մրջ-ին** mrj-iun «մրջուն», *μύρ-μηξ*; **յարգեմ** yargem «հարգում եմ, զնահատում եմ», սնւ. argha; **նարդ** neard «նարդ», զեղն. snāvare; **նոր** nor «նոր», *νεαρός*; **որ** orb «որ», լատ. orbis; **ործամ** orcem «ործում եմ», *ἔρεύγομαι*; **ործ** orj «ործ, արու», *ὄρχις*; **չոր-ք** č-or-k' «չոր», *τέσσαρες*; **ջեր** jer «ջերմություն», *θέρος*; **սար** sar «զազաք», *κάρα*; **սիրս** sirt «սիրս», *καρδία*; **սկեսուր** skesur «սկեսուր», սնւ. čvačrū, *έχυρά*; **սար** surb «մարդ», սնւ. čubhra; **ստերջ** sterj «ստերջ, ամուլ», *στεῖρα*; **սրուն-ք** srun-k' «սրունք», լատ. crüres; **ի վեր** i ver «ի վեր, վերևում», հւլ. vrüchü; **տաղը** taigr «տեղը», *δαήρ*; **տար** tar «տար», լատ. trans?; **քիրսն** k'irtn «քրտինք», *ιδρώς*; **քոյր** k'oir «քույր», լատ. soror:

Հայ. **ար** ar = հնդեվր. ր-ձայնավոր, **արդար** ardar «արդար», սնւ. rta; **բարձր** barj «բարձր», սնւ. brhat; **արջ** arj «արջ», սնւ. rkša; **արծուի** arcui «արծիվ», սնւ. rjipyra; **արց** harč quaestio, սնւ. prččhā; **լիարդ** leard (սեռ. լերդի lerdi) «լարդ», սնւ. yakrt, *ἦπαρ*; **հմն**. **նարդ** neard «նարդ»; **արմուկն** armukn «արմուկ», սնւ. itmas; **աղբար** albeur «աղբար», *φρέαρ*:

§ 41. **ռ ՚ (նեծ մասանք ց-ից առաջ) = հնդեվր. ր**

աման amān (սեռ. ամանան amaran) «աման», հրգ.umar; **ան** an «սողամարդու», զեղն. aršnō; **անեմ** anem (կատարյալը *ար-ար-ի* ar-ar-i) «անում եմ», *ἀραρίσκω*; **անում** anum (կատար. աղի an), *ἄρνημα*; **բեռն** be'n (սեռ. բեռնի be'in) «բեռ», *φόρτος*; **բերեմ** berem «բերում եմ, կրում եմ» բայի համար; **գան** gān (սեռ. գանին gā'in) «գան», *ἄρνος* (սեռ.); **դուն** dū'n (սեռ. դրան dran) «դուն», *θύρα*; **կրունկ** krunk «կրունկ», *γέρανος*; **հեղի** he'i «հեղու», *πέρα*, գոթ. fairra; **ձեռն** je'n «ձեռք» (սեռ. ձեռնի je'in, գոթ. եղակի նաև *ձեղք* jerb), *χεῖρ*; **ձմեռն** jme'n (սեռ. ձմեռան jmeran) «ձմեռ», սնւ.

զ) ր-ից ր հետո. **ամն** ա՛ն «մարդու», զենդ. aršnō (utn.), **արծոն** ր վեր i ver «ի վեր, վերևում», սնու. varšman «բարձունք»;

դ) բառավերջում, ձայնավորներից հետո. **մարդ** mard, **բրոտո՛՛ս**:

2) ն ո և մ մ

ս-ից s առաջ = նախն. s. **ամիս** amis «ամիս», լատ. mensis; **միս** mis «միս», հուլ. mēso, գոթ. mīmz; **ուս** us «ուս», սնու. āsa, գոթ. ams-; հոգն. հայց. **մարտ-ու** mart-s (կարդա՛ մարտը martēs) = **բրոտո՛՛ս**; **երի-ու** eri-s, գոթ. þrins: - բառավերջում ձայնավորներից հետո մ-ն m սղվում է, **հմմտ.** **զ-մարդ** z-mard «մարդուն», սնու. martam:

3) u s = k¹

ուք ut' «ուք», սնու. ašļau, զենդ. ašta, **օկտո՛՛**; **լու** lu «լուսի», **կլտո՛՛**; սնու. քրտա:

4) կ կ

լիարդ leard «լարդ», սնու. yakrt?; **մորու-ք** moru-!՝ «մորուք», իտալ. smak-rà?; **ո** o «ով», **ո-ր** or «որ», սնու. ka-?: Ինչպես՞ **զիշեր** gišer «զիշեր» բառում, էօսթերա, հուլ. večerŭ?

5) տ t (թ t')

տ-ն t միջձայնավորային վիճակում j y է տալիս և սղվում է. **հայր** hair «հայր», հոգն. **հարք** harĕ; **մայր** mair «մայր», հոգն. **մարք** marĕ; **եղբայր** ełbair «եղբայր», հոգն. **եղբարք** ełbark (հմմտ. քոյր k'oir «քույր», հոգն. **քորք** k'or-k'); **չոր-ք** čor-k' «չոր», սնու. čatvārus; **ուս-տ** = uy = **ու** u, **երու** heru «երու, անցյալ տարի», դր. **թերտի**, սնու. parut; **կու** ku (կոյ koy) «քակոր», սնու. gŭtha; **լու** lu «լուսի», **կլտո՛՛**; **լու** լու «լու», սնու. čyuti; **ու-հիմքերի** ներկայի եզակի 3-րդ դեմք՝ **թող-ու** t'ol-u = *թողու t'ol-u) - **տի** -ti; **հմմտ.** **աղայ** alay և **բերե** berē (< բերե-յ bere-y = սնու. bharati)!

6) պ ք

լուանամ luanam «լվանում են», **պլնոն**; **լու** lu «լու», լատ. pulex, հուլ. blŭcha; **լի** li «լի», **պլեյոս**; **լայն** lain «լայն», **պլատո՛՛**; **սուն** otu «սուք», **պու՛՛**:

7) ձ j

բառ-նա-մ bai-na-m «բառնում են, բարձրացնում են» (բարձ-նա-մ-ի barj-na-m?-ի դիմաց), կատարյալը՝ բարձ-ի barj-i:

8) ք ր

տես-անե-մ tes-ane-m «տեսնում են» **ծերկոմա**:

9) j y

մորու mauru «մորու մայր», **միտրու** (ու + j = ու u+y = u տե՛ն վերևում); **լու** լու «լու», սնու. čyuti; **ցին** cin milvus, սնու. čyena; **հմմտ.** **սահեակ** aheak (էջ 17, 5):

¹ Մակայն անկատարի 3-րդ դեմքը հնչում է՝ թողուր t'olou:

10) լ v

կամ keam «կամ, ապրում են», սնու. jivāmi; **նոր** nor «նոր», **նարո՛՛**, **նարդ** neard «նարդ», զենդ. snāvare; **չոր-ք** čor-k' «չոր», սնու. čatvārus; **ձին** jiu, սեռ. **ձեան** jean «ձյուն»=**չեյմոն** (այսպես են նաև լուս-ով iun կազմվող բոլոր հիմքերը); **լու** լու «լու», սնու. «լան» šan; **տուն** tun, սեռ. **տան** tan; **արեր** alber սեռ. **արեր-ից** albeur «արերու», **փրեթար**; **ինն** inn «ինն», սնու. nava, **եննեա**; **հմմտ.** **սահեակ** aheak (էջ 17, 5):

§ 45. լի-ի ly փոխարինումը իլ-ով (yl), քր-ն (br) քր-ով (rb), տր-ն (tr) րու-ով (rt) (?) քղ-ն (bł) քր-ով (lb)

- 1) **ալ** ail «այլ, ուրիշ», լատ. alius; **գալ** gail «գալ» < *գալի galy = հուլ. vliükŭ;
- 2) **սուրք** surb «սուրք, մաքուր», սնու. čubhra;
- 3) **քիրտն** k'irtu «քրտինք», **իծրո՛՛**;
- 4) **արեր** albeur «արերու», **փրեթար**; **եղբայր** ełbair «եղբայր», սնու. bhrātar, լատ. frāter:

§ 46.

Ըստ այդմ ստացվում են հնդեվրոպական և հայկական հնչյունների միջև ընդհանուր առմամբ հետևյալ համապատասխանությունները.

1) Չայնավորներ

հնդեվր. հայկական
նախն. իրանական

a	=	ա, a-----	a (i)
ā	=	ա, a-----	ā
e	=	ե e; ոնգայիններից, նախնական ոնգային +բաղաձայններից առաջ և այլն = ի i; նախն. v-ից հետո = n o, մեկ անգամ = ա a (տասն tasn)-----	a
ē	=	ի i; մեկ անգամ = է ē (աղուէս aluēs),-----	ā
o	=	ա a, n o, նախնական ոնգային +բաղաձայններից առաջ և այլն = ու u -----	a, ā
ō	=	ա a -----	ā
i(i)	=	ի i -----	i(i)
u(ū)	=	ու u -----	u(ū)

ai = այ ai----- ai
 ei = է ē ----- ai
 oi = այ ai, օսն է ē ?----- ai
 au = աւ a v? ----- au
 eu = ն յ օ i ----- au
 ou = ն յ օ i (անվիճելի օրինակներ) ----- au

ր- ձայնավոր = ար ar; } ----- { ր- ձայնավոր
 լ- ձայնավոր = ալ al; }

Ռ-նգային ձայնորդներ = ան an, երկու անգամ = ա a----- a

2) Բաղաձայններ

հնդեվր. հայկական

նախն. իրանական

y = ջ j բառամիջում; մեկ անգամ = j,
 երկու անգամ = l(?);
 բառասկզբում, մեկ անգամ = y(?);
 բառամիջում հաճախ սղվում է = i;
 այլ ail, ալիս alius; ----- y
 v = գ g և լ v բառասկզբում և բառամիջում
 ձայնավորներից հետո;
 մեկ անգամ = ք k' (քսան k'san);
 մեկ անգամ կ k (սկեսուր skesur);
 բառամիջում մեծ մասամբ սղվում է:-----v
 Հմմտ. հնդեվր. sv, tv
 k = կ k Գ-ից և ր-ից հետո = գ g; = յ y. գայլ
 gail? բառի մեջ, մի քանի անգամ սղ-
 վում է-----k(x)
 g = կ k, մի քանի անգամ = ս c?-----g
 gh = գ g, հնդեվր. gh+t = ստ st դուստր
 dustր բառի մեջ-----g
 kh = խ x (մեկ անգամ)-----x
 k' = չ չ, մեկ անգամ j (Գ-ից հետո);
 բառամիջում = շ?, մեկ անգամ = գ
 (կ-ի դիմաց հինգ hing բառի մեջ);
 մեկ անգամ = ք k

(լք-անե-մ lk'ane-m)----- ճ
 g' հմմտ. g ----- j
 g' h = ջ j; ժ շ; մեկ անգամ = ձ j (օձ auj)----- j
 k' = ս s; մեկ անգամ = ճ (շուն šun);
 երկու անգամ (նախնական տ-ից
 և լ-ից առաջ) սղվում է -----s
 g' l = ծ c; մեկ անգամ = ս s (ես es)----- z
 g' h = ձ j (բառասկզբում և ' և ' ր հնչյուն-
 ներից հետո) և գ z ձայնավորնե-
 րից հետո; սղվում է, **քառնամ**
 bairnam-ի մեջ----- z
 t = տ t u-ից s հետո, Գ-ից և ր-ից հետո
 մեկ անգամ բառասկզբում = ղ,
 այլապես՝ մի քանի անգամ = ք t';
 միջձայնավորային դիրքում = յ y
 (հմմտ. սղում); ձայնավորներից
 հետո ր-ից առաջ = լ v; բառա-
 սկզբում ր-ից առաջ սղվել է (ե-
 րեք erek' հմմտ. հնդեվր. tv)-----t(θ)
 t h = յ y մեկ անգամ (լայն lain) -----θ
 d = տ t, մեկ անգամ = ք t' (փոյթ p'oit' ?)-----d
 dh = դ d -----d
 p բառասկզբում ձայնավորներից
 առաջ = հ h, երկու անգամ = յ y;
 բառասկզբում լ-ից լ առաջ սղվել
 է; = պ p (մեկ անգամ u-ից s-ից
 հետո); ձայնավորներից հետո
 = լ v-----p(f)
 b(?) = ք b (մեկ անգամ մեկ բնաձայնական
 բառի մեջ)----- (b)
 bh = ք b բառասկզբում, դ լ, ր r, մ m
 հնչյուններից հետո = լ v-----b
 n = ն n; u-ից s-ից առաջ = նախն. s-ն
 սղվում է ----- n
 m = մ m, չորս անգամ = լ v (ու u);
 u-ից s-ից առաջ = նախն. s-ն
 սղվում է -----m
 r = ղ լ, ր r, Գ-ից n առաջ = ն t', սղ-

վում է տեսանքն tesianem

բառի մեջ-----r

l = ւ l; ղ լ

s = ս s t, x, p հնչյուններից առաջ,

(սղված) m, n հնչյուններից հետո;

բառասկզբում ձայնավորներից ա-

ռաջ մի քանի անգամ = h (?);

մնացած դեպքերում բառասկզբում

ձայնավորներից առաջ և մ m, ն n,

ւ v (հմմտ. սակայն sv) հնչյուննե-

րից առաջ սղվել է; միջձայնավորա-

յին դիրքում = j y (հմմտ. սղում), ձայ-

նավորներից և կ k, ր r, մ m, ն n հընչ-

յուններից առաջ, ինչպես նաև ր-ից

ր-ից հետո սղվել է----- s, ճ, h

z d = ստ st

sv = ք k

բառասկզբում; մեկ անգամ =

ւ v (վեց veç)-----x w

t v = ք k

բառասկզբում (երկու անգամ)-----tv, Թv

sk = ց ց, ք k, չ չ ?; 2 ճ;

ks = ջ յ (ր-ից հետո); ց ց,

{ sk
sč
s

{ xš
š

sy = j y n-հիմքերի եզակի սեռականում-----hy

sp, ps, py = փ p'-----sp, fš

spy բառասկզբում = ք t' (թուք t'uk')?-----

rty կամ rtr = ր h, rh, h h-----rđy, rđr

Վ ե ր ջ ա ր ա ն

Հայերենի հնչյունահարաբերությունների այս շարադրանքից հետո հայերենի դիրքի հարցը արիական լեզուների շարքում պետք է վերջնակա- նապես լուծված համարել:

Եթե հայերենը իրանական լեզուներին դասվելու լիներ, այն պետք է կիսեր իրանական լեզուները հնդկերենից տարբերակող գծերը:

Դրանք են՝.

1) k, t, p-ն բոլոր բաղաձայններից առաջ տալիս են x, փ, ֆ;

2) ձայնեղ շնչեղ պայթականները իրենց շունչը կորցնելու պատճառով համընկնում են պարզ պայթականների հետ;

3) խուլ շնչեղները (kh, th, ph) տալիս են խուլ շփականներ (x, փ, ֆ);

4) k^l-ն տալիս է s; g^l, g^h-ն՝ z;

5) k, č, t, p, n հնչյուններից առաջ s-ն մնում էր անփոփոխ, սակայն ֆ-ից հետո և բառասկզբում տալիս է h:

Մինչդեռ հայերենը՝

1) չգիտի և ոչ մի հաստատ դեպք բաղաձայններից առաջ k, t, p հնչյունների համապատասխան փոփոխությունների՝ իրան. *pītrah «հոտ», մինչդեռ հայերենը նրա դիմաց ունի hop haur ձևը, զենդ. Թրայծ «երեք» ձևի դիմաց հայ. ե-րե-ք e-re-k^l; իրաներենի բառասկզբնային fr-ի (հմմտ. frəna «քազմություն») դիմաց հայերենում կանգնած է լ լ (հմմտ. լի li «լի»);

2) ճիշտ է՝ նա իր շնչեղ պայթականները դարձրել է պարզ պայթականներ, սակայն նախնական պարզ ձայնեղ պայթականների տեղաշարժի հետևանքով դրանք սղվել են խուլ պայթականներ, որի հետևանքով այդ երկու խմբերը չեն նույնացել;

3) նա, ճիշտ է, մի դեպքում իր խուլ շնչեղ kh պայթականը դարձրել է խուլ շփական (սխալ sxal «սխալ», սնս. skhalāmi, հուն. σφάλλομαι), սակայն երկու այլ դեպքերում նախնական th-ն, ինչպես t-ն, թույլ է սղվել, որ դառնա j y՝ կու ku (< կույ kuy) «քակոր», սնս. gūtha, զենդ. gūṭha, նպրս. gūh; լայն lain «լայն», սնս. prthu, հմմտ. զենդ. fraṭaṅh;

4) հայերենում k^l >^u/s, g^l >^ḍ/c (ts), g^h >^ḍ/j (dz) և Գ/z;

5) հայերենը u-ն s պահպանել է t/տ, x/խ, p/պ հնչյուններից առաջ, բա- ռասկզբում ձայնավորներից առաջ u-ն մի քանի անգամ դարձրել է h, մնացած դեպքերում, սակայն, նա իր u-ն բառասկզբում ձայնավորներից և մ m, ն n, ւ v հնչյուններից առաջ կորցրել է, ինչպես նաև բառամիջում ձայնավորներից հետո կ/կ, ր/ր, մ/մ, ն/ն հնչյուններից առաջ և ր/ր-ից հետո, մինչդեռ միջձայնավորային դիրքում դարձրել է j y: Չենդերենում u-ն և-ից առաջ պահպանվում է, մինչդեռ հայերենում նույն այդ դիրքում սղվում է, զենդերենում u-ն an հնչյունակապակցությունից հետո էլ է h տալիս, մինչդեռ հայերենում մu-ն ms, նu-ն ns u են տալիս:

Եթե պատկերացնենք, որ շնչեղ պայթականները, բացի հնդկերենից, հնդեվրոպական ուրիշ և ոչ մի լեզվում որպես այդպիսին չեն պահպանվել,

¹ Հմմտ. իմ «Iranischen Studien» KZ 24, 409-410; Այնտեղ նշվածը պետք է սահմանափակել ըստ Բարթոլոմեի «Arische Forschungen» աշխատության I, 3-23 և ըստ Յոն. Շմիդտի KZ 25, 179-ի:

հակառակ դրան ինչպես իրաներենում և հայերենում, այնպես էլ լիտվապատկոներենում, գերմանական լեզուներում և կելտերենում պարզ հնչեղ պայթականներ են դարձել, և ինչպես իրաներենում, այնպես էլ սլավոներենում $k' > s, g', g'h > z$, որ ինչպես իրաներենում և հայերենում, այնպես էլ հունարենում $u-ն s$ նույն ձևով մասամբ պահպանվում է, մասամբ էլ h է տալիս և սղվում է, ապա պարզ կղառնա, որ հայերենի և իրաներենի միջև գոյություն ունեցող համապատասխանություններն այնքան չնչին են և աննշան, որ նրանց օգնությամբ հայերենի իրանական բնույթը բնավ չի կարող ապացուցվել:

Ավելի շուտ կարող է հարց ծագել, թե արդյոք հայերենը կարելի է առհասարակ արիական լեզուների թվին դասել, թե՞ ոչ:

Արիական լեզուներին ընդհանուր առմամբ բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները՝

- 1) հնդեվրոպական a, e, o ձայնավորների դիմաց $a, \text{իսկ } \tilde{a}, \tilde{e}, \tilde{o}$ -ի դիմաց՝ \tilde{a} ;
- 2) հնդեվրոպական ռնգային ձայնավորների դիմաց՝ a ;
- 3) հնդեվրոպական r և l հնչյունների դիմաց՝ r ;
- 4) i, u, k, r հնչյուններից հետո հնդեվրոպական s -ի դիմաց՝ \tilde{s} ;

Հայերենը ցուցաբերում է հետևյալ առանձնահատկությունները՝

- 1) հնդեվրոպական a, \tilde{a} հնչյունների դիմաց՝ a

“-----” e -ի դիմաց՝ $e(i)$

“-----” i -ի դիմաց՝ \tilde{e}

“-----” o -ի դիմաց՝ a, o, u

“-----” \tilde{o} -ի դիմաց՝ a

Այսինքն՝ նրան հատուկ է ձայնավորների հնդեվրոպական համակարգը, ճիշտ այնպես, ինչպես գերմանական լեզուներին;

2) հնդեվրոպական ռնգային ձայնորդների դիմաց՝ $ան, աո,$ միայն երկու անգամ՝ $ա a$;

3) հնդեվրոպական l -ի դիմաց՝ $l(\eta), l(\lambda)$;

“-----” r -ի դիմաց՝ $r, n r$;

4) $s > z \tilde{s}, j/i, ու/u, կ/k, ը/r$ հնչյունների ազդեցության տակ, և անվիճելի չէ և ոչ մի օրինակում:

Այսպիսով, այն արիական լեզուներին բնորոշ գծերից և ոչ մեկը լիովին չի կրում:

Ուստի և, հետևաբար, հայերենը չի կարող դասվել արիական լեզուների

շարքին և նրանց չի էլ պատկանում: Այն հնդեվրոպական լեզվաընտանիքի մի ինքնուրույն ճյուղ է և հնդեվրոպական լեզուների թվարկման ժամանակ լավագույն դեպքում պետք է նշվի արիական և սլավոնալիտական լեզուների միջև: Հայերենը իրանական լեզուներին դասելու հիմնական դրդապատճառները եղել են, ինչպես արդեն նախաբանում նշվեց, միայն պարսկերենից կատարված բազմաթիվ փոխառությունները, նրանք սխալմամբ ընկալվել են որպես ուրույն բնիկ բառեր, դրանք այս «Grundzüge»-ի II մասում պետք է ի մի բերվեին, որպեսզի իրենց հերթին գային հաստատելու հայերենի բնույթի մասին իմ կողմից հայտնած կարծիքի ճշտությունը:

**Հավելված
Հայերենի թերունը**

Հայերենի թերման կապակցությամբ մինչ այս կատարված ուսումնա-
սիրությունները մեծ մասամբ սխալ կամ անհաստատ արդյունքների են
հանգեցվել: Ես նպատակ չեմ հետապնդում դրանք այստեղ հերքել, այլ միայն
կարծանագրեն հոլովման և խոնարհման ամենակարևոր ձևերը և
կրավարարված նրանց կապակցությամբ որոշ դիտողություններ անելով:

Հոլովում

1) Անուններ

ա) m - հիմքեր՝	Մարիամ	Mariam	Maria
<i>ուղղ.</i>	Մարիամ	Mariam	
<i>հայց.</i>	զՄարիամ	z Mariam	
<i>սեռ.-սր.</i>	Մարեմայ	Maremay	
<i>բաց.</i>	ի Մարեմայ	i Maremay	
<i>գործ.</i>	Մարեմա	Maremay	

Այս ձևով թերվում են միայն հատուկ անունները: Թերունը դժվար թե վա-
ղենի լինի:

բ) n-հիմքեր՝	մարդ	mard
	եզակի	հոգնակի
<i>ուղղ.</i>	mard	mardk'
<i>հայց.</i>	z mard	z mards
<i>սեռ.-սր.</i>	mardoy	mardoç
<i>բաց.</i>	i mardoy	i mardoç
<i>գործ.</i>	mardov	mardovk'

Գործիական հոլովի **արդար-ով** ardar-ov (արդար-ից) ձևի կողքին
կիրառվում է **արդար-եւ** ardar-ev *áληθώς* մակբայը: **ե**-հիմքերի կապակցու-
թյամբ ներքևում *հմմտ.* նաև անձնական դերանունների գործիականը՝ *inev,*
k'ev, iurev; հոգնակին՝ *mev-k', jev-k', այնպես, ինչպես or-ov het-ev*
«որովհետև», ain-u het-ev, է՛ք ais-u het-ev, օ՛ն:

Այս հիմքերի **n-ի (o)-ի** հետ բաղադրման **ա (a)** ձայնավորը (օր. *mard-a-*
sirut'ian «մարդասիրություն») ոչ մի ընդհանրություն չունի, քանի որ այն
բոլոր հիմքերի հետ էլ կիրառական է:

գ) ju - հիմքեր (yo-stämme)	տեղի	te li «տեղ»
	եզակի	հոգնակի
<i>ուղղ.</i>	te li	te lik'
<i>հայց.</i>	z te li	z telis
<i>սեռ.-սր.</i>	te lnoy	te leaç
<i>ներգ.</i>	i te lnoj	—
<i>բաց.</i>	i te lnojē	i te leaç
<i>գործ.</i>	te leav	te leavk'

Հմմտ. ZDMG 36, 122:

դ) ի - հիմքեր (i-stämme)	սիրտ	sirt
	եզակի	հոգնակի
<i>ուղղ.</i>	sirt	sirtk'
<i>հայց.</i>	z sirt	z sirts
<i>սեռ.-սր.</i>	srti	srtiç
<i>բաց.</i>	i srtē	i srtiç
<i>գործ.</i>	srtiv	srtivk'
ե) խառը ի - հիմքեր՝	ազգ azg	«ազգ, սերունդ, ցեղ, տոհմ»
(i-stämme)	և այք ačk'	«այքեր»
	եզակի	հոգնակի
<i>ուղղ.</i>	azg	ačk'
<i>հայց.</i>	z azg	z ačs
<i>սեռ.-սր.</i>	azgi	ačaç
<i>բաց.</i>	y azgē	y ačaç
<i>գործ.</i>	azgav	ačavk'

զ) **ու - հիմքեր՝ (u-stämme)** զարդ zard և մահ mah

եզակի

հոգնակի

<i>ուղղ.</i>	zard mah	zardk'
<i>հայց.</i>	z zard z mah	z zards
<i>սեռ.-սր.</i>	zardu mahu	zarduç
<i>բաց.</i>	i zardu i mahuanē i zardē i zarduē	i zarduç
<i>գործ.</i>	zardu mahu	zarduk'

Գործիական հոլովի zardu ձևը կանգնած է *zarduv-ի դիմաց, հոգնակիում՝ zarduk' *zarduvk'-ի դիմաց:

է) **ը - հիմքեր՝ դուստր dustr**

եզակի

հոգնակի

<i>ուղղ.</i>	dustr	dsterk'
<i>հայց.</i>	z dustr	z dsters
<i>սեռ.-սր.</i>	dster	dsterç կամ dsteraç
<i>բաց.</i>	z dsterē	i dsterç կամ i dsteraç
<i>գործ.</i>	dsterb	dsterbk'

Այն փաստը, որ Սասանյանների թագավորության օրոք ազնվականների ամենաբարձր դասը, յոթ ամենատոհմիկ ընտանիքների անդամները, պարսկական *vāspuhrakān* բառով էին անվանվում, անվիճելի նշված է Նյոլդեբերի կողմից, այնպես որ բառի ձևը և իմաստը այժմ միանգամայն դուրս են կասկածից: Նյոլդեբերն նախ գտավ *Pahl.-Paz. Gl. Haug*-ի հրատարակությամբ 9, 1; *Salemann*-ի հրատ. 73, 4; 89, 5 *vaspur*=*barbita* հավասարումը «տան զավակ», *Hājiābād* (արձանագրություն 7-ի) մեջ, բարձրագույն ազնվականության արամեական անվանումը, մեծ արքային ենթակա իշխանների համար, և այս միաժամանակ ցույց տվեց 13-րդ դ. սկզբից եկող բառը մի ասորական ծննդյան երզում, «նազնատ» իմաստով (*Tabari*, էջ 501): Այնուհետև գալիս են՝ 1) *Kāmāmak* (*Bezenb. Btrg.* 4, 39 և 62) *āspuhrakān* ազնվականներ:

¹ *Հմմտ.* Nöldeke, հիշատակված ամսագիրը 46, էջ 139:

² *Հմմտ.* պիլ. *Mārikān i čatrang* էջ 1, տող 8, *Glossar* էջ 14 (1885 թ. (Բոնիայի հրատարակությամբ):

³ Վերը բերված համադրությունները՝ պիլ. *azd*=*hāj. azd*, պիլ. *fravartak*=*hāj. hrovartak*, ինձանից անկախ հայտնաբերել է նաև դոկտ. *Stackelberg*-ը (*briefl. Mittheilung*, 27 ապրիլ, 1892):

րը, որը մի պարզ գծիկի հավելումով կարելի է փոխել մի իսկական *vāspuhrakān*-ի.

2) որը նույնպես *vāspuhrakān*-ի (կամ պազ. *vāspuhragān*) *vāspihirgān*-ի փոխված ձևն է, (*West, Mainyo-i-khard*, գլուխ 1, 7, (*հմմտ.* *Glossar*-ը էջ 213, *Olshausen, Berl. Sitzungsber.* 1880, էջ 356; *West, Pahlavi Texts III*, էջ 4, 1885, *Fr. Müller, Btrg. zur Krit. und Erkl. des Minōig Chrat* էջ 2, 1892).

3) Արձանագրված է *vāspuhrakān* «the nobles», «*Naqš i Rustam*» արձանագրության մեջ, տող 6 (*West*-ի հրատ., 1881, էջ 71).

4) պազ. *vāspuhragāni nobility* և այլն: (*West, Shik. Gum. Vij*, էջ 271).

5) *āspuhrakān* «ազնվականները» (կարդա՝ *vāspuhrakān*) *Geiger, Jātkār Zarirān* էջ 47 (1890).

6) Մի *Gemme*-ի վրա՝ *V(a)spuhr* «վագնատ» (*Horn, Sas. Siegelsteine, Բեռլին* 1891, էջ 28).

7) *vāspuhrakāni aitō* «is ennobled» und *vāspuhrakānihā* «preponderantly» *West, Pahl. Texts IV*, էջ 324 և 375 (1892).

8) *Sebēos*-ի մոտ (Պատկանեանի հրատարակությամբ) որպես պարսկական տիտղոս՝ *vaspurakan hamarakar*=հարկահավաք: *vāspuhrakān*¹, *հմմտ.* պիլ. *andarzpat i vāspuhrakān* (*Bezenb. Btr* 4, 62), որի կողքին հայերը տարբերակում են նաև *andarzpat* «մոզ, քուրմ» (*movan anderjapet* Ղազար Փարսյ. և այլն).

9) Վանա լճից դեպի արևելք գտնվող Պարսկաստանին սահմանակից հայկական նահանգի անունը (Մովս. Խոր. և այլն), որը Յուստին «*Bundeh*» էջ 262 կապում է *Glossar*-ի *vaspur*-ի հետ:

Փաստական այս նյութերից հետևում է, որ մեր բառի առաջին վանկի ձայնավորը կամ *a* է եղել, կամ՝ ավելի հավանական է՝ *ā*, այստեղից էլ համապատասխանող զուգակցությունը² պիլ. *vāspuhr* (արամ. *barbitā*), զենդ. *visō pudra*-ի հետ «տան զավակ» (=պիլ. *vispus*), որի շնորհիվ ձայնավորների տարբերությունը վերանում է³:

Սակայն սրան վերաբերյալ մեկ այլ հնչյունական համակցությունն էլ է ձայնավորում: Ես նկատի ունեմ այն. Մառի կողմից⁴ բազմիցս վկայակոչված հայ *sepuh*⁵ և զենդ. *visōpudra* բառերի նույնացումը: Վերջինիս համար հին պարսկերենում պետք է *visōpudra*, պիլ. *vispus* (տե՛ս վերը) կամ *vispuhr*

¹ Խորով թագավոր Հայաստան է ուղարկում *Vaspurakan hamarakar*-ին «մեծ զանձերով», որպեսզի մեծամեծներին իր կողմը գրավի, էջ 48 «նրանք վերցրեցին արքայական զանձը, որը կար *Hamarakar*-ի տանը, որը հավաքված էր Երկրի (Իսպահան) տուրքերից» էջ 58:

² *Olshausen, Berl. Sitzungsber.* 1880, 355; *Darmesteter, Ir.* II 139-142.

³ *Հմմտ.* Նյոլդեբեր, նշված ամսագիրը 44, 139:

⁴ Ի վերջո «Հանդես ամսօրեայ», 1892, էջ 164-165:

⁵ Մեայրահները մի իշխանական տան անդամներն են, ի տարբերություն *tanutēr*-ի, այսինքն՝ «մայրատի»:

գրված լինելին: Եթե vispuhr-ը հայերեն մտած լինի, ապա այն հայ. šapuh=պիլ. šāhpuhr-ի օրինակով, ի վերջո, պետք է, որ մախ vispuh դարձած լինի, որը պատմական հայերենում, սակայն, որպես vspuh (կամ vęspuh) պետք է հանդես գար, *հմմտ.* հայ. včar=պիլ. vičār, հայ. včir=պիլ. vičir, հայ. Vstam<պրս. Vistakm¹ և այլն: Բառակազմային v-ի կամ vi-ի սղում հայերենում սովորաբար չի հանդիպում: Ուրեմն vispuhr-ից հայերենում պետք է որ **vspuh** առաջացած լինի, բայց ոչ sepuh: Սակայն ես բոլորովին էլ այն կարծիքին չեմ, որ այդ պիլ. vispuhr-ը, իսկապես, այդպես է արտասանվել, այլ կարծում եմ (ես սրան վերստին կանդրադառնամ), որ հնագույն ժամանակներում այն եղել է viθpuhr, ավելի ուշ՝ vihpuhr, որտեղից հայերենի sepuh բառը շատ ավելի քիչ է սպասելի:

5) Մաշկապերճան maškaperčan

Geiger-ի Jātkār i Zarīrān, էջ 55, § 25-ում առաջին անգամ «վրան» բառի համար պահլավերենում հանդիպում է maškāparzēn կամ maškāparčēn, որը հայագետներին վաղուց է հայտնի: Այն երկու անգամ հանդիպում է Փաւստ. Բուզանդի մոտ (Վեներտիկ 55 և 189) և երկու անգամ Սեբեոսի մոտ (Պատկ. հրատ. էջ 27 և 42): Նշված տեղերում գրված է

1. Փ. Բուզ. 55՝ «Պարսից արքա Ներսեհը հավաքեց իր զորքերը, իր ամբողջ շքախմբով, անհամար ապրանքներով և սեփական վրաններով (maškapačēnauk՝) և բոլոր կանանց ու թագուհու հետ միասին»

2. Փ. Բուզ. էջ 189՝ «Նրանք թալանեցին պարսից արքայի զանձերը և գերի վերցրին թագուհուն մնացած կանանց հետ միասին: Եվ զորավար Մուշեղը գրավեց ամբողջ վրանը և հրամայեց բոլոր ազնվականներին՝ մոտ 600 մարդու մորթել և այլն»:

3. Սեբեոս 27՝ «Նրանք գրավեցին ամբողջ ճամբարը թագավորական զանձերի հետ միասին և վերցրին թագուհուն (bambišn) և ճամբարը և թալանեցին վրանը (mašaperčan), ամբողջ կառքը (despak)² ոսկե, շատ տաղանտներ արժողության, որը զարդարված է թանգարժեք քարերով և մարգարիտներով և նրանց մոտ (պարսիկների) այն կոչվում էր փառահեղության կառք (despak p'arac)»

4. Սեբ. 42՝ «Եվ պատահեց, երբ նրանք ճամբար մտան և մոտեցել էին թագավորական վրանին (maškaperčan), նրանց հրաման բերվեց թագավորի մոտ գալ միայն քիչ մարդկանցով: Նա, սակայն, չհամաձայնվեց, այլ

¹ Պահլավերենում բառակազմային vi-ի դիմաց v է գրվում, հայերը ոչ վերջի վանկի i-ն և u-ն դեն են նետել: Այստեղից էլ Հոռնի սխալը: KZ 32, էջ 581:

² Հայ despak-ը (պարսկերենից?) վերծանվում է որպես դեսպակ, պատգարակ կամ կառք, սակայն պարսից արքայի կանայք ճանապարհորդում էին կառքով (Tabari 137/8):

արքայական վրանի դռանը մոտեցավ իր զորամասերով: Այսպիսով, Փաւստոսի մոտ առկա է 5 տարբերակ՝ maškapačēn- (նուրկականը՝ maškapačēn կամ -pačēan), նաև maškavarzan; Սեբեոսի մոտ՝ mašaperčan, իսկ պիլ. ձևը՝ maškāparzēn, որտեղ սակայն, հավանաբար z-ի փոխարեն ճ պետք է կարդացվեր, իսկ i-ն կարելի է ā-ի ուղղել: Արդպես է եղել պարսից արքայի վրանի անվանումը:

6) Վաշխ vašx

Հայ. vašx (i-հիմք) «վաշխառություն» (Յովհ. Մանդ., էջ 63 և հաջ. Արիստ. Լաստ., էջ 111 և այլն) փոխառություն է պարսկերենից, պիլ. vaxš interest (of money), increase, սակայն նաև՝ sunrise, growing (Ganjeshāyagān, Bombay 1885, Glossar, էջ 19, West, Pehl, Texts IV, 138), զենդ. vaχša «ամել», «գիրանալ», «արևածագ»: Պարսկական չճ-ի հնչյունափոխությունը հայերենում ճx-ի համար օրինաչափ է:

7) Չուր zur

Հայ. zur «զուր, իզուր, անտեղի» (ἄδικος Ելք 23, 7) «ապարդյուն, դատարկ, փուչ» որպես մակբայ «իզուր» (εἰς Գաղատ. 3, 4), պարսկական փոխառություն է:

Պրս. zūr «կեղծ», «սուտ», ըստ Վուլլերսի արաբական է: Իրականում բնիկ բառը արաբական zūr falsum, mendacium և այլն բառին է վերաբերում: Պիլ. zūr “a lie, falsehood, untruth” (Gloss and Ind. 151) *հմմտ.* նույն տեղում zūr - gukāsih “false, evidenc, perjury” պազ. zur (=պիլ. zūr) a lie (Shik Gum. Vij էջ 275), զենդ zura zurōjata-ի մեջ vd. 7,5 (Spiegel)= պիլ. zūr-zat, pavan, adinaih, այսինքն՝ «ոչ օրենքով, այլ անմեղ սպանված» Jašts-ի մեջ որպես Syāvaršan-ի բացատրություն, Siyāvusš (Ֆիրդուսի) «այն ամենը, ինչը զրպարտության զոհ դարձավ, անմեղ, անարդար սպանվեց» հայրս. zura (կարդա՝ zūra) Beh. IV, XIII; naiy draujana āham, naiy, zūrakara āham «Ես ստախոս չեի, ոչ էլ չարագործ» և, այնուհետև, naiy-zūra akūnavam «Ես ոչ մի անարդար բան չարեցի («ուժ, բռնություն» ըստ իմաստի այստեղ տեղին չէ): Այս բառը պետք է տարբերել զենդ. zāvare (zavare) «ուժ, իշխանություն»=պիլ. պազ. պրս. zōr «ուժ, հզորություն», «իշխանություն», հայ. zaur «ուժ, զորություն»:

ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՉՆԱՆՈՒՆՆԵՐ

Ներքո հետազոտվելու է, թե արդյոք անուններ տալու հնդեվրոպական սկզբունքը, որը Ֆիքը շարադրել է հունական անունների մասին գրած իր աշխատության մեջ (Գոյթինգեն, 1874), հայերենում, եթե անգամ նվազագույնս, պահպանվե՞լ է, թե՞ ոչ¹:

Հայկական անունները ուսումնասիրելիս ավելի մեծ դժվարությունների են հանդիպեցի, քան այլ լեզուների ասպարեզում՝ հայկական լեզվական նյութի առանձնահատուկ բնույթի պատճառով: Ընչտ է, շնորհիվ հայ պատմագիրների, որոնցից մեզ բավական մեծ քանակությամբ անուններ են հասել, դրանում կարելի է համոզվել աշխատություններին կից տրվող հավելվածներից: Չէ՞ որ միայն Մովսես Խորենացու (նրա և նրան վերագրվող) աշխատություններին կից տրվող անվանացանկը ավելի քան 1000 անուն է պարունակում: Սակայն ավելի հանգամանորեն ուսումնասիրելիս պարզվում է, որ այս առերևույթ հարստությունը զգալիորեն կնվազի, քանի որ, նախ՝ հայ պատմագիրները մասամբ նույն անուններն են կրկնում, ուսումնասիրվող նյութի նույնության և ավելի ուշ շրջանի պատմիչների՝ իրենց նախորդներից կախման մեջ լինելու պատճառով, 2) նշվող անունները ոչ միայն անձնանուններ են, այլ նաև աշխարհագրական անուններ և, բացի այդ, առաջինները ոչ միայն հայերի անուններ են, այլ նաև պարսիկների, հույների, ասորիների, վրացիների, աղվանների և ուրիշների: Եթե վերջիններս աշխարհագրական անունների հետ միասին մեկուսացնենք, որպես այս ուսումնասիրության հետ ոչ մի ընդհանրություն չունեցողի, կմնան միայն սահմանափակ քանակությամբ հին հայկական անուններ, որոնք, սակայն, չեն կարող ամբողջովին մեր ուսումնասիրության առարկան լինել, քանի որ նրանք մեծ մասամբ ոչ բնիկ հայկական, այլ փոխառյալ լեզվական նյութ են: Ինչպես Արշակունիների և Սասանյանների ժամանակաշրջանում մեծ քանակությամբ պարսկական բառեր ներթափանցեցին հայերեն, քրիստո-

¹ Այստեղ են օգտվում եմ (բացի կետով նշվող 1-ի փոխարեն և նշանագրից, քանի որ տպարանում այդ տառատեսակը չկա) նաև իմ "Umschreibung der iranischen Sprachen und des Armenischen" (էջ 38) աշխատության մեջ տրվող հանրամատչելի, ոչ համեմատական լեզվաբանական աշխատությունների համար առաջարկվող տառադարձական նշաններից, ինչպես նաև հետևյալ կրճատումներից՝ El.=Elišé, Ven. 1859, FB=Faustus von Byzanz, Ven. 1832, LPh-Lasar von Pharp. Ven. 1873, MX=Moses von Chorene, Ven. 1865, Ag=Agathangelos, Ven. 1862, Eznik, Ven. 1826, Koriun, Ven. 1833 im 5 Jhd, Sb=Sebedós, St. Peterb. 1879, Joh. Mamik=Johannes der Mamikonier, Ven. 1832 im 7. Jhd. Levond, Paris 1857, im 8 Jhd., M. Kal.=Moses Kalankaituathsi, Paris 1860, Joh Kath.= Johannes Katholikos, Moskau 1853, Thom.=Thomas Artsruni Petersb. 1887, NP=Biographie Nerses des Parthevs, Ven. 1853 im 10 jhd., Steph. Asol. = Stephanus von Taron (անվանված՝ Asołik), Paris 1859, Arist.=Aristakes von Lastivert, Ven. 1844, im 11 jhd., Vardan, Ven. 1862, Kir=Kirakos von Gandzak, Ven. 1865, Steph. Orb.= Stephanus Orbelean, Paris 1859, im 13 jhd.

նեության շրջանում Հայաստան մտան հունական և ասորական, ինչպես նաև շատ ուրիշ օտար անձնանուններ և, այնտեղ հաստատվելով, դուրս մղեցին մեծ քանակությամբ հին բնիկ հայկական անուններ: Ազնվականները հիմնականում կրում էին պարսկական (մեծ մասամբ արշակունյան) անուններ, հոգևորականները՝ բիբլիական, հունական կամ ասորական, մինչդեռ ժողովուրդը հավանաբար իր հին անունները դեռ երկար ժամանակ շարունակում էր պահպանել, որոնք, սակայն, պատմիչներն իրենց աշխատությունների մեջ չեն հիշատակում, քանի որ հասարակ մարդիկ պատմիչների համար որևէ դեր չէին խաղում, և դժվար թե նրանք համարվեին հիշատակության արժանի²:

Եթե մի կողմ դնենք պարսկական և քրիստոնեական այն անունները, որոնք դեռ շարունակվում են որպես այդպիսին ընկալվել, ապա կմնա անունների այն մնացորդը, որն ինձ համար բաշխվում է 2 խմբի, այնպիսիների, որոնց ստուգաբանությունը ինձ համար մութ է, և այնպիսիների, որոնք հայերենի օգնությամբ ավելի կամ պակաս չափով ենթակա են ստուգաբանության: Առաջինները պիտանի չեն այս ուսումնասիրության համար, անկախ այն բանից, թե արդյոք հայերեն են հնչում (իրենց հնչյունական կազմով հատուկ հայկական ձևավորում ունեն), թե՞ ոչ: Այդպիսին են հետևյալ անունները³:

Andôk Siuni (Փ. Բուգ. 28), **Ašot** Bagratuni⁴ (Սեբեոս 56), **Arandzar** Amatuni (Ղ. Փարպ. 201, 256), **Aravan** (տեղն Վանանդեայ) (Ղ. Փարպ. 126), **Atam** Išxan von Golthen (Փ. Բուգ. 29), **Atat** Gnui (Փ. Բուգ. 233), **Atom** Gnuni (Ղ. Փարպ. 126), **Artith** Բասենի եպիսկոպոս (Փ. Բուգ. 265), **Baboths** Պապ

¹ Հնդեվրոպականների մեջ կային, իմիջիայլոց, նաև ծննդով հայեր և ասորիներ, *հմմտ.* Chorpiskopos Daniél (ազգությամբ մի ասորի) և նրա աշակերտը՝ Epiphon «ազգությամբ հույն», նաև Šalıtay «ազգությամբ ասորացի» (Փ. Բուգ. 36, 42, 218); Phaustos և Arostom եպիսկոպոսները «ազգությամբ հռոմեացիներ» (Փ. Բուգ. 265):

² Այսպես՝ Եղիշէի մոտ հանդիպում է «մի մարդ» Xuzik անունով (էջ 140, 141 «Xuzik անվանված»), որը դեր է խաղում նաև Ղազար Փարպեցու մոտ (266-313): Նա, ըստ Ղազար Փարպեցու (283), վաճառական է եղել՝ «ազգությամբ Xuzik», այսինքն Խուժաստանցի: Նա այսպիսով, ոչ մի անգամ իր անունով չի նշված, այլ միայն իր ծննդավայրի անունով՝ «Խուժաստանցի»:

xuzik=պարս. xūzī, այսինքն՝ պիլ. *xūzīk, հայրս. (h)uvziya, պիլ. ik վերջածանցով կազմված xūz-ից=հայրս. (h)uvza «Խուժաստան»:

³ Այս անունների թվում կարող են նաև ինձ անծանոթ պարսկական կամ ասորական, ինչպես նաև բոլորովին օտար հյուսիսային գավառներից եկող անուններ լինել: Եթե դատելու լինենք ըստ տեղանունների, խիտ ազգաբնակչություն եղել է միայն Բարձր Հայքում, Այրարատում, Տուրքերբանում և Վասպուրականում, Ծոփիք և Աղձնիք գավառներում գերակշռում էին արամեացիք և քրդերը, ինչպես և Մոկրում և Կորճայքում, մնացած (հյուսիսային և հյուսիսարևելյան) գավառներում՝ կովկասյան ցեղեր:

⁴ -uni, -ean, -akan, -athsi վերջավորություններով ավարտվող անունները հայ ազնվական տոհմերի անուններն են, իսկ նրանց հոգնակին ցույց է տալիս նրանց բնիկ երկիրը:

Արտակունու հայրը (Ղ. Փարս. 394), **Bakur** Siuni (Ղ. Փարս. 255), bdeašx von Aladzikh (Փ. Բուգ. 21), **Gardžoil** Malxazean (Ղ. Փարս. 371, Փաստ. Բուգ. 104), **Gnel** Հայոց Արշակ արքայի եղբոր որդին (Փ. Բուգ. 90), **Ginth** եպիսկոպոս Դերջանի (Կորիւն 17)=Gnith (Մովս. Խոր. 258), **Gnith** Հաշտենից իշխան, Կամինական տոհմից (Փ. Բուգ. 29), **Goruth** Չորի իշխան (Փ. Բուգ. 29), **Dał** Aravelean (Եղիշ. 150, նույն անվան համար Ղազար Փարսեցու մոտ 256՝ **Dat**), **Zorthuaz** Վանանդի եպիսկոպոս (Փ. Բուգ. 270), **Zuith** Արտաշատի քահանա (Փ. Բուգ. 172-175, Մ. Խորենացու մոտ 223, **Zuithay**-հրեական ծագում ունի):

Xurs Արշամունիք գավառից Ղ. Փարս. 454, 455, *հմմտ.* Եղիշ. 77, Կորիւն 20: **Xad** եպիսկոպոս Կարնո գավառից [Փ. Բուգ. 105, Մ. Խ. 206 (սեռ. Xadday) 218]; **Xorišah** Մամիկոնեաններից, մարգապանի դուստր, Ալյանբեկի և Գրիգորի քույրը (Կիրակոս Գանձակեցի, 211, Վարդան 140 (պարսկ. «արեգակն արքայի»), **Kenan** Amatuni (Մ. Խ. 233), **Kotit** տերն Ամատունեաց (Մեք. 48, 56), **Mašthoths** Հացեկաց գյուղից, Տարոն գավառում (Կորիւն 6, Ղ. Փարս. 33 (=Mesrop, Mesrôp- Մովս. Խոր.), **Muš** Dimakhsean (Եղիշ. 58, Ղ. Փարս. 190), **Mušê** (ասո՞ր.) եպիսկոպոս Արծրունեաց (Ղ. Փարս. 124), **Mušel** Mamikonean (Փ. Բուգ. և այլն), **Yaškur** Արծրունի (Ղ. Փարս. 495), **Pačok** mardpetakan գնդից (Ղ. Փարս. 495), **Smbat** Բագրատունի (Մ. Խոր. 225, Մեք. 53), **Salamat** տերն Անձիսի, Ճոփքում (Փ. Բուգ. 160), **Saton** Գաբեղեան (Ղ. Փարս. 408), **Surmak**¹ Բզնունեաց եպիսկոպոս (Եղիշ. 22), **Vašinak** Սիւնի (Փ. Բուգ. 21, 250, Եղիշ. 106), **Vathšê** Մամիկոնեան (Փ. Բ. 9, 16, 283), Արծրունի 47, *հմմտ.* **Vathšê** և **Vathšagan** աղվանացի թագավորներ (Մ. Կաղանկ. I, 129), **Vathšak** Գինդի աշակերտը (Փ. Բուգ. 272), **Vargoš** Գնթունի (Ղ. Փարս. 381), **Vardz**² Կամսարական (Եղիշ. 150=**Vardzay** Ղ. Փարս. 256); **Voroth**³ Վանանդի իշխան (Փ. Բուգ. 29), **Vriv** (սեռ. Vrvay): 1. Մաղխագեան (Ղ. Փարս. 126), 2. Մի ասորեցու որդի (Ղ. Փարս. 345-356); **Tirith** Հայոց արքա Արշակի եղբոր որդին (Փաստ. Բուգ. 90, 104), **Tiroths** Բագրատունի (Եղիշ. 71, Ղ. Փարս. 195), **Tatšat** եպիսկոպոս Տայքի (Եղիշ. 22, Ղ. Փարս. 125), Արծրունի՝ Եղիշ. 150, Ղ. Փարս. 256; Gnithuni Եղիշ. 77, Ղ. Փարս. 213 (Gnduni); Rštuni (Փ. Բուգ. 47), **Phapak** Պալունի (Ղ. Փարս. 393), **Phapak** Aravelean Եղիշ. 150 (=Phaphak Ղ. Փարս. 256, Phaphakh) (Ղ. Փարս. 222, Phapag Ղ. Փարս. 126, 211); **Pharandzem** Սիւնեաց Անդղկի դուստրը, Գնելի կինը՝ այնուհետև Արշակ թագավորի, Փ. Բուգ. 116, 133); **Phisak** Հայոց Տիրան արքայի սենեկապետ «ազգությանք Սյունի» (!) (Փ. Բուգ. 49); **Khadžadž**

¹ Պրս. surma "Collyrium":

² Հմմտ. հայ. vardz «վարձ» բառի հետ:

³ Պարթ. Ούροδδης?

Սահառունի (Ղ. Փարս. 441), սարկաուազ (Եղիշ. 139, Ղ. Փարս. 222); **Khasu** Տուրուբերանի եպիսկոպոսը (Եղիշ. 22, Ղ. Փարս. 125); **Khonth** Առաւելեան (Ղ. Փարս. 467)¹:

Այս անունների, ինչպես նաև մի քանի այլ անունների, որոնք անհաստատ են կամ արհեստական ծագում ունեն², մեկուսացումից հետո մնում են հետևյալ բուն հայկական անունները՝

Aitseamn կնոջ անուն կամ մականուն, Մամուէլ Անեցու մոտ (1126 թ.), *հմմտ.* Չամչեան, III, 45, Brosset, Collection II, 461- հայ aitseamn «այծյամ», «վայրի այծ»³:

Airuk մի Սլկունի (Եղիշ. 77), հայ airuk «թզուկ» <air-«տղամարդ»+uk⁴ վերջածանցը:

Ariuts Թլկույանցի, մի հայ իշխան (հայկական Միջագետք) Չամչեան III 55 (1136 թ.), հայ airuts «առյուծ»:

Arnak մի Ամատունի (Եղիշ. 150, Ղ. Փարս. 256, 340, *հմմտ.* Մ. Խ. 43), բաղկացած է հավանաբար առ+ak մասերից <առ- «տղամարդ» (ուղղ. air, սեռ. առ) կամ arin (ուղղ. առ, հոգն. հայց. arins Եզնիկ 148, այստեղ անվանվում է եղջերուի և վարազի միջև), հավանաբար՝ «արու վայրի ոչխար» և ak վերջածանց, որը որպես բուն հայկական վերջածանց կազմում է՝ 1. նվազականներ և 2. ածականներ:

Ardzan (արձան) մի Արծրունի (Կորիւն-Մամբրե-Դաիթի), վեռ. մատենագրության առաջաբանում (Վեռ. 1833, էջ 99), Մաշտոցի աշակերտ, Ղ. Փարս. 205, Մովս. Խոր. 259, ինչ- որ մի քույր (Չենոբ 25), հայ. ardzan «քար», «ժայռ», «արձան» - կասկածելի է:

Aruseak Բագրատունեաց տնից, պարսկական ընտանիքից Սերվոյ Սևադայի կինը (Յովհ. կաթ. 61), հայ. aruseak, «լուսաբեր, առավոտյան աստղ», «Վեներա»- *հմմտ.* «Աստղիկ» (Astlik աստվածուհու անունը «աստղիկ», որը համազոր է Ափրոդիտեին (Ագ. 607)), Նոյի աղջիկը (Noah der Genesis) (Վարդան 9) astl «աստղ» բառից և ik⁵ փոքրացուցիչ ածանցից (սեռ-kan հնագույն ժամանակներում):

¹ Բերված անունների կառուցվածքի կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ նրանցից մի քանիսը -ak (մի բան, որ պահիլավերենում և հայերենում բավական հաճախ է հանդիպում) վերջավորությունն ունեն, իսկ մյուսների մոտ -ith և -oths վերջավորություններն են օգտագործվում:

² Այնտեղ, օրինակ, տե՛ս Մովս. Խորենացու մոտ նշված հին հայերենից եկող մի քանի անուններ:

³ Հմմտ. Aitseamn անունը (Փ. Բուգ. 77)= Գործք առաքելոց 9, 36 "Tabitha (Ταβιθά)", այն բարգմանվում է aitseamn (Δορκάς) < aitseamn + -ik վերջածանցը:

⁴ uk վերջածանցը, որպես փոքրացուցիչ ածանց, միայն ուշ ժամանակներում է հանդիպում gelđzuk «գեղջուկ» <geul, gelđz- «գյուղ»:

⁵ Այս բուն հայկական ածանցի կողքին կա մեկ այլ՝ ածականակերտ -ik ածանց (սեռ. -ki), որը գալիս է պահիլավերենից (ik):

- Artoit** Գինդի աշակերտը (Փ. Բուգ. 272), հայ. artoit կամ artiuտ «արտույտ»:
- Garegin** (Եղիշ. 12), Սրուանձտեանց ընտանիքից (Եղիշ. 93, Ղ. Փարպ. 213), մի Ռշտունի (Փ. Բուգ. 17), հայ. gari «գարի» բառից և a-gin վերջածանցից (*hmdun*. -ah «վախ»+ahagin «սարսափելի»), այսպիսով, մի՞թե «գարուց»?:
- Giut** Վահևունի (Եղիշ. 33, 71), Տայոց գավառի մի կաթողիկոս, Արահեգ գյուղից (Ղ. Փարպ. 333), հայ. giut գիւտ-ի՞ց, անհավանական է:
- Gor և Gazan** երկու եղբայրներ, Միւնեաց Բաբիկի շքախմբից (Մ. Կղնկտ. I, 211), այր. gōr «վայրի ավանակ», իսկ հայ. gazan «գազան», «վայրի կենդանի»?
- Gind** Տարոնցի, Դանիելի աշակերտը (Փ. Բուգ. 271), հայ. gind (gint) «ականջօղ»-?
- Dustr** Վարդանի կինը (Կորիւն 25), հայ. dustr «դուստր», «աղջիկ գավակ»¹, *hmdun*. Dughdā «Չարաթուշտրայի մայրը, Բունդեհեշ» (West, Pahlavi Texts I, 144):
- Dstrik** Մամիկոնեան իշխանուհի, Մեծն Սահակի հարսը, սպարապետ Վարդանի կինը (Մովս. Խոր. 270), նույնը Մտ. Ասողիկի մոտ (եջ 78) համոզիպում է Dxtik «թոռնուհի» ձևով, Մուրբ Սահակի «թոռնիկը» (*thorn*), պարսկական duxt «դուստր» բառի փոխակերպումով, հայ. **dustr** բառի փոխարեն, հայ. dstrik «դստրիկ»:
- Elbair** Անձնացեացի եպիսկոպոս (Եղիշ. 22, Ղ. Փարպ. 125), հայ. elbair «եղբայր»:
- Eznik** Բագրևաճի եպիսկոպոսը (Եղիշ. 22, Ղ. Փարպ. 125) **Eznik** Կողբ գյուղից Այրարատ գավառում (Կորիւն 20, 21 Մ. Խոր. 258)=Eznak (Կորիւն 21 և 99), գալիս է հայ. ezn «եզ» բառից՝ ածանցված փոքրացուցիչ -ik և -ak ածանցներով, այսինքն՝ «փոքրիկ եզ»:
- Eraneak** Տիրան անունով մի հին թագավորի դուստր, Տրդատ Բագրատունու կինը (միայն Մովս. Խոր. 141!), հայ. eraneak="Beata":
- Ēndžul** (Ակեի) իշխան (Եղիշ. 71), հայ. ēndžul:
- Thath** մի Կամսարական (Ղ. Փարպ. 256), նույն անվան համար Եղիշ. 150՝ տալիս է Thathul, *hmdun*. Thathul Դիմաքսեան: Եղիշ. 77, Ղ. Փարպ. 185; Thathul Վանանդեցի Եղիշ. 90, Ղ. Փարպ. 210, **Thathik** Բաստնի եպիսկոպոս, Եղիշ. 22, 139, Ղ. Փարպ. 125, հայ. thath «թաթ», thathul «թաթ»: Ուրեմն՝ Thathik -ը կազմված է thath + ik վերջածանցից:

¹ Ազգակցական անունները (ինչպես "Vater", "Mutter", "Bruder" և այլն), որպես անձնանուններ պարսկերենում տես Նöldeke, Pers. Stud. I, 27, սեմական լեզուներում՝ Nöldeke WZKM 6, 307 (որտեղ, օր. «դստրիկ, եղբայր, քոյր, հայր, հորեղբայր, իր հորեղբայր, իր հորաքույր» և այլն, նշվում են որպես անձնանուններ):

- Thornik** (միայն սեռ. Thornkay) մի Բագրատունի (Թովմ. Արծր. 109); Abdmsêh-ի հայրը՝ 309; Xedenek-ի որդին, Thadêos-ի հայրը 310-311; Thadêos-ի որդին, Abdmsêh-ի հայրը՝ 311; հայ. thorn «թոռ + -ik» վերջածանցը:
- İsxnik** Ստեփ. Օրբ. II, 61, Յհ. կթ. 79, միայն որպես Վասակ Միւնեցու փառաքչական մականուն, կազմված է՝ isxn+ik վերջածանցից:
- Xathšean** մի Առաւելեան Սեբ. 108; Xathšik Aplıyarib-ի հայրը, Վասապուրականի իշխան, Վարդան 106; Վարդան կաթողիկոս 90, 99; ածանցված է հայ. xathš «խաշ» բառից, ուրեմն՝ կազմվել է միայն քրիստոնեական ժամանակաշրջանում:
- Xotškorik** Thsri քաղաքի պարետը, Աղուանք աշխարհից մի իշխան Մ. Կաղ. I, 148, 149; հայ. xotškor (xotškorak) + -ik վերջածանցը:
- Tsamak** Hašteankh-ի նահապետը (միայն NP 531), հայ. tsam «ծամ» + -ik վերջածանցը, *hmdun*. ներքո Gisak:
- Tsitsarnik** Տարոնցի մի մարդ, Յովհ. Մամիկ. 54, 55; հայ. tsitsarn «ծիծեռն» + -ik վերջածանցը, *hmdun*. tsitsarnuk «ծիծեռնակ»:
- Korium** Մաշտոցի աշակերտը, Կորիւն 21, Ղ. Փարպ. 35, 103 (սեռ. Korean), 205 (գործ. Koreamb), Մ.Խ. 259; հայ. korium «կորյուն» կենդանու ձագ (Փ. Բուգ. 9, ordz korium «արտ գավակ»):
- Ktrithš**¹ Գարդմանի իշխան, Յհ. կթ. 71, հայերե՞ն է հնչում հավանաբար՝ ktur-kh «խուրեկ», ktrel «կտրել, խուրել», ktrithš «դանակ» ? - չափազանց անհաստատ է:
- Hair** մարդպետութեան իշխանը՝ Hair անունով, Փ. Բուգ. 45, Հայր անունով մի ներքինի, Փ. Բուգ. 46; իսկական անձնանուն չէ, այլ որպես մականուն² կամ՝ ավելի շուտ, որպես տիտղոս՝ արքայի ներքինապետի, հավանաբար հավասար է հայ. hair «հայր» (չնայած այն այլ կերպ է թեքվում): Hair սեռ. Hairi Փ. Բուգ. 115, իսկ hair - սեռ. haur:
- Hrathšeyay** միայն Մ. Խ. մոտ 47, նախնական ժամանակներում, ուստի և՛ Յհ. կթ.-ի և Վարդանի մոտ՝ վերջինիս մոտ, էջ 37, ինչպես նաև՝ Գոթերի երկրում Անակ թագավորի մի հետնորդ, Տրդատի կողմից

¹ -its վերջածանցը հանդիպում է՝ darnitš, kavitš, hatitš, utitš բառերում՝ ածանցված darn, kav, hat, ut-el բառերից:

² Hair mardpet-ը շատ ավագ ներքինիների անուն է, ինչպես այդ հետևում է Փ. Բուգ. 115 և 171-ից, և ինչպես ասվում է 113-ում՝ «Mardpet Hair»-ը ավելի վատն էր, քան նախորդ Hair անունով mardpet-ները: Այսպիսով, ներքինի Drastamat-ը նույնպես Hair անունով կոչվեց, ինչպես նաև նրա նախորդները՝ Dēgłak անունով, Փ. Բուգ. 191 կամ Dłak 203-205: Նա գրադեցրեց Hair-ութեան (և) Mardpet-ութեան տեղը՝ 191, և նա իր պաշտոնի համար անվանվեց արքայի Hair 203, կամ ներքինիների Hair 206:

կայր Diokletianos-ի օրոք պարսված (?) նշանակում է՝ «feuer-
äug-ig» հր-աչ-եայ:

Havuk Kukayaritš Մ. Խ. 265; հայ. hav «հավ, արյոք» կամ hav «պապ» և uk
վերջածանցը, *հմմտ.* Ջախջախեանի մոտ havik «avo», havik, havuk
«uccelletto»:

Dzagik Սիւնիքի մի իշխան, Ստեփ. Օրբ. I, 252, 279 և այլն II, 15, հայ. dzag
«ձագ» (թռչունի) + -ik վերջածանցը:

Dzuik (սեռ. Dzēvkay) Հմայեակ Մամիկոնեանի կինը Ղ. Փարս. 335, հայ.
dzu «ձու» և -ik վերջածանցը:

Marax Գինդի աշակերտը Փ. Բուգ. 272; հայ. marax «մորեխ» (պարս-
կական փոխառություն):

Mušk Սահառունեաց նահապետ Փ. Բուգ. 104; դժվար թե համադրելի է
հայ. mušk «մուշկ» = պրս. mušk:

Murik ավագ սարկավագ Փ. Բուգ. 118 հայ. murik «մուրացկան?» (ավելի
ուշ Murik-ը տեքստերում նույնպես սխալ է դրված, Maurik-ի դիմաց
= Mauricius, *հմմտ.* Թովմ. Արծր. 85, Murik = Սեբ. 47 Maurik):

Mrdžmnik մի քահանա NP 51 = Mrdžiunik, Տարոնի Գոմկունք գյուղից, Փ.
Բուգ. 123 (նույն անձը); Mrdžmnik Քարատնիքից, Ստ. Օրբ. I, 261;
հայ. mrdžimn, mrdžiun «մրջյուն» + -ik վերջածանցը:

Yusik 1. Կրթանեսի որդին, Գրիգոր քահանայապետի թոռը Փ. Բուգ. 10
(սեռ. Yuskan, էջ 32); 2. Մանազկերտի Աղբիանոս եպիսկոպոսի մի
հետնորդը, Փ. Բուգ. 226; հայ. yois «հույս» + -ik վերջածանցը:

Ordi Դիմաքսեանների ընտանիքից Ղ. Փարս. 441, հայ. ordi «որդի»:

Thšunak (տարբերակը Thšonak), կաթողիկոս, Ներսես կաթողիկոսի
հետնորդը Փ. Բուգ. 123, NP 66; Վարդան 48, հայ. (o)thš «ոչ» և unak
«ունեցող», այսինքն՝ «աղքատ, չունեցող»:

Pargev Արծրունի, Եղիշ. 150, Ղ. Փարս. 256; Անատունի, Փ. Բուգ. 72, Մ. Խ.
242, Գոմունի NP 15; հայ. pargev «պարզև, ընծա»:

Sag (տարբերակը Ség) Բարսի իշխանը, NP 25 (?), հայ. sag «սագ»
չափազանց անհաստատ է:

Sevuk Անձևացիքի մի իշխան Ղ. Փարս. 388, 389; Սևորդիքի (սեռ որդիք)
նախահայրը, Վարդան 81, *հմմտ.* Brosset, Collection I, 232; ծնթ.
հայ. sevuk «մուգ, սև» seav-ից «սև»:

Tirik Բասենի եպիսկոպոսը Փ. Բուգ. 270 (սեռ. Tirkan), հայ. tēr «տեր» + ik
վերջածանցը, այսպիսով՝ «փոքր տեր» (ինաստի առումով *հմմտ.*
հետևյալ անունները՝ Δόρυος, իգականը՝ Δόρυα, Κύριος և այլն):

Tiruk քահանա, Մովսիսի որդին, Վանանդի Չարիշատից, Մ. Խ. 266, հայ.
tēr «տեր» և uk վերջածանցը:

Tirair Խորձեանքից Մաշտոցի օգնականը, Korium 14; հայերենում կարող
էր նշանակել «տիրոջ այր», air -ով այլ անուններ են՝ Մրair
Աղվանքի քաղաքորդը, Փ. Բուգ. 103 (ուրեմն հավանաբար ոչ
հայերեն, չնայած այն հայերենում կարծես նշանակում է «մուրճի
մարդ»): Norair Մ. Խ. 43 (միայն հայկական նախնադարում):
Այստեղից էլ հավանաբար արդի Նորայր անունը, հավանաբար
նշանակում է «նոր մարդ», Νέανδρος; Zarmair Մ. Խ. 43 (նույնպես
միայն նախնադարում), արդյոք չի կարող նշանակել «հետ-
նորդներ»¹: Ամեն ինչ անհաստատ է: Մնացած-Tir-ով² սկսվող
վաղեմի անունները ստուգաբանորեն մութ են: Tirith-ը և Tiroths-ը
տե՛ս վերը: Tiranam (Ներսեսի սարկաւագը), Փ. Բուգ. 91, կարող էր,
ինչպես պարսկերենում, «Tir անունը ունեցող» նշանակելիս լինել,
սակայն այդ դեպքում այն պետք է՝ Tranam լինել (*հմմտ.* Trdat):
Սակայն այդ անունը Tir-ից դուրս բերելուն խանգարում է այն
միտքը, որ նա այդ դեպքում պետք է՝ Tran հնչէր: Tir-ով կազմվող
ավելի նոր անունները քրիստոնեական ժամանակաշրջանին են
վերաբերվում: Tiranun «Հիսուս Քրիստոսի անունը ունեցող», Tiratur
«Տիրոջից տրված», հմմտ. Xathšatur «Խաչից տրված», Astuatsatur
«Աստծուց տրված»: Գոյություն ունեցողներից մնում են հայկական
-ik³ և -uhi վերջածանցներով կազմված փոխառյալ երկրորդական
անուններ, 1. -ik վերջածանցով (նվազական անուններ):

Xosrovik մի իշխան, Ստեփ. Օրբ. II, 79; պարսկական Xosrov անունից:
Mōsisik Տիրուկի հայրը (տե՛ս վերը) Մ. Խ. 266, (սեռ. Mōsiskan) աստ-
վածաշնչային Mōsēs-ից:

Šušanik Աղուանքի իշխանուհին, Մ. Կղևկտ. I, 152; աստվածաշնչային
šušan = Σουσαννα Ղուկ. 8, 3; Ագ. 142, մի իշխանուհի, Ղևոնդ 46,
Ստեփ. Օրբ. I, 230, 235, 236, 281 և հաջ; Սիւնիքի իշխանուհի,
Աշոտի կինը:

Smbatik մի ասպետ Սեբ. 66, հայ. Սմբատից:

Vahanik կամ Vahan⁴, Կաթողիկոս Կիր. 49:

Vardik Մոկքի իշխանը, Aknik անվանված Սեբ. 109: Առաջինը գալիս է
Vard անունից, վերջինս՝ akn-ից «աչք» (այսինքն՝ «փոքրիկ Վարդ»

¹ Նաև Avarair գյուղի անունը Ղ. Փարս. 203; որ կարելի է տրոհել avar- «ավար» և air «այր»
բաղկացուցիչ մասերի. air «այր, տղամարդ» բառի կողքին կա նաև air «քարայր»:

² Tir աստծո կապակցությամբ *հմմտ.* Nöldeke «Pers. Stud.» I, 333:

³ պրս. ik-ով է կազմված հավանաբար Zaphranik-ը (Մոկքի իշխանի անունը, Ստեփ. Ասող.
178; saphran-ից «շաֆրան» կազմված) = պրս. zafarāni «շաֆրանաղեղին»:

⁴ Հմմտ. Vardan, նաև Vardkan, Կորիւն 14:

աչքիկ» անվանված Auglein¹): Միևնույն ik վերջածանցը կարող է հանդիպել հետևյալ սովորաբար շատուգարանված անուններում:

Babik (սեռ. Babkan), Միւնի, Փ. Բուգ. 250, 253, Ղ. Փարպ. 159, Մ. Կղնկտ. I, 1, 211; Ստեփ. Օրբ. I, 77 և այլն; *հմմտ.* Babgên (Babkên) և Babohts Ղ. Փարպ. և այլն (Bab միայն M.X. մոտ 59, «Urgeschichte-ում»):

Gagik Mamikonean Մեք. 56; Gazrik Dimakhsean, Եղիշ. 77, Abelean Ղ. Փարպ. 126:

Grigor Deranik անվանված, որը թարգմանվում է «հանդիսավոր խոստումով տիրոջից աղերսված»:

Deranik, Derenik Յհ. կթ. և Թովմ. Արծր., Ստեփ. Օրբ. I, 279; միայն որպես մականուն Աշոտի որդի Գրիգորի համար, *հմմտ.* Թովմ. Արծր. 280:

Kuntsik, մի վանական, Արիստ. Լաստ. 102; **Haidik** մի մարդ, Ղ. Փարպ. 595;

Nazinik² Բակուրի մի հարճ, Մ. Խ. 141 (!):

Šušik Գարդմանում Միհրանի մի հետնորդի՝ Վարդի դուստրը, Մ. Կղնկտ. I, 288:

Šeranik Աբասի հայրը Ստեփ. Օրբ. I, 261; (պարսկերեն է հնչում); **Thšmšikik** Demepikos, կայսր Կոնստանտինի կողմից մի հզոր զորքով Կարին ուղարկված (949 թ.) Ստեփ. Ասող. 166, հուն. Tzimisikes, բյուզանդական կայսր (969-976):

Džodžik վրաց. (!) իշխան, Յովհ. Մամիկ. 57, Ստեփ. Ասող. 180;

Sathinik (սեռ. Sathinkan) կամ Sarthenik, ալանական (!) իշխանուհի Մ. Խ. 126, 128; Թովմ. Արծր. 52:

Surik Հրսիծորի նահապետը, Փ. Բուգ. 104, N. von Gabeleankh NP 52; Vehik³ Մ. Կղնկտ. I, 221:

Vrik³ Հուսիկի որդու Պապի որդին, Փ. Բուգ. 48, 49:

2. -uhi վերջածանցով, urhi-ից (իզական⁴ սեռ. կազմող):

Xosrovuhi Անակի քույրը, Տիրան թագավորի կինը, Հակոբի մայրը, (Հակոբի, որի քույրը Askdne-ն (Վարդանի մոտ Sakdên⁵ է կոչվում), Չենոբ. 22, Վարդան 37, պարսկական Xosrov-ից):

Hamazaspuhi Մամիկոնեան, Hamazaspean-ի քույրը (ուրեմն՝ Hamazasp-ի դուստրը, Գարեգին Ռշտունու կինը, Փ. Բուգ. 172, 242, 243; Hamazasp անունից, որը հնչում է պարսկերեն:

¹ «Auglein»-ը Nöldeke-ի մոտ դիտվում է որպես սեմական անուն WZKM. 6, 313:

² պրս. nâz-ի «deliciae» դիմաց, որտեղից էլ nâzuk «teners», nâznî «delectans, delicatus, mollis»?

³ Ածանցված պրս. Vêh և *Vir- կարճ անուններից:

⁴ Իզական սեռի են ծառայում նաև -anoiš և -dux (= դուստր), որոնք, սակայն, պարսկական փոխառություններ են և նշվածների հետ կապ չունեն:

⁵ Հմմտ. պիլ. Kâmdên Horn, Sass. Siegelst. 33, X(u)rden ZDMG. 44, 663:

Hamaspruhi (?) իշխան Բարգեթի դուստրը, Ստ. Օրբ. I, 275:

Smbaturhi (և **Smbatanoiš**), Սմբատի դուստրը Մ. Խ. 115, Թովմ. Արծր. 46, Smbat անունից:

Tatšaturhi Արծրունի, Վարդան Մամիկոնեանի կինը, Սամուելի մայրը, Մ. Խ. 240; Նույնը՝ Tatšaturhi, Վահան Մամիկոնեանի կինը (sik), Սամուելի մայրը, Թովմ. Արծր. 68, Tatšat Արծրունեաց, Եղիշ. 15, Ղ. Փարպ. 256:

Tigranuhi Տիգրանի քույրը Մ. Խ. 56, Թովմ. Արծր. 38:

Zaruhi Տիգրանի կինը՝ Մ. Խ. 55 (հայ. նախնադար.) նաև՝ նույն վերջածանցով Thaguhi Ուտեցի (Բագնաց գյուղից) մի կին, Մ. Կղնկտ. I 196-198 = հայ. thaguhi «թագուհի», thagavor-ի (թագատր) իզականը: Ի վերջո՝ բերվում են ևս մի քանի անուն, որոնք Հայոց պատմության միայն նախնական ժամանակներին են վերաբերում, ինչպես Մ. Խ. (նաև նրանից օգտվող հեղինակների), որի պատճառով վատահեղի չեն որպես հանդիպող անուններ: Նրանք մեծ մասամբ վավարտվում են -ak՝ վերջածանցով, որն այստեղ ևս պետք է որ հավանական լինի:

Haik Հայերի նախահայրը էջ 12 և հաջ. «Հին Կտակարանում» = Օրինոն համաստեղությունը;

Pharox², **Thsolak** 28, **Garnik** 29 (գարն «գարն»), **Varž** 29, **Arbak**³ 42, **Havanak**; **Vaštak** (Vašt «ամբոխ, վաշտ»), **Haikak** (Haik-ից), **Ampak** (amp «ամպ»):

Gorak⁴, Գղակ 43, Pertš («պերճ, սքանչելի»), **Arbum** (arbunkh «արբունք»), **Bazuk** (բազուկ)⁵:

Hoy, Yusak (yois «հույս»), **Kaipak**, **Skayordi** (հսկայորդի) 44, **Paroir** («ըրբջան»), **Patšoitš** («պաժույճ»), **Kornak** 47, **Bab** 59, **Gisak** (gēs «վարս, գես») 123 և այլն:

Այս անունները ևս, եթե նրանք բնիկ են, դարձյալ այլ չեն, ինչ մինչ այս վերը թվարկվածները:

Ըստ այդմ՝ որպես մեր ուսումնասիրության արդյունք ստացվում են հետևյալ դրույթները:

¹ Ormazduhi Թովմ. Արծր. 62, Ormazdaxt-ի կողքին, մի պարսկական, Hormizd II թագավորի դուստրը, Փ. Բուգ. 160, 179, Մ. Խ. 223:

² Համեմատում են պրս. farrux-ի հետ, որը, սակայն, որպես իսկական կիրառական անուն, Xorox է հնչում:

³ Հմմտ. Αρβάκης (Xen. Anab. I, 7, 12, սմս. arbhaka «փոքր»):

⁴ Մի Գոռ Մարզպետունի, Չանչեանի մոտ II, 837:

⁵ Որպես պարսկական փոխառություն:

Չնայած նրան, որ հին հայերենը բարդ անուններ կազմելու իր կարողությունը պահպանել է նույն սահմաններում, ինչ հին պարսկերենը կամ հունարենը, կամ՝ գերմանական լեզուները. չնայած նրան, որ աշխարհագրական անունների մեջ ևս դեռ կան բազմաթիվ հին բարդություններ, այնուհանդերձ, անձնանունների մեջ չկա և ոչ մի հնդեվրոպական ձևով կազմված լրիվ անուն (ինչպես հուն. *Ἰππ-αρχος*), գերմ. *Wolf-gang*, գեմդ. *Keresâspa*=սնս. *Κρζάçva* «նիսար ձիերով»: Ուստի և անգամ հավանական չէ, որ սակավ քանակով պահպանված պարզ անուններից, եթե նրանք իսկապես բնիկ հայկական են, ապա լրիվ անունների կարծացման միջոցով ստեղծված «փաղաքշական» անուններ են (ինչպես հուն. *Ἰππος, Ἰππίας*, գերմ. *Wolf, սնս. Κρζα*), նրանք թերևս ի սկզբանե պարզ մականուններ կամ երկրորդ անուններ են եղել, ինչպես՝ հուն. *Κάπρος*-ը «վարագ, վայրի խոզ», *Ἰκτινος* «ցին, ուրուր», *Ατταγᾶς* «անտառակաբավ», *Δόναξ* «եղեգ»: *Σκροδόνυξ, Αστήρ* և այլն (Fick, Griech. Personennamen VI):

Հօգուտ դրա է խոսում նաև այդ անունների մեծ մասի իմաստը (*հմմտ.* «Արտոյտ, Արջառիկ, Խոճկորիկ, Սրջիւնիկ» և այլն) և առաջին հերթին այն հանգամանքը, որ նրանցից մի քանիսը միանգամայն հաստատ են, իսկ ուրիշները՝ հավանաբար միայն անունների կողքին դրվող մականուններ¹ կամ ծածկանուններ են: Սակայն, անշուշտ, պետք է ընդունել նաև, որ պարզ (մեկ հիմք ունեցող) բնիկ հայկական անունների մեջ դեռ նախնական փաղաքշական անուններ կարող են եղած լինել: Եղած օրինակները հանրագումարի բերելով՝ պետք է ասել, որ բնիկ հնդեվրոպական անուններ տալու ձևը հայերենում այլևս չի պահպանվել, այլ, ինչպես լատիներենում և լիտվերենում, կիրառումից դուրս է եկել: Հին իսկական և փաղաքշական անունները դուրս են մղվել օտար (սկզբում պարսկական, իսկ այնուհետև՝ քրիստոնեական) անուններով, որոնցից հայկական վերջածանցների միջոցով մի քանի նոր անուններ են կազմվել: Ավելի ուշ հանդիպող սակավաքանակ հայկական անուններ ի սկզբանե եղել են, կամ են միայն մականուններ կամ կեղծանուններ:

Այս դրույթի կապակցությամբ բացասական չպետք է համարել այն, որ արդի հայերենը դարձյալ լիովին, ինչպես *Astvatsatur*-ը (*Ալբարիկ*-ի որդի, *Brosset*=*Ալբրիկ*) Կիր. 91, *Xathšatur* ունի, Կիր. 106, 108 և այլն: *Astuatsatur*-ը հին հայերենում ուղղակի հասարակ անուն է² «աստծո կողմից տրված»

¹ *Հմմտ.* վերը *Aitseamn. Isxanik, Deranik*: Հին հեղինակները միմյանցից չեն տարբերակում անուններն ու մականունները, ինչպես այդ անուն էր ավելի ուշ շրջանում Վարդանը, էջ 140. «*Mxithar Gos*» մականունով (այսինքն՝ նոր մորուքով) Գամձակից:

² Նույնը վերաբերում է *Vanatur*-ին, ինչպես Ագ.-ի մոտ 623 «մի աստված»: Այն նշանակում է միայն «*der Gastliche*» հյուրընկալ, սրտաբաց *ἔξενος, ξενοδόχος*:

իմաստով և միայն ավելի ուշ է կիրառվել որպես հատուկ անուն (ըստ՝ *Θεόδοτος, Θεόδωρος*):

Այս քրիստոնեության կողմից մտցված¹ անունները, անկախ այն բանից, թե մեկ, թե երկանդամ են, ոչ մի առնչության մեջ չեն մտնում հին հայկական անունների հետ, որի շնորհիվ նրանք այստեղ խնդրո առարկա լինել չեն կարող: Մնացած արդի անունները ես թողնում եմ ուրիշների ուսումնասիրությանը²:

¹ *Հմմտ.* *Mxithar*= «մխիթարություն, մխիթարող»; = Սկրտիչ, *Karapet* (պարսկերենից) = մկրտող (այսինքն՝ Յովհաննես Սկրտիչ); *Theam thag* (Վարդան, էջ 57). *Martyrer* = Մարտիրոս «*der Herrn Krone*»:

² Օրինակ՝ *Tsaxtsax* = հին հայ. *Džaxdžax* «ջախջախված, մանրատված» *Tsamtsean*, հին հայ. *thšamithš* «չամիչ»:

ԱՐԻԱԿԱՆՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆԸ

1. հայ. **akn** «աչք»

Իմ «Հայերենի ստուգաբանություն» աշխատության մեջ **akn** «աչք» և **աճկ** «աչքեր» բառերը, չնայած նրանց ստուգաբանական պատկանելությանը, միմյանց անջատել են, սակայն իզուր, քանի որ քերականորեն ևս նրանք միևնույն հարացույցին են պատկանում: Ըստ ավետարանի այդ հարացույցը հետևյալն է՝

Եզակի թիվ	Հոգնակի թիվ
Ուղղ. akn (Մատթ. 5, 29; 6, 22; 18, 9; 20, 15; Մարկ. 19, 46; Դուկ. 11, 34)	Ուղղ. աճկ (Մատթ. 9, 30; 20, 23; Մարկ. 8, 18, 14, 40; Դուկ. 2, 30; 4, 20; 18, 41; 24, 16; Յովհ. 9, 10)
Հայց. անորոշ akn (Մատթ. 24, 44, 50; Մարկ. 15, 43; Դուկ. 7, 19)	Հայց. անորոշ աճկ (Մատթ. 9, 29; 19, 9; 20, 34; Մարկ. 8, 23; 9, 46; 12, 11; Յովհ. 7, 24)
Հայց. որոշյալ z akn	Հայց. որոշյալ z ačs (Մատթ. 13, 15; 17, 8; Դուկ. 6, 20; 16, 23; 18, 13; Յովհ. 6, 5; 9, 11, 14, 17, 32; 11, 41; 12, 40; 17, 1)
Սեռ. և տր. akan (Մատթ. 5, 38; 7, 3, 4; Դուկ. 6, 41)	Սեռ. և տր. ačac (Մատթ. 13, 16; Մարկ. 8, 25; Յովհ. 9, 6, 15)
Բաց. y akane (Մատթ. 7, 4; Դուկ. 6, 42)	Բաց. y ačac ;
Գործ. akamb (Մարկ. 9, 46)	Գործ. ačauk (Մատթ. 13, 15; Յովհ. 12, 40)

Այսինքն՝ **akn** հիմքը կիրառվում է միայն եզակիում, մինչդեռ **աճ-ը**՝ միայն հոգնակիում: Եվ ինչպես Ավետարանում է, նույնն է ընդհանուր ասմամբ նաև հայերենում՝ **աճ-հիմքը** երբեք եզակիում չի հանդիպում, մինչդեռ **ak-n-ը**՝ երբեք հոգնակիում: Բառարաններում բերվող **akunk**, **akanč** հոգնակի ձևերը, ինչպես բառարաններն այդ մասին պարզորոշ վկայում են, չեն հանդիպում

նաև ականավոր, այսինքն՝ հին մատենագրերի մոտ: Համենայն դեպս հին հայերեն **akank** մի հոգնակի ձև է հանդիպում, սակայն «թանկագին քարեր» իմաստով, և ևս մի **akunk**, սակայն «աղբյուրներ» իմաստով (օր. Փաստոս Բուզ., Վենետիկ, 1832, էջ 212, ներքևից 9-րդ տողը), այսինքն՝ այն իմաստով անմիջականորեն չի կապվում **akn** «աչք» բառի հետ: **Akn** բառի այս նախնական քերական ձևը հնադարյանի տպավորություն է թողնում, իսկ ինչ վերաբերում է **k-ի** և **č-ի** հերթազարկությանը, ապա այն հիշեցնում է հայ. ձևերը՝ **oko**, **uten**. **očese**, **hոգն**. **očesa**, **uten**. **očesū**, երկակի՝ **oči**, **očiyu**, **očima**, մինչդեռ ոմգայնացած և ոչ ոմգայնացած հիմքերի հերթազարկությունը հիշեցնում է սնս. **akšnás**, **akšābhis** ձևերը, կողքին՝ **ákši**, երկակի՝ **akši**, **akšyós**, **akšibhyām**; **asthnás**, **asthābhis**, կողքին՝ **ásthi** և այլն: Որպես «աչք» բառի թեքման հնդեվրոպական հարկ է ավելացել նաև Յոհ. Ծմիդոսի «Pluralbildung», էջ 406՝ եզ. ուղղ. **óki**, երկակի ուղղ. **aki**, եզ. **uten**. **aknós** և այլն, այստեղից հետևում է, որ հայերենի հոլովումը, ճիշտ է, ոչ անմիջականորեն, սակայն մասամբ շեղակի, կարելի է բացատրել այն, որ թերևս հայ. **akan-ը** կարելի է բխեցնել հնդեվրոպական **oknós-ից**, հայ. **ač-k-ը** հնդեվրոպական **oki-ից**: Համենայն դեպս հայ. հոգնակին՝ **աճկ** և այլն ոչ թե հնդեվրոպական հոգնակիի, այլ **h. t.** երկակիի՝ **oki-** հետևորդն է:

Մեկ այլ կերպ է բացատրել Բարթոլոմեոսն նույն հիմքերի հերթազարկությանը այլ հիմքերի հետ (BB. XV, 25 և հաջ.): Արդյոք նա իրավացի է, թե ոչ¹, անգամ նրա տեսանկյունից ելնելով, **akn-ի** թեքումը դյուրին է բացատրվում՝ եզ. տրական **akan-ը** հնդեվրոպական **okén** ներգոյականի շարունակությունն է, հոգն. ուղղ. **աճկ-ը**՝ որպես **h. t.** երկակի թվի ուղղական **oki-ի** շարունակությունը, մնացած ձևերը նորակազմություններն են, ըստ այս երկու ձևերի:

óki, **oknós** և այլն ձևերի հնդեվրոպական հարացույցի հարցում Յոհ. Ծմիդոսը կարող էր հենվել սնս. **ákši**, **ókšnás**, **qոթ**. **augins**, հայ. **akn**, հայ. **okno** և հուն **πρῶτον** ձևերի վրա (Pluralb. 108 և 398), եթե անգամ այդ հիմնավորումներից ոչ բոլորն են այնքան թարմ և հաստատուն, ինչպես այդ ցանկալի կլինեի²: Ընդհակառակը՝ սնս. **ásthi**, **asthnás** և այլն թեքումը այն տպավորությունն է թողնում, որ այն հնդեվրոպական չէ, քանի որ ազգակից լեզուները **n-հիմքերի** և ոչ մի հետք չեն ցուցաբերում³, և այդ պատճառով էլ այդ և նման դեպքերում կարելի է ենթադրել, որ հնդկական թեքումը նախ հնդկա-

¹ Հմմտ. ընդհակառակը՝ Pedersen KZ. XXXII 264:

² Սնս. **akši=qենդ**. **aši= h.t.** **okši**, կապակցությամբ **hմմտ.** իմ «Vokalsystem» էջ 168, և Collitz BB. XVIII, 226:

³ Մինչև հուն. **ὄσκαός-ը** «խեցեղեղ» (KZ XXXII 390), որը, սակայն, դժվարությամբ չի ծառայելու գրականության համար BB. XVIII 23 որպես ապացույց:

կան հողի վրա է առաջացել: Համեմայն դեպս, համապատասխան ենթադրու-
թյունն է՝ նախնական ռնգայիններից զուրկ հիմքերի ռնգայինների օգ-
նությամբ ածանցումը հայերենի հողի վրա կարելի է իրական համարել երեք
հայկական հիմքերի համար, որի համար պատմական հին հայերենը որևէ այլ
օրինակ, որին կարող էին ընդօրինակել, չի ցուցաբերում: Այդ հիմքերն են՝ յեր
«ձեռք» (հուն. *χεῖρ*), օտն «ոտք» (հ. է. pod), ժւր «զուռ» (*Θύρα*) և այլն, որոնց
հնագույն թեքումը էս այստեղ, առանց փաստացի տվյալների, կրեբեն:

Եզակի		Հոգնակի
1) յեր «ձեռք»		
<i>Ուղղ.</i>	յեր	յերկ'
<i>հայց.</i>		յերս
անորոշ	յեր	
որոշյալ	z յեր	z յերս
<i>ւեռ.-տր.</i>	յերին	յերափ
<i>բաց.</i>	i յերանե	i յերափ
<i>գործ.</i>	յերամբ	յերաւկ
2) օտն «ոտք»		
<i>Ուղղ.</i>	օտն	օտկ'
<i>հայց.</i>		
անորոշ	օտն	օտս
որոշյալ	z օտն	z օտս
<i>ւեռ.-տր.</i>	օտին	օտիփ
<i>բաց.</i>	y օտանե	y օտիփ
<i>գործ.</i>	օտամբ	օտիվկ'
3) ժւր «զուռ»		
<i>Ուղղ.</i>	ժւր	ժւրկ' (<i>Θύρα</i> , <i>Ղուկ.</i> 11, 7; <i>drunk'</i> <i>πύλαι</i> Մատթ. 16, 18)
<i>հայց.</i>		
անորոշ	ժւր	ժւրս
որոշյալ	z ժւր	z ժւրս (<i>Θύραν</i> Մատթ. 6, 6)
<i>ւեռ.-տր.</i>	ժւրան	ժւրափ
<i>բաց.</i>	i ժւրանե	i ժւրափ (<i>ἀπό τῆς Θύρας</i> Մատթ. 28, 2)
<i>գործ.</i>	ժւրամբ	ժւրակ' <i>Յուդ.</i> 20, 19

Որ ռնգայնացումն այստեղ նոր երևույթ է, վկայում են նաև այնպիսի բարդ
բառեր, ինչպիսիք են՝ *jer-a-kert* (յեր բառի համար), *dr-a-kič* (<*dur-a-kič* ժւր
բառի համար) և այլն, մինչդեռ *akn* բառը բարդ բառերի մեջ միշտ ռնգայ-
նացած է հանդես գալիս (որպես *akn-* կամ *akan-*):

Ուշադրության է արժանի այն, որ *յերկ'* և *օտկ'* հոգնակիի ձևերը իմաս-
տով, ինչպես նաև *աճկ'-ը*, նախնական երկակի թվից¹ կարող են սերվել: Այս
դեպքում, ինչպես սլավոններենում (*oči, očima*) և սասկրիտի (*akṣi, akṣibhyām*)
որպես հիմք գործելիս է եղել ուղղականը, այնպես որ այստեղ ռնգային
հնչյուններ չէին կարող առկա լինել: Այդպես էլ մնաց, երբ հետագայում
նախնական երկակիի ձևին հոգնակիի վերջնաածանցները հավելվեցին:

Այսպիսով, այն ենթադրությունը, որ նաև *ժւրկ'-ը* մի ավելի հին երկակիից
է գալիս (= դրան երկու փեղկերը), ոչինչ չի խանգարում:

Հմմտ. սնս. *dvārāu* «դարպաս»:

2) ավ. սճի

Ֆիրլինգերի կողմից (KZ. XXVII 335) կյանքի կոչված ավ. սճի «ականջ»
բառը, չնայած Գելլոների՝ այն ժխտելու ապարդյուն փորձերին (KZ. XXX
517), մինչ օրս էլ համեմատական լեզվաբանությամբ զբաղվող լեզվա-
բանների և իրանագետների մոտ շարունակում է իր չարդարացված գոյու-
թյունը: Թերևս, վերջապես, արդեն ժամանակն է այդ ուրվականի վերջը տալ:

Բարի անձանց «ականջի» համար Ավեստան կիրառում է այդ *gaōša* բառը
= *հպրս. gauša*, *պրս. gōš*, ահրիմանական արարածների համար, *karena* բառը
= սնս. *kārna* մի երրորդ բառ «ականջ» բառի համար՝ իրանականում հայտնի
չէ: Եթե ավ. սճի-ի բառը այդ իմաստն ունեցած լիներ, ապա մենք իրավունք
կունենայինք սպասելու, որ ավանդույթը այդ մասին որևէ բան պետք է որ
իմանար, սակայն այդ չկա: Այն այս բառը ավելի շուտ թարգմանում է պիլ. *hōš*
«բանականություն, կարծիք, իմաստ» բառերով (*հմմտ. ys. 9, 28*), և այդ
իմաստը հարմար է Ավեստայի բոլոր տեղերին, ինչպես դրանում կարելի է
համոզվել և Darmesteter-ի նորագույն թարգմանություններից: *Հմմտ. vsp.*
15,1' ava padō ava zaste ava uši darayadwem «պահեք ոտքերը, պահեք ձեռ-
քերը, պահեք Ձեր դատողությունը (լավ գործեր կատարելու համար)»; *ys. 9,*
28' geurvaya he padave zāvare, pairišē uši verenūdi, skeñdem šē manō
kerenūdi: «Խլի՜ր նրա ոտքերի ուժը, մթազնի՜ր նրա դատողությունը, ցնցի՜ր
նրա հոգին»; *ys. 43, 15; daxšat ušyāi tušnā maitiš vahišā* «թող ուշադիրը

¹ Ավեստերենում ևս *asī* «աջ» բառը միայն երկակիում է հանդես գալիս (*հայց. asī, գործ. asibya*, մյուս դեպքերում միայն բարդությունների մեջ՝ *xšvašaši* «վեցաչքամի»), եզակիում և հոգնակիում նրա դիմաց օգտագործվում է *dōiθra-* (< *di* «տեսնել»):

սովորի լավագույնը հասկանալ», Geldner KZ. XXX 321, 334; «*que l'intelligence du champion du bien ait un signe de reconnaissance*», Darmesteter, հաստատան չէ! ys. 62, 4 «Տն'ր, օ՛ կրակ, mastim spāno xšviwrem hizvām (urune uši), xratūm pasčāēta masitem և այլն», «իմաստություն, սրբություն, պերճախոսություն (հոգու համար դատողություն)», այնուհետև իմացություն; yrune uši այս բառերը տաղաչափությունից դուրս են ընկնում, ուրեմն՝ հետո են մտցված; yt. 1, 27' pairi uši vārayādewem, hām gava nidarezayādewem, hām zanva zembayādewem; մթագնե՛ք նրանց դատողությունը, թուլացրե՛ք նրանց ձեռքերը, ուժազրկե՛ք նրանց ծնկները; yt. 1, 3: = yt. 22, 38' uši (xratūm, hizvām) ahurahe mazdāo yazamaide dareθrāi (mareθrāi, fravākāi) māθrahe speθtahe; «մենք մեծարում ենք հիշողությունը (իմացությունը, լեզուն)» Ahura Mazda-ի, պահպանելու (ուսումնասիրելու, հրապարակելու) համար սուրբ խոսքը, yt. 11, 2' aši uši karena gava dvareθra zafare - աչքեր, ձեռքեր, ոտքեր, բերան (չար մարդկանց); yt. 14, 56' uši pairidārayeθiti, daθma hō pairi urvaēsayeθiti «մթագնել դատողությունը, թուլացնել տեսողությունը?» «ils ont l'intelligence paralysée, la vue égarée» (Դարմաստետեր):

Այս բառը եղել է նաև պարսկերենում, որտեղից էլ այն նախնական (Արշակունյաց) ժամանակաշրջանում հայերեն է փոխառնվել որպես սժ, սեռ. uši = հիշողություն, դատողություն, միտք, հին հայերենում մի շատ գործածական բառ, որը հանդիպում է նաև զանազան բաղաբառային մեծերում՝ šamb-սժ «զիժ, խելագար», ap-սժ «սպուշ», Anuš (berd= ամրոց) մոռացություն:

Միջին և նոր պարսկերենում այս բառից ստացվում է hōs¹ (huš) «խելացիություն, դատողություն, ոգի», տե՛ս պրս. hōšyār, hušyār «խելացի, զիտակից` (< ավ. ušidāra)», huštvār «հասկանալի», hōšmand «զիտակից, խելացի» և այլն:

Այսպիսով, մի այդպիսի սժի «ականջ» չի եղել ո՛չ զենդերենում, ո՛չ պարսկերենում, ո՛չ էլ իրանականում առհասարակ, հետևաբար ավ. սժի-ն չպետք է մեկնաբանվի ավ. aši-ով, այնպես, ինչպես այդ արել է իր Pluralbild.-ում Յոհ. Շմիդտը:

3) սնս. ah

Սնս. ah «ասել, խոսել», կիրառվում է միայն կատարյալում (āthha, āha, āhathus, āhatús, āhus, Վեդայում միայն՝ āha և āhús), Osthoff-ի կողմից դիտվում է որպես հայ. asem (Perf. 174-175), լատ. ajo, հուն. ἄ ^ῆ ձևերին համարժեք և այսօր ևս, շնորհիվ այս համապատասխանության՝ Ֆիքի («Wörterbuch»-ում I, IV հրատ. էջ 163) բխեցվում է հ. ե. agh-ից (Ֆիքի մոտ azha-), մինչդեռ Բեզենթերգերը այս կապակցությամբ նկատում է, որ սնս.

attha-ն ավելի շուտ հ. ե. adh, քան agh (azh) ձևն է մատնանշում:

Ես ևս արդեն մի քանի տարի է, ինչ սնս. ah-ն բխեցնում եմ հ. ե. adh¹-ից, և այն էլ շնորհիվ ավ. 2 բառերի, որոնք նշվում են Zand-Pahlavi Glossary» էջ 9-ում:

Այստեղ 9-րդ տողում հանդիպում է զենդ. paityāda բառը, որը քարգմանվում է պիլ. pasaxv - gōbešn «պատասխան ճառ» և ավ. paitiastō - vačāo, որը քարգմանվում է պիլ. patirešn - gōbešn = «ընդունելություն, ճառ»: Մինչդեռ paitiastō - vačāo-ն մի այնպիսի բարդ բառ է, ինչպես նույն տեղում՝ 6-րդ տող uxδō - vačāo-ն, և քանի որ այն նշանակում է «խոսքեր ասող», ապա մենք այն, եթե համեմատելու լինենք պիլ. քարգմանության հետ, պետք է քարգմանենք «խոսքերը ընդունող կամ նրանց հետևող»:

Այսպիսով, paitiasta բառը ստուգաբանորեն բազմիմաստ է և բոլորովին էլ հաստատ չէ, որ այժմ առնչվում է paityāda-ի հետ:

Ես այժմ ավելի հակված եմ այն համարել ավ. paityāstar-ի հետ, ys. 35, 9 = «ընդունող», paityāsti-, ys. 53, 3, vsp. 15, 2 paitiasti - Afr. 1, 14 = «ընդունելություն, հնազանդություն» (hմմտ. Baunack Studien I, էջ 356-357), որոնց հետ այն համընկնում է հնչյունապես և որոնց նա վերաբերում է ըստ պահլավերեն քարգմանության:

Այսպիսով, մնում է միայն paityāda «պատասխան», կամ ինչպես Glossary-ն է քարգմանում «պատասխանել», որպես սնս. ah = adh-ի հենարան: Քանի որ զենդ. āidi, yt. 8, 48, որը Գելդները KZ. XXX 323, ծնթ. 3-ում համարում է սնս. ah-ի հետ (որպես կրավորական կատարյալի 3-րդ դեմք, ys. 43, 13-ից համապատասխանում է vāci-ին), բավականաչափ հաստատ չէ:

4) ավ. aša

Մարմնի մասերի անուններ ցույց տվող բառերի թվում զենդ.-պահլավերեն քառարանում էջ 10, տող 6 «կործք» և «կոնատակ» (kašaibya kašaeibya-ի դիմաց, այսինքն՝ kaša բառի երկակի թվի տրականը) բառերի շարքում հանդիպում է ašayāo բառը, արական սեռի երկակի թվի սեռական հոլովը՝ aša, կամ իզական սեռի ašē, որը, ըստ քառարանում տրվող բացատրության, ցույց է տալիս մարմնի ուսի և կրծքի միջև գտնվող մասը:

Քանի որ այստեղ խոսքը չի վերաբերում ոչ կոնատակին (ավ. kaša) և ոչ էլ ուսին (ավ. supiti), ապա ինձ թվում է՝ մնում է միայն «ուս» հասկացությունը և ավ. երկակի թիվը aša կամ ašē, որոնք երկուսն էլ «ուս» են նշանակում: Այս

¹ Այժմ J. Leumann ևս իր «Etym. Wörterb. der Sanskrit-Sprache»-ում էջ 28-29 իմ դրդմամբ նույն կարծիքն է հայտնում:

դեպքում բառը վերաբերում է գերմ. Achsel «ուս» բառին, հրգ. ahsala և այլն, լատ. axilla, ala (axla-ից), որ հավանաբար կապվում է գերմ. Achse, սնու. àkša. հուն. ἄξων, լատ. axis և այլնի հետ:

Այստեղից ճիշտ է, որ Տ-ն՝ ավ. ašayāo, մատնացույց է անում հ. ե. ks-ն:

5) ավ. vikāya

Ֆր. Մյուլլերը WZKM. V 263 քննարկել է «վկա» հասկացությունը ցույց տվող պրս. և հայ. բառերը և քննարկել է նրանց համապատասխանության կապակցությամբ գոյություն ունեցող դժվարությունները: Մակայն հանգամանքներն ավելի են խճողված, քան Ֆր. Մյուլլերն է կարծում:

Եթե այդ բառերը հանգեցվեն ավ. և հայրս. *vikāsa-ին, ապա պիլ.-ում պետք է սպասել vkās (այսինքն՝ vikās) (*հմմտ.* պիլ. vnās = պրս. gunāh < *vināsa-ից), սակայն հանդիպում է gukās (կամ gūkās, gōkās)¹, ուրեմն, եթե այս մի հին ձև լիներ, ապա այն *vikāsa-ի հետ չէր կարող առնչվել ընդհակառակը՝ *vikāsa-ն նպրս. պետք է gūgāh տար (*հմմտ.* gunāh = *vināsa), մինչդեռ այստեղ հանդիպում է guvāh կամ guva, որն առնչվում է պազ. guvāh-ի հետ², guvāi «testimony» Shik.- Gum. - Vij. 247 և պիլ. guvak-ի «testimony»³:

Այսպիսով, պահլավերենում իրար կողքի հանդիպում են իրար նկատմամբ անհամատեղելի gūkās կամ gōkās և guvāk ձևերը: Հայ. vkay բառը չի կարելի այս երկուսի հետ համադրել (որպես պարսկական փոխառություն), չի կարելի համադրել նաև զենդ. *vikāsa-ն, որին հայերենում պետք է համապատասխաներ vkas կամ vkah ձևերը:

Հայերենի vkay ձևը, եթե այն անգամ պարսկական փոխառություն է, ենթադրում է հայրս. vikāya- ձևը, որպես իրեն նախորդող ձև, որն ավեստերենում պետք է հնչեր vīkāya - և այն իսկապես առկա է Zand.-Pahlavi-Glossary-ում: Այստեղ էջ 22-ի, տող 5-ում տրվում է vaikayō (եզակի ուղղ.) = պիլ. gōkās, իսկ էջ 43, տող 13-ում՝ vikaichē (եզակի սեռ.) = պիլ. gōkās, որով հաստատվում է vikāya - «վկա» իմաստով, զենդ. մի հիմք, որը լիովին համընկնում է հայ. vkay «վկա» բառի հետ: Որպես հ. ե. հիմք ձև կարող էր vikoy-o-ն նրա կողքին դրվել (արմատը koi, čei, čī) և ավ. vi-či-ra «որը կարող է վճռել» իմաստով:

¹ West Glossary and Index. էջ 280, Shikand-Gumanik-Vijar, էջ 247 և այլն:

² Minōkh Gl. 95.

³ Gloss. and Ind. էջ 273.

6) պազ. azg

«Shikand-Gumanik-Vijar»-ի էջ 236-ում հանդիպում է պիլ.-պազ. azg = «ճյուղ» բառը: Եթե ճիշտ է կարդալու ձևը, ապա այն վերաբերում է հուն. ὄσχος բառին, և եթե Բարթոլոմեոսն¹ իրավացի էր, ապա նաև սնու. ádga-«ցողուն», բառին:

Մակայն, եթե այն սխալ կարդացված azd բառն է (պիլ. d-ի և g-ի գրությունը չի տարբերակում), ապա այն = հուն. ὄζος բառին, հայ. ost «ստ», got. asts:

7) հայ. matani

«Մատանի» (Ring = Fingerring) հասկացության համար կիրառվող բառերը միանգամայն հասկանալիորեն մեծ մասամբ ածանցված են «մատ» հասկացությունն արտահայտող բառերից, այնպես որ հուն. δακτύλιος < δάκτυλος, պրս. anguštarī, anguštarin < anguš, նույնն է նաև հայերենում՝ matani (δάκτυλιος, Ղուկ. 15, 22), «մատանի, կնքամատանի, կնիք», matn բառից փերջածանցով ածանցված բառ:

8) նպրս. Iran

Պարսկական կայսրության այսօրվա անունը՝ Iran, այսինքն՝ irān, որը Ֆիրդուսու մոտ դեռ eran է հնչում, որքան ինձ հայտնի է ընդհանրապես նույնացվում է զենդ. airyana «արիական» բառի հետ: Հմմտ. նախկինում՝ Justi «Handbuch der Zendsprache», տե՛ս վերը՝ airyana, Spiegel «Eranische Altertumskunde» I, էջ 211, Altpers. Keilinschriften, էջ 207, այժմ նաև՝ Darmesteter «Le Zend-Avesta» II, էջ 6, ծնթ. (Փարիզ, 1892):

Մրան կարելի է հակադրել այն, որ այդ դեպքում հայրս. airyana-ն նպրս. ērān, irān պետք է հնչեր: Մակայն անկախ սրանից, մեկ այլ բացատրություն ինձ ավելի հավանական է թվում և բերված կարծիքի համեմատությամբ որոշակի առավելություն ունի, առավել ևս, որ այն հիմնականում վերաբերում է հնչյունական կազմին:

Հնագույն Սասանյան արձանագրություններում Ardašir I-ը (226-241) իրեն անվանում է malkan malka Airan = βασιλεύς βασιλέων Ἀριανῶν, իսկ նրա որդի Šāpūr I-ը (241-272)՝ malkan malka Airan u Aneran կամ (Chaldaeo-Pahlavi-ում) malkin malka Aryan u Anaryan, այսինքն՝ Երանի և Աներանի արքայից-արքա: Եթե այդ տիտղոսը թարգմանելու լինենք՝ պահպանելով հին պարսկերենի շարադասությունը, կստացվի՝ xšāyadīyānām xšāyadīyā Ari-

¹ Bartholomae ZDMG. XLVI 305.

yanām uta *Anariyānām, այսինքն՝ արիացիների և ոչ արիացիների ար-
քայից-արքա, որտեղից և պարզվում է, որ Iran = eran = պիլ. eran և aryān =
հայրս. հոգն. սեռ. Ariyānām և նախկինում նշանակում էր ինչպես արիացիներ,
այնպես էլ՝ արիացիների երկիր:

Հմնտ. հայրս. Mada = der Meder և Medien, Parsa «պարսիկ» և «պարսիկ-
ներ», հայ. Պարս-ք Pars-k' և այլն: Որ, այսպիսով, Iran-ը ի սկզբանե հոգն.
սեռական է, զարմանալի չէ, այլ միանգամայն օրինաչափ երևույթ է, քանի որ
միջին և նոր պարսկերենի հոգնակիակերտ -an վերջավորությունը գալիս է
հին պարսկերենի հոգնակի սեռականի -anām վերջավորությունից, *հմնտ.*
նաև՝ պրս. man «ես» = հայրս. manā «իմ» և այլն:

Արիացի և ոչ արիացի արտահայտությունները հայերը փոխ են առել
տարբեր ժամանակներում երկու անգամ, այն ժամանակ, երբ պարսիկները
դեռ Ariya-ն և Anariya-ն արտասանում էին որպես Ari-k' և Anari-k' (հոգն.
ուղղ.) և ավելի ուշ՝ Սասանյանների ժամանակ՝ Eran և Aneran, ինչպես
Եղիշէի մոտ Eran և Taneran է կարդացվում:

ՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ I

ՀԱՅԵՐԵՆԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՄ I

Պարսկական և արաբական փոխառությունները հին հայերենում

Իմ կողմից պլանավորված հայերենի քերականության առաջին հատո-
րում համառոտակի պետք է քննարկվեր հայերենի ստուգաբանությունը, երկ-
րորդ հատորում՝ հայերենի լեզվական նյութը՝ արմատական բառերը, վերջա-
ծանցներն ու նախածանցները, երրորդ հատորում՝ հնչյունաբանությունն ու
ձևաբանությունը, ինչպես նաև՝ շարահյուսությունը: Առաջին հատորի ներկա-
յացվող առաջին մասն ընդգրկում է պարսկական և ասորական փոխառու-
թյուններն ու օտարաբանությունները հայ մատենագրերի մոտ հանդիպող
պարսկական անունների հետ միասին, որոնք, շնորհիվ իրենց հնադարյան
ձևի, խիստ կարևոր են պարսկերենի հնչյունների պատմության համար: Երկ-
րորդ մասը կներկայացնի ասորական և հունական փոխառյալ և օտար բա-
ռերը, ինչպես նաև մինչ այս ստուգաբանված բնիկ բառերը, անվանացանկի
և ներածության հետ միասին: Նյութը գործնական նպատակով դասավորված
է այբբենական կարգով: Փոխառությունների դասակարգումն ըստ բառիմաս-
տի թերևս ավելի հետաքրքիր կլիներ, սակայն որոշ նկատառումներով այդ
ինձ նպատակահարմար չքվաց: Պարսկական բառերի հնչյունական հարա-
բերությունների կապակցությամբ ամենակարևորը ես նշել եմ իմ “Persischen
Studien” աշխատության մեջ (էջ 13-15), սակայն ես ինձ իրավունք եմ վերա-
պահում, ստուգաբանությունն ավարտելուց հետո, բոլոր փոխառությունների
հնչյունական հարաբերությունները մանրամասն հետազոտության ենթար-
կել, որը, հուսով եմ, որոշ լույս կսփռի հայոց լեզվի պատմության, որոշ բառե-
րի փոխառության հարաբերական ժամանակաշրջանի և այլ բաների վրա:
Այն ապացույցները, որոնք ես բերել եմ (էջ 3-8), ցանկի և հապավումների հետ
միասին, կոչված են տեղեկություն տալու առաջին հերթին այն մասին, թե որ
դարին են վերաբերում այդ փոխառությունները, ինչպես նաև նրանց կիրառ-
ման հաճախակիության մասին: V դարում քաղաքացիական իրավունք ստա-
ցած փոխառությունների կողքին կամ բերվում են բազմաթիվ այն աղբյուրնե-
րը, որտեղ դրանք հանդիպում են, կամ նրանք կրում են «հին և հաճախակի»
պիտակը, կամ նրանք տրվում են քաղվածքներում, կամ նշվում է և այլն, և
այլն: Այնտեղ, որտեղ նշվում են միայն մեկ կամ քիչ աղբյուրները, տեքստը գը-
նում է առանց «և այլն» հավելման: Ընդհանուր առմամբ պետք է ենթադրել, որ

այդ բառերը միայն մեջբերումներում են հանդիպում: Տե՛ս օր. **ataš** «կրակ» էջ 92, **barsmunk** “Barsomzweige” (միայն Եզնիկի մոտ) էջ 119, **kotak** «փոքր» էջ 173, **rat** «տեր» (իբրև մակդիր), էջ 233 **vzurk** «մեծ» էջ 246 և այլն: Ըստ այդմ էլ հնարավոր կլինի նաև որոշել, թե խոսքը վերաբերում է քաղաքացիական իրավունք ստացած փոխառություններին, թե որևէ օտար բառի լոկ տառադարձությանը:

Ես հավաքագրել եմ միայն այն զուգադրումները, որոնք ճիշտ են համարում, կասկածելիները նշել եմ որպես այդպիսիք, սխալները՝ ուղղակիորեն մի կողմ են թողնված: Ով այստեղ չի գտնի նախկինում տրված որևէ մի բացատրություն, չպետք է համարի, որ այն վրիպել է իմ ուշադրությունից, այլ՝ որ ես այն սխալ եմ համարում: Այն բանի համար, թե ինչու է այդ այդպես տրված, գիտակները հեշտությամբ իրենք հիմքեր կգտնեն, այլ դեպքերում ես յուրաքանչյուր անգամ պատրաստ եմ դրանք ըստ պահանջի բացատրել: Ով, անշուշտ, ինչպես այդ Մենեվիշեանն է պնդում (Հանր. և ամսօրեայ, 1896, էջ 183), որ իբր ինձ մոտ շատ ստուգաբանություններ բացակայում են և այդ անհիմն պնդումը փորձում է հիմնավորել հայ. **աղիս** *alius* «աղյուս» բառի պրու. *āxis* “later formatus”-ի և էլ ավելի անհաջող զուգադրություններով, ապացուցում է միայն նրա՝ այս ասպարեզում սեփական կարծիքի թերի լինելը: Կարևորը ոչ թե ամբողջ նյութի անքննադատ հավաքագրումն է, այլ այն, որը մետաղը շլաքից անջատվի և այն հեռացվի:

Պարսկական փոխառությունների մեծ մասը սերվում է պարթևական ժամանակաշրջանից և մեզ օգնում է վերականգնելու մի լեզու, որի հնչյունական հարաբերակցության շուրջ, նրա սեփական փաստաթղթերից ելնելով, մենք միայն շատ թերի գաղափար ունենք պահլավերենի մասին: Այդ տեսանկյունից նշված բառերը միանգամայն առանձնահատուկ նշանակություն ունեն և նրանց չի կարելի համեմատել օր. հունական փոխառությունների հետ լատիներենում կամ նույնիսկ նոր հունարեն փոխառությունները թուրքերենում և իտալերեն փոխառությունները պլեաներենում: Այս բոլորից այն լեզուների մասին, որոնցից նրանք փոխ են առնված, մենք շատ քիչ տեղեկություններ ենք քաղում, մինչդեռ պարսկական փոխառությունները մեզ շատ նյութ են տալիս պահլավերենի մասին: Շատ դեպքերից բերենք միայն մեկ օրինակ: «Միջոորդ», «պաշտպան», «դատապաշտպան» հասկացության արտահայտման համար Վեստը՝ պահլավերենի լավագույն գիտակը, բերում է **dātōgōb** բառը, ավելի ուշ՝ **yēdatō-gōb** կամ **dādak-gōb**, Ֆրիդրիխ Մյուլլերը, մի տարբերակի հիման վրա՝ *šatrānak*, որը պարսիկներն իրենք են *jādangō* արտասանում (պազենդերենում): Այն, որ այդ բառը պահլավերենում *jātāgōw* (գրությամբ՝ *jātāgōb*) է հնչում և, այսպիսով, բխում է հայրս. **yāta-gauba* ձևից, մեզ հայտնի է դառնում միայն հայերեն «ջատագով» *jatagov* (էջ 232)

փոխառության շնորհիվ, *hmdm*. ZDMG 46, 324: Հայերենի օգնությամբ է հաճախ հնարավոր դառնում նաև բացատրել պահլավերենի այն բառերը, որոնք պահլավերեն գրականության մեջ այսօր առկա մնացորդներում չեն պահպանվել, հաճախ չեն հանդիպում նաև ինձ և նոր պարսկերենում: Հմմտ. **պատուար** *patvar* (էջ 226), **պատրոյկ** *patroik* (էջ 227) և այլն: Իսկ նման բառեր հայերենում, անշուշտ, դեռ բավարար չափով կան, միայն թե շատ բառերի կապակցությամբ, որոնք ենթադրվում են որպես փոխառություններ, մենք մեր տրամադրության տակ դեռ միջոցներ չունենք հաստատ ապացույցներ բերելու, որ նրանք իսկապես փոխառություններ են: Այնուհետև, թե ինչ արժեք ունեն հենց այդ փոխառությունները պարսկերենի հնչյունաբանության հարցում, դրան ևս ես հաճախ եմ անդրադարձել իմ “*Persischen Studien*”-ում, հետագա ուսումնասիրությունները ևս մեզ այդ վերստին կապացուցեն: Քանի որ հայերենը մեծապես ճշգրտությամբ է տալիս այն պարսկերենը, որը խոսվել է պարթևների ժամանակաշրջանում, անգամ հայերենի այբուբենի թերի լինելու դեպքում, օրինակ այն, որ հայերենը չի տարբերակում երկար և կարճ ձայնավորներ կամ հայերենի ձայնավորների ասպարեզում գործող օրենքները այն բանի համեմատությամբ, ինչ նա ունի և ազատություն է առնում, միայն չնչին չափով կարող է վնաս պատճառել:

Պարսկական փոխառությունները շատ կարևոր են նաև այլ կապակցությամբ: Քանի որ, ինչպես այդ մասին արդեն շարադրված է էջ 16-ում, եթե իմ կողմից նշված բառերը բնիկ հայկական բառերից որպես փոխառություններ անջատվեն, ապա մեկընդմիջտ լուծված կլինի նախկինում գոյություն ունեցող բանավեճը՝ հայերենի դիրքի և նրա իրանական լեզուների հետ ունեցած փոխառնչման մասին: Որ այդ, սակայն, այդպես է, ինձ համար կասկածից դուրս է, և ես լիովին վստահ եմ պարսկերենին և հայերենին քաջ գիտակ և լեզվաբանորեն պատրաստված գիտնականների համաձայնության մեջ: Կարևորն էլ հենց այդ է: Որոշ բառերի կապակցությամբ կարելի է վիճել և դրանք կարող են պարսկական փոխառություններ բաժնից մեկ այլ բաժին փոխադրվել, հայերենի դիրքի մասին դատողությունը դրանից այլևս չի փոխվի:

Առանձին համարների կապակցությամբ թող ինձ իրավունք վերապահվի լրացումներ կատարել և մի քանի դատողություններ կցել, որպեսզի բացատրվեն այս հարցի կապակցությամբ այլ կարծիք ունեցող լեզվաբանների հետ, մասնավորապես սահմանազատվեմ Մարկվարտի նույնքան սրամիտ, ինչքան խորը գիտական “*Untersuchungen zur Geschichte von Eran*” *Philologus* 54 (N. F. 8) 489-527 և “*Beiträgen zur Geschichte und Sage von Eran*” ZDMG. 49. 628-672” աշխատություններում և Յուստիսի իրանական անունների մոնոմենտալ գրքում արտահայտված կարծիքներից:

Էջ 1-ի կապակցությամբ ես հայ. “f”-ն նշել եմ կամ որպես կոկորդային “f”,

և կարծում են, որ հայերենի երկու “լ”-ն “f” և “l” միմյանցից տարբերվում են որպես կոկորդային և քմային, «կոշտ և նուրբ» կամ «խուլ» և «ձայնեղ», ինչպես լիտվերենի և սլավոներենի երկու “l”-ն, *հմմտ.* Sievers Phonetik § 293 և 294: Հօգուտ այլ կարծիքի են խոսում՝

1) “f”-ն հետագայում համընդհանուր «γ» է տալիս (*հմմտ.* հհայ. Paulos = ժամանակակից արևմտահայերեն Բողոս Boyos):

2) Մինչդեռ հին փոխառություններում օտար “l”-ն, որպես կանոն, “f”-ով է արտահայտվում, **e** և **i** ձայնավորներից հետո հաճախ “l” է հանդիպում: Մեյեն (MSL 8, 299) “f”-ն դիտում է որպես “l” «հետին շարքի և implosive» և իրավացիորեն նկատում է, որ բնիկ հայկական բառերում բաղաձայններից առաջ նախկինում միայն “f” (ոչ “l”) է կանգնելիս եղել, էջ 27, 25: Արշամ Aršam անունը Մովս. Խորենացու մոտ (էջ 97 և հաջ.) = Arjam և Սեբեոսի մոտ (10), ըստ Յուստիի (Namanbuch էջ 29) և Կարիերի (Carriere, Légende d’ Abgar էջ 380) աղավաղված ասորական ԱԲՇԱՆ անունն է, *հմմտ.* Abgar Aršamay «Եղեսիայի արքա» «Թուրք առ Արգար»-ում, Վենետիկ, 1868, էջ 4 = Abgar Arjamay, Եւեթ. պտմ. էջ 61, ասոր. ԱԲՇԱՆ ԻՇԱՆ «Սև Արգար», “Philipps, the Doctrine of Addai”, էջ 1: Սակայն ակնհայտորեն հայրս. Aršama-ն հայերին հայտնի է եղել որպես Aršām էջ 28, 31: Artasēs-ը հայ հեղինակների մոտ հանդիպում է միայն որպես պարթևների և հայերի անուն, Artasir-ը (= պրս. Ardasir)՝ Մամիկոնյանների Մանուելի որդին մերթ անվանվում է Արտաշես Artasēs (Փ. Բուզանդ 242), մերթ՝ Արտաշիթ Artasir (Փ. Բուզանդ 256), իսկ ըստ Մ. Խորենացու, պարսից արքան հայ վերջին արքայի Արտաշեսի անունը Artasēs, վերջինիս թագադրության ժամանակ, փոխում է Artasir-ի: Այնուհետև Artasir-ը հանդիպում է որպես հայ-արշակունյան Արտաշես անվան պարսկա-ասսանյան համարժեք, և երկու անունն էլ ծագումով նույնական են: Հմմտ. W. Schulze. KZ 33, 219: Սակայն Յուստիին “Namenbuch” (էջ 36) և Մարկվարտը “Untersuchungen” (էջ 523 ծնթ.) այդ երկու անունները սահմանազատում են միմյանցից և Արտաշեսը Artasēs (Արտաշիս) մեկնաբանում է որպես հայրս. *Artaxšaya(n)s: Սակայն չափազանց տարօրինակ է, որ հայրս. անունը ոչ հին, ոչ միջին, ոչ էլ նոր պարսկերենում չի հիշատակվում, և պետք է, որ միայն հայերի մոտ պահպանված լինի, ինչպես նաև ընդհակառակը, որ հայրս. Artaxšaθrā-ն, եթե Արտաշեսից պետք է անջատել, ապա այն չպետք է հանդիպի որպես հայկական անուն, և պետք է, որ միայն պարսիկների մոտ պահպանված լինի, այնպես որ այդ անվան հետ հայերը պետք է ծանոթացած լինեին միայն Սասանյանների ժամանակաշրջանում՝ որպես պարսից արքայի անվան: Մրան ավելանում է նաև այն, որ *Artaxšaya(n)s-ը միջին պարսկերենում ոչ թե Artasēs, այլ *Artašai պետք է որ տված լիներ: Միջին պարսկերենի Artasēs-ին գալու համար, պետք

է որ հին պարսկերենում նրան *Artaxšayasa նախադրած լինեին, մի բան, որ ոչ-ոք չի անի: -էջ 30, 33 Մարկվարտն իր “Untersuchungen” աշխատության էջ 510-ում Արտաբավոց-ը դիտում է որպես Արտաբավոց-ի ավելի ուշ շրջանի ձև, ինչպես -βάρτε-ը (Μεγαβάτης, Αρταβάτας) որպես -πάτης-ի (Αρταπάτης) ավելի նոր ձև և այլն, որի պատճառով էլ $p > b$, v միջձայնավորային հնչեղացումը նա շատ վաղեմի է համարում, որը ես ին “Pers. Stud.” աշխատության մեջ (էջ 180) ինձ իրավունք վերապահեցի վերագրել միայն մեր թվարկության 4-րդ դարին: Զանի որ Հերոդոտի և Էսենոֆոնի մոտ՝ Αρταβάτης, Αρταβάτας (վերջինիս մոտ Αρταπάτης-ին զուգահեռ), Հերոդոտի մոտ Αρτάβαυοc, ձևերն են հանդիպում, ապա հնչեղացումը իրականում շատ ավելի վաղ ժամանակներին պետք է վերաբերեր, նույնիսկ այնքան վաղ, որ անհավատալի է թվում: Այսպիսով, ես ժխտում եմ այս վաղ հնչեղացումը նաև պարսկերենում: Այնուհետ, որտեղ հունարենում նույն մարդու համար տրվող անունների մեջ “p”-ի կողքին “b” է հանդիպում, ստիպված պետք է լինեն այդ հնչեղացումը հունարենին վերագրել և ենթադրել, որ հույները միայն ժողովրդական ստուգաբանությամբ են անունը ուղղել (հմմտ. παραι-βάρτε և այլն), ինչպես նրանք իրենց սովորաբար որոշ ազատություն են վերապահել պարսկական անունները վերաարտահայտելիս (*հմմտ.* Μεγα = հայրս. бага-, Σμέρδιc = հայրս. Bardiya և այլն): Որովհետև միայն հույներն են հաստատում այդ հնչեղացումը, որը միայն մի արամեերեն ԴԴՄՇԱ որպես ուղղում ԴԴՄԵԲ = հայրս. nipištam բավարար ապացույց չի գտնում, մանավանդ որ արամեական մյուս վկայությունները, ինչպես, օր. āxašdarpanayyā (տե՛ս էջ 208) դրան դեմ են խոսում: Ուստի և ես պնդում եմ, որ մի ինչ-որ հայրս. *Artapān- ձևը պարսկերենում հենց պարթևների ժամանակաշրջանում պետք է որ մնացած լինի որպես *Artapān և միայն որպես *Artapan էլ հայերեն է մտել: Զանի որ հայրս. “p”-ն միայն ռեզայիններից հետո է պահպանվել “b” տալիս (Pers. Stud. 179-180), մնացած դեպքերում, սակայն, պահպանվել են հայերենում պահպանվում է որպես “p”: Հատուկ -pān ձևն է որպես բաղադրության երկրորդ բաղադրիչ այնքան հաճախ հանդիպում պահպանվել են (Darmesteter Etud. iran. I 290) և հայերենում (մարզպան marzpan = պիլ. marzpan, պահապան pahapan = պիլ. pāspān, պարտիզպան partizpan և այլն, տե՛ս էջ 221), ուստի ոչ որի իրավունք չի վերապահվում ենթադրելու, որ այն իբր բացառության կարգով մի անգամ էլ- bān = -vān է տվել: Ընդհակառակը, ամեն ինչ խոսում է հօգուտ այն բանի, որ հայ. Արտաւան Artavan, թալմուդ. ארטאן, հուն. Αρτάβαυοc սերվում են հին պարսկերեն մի ինչ-որ *Artabnānu- ձևից: Հայրս. -pān-ի մասին տես, իմիջիայլոց, ստորև՝ էջ 208-ում:

Էջ 35. 49 Այնուհետև Γωτέρζե (դրամ) ZDMG. XLIX 628:

Էջ 37, 57 տե՛ս նաև՝ արար. *Dīvdad* Tabari-ի մտն և այլն: *Justi Namenbuch* էջ 85:

Էջ 38, 60 Հմմտ. *Justi Namenbuch* էջ 87:

Էջ 40, 68 Մարկվարտը այժմ իրավագիտուն մեթոմ է *Zadriades-Münze-ն* վկայակոչելով *Friedländer-ի Repertorium-ը* էջ 236, *Fabricius-ի* “*Theophanes von Mytilene*” էջ 130: Այսպիսով, իմ դիտողությունը այլևս չպետք է վարկած համարել և հայ. **Zareh-ը**, անշուշտ, պետք է համադրել *Ζαριάδρις-ի* կամ *Ζαριάδρις-ի* հետ: Մրանով հնարավոր է դառնում պր. *Zarēr-ը* հնչյունապես քերևս նրա հետ միավորել, մինչդեռ գործնականորեն այն վերաբերում է գեոն. *Zairivairi-ն*, որում ես չեի կարող չտեսնել պիլ. *Zarēr-ի* սխալ փոխակերպումը (*Marquart Untersuchung* էջ 523): Այս բոլոր փոխակերպումների հետ մինչև օրս ոչինչ չի պատահել! Հայ. Չարեհ-ը *Zareh* դեռ Սեբեոսի 6 մտն է հանդիպում = Մ. Խորենացի 60:

Էջ 41, 74 Այստեղ կարծես թե բացակայում է *Zradat-ը* (*Justi Namenbuch*, էջ 387): Բայց այն ոչ թե անուն է, այլ պարզապես ածական և նշանակում է «սխալ» *հմմտ.* Յովհ. կթ. էջ 65:

Էջ 42, 75 Այնուհետև Չրուան *Zrvan* = *Κρόνος* Մ. Խորենացի 15, ներքևից տող 10, **Չրուանեան** *Zrvanean* Կալիսթ. 45 = *Κρονίων* *Ilias* I 528 (*WZKM.* 9, 292), **Չրուան** *Zrvan* «Երկնքի որդի» *Philo de providentia* 73, 3 (այսինքն՝ *Kronos*, Ուրանի որդի):

Էջ 44, 82 Հայ. **Խոսրով-ը** *Xosrov* նախադրում է պր. *Xosrov* արտասանությունը (*հմմտ.* հուն. *Χοσρόης*), քանի որ *Xusrov-ը* հին հայերենում *Xsrov* (*հմմտ.* *dsrov* էջ 145), իսկ նորում՝ *Xusrov* պետք է տար:

Էջ 48, 99 Ըստ Մարկվարտի “*Untersuchungen*” աշխատության (էջ 515) *Phradates-ը* (*Curtius*) ուղղակիորեն *Αύτοφραδάτης-ի* դիմաց է կանգնած:

Էջ 50, 105 Պարսկերեն **Minōčīhr-ը** կարդա *Manōčīhr*, *Nöldeke* “*Das iranische Nationalepos*” էջ 37, նույն տեղում, ծանոթություն 2: Իմ «որն է աստծուց» թարգմանությունը Մարկվարտի *ZDMG* դիմաց ճիշտ է: Դերանվանական վերջնահանգը, ըստ *m-nū* = պր. *kē*, բացակայում է նաև արձանագրության մեջ 11, 12 և 14 տողերում:

Էջ 54, 115 *Mihrān* = *Mihrdāt-ի* կարճ ձևը, *Nöldeke Nationalepos* էջ 7, ծնթ., *Marquart ZDMG.* 49, 634.

Էջ 54, 116 *niv-salavurt-ի* կապակցությանը տե՛ս *Justi, Namenbuch* էջ 230:

Էջ 55, 119 *Yeztayar-ի* կապակցությանը տե՛ս բացի Յուստիի “*Namenbuch*”-ից (էջ 147), նաև պր. *izadyār-ը*, որպես *Vis u Rāmin* 121, 6 (*v. Stackelberg*):

Էջ 55, 121 Այդ անունները «Վարք սրբոց»-ում (II 124 և հաջ.) նշվում են որպես *Yiztibuzit, Maxoš* և *Beršapuh*: *Yiztibuzit-ը* սերվում է *Pārs a. a. O.* 128, այսպիսով, *Be(r)šapuh-ը* իսկապես ընկած է եղել *Pārs-ում*:

Էջ 56, 124: Այնուհետև, բացի *Ners-šapuh-ից* Վազար Փարպեցի 502, հանդիպում են նաև՝ *Ners-merh, Ners-mihr* Մովս. Կղնկտ. I, 96 (իրատ. Մոսկուա 10):

Էջ 61, 137 Այնուհետև հիշատակության են արժանի՝ *Šērgir, Sergir* արքա Վեկաց (*Lezghier*) Մ. Խորենացի 226, Մովս. Կղնկտ. I, 117 = պր. *šērgir* «առյուծներ բռնող, խիզախ»:

Էջ 63, 140 *Košm*, այստեղ ևս պր. *Kōmiš-ի* դիմաց, տեղանվան հետ նույնական է, էջ 46, 92, *Marquart ZDMG.* 49, 639:

Էջ 70, 158 *Rē* = *Rai* անվանն է վերաբերում նաև *ražik* անունը «*Rai-ից* սերվող» Վարք սրբոց II, 128, 4 = պր. *rāzi*, պիլ. *rāčik*, *Pers. Stud.* 226, հուն. *Ραζικηνή* “*Rai*”, ասոր. *bēš rāziqāyē* “*Rai*” *ZDMG.* 49, 628: Այս *ražik-ը* խոսում է հոգուտ Մարկվարտի *ZDMG.* 49, 664, թեև այն ավելի ուշ է հանդիպում և կարող է **račik-ի* ավելի նոր ձևը լինել: Եվ եթե պր. *tāzi* = հայ. *tačik* < *Tai* (ըստ Նյոդդերեի), չե՞ որ կարող է նաև *rāzi-ն Rai-ից* կազմված լինել: Ինձ մտն կասկած է հարուցում նաև այն, որ պիլ. *-Tk* վերջնահանգը դեռ միջին պարսկերենում պետք է որ նշված բառի քնայնացումն առաջ բերած լինի՝ **ray* = հայր. *Ragā* **rajik-ի* դիմաց (կամ՝ ըստ Մարկվարտի **rāy-ից* **rajik*): Գերադասելի կլիներ այդ դեպքում ըստ պր. *xūzi* = հայ. խումբիկ *xužik* = հայր. (*h*)*juvziya* < (*h*)*uvsza* պարսկերեն *rāzi-ն* = հայ. **ռաժիկ** *ražik* հետ տանելու դեպի հայր. **rajiya* < **ragiya* *Ragā-ից*: Սակայն ինձ միանգամայն բնական է թվում պր. *zi* վերջնահանգի դիմաց *ji-ի* առկայությունը ուղղակիորեն հետո, որտեղ այն նույն դերն ու նշանակությունն ունի, նույն ծագումը ենթադրել (պիլ. *čik, հմմտ. sagzi* < **sakčik*), եթե այն, ինչպես այս դեպքում է, հնչյունապես հնարավոր է:

Էջ 71, 160 **Ռուստամ** *Rustam* անվան համար բերված տարբերակներից հավելվում են նաև պր. *Rustahm* և *Rōsitam* ձևերը *ZDMG.* 49, 731, *հմմտ.* *Vullers Wb. s. v.*: Այժմ, սակայն, **Ռուստամ** անունը ևս (ըստ *Justi-ի Namenbuch-ի* էջ VIII, *Nöldeke, Nationalepos* էջ 81) հարաբերակցվում է իրեն մոտ *Rōdāba* անվան հետ, և քանի որ *Rōdāba-ն* գալիս է մի ենթադրական **Rōtāpak-ից*, *Rustam-ը* հարկ է հետ տանել դեպի *Rōtastahm* (*Nöldeke* նշված տեղում) = հայր. **rautastaxma*, ինչպես ես այդ արդեն արել եմ իմ “*Pers. Stud.*”-ում էջ 251: Այսպիսով, ես Մարկվարտի հանդեպ իրավացի եմ *ZDMG.* 49, 643:

Էջ 73, 167 Այնուհետև արժանահիշատակ է հայ. **Սնրսառ** անունը, եթե այն, ինչպես այդ ենթադրում է *Justi-ն* իր *Namenbuch-ում* (314), սերվում է պարսկերենից = *Sunbād* և *Sunfād*, այսինքն՝ *Sunpād* (?), Մարկվարտը (*ZDMG.* 49, 661) ըստ այդմ սույն անունը մեկնաբանում է որպես «չնից պաշտպանված», այսպիսով, նա այն նույնական է համարում հայր. **su(n)pāta* կամ **sunapāta?* ձևերի հետ: Սակայն անհավանական է թվում, որ պարսկերենում իրա-

նական sun- բառի թերական ձևը միայն այստեղ պահպանված լինի (զենդ. spā, սեռ. sūnō), որը արևմտապարսկերենում առհասարակ միայն պրս. sag < *sak-, med. c. ակ-α, kāš., esbā, espā և նմանօրինակ ձևերով է հանդիպում (Horn, Grundriß, էջ 164):

Էջ 75, 174 Եղիշէի Յովհաննիսեանցի հրատարակության մեջ (էջ 12), ինչպես սովորաբար անվանվում է Վռամշապուհ Vramšapuh, ոչ Stahrašapuh:

Էջ 75, 176 Չենդ. vərəθraγna-ն հայերենում հանդիպում է որպես **Վահագն** Vahagn, որպես **Վահրամ** Vahram (Սասանյանների ժամանակաշրջանի փոխառություն, այն ժամանակ միայն որպես պարսից անուն հանդիպող) և **Վռամ** Vram: Առաջին երկու ձևերը մեկնաբանված են էջ 77-78-ում: Սակայն ինչպե՞ս է մեկնաբանվում **Vram**-ը: Մեյեն (Revue critique 1 Juni 1896, Nr. 213) **Vram**-ի կողքին որպես համարժեք ձև ***Vuram**-ն է դնում: Զանի որ “r”-ն, եթե միայն այն “n”-ից առաջ չի կանգնած, օտար բառերի մեջ օրինակաբար միայն այն “n”-ից առաջ չի կանգնած, օտար բառերի մեջ օրինակաբար **Vram**-ը ***Vuram**-ի վրայով հետ տանելով, կարելի է հանգեցնել պիլ. մի ***Vurhram** < ***Vhran** ձևի: Հմմտ. արշակունյան **Varahrān**-ը սասանյան **Vahrām**-ի կողքին: Անդրեսար և Մարկվարտը հակված են այստեղ բերել նաև միայն հայերի մոտ վկայակոչվող **Վահան** Vahan անունը, *hmmn.* ասոր. Varhān, Hoffmann Ausz էջ 39: Սակայն այդ ինձ համոզիչ չի թվում:

Էջ 80, 181 Այնուհետև արժանահիշատակ է **Վասսուտրա** Vasavurt անունը Ղազար Փարպ. 495, *hmmn.* niv-salavurt:

Էջ 84, 194 -Հմմտ. **Amsačan**-ը Brosset Collect. II, 173 (?):

Էջ 85, 197 Դրան համապատասխան այստեղից կարելի է դուրս բերել նաև **Վիրոյ** Viroy անունը, աղվանական մի ուն կաթողիկոսի անուն, Մովս. Կղնկտ. I, 259 և հաջ. = պրս. Vīrōi, Justi Namenbush 371, v. Stackelberg, Über Vīs u Rāmīn (ռուսերեն), էջ 14:

Էջ 88, 209 Հայ. **Տիրան**-ը Tiran պետք է որ **Tigranes**-ի (հայրս. *Tigrāna-) միջին պարսկական ձևը լինի, *hmmn.* պրս. tīr «նետ» = զենդ. tyri-, ըստ Մարկվարտի ZDMG. 49, 655 (?): Եթե միայն այդ անունը Արշակունիների ժամանակաշրջանից չի գալիս, ինչպես ես էի ենթադրում, կամ բնիկ հայերեն է:

Էջ 89, 212 և հաջ. հայ pāi-ը = պրս. farr չի կարելի, ինչպես այդ Մարկվարտըն է անում ZDMG. 49, 667, հետ տանել դեպի հայրս. *frānah-ը: Հայրս. *frānah-ից պետք է որ պահլավերենում *fran- տար = հայ. *hran և միայն նոր պարսկերենում պետք է այն farn- տար, տե՛ս Pers. Stud. 173-174: Եվ ընդհակառակը, պրս. farr = haj. p’ ai- k’ իրենից առաջ ենթադրում է պիլ. farr-ի առկայությունը, որը հնչյունապես կարող է հետ գնալ միայն դեպի հայրս. farnah-ը: Հույներն այդ **farn**-ը սկզբում իրավացիորեն արտահայտում էին **φάρν-**, **φερν-** (**Φαρνάβασος**) տարբերակներով, սակայն հետագայում հաճախ (ելնելով

հուն. φέρν-ից?) վերափոխել են **φραν-**, **φρεν-** (**Ἀρταφρένης**, **Βαρζαφράνης**) տարբերակների: Այստեղ ևս ոչ թե պարսիկները, այլ հույներն են, որ պարսկերենը կամայականորեն փոփոխությունների են ենթարկել:

Էջ 94, 10 -ական -akan վերջածանցից բացի, թերևս նաև **-ակ** և **-իկ** վերջածանցները պետք է որոշ դեպքերում որպես փոխառություններ արժեքավորվեն: Մրան ես հետագայում մեկ այլ տեղում կանոնադրաբար: Որոշ գիտնականներ (Մառ, Մեյեն) փոխառություն են համարում նաև **-արան** -aran վերջածանցը և այն նույնացնում են պրս. dān-ի հետ «տեղ», «աման», «անոթ» (*hmmn.* ābdān, namakdān), զենդ. -dāna- (awždāna- բառի մեջ), *hmmn.* Horn, Grundriß, էջ 118: Որևէ վերջածանց չի կարող մի այլ լեզվից ուղղակիորեն փոխառնվել, այլ ավելի շուտ՝ նախ օտար լեզվից պետք է փոխառնվեն մի քանի անգամ գործածական կամ այդ ածանցով բաղաբանվող բառեր, որոնցից փոխառնող լեզուն հետագայում այդ վերջածանցը անջատում է և կիրառում նոր բառեր կազմելու համար: Սակայն հենց **-արան** վերջածանցով բաղաբանվող բառերը գրեթե առանց բացառության բնիկ հայերեն են, իսկ այն փոքրաթիվ բառերը, որոնք պարսկերեն են, այն տպավորությունը չեն թողնում, որ նրանք իբր այդ վերջածանցի հետ են մտել հայերեն: **կերպ-արանք** kerp-arank «արտաքին», «ձև», «տեսք» և այլն, բաղաբանված **կերպ-ից** «ձև», «կերպ», «կերպար» և այլն (տե՛ս էջ 168), **ճնարան** čemaran **ճն**-ից «զբոսնելը» (էջ 189), **վարժարան** varžaran «դպրոց» (= վարժության տեղ) **վարժ-ից** «վարժություն», «ուսում» (էջ 245), **վկայարան** vkayaran «նահատակների մատուցող» **վկայ** բառից (էջ 248): Սակայն **dān**-ը պարսկերենից հավանաբար որպես զոյական պետք է փոխ առնված լիներ և միայն հայերենում վերջածանց տար: Այդ դեպքում **dān**-ը բաղաբանություններում **a-dān** ձևով պետք է հանդես գար և ոչ թե՛ **արան** aran: Լիովին չի համապատասխանում նաև իմաստը, քանի որ պարսկ. **dān**-ը նշանակում է 1. անոթ, պահպանակ, 2. տեղ, հմմտ. outep **don** Verfasser Etym. und Lautl. der osset. Sprache էջ 36, սակայն հայ. **արան** aran = «տեղ» կամ «միջոց», կամ՝ համեմատաբար ավելի վերացական իմաստով, *hmmn.* **առաքելարան** ařak’ elaran «առաքելների գերեզման», **գործարան** gorčaran «արհեստանոց», «գործիք» **գործ** բառից, **զգայարան** zgayaran **զգան** բառից, **յիշատակարան** yišataran **յիշատակ** բառից, **տետարան** avetaran **տետիք** avetik’ «ավետիս» բառից, **կապարան** kaparan «կապանք» **կապ**, **կապեմ** բառերից և այլն: Եվ վերջապես, եթե **-արան**-ը սերվում է պահլավերեն a-dān-ից, ապա նոր պարսկերենում նրան -yān կամ -han պետք է համապատասխաներ, *hmmn.* պրս. Ispandiyād = հինպ. *Spantadāta, հայ. **Մալանդիատ** Spandiat, ավելի վաղ թերևս՝ Spandarāt (էջ 74); հայ. **դաստիարակ** dastiarak, պրս. dastyār «օգնական», հայրս. *dastadāra (էջ 135) և այլն. տե՛ս իմ «Pers. Stud.» էջ 200, 201: Այդ -yān-ը, սակայն, պարսկերենում չի հանդիպում,

այնտեղ հանդիպում է **dān** Vuller, Gramm. էջ 229, Darmesteter, Etud. iran. I էջ 290, իսկ այն բաղադրությունները, որտեղ այն հանդիպում է (*ābdān, maidān, atašdān* և այլն). ակնհայտորեն պահլավերենի և նոր պարսկերենի նորակազմություններն են: Ելնելով այս դատողություններից՝ հայ. *a-ran* = պիլ. պրս. *-dān* հավասարունը, որպես անհիմն, ես չեմ ընդունել: Նմանօրինակ դեպքերից ելնելով՝ ես մերժում եմ նաև (ըստ բանավոր տեղեկության) Անդրեասի կողմից բերվող հավասարունը, համաձայն որի՝ հայերեն **արեն** *arēn* վերջածանցը, որը գալիս է *w + rēn* *a+rēn*-ից (*hūmūt. yunarēn* յունարեն) = զենդ. *daenā* «հավատ», պրս. **dm** «կրոն», հայ. **դեն** *den* «կրոն, հավատ», «օրենք»: Մակայն ես կարծում եմ, այստեղ սխալմունքից մինչև ճշմարտություն մի չնչին քայլ է մնում: Իսկական հայկական վերջածանցը ես ոչ թե *-rēn*-ի, այլ *arēn*-ի մեջ եմ տեսնում և այն հավասար եմ համարում պիլ. **adēn* = սասանյան *āyēn* հետ, որը ես վերստին հայ. *-ayenpet* «արարողության պետ», «ծիսակատարության ղեկավար» բառի մեջ եմ գտնում, *Pers. Stud.* 11, *Arm. Etym.* էջ 59, Nr. 119 (*šahr-ayen-pet, pars-ayen-pet*, ասոր. *tuḥmīn-āimbeḏ*), *Justi, Namenbuch* էջ 16 (*Ἀντιβέδης*) և պրս. *āyīn* «օրենք», «կանոն», «բարք», «սովորույթ», «կարգ ու կանոն», չնայած *Pers. Stud.* էջ 11-ում քննարկված պահլավերենի ձևերի, որոնք ես այժմ այլևս հեղինակավոր չեմ համարում: Այսպիսով, պահլավերենում հանդիպող ձևը ես կարող եմ որպես *ādēn* և այն համարում եմ հայրս. **ādainā*-ի հետ: Հայ. *yunarēn*-ը, այսպիսով, նշանակում է «հունական ձևով», իսկ լեզվի վերաբերյալ հատուկ սահմանափակումով՝ «հունարեն»: Եթե այդ *arēn*-ը միանում է «ի»-ով ավարտվող գոյականների հետ, ապա հայերենի հնչյունական օրենքների համաձայն «*ia*»-ն պետք է «*e*» տա, այսպիսով *ebrayeci + arēn = ebrayecerēn* երբայերեն, համապատասխանաբար՝ *asorerēn* ասորերեն՝ *asori*-ից և նրանց անալոգիայով նաև՝ *daḥmaterēn* լատիներեն, *parskerēn* պարսկերեն: Հայերենը այդ «արեն»-ը *arēn = պիլ. ādēn* փոխ է առել որպես գոյական և այն դարձրել է վերջածանց:

Էջ 102, 40- Հայ. **երախտիք** *eraxtik* = սնս. *rakti-* տե՛ս WZKM. 5, 6-ում:

Էջ 106, 54- **Ասխտեսալ** *apxteal* = *τεταριχουμεινός* Եսեք. քր. Առիստրի հրատ. I. էջ 130, 5:

Էջ 112, 81- Պիլ. *avērān* (“*v*”-ով, ոչ “*p*”-ով) *Phl. Min.* 20, 7; 21, 5:

Էջ 112, 83- Հայ. **օտար** *autar* բառը Ֆրիդրիխ Մյուլլերը դիտում է որպես բնիկ հայերեն = սնս. *antara-* (WZKM. 9, 299), մինչդեռ Մեյեն այն համարում է փոխառություն = պիլ. *yavītar* (*Revue critique* 1896, էջ 423): Այս բառի տակ Մեյեն հավանաբար նկատի ունի West, *Gl. and Ind.* էջ 284-ում նշված բառը: Մակայն այն հարկ է արտասանել *yuttar yut* = զենդ. *yūta-* «անջատ» բառի բաղդատական աստիճանը, պրս. *juḏ, hūmūt.* Horn, *Grundriß* էջ 94:

Էջ 113- Այստեղ պակասում է **օրեն** *aurēn, օրենք* *aurēnk* «օրենք», «կա-

նոն», «սովորույթ» բառը, որը Մառը, Մեյեն և Անդրեասը հավասարության մեջ են դնում պրս. *āyīn = հայրս. *abi-dainā* (Andreas) բառի հետ: **āyīn** բառին ես վերևում արդեն անդրադարձել եմ և դիտել եմ որպես = հայ. **արեն** *arēn*, հայրս. **ādainā*: Անդրեասի կողմից ընդունված հայրս. **ābidainā = *awīdainā = պիլ. *awdēn* ձևի *ādēn = հայրս. āyēn* անցման ապացուցման համար ես բավարար չափով համամնաններ չունեմ, տե՛ս *Pers. Stud.* էջ 182-183: Մակայն հայ. «օրեն»-ը *aurēn* ինքը կարող է հետ տարվել դեպի հայրս. **awīdainā, hūmūt.* հայ. օսարդ *ausard = հայրս. *awisarda-*, *Pers. Stud.* էջ 183: Արդյոք ճիշտ է այն հավասարունը, համաձայն որի՝ ինչպես հայրս. **ādainā = հայ. arēn*, այնպես էլ՝ հայրս. **awīdainā = հայ. օրեն* *aurēn*: Այստեղ թերևս հարկ է նշել նաև **օրհնեմ** *aurhmem* «օրհնում եմ» բառը, որը Մառը և Մեյեն հավասարության մեջ են դնում զենդերեն *āfrīnāmi* «օրհնում եմ» ձևի հետ: Ինձ կասկածելի է թվում *aurh-* = պրս. *āfr-* հավասարունը: Այդ ապացուցելու համար Մեյեն վկայակոչում է հայ. **պատուհաս** *patuhas* < * *paturhas, hūmūt.* զենդ. *paitifrasa-* (?):

Էջ 134, 163 - Հայ **dandank** «ատամներ» Մովս. Կոնկտ. I 322, 2 ներքևից (Մովսևյան, էջ 159, 3):

Էջ 141, 194 - Հայ. **դետ** *dēt* «լրտես», «դիտորդ» = զենդ. **daeta* որպես **daetar*-ի ուղղական հոլով, *hūmūt.* զենդ. *vīdaeta* «դիտորդ», նույն տեղում 10, 46:

Էջ 154, 248 - Հայ. **բջնամի** *t'snami* (*t'smani*-ի դիմաց) գտնվում է **բջնամանք** *t'snamank*՝ բառի ազդեցության տակ, Meillet, *Revue critique* 1896, էջ 423:

Էջ 159, 274 - Հայ. **խաար** *xavar* «խավար», «նթրություն» = ասոր. *xabbārā* «թանձր մատախուղ», «ծուխ» “*caligo*” (?) (ըստ Նյուլդեքեի): Պետք էր սպասել **xabar*:

Էջ 179, 341- «*h*»-ն միայն բնիկ հայկական բառերից առաջ չի դրվում, այլ նաև՝ փոխառություն ձևերից առաջ, *hūmūt.* *haluē = հուն. ἄλός*:

Էջ 188, 374- **ճատրակ** *čatrak* «շախմատ» բառի հետ *hūmūt.* հուն. *ζατρικιον* (*Sophokles Wb.*):

Էջ 190- Սրանց պետք է վերաբերի թերևս նաև **ճշմարիտ** *čšmarit* բառը, եթե ըստ Մառի այն հավասար լինել զենդ. *čašma + dīta* «ականատես լինել», պիլ. *čašmdīt* «տեսք», «երևույթ» *Bdh. Gl.* էջ 118: Մակայն պիլ. *čašmdīt*-ը հայերենում պետք է ներկայացվեր **ճաշմարիտ* *čašmadit* ձևով և ընդհակառակը՝ հայ. **ճշմարիտ**-ը *čšmarit* պահլավերենում պետք է ներկայացվեր **čišmadīt* ձևով: Որպես այս թեզի ապացույց՝ մեր բերած պրս. *čišm = čašm* հավասարունը (Horn, *Grundriß*, էջ 98; իմ *Pers. Stud.* 128; Nöldeke, *Nationalepos* 55) հազիվ թե հիմնավոր է, մանավանդ որ հայ. *čšmarit* բառը կարող էր կետ առ կետ ազգակից լինել հայ. *ճիշտ* *čišd, ճշգրիտ* *čšgrit* բառերի հետ:

Էջ 191, 392 - **mang** «նեղություն», «խարդավանք» բառը = պրս. **mang** բառին, *hūmūt.* հայրս. *mēng* «խարդություն», *Fick Wb.* 2, 210:

Էջ 208, 461- Այս կապակցությամբ *հմմտ.* Joh. Schmidt, Kritik der Sonantentheorie, էջ 106, որտեղ ենթադրվում է, որ հայրս. *xšaθrapāvā «աատրապ» բառի թույլ հորվի հիմքը պետք է xšaθrapān- < xšaθrapāvn հնչեր: Մրան համապատասխանում է այն, որ արհեստական բաղադրություններով pān- հիմքն է նշվում և ոչ թե pāna- rānapānō, šōiθrapānō- հոգնակի ուղղական, pešurpāna- երկակի ուղղական: Եվ հենց pān- ձևին (որն ինչպես ես տեսնում եմ միշտ «պաշտպանող» և ոչ թե «պաշտպանված» է նշանակում) է, ի վերջո, հետ զնալով հանգում պիլ. -pān-ը = հայ. - պան - pan (էջ 221, 505): Նույն այս ձևով են միմյանց հետ կապվում նաև հայրս. xšaθrapāvā ուղղականի և երբայերեն - արամեերեն āxašdarpənīm, āxašdarpənayya = αατράπαι ձևերը որպես նույն հարացույց: Ես հաճությամբ կուզեմայի այն նաև հուն. αατράπης = հայրս. ուղղ. xšaθrapāvā-յի կողքին դնել, սակայն դրան դեմ են խոսում հին իր. chatrapa, լիլ. χssadrapa, KZ. 32, 216, հայ. šahap (*հմմտ.* սնու. kšatrapa):

Էջ 216, 494 - Հայ. յիշեմ yišem «հիշում եմ» ձևը *y-uš-em-ից չի գալիս, ինչպես այդ ուղում է Բուրգեն Bugge IF, 1, 459: Փոխառությունից դժվար թե կազմվեր մի այնպիսի ածանցում, ինչպիսին է յիշատակ yišatak բառը: Ինչպես նաև, հայերենի հնչյունական օրենքների համաձայն, *yūšem-ը պետք է որ *yšem (*հմմտ.* yhi, yšem և այլն) կամ yušem տար: Մանավանդ որ յիշե yišē-ի «հիշում է» կողքին կա նաև y uš ē «հիշողության մեջ է», տե՛ս նույն տեղում:

Էջ 225, 521 - Այնուհետև նաև paštgam draç = προπολυαίον Philo de providentia էջ 61, 12:

Էջ 226, 523 - Հայ. պատուար patvar բառին է վերաբերում Ռ7107Ժ Land Anecdota syriaca III 207, 20; 208, 12, տե՛ս Carrière Légende d' Abgar, էջ 413:

Էջ 227, 528 - Այստեղից հետևում է, որ հայ. պատուաճակ patručak 1) մորթի ենթակա անասուններ (ոչխարներ, այծեր և այլն) = բալնուդ. patrōzā Levy Neuhebr. und chald. Wb 4, 33a; 2) «քախտ», «ճակատագիր», *հմմտ.* հայ. տոճիկ ročik «օրավարձ», «կենսամթերք» = պրս. rōzī (տե՛ս էջ 234) Fr. Müller, WZKM. 8, 286: Եվ ընդհակառակը, ես կասկածելի եմ համարում Ֆր. Մյուլլերի հավասարումները, որոնց համաձայն հայ. պարզ parz, պարզեմ parzem = պրս. pālāyam WZKM. 9, 397 և հայ. պարս pars = բալնուդ. Lw. parsakā «օղակ», «թակար» WZKM. 8, 287: Քանի որ 1) պրս. pālāyam-ի դիմաց հայերենում գոնե *parzayem պետք էր սպասել, *հմմտ.* պրս. farmāyam = հայ. հրամայեմ hramayem, և 2) «պարս»-ը «օղակ» չէ:

Էջ 233, 558 - Հայ. rat = պիլ. rāt: Կամ = զենդ. ratu- (?)

Էջ 235, 565 - Մեյեն հավասարության նշան է դնում sālār հայրս. *sāradāra- բառերի միջև և ենթադրում է, որ հայ. նախաբար naxarar բառը sāra-ի nax-ով փոխարինմամբ (տե՛ս էջ 200) է տվել նշված *sāradāra- բառը: Անդրեասը հայ.

նախաբար բառը վերագտնում է Ammian-ի մոտ նշվող Nohodares անվան մեջ, այսպիսով այն պետք է, որ հետ տարվի դեպի հայրս. *naxadāra- ձևը: Ես կարծում եմ, որ թերևս սրանից պետք է որ ստացված լինի սասանյան *naxyār = լատ. *Nahiares, *հմմտ.* պրս. šahryār «իշխող», «տիրակալ» = հայ. Ըստիար Šahriar (տե՛ս էջ 55, ծմբ. 1) = պիլ. šatrd(ā)r = հայրս. *xšaθradāra- (Pers. Stud. 200):

Էջ 246, 616- Հայ. վեհ veh բառը Բուրգեն IF 1, 459 համարում է բնիկ հայերեն և այն համարում է = հնդեվր. *upértros < *uperteros: Այն որքան խիզախ է, նույնքան և սխալ:

Էջ 247, 623 - Հայ. վիշտ višt = սնու. višī- (?) Այսպես դեռ Fr. Müller WZKM. 6, 268:

Էջ 256, 669 - *հմմտ.* պրս. kändān «փորագրել», Rosen, Np. Sprachführer, էջ 68, muhrkan Shaks, Vuller Wb. = աֆղ. Lw. muhrkan «փորագրիչ»:

Էջ 263, 26 - Այնուհետև ըստ Wörterbuch-ի karupay, այն է՝ karuba = «դեղին սաք» Ոսկիփոր.:

Էջ 266, 50 - Թարխան t' arxan որպես հոնական տիրոջ, Մովս. Կղնկտ. (Մուսկուա) էջ 131, քարխանութիւն t' arxanut' iun «քարխանի արժանապատվություն» նույն տեղում էջ 206:

Էջ 275, 133 - Այնուհետև հիշատակելի է հայ. jumlay «գումար» Մովս. Կղնկտ. I 226, 1 (Մուսկուա 95) = արաբ. jumla «գումար»: Թերևս մինչ այս նշված արաբական փոխառություններից հնագույնն է: Շարունակությունը ստաջին հատորի հավելվածներում:

Ստրասբուրգ, հունիս, 1896

Հ. Հյուբշման

ՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I

ՀԱՅԵՐԵՆԻ ՍՏՈՒՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ II

Ասորական և հունական փոխառությունները հայերենում և քննիչ հայկական բառեր

Մինչդեռ իմ հայերենի ստուգաբանության առաջին մասում քննարկած պարսկական փոխառությունները, ինչպես ես արդեն նշել եմ, իրենցից որոշակի, հայերենի սահմաններից դուրս եկող, հետաքրքրություն են ներկայացնում, ասորական և հունական փոխառությունները միայն համեստ չափով են սեմագետների և հունագետների ուշադրությունը իրենց վրա գրավում, քանի որ երկու լեզուն էլ ընդհանրապես արդեն բավական հայտնի են: Սակայն, այնուամենայնիվ, հնարավոր է, որ ասորերենի և հունարենի հնչյունաբանության առանձին՝ ավելի նուրբ հարցերում նաև այս փոխառությունները կարևոր նշանակություն ունենան հայերենի հնչյունաբանության որոշ հարցերի լուսաբանման հարցում:

Երկու բաժինների նախաբաններում (ստուգաբանության երկրորդ և երրորդ մաս) ես նկարագրել եմ պատմական այն պայմանները, որոնք նպաստել են ասորական և հունական լեզվանյութի հայերեն մտնելուն: Պարզվում է, որ քրիստոնեությունը և քրիստոնեական կրթությունը այստեղ մոլի գործոններ են եղել: Քանի որ, սակայն, քրիստոնեությունը 3-րդ դարի երկրորդ կեսում է մուտք գործել Հայաստան, այստեղից հետևում է, որ այս փոխառությունների գերակշռող մասը 3-րդ դարի վերջի և 5-րդ դարի սկզբի միջև ընկած ժամանակամիջոցում են մուտք գործել հայերեն, ուրեմն զգալիորեն ավելի ուշ, քան պարսկական փոխառությունները, որոնք գերազանցապես արդեն պարթևների ժամանակաշրջանում են ներթափանցել: Սակայն որոշ բառեր միայն ավելի ուշ են մուտք գտել, ուրիշները կրկին, հավանաբար մեր թվարկության 1-ին դարում, ինչպես, օր. կայսր kaisr = հուն. καΐσαρ, լամպար lampar = հուն. λαμπάρα(λαμπάδ-ος), կաղապար kafapar = հուն. καλοπόδιον, հրեայ հրեայ = ասոր. ܫܘܕܝܝܐ, Դկղաթ Dklat' (Տիգրիս) = ասոր. Deglaթ և այլն: Եթե, այսպիսով, ասորական և հունական փոխառությունները հիմնականում ավելի նոր են, քան պարսկականների մեծ մասը, ապա նրանք նաև իրենց քանակով են հետ մնում նրանցից, իսկ որպես ապացույց այդ բանի կարող է ծառայել այն փաստը, որ պարթևական ժամանակաշրջանի պարսկական

նշակույթը Հայաստանի վրա ավելի մեծ ազդեցություն է ունեցել, քան սասանյան շրջանի քրիստոնեականը: Քանի որ հարյուրավոր պարսկական փոխառությունների դիմաց կանգնած են մոտավորապես հարյուրից մի քիչ ավելի ասորականներ և հիսունից ոչ շատ ավելի իսկական քաղաքացիական իրավունք ստացած հունական փոխառություններ, որոնց կողքին հանդիպում են բավական մեծ քանակությամբ հունական ծագում ունեցող գիտական բառեր:

Առանձին համարների կապակցությամբ հարկ է նշել հետևյալը: Այն դեպքերի թվին, երբ ասորական կրկնակ բաղաձայնները այլ լեզուներում փոխարինվում են ռնգային և պարզ բաղաձայններով, կարելի է հավելել՝ ասոր. qub-bəθā = պիլ. gmbat, այն է՝ gumbaթ (Horn, Nr. Schriftsprache, էջ 6; D.D. Peshotan Sanjana the Pahl. Version of the Avesta Vendidad, էջ 85, տող 5 ներքևից), պրս. gunbad, հայ. գնբեթ gmbet' (տե՛ս Arm. Etym. էջ 127, որտեղ gubbəθā-ն պետք է ուղղել qubbəθā-ի), վրաց. gumbati "coupole" Tchoubinof 136:

Էջ 290-291, Հայերեն անունների հ-ի կապակցությամբ՝ Աբրահամ Abraham, Սհարոն Aharon, Իսահակ Isahak, Յովհաննես Jōhannēs հունարեն Ἀβραάμ (սակայն ասոր. Awrahām) և այլնի դիմաց, հմմտ. գոթ. հ-ն հետևյալ անուններում՝ Abraham, Aharōn, Jōhannēs, որը ըստ W. Luft KZ 35, 312 պետք է որ սերված լինի Italc և Vulgata-ից: Հայերենի հ-ի կապակցությամբ, ի դեպ, ուշագրավ է նաև Arm. Etym. էջ 329, Nr. 1 և ծնթ. 6:

Էջ 302, Nr. 21 «գուլպա» հասկացություն արտահայտող բառը արդի հայերենում պետք է կուրբա kulba հնչի, որը գրաբարում պետք է որ հետ գնար դեպի գուլպա gulpa (գուրպա gurpa) ձևի: Այդ դեպքում նա վաղեմի ժամանակներում (11-րդ դարից առաջ) պետք է որ փոխ առնված լինի և հետևապես այն պետք է որ գուրպա gurpa, գուլպա gulpa (և ոչ, ինչպես ես էի ենթադրում՝ գուրբա) կարդացվի: Հարց է ծագում միայն, թե ինչպե՞ս կարող էր ասոր. և պրս. Բ-ի դիմաց հայերենում պ կանգնել:

Էջ 304, Այստեղ պետք է թերևս հայ. թուր տւ' «թուր» = արամ. tūθa բառը դրվի, տե՛ս մաս I, էջ 155, Nr. 253:

Էջ 309, Nr. 63. վրաց. huria = հայ. հրեայ բառի կապակցությամբ տե՛ս իմ դիտողությունները L. v. Patrubánys Sprachw. Abhandl. 1, 150, ծնթ. 3:

Էջ 310, Nr. 69 հայ. մանանայ mananay «մանանա» հանդիպում է նաև որպես փոխառություն վրացերենում manana ձևով (Չուրինով, էջ 269):

Էջ 313, Nr. 85 Եթե մանդայացիները šōša (հուն. cōccoc = հայ. sos "վաթսուն տարվա շրջան", տես էջ 380) բառը փոխ են առել բաբելացիներից (Nöldeke, Mand. Gram. Einl. էջ 10), չի՞ կարող արդյոք նաև հայ. շար šar- (= բաբել. šar, հուն. κάρος) բառը բաբելոնական փոխառություն լինել: Այդ ես

այն պատճառով հավանական չեմ համարում, որ հայ. **շար**-ը Տար մաքուր գիտական բառ է, որը հանդիպում է միայն Եսեբ. Ժամանակականք-ի թարգմանության մեջ և պայմանավորված է նրանով:

Էջ 318. Nr. 121 Կարդա՝ k'afak՝ «քաղաք» katak-ի փոխարեն:

Էջ 319. Nr. 128, Կարդա՝ kosīθā “cucullus” kōsīθā-ի փոխարեն:

Էջ 325. Septuaginta-ի այստեղ նշված երբայերեն-հունարեն բառերից Կարիերը Carrière (Orientalistenkongress zu Paris) միայն երկուսն է ընդգծել, որոնք Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից ներթափանցել են նաև այլ գրքերի մեջ՝ 1) հայ. **արգոբ** argob որպես բացահայտիչ **քորձ** k'arj «պարկ» բառի կողքին Ա թագ. VI 8, 11, 15 և ինքնուրույն՝ (սեռ. արգոբայ argobay) = «պարկ» Թովմ. Արծր. 3, 3 (Պատկ. էջ 139, *hūmūn*. Brosset Collection d'histo-riens arméniens 1, 119, ծմբ. 1) = հուն. ἀργόβ որպես ὄργοι-ի տարբերակ Ա թագ. 6, 8 երբայերեն argāz «արկղ» (?) բառի դիմաց 1. Sam. 6, 8; 2) հայ. **նեսար** nesar Ա թագ. 21, 7. Նարեկի կողմից սխալմամբ «չար ոգի» իմաստով օգտագործված Narek. և Cyrillus v. Alex. Comment. Թագ.-ի առաջին գրքի մասին = հուն. Νεσσαρ, որպես Νεσσαρᾶν-ի և այլնի տարբերակ Ա թագ. 21, 7 երբայերեն nešār «ներառյալ» 1. Sam. 21, 8 (= συνεχόμενος Νεσσαράν der Sept.):

Էջ 326. Գոթերենի ē-ի մասին հունարենի η-ի դիմաց տե՛ս KZ 35, 304:

Էջ 330. Որ հայերենի ձայնավորների հնչյունական օրենքների ազդեցությունը պարթևական ժամանակաշրջանին է վերաբերում, ես փորձել եմ պայացուցել իմ “Zur Chronologie der armenischen Vokalgesetze” (Patrubánys Sprachw. Abhandl. 1, 129-162) աշխատության մեջ:

Էջ 332. Ծմբ. ինչպես հայ. **Կոստանդիանոս**-ը Kostandianos, այնպես էլ գոթերեն Kustanteinus-ը, հունարեն Κωνσταντίνος-ի կապակցությամբ միջին հունարենում s-ից առաջ n-ի սղման մասին են վկայում:

Էջ 335. Տող 14, հայ. **Մովսես**-ը Mōsēs, ինչպես նաև գոթ. Mōsēs-ը հանգում են հուն. Μωσῆ-ին, ո՛չ Μωυσῆ: Այդ կապակցությամբ չպետք է շփոթության մեջ ընկնել հայերենի **Մովսես** Movsēs ուղղագրական ձևի պատճառով, քանի որ հունական անուններում օ-ը ընդհանրապես կիրառվում է որպես հուն. ω-ի գիտական գրության ձև, տե՛ս Arm. Etym. էջ 328:

Էջ 339. Այստեղ հարկ է նշել նաև **ալիլուիա** alēluia, **ալիլու** alēlu, հոգն. **ալիլոք** alēluk՝ (աղեղոք alēluk՝) «ալիլուիա» եկեղեցական գրիչների մտա Աստվածաշնչում, ինչպես նաև Առաքել՝ էջ 10, այստեղից էլ **ալիլուեմ** alēluem «օրհնաբանել», Եփրեմ հուն. ἀλληλούϊα:

Էջ 341. N 38 - Հայերն ու գոթերը հուն. υ-ն միայն «ասորի» բառում են օ-ով փոխարինել, *hūmūn*. հայ. ասորի asori = Ἀσούριος, գոթ. Saur «ասորի» = Σούρος (այնուհետև նաև՝ Saurini «ասորիներ»), Saura «Սիրիա»), տե՛ս KZ. 35,

303: Ի դեպ, Ուֆիլասը և Մեսրոպը հուն. υ-ն (= ū) իրենց այբուբենում միևնույն ձևով “v” (կիսաձայն) հնչյունական արժեքով են վերցրել:

Էջ 342. Այստեղ բացակայում է այն, ինչի վրա իմ ուշադրությունն է հրավիրում Մեյեն - հայ. **արկղ** arkl (սեռ. արկեղ arkef «արկղ», «պահարան», Յովհ. 12, 6; 13, 29, Եբր. 9, 4 և այլն) = հուն. ἄρκα «արկղ», «դարակ», «հյուր» < լատ. arcula «արկղիկ» (*hūmūn*. գոթ. arka «տապան», «արկղ», «դրամարկղ» = հուն. ἄρκα < լատ. arca «արկղ»): Հայերեն բառը, ի դեպ, ՆՀԲ-ում արդեն համադրված է լատ. arca, arcula բառերի հետ:

Էջ 367. Nr. 291. Ես այժմ հնարավոր եմ համարում, որ **նարդուն** ndrūn, **նարդուն** nadrun, **նասարուն** nat'run «սողա» բառը արաբական փոխառություն է (nat'rūn A. M. էջ 263 «սողա»):

Էջ 378. Nr. 396 Այնուհետև նաև sikef “décret, privilège”, Langlois Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, էջ 154, Assises d'Antioche էջ 21, տող 15 և այլն կողքին՝ sičil “privilège”, Cartulaire, էջ 185 = իտալ. sigillo:

Էջ 383. Nr. 446 Հայ. **տառեխ** tarēx = հուն. τάρτιχος, տե՛ս էջ 106, 54 -ին կից էջ 511-ում տրված հավելվածը: Այդ ձևան շուրջն է գնում խոսքը նաև Dr. Müller-Simonis-ի “Durch Armenien, Kurdistan und Mesopotamien” աշխատության մեջ, էջ 170, որտեղ այդ ձուկը **Tekrit** է անվանվում և նկարագրվում է որպես մի տեսակ սպիտակ պերկես և մեկնաբանվում է որպես աղբատիկ «առհասարակ խոճուկ կերակուր»:

Էջ 389-391. Այստեղ բերված ֆրանսիական բառերի թիվը, որոնք բոլորը վերաբերում են կիլիկյան բարբառին, ես հեշտությամբ կավելացնեի մինչ այս իմ աչքից վրիպած Cartulaire de la chancellerie royale des Roupéniens-ի բերված բառերը: Բայց քանի որ այդ բառերի լիակատար թվարկումը իմ աշխատության շրջանակներից դուրս է գալիս, ուստի կբավարարվեմ միայն **Cartulaire**-ից վերցված մի քանի նմուշների քննարկմամբ. kunç “consul” էջ 20, 156; kumin “la commune” էջ 154, 157; simičeal “sénéchal” էջ 45, 185; čamblain “chambellan” էջ 46, 185; čançler “chancelier” էջ 48, 158; burjēs “bourgeois” էջ 188; vikair “vicaire” էջ 154; samsar “censal” (censeur) էջ 154, 155, 188; prvljij “privilège” էջ 189; bōt'e “botte” (= tonneau) էջ 155; dubl “double” էջ 155; jařa “jarre” էջ 155; Benet “Benoit” էջ 154; Mumpuzlerçij “Montpellier”-ից էջ 185; jō-nuvez (սեռ. jōnvizi) = իտալ. Genovèse էջ 154, 156 և այլն:

Փոխառյալ բառերի վերջում (էջ 392-396) ես տվել եմ ոչ մեծ քանակությամբ հետաքրքիր և մասամբ լայն տարածում ստացած բառեր, որոնց կապակցությամբ հնարավոր չէ ասել, թե որտեղից են նրանք սերվում և ինչ ուղիներով են դրանք հայերեն մտել: Այդ բառերին կից (էջ 396-398) ես քննարկել եմ այն հարցը, թե այն բառերը, որոնք թվում է թե, կամ իսկապես կովկասյան լեզուների բառապաշարին համապատասխանում են, արդյոք հայկական:

թե՞ կովկասյան ծագում ունեն: Ես գալիս եմ այն եզրակացության, որ հայերը միայն **-pawd** կա բառն են փոխ առել, և որ մնացած բառերը, ինչ սահմաններում էլ որ նրանք ուշադրության արժանանան, կովկասցիների կողմից են փոխ առնվել: Ինչ վերաբերում է էջ 398-ում հիշատակված հայ. **գութա** gut'a «գութան», բառին, որտեղ ես մի երկրորդ կովկասյան փոխառություն եմ ենթադրում, ապա չե՞ որ այն արդեն գրականության մեջ հանդիպում է, այն է՝ Ռսկիփորիկ (13-14 դդ.) ըստ Ն-ՀԲ-ի 2, հավելված 1049. Բայց արդյո՞ք այս պատճառով այն պետք է միայն գութան gut'an (= վրաց. gut'ani) լինի, ավարերեն՝ kutan և այլն: (Տե՛ս իմ «Etym. und Lautl. d'osset. Sprache», էջ 123):

Իմ ստուգաբանության վերջին մասը (էջ 399-504), որը բուն հայկական բառերն է քննարկում, անկասկած ամենակարևորն է հնդեվրոպաբանների համար: Ուստի և ես առավել ևս ցավում եմ, որ հենց այս մասն են ներկայացնում առաջաբանի XVIII-XX էջերում նշված այն դժվարությունները, որոնք, ի հեճուկս շատերի, ես ի սկզբանե հույս չունեի հաղթահարել: Եթե իմ առաջադրանքը լիներ ոչ թե բոլոր ստուգաբանությունները հավաքել, այլ ընդօժել ճշտերը, ապա հետազոտությունների մեծ թերի մակարդակը, ինչպես նաև հայերենի հնդեվրոպական նախալեզվից չափազանց հեռացած լինելը, շատ դեպքերում ինձ համար անհնար կդարձնեին այժմ հաստատորեն վճռել, թե ինչը պետք է սխալ և ինչը՝ ճիշտ համարել: Այնուհանդերձ, ես պետք է փորձեի այդ սահմանազատումը ձեռնարկել, և ես այն արեցի, առանց սակայն համոզված լինելու, որ վճիռը միշտ պարտադիր և ընդհանրապես բոլորի համար ստիպողական պետք է լիներ և որ առանձնապես իմ կողմից չընտրված ստուգաբանությունները անհրաժեշտորեն պետք է մերժվեին: Ոչ թե ընտրված, այլ մերժված բառանյութն է եղել, որն ինձանից ավելի մեծ ջանք է խլել և կասկածների մեջ է զցել, այն է, որ աշխատանքի այս մասում ինձ զրկել են վայելելու լիակատար հաճույքը: Այսպիսով, ինձ մնում է միայն հուսալ, որ հետագա հետազոտություններ իմ եզրակացությունները միայն կհաստատեն, և նրանք մեզ հնարավորություն կընձեռեն նաև առանձին ստուգաբանությունների կապակցությամբ նրանց հավաստիորեն ճիշտ կամ սխալ ճանաչելը:

Էջ 410. Չայնավորների հնչյունափոխական օրենքների Nr. 2 բացառության կապակցությամբ հարկ է ավելացնել *u* և *i* ձայնավորները միայն *rh* հնչյունակապակցությունից առաջ պահպանվում են, *հմմտ.* **մորիակ** murhak «մորիակ», «փաստաթուղթ» = պիլ. muhrak; **սուրիանրակ** surhandak «սուրիանրակ»; **Սմբատուրիի** Smbaturhi անձնանուն; **նիրհեմ** nirhem «նիրհում եմ» **նիրհ** nirh «նիրհ» բառից = սնս. nidrā,

Էջ 411. 1 հայ. **ագանիմ** aganim «հագնել», միջին հայերենում հնչում է **հագնիմ** hagnim (Ներս. Լամբր. և այլն):

Էջ 412. 5, հայ. **ալի-ք** alik «սպիտակ մորուք» կարող է = հնդեվր. *polio-,

սակայն նաև = plio (բլիո և այլն):

Էջ 413. 8, Հուլգեր Պեդերսենը KZ. 36, 100 հայ. **ական-ը** akan «փոս», «բացվածք», «անցք» (պատի մեջ՝ տուն ներթափանցելու համար) դնում է Nr. 9-ի կողքին՝ հայ. **ակն** «աչք» հաշվի առնելով նրան վերաբերող հայ. **ակն** akn (հոգն. **ակունք** akunk') «անցք», «բացվածք», հուն. ὄπη «բացվածք», «անցք», լիտվ. ākas «բացվածք սառույցի մեջ», հսլ. okno «պատուհան» բառերը: Այս համադրումը ավելի հետաքրքիր է, քան էջ 413-ում զրվածը, որին նույնպես ես ոչ առանց կասկածի և միայն պայմանականորեն հավանություն տվեցի:

Էջ 423. 50, Հայ. **արգել** argel «արգելք» և այլն: Osthoff-ը IF. 8, 54 և հաջ. այն համադրում է rigil «սողնակ», *հմմտ.* լիտվ. rakinti «փակել» և հանգեցնում է հնդեվր. *rkélos, rekélos և այլն ձևերին: Այս համադրությունը զուրկ չէ հնչյունական դժվարություններից: Հայերենի կապակցությամբ բանը նրանում է, որ հայ. **արգել-ու-մ-ը** argel-u-m «արգելել» (կատարյալ՝ արգելի argeli, կրավ. արգել-այ argel-ay) իր թեքմամբ պարզ բայ է, մինչդեռ բոլոր դեպքերում սպասելի էր ածանցված ձև (ներկան՝ *արգել-ե-մ, կատարյալ՝ *արգել-եց-ի): Արդյոք կարո՞ղ էին այստեղ անվանական հիմքերը իբրև արմատներ դիտվել:

Էջ 424. 55. Դատելով ըստ **քեռ**-ի ke'r «քրոջ» (սեռ.) = հնդեվր. *svesrós, հնդեվր. sr-ն հայերենում *r* է տվել (և ընդհակառակը՝ *հմմտ.* եզ. ուղղ. **բայր** koir = հնդեվր. *svesōr): **Արիւն**-ի ariun «արյուն» r-ն է սնս. ásrk-ի դիմաց, պարզվում է, որ համեմայն դեպս ճիշտ է, քանի որ սնս. ásrk-ի դիմաց հայերենում, համաձայն հնչյունական օրենքների, պետք է ահար(զ) = սար(զ) = ար(զ) հանդես գար: Հմմտ. **գար-ուն** gar-un «գարուն» **գար-ով** <*գեհար- gehar- = հնդեվր. vesr = հուն. ἔαρ (<*Fecar) էջ 433: Հետևաբար **արիւն** և **գարուն** բառերը օրինաչափությունից շեղում չեն՝ հնդեվր. sr = հայ. *r* (էջ 409): Եթե **քեռ** սեռականի կողքին գործիականում **քերք** (ր-ով) է կանգնած¹, ապա այդ միայն նրանով է պայմանավորվում, որ *r*-ն (բացի նախնական անմիջապես իրեն հաջորդող *n*-ից առաջ²) չպետք է անմիջապես իրեն հաջորդող նախնական բաղաձայններից առաջ կանգնած լինի:

Էջ 428. 70. **Բարձ** barj «բարձ» և այլն բառի շարքին է պատկանում նաև սլով. սերբ. blazina «փետուրե անկողին», սերբ. blazinja «բարձ», գերմ. «Polster» (տե՛ս ի վերջո Osthoff BB. 24, 143): Այսպիսով, լիտվալավոնական լեզուները խոսում են հոգուտ հնդեվր. bhelg'h-ի (l-ով), իսկ հայ. **բարձ**-ը barj փոխառությունն է:

Էջ 433. 91. Այս համարը՝ **գեղձ-ք** geġ-k' «գեղձ» = հսլ. žlėza Մեյեն ուզում է ջնջված լինել (տե՛ս Revue critique 1897, էջ 388 և Brugmann Grundriß² 1, 1093),

¹ Հմմտ. **ձեքք** jerb ձկն ձեռամբ jecamb-ի կողքին և այլն էջ 470, Nr. 261:

² Հմմտ. **դում** dum «դուտ», **ջեմում** jernum «տաքանակ»:

հնչյունական օրենքների, պետք է որ *մինս-մ minam = *մենա-մ mena-m ձևից սերվելիս լինի: Քանի որ արմատը հավանաբար menə (?) է եղել:

Էջ 477. 306. Եթե սնու. arghá- «արժեք», «զին», árhati = զենդ. arəjaiti «կշիռ ունի, արժեք ունի», զենդ. arəjah- «արժեք» օսեթ. arj «զին», «արժեք», հայ. **յարգ-եմ** y-arg-em «հարգում եմ», «գնահատում եմ», համարվում է հուն. ἀλάφανα «բերել», «հանգեցնել», ἀλάφη «վաստակ», լիտվ. algá «վարձատրություն», պրուս. algas utn. «վարձ» ձևերի հետ: Այդ դեպքում հայ. **յարգեմ-ը** պետք է դիտել որպես պարսկական փոխառություն (տե՛ս Meillet Revue critique 1897, էջ 388; Pedersen KZ. 36, 76): «յ» նախածանցի կապակցությամբ **յարգե-մ** բառի մեջ (**արգոյ** ձևի կողքին) տե՛ս **յ-անդիման** էջ 141 և **յ-ոյզ** էջ 215, Nr. 489: Այսպիսով, **յարգեմ-ը** պետք է **արժան-ի** arzan (էջ 92) կողքին կանգնեք, ինչպես **տուզան-ը** tugan **տոյժ-ի** toiz էջ 253 և **մոյլ-ը** moik **մուճակ-ի** mučak կողքին էջ 196:

Էջ 478. 310. Այստեղից պետք է հանվի սնու. ana- «այս» (գործ. anəna, anáyā), զենդ. գործ. ana, քանի որ սնու. զենդ. ana-ն a-հիմք գործիականի anā-ից է վերցված: Bartholomae Grdr. d. iran. Phil. 1, 137, § 237; էջ 138, § 244, 6; Meillet MSL. 10, 244:

Էջ 481. 362. Հայ. **ոզնի** ozni (հուն. εζίνος) բառը հնչյունապես կարող է *o-zini ձևից ծագած լինել:

Էջ 482. 330. Լեհ. հայ. **ոճիլ** očil «ոջիլ» խոսում է հոգուտ հին հայ. **ոջիլ** ojil (ոչ որջիլ orjil) ձևի:

Էջ 482. 332. Կիւր. ascwm-ի և այլն վերջածանցի մասին տե՛ս Zimmer բառը Bloomfield Am. Journ of Phil. 16, 419, նաև Foy IF. 8, 202 ծանոթագրություն:

Էջ 484. 315. Հին հայերենի **սորովիմ** sorovim բառի իմաստափոխության կապակցությամբ՝ «վարժվում եմ», «ընտելանում եմ», «սովորում եմ» *հմմտ.* նաև = նոր հայ. **սորվիմ** «սովորում եմ»:

Էջ 487. 355. s, d, n դերանվանական վերջածանցների մասին հանգամանորեն գրում է Մեյեն, MSL. 10, 241:

Էջ 494. 387. Մեյեն ևս իր Revue critique 1897, 388 աշխատության մեջ հայ. **վասն** vasn = հայրս. vašnā «կամքով» բառը ներկայացնում է որպես պարսկական փոխառություն: Մակայն տարակուսելի է թվում, քանի որ մինչ այս պի. ձևը պետք է որ *vašn հնչեր: Նա թերևս չի էլ հանդիպում, քանի որ «վասն»-ի համար կիրառվում է պի. **rāi** ձևը (= հայրս. rādiy):

Էջ 495. 389. Ուշադրության արժանի է **վաթսուն** vat'sun (ա-յով) ձևը **več** «վեց» և **veštasan** «տասնվեց» բառերի կողքին: Այն ցույց է տալիս, որ հայերենում անծանոթ պայմաններում **e-ն** կարող է **a** տալ (*հմմտ.* տասն = հուն. δέκα և **վասն** «վասն» հարաբերվում է հուն. ἑκατη): Կամ կարո՞ղ է

արդյոք, որ որևէ մեկը **več** հնդեվր. **vek's** ձև ենթադրել, հիմք ընդունելով հայ. **վաթսուն** vat'sun ձևի առկայությունը: Ես վճռականորեն մերժում եմ **e-շար-**բուն մի հնդեվր. **ə-ի** առկայություն (ընդդեմ BB. 17, 118 և այլն):

Էջ 495. 390. Հայերենում **r-ն** հաջորդող նախնական **n-ից** առաջ **t** է տվել: Եթե, սակայն, հայ. **ր-ն** = հնդեվր. **r** միայն հաջորդող **i-ի** կամ **u-ի** տղման պայմաններում (այսինքն՝ ըստ ձայնավորների ասպարեզում գործող օրենքների) հարկադրված է լինում **n-ից** առաջ կանգնել, ապա այն պահպանվում է՝ մնում է **r**: *Հմմտ.* **գարուն** garun, սեռ. գարնան<գարունան; **վերին** verin, սեռ. վերնոյ < *վերինոյ; **սրունք** srunk՝ սրունկունք-ից եկող **սրնկունք** ձևի կողքին: Ուրեմն **վրնջեմ-ը** vrnjem «վրնջել» կարող է կանգնել մի ***վրինջեմ** vrinjem ձևի կողքին և այդ չի հակասի Բուզգեի ստուգաբանությանը:

Էջ 497. 396. Մեյեն իր Revue critique-ում 1897, էջ 388 ուշադրություն է հրավիրում այս բանի վրա, որ սնու. drapsá- «կաթիլ» բառը, ըստ Wackernagel-ի Aind. Gramm. 1, 242, իր բառասկզբնային **d-ն** **dh-**ից ունի (*հմմտ.* dhrebh): Այդ դեպքում նրա համադրությունը հայ. **տարափ** tarap՝ բառի հետ մերժելի է հենց ձևական գործոններից ելնելով:

Էջ 498. 405. Մեյեն MSL. 10, 138 այստեղ է ուզում դնել նաև հայ. **տեք** tēr = (*տե-այր tē-air) «պարոն», «տեք» և **տիկին** tikin! (= *տե-կին tē-kin) «տիկին», «տիրուհի», ուրեմն հայ. **տե** tē (= հնդեվր. dei-, doi) պետք է համադրել հնդեվր. dom-, dem- «տու:» ձևերին: Այդ ինձ անհավանական է թվում:

Էջ 503. 431. Հայ. **քենի** k'enı բառը հնչյունապես կարելի է նույնպես տանել դեպի *sveyenyā- կամ *sveygyā, տե՛ս Brugmann Grdr.² 1, 269 (որտեղ այն համադրվում է հրգ. ge-swīo «քենակալ», «տագր», «աներձագ», մրգ. geswīe «տալ», «քենի», «հարս»):

Էջ 503. 432. Հուն. κείρω բառը Solmsen Wackernagel և ուրիշներ դուրս են բերում մի **kers** արմատից (տե՛ս Brugmann Grdr.² 1, 744): Սրան թերևս չէր համապատասխանի նաև հայ. քեր-ե-մ k'er-e-m: 503-ին պետք է վերաբերելն ըստ Մեյեի MSL. 8, 280; 10, 269 նաև **քարշ-ե-մ** k'arš-e-m «քաշել» և **քեն** k'en «քեն», «ատելություն», «վրեժ» բառերը, որոնք ես էջ 257-ում պարսկական փոխառություններին եմ դասել, քանի որ նա դրանք դիտում է որպես բնիկ հայերեն բառեր: Ես նրա հետ համաձայն չեմ և հետագայում հարմար առիթի դեպքում կհիմնավորեմ, թե ինչու եմ ես այդ բառերը փոխառություն համարում: Աշխատության ավարտից հետո հաստատվեց ոչ միայն նոր ստուգաբանություններիս մի զգալի մասը, այլ անվանի գիտնականների կողմից ճիշտ համարվեցին նաև որոշ իմ կողմից մերժված հին ստուգաբանություններ: Այժմ թող ինձ իրավունք վերապահվի ընտրել նրանցից լավերը և այստեղ դրանք առաջադրել:

¹ Ուրեմն նաև հայ. **տիեզերք** tiezerk՝ «տիեզերք, աշխարհ» < տի + եզր «եզր» (= եզրերից դուրս):

Ազոր azdr (սեռ. ազդեր) «ազոր» (< a-zgdh-): Սնու. sákthi «ազոր», Մեյե. MSL. 10, 277: ai-s, ai-d, ai-n բառերի մեջ **այ-ը** = սնու. ē ē-šá, ē-tad «այս», հայրս. aita «այս» և այլն բառերում Մեյե MSL. 10, 254: *Հմմտ.* սակայն օսկ. eíseis “eius”, eísúd “eo” և այլն օսկ. ei-ի հետ = հնդեվր. **ei**, ոչ **ai**: - առեան atean (սեռ. առեանի) «ատյան» «խորհուրդ» «դատարան» (սոսեդրոն), լատ. solium «գահ», «քազկաթոռ» (այն, սակայն, ըստ Joh. Schmidt KZ. 36, 102, ծնթ. պետք է պատկանի հրգ. swelli բառին) sedeð-ից: Meillet MSL. 8, 154, H. Pedersen. KZ. 36, 98: Ըստ այդմ **առեան**-ը (< առ-եան?) նախկինում պետք է որ մոտավորապես «նիստ» նշանակեր և հայ. **ն-ստ-իմ** n-st-i-m «նստել» ձևի հետ պատկաներ հնդեվր. **sed** «նստել» արմատին, ձայնավորային հերթազայտությունը դեռ մութ է: Ֆր. Մյուլլերի հավասարությունը հայ. **առեան** = պրս. dīvān < dēvān երերում է: -բարի bari // հուն. φέρτερος «ավելի լավ» L. v. Patrubány Sprachw. Abhandl. 1, 187: Սակայն ֆերտեր-ը թերևս լիտվ. gēras- ին «լավ» է վերաբերում: **-բոյս** bois (սեռ. բուսոյ) «այն, ինչ գետնից է ծլում», «ծիլ», «խոտ», «բույս», **բուս-անի-մ** bus-ani-m (կատարյալը՝ **բուսայ** busay) «ծլեցի» // հուն. φύομαι «ծագեցի», φύτόν «բույս», «տունկ» Bugge KZ. 32, 77, Meillet MSL. 10, 279 (որը համադրում է հայ. ի-ս-եմ l-s-em և սնու. člōka ձևերը, սակայն u-ն **լսեմ** բառում միայն ներկայի հիմքն է կազմում): Հարց է ծագում, թե **բուսանիմ**-ը արդյոք կարող է անվանակա՞ն ծագում ունենալ՝ **bois** բառից (որի դեպքում ես կատարյալի համար ***բուսեցայ** ձևը կսպասեի), և արդյոք **bois** = հնդեվր. bheuko- կամ *bheuk'o = հնդեվր. bheuθ արմատին, թույլ աստիճանը՝ bhū: **-եզն** ezn (սեռ. եզին ezin) «եզ» // սնու. ahī- «կով» (միայն Nāigh.-ում), զենդ. (gāuš) azi «եռանյա կով» Մեյե MSL. 10, 278: Հնդկական բառը հաստատ չէ, զենդ. azī հանդիպում է միայն «կով»-ի համար կիրառվող մակդիրներում (մոտավորապես «կաթ տվող» և նմանօրինակ իմաստներով): **-եզր** ezr (սեռ. եզեր ezer) «եզր, ափ, սահման» // լիտվ. ežė «դաշտի եզր», լատիշ. efcha, պրուս. asy «քաժանագիծ» Meillet MSL. 10, 282: **-երզիծ-անե-մ** ergic-ane-m «ճայթեցնել», «պատառոտել», «ծաղրել» // հուն. ῥήγ-νυ-μι «պատառոտել», լիտվ. rėži «կտրել», «քերծել», «ճանկոտել», հւլ. rēžą «կրտրել» Meillet MSL. 10, 281: Հնդեվր. vrēg¹-ից = հայ. * գրիծ gric (կամ *վրիծ vric ?, տե՛ս vrmjem վերը՝ էջ 46) = *ergic (?) պետք է որ հայերենում *երզանեմ *ergcanem կազմված լինի: **-երթ-ա-մ** erī-a-m «զմար», «հեռանալ» // հուն. ἔρχομαι «գալ» < *ἔρθ-κκο-μαι, հնդեվր. արմատը erth և erdh ? Meillet, MSL. 10, 277, 278: **-երթ** r'er «կողմ» // հուն. τέρωω, τέρμα «նպատակ», «սահման», «զազաթնակետ», «վերջնակետ», լատ. termen, terminus «սահման» Meillet MSL. 10, 281: Իմաստը - **խանդ** xand «բռնոն ցանկություն», «խանդ», «ջանք», «կարեկցանք» (խանդ-ա-կաթ xand-a-kat' «խանդադատանքով», Երգ երգոց 2, 5) // հւլ. xūtēti, xotēti «ցանկանալ», xoti “meretrix, pellex” Meillet MSL. 10,

140: **-խափան-ե-մ** xap'an-e-m (կատար. խափան-եց-ի xap'an-eç-i) «խափանել», «խանգարել», khāph արմատից // լատ. habēre, գոթ. haban «ունենալ» H. Pedersen IF. 5, 64 ծանոթ. **-խեթ** xei «ըմբոստ», «անհնազանդ», «համառ» // լատ. cerritus «խելագար», իռլ. cearr “wrong”, լիտվ. skeřsas “quer” Bugge IF. 1, 446, Brugmann” Grdr.² 1, 432-433, 581, 786: Ընդհակառակը ըստ H. Pedersen-ի IF. 5, 54, հայ. **խեթ**-ը թերևս պետք է հնդեվր. **skhers**-ի դիմաց կանգնել, սակայն չի համապատասխանում իմաստը: Այն կարծիքը, թե **խեթ**-ը xei «խեթ», «ծուռ» է նշանակում, սխալ է, քանի որ միակ տեղը, որտեղ այն հանդիպում է (Լամբր.), գրված է այլ ձևազարկով՝ **խեթ** xei' «խեթ», «շիլ» պետք է կարդալ, տե՛ս Wb. **խնդ-ա-մ** xnd-a-m «ուրախանալ», **խնդ** xind «խնդ», «ուրախություն» // պրս. xand-īdan «ծիծաղել», հնդեվր. արմատը՝ khendh ? : **-խոյս** xul // հուն. χολός «կաղ», սնու. kharvá «խեղ» Meillet MSL. 10, 282: **-խոյս տամ** xois tam = **խուսեմ** xusem «խոյս տալ», «խոսափել», մրգ. schiuhēn «վախենալ», «փախչել», Brugmann Grdr.² 1, 564 (ըստ Bugge-ի) **ծամ-ե-մ** came-m «ծամել» (այստեղից էլ **ծամելի** «ծնոտ» // սնու. jámbha - «ատամ», հուն. γαμφολαι «ծնոտ» և այլն, Brugmann. Grdr.² 1, 632 (ըստ Բուզգեի): Հայերենում ինչու՞ **ծամք** camb չէ: Որովհետև mb = հնդեվր. mbh հայերենում պահպանվում է: **ծով** cov (սեռ. ծովու covu) «ծով» // սնու. java- «շտապողականություն», «արագություն» (*հմմտ.* զենդ. zrayah-, հայրս. draya- «ծով» // սնու. jrāyas- «վազք», ըստ Geldner-ի Ved. Stud. 2, 248) L. v. Patrubány: **-կարկուտ** karkut (սեռ. կարկտի karkti) «կարկուտ» < *ka-krut // հւլ. gradū, լատ. grando «կարկուտ» Meillet MSL 10, 280: Իմ կարծիքով, **կարկուտ** բառը ***kakrut**-ի ձևափոխման արդյունքը չէ: **-կեր-կեր-ի-մ** ker-ker-i-m «խոչափել», «խոչափ դառնալ» // սնու. karkara- «կոշտ», karkaça- «կոշտ», «խոչափ», հուն. κάρκαρος, τραχύς Hesyeh. Brugmann Grdr.² 1, 580 (ըստ Բուզգեի): **կերկերիմ** ձևի մեջ ես ավելի շուտ ենթադրում եմ բառակազմական մեկ կրկնված պրոցես, **կեր** արմատից = հնդեվր. ger: **-կորկ** kork «կեղտ» (մեկ անգամ Լամբրոնացու մոտ, 12-րդ դ.) // հուն. βόρβορος «տիղմ», «ցեխ» Brugmann Grdr.² 1, 619 (ըստ Բուզգեի): **-կոր-ն-չ-ի-մ** kor-n-č-i-m (կատ. կորեայ koreay) «կործանվել», «կորչել», պտճո. **կոր-ու-անե-մ** kor-us-ane-m «փչացնել», «կորցնել», դրան կից՝ **կործան-ե-մ** korcan-e-m «կործանել», «ավերել» // լատիշ. gurstu, gurt «հոգնեցնել», «ուժասպառ անել», gurdens «թույլ», «հոգնած», պրուս. gurīns «խեղճ», «անաշխատ» Meillet MSL. 10, 278: **-հազ** haz «հազ», **հազ-ա-մ** haz-a-m, **հազ-ե-մ** haz-e-m «հազալ» // սնու. kās «հազալ» և այլն: Meillet MSL. 10, 282: **-հալ-ե-մ** hal-e-m «հալել» (անցող.), **հալ-ի-մ** hal-i-m (անանցող.) // լիտվ. pilū, pilti «լցնել», «թափել» Meillet De indo-europ. radice men էջ 36: - Ես A. E. էջ 466 Բուզգեի հետ միասին լիտվ. pilū-ն համադրում եմ հայ. hef-u-m «ամանից թափել» բառի հետ: **- հան-ե-մ** han-e-m (կատ. հան-ի

han-i) «բշել», «հեռացնել», «հետ վերցնել», «դուրս նետել», «առաքել» // հուն. ἄνυμι, ἀνύω «կատարել, լրացնել, գոյիս հանել», սնս. sanōti «շահել, ձեռք բերել» Meillet, De indo-europ. rad. men էջ 26: - **հիւանդ** hivand (հոգն. սեռ. հիւանդաց hivandaç) «հիվանդ» = հնդեվր. *pēvnto- // հուն. πῆμα «ցավ», «վնաս», «չարիք», «աղետ» Brugmann Grdr.² 1, 403, 510 (ըստ Բուրգգեի): *pēvnt-ի դիմաց, ըստ էության, սպասելի էր *հիւանդ hvand (*hēvand), հետևաբար նրա դիմաց պետք էր *peivnt սահմանել: - **հողով-ի-մ** holov-i-m «գործել» (ամանցող.) // հուն. κυλίω, κυλίνδω «գործել» Meillet MSL. 10, 282: **հունչ-ք** hunč-k' կամ **հինչ-ք** hinč-k' (գործ. հնչի-ք հոչիւ-կ'), **հնչիւն** հոչիւն, **հնչումն** հոչումն «հնչյուն, ձայն» // լատ. sonus «հնչյուն», «տոն», «ձայն», «աղմուկ», սնս. svaná-s «հնչյուն», «շառաչ», «խշշոց» Meillet MSL. 10, 278 - **հուսկ** husk այնպիսի կապակցություններում, ինչպիսին են **հուսկ յետին** husk yetin, **հուսկ վերջին** husk verjin «ամենավերջինը», **հուսկ յետոյ** husk yetoy «ամենավերջը» // զենդ. paskāt «հետևից» «հետո» ըստ Fr. Müller-ի WZKM. 5, 279: Սակայն *հմմտ.* **հուսկ կրասեր** husk krtser «ամենակրասեր»: - **ծաղ** jał «ծաղր» // հուն. χλεύη «կատակ», «ծաղր», հւլ. glaumr «զվարթություն», «ուրախություն», Meillet MSL. 10, 280: Հայ. **ծալ** jal < *g^hilju- (?) - **մայր** mair (սեռ. մայրի mairi) “ceder” // հւլ. smrēča “ceder” Brugmann Grdr.² 1, 741 (ըստ Բուրգգեի): - **յոլով** yolov (հոգն. սեռ. յոլովից yoloviç) «շատ» // հուն. πολύς, գոթ. filu, հիբլ. il, սնս. puru «ի, շատ, առատ» Brugmann Grdr.² 1, 510 (ըստ Բուրգգեի): Հնդեվր. *p^hlú- (pélú-) ձևի դիմաց նախ սպասելի էր *hal, սակայն հնարավոր է նաև *yol: - **յորդոր** yordor «պատրաստական», «կամուփին», **յորդոր-ե-մ** yordor-e-m «հորդորել», «համոզել», «զրգռել», «մղել» // հուն. ὀροθύνω «զրգռել», «մղել» Brugmann Grdr.² 1, 528: - **ներքին** nerk'in «ներքին», **ի ներքոյ** i nerk'oy «ներքուստ», **ի ներքս** i nek's «դեպի ներս» // հուն. ἔνεροι «ներքինիները», ἐνέρτερος «ներքինը», νέρθεν, ἔνερθεν «ներքևից», սնս. naraka- «ստորերկրյա աշխարհ», «դժոխք», ումր. nertru “sinistro” (°) Meillet MSL. 10, 275: - **շունչ** šunč (սեռ. շնչոյ šnčoy) «շունչ», «շնչառություն», «հոգի» // սնս. čvāsiti «շնչել», čvasaná- «փնչալով», «ծանր շնչելով» (*հմմտ.* **շուն** šun = սնս. čvā) Meillet MSL. 10, 278: - **ոտորկ** otork «հարթ», «ոտորկ» < *otirk (°) = հուն. ὀλιβρός «ոտորկ», «սահուն» < *slig²-ros, Bugge Brugmann Grdr.² 1, 433, 839: - **ոռ-որմ-իմ** ot-orm-im «ոտորմել» // գոթ. arms «խեղճ», «թշվառ», լատ. “miser”, տե՛ս նաև գոթ. arman «ոտորմել», «կարեկցել», ըստ լատ. miserēni, armahaírto «ոտորմած», «բարեգութ», ըստ լատ. misericors Fr. Müllers Arme-niaca 6, Meillet MSL. 10, 280: - **որկոր** orkor «որկոր», «կոկորդ», «երախ» < *korkor **կոկորդ** kokord-ի համար (հւլ. grūlo և այլն, տե՛ս էջ 460, Nr. 208), Meillet MSL. 8, 160, Brugmann Grdr.² 1, 855: Նույն իրավունքով կարելի է հուն. λάρρυξ «կոկորդ» բառը համադրել **փարս** «որկոր» բառի հետ: Եթե *korkor

ձևը երբևէ գոյություն ունեցած լիներ, այն պահպանված կլիներ, *հմմտ.* հայ. **կարկամ** karkam, **կարկաչ** karkač, **կարկառ** karkař, **կարկատ-ե-մ** karkat-e-m, **կերկեր-ի-մ** kerker-i-m և այլն: - **ջուր** jur (սեռ. ջրոյ jroy) «ջուր» // սնս. kšar «հնսել», «հորձալ», զենդ. γζar «հոսել» L. v. Patrubány: - **սալոր** salor «սալոր» (Մխ. Գոշ, Առակք 12-րդ դ.) // հւլ. sliva «սալոր» L. v. Patrubány Sprachw. Abh. 1, 106: - **սոր** «քարայր», «որջ», «խորշ» // լատ. caverna «խորշ», «խոռոչ», cavus «դատարկ», հուն. κόοι, κοιλώματα κύαρ «անցք» և այլն Meillet MSL. 10, 278 (*հմմտ.* հայ. **նոր** nor // հուն. νεαρός = հայ. **սոր** sor // լատ. caverna): - **սոր** sur (սեռ. սրոյ sroy) «սոր», «թոր», 2) ածական. «սոր» < *k^hōros // գոթ. haírur «թոր» < *k^herus L. v. Patrubány Sprachw. Abh. 1, 191: - **վար-ե-մ** var-e-m (կատ. վար-եց-ի var-eç-i) «վարել», «տանել» (նաև «ցանել» և Med. վար-ի-մ var-i-m «օգտագործել», «կիրառել» գործիականի հետ) // լիտվ. varaũ, varyti «վարել» Meillet MSL. 10, 280: Այնուհետև տե՛ս հայ. **վար-ք** var-k' (սեռ. վարուց varuč) «ապրելակերպ», «կյանք», «սովորույթ», «կենցաղ»: - **ցիլ** çir «ցրված» (**ցրտ-ե-մ** çrv-e-m «ցրել») < *sk^hēri- // սնս. kirāti (արմատը՝ kerə, kī) «դուրս նետել», «թափել», զենդ. kārayeiti «ցանել» Meillet De indo-europ. rad. men էջ 51: Երկուսն էլ հարաբերվում են **sek** արմատի հետ (*հմմտ.* լատ. secāre), թուրք sk-, ընդարձակվածը՝ sk-en հայ. **ցան** çan «ցանելը» **ցան-ե-մ** çan-e-m «ցանել» բառերում Meillet, MSL 10, 281: - **փարատ** p'arat «հեռավոր», **փարատ-ե-մ** parat-e-m «հեռացնել» // հուն. σποράς «ցրված» Brugmann Grdr.² 1, 510 (ըստ Բուրգգեի): - **քաղ-ե-մ** k'al-e-m «քաղել», «հավաքել» (σλλέγω) «քաղել», «արմատախիլ անել» = հուն. κλάω «կտրել», հւլ. kolja, klati «ծակել», «մորթել», լիտվ. kalũ, kalti «մուրճով հարվածել», «դարբնել» Meillet MSL 8, 297: - **քաղց** k'alç «քաղց» // լիտվ. álku, álkti «քաղցել», հւլ. alkati «քաղցել» Meillet MSL 10, 270: - **քիլ** k'il (գործ. քլա k'lav) «թիզ», «թզաչափ» < *kēlā // սնս. kará-s «ձեռք» Meillet MSL 10, 270:

Հայերենի տարբեր վերջածանցների մեկնաբանման կապակցությամբ Մառի արած դիտողությունները կարելի է գտնել նաև IF. 8, Anz. էջ 185-ում (հաղորդված Zubaty-ի կողմից), սակայն անհնար է դրանք լրջորեն ընդունել:

Առաջիկա ստուգաբանություններից հազիվ թե որևէ մեկը անթերի լինի և միայն քչերը կարող են հավանական համարվել: Մի քանիսը, իհարկե, հնարավոր են, առանձնապես այն պատճառով, որ համադրվող բառերի հնչյունական փոխհարաբերությունները բավարար պարզ չեն: Իսկ այն ստուգաբանությունները, որոնք իսկապես հնարավոր են, առանձին մեծ արժեք չեն ներկայացնում:

Հավելումները, որոնք ես տվել եմ մասնավորապես իմ Arm. Etym.-ին կից, այնքան ծավալուն են (էջ 505-520), որ ես այստեղ հարկ եմ համարում սահմանազատվել միայն նրանց նկատմամբ արված դիտողություններով:

Էջ 510, հավելում էջ 97-ի վերաբերյալ՝ հայ. **անգարեմ** angarem «հաշվի առնել» Անան. Շիրակ., էջ 16 մեջտեղը և էջ 18, ներքևից 4-րդ տող: Conybeare, der Byz. Ztschr. 6, 575, 577 այն թարգմանում է որպես “to establish, to adhere to” (հիմնավորել), հետևաբար նա այս բայից անտեղյակ է:

Էջ 514, հավելում էջ 228-ի վերաբերյալ:

Հայ. **պարս** pars «պարս», «պարսատիկ» = թալմուդ. Lw. parsakā «օղակ», «թակարդ», *հմմտ.* WZKM. 11, 294: Հետևաբար ես Ֆր. Մյուլլերի համադրությունը ճիշտ են համարում և երկու բառն էլ դիտում են որպես փոխառություն, այստեղից էլ դուրս են բերում պիլ. *pārs և pārsak «օղակ», «պարսատիկ» բառերը:

Էջ 516, էջ 275, 133-ի վերաբերյալ տրված հավելում: Մովս. Կղնկտ.-ու ամբողջ գործը, որտեղ հանդիպում է **ջումլայ** jumlay = արաբ. jumla բառը, այժմ վերագրվում է 10-րդ դարին, Մանանդեանի Btrg. zur albanischen Gesch., Leipzig 1897. -էջ 518, տող՝ 24: **diktion**-ի կողքին հանդիպում է ðndiktion (indik-tion) = ἰνδικτιών, տե՛ս Wb.:

Էջ 521-543-ի գրքի բառացանկում հանդիպող բոլոր անուններն ու բառերը ես տալիս են այբբենական կարգով:

Էջ 411-504-ում թվարկվող բնիկ հայերեն բառերի բաժնում հանդիպող հնդեվրոպական բառերի ցանկի համար (էջ 553-573) ես իմ շնորհակալությունն են հայտնում cand. phil. պարոն Յոզեֆ Կարստին (Լոթարինգիայից): Շատ ցանկալի կլիներ առաջին մասում նշվող պարսկական բառերի համար տալ անվանացանկ, սակայն ես այդ բանին վերապահորեն են մոտեցել, որպեսզի բառերի, առանց այն էլ ծավալուն ցանկը, չափից ավելի չմեծացնեն:

Ստրասբուրգ

Հ. Հյուբշման

Հայերենի ձայնավորների հնչյունափոխության օրենքների ժամանակագրությունը

Որևէ լեզվի հնչյունափոխությունների ժամանակագրության որոշման հարցում փոխառությունների դերի մասին բազմիցս է խոսվել, առանձնապես գերմանագետների կողմից: Հայտնի է, որ գերմ. Hant. բառը փոխառություն է մի ինչ-որ լեզվից, այստեղից էլ հույներն են դուրս բերում իրենց *κάνναβις* բառը, որը հայտնի էր դեռ Հերոդոտին (IV, 74): Նշված բառը գերմանական լեզուներ է մտել նախքան բաղաձայնների առաջին տեղաշարժը, հավանաբար *kanabis ձևով, իսկ առաջին տեղաշարժից հետո այս բառը ևս տեղաշարժի է ենթարկվել ինչպես յուրաքանչյուր գերմանական բառ:

Հետևաբար *kanabis-ը գերմանական լեզուներում *hanapiz է տվել (= անգլաբ. hcenep), որից էլ շնորհիվ բաղաձայների երկրորդ տեղաշարժի (մեր թվարկության VI-VII դդ.) հրգ-ում օրինաչափորեն ստացվել է hanef, hanf = նրգ. Hanf: Եթե, այսպիսով, ինչպես ընդունված է համարել, առաջին (գերմանական) տեղաշարժը մեր թվարկությունից առաջ 3-րդ կամ 4-րդ դարերում է տեղի ունեցել, ապա Hanf բառը *kanabis ձևով գերմաներեն է մտել նույնպես մեր թվարկությունից առաջ 3-րդ կամ 4-րդ դարերում: Եվ, ընդհակառակը, եթե մեզ պատահաբար հայտնի լիներ այն ժամանակաշրջանը, երբ այդ *kanabis-ը գերմաներեն է մտել, թող այդ լինի, ասենք, մեր թվարկությունից առաջ 5-րդ դարում, ապա մենք կկարողանայինք և պարտավոր կլինեինք ի վերջո, ելնելով այն բանից, որ նշված բառը նույնպես մասնակցել է տեղաշարժին, եզրակացնել, որ բաղաձայնների տեղաշարժը այդ ժամանակաշրջանից հետո, տվյալ դեպքում, ուրեմն, մեր թվարկությունից առաջ 5-րդ դարից հետո պետք է տեղի ունեցած լիներ: Այնուհետև, եթե Donau անունը իր մեջ բաղաձայնների գերմանական տեղաշարժի ոչ մի հետք չի կրում, ապա դրանից ելնելով՝ կարող ենք եզրակացնել, որ այն փոխ է առնվել (կելտերենից) միայն բաղաձայնների առաջին տեղաշարժից հետո, այսինքն՝ այն ժամանակաշրջանում, երբ այդ անունը գերմանական լեզուներ ներթափանցեց (ըստ Much PBr. 17, 63, մեր թվարկության մոտավորապես 100 թվին), երբ գերմանական տեղաշարժն արդեն ավարտված էր: Որովհետև, եթե մի որոշակի հնչյունական շարժում իր ազդեցությունն է ունեցել միևնույն հնչյունի վրա, համանման բոլոր դեպքերում, և այն փոփոխության է ենթարկվել, ապա հնչյունափոխության այդ երևույթը ինքնըստինքյան պետք է հանդարտված և դադարած լիներ գործելուց, որովհետև այն իր մեծ գործունեության համար այլևս որևէ առարկա չուներ, և եթե ես-

տագայում նույն այդ հնչյունը միևնույն պայմաններում վերստին ի հայտ է գալիս, ապա այն նախ և առաջ անփոփոխ է մնում¹, քանի որ այն ուժը, որը նախկինում ներազդել էր այդ հնչյունի վրա, արդեն հանգել է:

Եթե հնարավոր է որոշակի հանգամանքների առկայության պայմաններում, օտար բառերի փոխառության ժամանակաշրջանից ելնելով, որոշել տրվել լեզվի որոշ հնչյունափոխությունների տեղի ունենալու ժամանակաշրջանը, - և ընդհակառակը, - ուրեմն, թերևս, հայերենի համար սա հնարավոր կարելի է համարել, նրա կողմից փոխ առնված բազմաթիվ փոխառությունների միջոցով որոշել հայերենի ձայնավորների հնչյունական օրենքների մոտավոր ժամանակաշրջանը, որոնց ազդեցությանը մասամբ ենթարկվել են նաև այդ փոխառությունները:

Մինչդեռ միջին հայերենում այն օրենքն է գործում, համաձայն որի «a» ձայնավորը եռավանկ կամ բազմավանկ բառերի միջին վանկերում սղվում է կամ «ə» է տալիս, հին հայերենում գործում են իմ կողմից բազմիցս ձևավորված երկու օրենք՝ 1) «i» և «u» ձայնավորները պահպանվում են միայն վերջին վանկերում, մնացած դեպքերում նրանք (բաղաձայններից առաջ) սղվում են կամ «ə»² են տալիս (որը գրվում է միայն բառասկզբում «ո», «ու», «ի» + բաղաձայն կապակցություններից առաջ): 2) «t» և «nj» ձայնավորները պահպանվում են միայն վերջին վանկում, մնացած դեպքերում (բաղաձայններից առաջ) նրանք «i» և «u» են տալիս³: Միջին հայերենի հնչյունական օրենքների հետքերը առատորեն ի հայտ են գալիս ժամանակակից բարբառներում, *հմմտ.* լեհ. հայ. **բարդաք** badrak՝ «սուրբ պատարագ», հոգնակին՝ բարդրկներ badrəkner = հին հայ. **պատարագ** patarag, լեհ. հայ. **ստեղրան** avedran «ավետարան» = հին հայ. **ստեղրան** avetaran, լեհ. հայ. **տաղրստան** tadəstan «դատ» = հին հայ. **դատաստան** datastan «դատաստան», լեհ. հայ. **դեսնելու** desnelu «տեսնել» = հին հայ. **տեսանելոյ** tesaneloy և այլն (WZKM. I, 196-197); Մուշի բարբառում **բաղնիք** baynik՝ = հին հայ. **բաղանիք** bałanik՝; **հարսնիք** harsnik՝ «հարսանիք», լեհ. հայ. **հարսնիք** harsnik՝ = հին հայ. **հարսանիք** harsanik՝ և այլն (Մտերեանց, Stud. zur arm. Dialectologie, ռուս. I, էջ 12), սակայն դեռ «Անսիզ Անտիոքայ»-ում, որի ստեղծման ժամանակ

¹ Հմմտ. Brugmann, Zum heutigen Stand der Sprachw. էջ 55:

² Համաձայն գրության, այդ մեծ մասամբ գրավոր խոսքում է տեղի ունենում, մինչդեռ բանավոր խոսքում, ընդհակառակը, ավելի հաճախ տեղի է ունենում «i» և «u» հնչյունների փոխարինումը «ə»-ի, ինչպես այդ մասին վկայում են տաղաչափությունը և ժամանակակից բարբառները (տես WZKM. I, 299): Ավելի հանգամանորեն այդ մասին կարելի կլինի դատել միայն հատուկ ուսումնասիրությունների միջոցով:

³ Առաջին օրենքի սահմանափակման և որոշ բացառությունների կապակցությամբ տես իմ Arm. Etym. էջ 410-411 և էջ 143: Այս բացառություններին չի պատկանում հայերեն **տիկին** բառը, քանի որ այն սերվում է *tēkin բառից, ինչպես **տեղ-ը** tēr < *t-air-ից:

կաշրջանը ընկնում է 1265 թվից առաջ, այդ օրենքի ազդեցությունը, հաճախ գրավոր լեզվի ազդեցության տակ ակնհայտորեն բացակայում է, *հմմտ.* **տարբաս** tarbas «դատարան», գործ. **տարբասով** tarbsov (< *tarbasov) էջ 13, ներքևից տող 2-3, **համանք** hamank՝ «թույլտվություն», սեռ. համնաց էջ 13, տող 5 = հին հայ. **հրամանաց** էջ 13, տող 5, **համել** hamel «հրամայել» էջ 13, տող ներքևից 2 = հին հայ. **հրամայել** և այլն: Եթե, այսպիսով, 13-րդ դարը այդ օրենքի ներքին սահմանն է եղել, ապա մնում է նրա վերջին սահմանը որոշել: Սակայն այս առաջադրանքը պետք է հետագա հետազոտությունների առարկա դառնա, այստեղ մեզ ավելի հանգամանորեն զբաղեցնելու են միայն հին հայերենի վերը նշված օրենքները, որոնցից «i» և «u» ձայնավորների վերաբերյալ օրենքները ես հարկ եմ համարում նշել որպես առաջին, մինչդեռ մյուսը՝ որպես ձայնավորների երկրորդ օրենք:

Հին հայերենը այնպես, ինչպես մեզ է հասել մեզ հայտնի ամենահին մատենագրությամբ, այն է՝ 5-րդ դարում, այդ երկու օրենքներով լիովին համակված է, հետևաբար նրանց ազդեցությունը, այսպիսով, վերաբերում է նախքան մեր թվարկությունը 5-րդ դարից առաջ ընկած ժամանակաշրջանին: Սակայն դրանք ևս ձայնավորների զարգացման ամենահին օրենքները չեն, քանի որ բառավերջնային ձայնավորների օրենքները, որոնց համաձայն նախնական վերջին վանկերի ձայնավորները սղվում են (Arm. Etym. էջ 410), պետք է որ ավելի հին լինեն, մի բան, որ միանգամայն ակնհայտ է: Եթե օրինակի համար հայերենի հնչյունական օրենքները կիրառելու լինենք նախահայկական այնպիսի ձևերի նկատմամբ, ինչպես եզակի ուղղ. *dhuktēr «դուստր», սեռ. *dhuktrós, կամ հայցական հոլովի նկատմամբ՝ dhuktéros, հոգն. ուղղ. dhuktéres, ապա որպես նախնական հայկական ձևեր ստացվում են՝ եզակի ուղղ. *dustir, սեռ. *dustero(h), հոգն. ուղղ. *dustere(h), որոնք հետագայում, բառավերջնային հնչյունական օրենքների համաձայն, նախ տվել են ուղղ. դուստր, սեռ. *duster, հոգն. ուղղ. *duster-k՝, այնուհետև ձայնավորների առաջին օրենքի համաձայն՝ ուղղ. դուստր dustr, սեռ. դստեր dster, հոգն. ուղղ. դստերք dsterk՝, ինչպես և այդ ձևերը հնչում են իրականում: Եթե ձայնավորների առաջին օրենքն ավելի հին լիներ, քան բառավերջնային հնչյունական օրենքն էր, ապա եզակի ուղղականը ձայնավորների առաջին օրենքից հետո պետք է տար *dstir, իսկ նա իր հերթին բառավերջնային հնչյունական օրենքների ազդեցության տակ՝ *dəstr կամ որպես միավանկ՝ *dstir (Arm. Etym. էջ 410), մինչդեռ այն հնչում է **դուստր** dustr: Եթե, այսպիսով, բառավերջնային հնչյունական օրենքները որպես համեմատաբար ավելի վաղեմի պետք է դիտվեն, ապա նրանց ազդեցության բացարձակ ժամանակաշրջանը ևս հնարավոր չի լինի որոշել անզամ մոտավորապես, մինչդեռ եթե ես ճիշտ եմ մոտենում, հայերենի կողմից փոխառնված օտար բառերը վկայում են, որ հնչյունական նշված երկու

օրենքները, որոնք հայերենի ձայնավորների համակարգը հիմնական փոփոխությունների միայն պարթևական ժամանակաշրջանում ենթարկեցին, հետևաբար այդ օրենքների ազդեցությունը պարթևների ժամանակաշրջանին է վերաբերում: Ես կփորձեմ իմ այս դրույթը ապացուցել ստորև բերվող փաստական տվյալներով:

Չայնավորների առաջին օրենքը

Քանի որ, համաձայն ձայնավորների առաջին օրենքի, «i» և «u» ձայնավորները նախավերջին վանկում սղվում են, մինչդեռ վերջինում պահպանվում են (*հմմտ. դուստր* dustr, սեռ. դստեր dster; *սկիզբն* skizbn «սկիզբ», սեռ. սկըզբան; *տգէտ* tgēt < *tu(h)gēt = հնդեվր. *dus-voido-, սնու. durvēda-; *գտանեմ* gtanem «գտնել» < *gitanem // սնու. vid «գտնել»), ապա պետք է որ, այն բանից հետո, երբ այդ օրենքը ներագրել է, բաղաձայների միջև կանգնած բոլոր «i» և «u» ձայնավորները ոչ վերջին վանկում սղված լինեին: Եթե ապա հետագայում փոխառությունների հետևանքով հայերեն գային «i» և «u» ունեցող նոր բառեր, նրանք պետք է այս օրենքներից անմաս մնային, հետևաբար «ի» և «ու» ձայնավորները այդ բառերի բոլոր վանկերում պետք է պահպանվեին: Այդ օրինակի համար հենց այդպես են լեհ. հայերենի ավելի ուշ շրջանի փոխառությունները, *հմմտ. դուշման* dušman «թշնամի» = պրու. բուրք. dušman; *քիրաջ* k'iraj «կիր» = բուրք. kirej և այլն WZKM. 1 էջ 291 և 295, այս վերաբերում է նաև հին հայերենի վաղեմի շատ փոխառությունների, օր. *կաթողիկոս* kat'ohikos 5-րդ դ. = հուն. καθολικός, *փիլիսոփայ* p' ilisop' ay 5-րդ դ. = առոր. φιλόσοφος և այլն: Ուրեմն «i» և «u» ձայնավորներով այդ բառերը կամ փոխ են առնվել նշված հնչյունական օրենքների ազդեցությունից հետո, կամ, ինչը որ ըստ էության նույնն է, այդ օրենքները գործել են նշված բառերի փոխ առնվելուց առաջ: Եթե, սակայն, եղել են փոխառություններ, որոնք մեր օրենքի ազդեցությունից առաջ են մտել հայերեն, ապա փոխառությունների «i» և «u» ձայնավորները պետք է օրենքի ուժի մեջ մտնելու պահին նույն հաջողությանը ենթարկվեին հնչյունափոխության, ինչպես նույն այդ հնչյունները՝ բնիկ հայերեն բառերում, այն է՝ ոչ վերջին վանկերում նրանք պետք է սղվեին: Եթե, այսպիսով, պիլ. *kundurūk «խունկ» = պրու. kundurū, սնու. kunduruka- բառը հայերի կողմից փոխ է առնվել նախքան այդ օրենքի գործել սկսելը, ապա այն պետք է օրենքի ազդեցության տակ *kndruk* տար նույն այն ժամանակաշրջանում, երբ բնիկ հայկական *շուրջ-շուրջ-իմ իմ-իմ շուրջ-իմ «շրջել» բառը *շրջշրջիմ* šrjšrjim տար: Իրականում այդ այդպես էլ եղել է: Հետևաբար այդ օրենքը գործել է այն բանից հետո, երբ պիլ. *kundurūk-ը փոխ է առնվել և նախքան հուն. καθολικός-ն է փոխ առնվել: Այն փո-

խառությունը վերաբերում է պարթևների ժամանակաշրջանին, մինչդեռ այս քրիստոնեական (մոտավորապես 300 թվին), օրենքը ինքը, այսպիսով, վերաբերում է պարթևների ժամանակաշրջանին: Այժմ տեսնենք, թե արդյոք այս երկու դեպքով հիմնավորված վերծանումը իր հեմարանը կգտնի՞ նաև ուշադրության ներկայացվող այլ փոխառություններում:

Այն, որ վերջին վանկում հանդիպող «i» և «u» ձայնավորները ինչպես բնիկ հայերեն, այնպես էլ փոխառյալ բառերում են պահպանվում, ապացույցի կարիք չի զգում. այդ օրենքը գործում է առանց բացառության, անկախ այն բանից, թե այդ բառերը, որտեղ նրանք հանդիպում են, փոխ են առնվել ինքն, թե նոր ժամանակաշրջանում, *հմմտ. հայ. կապիճ* kapič = պիլ. kapič 165¹; *հայ. պայիկ* payik = պրու. paig, սնու. padika- 220; *հայ. բասիր* basir = առոր. bəsir 301; *հայ. պոռնիկ* pořnik = հուն. πορνικός 373; *հայ. արայիչ* arayiš = պրու. ārāyiš 262: Ուստի և ես անմիջապես կդիմեմ այն բառերին, որոնք իրենց «i» և «u» ձայնավորները ոչ վերջին վանկերում կամ կորցրել են, կամ պահպանել են դրանք և հերթով կքննարկեմ պարսկական, առորական և հունական փոխառությունները:

Ա. Պարսկական փոխառություններ

1ա) պրու. í-ն ոչ վերջին վանկում բաղաձայնների միջև հայերենում սղվել է հետևյալ բառերում.

bdeaxš, բարձր տիտղոսի անվանում = լատ. vitaxa, հուն. βιτάξης, πριτάξης 120; *bzišk* «բժիշկ» = պրու. պիլ. bijišk, սնու. bhišáj 120, 121; *grvan* «մծուց» = պիլ. *grwān 131; *grapan* «եգր», «շրջակարվածք» (զգեստի) *grv-a-pan ?-ի դիմաց = պիլ. grvřpān 132; *dpir* «դպիր» = պիլ. dipir (*հմմտ. հայրու. dipi-* «գիր») 145; *črag* «լույս», «ճրագ» = պրու. čirāy 190; *hāj. nždeh* «օտարական» = պրու. *niždahyu- 203; *hāj. nkar* «պատկեր» = պրու. nigār, ուրեմն՝ պիլ. *nikār 204; *hāj. nkun* «ցած» = պիլ. nikūn 205; *hāj. nhang* «մի առասպելական ջրային կենդանի» = պրու. nihang? 205; *hāj. nman* = պիլ. *nimān 205; *hāj. nšan* «նշան» = պիլ. nišan; *hāj. nšān* «նշանակ» «նշանակ» = պիլ. nišanak 206; *hāj. nšmar* «նշմար», «հետք» = պիլ. *nišmār 206; *hāj. nmtpr* nvēr «նվիրատվություն» = պիլ. *nivēd ? 207; *hāj. vkay* «վկա» = զենդ. vīkaya, հետևաբար = պիլ. *vikay 248; *hāj. včar* «վճար» = պիլ. vičār vicārtan բառի մեջ 248; *hāj. včir* «վճիր» = պիլ. vičir 248; *hāj. včit* «վճիտ», «մաքուր» = պիլ. vičit-ak? 248; *hāj. vnas* «վնաս» = պիլ. vinās 248; *hāj. vstah* «վստահ» = պիլ. vistāxv 249;

¹ Այստեղ և հետագայում բառերի կողքին տրվող թվերը վերաբերում են իմ Arm. Etymologic աշխատության այն էջերին, որտեղ նշվող բառերը քննարկվում են:

հայ. **vtak** «վտակ» = հայր. *vitāka-? 249; հայ. **vtang** «վտանգ» = հայր. *vitanka-? 249; հայ. **vtarem** «վտարել» = հայր. vi-tar «խախտել օրենքը, սահմանը» ? 250; հայ. **k'sak** «քսակ» = պր. k'sa, ուրեմն = պիլ. *k'sak 258; հայ. **Vštas** = պիլ. Vištāsp 85; հայ. **Trdat** = լատ. Tiridātes, հուն. Τιριδάτης, հայր. *Tiridāta- 89; հայ. **hndikk'** «Հնդկաստան» = պր. hindi «հնդկերեն» (< պիլ. *hindik), *hūm*. զենդ. հայր. hindu-, պիլ. hindūk:

Այս բոլոր բառերը հայերենում փաստարկված են 5-րդ դարում¹ և համաձայն իրենց հնչյունական հարաբերությունների² պետք է որ, կամ հնարավոր է, որ փոխառված լինեն պարթևների ժամանակաշրջանում: Ավելի ուշ շրջանում հիշատակվում է **գրտակ** grtak բառը «կլոր հաց» = պր. girda 132, որը ես հանգեցնում եմ պիլ. *girtak (= արաբ. jardaqa) բառին և քննարկել եմ «Pers. Stud.» էջ էջ 91 և 157-ում: Նույնը կարելի է ասել նաև vzean, vzenak «վնասի փոխհատուցում» բառերի նկատմամբ 150, որոնք հետ են գնում դեպի պիլ. *viziyān, *viziyānak, ինչպես նաև **vtar** (vtar) «Վար» 249, որը հավանաբար իդեոնիկ է պր. guḍār, պիլ. vitār «ճանապարհ», «զեռնանցք» բառի հետ: Հնչյունահարաբերությունները հնարավորություն են տալիս այստեղ նշելու նաև պարթևական ժամանակաշրջանի բառեր: Նկատի չեն առնվում այն բարբառները, որոնցում որպես հողակապ հանդես է գալիս «i» (կամ նաև «a» և «a») ձայնավորները, քանի որ բառաբարդման հողակապ ձայնավորները չկային արդեն իսկ միջին պարսկերենում, նրանց սղոմը պետք է վերագրել պարսկերենին (*hūm*. Pers. Stud. էջ 122-125), օր. **zanvar** «պատգարակ», «ղեսպակ» = պր. zanbar < *janiwara- 156; **partēz** «պարտեզ» = պր. pālēz < *pardēz, էբր. pardēs, զենդ. pairidaeza- 229; **paiker** «պատկեր» = պր. paikar, պիլ. patkar, հայր. patikara- 224 (*hūm*. նաև pat-ով կազմված բոլոր բաղադրությունները = հայր. pati- 222-227), հայ. **ausard** «ծեր կին» = հայր. *awisardā- 112, հայ. **Azdahak** = պր. aždahā, զենդ. ažiš dahākō 32: Այլ դեպքում, եթե բաղադրության ձայնավոր հողակապը պահպանվերենում դեռ պահպանված լիներ, այդ բառերը միայն մեր կարծիքը կհաստատեին, քանի որ նրանց

¹ Այն փոխառությունները, որոնք 5-րդ դարում շատ կիրառական էին, իրենց նկատմամբ հավանականություն են ներշնչում, որ դրանք հայերենում ավելի վաղուց են քաղաքացիական իրավունք ստացել, հետևաբար նաև ավելի վաղ շրջաններում պետք է փոխ առնված լինեն, քան նրանք, որոնք 5-րդ դարում հազվադեպ են հանդիպում կամ ավելի ուշ շրջանում են հիշատակվում:

² Սրանց կապակցությամբ ես այստեղ միայն կարող եմ հասցեագրել իմ «Pers. Studien» աշխատությունը, որտեղ ես վարձել եմ պարսկական հնչյունների զարգացմանը հետևել պատմականորեն: Ընդհանուր առմամբ գործում է այն օրինաչափությունը, որ պարսկական այն բառածը, որը համընկնում է պահպանական գրավոր ձևին, հարկ է դիտել որպես պարթևական: Սակայն *hūm*. Pers. Stud. 117 և ներքևում 148-149 էջերում տրվող դիտողությունները:

փոխառությունը պարթևական ժամանակաշրջանին է վերաբերում¹: Սրան են վերաբերում նաև հետևյալ բառերը, որոնք, քանի որ նրանց հնչյունահարաբերությունները կամ նրանց փոխ առնելու ժամանակաշրջանը հաստատ չեն, մեզ համար առանձին կշիռ չունեն **aspnjakān** «հյուրընկալ» 109, որը ըստ ասորերենի և մանդայերենի ձևի (տե՛ս Arm. Etym. էջ 109) կարող է հետ գնալ դեպի պիլ. *aspinjakān բառը, անշուշտ նաև պիլ. aspanjakān (*hūm*. պազ. պիլ. aspanj, պր. sipanj “a”-ով), մինչդեռ, ինչպես մի քանի այլ դեպքերում², ոնգայինի հնչեղությունը կամ սղված ձայնավորը (հայ. **ասպնջական**-ում aspnjakan = ասպնջական aspnjakan) անկանոն ձևով փոխարինում է լիարժեք ձայնավորին (պիլ. *aspanjakān); nzar =պր. պիլ. nizār «նիհար», միայն մեկ անգամ ըստ Wb. Յովհ. Մանդակունու մոտ՝ nihār «նիհար», «հյուծված» (= պր. nihār) Arm. Etym. էջ 203: Եթե առկա է եղել **նգար** ձևը, ապա այն, բնականաբար, պետք է սերվի պարթևական ժամանակաշրջանից; nkan, nkanak «հաց», որը գալիս է հավանաբար *nikan, *mikanak ձևից և անշուշտ սերվում է պարթևական ժամանակաշրջանից, սակայն հնչյունապես դժվարությամբ է համադրվում պր. nān, բելուջ. nagan, nayan «հաց» բառերի հետ 204; sngvēl, snkrvil «մի տեսակ հնդկական համեմունք», մեկ անգամ հիշատակված է MGg-ում, հավանաբար պետք է սնգվել sngvēl կարդալ = պալի singivēra, հուն. ζιγγίβερις, արաբ. պր. zanjabil “Ingwer” ? 238: Բառի հայերեն ձևը, տարիքը և հիմքում ընկած բնիկ բառը հաստատ չէ; եթե sngvēl ձևը միշտ է և նոր, ապա կարող է ոնգայինի ձայնեղությունը բնիկ բառի լիարժեք ձայնավորին փոխարինած լինել, ինչպես aspnjakan-ի³ դեպքում; p' šit «ծանրության մի չափ» բառը հանդիպում է միայն Անանիա Շիրակացու և Փիլոնի մոտ = պր. pišiz, pasiz, պիլ. p(i)šizak կամ p(i)šičak ? 255: Հայերեն և պարսկերեն բառերի հիմքում արդյոք պիլ. *pišit-ը չի ընկած⁴ ? Այդ դեպքում հայ. **փշխա**-ը p' šit պետք է հետ գնալ դեպի բնիկ պահլավական ձևը, այսինքն՝ մինչև պարթևական ժամանակաշրջան:

1p) Պարսկերեն “š”-ն բաղաձայնների միջև ոչ վերջին վանկում հայերենում սղվել է հետևյալ բառերում՝

Atrpatakan “Atropatene” = պիլ. āturpatakān¹, ասոր. ādurbaigān (5-րդ դար)

¹ Թերևս քաջառությամբ Աժդահակ-ի Մոկս. Խորենացու մոտ, որը կարող է հետ գնալ դեպի սասանյան մի Ազդահակ-ի: Աչքի է զարնում պիլ. պազ. “i”-ով aždahak-ը Bdh. և Min., որը կամ գրքային ձև պետք է լինի, կամ նորաբանություն Izafe-ով: Ընդունված ձևը համեմայն դեպս միայն aždahak-ն է:

² Տե՛ս ստորև հունական փոխառությունները, էջ 153:

³ Նմանօրինակ երևույթ է տեղի ունեցել քերես նաև p|p|l, p|p|l, p|p|l «պղպղ» ձևերում (տոր. աշխ.-ում և ավելի ուշ) = պր. p|p|l, “i” դիմաց “l”-ի ձայնեղացումը և ձայնավորի սղումն են մտել:

⁴ Այստեղից էլ պիլ. pišičak < *pišit-čak ? *hūm*. Pers. Stud. 191 և 227, նաև պր. anguzad < *angut + žat, (պր. žad-ի ազդեցության տակ “ž”-ով), Arm. Etym. 98:

բառ, պետք է որ լատ. tundo բառի հետ ազգակից լինի: kštapanak «մի տեսակ զարդ» 5-րդ դ. < *kuštapanak ձևից, սակայն ստուգաբանորեն մութ է -172; վերջապես ևս մի քանի բառեր, որոնցում պարսկերենի «ու» որպես «օ» է արտասանվում կամ սերվում է պիլ. “ծ”-ից և հայերենում տառադարձվել է որպես «օ»¹, որն անշուշտ մեր կանոնի տակ չի ընկնում. noxaz «նոխազ» 5-րդ դ. = պրս. nuhāz, պիլ. n(u)hāzik 207; Xosrov N. pr. = պրս. պազ. xusrav², հուն. Χοσρόης 44; pēšopay «առջևից գնացող», «առաջնորդ» - մեկ անգամ Սեբեոսի մոտ (7-րդ դ.) = պիլ. pēšupāi, պազ. pēšawāi, պրս. pēšvā 230; Rostom Մ. Խ., Սեբ. = պրս. Rustam: Այնուհետև տե՛ս նաև էջ 169-ում տրվող դիտողությունները:

Այստեղից հետևում է այն արդյունքը, որ այն փոխառությունները, որոնք, հայերենի հնչյունական օրենքների համաձայն, կորցրել են իրենց «i» և «a» ձայնավորները, պետք է վերաբերեին կամ կարող են վերաբերել պարթևական ժամանակաշրջանին:

2ա) պրս. Ի ձայնավորը ոչ վերջին վանկում բաղաձայների միջև պահպանվում է:

darīčak «ձուլակաղապար» = պրս. darīča 137: Այս ձևը վկայակոչվում է միայն 11-րդ դ., -īča վերջածանցը պարսկերենում (“č”-ի՝ ձայնավորներից հետո “z” տալու պատճառով) համեմատաբար նոր երևույթ է, տե՛ս Pers. Stud. 227; darīčenik «ղարչին» = պրս. dārčini, վրաց. darīčini 137, այս միայն Խոր. աշխ. 616, 12-ում վկայակոչված բառը կազմված է Izafe-ով (Կազ. i = հայրս. հարաբերական hya- դերանունը), որը գոնե նախապես ինքնուրույն բառ է եղել, քանի որ darīčenik-ը = միջ. պրս. *dār i čenik «չինական փայտ», նույնը նաև darīpēt «պղպեղ» Գաղիան. = միջ. պրս. **dār i pilpil (պղպեղի ծառ), նպրս. (արաբականացված) dārfilfil 138; buičenik MGg. 616, 12 = միջ. պրս. *boi i čēnik «չինական օձանելիք» (սասանյանների ժամանակաշրջանից, տե՛ս էջ 123, որտեղ արձանագրված է նույն կազմության այլ բառեր), denimazdēzn 5-րդ դ. «մազդեզական կրոնը» = պիլ. den i māzdēsān 139, 190; k'atak i hnduk Մովս. Կղնկտ. = phl. katak i hindūk «հնդկացու տուն» (որ հիշատակվում է 628 թվին Խոսրով II-ի մահվան ժամանակ) 48; koh i nihorakan լեռ N.(Խոր. աշխ.) = պրս. *kōh i nax'arakān 57; Marvirol այն է՝ Marv i rot 5-րդ դ. = պրս. Marv i rođ «Merv գետի» = «գետ-Մերվ» 51, 234; նշված բառերի³ «i»-ն

¹ Հմմտ. հայ. zohal 13-րդ դ. = արաբ. zuhal և այլն, էջ 265, հայ. p'osiš 10-րդ դ. նախնական p'ursiš-ի դիմաց 256: Նույն ձևով էլ “e” է կանգնած “i”-ի դիմաց mehekan բառում = պիլ. mihrakān 194 և այլն:

² Չենդ. haosrara, ըստ Ավետայի՝ Գեղդների հրատարակության:

³ Ավելացրու նաև Baklibamik Խոր. աշխ. Soukry-ի հրատարակությամբ - 40, պետք է կարդալ = պիլ. Balx i bāmik -31:

թերևս կպահպանվեր նաև պարթևական ժամանակաշրջանում, առավել ևս՝ սասանյանների ժամանակաշրջանում, որին էլ, ինչպես ես այդ ենթադրում եմ, վերաբերում են այս փոխառությունները; nihar «նիհար» հիշատակվում է մեկ անգամ Յովի. Մանդ. մոտ nzar տարբերակով (տե՛ս վերը), մյուս դեպքերում՝ 7-րդ դարում և ավելի ուշ = պրս. nihar 203: Իր ձևով այս բառը կարող է և հին, և նոր լինել, իր նշանակությամբ՝ ավելի շուտ նոր, քան հին; p'uštipan (կամ p'stipan) «քիկնապահ» 5-րդ դ. = պրս. puštībān, պիլ. puštīkrān¹ 255, նշված բառը, ըստ իս, էջ 221, սասանյան ավելի նոր ձևն է ալշակունյան paštran «պաշտպան» բառի դիմաց 5-րդ դ. = հայրս. parštīpān- 221; Andikan (տարբերակները՝ Andkan, Andekan) որպես IV և V դարի երկու պարսիկների անուն. Փ. Բ. և Դ. Փ. = պրս. Andiyān, հուն. Ἀνδιῶν, ուրեմն՝ պիլ. *Andīkān 18, այս անունը, քանի որ այն առհասարակ չի հանդիպում, հայերեն է մտել թերևս միայն հին սասանյան ժամանակաշրջանում; Garik'pet 34, կարդա՝ Darik'pet 7-րդ դարի պարսկական տիտղոս Սեբեոսի մոտ = պրս. *Darik'pet², հուն. δαριγβεδ Ἰθιζφι. 3, 18, 12 (ըստ Մարկվարտի), այս տիտղոսը վկայակոչվում է միայն երկու պարսիկների կողմից 6-րդ և 7-րդ դարերում, ուստի և հարկ չկա գնալ սասանյանների ժամանակաշրջան³; Mihran 5-րդ դար և ավելի ուշ = պրս. Mihrān 53, ըստ Pers. Stud. 205 ծանոթ. hr-ով ձևերը ընդհանրապես ավելի նոր են (սասանյան) rh=h-ով ձևերի համեմատությամբ, որոնք ես համարում եմ արշակունյան, հմմտ. հայ. մեհեկան mehekan = պիլ. mihrakān 194, Նյուդեբեի ցանկում 139 նշված Միհրան -ները ևս վերագրում եմ միայն սասանյան ժամանակաշրջանին; Mihr, Mihr-Nerseh, Mihr-všnasp 54, Veh-mihr-šapuh 84 և այլն = պրս. Mihr-narseh, Mihr-Gušnasp 54 և այլ անուններում պահպանում են իրենց «i»-ն, քանի որ այն սասանյան ձև է (շնորհիվ իր hr-ի) և հանդիպում է սասանյան կրկնակ անուններում, առավել ևս չէ՞ որ Միհր-ը այդ կրկնակ անուններում մնում է որպես ինքնուրույն բառ և կարող է որպես այդպիսին իր «ի»-ն պահպանել⁴; Mihrdat = լատ. Meherdates, պրս. Mīlād, պիլ. Mihrdāt-ān 54, այս բառը պետք է որ պարթևական փոխառություն լինի, քանի որ սասանյան (4-րդ դարում ասորերենում վկայակոչված) ձևը Mihlād է = Mīlād, հմմտ. Pers. Stud. 122 ծնթ., 189 և 260,

¹ Հայերենի «կ»-ի սղման մասին տե՛ս Pers. Stud. 243-244:

² Հայերենում «կ»-ի պահպանման մասին տե՛ս Pers. Stud. 244:

³ Նույնը վերաբերում է նաև ստուգաբանորեն դեռևս մութ Granik-satar տիտղոսին Մովս. Կղնկտ.-ի մոտ I, 238:

⁴ Տե՛ս վերը էջ 136-ի կապակցությամբ տրվող ծանոթությունը և հմմտ. Šapuh-varaz անունը = Varaz-šapuh և էջ 142-ում ներքևում Apzūt-kavat անունները:

սակայն պարթևական ձևը պետք է որ հայերենում *Mihrdat հնչեր (որից հետագայում սերվում են **Միհրատ** կամ **Մեհրատ** անունները) (Pers. Stud. 205, ծնթ.), հավանաբար այդ անունը, քանի որ հայերենում այն բոլորովին կիրառական չէր, այն երկու գործերն էլ¹, որոնցում այն հիշատակվում է, գրավոր ճանապարհներով ներթափանցած լինի: Մովս. Խորենացի¹ թերևս “Mar Ibas Katinay”-ից, որը մինչև էջ 82 որպես աղբյուր է ծառայում; Tigran, Արշակունիների արքայի անունը Փաստ. Բուգ. և Մովս. Խոր. (այստեղից էլ նաև ավելի ուշ շրջանի մատենագիրների մոտ) = հուն. Τυράνης 87, միաժամանակ էջ 88-ում, իմ կարծիքով, գրքային բառ է²; Tiran, Tirik և այլ անունների մասին տե՛ս Arm. Etym. էջ 88, այլ ձևով նաև ZDMG. 49, 655, հակառակը՝ Idg. F. VIII Anz. էջ 46: Եթե համենայն դեպս հայ. **Տիրան**-ը = սասան. *Tirān արշակունյան *Tiryān-ից ծագած լիներ, ապա այն օրինաչափորեն իր «i»-ն պետք է պահպանած լիներ:

Բացի այդ, «i»-ն դեռ պահպանվում է այնպիսի բառերում, ինչպիսին են՝ višap (5 դ. բավական հաճախ) 247, այն անշուշտ հին է, սակայն պետք չէ անպայման նույնացնել զենդ. višāpa (Nirangistan, տե՛ս ZPGI. 76 = Darmesteter, Z. A. III, 110) «թունավոր հյութ պարունակող», այլ այն կարող է սերվել մի ավելի վաղեմի *višap-ից³ -վիրայ viray «հատու» (5-րդ դար, հազվադեպ) = պազ. vīrai (առաջին վանկում երկար «ի»-ով, որը պիլ-ում կարող է կարդացվել vērai և vīrai և չի փոխարինում *vīrai ձևին - 247: Իր “ay”-ի պատճառով, որը = ai, նախնական ād-ի դիմաց (տե՛ս Pers. Stud. էջ 200) այն համենայն դեպս չի վերաբերում հին պարսկական ժամանակաշրջանին (1. 1.

¹ Այն վկայակոչվում է միայն Pseud. 94 և 100-ում հուն. Μιθριδατης ձևի դիմաց (մի հունարեն տեքստում, Raabe-ի հրատարակությամբ՝ էջ 53 և 56) որպես մի պարսիկի անուն Աղեքսանդրի և Դարեհի վերջին ժամանակաշրջաններից, ինչպես նաև Մ. Խորենացի 78, 84, 91 էջերում, որպես Դարեհի վերջինի և նրա հետնորդ Mithridates von Pontos ու նրա որդու՝ մի սատրապի անուն: Arm. Etym. էջ 52-ում կիրակոսից բերված հատվածը առհասարակ ուշադրության արժանի չէ: Վրաց պատմության մեջ հիշատակվող **Միհրդատ**-ը, անշուշտ, գալիս է վրացերենից: Pseud-ի մոտ հիշատակվող Vstasp և Cur (Arm. Etym. 85 և 293) ձևերում զգացվում է պարսկական և ստրակյան ազդեցություն:

² Նույնը վերաբերում է նաև Tigranakert անվանը Փ. Բ. և Մ. Խ. = հուն. Τυρανός, *hēmēt*. Mommsen, Hermes IX, էջ 130 և հայ: Kiepert, Alte. Geogr. էջ 80: Նշված անունը նորից կյանքի է կոչվում 17-րդ դարում Առաքելի մոտ, որը **Տիգրանակերտ** անունը օգտագործում է Hamif = Amida:

³ Հմմտ. վրաց. vešapi “baleine, serpent ailé, monstre” (Tchoubinof էջ 202), որը հավանաբար սերվում է նախապատմական *vēšap-ից, ինչպես վրաց. spetaki, speti «սպիտակ» (Tch. 466) ձևերը հայ. նախապատմական *սպետակ *spetak-ից = հայ. սպիտակ: Հարց է ծագում, թե այստեղ վրացերենում “i”-ի դիմաց արդյոք “e” չէր կարող կանգնել (*hēmēt*. վրաց. k'esa, k'isa-ի կողքին “bourse” = պրս. kisa, վրաց. spilenji “cuivre rouge” = հայ. պղինձ քիչ), եթե միայն vešapi-ն և spetaki-ն պարթևական ժամանակաշրջանում հայերենից կամ պարսկերենից փոխ չեն առնված: Նույն ձևով պետք է գնահատել հայ. gusan «զուսան» 131 և վրաց. mgosani «երաժիշտ» բառերի (Tchoubinof 278) փոխառնությունը:

էջ 201) և ստուգաբանորեն հենց առաջին վանկի i-ի պատճառով (պարսկերենում) մութ է; Širin (սեռ. Širinay Մեք. 46) Խոսրով II-ի կինը (590-628), միայն Սեբեոսի մոտ (7-րդ դար) = պրս. Širin 62, ինքը, ինչպես և Viroi-ն աղվանական կաթողիկոսի անուն է, Մովս. Կղնկտ.-ի մոտ (7-րդ կամ 10-րդ դար) = պրս. Vīrō, Vīrōi 509, հայերենում անշուշտ ավելի նոր է:

Այդ բառերից մի քանիսում «i»-ն անալոգիայով կամ գիտական ժառանգության ազդեցության տակ պահպանվել է, **Վիշապ** բառում այն հավանաբար օրինաչափորեն ē-ից է առաջացել, մնացած դեպքերում նրա պահպանման համար չկա որևէ այլ հիմք, քան այն, որ այդ բառերը միայն պարթևների ժամանակաշրջանի վերջում կամ նրանից հետո են փոխ առնվել:

Ուշադրության արժանի չեն՝ Zindkapet կամ Zndkapet ձևերը (միայն Փաստ. Բուգ. 41), տիտղոսի հայկական և պարսկական ձևը¹ հաստատ չէ; Դնիկան (միայն Եղիշէի մոտ, իսկ նրանից հետո Ղազար Փարպ.) 69: Տիտղոսի պարսկական ձևը անհայտ է²: «g»-ի փոխարեն j-ի առկայությունը (ըստ Pers. Stud. 153) վկայում է ավելի վաղ ժամանակաշրջանի մասին; Նիխոր Nixor, Nixorakan (5-7-րդ դար) 57, այս անվան պարսկական ձևը (Nax'argān) «i»-ի դիմաց հայերեն ə-ի մասին տե՛ս էջ 145:

Սրանց շարքին են դասում նաև արաբերենից և նոր պարսկերենից փոխ առնված բառերը, որոնք բոլորն էլ պահպանում են պրս. i-ն՝ žibak «սնդիկ» 13-րդ դ. = արաբ. zībaq, պրս. žīva 267; xalifay «խալիֆ» 13-րդ դ. = արաբ. xalīfa 267, hisar «պաշարում» (համենայն դեպս խսար xsar-ին զուգահեռ) 13-րդ դ. = արաբ. hišār 269; herisay «հարիսա» (modern) = արաբ. harīsa 516; šīšak «գառ» (modern) = պրս. šīšak 273; širik “քնուրթի ձեթ” (modern) = պրս. šira 273; badinjan «բադրջան» 12-րդ դ. // նպրս. արաբ. bādinjān 274; jhangir 13-րդ դ. = պրս. jihāngīn «տիրակալ» -275; surinjan «սորնջան» = արաբ. sūrinjān 277:

2^b) Պարսկերեն ն-ն ոչ վերջին վանկում բաղաձայնների միջև պահպանվում է՝

y-angumani-s «անսպասելի» 14-րդ դ. *hēmēt*. պրս. պազ. gumān, հայրս. *vimāna- 98; Gundīšapuh պարսկական մի քաղաքի անուն MGg. 7-րդ դ. = պրս. Gundīšāpūr, ավելի հին ձևը՝ Gundēv-šāpūr, հուն. Βενδειασφόρων πόλις 35; Gurgan “Hyrkanien” 7-րդ դ. = պրս. Gurgān ավելի վաղ հայ. Վրկան Vrkān 5-րդ դ. = հայրս. Vrkāna- 86; Gurgēn հայկական և վրացական անուն և այլն 10-րդ դ. = պրս. Gurgīn, ավելի վաղ հայ. Vrkēn (5-րդ դար) 86: Այս ձևերը բոլորը նախնական “vi” կամ vu(r)-ի դիմաց բառասկզբնային gu-ով միայն սասանյան շրջանին են վերաբերում, *hēmēt*. Pers. Stud. 161, 162, 163,

¹ Գալիս է Zindkpet-ի*g: Այս բառը հայերենում նոր բաղաբնություն է, կազմված է *zindik և pet բաղադրիչներից, ուստի և «a»-ն հոդակալան է, իսկ «i»-ի սղումը (դիկ-ում) կատարվել է ըստ անալոգիայի (*hēmēt*. ramkapet 233, kaušakkar 174 և այլն):

² Ո՞ր ձայնավորն է հայերենում «g»-ի և «n»-ի միջև (Ջ-նիկան բառում) սղվել:

այնուհետև թերևս նաև՝ gumarem «հավաքել, ժողովել» = պրս. gumāram 130 և Gumand-Šapuh մի պարսկական նախարարի անուն (Փաւստ. Բուգ. 5-րդ դ.) 35, եթե միայն այս բառերի «gu»-ն նույնպես «vi»-ից է գալիս, սակայն *hūmūt*. Pers. Stud. 161-162 և 163; anguzat “Silphium” MGg. angzat տարբերակով = պրս. anguzad, ավելի վաղ՝ *angut-žat 98, այս բառը դժվար թե սասանյանների ժամանակաշրջանից ավելի վաղեմի լինի, *hūmūt*. Pers. Stud. 191, § 85 a; čurak, կարդա՝ juřak «արու բազե» 11-րդ դ. = պրս. jurra, արաբ. zurraq 190; k'urak «քուռակ», «Վարք հարանց» = պրս. kurra, արաբ. kurraj պիլ. kur(r)ak ? (WZKM, 10, 183) 258; šustak «թաշկինակ» Յայսմ. (13-14 դդ.) = պրս. šusta, արաբ. šustaqa 215. այս երեք՝ ուշ վկայակոչված բառերը լավագույն դեպքում սասանյան կարող են լինել: juxtak «զույգ» հանդիպում է մեկ անգամ Կիրիեղի մոտ (5-րդ դ.), պրս. juft, պիլ. juxt՝ կամ yuxt զենդ. yuxta 233, շնորհիվ «j»-ի (y-ի դիմաց) ավելի ուշ շրջանի է վերաբերում; այն է՝ թերևս սասանյան ժամանակաշրջանին, *hūmūt*. Pers. Stud. 153-154; puš-pan (տարբերակը՝ p'sti-pan) «թիկնապահ» 5-րդ դ. = պրս. puštibān, պիլ. puštkpān 255, էջ 139-ում բերված փաստարկումների շնորհիվ՝ սասանյան; p'ursišn «ղատավարություն» = պրս. pursiš, պիլ. pursišn 256, միայն¹ Եղիշէ (5-րդ դ.), այն է՝ նրա պատմության վերջին և նոր գրված գլխում, հետևաբար հավանաբար միայն 5-րդ դարում, պարսկական փոխառություն; Hruden Մ. Խ. < *Hredun = պրս. Farēdūn, պազ. Frēdūn, պիլ. Frētōn, զենդ. θραεταona- 32, այն իր «t»-ի դիմաց «d»-ով և ծո-ի դիմաց ōn-ով սասանյան է, *hūmūt*. Pers. Stud. 142 և 189; նույնը նաև **Burdar**² մի պարսիկի անուն Մ. Խ. մոտ, եթե այն = պրս. burdār, պիլ. burtār 33; Apzut-kavat երկար պատը Կովկասում Խոր. աշխ. = պիլ. afzūt-Kavāt, այն ակնհայտորեն գալիս է Կաւատ արքայի անունից՝ 488-531, հետևաբար՝ սասանյան է³: Նույնը վերաբերում է նաև Šapuh-varaz 5-րդ դար = Varaz-šapuh պարսկական արքայի մարզպան (Šāpūr II 309-379) Փ. Բ.-ի մոտ, ասոր. Sābūr-Barāz, Šāwōr-barāz, 81; Xužastan “Susiana” 5-րդ դ. = պիլ. xuzistān, հայրս. Huvaža; հայ. xuzik⁴ “Susianer” 5-րդ դար = պրս. xūži, հայրս. huvažiya - 45; եթե հին պարսկական ձևը պետք է կարդալ uva-ով (ինչպես նաև առհասարակ հին պարսկական ձեռագրերում ևս uv-ը պետք է -uva կարդալ), ապա xūž-ով ձևը uva > ū սղման պատճառով համեմայն դեպս ավելի նոր է, *hūmūt*. Pers. Stud. 169 և վերը 1բ-ի տակ բերված՝ որպես պարթևական նշված (ոչ պայմանական) drvatik'; Juvan-veh⁵ մի պարսից նախարար Խոսրով II-ի թագա-

¹Սակայն *hūmūt*. p'osiš. Յովհ. կթ. (10 դ.):

²Վարդանի մոտ դրա դիմաց՝ Bundar:

³*Atur-ormizd-ի դիմաց Atr-ormizd-ի կապակցությամբ տես վերը՝ էջ 136:

⁴Վրաց. uziki “Chaldéon” Tchoubinof 733:

⁵Նաև Juan-veh գրությամբ, որը, սակայն, կարող է Ջուվան-վեհ կարդացվել: **տ** հնչյունական հաջորդականությունը բնիկ հայկական բառերում չի հանդիպում:

վորության ժամանակ (590-627) Սեբեոսի մոտ (7-րդ դ.) = միջ. պրս. jvān+vēh 69. այդ անունը y-ի դիմաց j-ի առկայության շնորհիվ (Pers. Stud. 153-154) ավելի նոր է, ըստ որում անվան կրողը ընթր 7-րդ դարին է պատկանում; Նույնը վերաբերում է Juvanšēr-ին 69; vaspurakan սասանյան դինաստիայի ազնվական բարձրագույն դասի անվանումը **վասպուրական համարակար-** ում Սեբ.-ի մոտ (7-րդ դ.), **Վասպուրական** Vaspurakan մի հայկական գավառ Մովս. Խոր. = պիլ. vāspuhrakān 80: Հայերեն բառը միայն սասանյան է, քանի որ պարթևական ձևը հայերենում պետք է *vaspurhakan կամ *vaspuhakan հնչեր, *hūmūt*. հայ. Շապուհ Šapuh = պիլ. šāhpuhr 60, տե՛ս նաև Pers. Stud. 206-207; Butmah Հայաստանի պարսկական կուսակալ Խոսրով II-ի օրոք՝ Սեբ. մոտ, *hūmūt*. պիլ. Māh-būt 33 և հայ. Xoroh-but 43, քանի որ այս սովորաբար չհանդիպող անունի կրողը միայն 7-րդ դարի սկզբում է երևան գալիս, ապա անունը հայերենում հին չէր կարող լինել: Turan և Makuran 5-րդ դ. պարսկական գավառներ = պրս. (արաբ.) Tūrān 88 և Mākūrān 50. Նշված անունների տարիքը հայերենում հնարավոր չէ որոշել, սակայն ինձ թվում է, որ նրանց կիրառությունը (միայն Եղիշէի պատմության 8-րդ գլխում, Մովսեսի Աշխարհացոյց-ի մեջ և Սեբ. մոտ) վկայում է հոգուտ այն բանի, որ նրանք միայն 5-րդ դարում են հայերեն մտել: Անորոշ է նաև հետևյալ անունների տարիքը՝ Maručan (տարբերակը՝ **Մարիճ**) 4-րդ դ., պարսից մի նախարար Փաւստ. Բուգ. մոտ = հուն. Μαροουζᾶς 52, պրս. Marūzan 507 (ū-ով թե՛ ὀ-ով) և Muškan 5-րդ դարի պարսից նախարար Եղիշէի մոտ Mškan-ի կողքին՝ պարսից 4-րդ դարի նախարար Փ. Բուգ. = պրս. Muškān 54: Ուշադրության արժանի չեն՝ yuškararik «մի երևակայական էակ» -5-րդ դար, որի պարսկական ձևը անհայտ է; patuhas «պատուհաս», «պատիժ» 5-րդ դար, եթե այն = պիլ. pātfrās-ին, “u” չունի, մեր կանոնի տակ է ընկնում 226: **Օշնան** ošnan «օճառարույս» 5-րդ դ.: (Եղիշէ, գլուխ 8), որը, եթե այն = պրս. ušnān-ի 259, ավելի շուտ **ուշնան** պետք է հնչեր և իր «ու»-ն, քանի որ այն բառակազմում էր կանգնած, այսպես թե այնպես պետք է պահպաներ: Մի առերևույթ բացառություն է կազմում **մուրհակ** murhak «մուրհակ», «փաստաթուղթ» բառը, 5-րդ դար = պիլ. muhrak (*hūmūt*. խալդ. muhraq, Horn Grundr. էջ 224, արաբ. muhraq «փաստաթուղթ» 6-րդ դար), պրս. muhr, սնս. mudrā 197, այստեղ “u”-ն մնում է, որովհետև «ի» և «ու» ձայնավորները “rh”-ից առաջ սովորաբար պահպանվում են, ինչպես այդ հետևում է nirhem «նիրհեղ» nirh «նիրհ» բառից = սնս. nidra 204 և իզական սեռ. ցույց տվող -ուհի = ուրհի urhi վերջածանցը (օր. Smbaturhi բառի մեջ և այլն, Festgruss an Roth էջ 105)¹:

¹ Հետևաբար նաև murhakan ձևը (Ազ.-ի մոտ) դժվար թե ճիշտ լինի, այլ պետք է **միրհական** կամ **միրական** կարդալ:

Արաբերենից փոխառյալ բառերում “մ”-ն պահպանվում է amir al mum-nik՝ «հավատացյալների հրամանատար» 8-րդ դ. = արաբ. amir ul mu'minina 262; **արուզնա** abuzna «կապիկ» 13-րդ դ. = արաբ. abūzinnata, պրու. būzina 262; **բաբունայ** babunaj «երիցուկ» 12-րդ դար = արաբ. պրու. babūnaj 263; **գուրգասար** gurgasar «գայլագլուխ» 13-րդ դար = պրու. *gurgsar 129; **տուտար** tutak՝ «թութակ» 12-րդ դ. = արաբ. tūtāk, պրու. tōtak 264; **դուռայ** duṛay «զգեստ» 12-րդ դ. = արաբ. durā'a 264; **մուշբարի** mušt'ari «Յուպիտեր» և այլն, տե՛ս էջ 265; **զունար** zunar «զոտի» նախքան 12-րդ դ.-ից = արաբ. պրու. zunnār 265; **զուրափե** zurap'ē «ընձուղտ» 13-րդ դ. = արաբ. zurāfa 265; **բուրիայ** fut'iy «collyrium» 12-րդ դ. = պրու. արաբ. tūtiyā 266; **բուրայա** t'uraya «բազմաստեղ» 13-րդ դ. = արաբ. Գurayyā 266; **բուրինջ** t'urinj «նարնջի մի տեսակ» «Վարք հարանց» = պրու. արաբ. turunj (նրա կողքին նաև հայ. **բրնջի** t'rnji 13-րդ դ.) 266; **խումարուբին** xumarut' iun «զինվություն» Ոսկիփորիկ = արաբ. xumār 268; **կարուրայ** karuray «միզաման» 12-րդ դ. = արաբ. qārūrā 269; **կուռայք** kuṛaik «Բուրան կարդացող» 8-րդ դ. = արաբ. qurrā 269; **հունար** hunab «ունար» 12-րդ դ. = արաբ. 'unnāb 271; **նուխայ** nusxa «օրինակ» 10-րդ դ. = արաբ. nusxay 272; **շումրայ** šumray «վայրի սամիթ» (modern) = արաբ. šumra 273; **չուխայ** čuxay «բրդե գործվածք» Վարք հարանց = պրու. čūxā 273; **ջումլայ** jumlay «զունար» Մովս. Կղնկտ. (7-րդ կամ 10-րդ դ) = արաբ. jumla 516; **սուրինջան** surinjan «վայրի քրքում» Mech. d. Arzt.-ի հավելվածը = արաբ. sūrinjān 277; **սունարեմ** sunat'em «թլփատել» Յայսմ. // արաբ. (թուրք.) sunnat 517 և այլն:

Արաբական այս փոխառություններում «ա»-ի պահպանման պատճառը պարզ է, քանի որ դրանք հայերեն են մտել 8 դարում և ավելի ուշ. նույնքան պարզ է նաև, թե ինչու են իրենց «ա»-ն պահպանել վերը բերված պարսկական բառերի մեծ մասը, քանի որ նրանք փոխառվել են միայն սասանյան ժամանակաշրջանում կամ ավելի ուշ, արդյոք նույն հիմքը չունե՞ն նաև այն բառերը, որոնց փոխառության ժամանակաշրջանը ճշտելու համար մենք հաստատ հենարան չունենք:

Համենատարբար ուշ շրջանի փոխառություններից մի քանիսի մոտ [լ] կամ [ն] սղվել են, այդ սղումը, սակայն, ինչպես այդ կարելի է եզրակացնել, ելնելով նոր փոխառություններից ընդհանրապես վերցրած, մեր օրենքի հետևանքը չէ, այլ օտար բառերի ոչ ճիշտ (լինի այդ բանավոր¹, թե գրավոր) նկարագիրը, այսպես, օրինակ՝ «io»-ն սղված է այնպիսի բառերում, ինչպես լգամ lgam «սանձ» մեկ անգամ Ոսկիփ. = պրու. ligām 267; **մթխալ** mt'xal

¹ Նույն այս ձևով լեհահայերենը և մի քանի ուշ շրջանի փոխառություններում լիարժեք (a, e, i և այլն) դիմաց [թ] է ընդունել, օր. kənar «ափ», mək' in «քշվառական», səhat «ժամ», «ժամանակ» և այլն, տե՛ս WZKM. 1, 299:

«ծանրության քաշ» 12-րդ դ. = արաբ. miθqāl 271; **բակլայ** baklay «բակլա» Լամբր. (12-րդ դ.) Թուրք առ Լևոն 24 = արաբ. baqilā 263; mkrat՝ «մկրատ» Յայսմ. = արաբ. miqrād 271; **gzir** «զգիր» (modern) = պրու. gizir 264, այնուհետև նաև վերը նշվածները՝ mumnik՝ = արաբ. mu'minina 262; abuzna = արաբ. abūzinnata 262; «ա»-ն սղված է՝ xarbzak «սեխ» 12-րդ դ. = պրու. xar-buza, xarbūza, պիլ. xarbūzak² 159; štrpaṅg³ «ընձուղտ» միայն MGg. Soukry-ի հրատարակությամբ 43, տող 1, ներքևից = պրու. šatur+paṅg 215; t'rnji, t'rnjeni 12-13-րդ դդ. t'urinj-ի կողքին «նարնջի մի տեսակ» 266, տե՛ս վերը; ttmaj «արիշտա» modern = պրու. tutmāj 264; t'mus «եզիպատալոն» 12-13-րդ դդ. = արաբ. turmus (tarmus, turmis) 267; smbul տարբերակը՝ sumbul «փայլասեմի» Գաղիան. = պրու. sunbul 277; snduk «սնդուկ», «արկղ» 10-րդ դ. *sunduk կամ *sanduk ? ձևերի դիմաց = արաբ. šandūq (ավելի բարեհունչ šundūq), պրու. sandūq, ռուս. СУНДУК (լեհ. հայ. սունդուկ < սնդուկ WZKM. 1, 296): Նույն այս ձևով որոշ դեպքերում սղվել է նաև «ա»-ն՝ zñil (Վարք հարանց) «շղթա», = պրու. zanjir, zinjir, բելուզ. Lw. zanjir, zamzil 265; klay «ամրոց» 12-րդ դ. = արաբ. qafa 269; mzkit', mzigit', msk' it' «մզկիթ» 12-րդ դ. = պրու. mazgit, արաբ. masjid⁴ 271; k'an «վուշ, քաթան» 12-րդ դ. (Լամբր. Թուրք առ Լևոն 240) = արաբ. kattān 278; k' min «ղարան, որոզայթ» 12-րդ դ. = արաբ. kamīn 278 և այլն:

Նույն ձևով էլ մի քան անգամ պրու. “i” կամ “u” ձայնավորների դիմաց “ə” է մտել⁵ əstaurak «ստյուրակ» մեկ անգամ Մովս. Կղնկտ. (7-րդ կամ 10-րդ դ.) = արաբ. istabraq 153 (< մպրու. *stawrak, hūmūn. qēnū. stawra- = պրու. sitabr, istabr); Danəšman “Herr von Sebaste” (11-րդ դ.) Վարդանի մոտ (13-րդ դ.) = պրու. dānišmand 36; jəvanšēr (jəvanšēr) 10-րդ դ. = juvanšēr 69; Դըմբավընդ Dəmbavənd «Դեմավենդ լեռը» Մ. Խ. = Dmbavand Խոր. աշխ. = արաբ. Dumbāvand 37; Vəndatakan պարսկական կուսակալ Հայաստանում Խոսրով II-ի օրոք, Մեք. 34, 70 պիլ. *vindātakān-ի դիմաց⁵ 85: Հմմտ. նաև ստորև էջ 153

¹ Համապատասխան վրացական ձևերը հնչում են՝ lagami, misvali, bakla, makrateli Tchoubinof 257, 299, 46, 267:

² Ես կասկածում եմ պահլավերենի ձևի կապակցությամբ. ուստի և հայերենի նոր վկայակոչված xarbzak բառը չեմ կարող որպես վաղեմի, մեր օրենքի ազդեցության ենթարկված պարսկական փոխառություն դիտել, որպիսին, սակայն, այն կարող էր լինել, եթե համադրվող պարսկական ձևը ճիշտ է:

³ -štr- «ուղտ» բառի պարսկական ձևը, որը հայերենում օրինաչափ փոխարինման դեպքում պետք է իր «ու»-ն պահպանի՝ uštr, քանի որ այն բառասկզբում է կանգնած:

⁴ Վրաց. mizgit 'i, misgit 'i Tchoubinof 294, 299 ձևերը թվում է թե հայերենից են սերվում և անորոշ ձայնավորի դիմաց “i” են մտցրել:

⁵ Այսինքն՝ գրության մեջ, որտեղ սովորաբար, բացի բառասկզբից, որպես կանոն այն չի դրվել: Արտասանվում է այն այսպես թե այնպես:

քննարկվող հունական ձայնավորների սղունը ռնգայիններից և նայ հնչյուններից առաջ:

Լուրջ դժվարություններ են պատճառում միայն անունները՝ հայ. Surēn 5-րդ դ. = արս. Sūrēn, հուն. Σουρήνας, լատ. Surena 73; Vndoi Սեթ. (7-րդ դ.) = արս. Bindōi և Vstam Սեթ. = արաբ. Bistām < արս. Bistahm = պիլ. Vistahm 85: Հանրահայտ պարթևական Sūrēn անունը (Nöldeke, Tab. 438-439) պետք է որ դեռ պարթևական ժամանակաշրջանից ծանոթ եղած լինի հայերին և հայերենում պետք է որ *Սրեն Srēn տված լիներ, ոչ **Սուրեն**, որի հիմքում պարթևական *Sōrēn անունը պետք է ընկած լիներ: Մինչդեռ Խոսրով II-ի (590-628) հորեղբայրներ Bindōi և Bistām անունները Պարսկաստանում մինչև 600 թիվը պետք է հանրահայտ լինեին, եթե նրանք այն ժամանակաշրջանում կամ ավելի ուշ են եկել հայերեն, այստեղ, եթե ոչ *Bindoi և *Bistam¹, ապա համեմայն դեպս *Vindoi և Vistam պետք է հնչեին: Սակայն այն փաստը, որ նրանց դիմաց 7-րդ դարում Vndoi և Vstam են երևան գալիս, թերևս պետք է բացատրել նրանով, որ այդ անունները դեռ արդեն ավելի վաղ դարերում էին հայերին ծանոթ և կիրառական, ուստի և դեռ 7-րդ դարում կարող էին ավելի ուշ շրջանի պարսկական ձևերին փոխարինել, մոտավորապես այնպես, ինչպես **Վրկանը** մնաց “Hyrcaenien” դիմաց, անգամ այն դեպքում, երբ **Գուրգան** ավելի ուշ ձևը վաղուց արդեն պարսից շուրթերից էր ընդօրինակվել²: Այնուհետև նաև Սեթեսի մոտ **Վասամ**-ն է հանդիպում որպես երկու հայերի անուն, հետևաբար, իսկապես որ, այն հայերի մոտ գործածական էր: Մինչդեռ **Vndoi**-ն հայերենում միայն մեկ անգամ է հիշատակվում որպես պարսկական **Mogpet**-ի անուն, որը 5 դարում որպես մարզպան Հայաստան եկավ և այնտեղ Դվինում հայերի կողմից հրկիզվեց (Թովմ. Արծր. 77-78): Այստեղ հանդիպող բոլոր դժվարությունները են բավարար չափով չեն կարող լուծել:

¹ *vindāt-ը ավելի շատ անուններում է հանդիպում, քան Vindād-ը, հետագայում Bundād, Arm. Etym. 85, Justi Namenbuch 370: Պագ.-ում vandād դերբայական ձևը (պահլավական գրության մեջ՝ v(a)ndāt) «ձեռք բերված», որը կարող է ներկայի Vand հիմքի հետ (պագ. vandašn < պիլ. *vindišn) միանալ, եթե միայն այն ընկալվում է որպես նոր պարսկերենի հետ նմանօրինակ կազմություն՝ uftād: uftam, nihād: niham Horn. Grdr. էջ 300 ենթադրաբար նրա հետ հարադրում է պիլ. vindītan-ը, որը սակայն չի համապատասխանում բերված անուններին: Phl. Min. 57, 19-21-ում չկա այն բառը, որը, որպես համարժեք արձանագրված է սենական Gl. and Ind. էջ 29-ում:

² Սեթեսի հետ միաժամանակ (Նյուդեբեի թարգմանությամբ, Guidi-ի հրատարակությամբ) հրատարակված ասորական բրոնզեկոնուն (670-680) բերված են Bindōi և Bistām ձևերը (տե՛ս թարգմանություն էջ 8-ը) Մովս. Կոնկտ.-ի մոտ I, 286 (Մոսկվայի հրատարակություն էջ 135), որը ըստ Մանանդեանի վերաբերում է 10-րդ դարին, նշվում են **Բնդոյ** և **Վասամ** անունները (առաջինը պարսկական Bindoi-ի և հայ. Վնդոյ-ի՝ ձևերի խառնուրդն է):

Անհրաժեշտ է նշել նաև Zrvan անունը 5-րդ դ. = պիլ. zurvān, zrvān, պագ. zurvān, արս. zarvān 42: Հայկական ձևը կարող է *zrvan-ի դիմաց կանգնել¹ և պետք է կցվի գեղն. zrvan- = zrvan-ին: Այս բառը հավանաբար միայն Ավեստայից է մտել պարսկերեն որպես պարսկական բառ, Pers. Stud. 69, իսկ իր իմաստով որպես «աստվածային էակ» հայերեն պետք է եկած լինի միայն սասանյան ժամանակաշրջանում²:

Հին հայ մատենագիրների մոտ հանդիպող պարսկական ծագում ունեցող բառերն ու անունները ընդհանուր առմամբ ցույց են տալիս մի այնպիսի հնադարյան հնչյունական պատկեր, որ սկզբից ևեթ կարելի է տրամադրվել ենթադրելու, որ նրանք փոխառվել են պարթևական ժամանակաշրջանում: Հօգուտ դրան է խոսում թերևս առանձնապես այն հանգամանքը, որ այդ բառերում հին խուլ պայթականները՝ k, t, p-ն, ձայնավորների միջև r-ից հետո գրեթե լիովին պահպանվել են և ոչ թե, ինչպես սասանյան ժամանակաշրջանի պարսկական բառերում հնչել g, δ, ω տվել: Բնականաբար հարց է ծագում, թե երբ է տեղի ունեցել այդ հնչեղացումը: Եթե այդ տեղի է ունեցել մեր թվարկության IV դարում, ինչպես են այդ ենթադրում էի Pers. Stud. 179, 189, 239 էջերում, ապա հնագույն շրջանի սասանյան փոխառություններում համեմայն դեպս պետք էր սպասել խուլ պայթականներ³: Սակայն այդ ի վիճակի չէի բացատրելու, թե ինչպես նաև վերջին սասանյան ժամանակաշրջանի պարսկական անունները հայերի մոտ երևան են գալիս խուլ պայթականների փոխարեն ձայնեղներով, մինչդեռ նրանք հույների և ասորիների մոտ հանդես են գալիս սպասելի ձայնեղ պայթականներով⁴: Այստեղ, անշուշտ, հաշվի է առնվում այն, որ այս անուններից շատերը հայերին հայտնի են ավելի վաղ ժամանակներից և վաղեմի ձևերով, և նրանք, այդ իսկ պատճառով, ավելի ուշ շրջանի ձևերը միշտ էլ ավելի վաղ ձևերով կարող էին փոխարինվել, ինչպես և, անշուշտ, նաև պատահական ձևերով, սակայն միայն բացառության կարգով: Հույներն ու ասորիները իրենց հայտնի վաղեմի ձևն օգտագործում են ժամա-

¹ Հմմտ. նաև արս. Vahram-ը, որը հայերը պահել են մասամբ որպես **Վաթրամ**, մասամբ՝ փոխարինել են **Վասամ**-ով Arm. Etym. 78:

² Զանի որ հայերեն գրության մեջ ua = va պետք է տա:

³ Այլ բան է, եթե, ինչպես Անդրեասը, ընդունենք, որ ձայնավորների միջև t-ն մեր թվարկությունից առաջ առաջին դարում “δ” է տվել (Pers. Stud. 273), որի համար են կարծես թե դեռ ոչ մի ապացույց չունեն, չնայած ենթադրությունը հնարավոր է:

⁴ Մրանք հանդիպում են միայն հետևյալ դեպքերում Gurgan 7-րդ և 13-րդ դ. = ասոր. Gurgān 5-րդ դ., արս. Gurgān (ավելի վաղ ձևը Vrkan 5-րդ դ., հայր. Vrkāna-) 86; Gurgān 10-րդ դ. = արս. Gurgin (ավելի վաղ՝ Vrkān) 86 Sagastan 7-րդ դ., հմմտ. լատ. Segestani 4-րդ դ., հայ. Sakastan ձևին գուգահեռ 5-րդ դ., հայր. Saka- ձևի համար, այստեղից նաև Սագահի Sagēk U. Խ. մոտ = արս. Saggzi 71; Hruden U. Խ. մոտ = պագ. Frēdūn, գեղն. θρακταona - 32; anušadr modern հմմտ. ասոր. anōšā- dūr 100; ardu 5-րդ դ. = ἀραβή 111: bob 7-րդ դ. = պիլ. bōp, արս. bōb 121; օbin 7-րդ կամ 10-րդ դ. = արս. ḥōbin 78; avaj կամ avač, վրաց. avaja (Tchoub. 6) = պիլ. āvāč, արս. āvaz 112:

նակակից ձևի փոխարեն¹: Մակայն հավանական է², արդյոք, որ 4-7-րդ դդ. բոլոր պարսիկների անունները հայերի մոտ փոխարինվեին նրանց պայթական ձևերով: Այնուհետև, եթե պիլ. -ak, -ik, -ük վերջածանցների “k”-խուլ պայթականը ավելի ուշ սասանյան ժամանակաշրջանի հայերի և ասորիների մոտ երևան է գալիս որպես հնչեղ պայթական “g” և պազենդերենում արդեն լիովին անհայտանում է. մենք պետք է, քանի որ այս վերջածանցները բոլորը որպես -ակ, -իկ, -ուկ են կիրառվում², ընդունե՞՞նք, որ բոլոր փոխառությունները, որոնցում այս վերջածանցները հանդիպում են, պարթևական ժամանակաշրջանին են վերաբերում: Այսպես, օրինակ՝ նաև daričak 11-րդ դ. = պրս. darīča; xapšik «նեգր», «հարեշ» Վարք հարանց = արաբ. պրս. habašī 159; Zapranik N. pr. 10-րդ դարի վերջում = պրս. za’ farānī 41; žipak, կարդա՛ ժիբակ žibak «անդիկ» (12-րդ դ. հետո) = պրս. žīva, արաբ. zībaq 267; čurak «բազե» կարդա՛ jurak 11-րդ դ. = պրս. jurra 190 և այլն ? Այս հավանական չէ և ավելի շուտ կարելի է ենթադրել, որ հայերն այստեղ միջին պարսկական -ag, -ig, -ūg-ը կամ նույնիսկ պարսկական -a, -ī, -ū-ն բազմաթիվ -ak, -ik, -uk-ով ավարտվող փոխառությունների ազդեցության տակ -ակ, -իկ, -ուկ-ի են վերածել³: Անշուշտ կարելի է նաև ենթադրել, որ հայերը ձայնավորներից հետո միջին պարսկական k, t, p-ի դիմաց ստացված g, ḡ, w-ն (= պրս. g, d, b) պետք է որ իրենց խուլ պայթական կ, տ, պ-ն substituir hätten, քանի որ նրանք հավանաբար նույն հնչյունները չունեին⁴, սակայն այդ քիչ հավանական է, որովհետև նրանք օտար g, ḡ, w հնչյունները նույն այդ ժամանակաշրջանում սովորաբար հայերեն g, d, b կամ v-ով են արտահայտել: Այսպիսով, առայժմ մութ է մնում, թե պարսկերենից փոխառյալ բառերը ինչպե՞ս կարող էին հին

¹ Հմմտ. հուն. Καβάτης (= պիլ. Kavāt) 628 թվից եկող մի մատենագրության մեջ, Chron Pasch.-ի վերջում (Nöldicke Tab. 135) Καβάτης-ի փոխարեն (= ասոր. Qarād); ասոր. Varahrān (= պիլ. Varahrān) ասորական 7-րդ դարի Քրոնիկոնում (Նյոլդեկեի բարգմանությամբ էջ 5) Vahrām čōbān-ի դիմաց (վախճանվել է 6-րդ դարի վերջում), որին հայերը իրենք միայն Վահրամ են անվանում; ասոր. Artašir BB 4, 35 = Artašahr (i. J. 430) Ardašir-ի կողքին (i. J. 410) և Ardaširagan (7-րդ դ.) = սասան. պրս. Artaxšir, Artašir, Ardašir ձևերին - 29:

² Հայերենում երբեք -ag, -ig, -ug չեն հանդիպում, ինչպես նաև «a» -ak, -ag-ի դիմաց, նաև՝ u, -ük, -ūg-ի դիմաց, կամ «i» -ik, -ig-ի դիմաց, բացի p’artay բառից, կարդա՛ p’arda (10-12-րդ դդ. կամ ավելի ուշ) = պրս. parda 278 (ավելի վաղ՝ partak 8-րդ դ. 299), ինչպես նաև t’asu-ից 12 դ. = պրս. tasū, արաբ. tassūj, պիլ. *tasūk 266 և խիթի xīr Խիթիար Հերացի 12-րդ դ. = պրս. արաբ. xīr, պիլ. *xīrīk կամ xērīk 268:

³ Այս ճանապարհով միջին և նոր պարսկերենի -agān-ի (< պիլ. akān) դիմաց հայերենում միշտ -ական է օգտագործվում, որը հայերեն է մտել պարթևական ժամանակաշրջանի բազմաթիվ փոխառությունների հետ և այստեղ այն աստիճան կենսունակ է դարձել, որ միանում է նաև բնիկ հայերեն բառերի հետ. հմմտ. Arm. Etym. էջ 94:

⁴ Նրանց մեջ իրականում բացակայում են “ḡ” և “w” հնչյունները, իսկ պարսկերեն “g”-ն պետք է որ խուլ հնչյուն եղած լինի:

խուլ պայթականները գրեթե լիովին պահպանել¹, որ նրանք՝ ոչ բոլորը պետք է պարթևական ժամանակաշրջանին վերագրվեին, ցույց է տալիս Arm. Etym. էջ 13-ում նշված բառերի հնչյունական հարաբերակցությունը², որոնք երկու անգամ տարբեր ժամանակաշրջաններում փոխ են առնվել պարսկերենից: Եթե պարթևական և սասանյան ձևերի միջև վերը նշված տարբերությունը ճիշտ չհամարենք, ելնելով այն բանից, որ ոչ միայն նրանք, այլ նաև սրանք են իրենց խուլ պայթական k, t, p, č հնչյունները պահպանել, ապա թերևս կարելի կլինի պարթևների փոխարեն վաղ միջին պարսկերենը դնել, սասանյանի փոխարեն՝ ուշ միջին պարսկերենը, կամ, եթե այսպիսով մոտավորապես բոլոր փոխառությունները վերագրվեն պարթևական ժամանակաշրջանին, անհրաժեշտ կլինի տարբերակել վաղ-պարթևական և ուշ-պարթևական ձևերի միջև: Համենայն դեպս միջին պարսկերենի հին և նոր փոխառությունների միջև գոյություն ունեցող տարբերությունը մնում է:

Բ. Ասորական փոխառություններ

Մինչդեռ հայերենը պարսկական, արաբական և հունական ձայնավորները ընդհանուր առմամբ մեծ ճշտությամբ և հավատարմությամբ է պահպանել, ասորական ձայնավորների նկատմամբ իրեն ավելի մեծ ազատություն է թույլ տալիս, որը հիմնականում թերևս պետք է բացատրել ասորական և հայկական ձայնավորների համակարգերի լուրջ տարբերությամբ: Եթե անդրադառնալու լինենք հայ-ասորական համադրություններում ձայնավորների տարբերությունների վրա, ինչպես, օրինակ՝ գաղիշ = ասոր. ցօժիժ 301, կեղև kelev = ասոր. ցօլօթ 307, ծրար crar = ասոր. ցօրօր 306 (հայերեն «ա», «ե» ասորական “օ”-ի դիմաց), հեզնայ hegenay = ասոր. hegyānā 309, մազ maz = ասոր. mezzē 310, ցից ciç = ասոր. ցօց 317 (հայ. ե, ա, ի ասորական e-ի դիմաց); մտրակ mtrak = ասոր. matrēqā 312, սափրեմ sap’rem // ասոր. sappar 316, տլայ tlay = ասոր. talyā 317, փրկեմ p’rkem = ասոր. pōraq 318 (հայերենում ասորական a-ի սղումով), այնուհետև շրթայ št’ay = ասոր. šēšaltā 314 և այլն, ապա մեր օրենքի համար ասորերենում առանձին հենարան սպասելի չէ, առանձնապես յ և ս կարճ ձայնավորների օրենքի վերաբերյալ, որոնք ասորերենում որպես e³ և u պահպանվել են միայն փակ վանկում և հայերի

¹ Ինչպե՞ս է արաբական 9-րդ դարի Dīrdād-ը Յովի. կթ.-ի մոտ (10-րդ դար) իսկական պարթևական անվանաձև տվել, ինչպիսին է Dērdāt-ը = պիլ. *Dērdāt:

² Հմմտ. նաև՝ հին ձևը *atur 110, նորը՝ at’as 92, նաև անուններում, տե՛ս էջ 17 և 23; հինը՝ boir 122, նորը՝ bui 123; հինը՝ yavanak 198, նորը՝ juvan 69; հինը՝ Artašēs, նորը՝ Artašir 28; հինը՝ Viam, նորը՝ Vahram 78; հինը՝ mogpet, նորը՝ *movpet 195; հինը՝ patker = պիլ. patkar «պատկեր» 224, նորը՝ paik’ar = պիլ. patkār «վեճ» 220 (ինչպես նաև pat-ով կամ pai-ով կազմված այլ բառեր = հայր. pati) և այլն:

³ Ի դեպ, “a” և “u” ձայնավորները նույնպես ասորերենում փակ վանկում կարող են “e” տալ:

կողմից փոխ առնվելիս հեշտությամբ կարող էին ուշադրությունից վրիպել: Չնայած դրան, ասորական փոխառությունները ընդհանուր առմամբ մեր օրենքին լավ են համապատասխանում:

Ասորական *ի* և *ն* ձայնավորները ոչ վերջին վանկում բաղաձայնների միջև հայերենում սղվել են:

Dklat' (տարբերակները՝ Dglat' Սեբ., Dklat' Կալիսոբ. Deklat' Թուվ.) 5-րդ դ. «Տիգրիս գետի անունը» < *Diklat' = ասոր. Deqla9 (e-ով < i-ից), Plinius-ի մոտ՝ Diglito, Jos.-ի մոտ, Διγλάθ, պիլ. գրության ձևը՝ Dglt = *Diglat կամ *Digla9, արաբ. Dijla, հայր. Tigrā (< *Tiglā, *Diglā-ի դիմաց) 292; Mcbin < *Micbin «Մծբին բաղաքի անունը» 5-րդ դ. = ասոր. Nšīwīn (Nəšīwīn), հուն. Νισσιβίς¹ Ստրաբոնի մոտ, լատ. Nisibis Plin., Tac.; hreay «հրեա» 5-րդ դ. < *hureay² = *hudeay, *hudāyā-ի դիմաց = ասոր. ihūdāyā 309: Բոլոր երեք անուններն էլ հին են և հայերին կարող են ծանոթ լինել նախքան մեր թվարկության սկիզբը, հետևաբար մեր օրենքի ազդեցությունն արդեն կրել են: Սակայն այդ ինձ, ընդհակառակը՝ կասկածելի է թվում հետևյալ բառերի կապակցությամբ, որոնք թերևս Հայաստան են եկել միայն հին՝ սասանյան ժամանակաշրջանում և կորցրել են իրենց e = i և "u" ձայնավորները, ինչպես վերը բերված բառերը իրենց "ā"-ն են կորցրել՝ gzat' "գեղմ" 5-րդ դ. = ասոր. gezzə9ā, եբր. gizzā 302; cnclay "ծնծղա" 5-րդ դ. (միայն Աստվածաշնչում և նրա ազդեցության տակ գրված գործերում) = ասոր. šesšə9ā 306; k'nar «քնար» 5-րդ դ. = ասոր. kennārā, եբր. kinnōr, հուն. κινύρα 319; k'rk'um "զաֆրան" 5-րդ դ. = ասոր. kurkə9mā 320; Այնուհետև նաև՝ knik' «կնիք» 5-րդ դ. = ասոր. kunukku կամ kaniku ? 307; urbat' «ուրբաթ» (< *urubat' ?) 5-րդ դ. = ասոր. əwə9ā 315:

Ասոր. *ի* և *ն* ձայնավորները ոչ վերջին վանկում բաղաձայնների միջև հայերենում պահպանվում են:

1. *ի*-ն պահպանվում է այնպիսի բառերում, ինչպիսիք են՝ արեղայ abelay «արեղա» 5-րդ դ. = ասոր. awilā (հայ. e < i) 299; amiray «էմիր» 5-րդ դ. = ասոր. amirā 300; manišak «մանուշակ» 5-րդ դ. = ասոր. mənīška 311; šap'itā «շափյուղա» 5-րդ դ. = ասոր. sappilā 313; šip' oray, šep' oray «շեփոր» 5-րդ դ. =

ասոր. šifōrā 313; p'ilisop'ay «փիլիսոփա» 5 դ. = ասոր. filōsōfā 318; k'usitay «վանակամի վեղար» 5-րդ դ. = ասոր. kostā9ā 319; (Mar Ibas) Katinay Մ. Խ. = ասոր. (Mār Hīwā) Qattīnā 288; Abdišoy 10-րդ դ. = ասոր. Awdišō 289; Brk' išoy¹ 5-րդ դ. = ասոր. Brīxišō 292; Gadišoy 5-րդ դ. = ասոր. gaddā + išō Ehišay 5-րդ դ. = ասոր. Eliša 292; Kamyišō 7-րդ դ. = ասոր. Qāmīšō 294; Ninvē Նինվե 5-րդ դ. = ասոր. Nīnvē 295; Šahitay «մի ասորի» (ապրել է 4-րդ դարում) = ասոր. Šallitā 296; Šamiram = ասոր. Šamīrām 296; Շուփհաղիշոյ Šup' hašoy 7 կամ 10-րդ դդ. = ասոր. Šuwxālišō 298: Այստեղ բերված անունները վերաբերում են քրիստոնեական, այսինքն՝ սասանյան և ավելի ուշ ժամանակաշրջաններին: Նույնը վերաբերում է նաև՝ արեղայ abelay, amiray, ամիրայ, փիլիսոփայ p'ilosop'ay և քուսիթայ k'usit'ay բառերին: Որևէ հիմք չկա կարծելու, որ մնացած երեք բառերը ավելի վաղ ժամանակաշրջանին են վերաբերում:

2. "ū"-ն պահպանվում է հետևյալ բառերում՝ at'ut' aik' «տառեր» 5-րդ դ. = ասոր. ā9ū9ā 300; bucin «պատույզ» 5-րդ դ. (մեկ անգամ Վեցոր.) = ասոր. būšīnā 301; lumay «լումա» 5-րդ դ. = ասոր. lūmā 304; karkuray «նավակ» Եփրեմի մոտ 5-րդ դ., նաև՝ Իսիք 8-րդ դ. = ասոր. qarqūrā 307; šukay «շուկա» 12-րդ դ. = ասոր. šūqā 314; šušmay "քնջութ" 11-րդ դ. = ասոր. šušmā; šušp'ay "սրբերի մասունքներ, խաչ փաթաթելու շոր" 14-րդ դ. = ասոր. šūšəppā 314; k'ušnay «տափուղո» 13-րդ դ. = ասոր. կամ արաբ. kušnā 319; k'uray (տարբերակը՝ քրայ k'ray) «քուրա» 5-րդ դ. = ասոր. kūrā 319; Մարտթա Marut' a "Վրք. և վկ. սրբոց" = ասոր. Mārū9ā 294; Մուշէ Mušē 5-րդ դ. = ասոր. Mušē 295:

Այս բառերից համեմատաբար ուշ հիշատակվածները միայն հետասանյան ժամանակաշրջանին են վերաբերում, մինչդեռ Մուշէն որպես քրիստոնեական անուն՝ սասանյան ժամանակաշրջանին: Մնացած բառերից և ոչ մեկի մոտ ես ոչ մի հիմք չեմ գտնում նրանց՝ այն ժամանակաշրջանից դուրս գալու համար, որի սահմաններում, անշուշտ, ասորերենն է իր հիմնական ազդեցությունը ունեցել հայերենի վրա (Arm. Etym. էջ 283): Ավելի վաղ ժամանակներից կարող է սերված լինել թերևս Uthai "Edessa" բառը (5-րդ դ.) = ասոր. Orhāi, ավելի ուշ՝ Urhōi 298, սակայն բառասկզբնային ու-ն հայերենում ամեն դեպքում պետք է որ պահպանվեր:

Ասորական փոխառությունները, այսպիսով, ցույց են տալիս ընդհանուր առմամբ, որ գերծ են մնացել մեր օրենքի ներգործությունից, և քանի որ նրանց փոխառության ժամանակաշրջանը հիմնականում սասանյանն է, ապա պետք է որ այդ օրենքի ներգործությունը նախորդած լինի նշված ժամանակաշրջանին:

¹ Բրիտիշոյ Brik' išoy-ի փոխարեն առաջին *ի*-ի ոչ օրինակափ սղումով:

¹ Հմմտ. հայ. Թր'իս Սեբեոս 33, 45, MGg. = վրաց. Թր'իլիս, հուն. Թ'իփուլիս Theoph.
² Հմմտ. վրաց. uria Tchoubinof 733, կամ huria «հրեա»: Զանի որ վրացիները հայ. «ը»-ն միայն հազվադեպ են որևէ լիարժեք ձայնավորներով փոխարինում (տե՛ս ստորև էջ 157, ծնթ.). ինձ թվում է՝ վրաց. uria-ն չի կարող *հայ. hēreay-ի (= hreay) դիմաց կանգնել: Վրաց. uria = հայ. **հրեայ** հավասարումը ևս հաստատ չի հիմնավորվում այնպիսի համադրումներով, ինչպիսիք են՝ վրաց. roartagi = հայ. hrovartak և վրաց. urakparak-ad "հրապարակային" = հայ. hraparak-av Tchoubinof 413 և 491, և դեռ շարունակում է վիճելի մնալ. թե՛ վրաց. uria-ն արդյոք հայ. պատմական (hreay) թե՛ նախապատմական (*hureay) ձևից է, հմմտ. Arm. Etym. էջ 309:

Գ. Հունական փոխառություններ

Հունական բառերի մուտքը հայերեն, ըստ իմ ուսումնասիրությունների Arm. Etym. էջ 322 և հաջ., հիմնականում վերաբերում է սասանյան ժամանակաշրջանին և հազիվ թե, լավագույն դեպքում միայն հազվադեպ, նշված ժամանակաշրջանին նախորդած լինի, քանի որ դրանից ամենահները ակնհայտորեն քրիստոնեության հետ են մուտք գործել հայերեն, իսկ քրիստոնեությունը 3-րդ դարի վերջում է միայն հայտարարվել որպես պետական կրոն, սակայն այն սկսվել է հայերեն ներթափանցել արդեն մի փոքր ավելի վաղ, ասենք մոտավորապես 250 թվին (Arm. Etym. էջ 281, ծնթ. 2): Եթե, այսպիսով, այս հունական փոխառությունները, անգամ ենթադրաբար նրանցից ամենավաղեմները իրենց “i” և (հազվադեպ հանդիպող) “u” ձայնավորները ոչ վերջին վանկում գրեթե լիովին պահպանել են, ապա այստեղից հետևում է, որ նրանց փոխառությունը ընկնում է մեր օրենքի գործելու ժամանակաշրջանից հետո, և որ այն, այսպիսով, գործել է նույնպես սասանյան ժամանակաշրջանի սկսվելը: Անհմաստ է, միայն ապացուցելու համար, որ “i” և “u” ձայնավորները պահպանվել են, այստեղ ներկայացնել “i” և “u” պահպանված հունական ամբողջ փոխառությունները, քանի որ այդ բանում հեշտությամբ կարելի է եզրակացություններ կատարել իմ Arm. Etym. աշխատությանից, տե՛ս էջ 338-389, ավելի շուտ բավական կլինի այստեղ ընտրել ամենավաղեմի փոխառություններից¹ մի քանիսը որպես օրինակ, և լիովին անվանել միայն այն բառերը, որոնք ընդհանուր օրենքից շեղվում են որպես բացառություն:

Որպես “i”-ի (= հունական գրությամբ ι և η) պահպանման օրինակ հարկ ենք համարում նշել՝ K'ristos = հուն. Χριστός 389, այստեղից էլ K'ristoneay քրիստոնեայ; episkopos «եպիսկոպոս» = հուն. ἐπίσκοπος 348; kat'ohikos, կաթողիկոս kat'ohikos «կաթողիկոս» = հուն. καθολικός 353; Yisus «Յիսուս» = հուն. Ἰησους 326; Grigor “Գրիգոր” = հուն. Γρηγόριος 334; sinkhitos “ծերակույտ” = σὺγκλητος 379 և այլն տե՛ս էջ 327: «u»-ի (= οὐ և οἰ հունական գրությամբ) պահպանման կապակցությամբ հմմտ. **ակումիտ** akumit 5-րդ դ. = հուն. ἀκοίμητος «անքուն» 327, 339; spudēk՝ հոգն. ուղղ. «փութաջան վանականներ» Մ. Խ. = հուն. σπουδαῖοι 381; k'artuḥar “ատենադպիր” Մ. Խ. = հուն. χαρτουλάριος 388: Այն դեպքերը, երբ հունական բառերը հայերեն մտնելիս իրենց մի ձայնավորը կորցրել են - մոտ 500 բառից և բազմաթիվ անուններից միայն 14-ը - ես արդեն ի մի են բերել իմ Arm. Etym. աշխատության մեջ, էջ 330: Ըստ որում, երկու դեպքում խոսքը վերաբերում է

o-ի սղմանը՝ տպագրոն trazon “Topas” 5-րդ դ. = հուն. τοπάζιον 385 և Ptkomēos = հուն. Πτολομαῖος 330, մեկական դեպքերում՝ e-a-ի սղման վերաբերյալ՝ k'hmidr (k'hmindr, kolomintr) «կղմինդր» 10-րդ դ. = հուն. κεραμίς 358 և “u”-ի՝ knkuf «կնգուղ» 7-րդ դ. = հուն. κουκούλλιον 358, չորս դեպքում i = iu = հուն. u-ի սղմանը՝ zmrnıtean (k'ar) «զմննիտեան քար» 13-րդ դ. = հուն. σμυρίτης (λίθος) 349; stephin «ստեպիդին» 12-րդ դ. = հուն. σταφυ λίνος 381; sring «սրինգ» 5-րդ դ. = հուն. σῦριγγ; sp'rid «կողով» Վրք. հարանց ավելի վաղ ձևը՝ sp'ıurid 5-րդ դ. = հուն. σπορίς 382, իսկ վեց դեպքերում խոսքը վերաբերում է “i” = հուն. սղմանը՝ ap'sndin «օշինդր» Վրք. հարանց = հուն. ἀψινθιον 342; mlon «մղոն» 5-րդ դ. = հուն. μίλιον 365; ndrın (nadrun, nat'run) “բորակ” 13-րդ դ. = հուն. νίτρον 367; «pnak», «ափսե» 5-րդ դ. = հուն. πίνναξ 373; sndon «կտավ» Վրք. հարանց = հուն. σινδών 380; tmēs «մետաղադրամ» 7-րդ դ. = հուն. τριμίσσιον 385: **Վերջիններից, սակայն, նորոն**-ը պետք է անջատել, քանի որ այն ավելի շուտ արաբերենից (արաբ. արս. naṣrūn A.M. էջ 263 “բորակ”) է փոխ առնված, քան հունարենից: Որ այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե մեր հին օրենքի ազդեցությանը, այլ մասամբ հունարենի ձայնավորի ոչ օրինաչափ սղմանը, ինչպես **տպագրոն**-ի մեջ, մասամբ էլ ձայնավորների սղմանը ռնգային և նայ հնչյուններից առաջ, որոնց ձայնավոր հնչյունը փոխարինում էր լիարժեք ձայնավորներից¹, արդեն նշված է, ըստ Thumb-ի, Arm. Etym. էջ 330, ծնթ. 2 և ըստ իս ոչ մի կասկած չի հարուցում: Ուշագրավ է նաև բառակազմի ձայնավորի սղմանը **կոնոնոս** konomos «կառավարիչ» Վրք. հարանց = հուն. οἰκονόμος 359; **պոտոնոն** pōt-ıomn «ձիարշավ» 12-րդ դ. = հուն. ἰππόδρομος 375; skeptor «արձանագրող» 13-14-րդ դդ. = հուն. ἐξέπτωρ 380; Sahak 5-րդ դ. = Isahak 5-րդ դ. = հուն. Ἰσαάκ 291 բառերի մեջ, որը չի կարող համաձայն ձայնավորների հնչյունական օրենքի տեղի ունեցած լինել, քանի որ այդ օրենքը բառակազմում չէր կարող գործել:

Այնուհետև, սակայն կան բազմաթիվ դեպքեր, որոնք, քանի որ թվում է, թե կարող են ապացուցել մեր օրենքի ազդեցությունը սասանյան և ավելի ուշ ընկած ժամանակաշրջանում, չնայած սպառնում են վերը ներկայացված դեպքերը լիովին ի չիք դարձնել: Այսպես, օրինակ՝ ասոր. plıštāyā, երբ. pēlišti, հոգն. pēlištim «Plilister» բառը հայերենում հանդես է գալիս որպես **փոշտացի** p'ıştaçı 318: Քանի որ այդ բառը միայն Աստվածաշնչի միջոցով է (որը թարգմանվեց 5-րդ դ.) եկել հայերեն, ուստի և “i”-ն չպետք է կորսվեր, հետևաբար հայերենում պետք էր սպասել, ինչպես այդ թվում է առաջին հայացքից, **փոշտացի**: Սակայն այդ սխալ է: Այդ բառը սկզբում՝ առանց սեմական վերջավոր-

¹ Հմմտ. Idg. F. II, 111 և հայկական այնպիսի դեպքեր, ինչպես՝ Suklitos, Sēnkhtos Սեթ. 33, Sinkhtos ձևի կողմին, Arm. Etym. 379:

¹ Տե՛ս Arm. Etym. էջ 323 և 337:

րության, **փղիշտ** ձևով (որը հանդիպում է բեռ Փիլոնի մոտ), «i» ձայնավորով պետք է փոխ առնված լիներ, որն այստեղ վերջին վանկում այսպես թե այնպես պետք է պահպանվեր: Եթե սակայն **փղիշտ** բառին հոլովական վերջավորություն կամ հիմք կազմող վերջածանց է հավելվում, ապա այն պետք է հետևեր հայերենում գոյություն ունեցող բոլոր **-իշտ**-ով ավարտվող բառերի օրինակին, որոնք նոր վանկի հավելման դեպքում, համաձայն հայկական օրենքի, պետք է իրենց «i»-ն կորցնեին (*հմմտ. միշտ* mišt, *մշտնջեան* mštnjean «մշտնջեանական»), այսինքն՝ -ացի վերջածանցի հավելումով **փղշտացի** տար: Այսպիսով, արս. xišt-ը «տեգ, նիզակ» գոխառվել է *xišt ձևով, իսկ նրանից օրինակափորեն, անալոգիայի համաձայն, **xštavor** 159 ձևն է ածանցվել; *հմմտ.* նաև մարս. **Դելում** Delum որպես՝ Դելում Delum, իսկ այստեղից **բուն** bun-ի անալոգիայով // **բնիկ** bnik, **լուռ** lur // **լռիկ** և այլն, պետք է ածանցվեր **Դելմիկ** Delmik 35; այսպես՝ հուն. φοῦρνος կամ արաբ. furn «փուռ» որպես **փումն** p'um 387, իսկ այստեղից **դումն** «դուռ», սեռ. **դրան** և այլն: Անալոգիայով կազմվել է սեռ. **փռան** p'an ձևը; այսպես՝ ասոր. xəšiw «հաշվարկված», որպես hašiv 308, իսկ այստեղից - **հովի** hoviv, սեռ. հովուի hovvi անալոգիայով՝ սեռականի **հաշուի** hašvi ձևն է կազմվել; այսպես՝ ասոր. bəšir «արհամարհական» որպես **բասիր** basir 301, իսկ այստեղից **խաիր** xtir «խրտություն» բառից կազմված **խարեն** xtrem «խարել» դեմումինատիվի անալոգիայով՝ **բասրեն** basrem ձևն է կազմվել և այլն հարյուրավոր դեպքերում¹: Այստեղ միայն մի մակերեսային և սխալ տեսակետը կարող է մեր օրենքի հետևողական ազդեցությունը, ավելի քան հազար տարի- ցանկանալ գտնել, իրականում ինքը օրենքը չի գործում, այլ օրենքի անալոգիայով ստեղծված նմուշները, միայն թե այստեղ անալոգիան նույնպես առանց բացառության է գործում, գոնե հին ժամանակներում, որպես օրենքն ինքն է գործել: Համանման ձևով են գերմաներենի գրական լեզվում հոգնակի թվի կազմության որոշակի օրենքները գործել, ինչպես՝ **Lämmer** Lamm-ի համար, **Kälber** Kalb-ի համար. եթե սակայն նաև ժամանակակից գերմաներենում է կիրառվում հոգնակիացման այդ ձևը **Wort** բառի համար՝ Wörter, այդ տեղի է ունենում ոչ ըստ այն գործող օրենքի, այլ լոկ նախկին օրինակի անալոգիայով, ինչպես՝ Lamm - Lämmer և այլն, իսկ ով ցանկանա կարծիք հայտնել, թե այն օրենքներն են նաև Wort բառի Wörter հոգնակի ձևի կազմության հիմքը հանդիսացել, կուպիտ պատմալեզվական սխալ թույլ տված կլինի: Մեր օրենքը, այսպիսով, գրության ժամանակաշրջանում այլևս ուղղակի չի գործել, այլ շարունակել է գործել անալոգիայով:

Այստեղ պետք է քննարկվի ևս մի հարց: Մեր օրենքի հիմնավորման համար վերը բերված լեզվական նյութի մի մասը կարող է այնպիսի տպավորություն ստեղծել, որ իբր մի այնպիսի օրենք է գործել, որի համաձայն փոխառյալ բառերում պահպանվում են միայն երկար «i» և «ü» ձայնավորները, մինչդեռ կարճ ձայնավորները սղվում են կամ կարող են սղվել: Այս կանոնը, անշուշտ, պետք է որ փաստերին հիմնականում համապատասխանի, քանի որ համաձայն մեր օրենքի, վաղեմի փոխառություններում “i”-ն և “ü”-ն (ճիշտ այնպես, ինչպես i և ü ձայնավորները) սղվում են, իսկ ավելի ուշ փոխառություններում “i”-ն և “ü”-ն (այնպես, ինչպես “i” և “ü” կարճերը) պետք է պահպանվեին, մինչդեռ ուշ փոխառություններում, հակառակ մեր օրենքի, “i”-ն և “ü”-ն մի քանի դեպքերում սղվել են կամ ռեդուկցիայի են ենթարկվել¹: Սակայն եթե անգամ ի նկատի ունենանք նաև նշված օրենքից շեղումները, այսինքն՝ այն դեպքերը, երբ “i”-ն և “ü”-ն (*հմմտ. քասկ, Տրդատ*) հին փոխառություններում սղվել են, իսկ նորերում՝ “i”-ն և “ü”-ն մեծ մասամբ պահպանվում են (*հմմտ. yangumanis, Gurgan* և այլն), ապա այդ օրենքը, որպեսզի այն բոլոր դեպքերի համար կիրառելի լինի, թերևս հետևյալ ձևով պետք է ձևակերպվեր՝ i և ü ձայնավորները հայկական փոխառություններում կարող են մնալ կամ սղվել, որով ոչինչ ասված չէր լինի: Սակայն հայերենը, հարցը նրանում է, որ ոչ մի տարբերություն չի դնում i-ի և ü-ի, ինչպես նաև ü-ի և ü-ի միջև: Արդի հայերենը բացի երկբարբառներից, առհասարակ ոչ մի տարբերություն չի դնում երկար և կարճ ձայնավորների միջև, նա միայն կարճ ձայնավորներ ունի, ուստի և ոչ մի հիմք չկա ենթադրելու, որ 5-րդ դարում այլ կերպ է եղել²: Այստեղից էլ ես ենթադրում եմ, որ հնդեվրոպական ā, i, ü ձայնավորները իրենց երկարությունը դեռ վաղ հայերենում են կորցրել³, և որ, այսպիսով, պարսկերենից կատարած առաջին փոխառությունների ժամանակաշրջանում առկա են եղել միայն i և ü, ոչ նաև i և ü: Ուստի և փոխառությունների հետ հայերեն մտած i և ü ձայնավորները անմիջապես կորցրել են իրենց երկարությունը և համապատասխանաբար նույն փոփոխություններին են ենթարկվել, ինչպես վաղ վկայակոչված և նոր ներմուծված “i” և “ü” կարճ ձայնավորները: Այսպիսով, օրինակ պահլավերենից հայերեն

¹ Բացի այդ, խորհելու հիմք է տալիս այն, որ “i”-ի և “ü”-ի սղումը հին (պարսկական) փոխառություններում միայն հազվադեպ կարող է հիշատակվել, որ այդ ձայնավորները ի սկզբանե պարսկերենում, ինչպես և հնդեվրոպականում հազվադեպ են: Եվ այդ փոքրաքանակ բառերից, որոնք հին պարսկերենում և պահլավերենում i և ü ունեին, միայն մի մասն է հայերի կողմից փոխառվել, իսկ այդ մի մասից էլ մի մասը շարժի հիշատակել, այսինքն՝ այն բառերը, որոնք “i” և “ü” ունեն իրենց վերջին վանկում (*հմմտ. -ik և -ük վերջածանցները*):

² Հայերեն “e”-ի մասին տես էջ 157:

³ Հնդեվրոպական e և o ձայնավորները հայերենում “i” և “ü” են տվել:

¹ Հմմտ. Arm. Etym. էջ 330, ծնթ. 4:

եկած -ik և -ūk վերջածանցները -ik և -uk են տվել, և նրանց ձայնավորները հայերենի «ի»-ն և «ու»-ն, ենթարկվել են նույն փոփոխությունների, այսինքն՝ ոչ վերջնական կամ դուրս են նետվել, *հմմտ.* պիլ. *kafšik «կոշիկ», pārsik «պարսիկ», *bāzūk «բազուկ» = հայ. **կօշիկ** kaušik, **պարսիկ** parsik, **բազուկ** bazuk, որոնք սեռական հոլովի «ի»-ի հավելման ժամանակ ոչ թե մոտավորապես *kaušiki, *parsiki, *bazuki են տվել, այլ՝ **կօշկի** kauški, **պարսկի** parski, **բազկի** bazki, ճիշտ այնպես, ինչպես բնիկ հայկական բառերը, *հմմտ.* հայ. **գեղեցիկ** gelecik, **հարցուկ** harçuk «գուշակ», սեռականը՝ **գեղեցկի** geleciki, **հարցկի** harçki¹: Նույն ձևով էլ հայ. **Տրդատ** Trdat = հայրս. *Tiridāta, հայ. **հրեայ** hreay = ասոր. Թիմծայā և այլն, որ “i” և “u” ձայնավորները այլ կերպ չեն զարգացել, ինչ “i” և “u” կարճ ձայնավորները:

Եթե, այսպիսով, i և u ձայնավորների սղման կամ պահպանման հարցում փոխառությունների մեջ ոչ թե պատահականությունն է գործել, այլ օրենքը, որը նաև նախնական հայկական բառերում է գործել “i” և “u”-ի պահպանման հարցում (վերջնական կի անկումից հետո), “i” և “u” ձայնավորների սղման հարցում՝ ոչ վերջնական կամ, ապա հունական փոխառություններից մենք ստանում ենք նշված օրենքի գործելու կապակցությամբ որպես terminus **ad quem** սասանյան ժամանակաշրջանի սկիզբը, պարսկական հնագույն փոխառություններից՝ որպես **terminus a quo** պարթևական հնագույն շրջանը, այնպես որ օրենքը ինքը պետք է որ գործած լինի պարթևական միջին շրջանում: Մի ավելի ճշգրիտ ժամանակաորոշում հունական աշխարհագետների կողմից հիշատակված հայկական տեղանունների անվանումներից չի կարելի սպասել, քանի որ հույները պարսկական և հայկական անունները այնքան աղավաղված են ներկայացնում, որ հունական ձևը ճշգրիտ հնչյունական հետազոտության պիտանի չէ: Անգամ հանդուրժելի ձևով տրված Nipet կամ Nupat լեռան անունը ոչինչ չի ապացուցում², քանի որ հույներն անգամ, երբ Npat (= Nəpat <*Nipat կամ Nupat) էին լսում, այն չէին կարող արտահայտել **Νφάτης** ձևով, այլ պետք է “n”-ի և “p”-ի կամ “ph”-ի միջև որևէ ձայնավոր

ընեին կամ հայերենի ռեդուկցիայի ենթարկված ձայնավորը լիարժեք ձայնավորով փոխարինեին¹, մանավանդ որ բառի ստուգաբանական հենարանը մոտ էր **νιφετός, νιφόεις, νιφάς** և այլն ձևերին:

Ձայնավորների երկրորդ օրենքը

Մինչդեռ հայ «ի»-ի և «ու»-ի հնչյունական արժեքը որպես “i” և “u” 5-րդ դարի համար ոչ մի կասկած չի հարուցում, նույն ժամանակամիջոցի համար «ե» և «ոյ»-ի հնչյունական արժեքը նույնքան հաստատ հնարավոր չէ որոշել: Ես հնարավոր եմ համարում, որ «ե»-ն 5-րդ դարում կարճ, բաց “e” էր, ուրեմն մա միայն իր որակով (որպես բաց e) էր տարբերվում կարճ փակ «ե»-ից (այժմ որպես “je” կամ “e” արտասանվող)², սակայն կարող է և այն ժամանակ մա երկար է եղել, ինչպես երբեմն նախկինում՝ համեմայն դեպս գոնե նախնադարյան ժամանակներում իր ստուգաբանության համաձայն (= հնդեվր. ei կամ oi) այն պետք է որ երկար եղած լինի: Եթե սակայն պարսկական հնագույն փոխառություններում պարթևական ժամանակաշրջանի պարսկական “ē”-ն (= հայրս. ai) հայերեն «է» և «ե» ձայնավորներով է տառադարձվում, ապա այստեղից առաջին հերթին հետևում է, որ ոչ հայ. «է»-ն, ոչ էլ «ե»-ն պարսկական ē-ով չեն ծածկվում, և միայն ենթադրության

¹ Հմմտ. հայ. **Ղղակ** Dlak որպես Գլակ-ի համար = հուն. Γιλάκιος, լատ. Gylaces (Մարկ-վարտ. Philologus 55, 214); հայ. **Սմբատ** Smbat = հուն. Συμβάτιος Const. Porphyrog.; հին հայ. kcu (< *kicu) «կծու» = լեհ. հայ. gudzu «օղի»; հին հայ. **ճմնդուկ** ճեճուկ = լեհ. հայ. junjutux «ճմնդուկ», հին հայ. **թթու** t' t' u «թթու» = լեհ. հայ. **թթու** t' t' u «թթու»; հին հայ. **գրոյց** zroiց «ճմնդուկ», հին հայ. **թթու** t' t' u «թթու» = լեհ. հայ. **թթու** t' t' u «թթու»; հին հայ. **գրոյց** zroiց «գրոյց», «պատմվածք» = լեհ. հայ. գուրուց zuruc' (WZKM. I, 296); հայ. **կնդրուկ** kntruk «խունկ» = վրաց. gundruci “benjoin” Tchoubinof 137; հայ. **զմարիտ** zmruxt «զմարիտ» = վրաց. zurmuxti Tchoubinof 213; հայ. **ճմարիտ** čšmarit «ճիշտ, ճմարիտ» = վրաց. čšmariti Tchoubinof 663; հայ. **մշակ** mšak «մշակ», «երկրագործ» = վրաց. mušaki, muša “ouvrier” Tchoubinof 355 (սակայն վրաց. pinaki, pina Tch. 399, սերվում է հուն. πιναξ, πινάκιον, ոչ հայ. պնակ-ից; վրաց. gunda Tch. 137 պարս. gunda-ից, ոչ հայ. գնդակ-ից; վրաց. gumbat' Tch. 136 < պարս. gumbad ոչ գմբեթ-ից և այլն:)

² Այսօր բառամիջին «ե» և «է» հնչյունները միմյանցից հիմնականում չեն տարբերվում, քանի որ որպես կարճ “e” են արտասանվում (բա՞ց թե փա՞կ): Ըստ Աճառեանի՝ Կոստանդնուպոլսի և Թիֆլիսի գրական լեզվում բառակազմում բաղաձայններից առաջ “e”-ն որպես -je է արտասանվել, մնացած դեպքերում՝ ինչպես է = e, Պուսի, Թոքաթի, Ալլանբեկի և Ռոդոսթրի ժողովրդական լեզվում՝ ե = է միշտ ինչպես e (ավելի բաց, քան ֆրանս. é-ն և ավելի քիչ բաց, քան ժողովրդական լեզվում՝ ե = է միշտ ինչպես e (ավելի բաց, քան ֆրանս. é-ն և ավելի քիչ բաց, քան ֆրանս. e-ն), միայն թե Ալլանբեկում բաց վանկերում «ե» և «է»-ն շատ բաց (ինչպես ea) են արտասանվում: Մեծ Հայքում «ե»-ն նաև բառամիջում բաղաձայններից առաջ “je” հնչյունական արժեքը պետք է ունենա:

¹ Մեր օրենքի ազդեցությունից հետո փոխ առնված բառերը, ինչպես՝ **պոռնիկ** pornik = հուն. πορνικός 373, իրենց սեռականը, բնականաբար, ուղղակիորեն կազմում են ըստ **գեղեցիկ** // **գեղեցկի** և այլն անալոգիայի, ուրեմն՝ **պոռնիկ**, սեռականը՝ **պոռնկի**, որը *պոռնիկի աստիճան չի անցել:

² Եթե սակայն Ստրաբոնը կամ ավելի շուտ նրա երաշխավորը՝ Թեոֆանեսը (Theophanes von Mytilene) արդեն *Nipat կարող էին լսած լինել, ապա մեր օրենքը մեր թվարկությունից առաջ առաջին դարում դեռ չպետք է գործած լիներ:

դեպքում, որ պարսկական *ē* (երկար *ē*) փակ էր. կարելի է շարունակել ենթադրել, որ հայ. *e*-ն, քանի որ այն փակ, իսկ հայերեն *ē*-ն երկար է եղել, կարող էին փոխարինել պարսկական փակ *ē* ին: Հայերեն ոյ-ի կապակցությամբ, որը այսօրվա հայերը որպես “*ai*” են արտասանում, ես ենթադրում եմ, որ 5-րդ դարում այն “*oi*” էր արտասանվում¹, քանի որ այն “*oy*” է գրվում², իսկ ժամանակակից սի-ն հեշտությամբ կարող է հետ տարվել դեպի նախկին *oi*: Արդյո՞ք, սակայն, 5-րդ դարում ոյ-ով գրվող ձայնավորը արդեն իսկ պարթևական ժամանակաշրջանում *oi* էր արտասանվում, ինձ հարցական է թվում արդեն իսկ այն պատճառով, քանի որ այդ ժամանակից սերվող պարսկական փոխառություններում այս. *ō*-ն (= հայս. *au*) արտահայտվում է ինչպես հայերեն «*o*»-ով, այնպես էլ *oi*-ով, մի բան, որ, ինչպես ինձ է թվում, միայն այն ժամանակ կարող է հասկանալի լինել, եթե ավելի ուշ շրջանի հայ. «*oi*»-ը պարթևական ժամանակաշրջանում դեռ (բաց) *ō* էր արտասանվում³, որը (փակ) *o*-ի կողքին = *o* նույնպես տառադարձում էր պարսկական (փակ) *ō*-ն, ինչպես մենք այդ վերը տեսանք հայ. *e* և *ē* ձայնավորների պարսկական *ē*-ն ներկայացնելու կապակցությամբ: Եթե այդ ճիշտ լիներ, ապա ձայնավորների երկրորդ օրենքը, երբ այն գործել սկսեց, բնիկ հայկական, ինչպես նաև փոխառյալ բառերում, պետք է շոշափած լիներ դեռ *ē* և *ō* ձայնավորները, որոնք ոչ վերջին վանկում “*i*” և “*u*” պետք է տային:

Նախ՝ պարսկական փոխառությունների օգնությամբ երկրորդ օրենքի ազդեցության մոտավոր ժամանակաշրջանի որոշման ճանապարհին երևան են գալիս տարբեր խանգարիչ հանգամանքներ: Ապա մեր ուշադրության ոլորտ-

ներից գերծ պետք է մնան այն փոխառությունները, որտեղ *ē* և *ō* ձայնավորները հայերենում փոխարինվել են *ē* և *ō* ձայնավորներով, քանի որ հայերենում *ē* և *ō* հնչյունները մեր օրենքի ազդեցությանը չեն ենթարկվում, հետևաբար ուսումնասիրության պիտանի է այստեղ միայն փոխառությունների այն կեսը, որը պարսկերենում *ē* և *ō* ունի: Այնուհետև, հայ. «*ē*»-ն (քանի դեռ այն «*e*»-ի դիմաց չի գրվում կամ ավելի ուշ շրջանի ընդօրինակությամբ կազմված բառերում՝ «*io*»-ի դիմաց)⁴ և *oi*² սովորաբար, բացի վերջնականակից, ուրիշ դիրքում չեն հանդիպում, այնպես որ մենք նաև այստեղ չենք կարող այնպիսի փոխառություններ գտնել, որոնք, մեր օրենքի ազդեցության ժամանակաշրջանից հետո փոխ առնված լինելով, իրենց «*ē*»-ն և «*oi*»-ը (այս. *ē* և *ō* ձայնավորների դիմաց) կարողանային պահպանած լինել: Իսկ որտեղի՞ց է գալիս, որ ուշ փոխառություններից և ոչ մեկը իրենց «*ē*»-ն և «*oi*»-ը չեն պահպանել: Թերևս, սակայն, այն բանից, որ հայերը, որոնք օտարազգի *ē* և *ō* ձայնավորները տառադարձելու ընտրություն ունեին, *hūmūt*. «*e*» և «*ē*», նաև «*o*» և «*oi*», պետք է նախընտրելի կարճ «*e*» և «*o*» հնչյունները, առավելապես այն պատճառով, որ նշված օրենքի ազդեցությունից հետո իրենց լեզվում ոչ վերջնական կունայն *«t»* և «*nj*» առհասարակ չունեն: Բացի այդ, «*oi*»-ի կապակցությամբ առանձնապես պետք է նկատի ունենալ, որ այդ ձայնավորը սասանյան ժամանակաշրջանում “*oi*” հնչյունական արժեքը ուներ, ավելի ուշ՝ “*ui*” և դրանով իսկ մի օտար *ō* հնչյունը արտահայտելու համար հարմար չէր, ուստի և այն ավելի հաջող հայերեն *ō*-ով է փոխարինվում³: Հունական բառերի կապակցությամբ, այնուամենայնիվ, խորհելու առիթ է տալիս այն, որ հունարենը երկար և կարճ ձայնավորների տարբերությունը արդեն բավական վաղ է կորցրել⁴ և դրանով իսկ հայերին հնարավորություն է տվել հուն. *o* և *w* ձայնավորները շարունակ *n* = *ō* ձայնավորով արտահայտել⁵:

Նման հանգամանքներում հնարավոր է միայն ցույց տալ, որ վաղ ժամանակներում պարսկերենից փոխ առնված բառերը, ընդհանուր առմամբ, ենթակա են եղել նշված օրենքի ազդեցությանը:

¹ Հմմտ. Šergir «ղեզզիների արքան» Մ. Խ. 226 = Šergir Մովս. Կղնկտ. I, 117 = պրս. Šēr-gir 508; gērut՝ iun «գիրություն», հինը՝ girut՝ iun. gēr «նարպ» բառից:

² Բացի բաղարկություններից՝ goin-a-goin 129, խոյր-արար xoir-arar 160, t'akoik-a-butk 153, yamoir-a-nman 312, որտեղ բաղարկության առաջին բաղարկիչի ձայնավորը պարզ բառերի ազդեցության տակ (goin, xoir, t'akoik, yamoir) պահպանվել է:

³ Նոր պարսկերենից փոխառյալ բառերը միայն «*e*» ունեն, պարսկերեն “*ē*”-ի դիմաց (տես մեխակ mexak 270), իսկ պրս. *ō*-ի դիմաց՝ *o* (տես šomin 273):

⁴ Հմմտ. Hatzidakis, Eiuleitung in die neuere Grammatik էջ 304 և հաջ., Kretschmer KZ. 30, 594 և հաջ.

⁵ Հուն. *ω*-ի փոխարեն միայն գրական ձևով ով = *ov* գրության մասին տես իմ Arm. Etym. էջ 328: Հայ *oi* ձայնավորը հուն. փոխառությունների տակ՝ proig պոյոգ = հուն. προίξ 374, ինչը բնական է:

¹ Հմմտ. վրաց. kapoeti Tchoubinof 236 = հայ. կապոյտ kapoit:

² Հմմտ. հայր hair «հայր», որը գրվում է hayr ձևով: Հայերը որպես երկբարբառի երկրորդ բաղարկիչ *i*-ի և *u*-ի փոխարեն *ai*, *au* և այլ երկբարբառներում միշտ *y* և *v* կիսաձայններն էին օգտագործում: Ով, այսպիսով, hair-ի դիմաց hayr է գրում, իր սեփական ուղղագրությունն ունի: Իսկ ով, սակայն, hayr է արտասանում (ուրեմն նաև, որ. kaysr kaisr-ի դիմաց = καίσαρ), նույնքան պեղանտ և սիսալ է վարվում, որքան նրանք, ովքեր հայ. ու = u (որը կազմված է հուն. or-ի ընդօրինակմամբ) or են արտասանում: Բառավերջում այն վաղ ժամանակներում «այ»-ը և «ոյ»-ը, ինչպես *ai*, *ay* և *oi*, *oy* պետք է արտասանվեին. որտեղ *y*-ն ստուգաբանորեն արդարացվում էր օր. համար այնպիսի բառերում, ինչպես՝ hai «հայ», Urhai “Edessa” = ասոր. Orhāi 298. Վնոյ Vndoi = պրս. Bindōi 85 (hūmūt. Hamdoi 47, Միհրոյ Mihroi 54, Շերոյ Šeroi 61, Սատոյ Satoi 72, Վիոյ Viroi 509, Բոյ-եկան Boy-ekan 33, Դատոյ-եան Datoy-ean 36): Երբ ավելի ուշ բառավերջնային *y*-ն հստակ հնչյուն է տալիս և ապա սղվում, բառավերջում դեռ շարունակվում էր այ *ay* և ոյ *oy* գրվել ոչ միայն տրադիցիոն կարգով, չնայած նրան, որ միայն «*ay*» և «*oy*» հնչյուններին, որոնք սկզբից «*y*» *y* չունեին, «*y*» հավելվեց. hūmūt. արեղայ abelay = ասոր. awilā; Բրքիշոյ Brk' išoy = ասոր. Brīxīšō և այլն, այնպես որ ավելի ուշ (գրության մեջ) բառավերջնային *a*, *o* (և *c*) այլևս չէին հանդիպում, որովհետև միայն *ay*, *oy* (և *cə*) է գրվում:

³ Հմմտ. Capotes Plinius-ի մտն = հայ. Կապոյտ kapoit (5-րդ դար) 166:

ասոր. rahbōnā, հուն. ἀρχαῖων 316; Barcumay (ապրել է 5-րդ դարում) 10-րդ դ. = ասոր. Baršaumā 291, Yuxnan 5-րդ դ. = ասոր. Yōxannān¹ 295; տե՛ս ներքևում էջ 170:

Եթե, այսպիսով, բերված վիճելի դեպքերը, ինչպես ես եմ դրանք ընկալում, որոշակի նշանակություն չունեն, ապա այստեղից հետևում է, որ երկրորդ օրենքը, քանի որ այն շոշափելի է պարսկական փոխառություններից ամենահներին, նա էլ պետք է պարթևական ժամանակաշրջանում գործած լինի: Սակայն այն փաստը, որ նա առաջինից հետո է գործել, ըստ իս, մեզ ուսուցանում է պարզ դատողություններ. հայ. gitem «գիտել» ձևը նախ. հայ. հնչել է *gētem 435, հայ. gtanem «գտնել» նախ. հայ. *gitanem 437: Եթե երկրորդ օրենքը ավելի հին լիներ, ապա **գիտեմ**-ի դիմաց ***գէտեմ** պիտի լիներ, և երկուսն էլ **գիտեմ** և ***գիտանեմ**, համաձայն երկրորդ օրենքի, **գտեմ** և **գտանեմ** պետք է լինեին, մի բան, որ տեղի չի ունեցել: Մինչդեռ, եթե առաջին օրենքն է ավելի վաղեմի, ապա նախ ***գիտանեմ**-ը **գտանեմ** է տվել և, ապա, երկրորդ օրենքի համաձայն, որը **գտանեմ** ձևի վրա ոչ մի ներգործություն չէր կարող ունենալ՝ ***գէտեմ**-ը **գիտեմ** է տվել, և այդ երկու ձևն էլ պատմականորեն հանդիպում են: Նույն ձևով էլ պետք է նախահայկական ***լուսնանամ** և ***լոյսին** loisin (կամ *lōsin) նախ՝ առաջին օրենքի համաձայն **լսնանամ** և ***լոյսին** *loisin (*lōsin) տար, ապա երկրորդ օրենքի ազդեցության տակ՝ **լսնանամ** «սպիտականալ» և **լոսին** «լուսին», և այդպես էլ նրանք պատմական ժամանակաշրջանում հանդիպում են: Նույնը տարածվում է նաև բոլոր ուշադրության արժանացրած դեպքերին: Ուրեմն՝ երկրորդ օրենքը ավելի ուշ ժամանակի է վերաբերում:

¹ Հայ. Urhai “Եղեսիա” 5-րդ դ. = ասոր. Orhāi 298 և k’usit’ay «վանականի կնգուդ» 5-րդ դ. = ասոր. kostšā 319 բառերը այդ օրենքներին չեն առնչվում. քանի որ ասորական ձևերը կարճ օ (u) ունեն:

Հավելված

Պարսկական Ե և Ծ ձայնավորները հայկական փոխառություններում

Երկրորդ օրենքի կապակցությամբ բերված փաստարկումներում նշվեց, որ ինչպես «ե»-ն «է»-ն են կանգնած պրսկ. Ե-ի դիմաց, այնպես էլ **ռ**-ն և **ռյ**-ը՝ պարսկական Ծ-ի դիմաց: Այնտեղ թվարկվեցին նաև հայ. «է» և «ոյ» = պրս. Ե և Ծ հնչյուններով փոխառություններ, սակայն ո՛չ մնացածները, որտեղ «ե» և «ո» հնչյունները պրսկ. Ե և Ծ-ի դիմաց են կանգնած: Այստեղ հարկ է հավաքել փոխառությունների ողջ բառանյութը և այնպես դասակարգել, որպեսզի պարսկերենի նշված ձայնավորների հայերենում կրկնակի ներկայացումը հեշտությամբ հնարավոր լինել շրջանցել և քննարկել:

1. Պարսկ. Ե

Պարսկերենից փոխ առնված բառերում, ինչպես նշվեց, հայերը պրսկ. Ե-ի դիմաց «ե» կամ «է» են դնում: Սակայն, քանի որ հայերենում շատ հաճախ, հատկապես վերջնավանկում¹ Ե-ի դիմաց «է» է գրվում², կարիք ունի հատուկ չափանիշի, որպեսզի այդ երկու Ե-ն հնարավոր լինի միմյանցից սահմանազատել: Որպես նման մի չափանիշ կարող է ծառայել այն դրույթը, որ ոչ վերջնավանկային Ե-ն «ի» պետք է տա, մինչդեռ Ե-ն միշտ պահպանվում է³: Այնտեղ, որտեղ, այսպիսով, Ե-ն կամ Ե-ն հերթագայվում են **i**-ով, միշտ «է» է կանգնում, իսկ այնտեղ, որտեղ Ե-ն հերթագայվում է **e**-ով՝ «ե» է կանգնում, որտեղ այս հերթագայությունը բացակայում է, առայժմ անորոշ է մնում, թե արդյոք «ե», թե «է» է սպասելի:

ա) Պրս. Ե = հայ. է վերջնավանկում

zēn (սեռ. zinu) «զենք» 5-րդ դ. = պիլ. zēn, զենդ. zaena- 151, այնուհետև նաև որպես բաղարկությունների բաղադրիչ՝ aspazēn «ծիու զենք ու զրահ» (**ասպազինել** «զինել») և այլն 108; kapēn-k’ (սեռ. kapinaç) «վարձատրություն» (թեթևաբարո կանանց) 5-րդ դ. = պրս. kābīn, ուրեմն՝ պիլ. *kāpēn 165; hēn

¹ Հմմտ. իմ Arm. Etym. էջ 326-327:

² Գոնե, համեմայն դեպս, մեր տեքստերում: Թե ինչպիսի դիրք են բռնում հնագույն ձեռագրերը այդ կապակցությամբ, պետք է նախ հետազոտվի:

³ Այնուհետև լեհահայերենը, որը հին հայերենի Ե-ի դիմաց ye է վերջնավանկում ցուցաբերում, մինչդեռ հին հայերենի Ե-ի դիմաց՝ e: Հմմտ. WZKM. I, 283: Այս պատճառով էլ լեհահայերը հին հայերենի alvēs աղուե-ի «աղվես» դիմաց ayyves են օգտագործում, ինչպես ես արդեն իմ Arm. Etym. 415-ում գործածական աղուե alvēs ձևն են սահմանել, առավել ևս որ սեռականը հին հայերենում alvesu («է»-ով) էր հնչում:

(սեռ. hini) «թշնամական գործ» 5-րդ դ. = հայրս. hainā-, պիլ. hēn 180; k'ēn «քեն» (սեռ. phīnū) 5-րդ դ. = պիլ. kēn, զենդ. kaenā- 257; šēn (սեռ. շինի) «շեն, գյուղ» 5-րդ դ. = զենդ. šayana-, ուրեմն՝ պիլ. *šēn < *sayan 213; dēm-k' (սեռ. dimac) «դեմք» 5-րդ դ. = զենդ. daeman-, պրս. dīm, բելուջ. dēm, ուրեմն՝ պիլ. *dēm 140; vēm (սեռ. vimi) «քար» 5-րդ դ. = զենդ. vaema-? 247; dēt «դիտորդ», «լրտես», այստեղից էլ dītem «ուշի-ուշով նայել», «լրտեսել» = զենդ. *daeta (ուղղ.) 141, 512; yavēt «միշտ, հավետ», այստեղից էլ yavitean «հավիտյան» 5-րդ դ. = պրս. jāvēd, զենդ. yavaetāt, հետևապես պիլ. *yāvēt, *hūmūn*. պիլ. yāvētān 198; gēs (սեռ. gisoy) «գես, մազ» 5-րդ դ. = պիլ. gēs, զենդ. gaesa- 127; handēs (սեռ. handisi) «հանդես» 5-րդ դ. = պիլ. *handēs, սնս. samdēça - 179; pēs «ձև», այստեղից էլ orpēs, orpisi և այլն = զենդ. paesa- ? 230; asparēs կամ asparēz (սեռ. asparisi) «ձիարշավարան» 5-րդ դ. = պրս. asprēs, asprēz, պիլ. asprēs 109; *gomēz «կովի մեզ» (սեռ. gomizoy) 5-րդ դ. = պիլ. gōmēz, զենդ. gaomaeza 128; partēz (սեռ. partizi) «պարտեզ» 5-րդ դ. = սնս. pālēz, երբ. pardēs, զենդ. pairidaeza-, ուրեմն՝ պիլ. *pardēz 229; hravēr «հրավեր», այստեղից՝ hravirem 5-րդ դ. = պիլ. *fravēd? 183; nvēr «նվեր», «նվիրատվություն», այստեղից՝ nvirem 5-րդ դ. = պիլ. *nivēd ? 207; patvēr «հրաման, պատվեր», այստեղից՝ patvirem 5-րդ դ. = պիլ. *patvēd ? 226; vrēp «շեղում», «խեղաթյուրված», այստեղից՝ vripem 5-րդ դ. = պրս. virēb, այսինքն՝ պիլ. *virēp ? 250; տեղ տեղ (սեռ. tigi) «տեղ» 5-րդ դ. = պրս. tēy, ուրեմն՝ պիլ. *tēy 253: Այնուհետև նաև՝ դեւ dev «չար ոգի»: Համաձայն վերը էջ 160-ում պրս. ēv = հայ. եւ-ի մասին բերված դիտողությունների, գրված է dēv, սեռ. divi 5-րդ դ. = պիլ. dēv, զենդ. daeva - 140, *hūmūn*. Dev-dat 37; gomēš գոմէշ 5-րդ դ. և T' avrēz 5-րդ դ., որի սեռականը գոնե ուշ ժամանակաշրջանում gomīšaç (տարբերակը՝ gomšaç) և T' avrizoy է հնչում = պրս. gāvmēš 128 և Tabrēz 42; Artašes (սեռ. Artašisi) 5-րդ դ. = հուն. Ἀρταξίας, որի ē-ն, սակայն, պարսկերենում հետ է գնացել դեպի "a", եթե, ինչպես ես եմ այդ ենթադրում¹ = պրս. Artašir, հայրս. Artaxšaθrā է:

Թե արդյոք "e", թե "ē" պետք է սահմանել, հարց է մնում -ēn-ով ավարտվող անունների կապակցությամբ, որոնց ē-ն e-ի և i-ի հետ է հերթազայվում, ինչպես Փառեն P'arēn, սեռ. Փառինայ և Փառենայ 89; Արտաշէն Artašēn, սեռ. Արտաշինայ 30; Դատաբէն Databēn, սեռ. Դատաբենայ 36 և այլն, տե՛ս էջ 90, ծնթ. 2, որոնք տարբեր ձևով, կախված նրանց ձայնավորների հերթազայությունից, «էն»-ով կամ «են»-ով, կամ երկուսով էլ պետք է սահմանվեն, այնուհետև այն բաների մոտ, որոնք ածանցված ձևերի բացակայության պատճառով «է» ունեն միայն վերջնականում՝ k'askēn «գարեհաց» 5-րդ դ. = պրս. kaškīn 257; gazpēn «մամանա» Խոր. աշխ. (< gaz+ *pen); պրս. angubīn (< ang+

*pen) 125; Ašxēn 5-րդ դ. = զենդ. axšaenā- կամ xšoiθnī- ?-20; Aprvēz 7-րդ դ. = պրս. Parvēz 21; Manēč 5-րդ դ. = հուն. Μοναίτης 51; Vatgēs 5-րդ դ. = պիլ. Vātges 80: Այս բոլոր բառերում, բացի շէն (= զենդ. šayana-) և Արտաշէն բառերից, է = պրս. ē, հետ է գնում դեպի հայրս. "ai" և կանգնում է n, m, t, s, z, r (ծ-ից), p, g, ինչպես նաև v, š, ž բաղաձայններից առաջ:

բ) Պարսկ. ē-ն = հայ. է ոչ վերջնականում «ի» է ավել

Վերը, էջ 159-ում բերված բառերում nizak pisak, spitak, eritasard, vičak, dipak, yandiman և նշված ոչ հաստատ դեպքերում, ինչպես՝ aprišum, apikar, divan և այլն: Այստեղ ևս հայ. «ի»-ն = պրս. ē հետ է գնում դեպի հայրս. "ai" և կանգնում է m, t, s, z, č, p, ինչպես նաև k, š և v հնչյուններից առաջ:

բ) Պարսկ. ē = հայ. «ե» վերջնականում

դեմ (սեռ. դեմի) «հավատք» 5-րդ դ. = պրս. պազ. dīm, պիլ. dēm, զենդ. daemā - 139, այստեղից նաև՝ համակրեմ = պիլ. hamāk+dēm 177 և դեմ-ա-դարձ, դեմ-պետ 139: Դեմ-շապուհ, Վեհդեմ-շապուհ 37. դեմ-ը հավանաբար միայն սասանյան ժամանակաշրջանի փոխառություն է; շահեմ (šahēn), սեռ. շահեմի «բազե» 12-րդ դ. = պրս. šahin, հետևաբար՝ պիլ. *šahēn 210; պարկեմ (գրության ձևը՝ պարկէմ), գործ. պարկեմաւ "խրամ" 5-րդ դ. = պրս. pārgīn, հետևաբար՝ պիլ. *pārkēn 228; պատոնեմ patēn (գրելված՝ պատոնեմ patčēn), սեռ. պատոնեմի «պատոնեմ» 5-րդ դ. = պիլ. pačēn, ավելի վաղ՝ *patčēn կամ *patčayan, երբ. paθšeyen, հայրս. *patičayana- 224; Գենք Čenk' (սեռ. Գենաց čenaç), Գենաստան Čenastan «Չինաստան» 5-րդ դ. = պրս. Čīn, պիլ. Čēn, այստեղից՝ Գենիկ «չինարեն» = պիլ. *čēnīk 49; այնուհետև նաև -ēn-ով ավարտվող անուններ, որոնց «է»-ն, անշուշտ, հերթազայվում է նաև «ի»-ի հետ (տե՛ս վերը), ինչպես՝ Փառեն P'arēn, սեռ. Փառենայ P'arēnay, նաև Փառինայ P'arinay, որի ուղղ. պետք է սահմանել՝ Փառեն P'arēn և Փառեն P'arēn 89-90; Դատաբեն Databen (գրությամբ՝ Դատաբեն Databēn), սեռ. Դատաբենայ 36; Ծահեմ (գրությամբ Ծահէմ Šahēn), գործ. Ծահեմով 7-րդ դ. = պրս. Šāhīn, ուրեմն՝ պիլ. *Šāhēn 59; Սուրեն (գրությամբ Սուրէն), սեռ. Սուրենայ Փ. Բ. 245 = պրս. Sūrēn, հուն. Σουρήνας, լատ. Surena 73; Կարեն (գրությամբ Կարէն), այստեղից՝ Կարենանք, Կարենան և այլն. Մ. Խ. = լատ. Carenes, սակայն արաբ. պրս. Qārān < պիլ. *Kārēn? 45; Հրուդեն Hrudun *Hredun-ի դիմաց Մ. Խ. = պազ. Frēdūn (պիլ. Frētōn) 32; այնուհետև՝ դիմա

¹ Տե՛ս ընդհանրապես Arm. Etym. էջ 505:

5-րդ դ. = պիլ. tōžišn 253; (*spoiž «հետաձգում», այստեղից) **սպուծեմ** spužem «հետաձգել» 7-րդ դ. = պիլ. spōž, spōžēm 240; **արոյր** aroir «արույր», **արուրի** aruri «արույրե» 5-րդ դ. = պրս. rōi, պիլ. rōd, հայրս. *rauđa- 111; **բոյր** boir «բույր», հետևյալ բառերում՝ **բուրաստան** burastan «պարտեզ, բուրաստան», **բուրել** burel «բուրել» 5-րդ դ. = պրս. bōi, պիլ. bōd, զենդ. baoidi - 122; **խոյր** xoir (սեռ. խուրի «զվխանոց» 5-րդ դ. = պրս. xōi, պիլ. *xōd, հայրս. xauđa- 160; **համբոյր** hamboir «համբույր», այստեղից՝ **համբուրեմ** «համբուրել» 5-րդ դ. = զենդ. *hambaođa-? 176; **կոյր** koir¹ (սեռ. կուրի) «կույր» 5-րդ դ. = պրս. պիլ. kōr 173; **սամոյր** samoir «սամույր», այստեղից՝ **սամուրենի** samureni «սամույրի մորթի» 5-րդ դ. = պրս. samōr (KZ. 35, 184) 236; **սնգոյր** sngoir տե՛ս էջ 238; **դոյլ** doil (սեռ. դուլի) «դույլ» 5-րդ դ. = պրս. dōl կամ ասոր. daulā 144; **գոյն** goin (սեռ. գունոյ) «գույն» 5-րդ դ. = պրս. պազ. gūn, պիլ. gōn, զենդ. gaona -128; **Յոյնք** Yoink² (սեռ. Յունաց) «հույներ» 5-րդ դ. = հայրս. Yaunā “Yonien, Yonier”, ասոր. Yaunāyē 56; **յոյզ** yoiz «որոնում», «հուզումնք», **յուզեմ** yusem «հուզվել» 5-րդ դ. = պրս. -yōz «փնտրելով» զենդ. yaozaiti «շարժվել» 199; **կասպոյտ** kapoit² «կասպույտ», այստեղից՝ **կասպուտակ** kaputak 5-րդ դ. = պազ. kapōd, պիլ. kapōt 166; **կոյտ** koit (սեռ. կուտի) «կույտ» 5-րդ դ. = պրս. kōd 173; **մոյկ** moik «կոշիկ» 5-րդ դ. = պազ. պիլ. mōk 136, *հմմտ.* **մուճակ** mučak «փոքր կոշիկ»³ = պիլ. mōčak 136; **պատրոյկ**⁴ patroik (սեռ. պատրուկի) «պատրույզ» 5-րդ դ. = պիլ. *patrōk 227; **թակոյկ**⁵ t'akoik (հոգն. սեռ. թակուկաց) «կուժ» 5-րդ դ. = պրս. պիլ. takōk 153; **մակոյկ** makoik (սեռ. մակուկի) «մանուկ» 5-րդ դ. = պրս. makōk 191:

Այս բոլոր բառերը (բացառությամբ՝ spužem-ի) վկայակոչված են 5-րդ դ. և հավանաբար բոլորն էլ պարթևական ժամանակաշրջանի փոխառություններ են: Նրանք ցուցում են, որ oi = պրս. օ-ին՝ n, z, ž, š, r = δ, r = r, l, t, k հնչյուններից առաջ:

Շատ հազվադեպ ոյ-ի դիմաց “ու” է կանգնում, օր. կանանց անուններում՝ **Անուշ** Anuš և **Հրանուշ** Hranuš թուվ. (10-րդ դ.), որոնք, եթե նրանք, ինչպես ես եմ ենթադրում, նույնական են **Անուշ** Մ. Խ. և **Հրանուշ** Արիստ. Լաստ. (11-րդ դ.) անունների հետ, միայն սխալ ձևեր կարող են լինել. նույնը թերևս պետք է ենթադրել նաև **Անուշ-Վիամ** Anuš-Viam կանացի անվան կապակցությամբ Ղազար Փարպ. (5-րդ դ.) = պրս. ***Անուշ-Վիամ**-ի դիմաց Anoiš-Viam?,

¹ Վրաց. k'uri Tchoubinof 522:

² Վրաց. kapoeti Tchoubinof 236:

³ Վրաց. patruk' i Tchoubinof 398:

⁴ Վրաց. takuki Tchoubinof 475:

⁵ Սակայն *հմմտ.* **Միհրոյի** Mihroi (սեռ.) Սեբ. 63 *Mihroyi ձևի դիմաց < ուղ. *Mihroi = պրս. Mihroi 54, հակառակը՝ **գոյ** goy «գոյություն», գործիականը՝ **գոյի** goyiv և այլն:

ինչպես նաև՝ **Անուշ-ըռուան** Anuš-ērvan արքայի անվան կապակցությամբ Սեբ. (7-րդ դ.) = պրս. Anōšarvān, պազ. anōš-ruān, պիլ. anōšak-ruvān 20, սակայն վերջինս կալող է նաև հայերեն **անուշակ** anušak «անմահական» = պիլ. anōšak 100 բառի ազդեցության տակ լինել: Մեկուսացած **բուիճենիկ** buičenik (միայն Խոր. աշխ.) = պիլ. *bōi i čēnik 123 որոշակի արժեք չի ներկայացնում:

բ) **Պրս. օ** = հայ. ոյ, ոչ վերջնականում «ու» է տվել՝ վերը, էջ 161-ում քրմնարկված բառերում՝ **անուշակ** anušak, **ատրուշան** atrušān, **դրուժան** družān, **սպուժեմ** spužem, **մուճակ** mučak, **պատմուճան** patmučān, **պատմուճակ** patmučak, **պատրուճակ** patručak, **տուգան** tugan, **Մերիուժան** Merhužān մի քանի այլ բառերի կողքին, որոնք այս խմբին հաստատ չեն վերաբերում: Այստեղ «ու»-ն գալիս է «ոյ»-ից = պրս. օ հետևյալ բաղաձայններից առաջ՝ ճ, չ, ճ, ց, ց:

գ) **Պրս. օ** = հայ. օ՝ *վերջնականում.*

ահոկ ahok «վնաս», այստեղից՝ **ահոկել** ahokel 7-րդ դ. = պրս. āhō, պիլ. āhōk 95; **յոկ** jok «խումբ», «հոտ» 5-րդ դ. = պրս. jōx, արաբ. Lw. jauq, վրաց. Lw. jogi 232, 514; **ամբոխ** ambox «ամբոխ, բազմություն» 5-րդ դ. = պրս. anbōh 96; **սոխ** sox «սոխ» 5-րդ դ. = պրս. sōx 238; **դոխլաք** dzoxk¹ «դոխլաք» 5-րդ դ. = պազ. dōžax 142; **անդոհական** andohakan «երկյուղալի, տազնապալի» 12-րդ դ. < անդոհ = պրս. andōh 99; **գրոհ** groh (grox) «ժողովուրդ» 10-րդ դ. = պրս. gurōh, պիլ. grōh 132; **տոհմ** tohm «տոհմ», «ընտանիք» 5-րդ դ. = պրս. tuxm, պազ. tuxm, պիլ. tōxm, որն, անշուշտ, կարող է կարդացվել նաև՝ tuxm, զենդ. taoxman - 253; **կոհ** koh «լեռ» Խոր. աշխ. = պրս. kōh 57; **Կասպկոհ** Kapkoh «Կովկաս» 5-րդ դ. = պիլ. Kāfkōh (կամ Kāpkōh) 45; **զոհ** zoh¹ «զոհ» (<*zorh) 5-րդ դ. = պազ. zōr, պիլ. zōhr, զենդ. zaoθrā- 151; **շնորհ ճորհ** «շնորհ» 5-րդ դ. = զենդ. xšnaoθra-, ուրեմն՝ պիլ. šnōhr 214; **սպչոս** apšop «փրարանցում» Մ. Խ. և Ռսկ. սաղմ. պրս. āšōb-ի դիմաց, պիլ. āšōp 106; **բոբ** bōb «գորգ» 7-րդ դ. = պրս. bōb, պիլ. bōp 121; **ջատագով** jatagov «պաշտպան» 5-րդ դ. = պիլ. jātakgōb 232, Pers. Stud. 244; **չոբին** čobin որպես մականուն Մովս. Կղնկտ. = պրս. čōbīn 78; **մոմ** mom «մոմ» 5-րդ դ. = պրս. mōm, ուրեմն՝ պիլ. *mōm 196; **շնում** šnum Սեբ.-ի մոտ (7-րդ դ.) = **շնոմ** šnom՝ **Հրե-շնոմ-շապոհ** Hrev-šnom-šapuh Ղազար Փարպ. (5-րդ դ.) = պիլ. šnōm կամ šnōm, զենդ. xšnōman- և xšnaoma 214 և 49; **նոճ** noč «նոճի» 5-րդ դ., պրս. nōj, nōž, nōz 207; **րոճ** doč «լաք» Բժշ. և alt. Wb. = պրս. dōž 144; **մարզանգոշ** marzangoš «խնկածաղիկ» Խոր. աշխ. = պրս. marzangoš 193; **-ռոտ** -rot «զետ», անունների մեջ Փարպ.

¹ Հմմտ. նաև վրաց. zorva «զոհաբերություն» Tchoubinof 22, ինչպես վրաց. bari հայ. **բահ**-ի դիմաց (< *barh) «բահ» 427 և վրաց. parak-ad «զոռով, ուժով» Tch. 396 հայերեն **պահակ** = **պարհակ**-ի դիմաց 218: Վրացիները օտար «հ»-ն, որպես կանոն, չեն արտահայտում, քանի որ, ինչպես երևում է «հ» հնչյունը (ինչպես նաև f-ն և y-ն) նրանց լեզվին օտար են:

Մեք. և այլն = պրս. rōd, պիլ. rōt, հայրս. rauta 234, *հմմտ.* Վեհրոտ Vehrot "Oxus գետը" 7-րդ դ. = պիլ. Vehrōt 84; **Պեռոզ** 5-րդ դ. = պրս. Pērōz 67; **ափսոս** ap' sos «ափսոս» 13-րդ դ. = պրս. afsōs 262; **զոս** gos «թմբուկ» 12-րդ դ. = պրս. kōs 264: Այստեղ օ-ն = պրս. ō (k, x, h, rh, p, b, m, v, č, š, t, z, s հնչյուններից առաջ):

դ) **Պրս. օ = հայ. օ ոչ վերջնավանկում**¹

կոհակ kohak «ալիք», «գազաք» 10-րդ դ. = պրս. kōha, պիլ. kōfak 173, *հմմտ.* վերը՝ **կոհ** koh Խոքր. աշխ. և **Նասակոհ** Kapkoh 5-րդ դ. = պրս. պազ. kōh «լեռ», պիլ. kōf: **գոհար** gohar «գոհար» Խոքր. աշխ. = պրս. gōhar (թանկարժեք քարի իմաստով միայն ուշ միջին պարսկերեն) 128; **գոմեզ** gomēz «կովի մեզ» մեկ անգամ Եղիշե (5-րդ դ.) = պիլ. gōmēz 128; **գոմեշ** gomēš «գոմեշ» 5-րդ դ. = պրս. պիլ. gāvmēš, որի կողքին հավանաբար *gōmēš բառն է կանգնած եղել¹; **ռոճիկ** rōčik «սպրուստի միջոց» 5-րդ դ. = պրս. rōzī, ուրեմն՝ պիլ. *rōčik 234; **Ռոճվեհ, Ռոճվեհան** Մեք. = պիլ. rōč-vēh 70; **ռոշնական** rošnakan «մաքուր, լուսավոր» 10-րդ դ. < *rōšn = պրս. պազ. rōšan, պիլ. rošn, զենդ. raoxšna - 234; **գորշապահանգ** goršapahang, **գոշապարհանգ** gošaparhang² «ականջօղ» 5-րդ դ. պրս. gōš-ի «ականջ» դիմաց 129; **թոշակ** t'ōšak, **թորշակ** t'oršak «սննդամթերքի պաշար» 5-րդ դ. = պրս. tōša 155; **Կոշմ** Košm, **Կոմշ** Komš Խոքր. աշխ. և Մեք. *Komiš-ի դիմաց = արաբ. Qūmiš, մպրս. *Kōmiš 46; **կոտակ** kotak «փոքր» 5-րդ դ. = պիլ. kōtak, պրս. kōdak 173; **հրոտից** hrotiç, **հրորտից** hrortiç հոգն. սեռ. «Հրոտից» (5-րդ դ.) = մպրս. *frōrdin, պիլ. fravartin 184-185; **Գոտորզ** Gotorz 5-րդ դ. = պրս. Gōdarz, լատ. Gotarzes 35; **ոստան** ostan տե՛ս էջ 215; **պատգոսապան** patgosapan «գորավար» 7-րդ դ. = պրս. pādōspān 223; **կատասական** kavosakan 5-րդ դ., պրս. պիլ. Kāōs, զենդ. Kava Usa 44; **Ռազմիոզան** Rāzmiozan 7-րդ դ. = պրս. *Razmyōzān, պրս. razmyōz³ 69 և հաջ. *հմմտ.* **Աֆանա-յոզ-ան** Afāna-yoz-an 17; **պողովատ** polovat «պողպատ» 5-րդ դ. = պրս. pōlād, պիլ. pōlāpat (*pōlāvat բառի դիմաց) 232, **բորակ** borak 5-րդ դ. = պրս. bōra, արաբ. bauraq, հետևաբար՝ պիլ. *bōrak 122; **դորակ** dorak «հեղուկների չափ» 5-րդ դ. = պրս. dōra, արաբ. दौरاق, պիլ. dōrak 144; **Բորան** Boran 7-րդ դ. = պրս. Bōrān 33. Այստեղ օ-ն = պրս. ō (h, m, č, š, t, s, z, t, r հրնչյուններից առաջ):

Մի քանի բառերում հայերենում օ է հանդիպում, այն դեպքում, երբ համապատասխան նոր պարսկական ձևը «ս» ունի: Այս, արդեն էջ 138-ում քննարկված դեպքերից միայն երկուսը կարող են նկատի առնվել, որոնցում պրս. "ս"-ն որպես ասպացույց առկա սովորական ձևի կամ ենթադրյալ հին պարսկա-

կան հիմք ձևի կարող է պիլ. օ-ից առաջացած լինել, դրանք են՝ **Խոսրով** 5-րդ դ. = պրս. Xusrav, սնս. sucrávas-, սակայն զենդ. Haosrava, որն ավելի լավ է ապացուցվում, քան Husrava-ն 44 և **Ռոստոմ** Rostom Մ. Խ., Մեք. = պրս. Rustam, Rustahm, Rōsitam ZDMG. 49, 731 < պիլ. *Rotastahm, հայրս. *rautastaxma- 71, 508; *հմմտ.* հայ. **տոհմ** tohm = պիլ. tuxm կամ tōxm? (պրս. պազ. tuxm, զենդ. taoxman-) և պրս. օ > u կապակցությամբ՝ Pers. Stud. 143: Եթե սակայն հայ. օ-ն միջին պարսկական օ-ի դիմաց է հանդես գալիս, ապա այս շարքի մեջ են մտնում դ) կետի տակ գրվող բոլոր բառերը, առանց այլևայլի:

Պարսկական այս փոխառությունների հետ անմիջականորեն կապված՝ այստեղ հարկ է բերել պարսկական և հունական այն բառերը, որտեղ ասորական և հունական օ և օ-ին փոխարինող հնչյուններն են կանգնած:

1. **Ասոր. օ, ai-ն վերջնավանկում առկա են**¹

ա) որպես «ե» e **Հաբել** Habel բառում (գրությամբ՝ Հաբել Habel), սեռ. Հաբելի 5-րդ դ. = ասոր. Hāwēl 294, ինչպես նաև (ասորերենից կամ հունարենից փոխառյալ-ել-ով ավարտվող) մնացած բոլոր անուններում (գրությամբ էլ օլ)¹, *հմմտ.* հաճախ օգտագործվող **Իսրայել** Israyēl, սեռ. Իսրայելի; ղեկ **լեկ** «ղեկ», հոգն. սեռ.՝ ղեկաց **լեկա** 5-րդ դ. = ասոր. lēqā 310; **սուսեր** suser «սուսեր», սեռ. սուսերի 5-րդ դ. = ասոր. safsērā 316:

բ) որպես «է» ē - **ձեթ** jēt՝ «ձեթ», «ձիթապտուղ», սեռ. ձիթոյ, այստեղից էլ՝ **ձիթենի** jit՝ eni «ձիթենի» 5-րդ դ. = ասոր. zaitā, abs. և constr. zēṯ 309 (եթե բառը ասորերենից է գալիս):

2. **Ասոր. օ, ai ոչ վերջնավանկում առկա են**¹

որպես «ե» e հետևյալ բառերում **Բարդեժան** Bardēcan 5-րդ դ. = ասոր. Bardaišan, հուն. Βαρδησαίνης 291; **փեզենայ** p'egenay «սատապ» 5-րդ դ. = ասոր. pēyānā < հուն. πηγανον 317; գրական **իլուլ** ilul բառը՝ 6-րդ ամսվա երրայական անվանումը = ասոր. ēlūl կամ հուն. Ελούλ Նեեմ. 6, 15 նկատի չի առնվում: Համեմայն դեպս *հմմտ.* **Շամրին** Šamrin 5-րդ դ. = ասոր. Šamrēn «Samaria» 296:

3. **Ասոր. օ, au վերջնավանկում առկա է**¹

ա) որպես «ո»՝ **ժոմ** com «ժոմ» 5-րդ դ. = ասոր. šaumā (šōmā, šōm) 306; **քարոզ** k'aroz «մունետիկ» 5-րդ դ. = ասոր. kārōzā 319; **Շմավոն** Šmavon «Սիմոն» 5-րդ դ. = ասոր. Šem'ōn 297; **Բրքիշոյ** Brk' išoյ, կարդա՝ Բրքիշոյ Brk' išo 5-րդ դ. = ասոր. Brīχīšō 292, նաև -išoյ-ով ավարտվող այլ բառերում:

բ) որպես ոյ՝ **զոյգ** zoig «նույն», զոյգ-ք zoig-k' (սեռ. զուգից) «զույգ» 5-րդ դ. = ասոր. zauḡā < հուն. ζεύγος 302; **դոլ** doil = ասոր. daulā կամ պրս. dōl, տե՛ս

¹ Հմմտ. պրս. gō «կով», gōšāla և այլ բառերում gār բառի կողքին:

² Նույն բառն է քերես վրաց. gošpclakni-ն «ոսկե ականջօղ» Tchoubinof 130:

³ -yōz, սրան է վերաբերում նաև հայ. յոյզ voiz, տե՛ս վերը, էջ 167:

¹ Էլ-ի դիմաց էլ-ի կապակցությամբ տե՛ս Arm. Etym. էջ 327, ծնթ.:

վերը՝ էջ 167: Մակայն հայ. ոյ-ը հանդես է գալիս նաև ասոր. օ-ի դիմաց՝ **յամօր** yamoir (հոգն. սեռ. յամօրաց) 5-րդ դ. = ասոր. yaxmūrā¹ 312:

4) **Ասոր. օ, au-ն ոչ վերջնավանկում առկա է՝**

ա) որպես «ո» - **զոպայ** zopay «մշտիկ» 5-րդ դ. = ասոր. zōpā, հուն. ὄσσωπος 303; **շիփորայ** šip'oray «շեփոր» 5-րդ դ. = ասոր. šīfōrā 313; **քրոբեք** k'robēk՝ «քերովբեներ» 5-րդ դ. = ասոր. krōwā (օւթթական սովորույթի համաձայն՝ օ), հուն. Χερωνβείμ < երբ. kērōwīm 320:

բ) որպես «ու», վերը՝ էջ 161-ում նշված բառերում՝ **ագուգայք** agugaik՝; **շուշան** šušān² և **Տուսան**; **նարունայ** řabunay, **Բարծունայ** Barcumay, **Յուխնան** Yuxnan³:

Հայերենի «ո»-ն «ու»-ի կողքին ասոր. «ա»-ի դիմաց հանդիպում է **Շոօ** բառում (օ կամ «au» գրությամբ) «Susa» (ՄԳր. և Կալիսթ.) **Շոշան** Šošān-ի կողքին Խոր. աշխ. նաև՝ **Շուշանաստան** Šušānastān Կալիսթ. = ասոր. Šuš և Šūšan, հուն. Σοῦσα, երբ. Šūšan 298:

Հունարեն օ-ն և w-ն հայերենում միշտ ո-ով են արտահայտվում, հուն. w-ն գիտական ձևով նաև՝ «ով» = ov-ով, որը այսպիսով պետք է [օ] արտասանվեր, մինչդեռ այն այդպես չի արտասանվում: Հունարեն «դ»-ն, եթե այն «i» է արտասանվում, տառադարձվում է «i»-ով, հուն. «դ»-ն, եթե այն «e» է արտասանվում, a-ի նման (բացառությամբ կայսր kaisr = καῖσαρ բառից) ինքն էլ «ե»-ով է արտահայտվում, սակայն հուն. դ-ի դիմաց նաև «է» է կիրառվում **կետ** kēt բառում, սեռ. կիտի «կետ» 5-րդ դ. = հուն. κῆτος (նաև՝ հայ. **կիտոս** և **կետոս**, որպես գրքային ձևեր); **քարտես** k'artēs, սեռականը քարտիսի «թրթի թերթ» 5-րդ դ. = հուն. χάρτης 388; **կրկես** krkēs, սեռ. կրկիսի «կրկես» 5-րդ դ. = հուն. κρκαήσιον 360; **Մովսես** Mōsēs, սեռ. Մովսիսի 5-րդ դ. = հուն. Μωσῆς 327; **Ներսես** Nersēs, սեռ. Ներսիսի (համաձայն ուղղակաթի, նաև՝ Ներսիսի) 5-րդ դ. = հուն. Ναρσης, հենարան ունենալով հայ. **Ներսեհ** Nerseh ձևը, 57:

Ի վերջո հարց է ծագում, թե ի՞նչ պայմաններում և հանգամանքներում են օտար «ե»-ն և «օ»-ն հայերենում «ե» և «ո» տվել, և որ դեպքում՝ «ե» և «օ»:

(պարթևական ժամանակաշրջանում հավանաբար = օ, տե՛ս վերը՝ էջ 158): Այստեղ հավաքած նյութը այս հարցին դժբախտաբար պատասխան չի տալիս: Համենայն դեպս չհաստատվեց իմ ենթադրությունը այն մասին, որ լեզուն e և ē, o և oi (= օ) հնչյունների միջև ընտրություններ կատարելիս, այդ պայմանավորվել է ձայնավորներից հաջորդող բաղաձայններով, չհաստատվեց, քանի որ այդ ձայնավորները հաճախ կանգնում են նույն բաղաձայններից առաջ: Որպես որոշիչ գործոն չի կարելի նաև շեշտը դիտել, որովհետև շեշտը, որը սակայն ակնհայտորեն պատճառ է եղել «ի» և «ու» ձայնավորների սղմանը, ինչպես նաև ոչ վերջնավանկում ē և oi թուլացումը «ի» և «ու»-ի, միշտ ընկնելիս է եղել միևնույն, այն է՝ վերջին վանկի վրա (հնդեվրոպականի տեսանկյունից ելնելով՝ նախավերջին): Օտար ē և օ ձայնավորների երկակի արտահայտության պատճառը հայերենում փնտրել հենց իրենց օտար լեզուների հնչյունական հարաբերություններում, ըստ իս, առ այսօր անգամ ամենաչնչին հիմք չկա: Արդյոք հիմք կա՞ ենթադրել, որ այդ երկակի նկարագիրը ընդհանրապես անհիմն է, այսինքն՝ պատահական կամ կախայական է: Այս ենթադրությունը չի բավարարում և ստիպում է ենթադրել, որ այդ կրկնակի ներկայացությունը կարող է ժամանակագրական պայմանավորվածություն ունենալ, որ այսպիսով ē-ն և oi-ն ավելի հին ձևեր են, մինչդեռ e-ն և օ-ն՝ ավելի ուշ փոխառություններում են հանդիպում, մանավանդ որ ավելի ուշ փոխառություններում ակնհայտորեն oi-ն (տե՛ս վերը՝ էջ 159) իր դիրքերը զիջում է օ-ի և պետք է զիջեր, իսկ մյուս կողմից ē-ն և oi-ն հաճախ հենց ամենահին փոխառություններում էլ հաճախ են հանդիպում: Մակայն այդ ենթադրությունը հերքվում է փաստերով, քանի որ e և օ ձայնավորները հանդիպում են նաև այնպիսի փոխառություններում, որոնք վերաբերում են ամենահին փոխառություններին: Այսպիսով, այս հարցը առայժմ պետք է անպատասխան մնա:

¹ Հմմտ. ընդհակառակը՝ ասոր. u-ն հայ. u-ի դիմաց՝ ասոր. xazzūrā բառում<հայ. **խննոր** xnoj «խննոր» 305:

² Այստեղից էլ վրաց. šrošani «շուշան» Tchoubinof 588 ?

³ **Շուշան** և **Բարծունայ** անունների մասին հարկ է դատել համաձայն նրանց հանդիպած ժամանակաշրջանի. նրանք հայերեն են մտել հավանաբար միայն 5 դարում, նույնն է **նարունայ** řabunay-ի կապակցությամբ: Այս բառի «ու»-ն պետք է որ օրինաչափորեն վաղեմի օ (oi)-ից առաջացած չլինի, այլ ոչ օրինաչափորեն ասորական օ (au)-ի դիմաց: Վաղ ժամանակներում է փոխ առնված **շուշան** šušān բառը, հավանաբար նաև **ագուգայք** agugaik՝-ը: Արդյոք նրանք, այսպիսով, ձայնավորների երկրորդ օրենքի համաձայն *šōšam և *agogaik՝ բառերից են սերվում: **Յուխնան** Yuxnan անվան մասին (Arm. Etym. 295) ավելի դժվար է դատողություններ կատարել:

Հայկականք 1. Հայ. ուստր անգլսք. Subterza

Անգլոսաքսերենում suhterza, suhtri(3)a «քեռորդի, եղբորորդի» = եղբորորդի և հորեղբոր, մորեղբոր, հորաքրոջ, մորաքրոջ որդի: Եթե խորհելու լինենք, թե ինչքան երերում են շատ ազգակցական անունների միջև գոյություն ունեցող իմաստային սահմանները, ինչպես, օրինակ՝ «vetter» նախնական իմաստն էր՝ «հորեղբայր», միջին բարձր գերմաներենում (vetere) «հորեղբայր», «եղբորորդի» և «հորեղբոր, մորեղբոր, մորաքրոջ, հորաքրոջ որդի», ինչպես լատ. nepos «թոռ» բառը հետավգոստյան շրջանում վերցրել էր «քեռորդի, եղբորորդի» իմաստը, ինչպես հնդեվրոպական nepōt = «հետնորդ, թոռ» հնդկերենում և իրաներենում, վաղ լատիներենում և հին լիտվերենում իր «թոռ» իմաստն է պահպանում, գերմաներենում մասամբ պահպանում է (նրգ. Neffe = «թոռ» Լուրի մոտ), մասամբ ստանում է «քեռորդի» (հետագայում նաև եղբորորդի, հորեղբոր. *որեղբոր և այլն որդի) իմաստը (Delbrück, Die idg. Verwandtschaftsnamen էջ 478 և հաջ.; Kluge Wörterb. s.v. Neffe), ապա կարելի է ենթադրել, որ անգլսք. suhterza-ն ևս երբեմն այլ, այն է՝ «թոռ» իմաստն է ունեցել: Մակայն քանի որ suhterza-ն ամուսնցված է մի ինչ-որ *suhter ձևից = հնդեվր. sūkter-, ինչպես անգլսք. mōdric «մորաքույր» բառը՝ հնդեվր. māter-ից = անգլսք. mōdor «մայր»; նրգ. fatureo «հորեղբայր», անգլսք. fādera < հնդեվր. pāter = անգլսք. fāder «հայր» (Kluge, Nom. Stammbildunglehre § 30), ապա կարելի է ենթադրել, որ եթե անգլսք. suhterza-ն նախկինում «թոռ» = «որդու զավակ» է նշանակել, հնդեվր. sūkter-ը «որդի» իմաստը նրան կցված լինի (hūsin. սնս. svasrīya) «քեռորդի» svāsar- «քույր» բառից; pāutra «որդու զավակներ, թոռ» < putrá - «արդու զավակ», dāuhitra- «աղջկա որդի», «թոռ» < duhitár-«որուստր»): Մյուս կողմից՝ մի հնդեվրոպական sūkter-ը կարելի է ընկալել «հետնորդ» իմաստով, որից հետագայում նույն հաջողությամբ «որդի», «թոռ», ինչպես «քեռորդի», «եղբորորդի» իմաստը կարող էր զարգանալ: Եթե հնդեվրոպական այս sūkter-ը ենթարկենք հայերենի հնչյունական օրենքներին, ապա քանի որ բառասկզբնային s-ն ձայնավորներից առաջ սղվում է, իսկ kt-ն u-ից հետո st է տալիս (hūsin. dustr «որուստր» < dhuktér dhugdér-ի դիմաց), այստեղից այն պետք է uster- տար, և հենց այդպես էլ իրականում հնչում է հայերեն ustr բառի հիմքը (սեռ. uster) «որդի», «արդու զավակ»: Այս, Հին կտակարանում հաճախ հանդիպող, մինչդեռ սովորաբար ավելի հազվադեպ դարձած, իսկ հետագայում անհետացած, բառը կիրառվում է միայն dustr (ուստր և դուստր ustr ev dustr) բառի հետ՝ մնալով կապակցության մեջ հին հայերենում, որից դուրս այն արդեն՝ անգամ Հին կտակարանում փոխարինվել է ավելի նոր՝ ordi որդի բառով¹, որը միջին և նոր հայերենում վաղեմի ustr ուստր բառը գործածությունից դուրս է մղել:

¹ Հայ. որդի ordi = h. b. portios «ջահեղ, երիտասարդ», հուն. πόρτις?

Ով այս ձևով վերծանված հնդեվր. sūkter բառը կուզենա հետ տանել դեպի գոյություն ունեցող արմատներից մեկը, նա իր տրամադրության տակ կուզենա հնդեվր. sūg, sūk կամ sūgh «ծծել» ձևերը (B.B. 26, 131), նրգ. saugen, նրգ. sūgan, անգլսք. sūzan և sūcan, լատ. sūgo, հիռլ. sūgim «ծծում են» և այլն: Նա կկարողանա այսուհետև հնդեվր. sūkter- բառը համադրել լատ. filius «որդի» = հնդեվր. dhīlios «ծծկեր» (արմատը՝ dhēi «ծծել») բառի հետ: Իհարկե այս համադրությունը չափազանց անհաստատ է:

2) Հայ շեն = rhod. xtoiva

Հայ. շեն թեո (սեռ. շինի) «շեն», բարեկարգ. բնակելի. ավան, գյուղ (այստեղից՝ շինական, šinakan «շինական, գյուղացի», շինել šinel «շինել», «կառուցել»), «հիմնել», շինուած šinvac «կառույց», շինութիւն šinut'ian, «Bauen», «Gründen», «Gedeihen», «Blühen»): Այս բառը ես իմ Arm. Gram. աշխատության մեջ (էջ 213) դիտել եմ որպես պարսկական փոխառություն և նույնացրել եմ միայն որպես բարդության երկրորդ բաղադրիչ կիրառվող զենդ. šayana- «բնակարան», «բնակություն» բառի հետ, քանի որ զենդ. šayana- բառը հին պարսկերենում šayana-, իսկ միջինում՝ šēn պետք է հնչեր (տե՛ս իմ Pers. Stud., էջ 167): Մակայն այստեղ այդ šēn-ի յուրաքանչյուր հետք կորսվել է այնտեղ, որտեղ Ավեստայի պահլավական թարգմանության մեջ պետք է սպասելիք, ինչպես, օրինակ՝ šayana-ի թարգմանության ժամանակ, միշտ mānišnih «բնակարան» բառն է երևան գալիս (Horn, Np. Schriftsprache, էջ 191), նույն ձևով էլ նոր պարսկերենում բացակայում է ինչպես šēn-ը, եթե միայն, ըստ Հոռնի a.a.O. ենթադրության, չի պահպանվել միակ gul-šan «վարդաստան» բառի մեջ (šēn-ի փոխարեն <šan ձևով, hūsin. J. F. Anz. 10, 20), ինչպես šī = սնս. kšī «բնակվել» արմատից: Մակայն ասոր. šainā-ի շնորհիվ «terra culta, res secundae, pax, cicur, mansuetus» (Brockelmann Lex. syr., էջ 373) հաստատվեց միջին պարսկական մի šēn, եթե ասոր. šainā-ն որպես փոխառություն պետք է ընդունվի, ինչպես ես այդ արեցի՝ հետևելով Բրոկելմանին: Համենայն դեպս երբայերեն բառարանը ասոր. šainā-ն դնում է ԴՂՃՄ «հանգիստ» արմատում, իսկ Նյոլդեբեն (անձամբ մտքեր փոխանակելիս) այդ զուգադրությունը միանգամայն ճիշտ է համարում և ըստ այդմ ասոր. šainā-ն դիտում է որպես բնիկ սեմական բառ, ո՛չ փոխառություն: Ըստ նրա՝ šainā-ն նախ ունեցել է «հանգիստ, խաղաղություն» իմաստը, այնուհետև՝ մոտավորապես «հեզություն» կենդանիների և բույսերի նկատմամբ, ապա՝ ուղղակի «մշակված հող» (ի հակադրություն dawrā բառի՝ «ամայի տեղ»), և šaiyen բառը ևս նախ նշանակում է «հանգստացնել, խաղաղություն հաստատել», ապա՝ «հեզացնել, ընտելացնել, սանձահարել»

և «մշակելի դարձնել»: Եթե այսպիսով միջին պարսկական մի ինչ-որ ձեռնարավոր չէ վկայակոչել, ապա հայ. շէն բառը ևս չի կարելի անվիճելիորեն փոխառություն համարել, և հարց է ծագում, թե արդյոք այն չպե՞տք է որպես բնիկ հայերեն բառ դիտել: Վերջին դեպքում հայ. շէն բառը պետք է նույնական լինի rhod. քտուա «բնակավայր, համայնքի շրջան» բառի հետ = հնդեվր. k̅poinā և վաղեմի ազգակից հուն. κτίζω «կառուցում եմ, հիմնադրում եմ κτίσις «հիմնադրում», εὐκτίμενος «զեղեցիկ կառուցված, լավ բնակեցված», ἀμφικτιονοες κτίλος¹ «հեղ, մեղմ, ընտելացրած», սնս. k̅si «բնակվել», k̅sitiš «բնակավայր», k̅šētram «ղաշտ, հողային սեփականություն, վայր, տեղ», k̅šēmas «բնակելի, խաղաղ, հանգիստ», զենդ. šī «բնակելի», šiti «բնակարան», anašita «անբնակ» (հայ. անշէն anšēn), šoiθtra- «բնակավայր», šayana «բնակարան, բնակություն»; շէն ձեռ = քտուա = հ.ե. k̅poinā հավասարումը հաստատ է, եթե կարելի է ապացուցել, որ հնդեվր. բառասկզբնային k̅p-ն հայերենում ձ պետք է տար: Մակայն, դժբախտաբար, բառամիջի k̅p-ի r-ից հետո հայերենում «ջ» j-ի անցումը (հայ. արջ arj «արջ»=հուն. ἄρκτος, սնս. ἴκσας, զենդ. arēšō) ոչ մի հետ զնացող կապ չի տալիս բառասկզբնային k̅p-ի քննարկման համար:

3. Հայ. սկունդ skund//հուն. σκύνλαξ

Հայ. սկունդ-ը, ըստ Wb.-ի, նշանակում է «շուն, փոքրիկ շուն, շնիկ» և վկայակոչված է (11 և 12-րդ դարերի մատենագրերի կողմից) միայն երկու անգամ: Ես հնարավոր եմ համարում, որ այս բառը, եթե այն բնիկ հայերեն է և ոչ թե փոխառություն (ինչպես քած k'ac «էգ շուն»), նախկինում ունեցել է «շնիկ» իմաստը և այն համարում եմ հուն. σκύνλαξ «շան ձագ» և σκύνμος կենդանիների ձագ (առյուծներ, արջեր և այլն): Այս բառը կարելի է, անշուշտ, սահմանազատել հայ. շուն ձև բառից = հուն. κύων, լատ. canis և այլն: Մեկ այլ համադրություն տես Schrader-ի մոտ Reallexicon, տես Hund:

4. Հայ. դեմեսլիկոս demeslikos // հուն. δομέστικος

Իմ “Arm. Gram” I. էջ 338 և հաջորդներում թվարկված հունական փոխառյալ և օտար բառերին ես հավելում եմ մինչ այս աչքից վրիպած **դեմեսլիկոս** բառը, որի մեջ դեռ Dulaurier-ը (Chronique de Matthieu d'Edesse, Փարիզ 1858,

էջ 379, *հմմտ.* նաև Ստեփանոս Տարօնեցի, Մալխասեանցի հրատարակություն, Պետերբուրգ, 1885, էջ 379-380) հայտնաբերել է δομέστικος տիտղոսի աղավաղումը: Ան այսօր այդ բառն ինձ հայտնի էր հետևյալ աղբյուրներից և հետևյալ ձևերով՝ Յովհան Մամիկոնեան (8-9-րդ դդ.), Վենետիկ. 1832, էջ 56՝ Հերակլետը նրան դարձրեց նաև «ողջագուրումի» դիմեսլիկոսը ողջ Հոռմի (= Հունաստան); Ստեփանոս Տարօնեցի (11-րդ դ. սկիզբ), Պետերբուրգ, 1885, էջ 170՝ Ռոմանոս կայսրը հավաքեց շատ զորք (i. J. 917-918, ըստ Ստեփանոսի) և «առաքեց մի դեմեսլիկոս (տարբերակը՝ դեմեսլիկոս dimealikos) դեպի Դվին քաղաքը» էջ 179՝ կայսր Կոստանդինը (Կոնստանդին VII) 949 թվին ուղարկեց Չմշկիկ (=Thšəməššikik) դեմեսլիկոսին հուժկու բանակով Կարինի գավառ; էջ 186՝ Կիր-Ժանը¹ Հունաստանի կայսրը, անհամար զորքերով Մլեհ դեմեսլիկոսին ուղարկեց Ամիթ², և նրանք գերի վերցրին դեմեսլիկոս Մլեհին (տարբերակը՝ դեմեոլիկոս demēolikos); Արիստակես Լաստիվերցի (11-րդ դ.), Վենետիկ, 1844. էջ 27՝ Միքայելը³ իր եղբայրներից մեկին (z mi) դարձրեց Մագիստրոս, «մեկին (z minn) նա դարձնում է Դեմեսլիկոս Demeslikos»⁴ և առաքում է նրան ի մեծն Անտիոք (Αντιόχεια)՝ Արաբիան և հարավը վստահելով նրա հավատարմությանը, իր եղբայրներից երկրորդին (զ երկրորդն z erkronon) նա Կոստանդնուպոլսում դարձրեց Sinklitos և այլն; էջ 31՝ «այն մեկը, որը անվանվեց Դեմեսլիկոս», Մատթեոս Եդեսացի (12-րդ դ.), Երուսաղեմ, 1869, էջ 17՝ «Հոռոմների զորավարը՝ Դեմեսլիկոսը, Մլեհ անունով» (i.J. 972-973); էջ 18՝ «Չորավար, Դեմեսլիկոսին և նրա մյուս մեծամեծ հոռոմներին նրանք գերի վերցրին և բերեցին քաղաք Ամիթ»; էջ 19՝ «Եվ Դեմեսլիկոսը մի նամակ գրեց Կոստանդնուպոլիս»; Սմբատ Ժմ. (13-րդ դ.), Փարիզ, 1859, էջ 31՝ «421 թվին (=972-973 p. Chr.) հույների զորավարը՝ Դեմեսլիկոսը, մեծ զորքերով զնաց Մելիտենե քաղաքի դեմ- և նրանք գերի վերցրին Դեմեսլիկոսին և 40 մեծամեծների»; էջ 32՝ «սակայն Դեմեսլիկոսը գրեց Չմշկիկին»: Այս անվան տարբերակները բոլորը տանում են դեպի դեմեսլիկոս, որպես անվան նախնական ձևի, որը ձայնավորների առնմանման շնորհիվ (Arm. Gram. I, էջ 329) դեմեսլիկոսից domeslikos կարող է ծագած լինել: Իսկ թե ինչպե՞ս կարող էր դեմեստիկոս- domestikos դեմեսլիկոս domeslikos դառնալ, մութ է մնում, քանի որ ոչ հայերենի «ստ»-ն երբևէ «սլ» չի գրվել, ոչ էլ հայերենի գրությունն է նպաստում «ստ»-ի և «սլ»-ի միմյանց հետ շփոթմանը:

¹ Այդ Յովհաննես Չմշկիկը 969-976, վերը նշված Չմշկիկի թոռն էր. Սմբատը էջ 33-ում նրան Չմշկիկ Յովհաննես է անվանում:

² 973 թվին, տես Gelzer-Krumbacher, Geschichte der byzant. Litteratur, էջ 989:

³ Միքայել IV 1034-1041:

⁴ Konstantinos, տես Gelzer-Krumbacher a. a. O. էջ 1000:

¹ Brugmann-ը իր Grundriß I² էջ 79-ում այն համեմատում է լատ. silere, գոթ. ana-silan «ղոտ լիճել» բառերի հետ:

5. Հայ. Նախնական Naxčavan // հուն. ἀποβατήριον ?

F. Murad-ը իր “Ararat և Masis” (Heidelberg, 1901) հրատարակած աշխատության մեջ փորձել է ապացուցել, որ հայերը երբեմն սեփական առասպել են ունեցել ջրհեղեղի մասին, որի գործողության վայրը Մեծ Մասիս¹ սարն է եղել Այրարատ գավառում, և այդ է եղել առիթը «Մասիսից մոտ 100 կմ հարավարևելք» (Murad a.a.O. էջ 62) ընկած քաղաքը Նախնական անվանելու²: Այդ քաղաքը, որը, ըստ Մովսես Խորենացուն վերագրվող աշխարհագրության, սկզբում Վասպուրական, ապա Սյունիք գավառին է պատկանել, պետք է որ, ըստ հայկական ավանդության, Նոյի տապանի փոխ դուրս գալուց հետո հենց նրա բնակատեղին եղած լինի և, հետևաբար՝ Նախնական = Նախիջաւան, այն է՝ նախնական (առաջին) իջևան (նախ «առաջին» և իջաւան «ապաստարան», «կայան», «իջևան», «օթևան» a.a.O. էջ 63)³ պետք է անվանված լինի: Ուստի և երբ Josephus-ը իր Antiq. Jud. I, 92-ում այդ վայրի մասին նշում է՝ «ἀποβατήριον μέντοι τὸν τόπον τούτον Ἀρμένιοι καλοῦσιν ἐκεῖ γὰρ ἀνασωθείσης τῆς λάρνακος ἔτι νῦν οἱ ἐπιχωριοὶ τὰ λείψανα ἐπιδεικνύουσι», ապա հավանական է այս բառերում տեսնել անվան այն ստուգաբանության հաստատումը և միաժամանակ հայկական ավանդության մի ավանդույթ: Հակառակ փաստարկները Մուրադը փատահորեն ժխտում է, այնպես որ, թվում է, թե նա հաստատման մի ապացույց է: Եթե ես, գրեթե բոլոր առանձին կետերում Մուրադի հետ համամիտ լինելով հանդերձ, հիմնական հարցում համենայն դեպս չեմ կարող համաձայնվել, ապա դրա համար ես հետևյալ հիմքն ունեմ:

1. Ստուգաբանության Մուրադի տված բացատրությունը ճիշտ կլինի, եթե Նախիջաւան կամ Նախիջեւան ձևերը նախնականը լինեին: Քանի որ նախնակքայը (հակահիշը՝ ապա) «նախ», «սկզբից» իմաստն ունի, բացատրություններում = «նախ», «նախօրոք», «սկզբից» (լատ. prae-), օր.՝ նախ-աթոռ nax-at' or «նախաթոռ», «առաջին աթոռը գրավող», նախողջոյն naxoġoin «նախնական ողջոյն» (= սկզբից ողջունված լինել), նախ-ա-գահ nax-a-gah «նախագահ» (առաջին գահը՝ աթոռն ունեցող, առաջնություն ունեցող), նախ-ա-ստեղծ nax-a-stefc «նախաստեղծ, սկզբից ստեղծված» (Ադամ), նախ-ծին nax-cin «առաջնեկ», նախ-ասացեալ «սկզբից ասված»,

¹ Հմմտ. Müller-Simonis, Durch Armenien, Kurdistan und Mesopotamien էջ 43:

² Կարողա՞նք Նախնական Nachtschavan, այժմ քարտեզի վրա Նախիջևան Nachitschevan դեռ Պտղոմեոսի կողմից (Ναξοσάνα) Արմաիքի և Արտաշատի կողքին վկայակոչված: Նվազական տարբերակը նրանից կազմված՝ Նախջաւանիկ Naxjavanik: Միմիքի գավառի Քաշունիք նահանգի մի գյուղ (Ստ. Օրբ. II, էջ 270):

³ Հմմտ. Ինճիճեան. Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, Վեներտիկ, 1822, էջ 219 (= Նախ-իջևան կամ Նախ ասան և այլն):

նախ-ա-խնամութիւն nax-a-xnamut' iun «նախախնամություն», նախ-իմացութիւն nax-imaçut' iun «կանխատեսություն» և այլն (a.a.O. էջ 65-66), իսկ իջաւանը (-իջաւանք) նշանակում է «իջևան», «օթևան» (նախ իջաւան iġavan, իջեւան iġevan < էջ Ե՛, էջ-ք Ե՛-k՝ «իջևանել» և վանք wank՝ «օթևան», «բնակարան», հմմտ. օթե-ւանք aut' e-wan-k՝ «գիշերային օթևան»)՝, հին հայ. մի *Նախիջաւան կամ *Նախիջաւան կարող էր այսպիսով նշանակել «նախ-օթևան», «նախիջևան», «առաջին իջևան» և կարող էր այսպես անջատվել, ի տարբերություն հետագա իջևանների, որոնք Նոյի հետնորդները իրենց հետագա թափառումների և տարածման ժամանակ երկրով մեկ ունեցել էին: Սակայն հին հայերեն նման մի Նախիջաւան վկայակոչված չէ, դրա փոխարեն ավելի շուտ հանդիպում է, համաձայն մինչ այս գոյություն ունեցող ենթադրության՝ Նախնական Nachčavan, Նախնուան Nachčuan, ըստ Մուրադի կարծիքի՝ Նախջաւան Nachjavan, որը պետք է որ ժողովրդի արագ խոսելաձևի համաձայն՝ Նախիջաւանից ստեղծված մի կրճատված ձև (a.a.O. էջ 63) լինի: Նման կրճատումներ, սակայն, հայերենում առ այսօր չէին նշվել և, ինչքան ես եմ այդ տեսնում, նշելի էլ չեն: Այդ (հավանաբար *Ejavan' -ից՝ հայերենի հնչյունական օրենքների համաձայն ստեղծված) իջաւան-ը iġavan նախ-ով կազմված բաղաբկությունների մեջ իր «ի»-ն կամ «ու»-ն նույնպես չի կորցնում: Այս օրենքին բախվելով՝ Մուրադի տվյալ բառի կապակցությամբ արված ընդհանուր առմամբ տեղին դատարկությունը տապալիւմ է: Այսպիսի ձևեր են Նախիջաւան, Նախիջևան, Նախջաւան, Նախջուան-ը Նախնական և Նախնուան ձևերի կողքին, թերևս 10-րդ դարից սկսած, հրատարակություններով վկայակոչված (Մուրադ, a.a.O. էջ 103), սակայն ավելի վաղ ժամանակների համար կիրառելի է Նախնական-ը, ավելի հազվադեպ՝ Նախնուան ձևը, հենց այդպես է կիրառվում Փաստոսի մոտ՝ էջ 173, Գազար Փարպեցու՝ էջ 369, Մովս. Խորենացու՝ 77, 129, 219 (միայն էջ 57-ում՝ Նախջաւան), Մովս. Աշխարհացոյց, 609 (Նախնուան), Սեբեոսի մոտ (հաճախ, տես Մուրադ, էջ 103, նաև Պետերբուրգյան 1879 թ. հրատարակության՝ էջ 92, 93, 94, 118, 150), Գևորգի (Պետերբուրգ, 1887) էջ 24 (ըստ ձեռագրի) և էջ 33 (Նախիջևան ձևի համար՝ փարիզյան հրատարակություն 1857), Ստեփանոս Տարսնեցու մոտ (Պետերբուրգ, 1885) էջ 115, 120, 124 (Նախնուանի համար՝ 1859 թ. փարիզյան հրատարակություն), Թովմա Արծրունի (Պետերբուրգ, 1887) էջ 78, 92, 105, 128, 195 և այլն, այնպես որ 10 տարում, ըստ էության, միայն Յովհ. կաթողիկոսն է հաճախ գրում (Մուրադ, էջ 103) Նախջաւան² և Մովս. Կաղան-

¹ Հմմտ. իջանեմ iġanem < էջանեմ eġanem, իջից iġic, էջք-ի eġk՝՝ հոգն. սեռական:

² Նույնն է նաև ըստ մուսկովյան 1853 թվի հրատարակության, օր. էջ 61, 117, 179 Նախջաւան ձևի կողքին (տարբերակը Նախյուան) էջ 56:

կատուացին 3-րդ գրքում երկու անգամ՝ Նախիջևան¹: Համենայն դեպս Նախջաւան-ը, առավել ևս Նախիջևանը ավելի նոր կամ ընթերցվածքի ձևն է, որը միայն շնորհիվ պատմիչների (առանց բացառության ուշ շրջանի) ձեռագրերի արտագրողների և ժամանակակից հրատարակողների թափանցել է նաև հին տեքստերի մեջ: Եթե, սակայն, Նախճաւան-ը այդ անգամ հնագույն ձևն² է, ապա այն ինքնըստինքյան հասկանալի է, որ չէր կարող նշանակել «առաջին հանգրվան» (Նախ-իջաւան), այլ ավելի շուտ այն կարելի էր բաժանել³ մի (սովորաբար անձանոթ) նախճ- նախիճ- կամ նախուճ-, որը հավանաբար մի անուն է եղել և (Ժանոթ) աւան «ավան», «գյուղ» (գյուղի և քաղաքի միջև մի բնակավայր, շեն) բաղադրիչների, և, այսպիսով, այն նշանակում է Նախիճ-աւան, հմմտ. վայրերի այնպիսի անուններ-, ինչպիսիք են՝ Անուշաւան, Արշակաւան, Բագաւան (Բագուան), Չարեհաւան (Չարեհուան), Թոռնաւան, Կարճաւան, Շիրակաւան, Վաղարշաւան, Մմբատաւան:

2. Մեզ հասած ավանդույթների համաձայն՝ Ֆ. Մուրադը, ըստ Ղ. Ալիշանի և Գեւցերի (a.a.O. էջ 67) բերած փաստարկների, պետք է որ ընդունի, որ հին հայկական մատենագիրները, մոտավորապես մինչև «11-րդ կամ 12-րդ դարերը, ոչ մի տեղ Մասիսը որպես Նոյի իջևան չեն նշում, այլ որտեղ նրանք ընդհանրապես տապանակիր սարի մասին են խոսում, որպես այդպիսին նրանք նշում են Կորդուք լեռնաշխարհը, եթե սակայն Ղ. Ալիշանի և Գեւցերի հետ միասին նա չի ուզում եզրակացնել, որ ամենահին ավանդությունը Մասիսը չի ճանաչել որպես տապանասար, այլ Յովհաննէս Երզնկացու (մոտավորապես 1250-1326) խոսքերում՝ «Այրարատեան լեռ, բարձրաբերձ Մասիս, քանի որ այն տապանի հանգրուանն է եղել» (a.a.O. էջ 69), որ ջրհեղեղի առասպելը տեղայնացում է Մասիսի մոտ, «մի հնուց ի վեր հանրահայտ փաստ է»: Այդ Յովհաննէս Երզնկացու վկայության անհիմն գերազնահատումն է, որը, սակայն, միայն ապացուցում է, որ նրա ժամանակ Մասիսը բոլորի կողմից ընդունված էր որպես տապանակիր սար, սակայն ոչ թե որ այն միշտ է իբրև այդպիսին գնահատվել: Այդ կարծիքի վաղեմության հարցում մենք կարող ենք հենվել հին ձեռագրերի վկայակոչության վրա, որոնք հավասարապես, անկախ այն բանից, թարգմանություն են, թե բնագիր, Մասիսը չեն կապում ջրհեղեղի առասպելի հետ:

Վկայությունները, որոնցում մենք ջրհեղեղի մասին երկու միևնույն վարկած-

ների ենք վերստին հանդիպում, ինչպես հին հրեական, հունական և ասորական մատենագիրների մոտ (Մուրադ, էջ 26, 36 և հաջ.) բարելոնական, համաձայն որի տապանի Kardū (Kordune) երկրում, և՛ բիրլիականը, որի համաձայն այն «Արարատ լեռան» վրա (Ծնունդը 8,4) է մտել, ընդհանուր առմամբ հետևյալներն են՝

1. Eusebios Chronik-ի թարգմանությունը (Աուխերի հրատարակությամբ) 1, էջ 36-37 «Եվ (Xisuthros) նավեց, որը գնաց և կանգ առավ Հայաստանում, մինչև օրս մի փոքրիկ բեկոր է մնացել (Կորդուք) լեռան վրա (հայ. Կորդու-ացիք Korduacik՝) Հայաստան երկրում»:

2. Փաւստոս Բուզանդ (Վենետիկ, 1882) էջ 22՝ «Այն ժամանակ Մծբինի եպիսկոպոսը (Հակոբը) վեր կացավ իր քաղաքից, որպեսզի գա հասնի Հայոց լեռները, Սարարադ¹ լեռը, Այրարատյան տերության² Կորդուք գավառում, և նա աղաչում էր աստծուն, որ Նոյի կողմից կառուցած փրկարար տապանը կարողանա տեսնել, որովհետև այն այդ լեռան վրա էր հանգել ջրհեղեղից հետո»:

3. Սուրբ Հռիփսիմեի և նրա ընկերուհիների պատմությունը (Մովս. Խոր. մոտ, Վենետիկ, 1865), էջ 300՝ Կորդուքի Մուլի լեռան մասին ասորիները ասում են, «որ ջրհեղեղի ջրերի տեղատվության ժամանակ տապանը» լեռան, այսինքն՝ Սարարադի գագաթին (ի գլուխ լեռինն որ է Սարարադայ) է հասել,

¹ Ի լեռն Sararaday: Քանի որ Սարարադ-ը լեռն է (տե՛ս Փաւստոս, էջ 24, տող 5 ներքևից՝ ի Սարարադ լեռնն), ոչ երկիրը, որտեղ այն գտնվում է, ուրեմն չպետք է թարգմանել «Սարարադ լեռան վրա» (Մուրադ էջ 71): Այդպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ գավառ, նահանգ, քաղաք, գյուղ, ավան, լեռ և նման այլ հասկացություններ, հայերենում անունը կամ սեռականով է դրվում, կամ (առանձնապես նախորդելիս) մնում է անփոփոխ՝ որպես բացահայտիչ, օր.՝ գաւառն Այրարատու gavaṛn Airaratu Փ. Բ. 143, Ղազար Փարպեցի 282 կամ Այրարատ գաւառն Airarat gavaṛn, գաւառին gavaṛin և այլն (շատ հաճախ)՝ Այրարատ գաւառ. - Սարարադ-ը Արարադի՞ց է գալիս = Արարատ (տե՛ս ներքևում էջ 77): Հմմտ. Մուրադ, էջ 84 ծնթ.:

² Այս հատ ու կենտ և բռնագրոսիկ արտահայտությունները «Այրարատեան տերութեան գաւառ» ինձ համար (ինչպես և Մուրադի, էջ 84) տարիներ ի վեր հակասական է: Այնտեղ, որտեղ Փաւստոսը սովորաբար Կորդուք գաւառ կամ այլ՝ Հայաստանի վերաբերվող կամ վերագրվող որևէ գավառ է իշխատակում, նա բավարարվում է միշտ «գաւառ Կորդուք», «գաւառ Աղոյիովիտ» և այլն ձևերով, առանց որևէ պարզաբանման, քանի որ այն միանգամայն ավելորդ էր, եթե միայն վկայում էր, որ գաւառը gavaṛn Հայաստան երկրին կամ թագավորությանն էր պատկանում: Այդ, այստեղ ևս բավարար չափով է արտահայտված՝ «Հայոց լեռներում» բառերով: Ըստ որում չի եղել և ոչ մի Այրարատյան թագավորություն, այլ միայն՝ Արշակունյան արքաների թագավորություն, որոնք իշխում էին Այրարատեան գաւառի մի քաղաքում: Փաւստոսն օգտագործում է այդ արտահայտությունը միայն այստեղ, որպեսզի ասած լինի, որ եթե տապանը Կորդուք գաւառում է ավի դուրս եկել, այն, եթե անգամ ոչ Այրարատ գաւառում, ապա գոնե Այրարատի կողմից իշխվող Հայաստանի գաւառներից մեկում է իջել, և դրանով նա բացահայտորեն ցանկանում արդեն կատարել է հրեական ավանդույթը (Մուրադ, էջ 26, 39), ըստ որում նա (այն) Արարատը Kardū-ի (հայ. Կորդուք) հետ է նույնացնում: Այդ երկու հարկորումների հակասությունը հետագայում ևս վեր է հանվել, այնուհետև բնականաբար լուծվել է հոգուտ Աստվածաշնչի (Մուրադ, էջ 91): -Այն փաստը, որ Այրարատը Փաւստոսի մեր հասկանածում նաև Ուրարտու հին թագավորության իմաստն է ունեցել, ինչպես այդ ուզում է դուրսորդ Բելքը (համաձայն տեղեկության), ես ժխտում եմ:

¹ Ըստ մուսկովյան 1860 թվի հրատարակության, օր էջ 256:

² Հմմտ. Ղևոնդ Ալիշան, Միսական (Վենետիկ, 1893) էջ 497 «Հնագոյն և լավագոյն մատենագիրները»՝ Խորենացիին և ուրիշներ, մոտավորապես մինչև 12-13-րդ դարերը, միշտ Նախճաւան են գրում: Հմմտ. նաև պոսկ. Naxčavan. Naxjavan, հուն. Ναξουάνα:

³ Նույնը՝ Ղ. Ալիշան, Միսական էջ 497:

և որ սողոսողուկը, նրա միջով սողանցելով, հասել է նավ և մնացել այնտեղ: Վայրի անունը պետք է որ Thœmis¹ կոչված լինի, այսինքն՝ տապանից ութ հոգի են իջել (տե՛ս Մուրադ, էջ 28-29 և հմմտ. Ա Պետր. 3, 20):

4. Թովմա Արծրունի (Պետերբուրգ, 1887) էջ 19՝ «Աստծո հրամանի կատարումից հետո տապանը ջրի հոսանքով քշվեց դեպի արևելք, աշխարհի մեջտեղը (յարևելեայն ի միջոց աշխարհի) և դադար առավ Կորդվաց լեռներում (ի լեռինս Կորդուաց)»:

5. Ծնունդի հայերեն թարգմանություն՝ 8, 4՝ «Եվ տապանը նստեց Արարատ լեռներին» (ի լեռինս Արարատայ² տարբերակը՝ Արարադայ, Այրարատայ հուն. *ἐπι τὰ ὄρη τὰ Ἀραράτ*): Եթե այս տվյալները (դարձյալ Մուրադի կարծիքով) բոլորը ուղղակի թե անուղղակի եկած լինեին հունական կամ ասորական աղբյուրներից, ապա այն հարցի կապակցությամբ, թե արդյոք հայերի մոտ դա բնիկ հայկական առասպել³ է եղել: Միակ տեղը, ուր ջրհեղեղի մասին առասպելը դեռ հիշատակվում է, նկատի է առնվում Մովսես Խորենացու Պատմութիւնը I, գլուխ 6, էջ 17: Սա հաղորդում է՝ այս գրույցները մեզ հասան Գորգիի, Բանանի և Դավթի (?) միջոցով, որ իբր նրանցից մեկը մասնակցել է ազգերի բաժանման մասին հույն իմաստուններից մեկի գրույցին, և որ այդ ժամանակ նրանցից ամենաուշինը՝ Ոլոմպիոդորոս անունով, իբր այսպես է խոսել՝ «Ես ձեզ պատմել եմ ուզում», ասաց նա՝ «չգրված, ավանդությամբ մեզ հասած մի պատմություն, որը շատ գեղջուկներ դեռ պատմում են»: Քսիստոթրոսի և նրա որդիների մասին կա մի մատյան, որը այսօր ոչ մի տեղ չես տեսնի, որի մեջ, ինչպես վկայում են, պատմվելիս է եղել այսպես: Այն բանից հետո, երբ Քսիստոթրոսը դեպի Հայաստան մղվարկեց և ափ դուրս եկավ, նրա որդիներից մեկը՝ Միմ անունով, գնաց հյուսիս-արևմուտք, որպեսզի երկրից տեղեկություն հավաքի, հանդիպում է մի երկար ձգված լեռան ստորոտում մի փոքրիկ դաշտի, որի միջով գետ է հոսում դեպի Ատրեստան, երկու ամսվա ընթացքում բնակվում է գետի ափին և լեռը իր անունով Միմ է անվանում³: Ապա վերադառնում է դեպի հարավ-արևելք, որտեղից եկել էր: Մա-

կայն նրա կրտսեր որդիներից մեկը՝ Տարբան անունով, հորից բաժանվում է իր 30 որդիների և 15 դուստրերի և սրանց ամուսինների հետ միասին և իր բնակատեղին է ընտրում նույնպես նույն այդ գետի ափին՝ և որի (Տարբանի) անունով նա (Միմը) նաև գավառն է Տարոն անվանում, սակայն վայրի անունը, որտեղ նա բնակվել էր, Յրոնք (Շրոնկ) է անվանում, քանի որ այնտեղ սկզբվեց նրա որդիների անջատումը իրենից: Նա հետ է դառնում և ապրում է, ինչպես նրանք են ասում, մի քանի օր բակտրիացիների սահմանների մոտ, և նրա որդիներից մեկը այստեղ էլ մնում է: Որովհետև արևելքի կողմերում Սեմին (sic) Ջրուան են կոչում, իսկ գավառը՝ նրանք մինչև օրս Ջարուանդ են անվանում: Սակայն ծերունիները ավելի հաճախ հիշատակում են Արամի հետնորդների հետ կապված այդ իրողությունները՝ փանդիոի մվագակցությամբ՝ երգի և պարի ուղեկցությամբ: Այս հաղորդումներում ակնարկվում են Խիստոթրոս, Միմ = Սեմ, Սեմ և Ջրուան անունների նույնացումը, Տարոնի մեկնաբանումը որպես Տարբան ձևից եկող, Ջարուանդ-ը որպես Ջրուանից մեկնվող, և այդ փաստաթղթերի բովանդակությունը ոչ թե հենվում է հայերի ժողովրդական ավանդության, այլ Մովսեսի գիտական հնարամտության վրա: Նաև այն պնդումը, թե Արամի հետնորդները «վկայում են այդ մասին», չափազանց անհաստատ է, այնպես որ Մովսեսի նկատմամբ ակնհայտ անվստահության դեպքում անգամ, դժվար թե կարելի է որևէ բան եզրակացնել: Եվ եթե անգամ այդ հաղորդումները ժողովրդական կորիզ ունենային, մի բան, որը ես ժխտում եմ, ապա այդ ավանդության խաղահրապարակը պետք է Վանա լճից արևմուտք և հարավ լիներ, իսկ Խիստոթրոսի վայրէջքի վայրը՝ ելնելով Միմ լեռան դիրքից (տե՛ս Մովս. Խորենացի, էջ 80, Արիստակես Լաստ. էջ 94) և դատելով վերը բերված տվյալներով, ոչ թե Մասիսն է Այրարատում, այլ հենց Կորդուք երկիրը:

5-10-րդ դարերի հայ մատենագրությանը Մասիս լեռը, այսպիսով, ոչ այլ կերպ է հայտնի, քան որպես տապանասար: Եթե այն հետազայում, սակայն՝ որպես այդպիսին է հանդես գալիս, ապա այդ առավելապես բացատրվում է Աստվածաշնչի շարունակ աճող ազդեցությամբ, որը տապանը իջնել է տալիս Արարատ լեռների վրա = հայ. Այրարատ: Ամենաբարձրը և ամենահանրահայտը դրանցից եղել է Մասիսը, հետևապես տապանը պետք է նրա վրա իջներ: Եթե այնուհետև նույն ժամանակամիջոցում Նախճաւանդ-ը նախիջևան է դառնում, որը մեկնաբանվում էր որպես «առաջին հանգրվան», հասկանալի է, որ այդ քաղաքը կապի մեջ էր դրվում տապանի՝ Մասիսի վրա

¹ Հմմտ. *Nöldke*, Festschrift für Kiepert, էջ 77:

² Ծնունդի 8,4 հայ թարգմանիչը արդյո՞ք հասկացել է “*Արարատ*”-ի իմաստը, և ինչու՞ նա ավելի հասկանալի ձևով չի թարգմանում Այրարատ (ինչպես երեւ. -ի 51, 27 թարգմանիչը): Համենայն դեպս, եթե Արարատ-ը (տարբ.՝ Արարադ) միայն հուն. *‘Արարատ* բառի տառադարձումն է, բացարձակ ոչ հայերեն, բացառվում է, որ նա Այրարատից ծագած լինի, ինչպես այդ Մուրադն ուզում է, էջ 20: Նույնքան խորթ է Արարադ ձևը՝ երկիրն Արարադայ «Արարատ երկիրը» Դ թագ. 19, 37, (Pseudo-) Սերոս, Պետերբուրգ, 1879, էջ 2 և 3 (երեք անգամ) և (նույն աղբյուրից) Մովս. Խորենացի, էջ 22 և 23: Իսկ Սարարադ-ը: Հմմտ. Մուրադ, էջ 23, 91-92 ծմբ. և էջ 102:

³ Մասուն գավառում (Իճնիճ., էջ 70), Վանա լճից արևմուտք, Սեմի (Նոյի որդու) անվան հետ մանուկյան պատճառով, Մովսեսն այդ լեռն է ընտրում, որը նա այստեղ Միմ-ի է փոխում:

¹ i noim getezerbn? «ի» նախդիրը կապվում է միայն տրական, հայցական և բացառական հոլովների հետ, սակայն ոչ գործիականի:

² Հմմտ. Մուրադ, էջ 91-92:

կատարվող վայրէջքի հետ, այնպես որ այս դեպքում, ըստ էության, առասպելն ու ստուգաբանությունը մեկը մյուսին հենարան կարող են ծառայել:

Ինչպես էլ որ այդ, սակայն, լինի, գոյության չունի որևէ հետք ջրհեղեղի տեղական առասպելի և Նախնալանի (և անգամ Նախջալանի) որպես ἀποβατήριον¹ մեկնաբանման և ոչ մի հնարավորություն:

Ինչ վերաբերում է Josephus-ին, ապա նա ևս միայն տապանն է լեռան վրա իջեցնում, սակայն չի խոսում ո՛չ Ἀραράτ գավառի մասին, ո՛չ էլ Մասիս լեռան կամ Ναξόανα քաղաքի մասին և նրա պնդումը, թե հայերը իբր մի ինչ- որ վայր՝ ջրհեղեղի առասպելի հետ կապված, ἀποβατήριον են անվանել, չի կարող դիտվել որպես հուսալի: Նա իր աղբյուրը չի անվանում, և մենք հիմք չունենք այն՝ առանց այլևայլի դրական համարել, եթե այն անգամ հայկական էր: Քանի որ անգամ հայր մի որևէ հայկական տեղանվան մասին կարող է տվյալ հաղորդել, և նա այդ արդեն արել է, եթե անգամ Նախնալանը որպես վայրէջքի վայր և նմանօրինակ մեկ այլ ձևով է մեկնաբանել:

¹ Հավանաբար այսպես մեկնաբանվեց Իջաւանք Ijavank՝ գյուղի (Այրարատում) անունը (Եղիշէ, Վեներտիկ, 1859, էջ 139; Մուրադ, էջ 63) (իբր իջանել բայից «իջնել», «ցած իջնել», «վայրէջք կատարել», ἀποβαίνειν): Գյուղը, սակայն, ընկած է Վանանդի գավառում, Մասիսից շատ հեռու և ջրհեղեղի առասպելի հետ ոչ մի առնչություն չունի:

Կարստ Յ. Կիլիկյան հայերենի պատմական քերականություն

(Մտրասբուրգ, Տրյուբներ 1901, 444 էջ)

Այն բանից հետո, երբ ես «Lit. Centralblatt»-ում վեր հանեցի Կարստի գերազանց հաջողված աշխատության արժեքն ու նշանակությունը և հայտարարեցի հիմնականում դրա հետ իմ համամիտ լինելը, բող ինձ իրավունք վերապահվի հին և միջին հայերենի բարբառների և բառաձևերի կապակցությամբ նրա տարբեր առիթներով արտահայտած կարծիքները, որոնք ես միշտ չէ որ նրա հետ կիսում եմ, այստեղ հանգամանորեն քննարկել:

1. Իմ հայերենի քերականության առաջաբանի VIII-IX էջերում ես համառոտակի կանգ եմ առել ժամանակակից հայերենի բարբառների՝ հին և միջին հայերենի նկատմամբ ունեցած փոխառնչության վրա: Ես այն կարծիքն եմ հայտնել, որ նույն այն բարբառը, որը 5-րդ դարում գրաբար ամրակայվեց որպես գրավոր լեզու, հիմնականում առանց փոփոխությունների մինչև նորագույն ժամանակները պահպանվել է ժողովրդի բերանում (որպես ժողովրդախոսակցական լեզու Vulgärsprache) շարունակել է ապրել և աստիճանաբար փոփոխությունների է ենթարկվել, որպես ավելի ուշ՝ արևելյան և արևմտյան տարբեր բարբառների: «Հնարավոր է, որ 5-րդ դարում հայերենի բարբառները գոյություն են ունեցել, սակայն պետք չէ, որ նրանք շատ տարբեր եղած լինեն և կարող էին գրավոր լեզվի կամ իրենց շարունակող ժողովրդական լեզվի վերածվելին, ինչպես հին հունարենի բարբառները՝ Κοινή (a.a.O.):» Մինչդեռ Կարստը, ընդհակառակը՝ էջ 132 և հաջ. ընդունում է, որ «Դասական բարբառի կողքին, որից առաջացել են ոչ միայն դասական գրաբարը, ինչպես պայմանական «դասական» ժողովրդական լեզուն, այլև մեկ այլ՝ ասենք «ոչ դասական» մի բարբառ, որը կազմավորվել է դեռ 5-րդ դարում և որը այդ և ավելի ուշ շրջանի որոշ հին մատենագիրներ (Փաւստոս, Ղազար Փարպեցի և այլն, այսինքնըն՝ «ոչ մաքուր» դասականներ) մատուցել են լեզվական տարբեր ձևեր, ինչպես, օր. **-տար** և **-անի** վերջածանցներով կազմվող հավաքական-հոգնակերտ անուններ: Այս բարբառի մի դուստր էլ հավանաբար կիլիկյան հայերենն է եղել, այն արդեն դասական հայերենից չի սերվում: Նման մի բարբառի երբեմնի առկայության հնարավորությունը, իհարկե, չի կարելի ժխտել, այն բոլորից հետո ինչ մենք այդ լեզվի կյանքի մասին գիտենք, ավելի շուտ պետք է ընդունվի որպես ինքնըստիմքյան հասկանալի, որ հին հայերենը նախագրային ժամանակաշրջանում՝ 5-րդ դարից առաջ, բարբառների է ճեղքված եղել: Այդ բանի համար 8-րդ դարից մի ապացույց կա, որը ես քրճնարկել եմ իմ «Arm. Gramm.» էջ 518-519-ում, համաձայն որի կենտրոնական նահանգի և պալատական¹ բարբառի կողքին գոյություն են ունեցել «եզերա-

¹ Բառացիորեն՝ «սահմանային (եզերական) բարբառներ (բարբ bark՝ «բառեր» արտահայ-

կան» բարբառներ, որպես՝ Կորճայի՛ Korčay (Կորճայք գավառի քրդերի), Տայեցի՛ն Tayeçi (Տայքի գավառի, Τάοχοι), Խուբայի՛նն Xuʿayin (Խոյքի գավառ, Տուրուբերանում, հայկական ազգաբնակչությանը, և 10-րդ դարում-Ստարմենիսի լեզուներում, վաղ ժամանակներում արամեական ազգաբնակչությանը բնակեցված գավառ), Սպերացի՛ն Speraçi (Սպեր գավառը Բարձր Հայքում, Σάσπειρες), Սիւնի՛ն (Սիւնիքի գավառ) և Արցախա-յի՛նն Arçaxayin (Արցախի գավառ): Այս տվյալները, ըստ իս, ավելի շուտ խոսում են հոգուտ օտար լեզուների, որոնք խոսել են նշված գավառներում և ծայրագավառներում, քան հայկական բարբառների և, համեմայն դեպս, առանց այլևայի չէին կարող ապացույց ծառայել այդ բարբառների առկայության համար: Հին հայերեն բարբառների առկայության համար այլ տվյալներ հանդիպում ենք Ջրպետ(եան) Cirkied. Grammaire de la langue arménienne-ում Փարիզ, 1823, Préface էջ XI և հաջ., համաձայն որի «dans des temps déjà très-éloignés de nous» տարբերակվել են վեց գլխավոր բարբառներ (բարբառք barbark՝)՝ արարատյան, գորդյան, աղվանյան, գուգարյան, փոքրհայքյան, պարսկահայքյան: Ըստ Ջրպետեանի՝ սրանցից ամենաբարեհունչը եղել է Այրարատի բարբառը, գրավոր հայերենը, մնացածները սերվում են սրանից և կիրառելի են միայն ժողովրդի մեջ: «Արարատյանը և գորդյանը» երբեմն մաև կենտրոնական բարբառներ են անվանվել (միջերկրեայ բարբառներ mijerkreay barbark՝): Գորդյանը արարատյանից քիչ է միայն տարբերվել (օր. գորդ. լքեմ lk'em= արար. լքանեմ lkanem, գորդ. ձուկ juk = արար. ձուկն jukn «ձուկ»), իսկ նրա առանձնահատկությունները «furent plus ou moins recus dans le dialecte ararathien; on les trouve aujourd'hui dans les ouvrages des anciens et dans les dictionnaires de la langue littéraire», մինչդեռ մյուս կիրառությունները, ինչպես, օրինակ՝ սահմանականի ku, kə մասնիկները կիրառական են միայն ժողովրդական լեզվում: Այդ գորդյան բարբառից օգտվում էին այն ժողովուրդները, որոնք բնակվում էին «Գորդուաց» լեռներում և Վանա լճի հարավային ափերին, ինչպես մաև հյուսիսային Միջագետքի շատ գաղթաբնակներ: Այն մաև Հայաստանի Արշակունյան արքաների պալատական լեզուն էր Մծբինում և այլն, Միջագետքի արաբների, խալդերի և ասորիների հաղորդակցման լեզուն, ինչպես մաև Վասպուրականի Արծրունյաց արքաների պալատական լեզուն և այլն: Նորագույն ժամանակներում այն գավառներում, որտեղ գորդյանով էին խոսում, կազմավորվեցին տարբեր բարբառներ, ինչպես՝ Վանա, Մասունի, Մոկքի, Խոյի, Չորրոդ Հայքի և այլն, որոնք որոշ տարբերություններ են հանդես բերում գրավոր հայերենի համեմատությամբ և անգամ հին «գորդյանից» (a.a.O. էջ XIII): Եթե, սակայն, հարց տրվի, թե ինչի՞

վրա են հենվում այս տվյալները, ապա որևէ այլ աղբյուրի բացակայության դեպքում կարելի է նշել Յովի. Երզնկացու վերը նշված տեղը, ինչպես մաև ժամանակակից բարբառները, որոնց Ջրպետեանը քաջ ծանոթ է եղել: Սրանք, սակայն, բավարար չեն Ջրպետեանի պնդումների համար հին ժամանակներում «գորդյան» բարբառի հնչյունական հարաբերությունների և նրա տարածման ոլորտների համար, ուստի և ես դրանք այնքան ժամանակ կմերժեմ որպես հորինվածք, մինչև որ նրանք ավելի լավ կհիմնավորվեն: Այդ իսկ պատճառով Կարստը միանգամայն սխալ է վարվում, երբ իր քերականության էջ 134-136-ում իր համերաշխությունն է հայտնում Ջրպետեանի բերած տվյալների նկատմամբ, որոնք մա ի վիճակի չէր ստուգել, և Կիլիկիայի հայերենը Փոքր Հայքի, «գորդյան» տարրերով միախառնված, մի դուստր բարբառ է համարում:

Իսկ ի՞նչ է ըստ էության ներկայացնում «գորդյանը»։ Ջրպետեանի a.a.O. էջ XI “gordien=korduaci” և էջ XVI-ում բերված տվյալը, որ այն Վանա լճից հարավ է խոսվել, ոչ մի կասկածի տեղիք չեն տալիս այն մասին, որ գորդյանի տակ պետք է հասկանալ Կորդուք երկրի լեզուն (Ammian-ի մոտ Կորդուքն Corduena, հուն. Κορδοσυνη, այժմ Բոհտան Bohtān) Վանա լճից հարավ: Հետևապես մենք բոլորովին չենք կարող մեզ իրավունք վերապահել խոսելու ինչ-որ «գորդյանի» մասին, այլ խոսքը պետք է վերաբերի կորդյանի korduish կամ գորդու-բարբառի՝ նորագույն արևմտահայերեն արտասանությամբ, և դրա տակ պետք է ընկալել Հին Քրդստանում խոսվող հայերեն բարբառը, որը այդ ժամանակ հարկ էր սահմանազատել՝ Կորդուք երկրում բնիկ ազգաբնակչության (Քսենոֆոն՝ Καρδοσυχοι) կողմից խոսվող լեզվից: Բայց քանի որ ըստ Մովս. Խորենացուն վերագրվող Աշխարհացոյցի էջ 608 Կորդուք Korduk՝ երկիրը, Կորճայք Korčaik՝ աշխարհի մի գավառն էր, ուրեմն պետք է Ջրպետեանի «գորդյանը»՝ որպես Կորդուքի լեզու, նույնացնենք նրա գորդյանի հետ Gordj-ischen (Grammaire de Denis de Thrace էջ 29)= Կորճայ Korčay Յովի. Երզնկացի (տես վերը) = Կորճայք գավառի լեզու, չնայած վերջինս որոշակիորեն և իրավացիորեն որպես եզերական լեզու է դիտվում, իսկ գորդյանը՝ որպես կենտրոնական բարբառ: Սակայն գորդյանի մասին հայտնած կարծիքը թերևս միայն Ջրպետեանի սխալմունքն է, և գոյություն է ունեցել վերջինից անկախ և տարբեր այլ գորդյան: Այդ կարծիքի է հանգեցնում Դիոնիսոս Թրակացու թարգմանության մեջ բերված ծանոթությունը², էջ 30՝ «գորդայք-ին (սեռ. գորդայից) հատկանշական է մի ձև, ինչպես, օր. Մանայճ

¹ Ես այստեղ մեկ անգամ ևս ընդգծում եմ, որ Եղիշի մոտ Կորդուք ժողովուրդը հայերից տարբերվում է և դառնում է օտար ժողովուրդ (ինչպես վրացիները, աղվանները և այլն) Arm. Gram. էջ 519:

² Grammaire de Denis de Thrace ed Cirkied, Paris, 1830: Այս աշխատությունը վկայակոչվում է որպես Dionys:

տություններ»)-կենտրոնական (միջերկրեայ mijerkreay) և ոստանական (ostanakan)», Յովի. Երզնկացի. Ինճիճեան, Հնախօս. 3, էջ 7:

Manaič», ընդունված Մանեճի փոխարեն: Այստեղից հետևում է, որ իբր եղել է մի բարբառ Գորդայ Gorday, որտեղ գրաբար հայերենի «է»-ն թ տառադարձվել է ai-ով: Այս բարբառը, ըստ ՆՉԸ-ի (Գորդայի տակ), երկու անգամ հիշատակվել է Երզնկացի և Մովս. Քերթող քերականների մոտ կամ՝ Ստեփանոս Միւնեցու, և սուաջինի կողմից համեմատվել է դորիականի հետ, որը որպես աղավաղված ատտիկյան է ընկալվում, մնացած դեպքերում, բառարանի կողմից Երզնկացուն հետևելով, այն նույնացվում է Կորճայի հետ Korčay, ինչպես այդ հետևում է կորճալեզու korčalezu, Կորճայ Korčay բառահոդվածից՝ «որոյ բարբառն է փոքր մի թիրեալ և խանգարեալ», ինչպես Կորճեք Korčēk' (=Korčaik') երկրի բնակիչների լեզուն Հայաստանում, որոնք անվանվում էին նաև Գորդայք Gordaik', Կորդուք Korduk', կորդուացիք Korduacik', սեղացիների հարևանները, որով նաև այժմյան ծագումով տարբեր (մահմեդական) բնակիչները քրդեր են անվանվում իրենց երկրի՝ Քուրդիստանի Kurdistan հետ միասին: Աղբյուրը՝ «գորդա է նա անվանում կորճալեզուն korčalezun» (ինչպես աղավաղված ատտիկյանը դորիականն է անվանվում) Երզն. քեր.: Այն քերականը, որը առաջինն է կորճայի korčay կողքին գորդայ gorday օգտագործել, արդյոք նա իր աչքի առաջ ունեցե՞լ է հունական մատենագիրներից եկող (տե՛ս Nöldeke, Festschrift f. Kiepert, էջ 73) հին տարբերությունը Գործսդն, Գործսաօու-ի և Կործոսդն, Կործսաօու-ի միջև: Ինչ-որ Գորդայի Gorday մասին, որպես վայրի կամ քաղաքի, կամ ժողովրդի և նման որևէ այլ բանի անուն, ինչքան ինձ հայտնի է, ընդհանրապես ամբողջ հայ գրականությունը ոչինչ չգիտի: Սակայն, ենթադրենք, որ գոյություն է ունեցել մի ինչ-որ հին Գորդայ բարբառ, որտեղ դասական «է»-ի թ դիմաց «այ» ai է կանգնած եղել, ապա չէ՞ որ այն ոչ մի առկություն չպետք է ունեցած լինի ոչ դասական ժողովրդական լեզվի և ո՛չ էլ դասական բարբառի հետ, քանի որ դասական «է»-ն երկու դեպքում էլ պետք է ներկայացվեր ո՛չ թե «այ»-ով, այլ «է»-ով: Ընդհանուր առմամբ, սակայն, այդ բարբառի մասին այլևս չարժե որևէ բան պնդել:

Սակայն, եթե մի կողմ թողնենք գրականության վկայությունները և դիմենք հենց լեզվին, ապա այն հին մատենագիրներից² մի մասի մոտ իսկապես ի հայտ կբերի կրկնակի ձևեր, որոնք կարող են և պետք է որ հենվելիս լինեն բարբառային տարբերությունների վրա, ինչպես նաև պետք է որ հին ձևերը

կիլիկյան հայերենից սերվելիս լինեն, որոնք չեն ծածկվում համապատասխան դասական ձևերով: Հմմտ. «-եար» (վանեար «վանքեր») և «եր» (հայեր) ածանցներով ավարտվող հավաքական անունները Փաւստոսի, Կեղծ-Կալիսթենեսի և Ղազար Փարպեցու մոտ = կիլ. -եր er (որպես հոգնակիակերտ վերջածանց, օր՝ վաներ, հայեր), կողքին՝ դասական «ք»-ն կ' (վանք vank' «վանքեր», հայք haik' «հայեր») Փաւստոսի և այլոց մոտ; -անի-ով անավարտվող հավաքականները (աւագանի avagani «ավագանիներ» Փաւստոսի, Ղազարի մոտ) = կիլ. «-նի» ni (որպես հոգնակի թվի վերջածանց, օր. օճևնո «ոջիւներ»), կողքին՝ դասական «ք»-ն կ' (աւագք avagk' Եզնիկի, Եղիշէի և այլնի մոտ); իբրու ibru «իբր» (Ազաթ., Պիտ. և այլնի մոտ, բայց նաև Եղիշէի)¹, կողքին՝ դասական իբրեւ-ը ibrev (նույնպես Ազաթանգեղոսի, Եղիշէի մոտ); այրուճի airuji «այրուճի» = հեծելակ (Մակար., Եղիշէ, Վենետիկ, 1859, էջ 7), կողքին՝ այրեճի airevji (Մակար., Ազաթանգեղոս, Ղազար, Եղիշէ էջ 7); ութուտասն ututasn, կողքին՝ ութետասն ut' evtasn «տասնութ»; կիլ. և նոր հայ. ու «և» = դասական եւ ev; կիլ. ինչու inču «մինչև», կողքին՝ դասական մինչէտ minčev (Կարստ, էջ 68); ժեռ շե՛ր (Պիտ.), ժեռաւոր շե՛րavor (Մովս. աշխ.) կողքին՝ ժայռ շա՛ր «ժայռ» (Ա թագ. 14,5), ժայռաւոր շա՛րavor «ժայռած, ատամնավոր» (Մովս. Խոր.); ժոռաւ շա՛րat «ամատամ» (Մահմ. էջ 144); սեր սե՛ր (ն՞րտեղ է հիշատակվում), կողքին՝ սայր սա՛ր «սրի սայրը» (Ոսկ. երբ., Մակար.); թառս.միմ տ' aramim «թառամել» (Հին կտ. Ղազար, Վարք հարանց և այլն), կողքին՝ թարշամիմ տ' aršamim (ՄԳր., Մովս. Խոր., Փիլոն, Եփրեմ, Լամբր.); հեղեղ helel «հեղեղ», «ջրհեղեղ» (Հին կտ.), կողքին՝ ողող-եմ օթօթ-em «լվանալ, հեղեղել» (Հին կտ.); լերկ lerk «լերկ», ողորկ օթօրկ «ողորկ, հարթ», «հարթեցրած» (հակահիշը՝ խոշոր xošor Հին կտ., Փիլոն, Եղիշէ, Մովս. Խոր. և այլն); մոնք monk' «մենք», դոնք donk' «դուք», ոնք nonk' «նրանք»², հին հայ. մեք mek', դուք duk', նոքա nok' a ձևերի կողքին: Կիլ. լափստակ lapstak, դասական նապաստակ-ի napastak «նապաստակ» կողքին; կիլ. բոման boman «պայմանագիր», «ժամկետ», դասական պայմանի-ի paiman կողքին; կիլ. չաք չակ' «չափ», դասական չափ-ի չաք' կողքին և այլն: Տարօրինակ է, որ Կարստը, որը էջ 62,68,86, 132-135 և այլնում այս դեպքերը նշում է, աչքից վրիպել է տալ լավագույն օրինակը, որը ես այստեղ լրացուցիչ նշում եմ՝ բաստ

¹ Նա, անշուշտ, «մաքուր» դասական չի համարվում:

² Գիոնիստի մոտ էջ 52: Այս ձևերը կասկածելի են, քանի որ նրանք պետք է որ երկակի լինեն, իսկ այդ բոլոր երկակի ձևերը, ինչպես՝ Պետրոս Petru ձև, այսու aidu 50, իմեն imen, քորա kora, նորոն noron 52, նովր novr «նրանց երկուսի» 54 գտնված ձևեր են: Օտարտի է նաև, որ ես es, դու du, նա na ձևերի հոգնակի տրվում է որպես ոնք onk' (մեք-ի mek' փոխարեն), դուք duk', նոքանք nok' ank' (նոքա-յի nok'a փոխարեն) էջ 52: Կասկածելի են նաև նոյր noir «նրա», տր. նուս num, գործ. նով nov, կանոնավոր բայերի լոկ հարացույցից թերևս որևէ հետագա հավելված լինելը (էջ 70-86) բոլորովին բացառվում է:

¹ Պարսկերենից փոխառնված մի անուն=միջպրակ. *Manēč, տե՛ս Arm. Gramm. էջ 51:

² Հետագայում կրեթվեն հետևյալ կրճատումները՝ AT-Հին կտակարան, NT=Նոր կտակարան - հայերեն թարգմանությամբ: Philo=Փիլոն, About the contemplative life ed. Conybeare, Oxford 1895, Kateg.=Kategorien des Aristoteles in Anecdota Oxoniensia ed. Conybeare, Oxford 1892, Def.=Definitiones philos. (Մահմանք իմաստութեան sahmank' imastu'ean) Դավիթ փիլիսոփայի, Կորին-ից, Մամբրե. Դավիթ. Վենետիկ, 1833, էջ 120-216, Isag.=Isagoge des Porphyrius նույն տեղում էջ 227-250:

bast, դրաստ drast, տաստակ tastak (Պիտ., Փիլոն և այլն) դասական բախտ baxt «բախտ, երջանկություն», դրախտ draxt «պարտեզ», տախտակ taxtak «տախտակ» ձևերի կողքին (Հայ. Քեր. էջ 115-116, 145, 250): Մակայն բերված ոչ բոլոր կրկնակ ձևերը ունեն ապացուցման նույն ուժը¹: Քանի որ այնպիսի կրկնակ ձևեր, ինչպիսին են՝ թառամ-ը և թարշամ-ը, հեղեղ-ը և ողող-ը, լերկ-ը և ողորկ-ը, չմայած իրենց տարբերությանը, կարող էին միևնույն բարբառին պատկանել, ինչպես, օր. հայերենում քառ k'ar և չորք չօրk' «չորս» (հնդեվր, k²tvř- և k²etvor-), լատիներենում՝ deus և divus (<* deivos), oleum և oliva (հուն. ἔλαιον և ἐλαία) և այլն: Կարող են գուգահեռաբար իրար կողքի կանգնել ժայռ žair և ժռառ-ը žaur-at, ինչպես ուղղ. հայր hair նրա կողքին սեռ. հոր haur և այլն (Կարստ, էջ 62): Լատիստակ lap'stak կարող է ժողովրդական ստուգաբանությամբ *նափստակ-ից առաջ եկած լինել= դասական՝ նապաստակ: Այնպիսի ձևերը, սակայն, ինչպիսին են՝ մոնք, դոնք, մոնք, որոնք ծառայել են Դիոնիսոս Թրակացու թարգմանչին բացակայող կրկնակ ձևերի փոխարեն, ինչպես նշվեց, կասկածելի են, առավել ևս, որ նրանք ավելի ուշ ձևեր են, քան անգամ կիլիկյան դերանվանական ձևերը՝ մենք m'enk', դուք duk', նաքա nak'a: Ես հնարավոր եմ համարում, որ այս կրկնակ ձևերի մի մասը բավարար բացատրություն կգտնեն միայն դասականի կողքին մի հին բարբառի առկայության ընդունմամբ: Այդ բարբառի կապակցությամբ առաջին հերթին կարելի է պնդել, որ եթե անգամ նրան վերագրվեն բոլոր այն առանձնահատկությունները, որոնցով նա սահմանազատվում էր դասականի լեզվից, և մի քանի այլ գծեր ևս, ապա այն որպես ապացույց իրեն վերաբերող կիլիկյան հայերենի, որը Կարստը գրեթե լիովին դասական լեզվով կարող էր բացատրել, վերջինիս հետ իր ձայնավորների և բաղաձայնների համակարգով, հոլովմամբ, խոնարհմամբ և շարահյուսությամբ այն աստիճան են համապատասխանում, որ խոսքը կարող է վերաբերել ոչ թե երկու բարբառների, այլ միևնույն բարբառի երկու խոսվածքների²: Այնուհետև պետք է նշվի, որ այն բոլորը, ինչ կարող է որպես բարբառային դիտվել, ինչպես այդ մասին ընդհանրապես ստուգաբանորեն կարելի է դատել, ավելի նոր է, քան համապա-

¹ Այդպիսին են նաև արիեստ-ը արուեստ-ի կողքին «արվեստ» (τῆχνη) «իրաշք», երկուսը իրար կողքի հանդիպում են Դիոնիսոսի մոտ, էջ 4; տեղի տեի սեռ. տեղոյ տեօյ «տեղ», «վայր». որպես բաղարկության առաջին բաղադրիչ, տեղ տե տող-ի օժ կողքին, սեռ. ետեղ etel նաև որպես բաղարկությունների առաջին (-տեղ) և վերջին (-տեղ) բաղադրիչ, երկուսն էլ դասական ձևեր; քոյն t'oin «թույն» քին t'ian-ի կողքին, երկուսն էլ Եղիշե-ի մոտ, էջ 7, տող 13 և 4 ներքևից; ամբառ-նում ambainam «տուրք հավաքել» համբառնամ hambainam ձևի կողքին (Փիլոն, էջ 157,173); մորուք mauruk' «մորուք» մուրուք-ի muruk' կողքին, երկուսն էլ Փիլոնի մոտ a.a.O., էջ 169: Այլ բնույթի են այն դեպքերը, ինչպիսիք են՝ ժամանակ-ը žamanak ամանակ-ի amanak կողքին: Հմմտ. Arm. Gramm. էջ 156:

² Ըստ որում բառային տարբերությունները, անշուշտ, պետք է ավելի նշանակալից եղած լինեն:

տասխան դասական ձևերը: Այսպիսով, Մանայճ Manaič (տե՛ս վերը) «գորդայ ձևը» ավելի նոր պետք է լինի, քան հին հայերեն Մանեճ-ը, քանի որ արշակունյան ձևը, որը փոխառություն է, եղել է Մանեճ Manēč (և ոչ թե *Մանայճ Manaič), այսպիսով կիլ. բոման-ը, եթե այն անգամ հնարավոր է հետ տանել դեպի մի հին բարբառային *պոման poman կամ պաման paman կամ նման մի այլ ձև, դարձյալ կշարունակի ավելի նոր մնալ, քան հին հայերեն պայմանը՝ paiman, քանի որ միջին պարսկերեն ձևը paimān է եղել (< պիլ. patmān), և ոչինչ չի կարող վկայել այն մասին, թե բոման-ը *պոմանի և նմանօրինակ այլ ձևերի վրայով հետ պետք է տարվի դեպի մի ավելի հին *պատման-ի *patman, հետևաբար կիլ. բացխուն-ը bačxun < * պատասխան patasxan դժվար թե ավելի վաղ ձևը *pātsaxv, *pātsax'an-ի կողքին: Այսպիսով, հինհայ. բաստ bast, դրաստ drast, տաստակ tastak համեմայն դեպս ավելի նոր են, քան դասական՝ բախտ baxt, դրախտ draxt, տախտակ taxtak= պիլ. baxt (զենդ. baxta-), draxt, tāxtak, ուրեմն նաև կիլ. վանց-ը vanč «պատճառով» <*vans (Կարստ, էջ 106) ավելի նոր է, քան դասական վասն-ը vasn= հայրս. vašnā, զենդ. vasna: Կարճ ասած՝ մինչև օրս չի գտնվել մի բարբառային ձև, որը նախադրվեր որպես ավելի հին, քան դասականը, այնպես որ իմ պնդումը Arm. Gramm.-ի նախաբանում էջ IX, որ «ինչքան ինձ հայտնի է, ասացված ոչ մի բառ չի հիշատակվել, որն իր հնչյունական կազմով, խոսքը ամենից առաջ հենց սրան է վերաբերում, հետ տարվի մի այլ ձևի, քան առկա հին հայերենի ձևն է», դեռ շարունակում է ճիշտ մնալ¹: Այսպիսով, ես գալիս եմ այն եզրակացության, որ հին հայերենը բաժանվում է զանազան, բայց միմյանցից ուժեղ չտարբերվող բարբառների, որոնցից ամենահինը եղել է դասական հայերենը:

Ճիշտ է, առաջին հայացքից թվում է, թե մի քանի հին մատենագիրների, հատկապես փիլիսոփայական և քերականական աշխատությունների թարգմանության լեզուն մեծ չափերով դասական լեզվից ուժեղ տարբերվող բարբառային առանձնահատկություններով է խճողված, սակայն այդ տպավորությունն անմիջապես վերանում է այն մտակից ուսումնասիրելիս: Չէ՞ որ դրանք առաջին հերթին հունարենի ընդօրինակմամբ և միայն այդ գրականության մեջ օգտագործվող բազմաթիվ արհեստական արտահայտություններն են, որոնք լեզվին օտարոտի բնույթ են տալիս, ինչպես, օրինակ՝ այն գոյականներն ու բայերը, որոնք կազմված են այնպիսի նախածանցներով, ինչպիսիք են՝ արտ-art-(էջ), բաղ- bał- (cuv-), բաց-bač-(ἀπο-), գեր- ger-(ὕπερ-),

¹ Իհարկե, եթե հայ ութ-ը «ութ» < *ovt-ից=*opt-ը (Բուգոե) դուրս բերելու լինենք, իսկ բուն-ը «բուն» < *kovn-ից = *svopno- (Մեյն) և կառուցենք մի դրույթ, որի համաձայն հնդեվր. op=հայ. ov=ս, ապա կարելի կլինի հին հայ. ու-ն = հնդեվր. *opi = լատ. ob- ևս դիտել որպես գուգահեռ ձև հինհայ. եւ «և»= հնդեվր. *epi, հուն. ἔπι ձևի համար: Իսկ այդ դրույթը ճիշտ է: Հմմտ. կով «կով» = հնդեվր. g²ov-:

դեր- der- (ἀντι-), ենթ- ent- (ὕπο-), հակ- hak-(ἀντι-), հոմ- hom-(ὄμο- տե՛ս Arm. Gramm. 175), մակ- mak-(ἐπι-), յար- yar-(παρα-), ներ- ner-(εις-, ἐν-), շաղ- šaġ-(kap-)= cún(δεσμός), շար- šar-(cuv-), պար- par-, փար- p'ar-(περι-), ստոր- stor-(ὕπο-), վեր- ver-(ἀνα-), տրամ- tram- (δια-), փաղ- paġ-(cuv-), փոխ- pòx-(μετα-)¹, այնուհետև այնպիսի մակբայներ, ինչպիսիք են՝ հիզան hizan, հիբար hibar, որգան orzan, որկեն orkēn, որգոն orgon, որգունակ orgunak (Դիոնիսոս, էջ 22, 26, 28), որպակ orpak «ինչպես» (οἶον) դասական այնպիսի ձևի դիմաց, ինչպես որպետ-ը orpēs «ինչպես»²; թվական եզ ez «մեկ» (Դիոնիսոս, էջ 20) դասական մի-ի mi դիմաց; n = ռո նախածանցը դասական «ի»-ի դիմաց, որը ես մինչև հիմա ընկալել եմ որպես հունական փոխառություն (ἐν)³: Եթե, սակայն, այդ արհեստական լեզուն գնենք բառապաշարի տեսանկյունից և ավելի հանգամանորեն աչքի անցկացնենք միայն բուն քերականությունը, հնչյունաբանությունն ու ձևաբանությունը, ապա այն ոչ մի էական տարբերություն չի ցուցաբերի հին հայերենի նկատմամբ: Այսպես, ես Դիոնիսոսի մոտ հանդիպում եմ միայն 1) իբրու ibru «իբրև» էջ 2, 36, 38 դասական իբրե-ի ibrev կողքին, էջ 8, 26 և այլն: 2) մու mu «մի», էջ 18 (մու մու mu mu) 30, 40, 52 դասական մի mi բառաձևի կողքին, սեռականը՝ միոյ mioy էջ 16, 30; 3) ունչ սոճ (որը բերվում է միայն մեկ անգամ այստեղ (էջ 54) նախդիրների թվում, սակայն հին հայերենում և ոչ մի տեղ չի կիրառվում), եթե այն վերաբերվելիս լինի կիլ. ինչու-ին inčū⁴ (դասականը՝ մինչև minčev «մինչև»); 4) ոյր-ով oir կազմվող սեռականը միայն մեկ անգամ է հանդիպում՝ ընդ տեղույր կապակցության մեջ⁵ ond telvoir “par le lieu”(?) էջ 56 (հուն. ἐκ τόπου բառաձևի փոխարեն) դասական տեղույ telvoy «տեղի» բառաձևի դիմաց, մինչդեռ կոչիլ-ը kočil «կոչվել» էջ 38 պետք է գնահատվի որպես հին հայերենի ավելի ուշ շրջանի ձև (դասական կոչել kočel բառաձևի փոխարեն, նույնը): Աստուածում

¹ Վերը նշվածները, բոլորն էլ Աստվածաշնչում դեռ չեն հանդիպում, ուրիշները՝ ինչպես, օր. նախ-ը nax (προ-) միայն քիչ դեպքերում:

² Մտորումների տեղիք է տալիս նաև մեկուսացած որչաք-ը orčak', նաև օրչան-ը orčan (միայն Դիոնիսոս. մոտ էջ 38), որպես հարցական դերանուն որչափ օրչար', որքան ork' an անորոշ դերանունը:

³ Դրա դեմ է վկայում այն, որ իբր Ագուլիսի բարբառը «ն» ու նախածանց ունի, որը դեռ Պատկանեանը «Arm. Dial.» էջ 20 գուգադրել է գերմ. in-ի, հուն. «ἐν»-ի: Հմմտ. Կարստ, էջ 409: «ն»-ն որպես նախածանց, կանգնում է ձայնավորով սկսվող բառերից առաջ՝ տր. և ներգ. հոլովներում «մեջ» իմաստով, կամ բաց. հոլովում «-ից» իմաստով, ճիշտ այնպես, ինչպես «ի» նախդիրը: Բաղաձայններով սկսվող բառերում «ըն» ռո է կանգնում, օր. ընտեսակոջ՝ օտեսակոջ (Հոնասկ), ըն մարդոջ օտ mardoj Kategorien 110, ընմարդոջ օտmardoj 114, ընմարմնոջ օտmarmənoj 143.

⁴ Կարստ էջ 54 և 135-ում այն համարում է դասական և համադրում է ինչ inč=ագուլ. ունչ սոճ «ինչ-որ մի բան» բառաձևի հետ:

⁵ Ներտնդուց nertelvoj (εν τόπω) և ի տեղուց i telvoj (εις τόπον)

Astvacum էջ 92 տրականը վերաբերում է Դիոնիսոս Թրակացու թարգմանության մի ավելի ուշ շրջանի հավելվածի: Քանի որ ուն-ով սոտ այս ձևը Նոր կտակարանում հանդիպում է միայն նախդիրների և նախդրավոր ածականների հետ¹ (ZDMG. 36, 124), երբեմն նաև այլ ածականների մոտ, ինչպես՝ սուրբ surb (ի սրբում և srbum Ելք 29,31), հին hin (ի հնումն և hnumm Եղիշէ), և միայն շատ ուշ՝ գոյականների մոտ: Փիլոնի մոտ ես հանդիպում եմ միայն՝ 1) իբրու ibru էջ 160, 163, 173, 176 իբրե ibrev բառաձևի կողքին 162, 163, 166, 175, 177 (ինչպես նաև՝ եւ ev, ես evs, բեթեւ t' et' ev, ձեւ jev); 2) բաստ bast բարեբաստիկ barebastik էջ 161 և բարեբաստութիւն barebastut' iun 159, 180 բառաձևերում, դասական բախտ baxt բառաձևի դիմաց (Դիոնիսոս էջ 18, բաղտ bayt որպես վաղեմի բախտ-ի ավելի ուշ ձև); 3) ասիցեալ asičéal (յասիցելում y asičelum 163), դասական ասացեալ asačéal բառաձևի կողքին՝ 165, 176, 178; 4) -ոջ-ով oġ կազմվող ներգոյական, տրական՝ ի լուսոջ և lusoġ (են փօտ 158), նմանել կենդանուց nmanel kendanvoj (ἐοικέναι ζψψ) 177, որոնք միայն -ոջ-ի -ոյ ավելի ուշ շրջանի թարգմանություններով կարող են ներգոյականի ձևերից (ինչպես ի տեղուց և telvoj), ինչպես նաև սեռական-տրական ձևերից (ինչպես՝ կնոջ knoġ, միոջ mioġ) առաջացած լինել: 5) ասիցեալ asičéal դերբայական ձևից -ում-ով կազմվող տրականը միայն էջ 163, յասիցելում ի միայնանոցսն y asičelum և miainanočsn (են τοις λεχθεϊσι μονακτηριοις), փոխանցված դերանվանական ածականներից, հմմտ. ի միում և miuum 176, յեօթներորդում 163, 164; 6) -իլ-ով il կազմվող անորոշ դերբայը կրավորական և չեզոք բայերում՝ վերամբարձիլ verambarzil (μετεωριζεσθαι) 157, կերակրիլ kerakril (τρέφεσθαι) 165, ցուցանիլ ցուցանիլ «ցույց տալ» 166, տմբրիլ təmbril, ընկղմիլ օնկեմիլ 168, ձգիլ jgil, կորզիլ korzil, հաշիլ hašil, մաշիլ mašil 172, բաշխիլ bašxil 178 հին դասական լինել linel 156, 159, 172, 173, մարսնչել martənčel 156, ծնանել cnel 161, 174, բազմել bazmel 173, հանդիպել handipel 174, 177, պատահել patahel 171, նմանել nmanel 177, խօսել xausel 177, բուսանել busanel 172, ունել unel 173, հայել hayel 173 բայաձևերի կողքին 2-6 դեպքերում առկա են, անշուշտ, ավելի նոր ձևեր, քան դասականներն են: Փիլոնի մոտ աչքի է զարնում միայն սէ sē դերանունը, սա-յի sa դիմաց, քանի որ դասական լեզվին բոլորովին օտար է և պետք է ծառայի միայն ծանոթագրական սեռի արտահայտմանը, հմմտ. սէ = ἡ μὲν 157, 174 և q սէ = αὐτῆν 173; Մեծ բառարանը (ՆՀԲ) տալիս է նաև եզակի սեռականի ձևը՝ սարա sara (դասական տրա-յի փոխարեն) և հոգնակին՝ սացա saça (դասական սոցա-յի soça դիմաց) Փիլոնի այլ աշխատությունների թարգմանությունից, ինչպես նաև՝ Պիտոյից գիրքը

¹ Հմմտ. Դիոնիսոս. 48՝ յերկրորդում yerkordum «երկրորդում», յեռուն yeurum «երրորդում», Փաստոսի մոտ 11՝ յառաջում yafajum «առաջին (գիշեր)» 195; յաջում yajum «աջ (թև, կողմ)»:

Pitoyic girk' -ը, որպես իգական սեռ: Հա:երենը, սակայն, առհասարակ սեռ չի տարբերակում: Def.-ի Քերականությունը թվում է, թե որպես առանձնահատկություն ցուցաբերում է -ում-ով ավարտվող ներգոյականներ, որոնք նշում է Կարստը էջ 239-ում (նաև՝ ի լաումն i lavum, ի միջակումն i mijakum, ի յոռեզումումն i yoregunum էջ 167): Այդ ձևն այստեղ տարածված է ընդհանրապես ածականների և գոյականների վրա (ի Սոկրատում i Sokratum, ի Պլատոնում i Platonum): Միևնույն հիմունքով է այստեղ ում-ով ավարտվող ձևերը Isag.-ի մոտ կիրառվում որպես ներգոյական (օր. ն-ենթակայում n-ent' akayum էջ 239) և՛ տրական (մարդում mardum էջ 238, 1-4 ներքևից; 250, 11; տեսակում tesakum էջ 248 տեսակի tesaki սեռականի կողքին 259), սակայն շատ ավելի հաճախ (տես Կարստ, էջ 238) է հանդիպում այստեղ ոյր-ով օր ավարտվող սեռականը, առանձնապես n- հիմքերից, օր. մարդոյր mardoir ձևը մարդոյ mardoy բառաձևի կողքին, կենդանոյր-ը kendanoir կենդանոյ kendanvoy, կենդանոյ kendanoy բառաձևերի կողքին էջ 230, 231, 235, սակայն նաև տեսակոյր tesakoir 248 տեսակի tesaki կողքին 259, որը մենք մեկ անգամ արդեն հանդիպել ենք Դիոնիսոսի մոտ (ընդ տեղոյր օռժ տելօիր?), այլ դեպքերում, սակայն, մենք այդ չենք հանդիպում ո՛չ Isagoge-ի Կոմենտարներում (նշված տեղում՝ էջ 251-256), ո՛չ Kateg.-ում էջ 359-408 և ո՛չ էլ Def.-ում էջ 180-216 և այլն: Ես չեմ կարող այստեղ, հետևելով Կարստին, այս՝ ինձ արհեստական թվացող կառուցվածքում՝ հին ժամանակներից եկող մի ինչ-որ “Reminiszenz” տեսնել, ավելի հավանական է, որ այն մի ավելի ուշ շրջանի նոր կառուցվածք է՝ հարցական դերանունների նմանությամբ, սեռ. ոյր օիր², տր. ում սո, որոնց համաձայն ստեղծվել են միում-ի mium դիմաց՝ միոյր mioir (էջ 229), մարդում-ի mardum դիմաց՝ մարդոյր mardoir: Քանի որ նախկինում ր-ով ավարտվող սեռականը միայն դերանուններին էր հատուկ, Kateg.-ում ում-ով սո ավարտվող տրական-ներգոյականը ավելի հազվադեպ երևույթ է (*հմմտ.* ն- ենթակայում n-ent' akayum 108, սակաում 116, փոկում p'okum 123, ընդունակում օռժունակում 146 (ածականներ), ունելում unelum 144, հիւանդանալում hivandanalum 148 (դերբայներ), մինչդեռ -ոջ-ով օյ կազմվող տրական-ներգոյականները ավելի հաճախ են կիրառվում, օր. ն-ենթակայոջ ումեք n-ent' akayoյ umek', ընմարդոջ օռժմարդոյ

¹ Հմմտ. հոգնակի սեռականի ձևերը՝ unցայր soçair է մարդոյր mardoç Isag. էջ 228, 229, 234:
² Դիոնիսոսն այստեղ՝ էջ 52-ում, իմ im «ին», քոյ k'oy «քո» բառաձևերի կողքին նշում է մի նոյր noir «նրա» բառաձև: Բացի այդ, Կարստի վկայությամբ՝ էջ 135 այն հանդիպում է հին անտիպ՝ ձեռագիր Glossar-ում: David-ի մոտ ես այն չեմ կարողանում գտնել, Isagoge-ում այն չի հանդիպում, Aidyn.-ի մոտ 2,43 հանդիպում են միայն նկոր nvor, դկոր dvor, սկոր svor բառաձևերը, որոնք, սակայն, նոյր noir, դոյր doir, սոյր soir ձևերից չեն սերվում: Մնում է միայն Cirtied-ը (Gramm. էջ 755) սոյր soir բառաձևի կողքին տրվում են սկոր savor, սոյր սոյ տարբերակները և այլն:

114, ըն մարդոջ օռ mardoյ 110, ն-ումեք մարդոջ n-umek' mardoյ 113, ումենն մարդոջ umeməon mardoյ 115 (ավելի հաճախ հանդիպող մարդոյ mardoy բառաձևանի կողքին), կենդանոջն kendanvoյn 115, ի մարմնոջ-ի i marmənoյ կողքին՝ ընմարմնոջ օռmarmənoյ 143¹, սակաւոջ sakavvoյ 123, ամենայնոջ amenainvoյ, ընդունականոջ օռժունականոյ 146, բարոջ barvoյ, չարոջ çarvoյ 149 և այլն: Այդ դեպքերում Kateg.-ի արհեստական լեզվից կարելի է արձանագրել՝ ասիցեալ asiçeal (յասիցեալոջ-u 110, տող՝ 4, 22, յասիցեալոջ, ասիցեալոջ 138, տող 19-20 և այլն) դերբայական ձևը, որը մենք դեռ վերը՝ Փիլոնի մոտ հանդիպեցինք, դասական ասացեալ asaçeal բառաձևի կողքին էջ 138, տող 1 և այլն, ինչպես նաև իբրու օր բառաձևը էջ 109, 116 և այլն, դասական իբրեի-ի ibrev կողքին; περὶ ἐρμηνείας մատենագրության թարգմանությունից կարելի է արձանագրել՝ ամեն amen, ամեն amēn «յուրաքանչյուր», «ամեն» էջ 159, 160, 161, 170, դասական ամենայն amenain բառաձևի կողքին՝ էջ 159, 162 (սակայն նաև դասական ամեն-ը բաղարկությունների մեջ, օր. ամենահնար amenahnar), մու mu «մեկը» էջ 161, 162, 170, 171 (մոյր moir սեռականով), դասական մի mi բառաձևի կողքին՝ 171, 180, իբրու օր 168, դասական իբրեի ibrev-ի կողքին 175, նաև՝ ասիցեալ asiçeal 173 (*հմմտ.* ստորոգիցեալ storogiceal 172, տարոգոջիցեալ taroroşiceal 173): «Ոչ շատ մաքուր» դասականներից վկայակոչված բառաձևերը մասամբ ավելի ուշ ձևեր են կամ արհեստական հետդասական նորաբանություններ², մասամբ էլ՝ սակայն (ինչպես իբրու, մու, բաստ ձևերը) իսկական բարբառային ձևեր: Սակայն անգամ սրանց թվարկումը բավական է ցույց տալու համար, որ մենք առնչվում ենք միայն չնչին քանակությամբ բարբառային տարբերությունների հետ, որոնք դասական հայերենին մասամբ կարող էին այնպես հարաբերվել, ինչպես ժողովրդական լատիներենը դասական լատիներենին: Առհասարակ շարունակ պետք է շեշտել, որ այն ժամանակաշրջանը, երբ նշված մատենագրությունները թարգմանվել են, ճշտված չէ, և որ հնագույն գործերի տարբերի որոշումը զուտ պայմանական է: Ինձ համար հաստատ է մի-

¹ Ընմարմնի օռmarməni բառաձևի կողքին 111, ի մարմնի i marməni 108 և մարմնոյ marmənoյ 119, 120; մարմին marmni «մարմին» գոյականը պատկանում է n-հիմքերին, սեռական-տրականը՝ մարմնոյ marmnoյ: Սակայն երբեմն ամենավաղեմի ժամանակներում որպես սեռական-տրական հանդիպում է նաև մարմնի marmni, օր. Թուրք առ գաղ. 6, 17՝ ի մարմնի իմում i marmni imum, Եղիշ էջ 8, ի մարմնի i marmni ձևերը:
² Նմանօրինակ մի նորաբանություն է ինձ թվում նաև -իցեի icēi և այլն վերջածանցով կազմվող պայմանական եղանակի անկատարը, որը հիշատակված է Sasse Prolegomena in Aphraatissermones homileticos, Lipsiae 1878, էջ 25 գործի թարգմանության մեջ՝ դիցեի dnicēin, փրկիցեի p'rkicēer, լուեալ իցեի leal icēer, լինիցիւր linicēur = լինիցեի linicēer, գիտայցեի gitacēin, փորձիցիւր p'ortēicēur, որը պետք է, որ հանդիպելիս լինի նաև Փատսոսի մոտ, *հմմտ.* Petermann, Brevis linguae Armeniacae grammatica, էջ 65:

այն, որ հայերենի մեր այբուբենը հայտնաբերվել է Մեսրոպի կողմից 5-րդ դարի սկզբում, որ այդ հայտնագործություններից առաջ հայերեն ոչ մի գրավոր հիշատակարան¹ չկար, որ հայ գրականության ամենահին հիշատակարանը Աստվածաշնչի մեծ մասի թարգմանությունն էր, և որ ամենավաղեմի հայերենը Աստվածաշնչի հնագույն ձեռագրերի հայերենն է, համեմատությամբ վերը նշված գործերը, որոնք համեմայն դեպս ավելի ուշ թվարկության են վերաբերում²:

2) Կարստի³ հին հայերենի առանձին ձևերի հետ կապված մեկնաբանությունների կապակցությամբ հարկ ենք համարում նշել հետևյալը՝

Էջ 17 - Համաձայն Կարստի³ այստեղ և էջ 55-ում բերված փաստարկումների, ինչպես նաև՝ Մեյեի դիտողությունների MSL 11, 16՝ այնպիսի բառաձևերի մասին, ինչպիսիք են՝ բացցես բազես (ապառնի), եբաց եբազ (կատարյալ), բաց բազ (հրամայական) ի հակադրություն՝ գնացես գնազես (ապառնի), գնաց գնազ (կատարյալ), գնա գնա (հրամայական)։ ապա գնացես գենացես-ի դիմաց և այլն, որոնց հետ համահունչ են ներքո տրվող բառերի տառադարձումները՝ Նութադե (Ստրաբոն) հայ. Նպատ-ի Npat դիմաց, Γιλᾶκιος հայ. *Գղակ-ի *głak դիմաց (ըստ Մարկվարտի՝ վկայակոչված Դղակ Dlak), (κλίμα) Μουζουρωδον, հայ. Մզուր-ի Mzur դիմաց Gelzer, Geogr. Cypr. 184, Κιθαριζων հայ. Կտոհի-ի Ktiré դիմաց, Τζιμικησ հայ. Չմչիկի-ի դիմաց, Συμβάτιος հայ. Սմբատ-ի Smbat դիմաց և այլն (տե՛ս իմ Zur Chronologie der armen. Vokalgesetze աշխատությունը, էջ 156-157), հայերենի ձայնավորների երկրորդ օրենքը հետևյալ կերպ կարելի է ձևակերպել (Arm. Gramm. էջ 410)։

«ի» և «ու» ձայնավորները (բաղաձայններից առաջ) պահպանվում են միայն վերջին վանկում, մնացած դեպքերում նրանք «ը» թ են տալիս, որը զրկվում է միայն բառասկզբում և բաց կարճ վանկում, նույնատիպ վանկին, հաջորդելիս լիովին է սղվում՝ սիրտ - սրտի sirt-serti, գրվում է srti³, սուտ - ստել,

¹ Նույնը Յովի. Թունայան «Geschichte der klassisch-armenischen Schriftsprachi» (Verhandl. d. 7. Orient. Kongresses, Arische Sektion), Վիեննա, 1888, էջ 70. Conybeare-ը, ընդհակառակը (Anecdota Oxoniensia, Oxford, 1892, Prolegomena XXI) կատարելիս և թերի էրմոնեզիս բարգմանությունը հակված է վերագրելու Պրոտերոսիոսին (276-368), հետևապես հնարավոր է համարում հայ գրականության առկայությունը արդեն իսկ 4-րդ դարում։ Անգամ հայ թարգմանիչների «սուկե» դարաշրջանը իր «Philo About the contemplative life», էջ 155, ուղղակիորեն վերագրում է 350-500 թվերին։ Ես այս հարցում նրա հետ չեմ կարող համաձայնվել։

² Թե ինչքան անհաստատ են այդ հարաբերական թվարկումները, հետևում է հենց այն բանից, որ, մինչդեռ Մխիթարյանները փիլիսոփայական աշխատությունների թարգմանությունները վերագրում են 5-րդ դարին, Conybeare-ը, չնայած իր՝ Մխիթարյաններին հետևելու հակամտքով, թերի կոմոս-ի և թերի արեթոն-ի թարգմանությունները վերագրում է 8-րդ կամ 9-րդ դարերին, իսկ Պրոփիլոսի εὐκαταφρόνη-ը հակված է վերագրելու 7-րդ դարին (նշված տեղում էջ XXXII և XXXVI)։

³ Հայերենում բ, է, ն, մ հնչյունները հաճախ են հանդես գալիս ձայնավորների միջև, սակայն երբեք չեն կիրառում որպես վանկարար է, լ, զ, որ, այլ որպես՝ օր, օլ, օն, օմ = er, el, en, em:

քուն - քնոյ, դուստր-դստեր, ինձ-ընձու, ունա-ընայեմ, սակայն պատում-պատմել (<* պա-տը-մել *պա-տու-մել-ի դիմաց), գլուխ (= gəlux <gʷlux) -զըլ-խոյ (=gəlxoy <*gəlxoy gʷluxoy-ի դիմաց), պտուղ (=pətul <*pʷtul) - պտղոյ (=pətloy <*pətəloy *pʷtuloy-ի դիմաց)։ Բաղաձայնների բառասկզբնային խմբին, այսպիսով, միշտ կարող են կորցրած լինել կամ գրեթե միշտ, բացի վանկարար + պայթական խմբերից, օր. ստերջ sterj, ստին stin, սխալ sxal - կորցրել իրենց «ի» և «ու» (=h. i, ē, u, ō և այլն) ձայնավորներից ստացված «ը»-ն օ, հմմտ. ծնունդ cunud= միջին հայ. ձնունդ jəunud Կարստ, էջ 17 = վաղ հայ. *cinund= նախահայ. *gʷen-unto- կամ gʷen-ōnto- gʷenə արմատից, գնալ = gənal, մնալ = mənal և այլն։ Այս վաղ հայերենի դեպքերը միջին հայերենում միևնույն ձևով կրկնվել են բառամիջում ա(ն, ե) ձայնավորների սղման ժամանակ², հինհայ. աղաչեմ աձաչեմ= միջինհայ. աղչեմ աչձեմ ա-ղը-չեմ-ի a-թ-ձեմ դիմաց, հինհայ. *դատաստանել datastanel= միջինհայ. տաղըստընել tadəstənel (երկար վանկերում) և այլն, Կարստ էջ 16, 18, 42: Էջ 19-ի կապակցությամբ՝ միայն լիզադոն «կտակ», «ավանդ» < հինհայ. *ligaton=բյուզ. Ιηγᾶτον (Կարստը էջ 19-ում գրում է՝ λέγατον, էջ 27, λεγᾶτον, էջ 21, 31, 34 λεγᾶτόν) = լատ. lēgatum, չե՞ որ հայ. «ի»-ն նույնպես կարող է բյուզ. η=ի դիմաց կանգնել, տե՛ս Thumb Byz. Ztsch.-ում 9, 430:

Էջ 23. Ծանոթագրություն 1-ի կապակցությամբ՝ օւ տառագրությունը ծ ձայնավորի նշման համար նախապես հանդիպում էր հունական (ոչ առհասարակ օտար անունների) օ տառով զրվող անունների տառադարձման համար (Mowsēs= հուն. Μωσῆς), քանի որ պարսկական և առաքական au, օ-ն նախապես տառադարձվել են oi-ի կամ o-ի միջոցով, տե՛ս իմ Arm. Gramm. էջ 295, ծնթ. և էջ 328, Chronologie der armen. Vokalgesetze էջ 158-159, 166 և հաջ., 170-171, հետևաբար՝ օ-ն ծառայում էր որպես հունարենի օ-ի միայն գիտական տառադարձման միջոց, արտասանվում էր որպես կարճ օ, այսպիսով, օր.՝ Mōsēs, Jōhannēs³. Եթե կիլիկյան հայերենում մի քանի անգամ օտարազգի օ-ի դիմաց այ ay է գրվում (Կարստ, էջ 23 և 116), ապա այդ պետք

¹ Այսպես է գտնվում ժամանակակից հայերի արտասանությամբ, հմմտ. սակայն Codex Ticinus-ի (1100-ի և 1300 թվերի միջև) ձևերը Conybeare-ի մոտ, Anecdota Oxoniensia՝ բազմազգն bazəməçən էջ 170 < բազում, պատահլման patahəman էջ 172 երկու անգամ, պատահլումը patahəmun¹ 172 < պատահումն, ճշմարտին čəmarətin 180< ճշմարիտ:

² Նախահայերենի *ապուրանք apurank՝ > *apərank՝ > հինհայ. ապրանք aprank՝ «փրկություն», «փախուստ» «կյանքը փրկելը», որի սեռականից ապրանք apranaç, պետք է որ միջին հայ. *աբրնաց abənaç ստացվեր: Իսկ ինչու՞ է նրա դիմաց արքնաց abənaç «կյանքի» ստացվում (Կարստ, էջ 16):

³ Johannēs-ի կողքին գրվում է նաև Jowhannēs, Arm. Gramm. էջ 385: Արդի Հովհաննես-ը Hovhannes (Կարստ, էջ 35) ոչ մի կերպ չի վկայում հին հայերենի J-ով Jow(h)annēs արտասանությունը:

չէ փորձ համարել արար.-պարսկ. ā-ի ավելի ճիշտ տառադարձման, այլ այն իր հիմքում պետք է ունենա a-ի և ai-ի զուտ շփոթությունը, որոնք հետագայում կիլիկյան հայերենում երկուսն էլ որպես a են արտասանվել (Կարստ, էջ 23-24 և 60): Նման մի փորձի առկայությունը կարելի էր միայն այն դեպքում հնարավոր համարել, եթե պարզվեր, որ օտար ā-ն բավական օրինաչափ այ-ով ay է տառադարձվել: Համաձայն էջ 23-ի և 116-ի ծանոթագրության՝ այ-ը ay միայն մի քանի անգամ է պարսկ.-արար. ā-ին փոխարինել, իսկ ըստ էջ 117-ի ծանոթագրության՝ նաև «ավելի հաճախ» էլ առհասարակ օտար ā-ի:

Էջ 26. Ծնթ. 2-ի կապակցությամբ: Կարստի հայերեն իղ-ի և իռ-ի ir կապակցությամբ արված դիտողությունները ցույց են տալիս, թե հին հայերենի և-ն (IF. Anz. 8, 44), ինչպես նաև i-ն, ինչպիսի հնչողական խուլ երանգ էին ունեցել կամ ստացել: Բերված նյութին ես հավելում եմ այնպիսի անուններ, ինչպես, օր. Կիրեղ Kiurel Ղազար Փարպեցի 583 = Κύριλλος և Բարսեղ Barseł, սեռ. Բարսղի, Յովհ. Մամ. 8=Bacileios ա՞նուններ:

Էջ 29-ի Հին հայերեն կռիւն křivn «կռիվ», «վեճ» < կռի + հող «ն» բառը = չէ *կռիւան նախնական křivan բառաձևին, քանի որ չի կարելի ապացուցել, որ վերջից հավելվող հողի նախնական ձևը ան an (աս as, աղ ad) է եղել: Հմմտ. Arm. Gramm. էջ 437, 478, 487 և Մեյե, MSL. -10, 244-245 (u, η, ն < k'le, te, ne ?): Ինչպես հայ. դուստրն dustm, նախահայ. *dustiran¹ բառաձևից չի կարող ծագած լինել, բառն է ցույց տալիս պատրաստի հողը՝ ն. u, η (=ən, əs, əd), որը հավելվել է անվան պատրաստի ձևին², ինչպիսին այն դարձել է բառավերջի հնչյունական օրենքների համաձայն (օր. դուստր < *dustir=dhuktēr): Այսպիսով կարելի է ենթադրել, որ նախահայերենյան *křivoh «վեճ», «կռիվ» բառաձևի կողքին կանգնած է եղել *կռիւոհ նե՝ křivoh ne՝ (կամ *կռիւոհ են *křivoh e՛n և այլն), այստեղից էլ բառավերջնային հնչյունական օրենքների համաձայն՝ ստացվել է կռիւ křiv և կռիւ նե křiv ne՝ (կամ՝ կռիւ են křiv e՛n և այլն), ի վերջո՝ կռիւ křiv «վեճ» կամ կռիւն křivn «վեճ», «կռիվ»: Միայն մութ է մնում, թե ինչպե՞ս և ինչու՞ է նե կամ են և այլն, հողը իր ձայնավոր մասնիկի թուլացմամբ ն=ən և այլն տալիս:

Էջ 31- Կիլ. jaušan «զրահ» Լամբր. Թուրք առ Լևոն, էջ 239, այստեղ զարմացնում է «ու»-ն, քանի որ սովորաբար վկայակոչվում է ջոջան jaušan բառաձևը (տե՛ս ՆՀԲ, իմ Arm. Gramm. էջ 270), այն համապատասխանում է արար.-պարսկ. jaušan (Ֆիրդուսու մոտ հանգավորվում է rōšan-ի հետ KZ. 35, 189), վրաց. javšani Tchoubinof, էջ 685 բառերին:

¹ Այստեղից, համաձայն ձայնավորների բառավերջնային օրենքների. *dustim հետագայում *դստիրն dstim պետք է տար:

² Հմմտ. հոգնակիակերտ «ք» կ՝ վերջածանցը՝ մարդք mardk՝ «մարդիկ», չորք čork «չորք» (բաղարկությունների չորեք čorek՝ ձկն կողքին), բերեմք beremk՝ «մենք բերում ենք» Մեյե MSL. 11, 381:

Էջ 34- Հինհայ. դ-ն † (dunkles l) որպես կանոն հետագայում «դ» է տվել, այն էլ, ինչպես երևում է, ամբողջ արևմտահայերեն և արևելահայերեն լեզվական բնագավառում: Ինչպես երևում է, Կարստն էլ բոլորովին գաղափար չունի, որ մի ինչ-որ ավելի նոր բարբառում հինհայ. դ-ն մնացել է որպես «լ»: Այնուհետև, սակայն, աչքի է զարնում, որ վրացական փոխառությունները հայերենի «դ»-ն միշտ տառադարձում են որպես «լ» alizi “brique” Tchoubinof էջ 12 = հայ. աղիւս ahius; վրաց. bivriili “béryl” էջ 53 = հայ. բիրեղ biurel; bilci, pilci “impur” էջ 53 = հայ. պիղծ pilc; blarji “pain azyne” էջ 54 = հայ. բաղարջ balarj; galatozi “maçon Ղ. քաղ. XII, 12” էջ 73 = հայ. գաղատոս galatos; tela “orme, ormeau” էջ 221 = հայ. տեղի տել; kolopi “corbeille” Ելք 26,2 = հայ. կոդոփ kolop՝; ptuli “fruits frais” էջ 404 = հայ. պտուղ ptul; s-pilenji “cuivre rouge” էջ 466 = հայ. պղինձ plinj; k'alak՝ i “ville” էջ 513 = հայ. քաղաք k՝alak՝ և այլն: Այս հնարավոր է միայն նրանով բացատրել, որ բոլոր հայկական փոխառությունները, որոնք բերվում են Չուբինովի վրացերեն բառարանում, փոխ են առնված հին հայերենի ժամանակաշրջանում (մտավորապես նախքան 7-րդ դար):

Էջ 40 Ասում են Imāla (արար. իգ. imālat):

Էջ 42 Եթե ճիշտ է այն դրույթը¹, որ «ա» ձայնավորը եռավանկ կամ բազմավանկ բառերի միջին վանկերում սղվում է (միջին հայերենում) կամ «ը» ə է տալիս, ապա բառամիջնային «ու»-ն դրանից չպետք է տուժի և նրա սղումը բոլոր պատճառականներում (մեռցնեմ meřcnem < մեռուցանեմ բառաձևից, ամրցնեմ amřcnem < ամրացուցանեմ amraçucanem) չի կարող այս օրենքով պայմանավորված լինել: Այն, որ բառամիջնային «ու»-ն (= նախն. հայ. ոյ oi) սովորաբար չի սղվում, հետևում է հետևաբար əyortu՛t՝ün ըղորտութիւն օրինակից՝ էջ 59 և այլն:

Էջ 46 “a > o” մի (բարբառային) անցումը կարծես առկա է նաև մորեյս morex բառի մեջ, Մատթ. Ուռհայեցի 2,1 = հինհայ. մարախ marax:

Էջ 47 Կարստի կողմից նշված հին հայ. au-ի հերթագայությունը «ա»-ի հետ այնպիսի բառերում, ինչպես՝ թօնք t՛aunk՝ (հիմքը թօնի t՛auni-) «օդի գերխոնավություն», «անձրև» և քա-նա-մ t՛a-na-m (կատարյալը՝ քա-ց-ի t՛a-ç-i) «թացացնել, քրջել», յօտ yaut «էտած ճյուղ» և յատ-անե-մ yat-ane-m (կատարյալը՝ յատ-ի yat-i) «էտել», մօտ maut «մոտ» և մատչիւմ matçim < *մատիչիւմ matiçim (կատարյալը՝ մատե-այ mate-ay) ես ի վիճակի չեմ մեկնաբանելու: Կարելի է ենթադրել “ու”-ի հավելում և համադրել արտօսք artausr «արտասուք», հոգն. արտասուք artasuk՝ (տե՛ս ընդհակառակը Arm. Gramm. էջ 426) կամ “օ”-ն և “ա”-ն կարելի է դիտել որպես հնդեվր. “āu”-ից մեկնվող,

¹ Ինչպես ես այն արդեն ձևակերպել եմ իմ “Zur Chronologie der arm. Vokalgesetze”, էջ 130:

սակայն երկուսն էլ լիովին հեղիեղուկ են: Հմմտ. նաև զգօն zgaun «հեզ, հանդարտ», «խոհեմ, խելացի» և զգա-մ zga-m (կատարյալը՝ զգա-ց-ի) «ընկալել, ըմբռնել», «տեղեկանալ», զգաստացեալ zgastaceal «խոհեմ, խելացի դատնալ» Մարկ. 5,15 և հայտնի դեպքերը՝ ամօք amaut՝ «ամոք», ամաչել amačel, աղօթ-ք ałaut՝-k՝ «աղոթք» // աղաչեմ ałačem «խնդրել, աղերսել», ծանօթ. canaut՝ «ծանոթ» // ճանաչեմ čanačem «ճանաչել», կատարյալը՝ -ծանեայ՝ caneay «ճանաչեցի» (արմատը՝ g¹éne, g¹né և այլն): Մի երկրորդային au (<atr-) առկա է այնպիսի բառերում, ինչպես՝ աղօթի ałauri «աղորհք», նրա կողքին՝ աղամ ałam «աղալ» և սեռականում՝ hor haur, մօր maur, եղբոր elbaur և այլն:

Էջ 47. Ծնթ. 1-ի կապակցությամբ՝ հին ձեռագրերի հետ կապված դիտողությունը ճիշտ չէ: Աւետարանի 9-11 դդ. (մուսկովյանը՝ 887 թ., Մուրբ Ղազարիինը՝ 1001 և այլն) ձեռագրում ընդհանուր առմամբ «ե» e կամ «է» ē է հանդես գալիս, միայն այնտեղ, որտեղ տպագրված օրինակներում ևս «ե» և «է» է, այդ օրինակների թե և եթե ձևերը թե և եթե ձևերով են հանդես գալիս, ինչպես նաև ե-ով ավարտվող ներկայի հիմքից կազմված անցյալ անկատարի ներգործականը և կրավորականը վերջին վանկում մշտապես «էյ»-ի դիմաց ձեռագիր օրինակում «եյ» ունեն, օր. եին ein «էին» Մատթ. 2, 16, 18, խնդրեին xndrein 2, 20, ելանեին elanein 3, 5, մկրտեին mkrtein 3, 6, խոստովան լիսեին xostovan linein³ (սակայն՝ երեւեր erevēr «երևաց», «հայտնվեց» 2, 13, էր ēր «էր» հաճախ, ասեր asēr «ասաց», ասե asē «ասում է», առնե arnē «ստեղծում է» 3, 1, 10, 14 մուսկովյան ձեռագրից): Ընդհանրապես կանգնած են Հրեաստան Hreastan Մատթ. 2,1,5, հրեից hreic 2,2, Հրեաստան Hreastan-ի կողքին 2,22; 3,1,5, մարգարեից margareic 5,18 մարգարեի կողքին margarēi 2,17,23 // 3,3 և այլն, մուսկովյան ձեռագրում: Այնուհետև, այդ ձեռագրերը հունական λ -ի դիմաց միշտ կիրառում են ł (օր. Galileā(y) Մատթ. 3,13; 4,12,15,18,23 =Γαλιλαία, Israyēl 2,6 = Ἰσραήλ, Galilea-ի դիմաց, տպագրված օրինակի՝ Israyēl), տպագրված օ, (ծ)-ի դիմաց մշտապես au (օր. haur «հոր» Մատթ. 2,22 hor դիմաց), մշտապես ail «այլ» ավելի ուշ շրջանի այլ ail-ի դիմաց, gail «գայլ» (gailk՝ Մատթ. 7,15, gailoc 10,16) ավելի ուշ շրջանի գայլ-ի gail դիմաց, թույլ տալ t'oił tal, Մատթ. 3, 15; 8, 22; 13, 30; 15, 14; 19, 14 ավելի ուշ շրջանի թույլ տալ-ի toił tal՝ դիմաց պարհեմ parhem «պաս են պահում»//Մատթ. 4,2՝ պարհեալ parheal, 6,16 պարհիցեք parhičēk՝, պարհեացին parhesčin 6,17, պարհիցիս parhičis 6, 18 //

¹ Հմմտ. նաև՝ նշող nšoił= նշոյլ nšoil «ճառագայթ»: Աճառեանը հավանաբար իրավացի է. հայտնելով այն կարծիքը, որ 5-րդ դարի հայ. «դ»-ն է, ai, ē, oi -ից հետո (= a, e, o + y) համաձայն հնչյունական օրենքների, հետագայում «դ» է տվել:

պարհող parhoł մուսկովյան ձեռագրում¹, ավելի ուշ շրջանի պարհեմ-ի parhem դիմաց, եւթն eut՝ n² «յոթ» Մատթ. 12,45; 15,35-37; 16,10; 18,22 ավելի ուշ շրջանի eot՝ n-ի դիմաց = կիլ. iot՝ n³:

Էջ 51. § 45-ի ծանոթություն: Մուշի բարբառում կիրառվում է հրըշտակ hreštak=hrštak - Աւետարանի մուսկովյան ձեռագիր: Սակայն երկուսն էլ կանգնած են նախնական հրեշտակ hreštak-ի դիմաց:

Էջ 64. § 71

հասոյթթ hasoit՝ k՝ բառի գործիականը պետք է հին հայերենում հասութթոք hasut՝ auk՝ հնչեր: Այս բառը, սակայն, նշվում է բառարանում (ՆՀԲ)՝ վկայակոչված Մխ. Գոշի Դատաստանագրքից (12-րդ դ.), միայն մեկ անգամ, հետևաբար միջին հայերենով: Կարտն այստեղ նշում է, որ -օլ-ով կամ զլ-ով բայափոխության կազմված գոյականները, համաձայն միջին և նոր հայերենի համապատասխանությունների, նախկինում պետք է որ -աղ-ով ալ կազմվող գոյականներին համադրվեին, չնայած նրան, որ տպագրված տեքստերում մեծ մասամբ ող օլ է տրվում: Միայն, ցավոք, նրա քննարկմանը չեն արժանացել ամենահին ավանդույթները, որոնք ավելի հոգուտ -ող-ի օլ են խոսում: Մուսկովյան ձեռագրից (Մ) և Մուրբ Ղազարի Աւետարանի երկու ամենահին ձեռագրերից (Գ) ես նշել են հետևյալ ձևերը՝ կարող karol «կարող», «ձեռնհաս» Մատթ. 3,9 (Մ և Գ), 8, 2; 9,28; 19,12; 20,22 (Գ), պարհող parhoł «ծոմ պահող» 6,18 (Մ), յափշտակող-ք yap՝ štakol՝k՝ «հափշտակող», «գիշատիչ» 7,15 (Գ), կերող kerol «ուտող», արբեցող arbecol «հարբեցող» 11,19 (Գ), շնացող šnacol «շնացող» 16,4 (Գ), սրանց կողքին սակայն՝ հնձօղս hnjaułs հայց. «հնձողներ» 13,30, հնձօղս hnjaułk՝ ուղղ. 13,39, շինօղս šinaułk՝ «շինարարներ» (Գ.), այսպիսով Մատթեոսի առաջին 21 գլուխներում

¹ Հմմտ. պարհեմ parhem «պահեք» Եփեսեմ 3,17 և 117. ինչպես նաև՝ մարի marh «մահ», նույն տեղում, տե՛ս Arm. Gramm. էջ 217, 472:

² Հմմտ. արդեթ ardeuk՝ Մատթ. 11, 21, ավելի ուշ շրջանի արդեթ-ի ardeok՝ դիմաց:

³ Մուսկովյան ձեռագրում մուսկովյան hrštak «հրեշտակ» է կանգնած: Մատթ. 2,13,19; 4,6,11 այլ ձեռագրերի և տպագրական տեքստերի հրեշտակ-ի hreštak դիմաց, մարեալս marcax «մորեխ» 3,4, սովորական մարախ-ի marax դիմաց, բովական bowakan «բավական» 3, 11 բաական-ի bavakan դիմաց և այլն: Այս ձեռագրերի բոլոր առանձնահատկությունների մասին խիստ ցանկալի է մի ավելի ծանրակշիռ ապացույց: Codex Ticinus der Kateg. (գրված 1100 և 1300-ի միջև, համաձայն Conybearc Anecdota Oxon. XXVIII) ձեռագրում. մուսկովյան մեծ մասամբ ավելի ուշ շրջանի. կանգնած են երբ. ctē. ունեին unēin, էին ein, էր ēr, է օ բառաձևերի դիմաց՝ եթե ct՝ e , ունեին unēin, եին ein, էր e, է բառաձևերը. իսկ ավելի հաճախ՝ ուշ շրջանում յաւետ yavēt, այլ ail ձևերի դիմաց յաւետ yavet և այլ ail ձևերն են կիրառվում, համաձայն Conybearc-ի նույն տեղում, հմմտ. այլ ail էջ 107, 2,4; 115, 20; 135,9 և այլն, եթե ct՝ e 108 և այլն: Եվ անգամ Փիլոնի 1296 թ. ձեռագիրը ավելի ուշ շրջանի եօթն eot՝ n-ի դիմաց դեռ շարունակում է եւթն eut՝ n «յոթ» գրել, էջ 173 (երեք անգամ), որն էլ կանգնած է Աստվածաշնչում տպագրված տեքստերում ձեռագրային եւթն eut՝ n-ի դիմաց, մայել մալ՝ իւաւել xausel «խոսել». իւաւսք xausk՝ «խոսք» բառաձևերի կապակցությամբ, որոնք կիրառվում են ավելի ուշ շրջանի խօսել xosel, խօսք xosk՝ ձևերի դիմաց:

10 ձև հանդիպում է *ol*, իսկ 3-ը՝ *aul*-ով: Այս դեռ ոչինչ չի վճռում, սակայն ցույց է տալիս, որ ամենահին ձեռագրերից հանված այս բոլոր բայական գոյականների հանրագումարը թերևս կկարողանա ապացուցել, որ ող-ով *ol* ավարտվող ձևերը հնադարյաններն են: Կասկածելի է, որ միջին և նոր հայերենում նշված այլ *ail* «այլ, ուրիշ» բառաձևին վաղեմ ձեռագրերը այդ *ail* են հակադրում: Եվ ինչպես այդ-ը *ail* հետագայում այլ *ail* է տալիս, նույն ձևով էլ -ող-ը *ol*-ը հետագայում *ol* զ' կարող էր տված լինել:

Էջ 66-ի կապակցությամբ՝

Կարստը հակված է համաձայն «Berichtigungen» էջ XXII-ի, նաև ըստ 125-ի և 311-ի, Փաստոսի էջ 69-ում հանդիպող տեսանյութը *tesanoir* «նա տեսնվեց» որպես կրավորական թարգմանել, ես այդ չեմ կարող հնարավոր համարել մի այնպիսի նախադասության մեջ՝ ինչպիսին է՝ «յորժամ տեսանյութ զամենեսեսան *yorzam tesanoir zamenesean*» «երբ նա ամեն ինչ (նույն այդ առաջին բառի վրա շեշտ դնելով) տեսավ»: Ինչու՞ Կարստը այստեղ մի *տեսանում *tesanum = կիլ. դեսնում *desnum* (ըստ էջ 290-ի) բայաձևի անկատար անցյալը չի տեսնում: Հմմտ. արձակոյր *arjakoir* «ուղարկեց» Սեբեոս 48 արձակել *arjakei* բառի կողքին, էջ 49:

Էջ 71-ի ծանոթագրության կապակցությամբ՝

Տեմո *tend* բառի կապակցությամբ կարելի էր ավելի շուտ ենթադրել, որ այն մի ինչ-որ *teand-ից է գալիս, քանի որ *e*-ն մախն. պրսկ. *n*+բաղաձայն կապակցությունից առաջ պետք է կանգնած լիներ, որ *i* տալիս, սակայն *e*-ն պահպանվել է, եթե այն *ea* կամ *es* կապակցությունից է գալիս (Arm. Gramm. էջ 107 և 520): Հմմտ. սակայն, նաև տեմո չե՞ս «տեմո, ձգտում»:

Էջ 72-ի կապակցությամբ՝

Առհաստիցեայ² բառի -ճեայ վերջածանցը հանդիպում է նաև այնպիսի բառերում, ինչպես՝ արեւոյնայ Բ թագ. 4,10 «աչքալուսանք» (= *արեւ-իչ-եայ *avet-ič-eay*), *հմմտ.* արեւ-ա-տր *avet-a-vor* «ավետիս բերող», արեւ-ի-ք *avet-i-k*՝ «ավետիս»: -այծէք *aijek* (= հինհայ. *aiceaik*՝) «այծի մազից պատրաստած հագուստ», հանդիպում է Մատթ. Ուռհայեցու մոտ՝ էջ 7 (հայց.՝ այծէս *aijes*): Ե-ով *ē* կազմվող մի հրամայական վկայակոչվում է նաև մուսկովյան ձեռագրում (a. 887) Մատթ. 6,13, փրկել *p' rke* «փրկիր» փրկեա *p' rkea*-ի դիմաց: Քանի որ հին հայերենում առկա են եւ *ev*-ով ավարտվող մակբայներ, *հմմտ.* արդարեւ *ardarev*, որով հետեւ *orov hetev*, այնու հետեւ *ainu hetev* և այլն, յետեւ-ա-

խաղաց *yetev-a-xařac*, ստորեւ *storev* (ստորեւ *storeav* ձևի կողքին), զառաջեւ *zarajev* Փաստոսի մոտ (առաջեւ *arajev* ձևի կողքին Ղազար Փարպեցու մոտ), ապա կիլ. *իեվ-ը* *i-ev*՝ նույնպես (արչեւ *arčev*, հեղեւ *hedev* և այլ բառաձևերում) կարող է հին հայ. -եւ *ev* (-եւ *eav* ձևի փոխարեն) բառաձևից ծագած լինել, իսկ կիլ. ներքեւ *nerk' ev*, միջին հայ. վերեւ *verev* և այլ ձևերը նրանց անալոգիայով կազմված լինել:

Էջ 73, §83-ի կապակցությամբ՝

Քանի որ Աստվածաշնչում մեն *mēn* (օր.՝ մեն մի *mēn mi* «յուրաքանչյուր»¹ Մատթ. 20,10) բառաձևն է հանդիպում միայն-ի *miain* կողքին, ես առաջին հերթին եզրակացնում եմ, որ 5-րդ դարի այդ մեն-ը *mēn* միայն-ից *miain* չի առաջացել: Այնուհետև պետք էլ չի, որ 5-րդ դարի մեն-ը «մենակ», «միայնակ» միայն-ից *miain* ծագած լինել²: Սակայն մեն-ը եթե անգամ մի հին բարբառային ձև լինի դասական միայն *miain* ձևի նկատմամբ, ապա պետք է հետևաբար նաև դասական տեր *tēr* «տեր», «պարոն» ձևը և՞ մի բարբառային ձև լիներ գոյություն չունեցող մի *տիայր *tiair* ձևի նկատմամբ:

Էջ 82-ի կապակցությամբ՝

Հնչեղ պայթական *b, d, g, j, j* բաղաձայնները միջին և նոր հայերենում «ն»-ից հետո անփոփոխ են մնում: Սակայն *mb>mp* է տալիս³: Կարստն այս կապակցությամբ ոչ մի դիտողություն չունի, սակայն գրում է Մմպաղ *Smpad* էջ 3 (հինհայ. Մմբատ *Smbat*), համարեմ *hamperem* էջ 89 (հինհայ. համբերեմ) և այլն: Նույն ձևով են գրում նաև Մխիթարյանները (Նիերսես) Լամպրոնենտ - այսինքն՝ «պ»-ով: Լեհահայերենում ևս պամբազ = հինհայ. բամբակ ձևն են հանդիպել, սակայն նրա կողքին նաև՝ համպիրեղու *hampirehu* = հինհայ. համբերել և ամպ *amp*, հոգնակին՝ ամպեր *amp'er* = հինհայ. ամբ և ամպ (*Hanusz WZKM. 1, 302-303*):

Էջ 100-ի N 1 ծանոթության կապակցությամբ՝

Կարստը դարաբաղյան անամ, անում, անըմ «անուն» (Պատկանեանի *Dial. 66*-ից) ձևերը հետ է տանում դեպի հին հայերեն *անամն *anamn*, *անումն *anumn*, *անըմն *anəmn*: Ես այս միտքը այնքան ժամանակ ճիշտ չեմ համարի, մինչև որ Կարստը չի շարադրի այս ձևերի հարաբերությունները միմյանց նկատմամբ, ինչպես նաև Ղարաբաղի բարբառի հնչյունական օրենքները: Վաղեմի թվացող Ջուլֆայի բարբառի «անում կամ անումն, սեռ. անման» (Պատկ., *Dial. էջ 86*) = հինհայ. անում, սեռ. անումն ձևերի մասին դատողություններ չի կարելի անել, առանց այդ բարբառի հնչյունական

¹ Նույնը՝ Փաստոսի մոտ էջ 16, 1, *հմմտ.* նաև մեն-ը *men* բաղադրությունների և բառածանցների մեջ, օր.՝ մենաման *menanam*, կատար. մենացեալ *menaceal* Ա Տիմ. 5,5, մենաստան *menastan* և այլն:

² Միայն = մի + այն, *հմմտ.* ամենայն *amenain* (= *ամեան-այն *amean-ain*) և մակբայական ձևի՝ միանգամայն *miangamain*, վաղորդայն *valordain*, լռելեայն *lreleain*:

¹ Փիրոնից (ձեռագիրը վերաբերում է 1296-ին) ես արձանագրել եմ տեսող-օր *tesol* -*auk*՝ 167, 180, ծնող-ոց *cnol*-*oc*՝ 168, տոփող-աց *tip*՝ *ol*-*ac*՝ 172, գործող-աց *gorcol*-*ac*, որոնք օգտագործվում են կարող *karaul*՝ 174, ծնօղս *cnauš*՝ 175 բառաձևերի կողքին: Եփրեմի 3-րդ հատորից (Վենետիկ) 1836՝ կարող *karol*՝ 11,26, ապաշխարող *apašxarok*՝ 15, լողաց *lořac*՝ 19:

² Որտե՞ղ է կանգնած ուշ դասական առհաստիչ *arhavatčē* ձևը: *Wb.*-ն նշում է միայն առհաստիչայ *arhavatčay* (սեռ. *čēi* և այլն) բառաձևը:

օրենքների մասին գիտելիքները ունենալու: Առայժմ ես այդ անկանոն հինհայ. անուն // անուան (<onmen // onmenos) բառաձևերը վաղեմի եմ համարում և ենթադրում եմ Ջուլֆայի անունն // անման, հին հայերենի -ուն-ով կազմվող, սեռ. -ման (ուղղ. ծագումն, cagumn սեռ cagman և այլն) բազմաթիվ գոյականների ազդեցության արդյունք:

Էջ 106. Ծնթ. 1-ի կապակցությամբ՝
Ի՞նչ է Մզուր-ը Mzur = Մընձուր Մոնյուր (թուրք. Munzur daye): Հավանաբար նույնը, ինչ Բարձր Հայքի համանուն գավառը, Փաստոս:

Էջ 141. Մզուր Մովս. աշխ. էջ 607, սակայն այն Մընձուր Մոնյուր (= κλίμα Μουζουρῶν Gelzer, Georg. Cypr. 184):

Էջ 122-ի կապակցությամբ՝
Աղայրաց արիւն aypraç ariun «աղբերաց արյուն» բարձրանություն է արաբերենից: Այդ բույսը պրսկ. հայերենում կոչվում է շաւաշարիւն šavašarium (շաաբշարիւն Wb. I ներքևից, drakontikon), հմմտ. Arm. Gramm. 213, Ղ Ալիշան, Բուսաբանութիւն էջ 22, Airarat էջ 29-30:

Էջ 124-ի կապակցությամբ՝
Հինհայ. բոյն boin «բույն». գործ. բունով և այլն բառից է առաջացել կիլ. բույն, գործ. բույնով buinov և այլն: Բոլոր այս դեպքերում թեքական հոլովները գտնվում են ուղղական հոլովի ազդեցության տակ: Նույնն է նաև կիլ. ծույն cuin «ձյուն» բառի կապակցությամբ, գործ. ծույնով cuinov և այլն: (էջ 125) հինհայ. ձիւն jiuin, սեռ. ձեան jean, գործ. ձեանթ jeamb և այլն:

Էջ 125-ի կապակցությամբ՝
Համաձայն ծույն cuin «ձյուն» = դասական ձիւն jiuin; ածույր ajçuir «եղջյուր»=դաս. եղջիր eljiur և այլ ձևերի ույ սի-ի կարելի է դատել նաև կիլ. ծույթ cuit՝ ձևի մասին և այն հանգեցնել դասական ձիւթ jiuit՝ ձևին: Այդպես եմ ես այժմ կարողում և գրում ձիւթ jiuit՝ բառի կապակցությամբ իմ Arm. Gramm. էջ 185, հմմտ. եութն eut՝ n (ոչ եութն evt՝ n) «յութ» = միջին հայ. եթն eot՝ n էջ 131:

Էջ 131 -ի կապակցությամբ՝
Կիլ. հերձեի herçev «հետո, ի վերջո», դասական վերջին verjin «վերջինը» ձևերի համադրությունը երջանիկ erjanik «երջանիկ», «երանելի» ձևի հետ իհարկե սխալ է:

Էջ 152-ի կապակցությամբ՝
Ես չեմ կարողանում հասկանալ. թե ինչու՞ դասական հոգույ-ը hogvov (սեռ. հոգի-ից hogi) չպետք է հետազայում օրինաչափորեն հոգոյ hogoy տար = կիլ. հոկո hoko: Օրենքը՝ հինհայ. ու-ն vo = հնդեվր. yo միջին հայերենում բաղաձայններից հետո «ո» օ է տալիս: Բոլոր այն դեպքերում, երբ հնագույն տեքստերում հոգոյ-ի բնույթի ձևեր են հանդիպում, բոլորը պետք է ուղղվեն ուղղակի հոգույ-ի hogvov և այլն:

Էջ 154. Ծնթ. կապակցությամբ՝

Իսկ ինչպե՞ս էին հնչում գեղ զեւ «գյուղ» բառի նախնական ձևերը: Ըստ Այդինեանի քերականության (Aidynean, Gramm. էջ 27) ուղղ. և հայց. գիւղ զիւ, գեղ զեւ կամ գեղ զեւ, սեռ. և տր. գեղ զեւ, բաց. ի գեղ զեւ և զեւթ, գործ. գիւղի զիւիւ, հոգն. ուղղ. գիւղ զիւկ՝, գեղ զեւկ՝, հայց. գիւղս զիւս, սեռ., տր., բաց. գիւղից (գեղից) զիւիճ (գեիճ), գործ. գիւղիս զիւիւկ՝, ըստ Bibelkonkordanz-ի (Երուսաղէմ, 1895) և Նոր կտակարանի (Վենետիկ, 1887) ուղղ. հայց. գեղ զեւ, սեռ. տր. գեղ զեւ, բաց. ի գեղ զեւ և զեւթ, հոգնակի ուղղ. գեղ զեւկ՝, հայց. գեղս զեւս (հազվադեպ՝ գիւղս զիւս), սեռ. տր. բաց. գիւղից զիւիճ, բացի այդ՝ հայց. գեղ զեւ միայն մի կապակցության մեջ, այն է՝ ի գեղ մի և զեւ mi Նէեմ. 6,2, նաև ի գեղ զեւ «այդ գյուղը», Մարկ. 11, 2: Ըստ Նոր կտակարանի, Վենետիկ, 1805 եզակի հայց.՝ գեղ զեւ, հոգնակի հայց. գեղս զեւ, Ավետարանում՝ եզ. ուղղ. հայց. գեղ զեւ, հոգն. գեղս զեւկ՝, գեղս զեւս, եզակի սեռ. տր. գեղ զեւի, հոգն. սեռ. գեղից զեւիճ Apostelgeschichte, ըստ Վենետիկի արեւարանական ձեռագրերի՝ հոգն. հայց. գեղս զեւս Մատթ. 9,35, եզակի հայց. գեղ զեւ 10,11; 21, 2; 26,36, ըստ Փաստոսի (Վենետիկ, 1832) ի գեղն և զեւ 144, 204,265, յայնմ գեղ զեւ զիւ 252, սակայն՝ ի գեղն և զեւ 15, ըստ Փիլոնի ձեռագրի, 1296՝ գեղ զեւիճ էջ 162 (հոգն. ուղղ.), ըստ Kateg. ի գեղս զեւս էջ 122 (հոգն. հայց.) և այլն: Կիլ. կի եղ ke'iy ձևը, ըստ Կարստի § 75-ի, գալիս է մի ինչ-որ հին հայ. գիւղ զիւ = գեղ զեւ ձևից: Համենայն դեպս Կարստի այն պնդումը, որ իբր ներգ. գեղ-ը զեւ միայն այն ժամանակ է նաև որպես սեռական գործածվել, երբ ուղղականի գիւղ զիւ ձևը գեղ զեւ է տվել, համաձայն փաստերի՝ հիմք չունի:

Էջ 162-ի կապակցությամբ՝

Դասական **անձամբ** anjamb (գործ. անձն-ի anjn) ձևի դիմաց կիլ. հայերենում **անձամբ** ahjom է մտել: Մնում է կարծել, որ «ա»-ն **մբ**-ից առաջ մթագնվել և «օ» է տվել, իսկ բառավերջում «բ»-ն սղվել է: Սակայն **ա**-ն սովորաբար «օ» օ չի տալիս (անգամ **մբ**-ից առաջ = կիլ. մպ), իսկ բառավերջի **մբ**-ն, դատելով **ամպ** amp «ամպ», **թամպ** t' amp «թամբ», հոգն.՝ **թամպիեր** t' amp'ier (Կարստ, էջ 170) ձևերով **մպ**-տք է տալիս և ոչ թե «մ» m: մպ-ի տք մի համարժեք գուգահեռ գոնե որևէ երկվանկ բառի վերջում համենայն դեպս բացակայում է: Այսպիսով, կիլ. **անձամբ**-ը anjom ձևը առայժմ պետք է մի ավելի հին ***անձամբ** anjaum ձևի՞ հանգեցնել, որպես կիլ. **անձամբ** ձևին գուգահեռ մի բարբառային ձև: Ես կարող էի այդ ***անձամբ**-ի *anjaum (< **անձն** anjn «անձ»-ն-հիմքի գոյական) բառավերջնային «մ»-ի m մեջ, սակայն, միայն գործիականի սղված բ-ի b = հնդեվր. bhi = հուն. փ ազդեցությունը տեսնել: Համենայն դեպս Կարստի տված բացատրությունը՝ դաս. **ամբ** -amb < ***ամ** amv = նախնական

հայ. **ան** anv, իսկ կիլ. -od -om < *-ամ aum = *-avm = *-amm = *amv = նախն. հայ. *anv ես գտնում եմ կամայական և հերքման կարիք չունեցող:

Էջ 185-ի կապակցությամբ՝

Նույնը վերաբերում է նաև **կանանի** kanani «կանայք» բառածևին, օր. Փաստոս, էջ 252, տող 5 և 8 ներքևից, 253, 3 և այլն:

Էջ 191-ի կապակցությամբ՝

Շնվի šnovi «շներ» հոգնակի ըստ Կարստի, համաձայն Wb.-ի 2, 486, պետք է որ դեռ Euseb.-ի Kirchengesch.-ում 9, 8 վկայակոչված լինի: Բերվող հաստատվածը կանգնած է Վենետիկի 1877 թ. հրատարակության էջ 691-ում, որտեղ, սակայն, երկու տեքստերն էլ հիմք և նորը, **զ-շունս-ն** z-šuns-n ձևն են ներկայացնում (ոչ զ-շնվի-ն z-šnovi-n):

Ինչպե՞ս կարողավ ձեռագրերը: Կարստի բացատրությունը **վի**-ով vi կազմվող հոգնակիի վերաբերյալ, որպես u-ով կազմվող = հնդեվր. **ծ** (*hmdm*, երկու erku «երկու» = հնդեվր. dvō) հին երկակի թվին՝ ամապատասխանում է, սակայն հազիվ թե հենարան անի, քանի որ բառավերջնային “ծ”-ն = հայ. «ու» u բոլոր երկվանկ և բազմավանկ բառերում, համաձայն ձայնավորների բառավերջնային օրենքների, պետք է սղվեր (*hmdm*. ութ ut՝ «ութ» = հնդեվր. ok’tō, սակայն՝ երկու erku, այսինքն՝ «ու»-ով, քանի որ նախկինում այն միավանկ է եղել!):

Եթե, սակայն, ի-ն i (< i + x) հանդես գար նախքան բառավերջնային օրենքների ազդեցությունը, ապա մենք պետք է **ութ**-ի ut՝ դիմաց *ութվի ut՝ vi ունենայինք, **երկու**-ի erku դիմաց՝ *երկվի erkvi:

Էջ 195-ի կապակցությամբ՝

Եղիշէի մոտ, էջ 19, 15 հանդիպում ենք **նախարարեան** naxararean: - Ինչո՞ւ պետք է *jjean-ը jian տար: **լիեալ**-ը lieal «եղած», հարակատար դերբայի օրինաչափ ձևը Նոր կտակ.-ում ZDMG 36, 125 (ինչպես նաև Euseb. Chronik 1, 59) հետագայում **լեալ** leal է սղվել: **մի-ես** mi-avs ձևից ստացվել է **միս** mius, որն, անշուշտ, հերթագայվում է **մես**-ի meus հետ:

Էջ 210-ի կապակցությամբ՝

Պաես-ի pahs հավելումը **պաեթ**-ի pahk՝ դիմաց, «*hmdm*. պր. pās, պիլ. pās «պահակ», աննպատակ է և այստեղ շփոթեցուցիչ: Քանի որ հենց հայ. **պաես**-ի pahs «ս»-ն s ոչ մի ընդհանրություն չունի պր. pās-ի s-ի հետ:

Էջ 234-ի կապակցությամբ՝

Ազուլիսի բարբառում so, do, no “hic, iste, ille” (հին հայ. **սա** sa, **դա** da, **նա** na, սեռ. **սո-րա** so-ra, **դո-րա** do-ra, **նո-րա** no-ra) դերանվանական ձևերի կողքին կանգնած են **հոկ**, **ձոկ**, **նոկ** ձևերը: Եթե **հոկ**-ը < so-k ձևից է գալիս (տե՛ս Կարստ, էջ 88), ապա այն չպետք է զուգադրվի ոչ հուն **օ-ի**, ոչ էլ **լաս**.

¹ **ե-րկու** c-rku // h.b. dvō = ե-րիս e-ris «երեք», h.b. trins Մեյն, MSL11, 394:

հից-ի (= *hoce) ձևերի հետ: Քանի որ հայ. so = հնդեվր. k'o, հուն. ó = հնդեվր. so:

Էջ 235-ի կապակցությամբ՝

Մեռականի **նարա** nara և այլն բառածևերի բացատրությունը, որպես **նորա** nora և այլն ձևերից եկող, ուղղ. հայց. **նա**-յի na ազդեցության տակ, ինձ **ավելի** պարզ և բնական է թվում, քան Կարստի արհեստական վարկածը:

Էջ 252-ի կապակցությամբ՝

Արդյո՞ք **հիմա**-ն hima (= պր. ima «այժմ», «հիմա») պետք է դիտել որպես նոր պարսկական փոխառություն: Եթե ոչ, ապա ի՞նչ **հիմք-ձևից** պետք է երկուն էլ ծագած լինեն:

Էջ 266-ի կապակցությամբ՝

Կիլիկյան **լուծեմ**-ը lucem (արտասանվում է **լուծեմ** lujem) հին հայ. **լուծա-նեմ**-ի lucanem դիմաց, երևան է գալիս դեռ «հետդասական ժամանակաշրջանում» Ներս. Լամբր., Կլիմաք. և Վարք հց., Ներսես Լամբրոնացին եղել է 12-րդ դ. կիլիկիացի մի հայ, հետևաբար նաև զարմանալի ոչինչ չկա, որ նրա գրավոր հայերենում երբեմն կիլիկյան ձևեր են երևան գալիս: “Ιωάννης Κλίμαξ”-ի “Leiter”-ի թարգմանության ժամանակաշրջանը անհայտ է: «Վարք հարանց»-ը ընկնում է 5-12-րդ դդ. միջև:

Էջ 301 և հաջորդների կապակցությամբ՝

Արևմտահայերենի սահմանականի **գու** gu = արևելահայ. **կու** ku- մասնիկը առաջին անգամ վկայակոչվում է 12-րդ դարում և հատուկ է ժամանակակից բոլոր բարբառներին, բացառությամբ Ազուլիսի, մինչդեռ հին հայերենում այն բացակայում է: Նրա ծագումն այսպիսով ընկնում է նախքան բաղաձայնների տեղաշարժը (9-10-րդ դ. ?):

Էջ 311-ի կապակցությամբ՝

